

ԲԻԻԶԱՆԴԻ ԹՈՐԻԿԵԱՆ



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ


ՀԱՅ

ՄԱՐՄԵԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՄԻՈՒԹԵԱՆ

ՀԱՏՈՐ ԵՐՐՈՐԴ

(1975-1990)

ՊԵՅՐՈՒԹ
2003



ՅՈՎՀԱՆՆԵՍ Թ. ՀԻՆԴԼԵԱՆ
ԳԱՂԱՓԱՐԱՆՑՍ ԴԱՍՏԻԱՐԱԿ՝ ՀԻՄՆԱԴԻՐ ՀԱՅ ՍԿԱՌԻՏՈՒԹԵԱՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Պատմություն ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ հատորներու շարքին ներկայ երրորդ համարն ալ նախորդներուն նման քառամեակի մը աշխատանքի արդիւնքը պիտի ըլլար:

Հատորը կ'ընդգրկէ 1975էն 1990 ժամանակաշրջանը՝ Հ.Մ.Ը.Մ.ի Համագաղութային կազմակերպութեան վերածուելէն մինչեւ Հայաստանի վերանկախացում: Նախապէս ծրագրուած էր որ այս հատորը ընդգրկէ մինչեւ 2000 թուականը, սակայն խմբագրութեան ընթացքին նկատեցինք որ Միութեան քառորդ դարու պատմութիւնը թիով 46էն 62ի բարձրացած մասնաճիւղերու գործունէութիւններով, անկարելի պիտի ըլլար ամփոփել նախատեսուած 400 էջերու սահմաններուն մէջ: Առ այդ, որոշեցինք ժամանակաշրջանը սահմանափակել 16 տարիներու վրայ եւ Դ. հատորը յատկացնել 1991էն ետքի ժամանակաշրջանին:



Շրջանային կառույցներու ենթակայ մասնաճիւղերու գործունէութիւններու տեղեկութիւններուն ապահովումը եւս յաւելեալ ժամանակ տրամադրելու կարիքը ստեղծեց:

Ներկայ հատորը, նախորդներուն նման, մասնաճիւղերու եւ Շրջաններու գործունէութեան սկսման ժամանակագրական շարքով, Միութեան գործունէութեան պատմութիւնը կը կազմէ եւ ուղղուած է գլխաւորաբար Հ.Մ.Ը.Մ.ի երիտասարդ ղեկավարութեան ուսումնասիրութեան, անցեալի փորձառութիւններուն ծանօթանալու ակնկալութեամբ:

Փակելէ առաջ այս յառաջաբանը, յայտնենք թէ այս աշխատանքը կը նուիրենք անցեալի ՄԵՐ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԲՈԼՈՐ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐՈՒՆ յիշատակին:

Բ. ԹՈՐՈՒԿԵԱՆ

ՇՆՈՐ ՀԱԿԱԼԻՔ

Ներկայ Գ. հատորի հրատարակության առթիւ պարտք կը համարենք մեր երախտագիտութեան զգացումները յայտնելու բոլոր անոնց որոնք տեղեկութիւններով, վկայութիւններով, նկարներով կամ յարակից աշխատանքներով նպաստեցին անոր իրականացման:

Յատուկ արձանագրութեան արժանի են.-

Գահիրէէն՝ Տոքթ. Սուրէն Պայրամեան

Ճիւնիէն՝ Րաֆֆի Եսայեան

Աթէնքէն՝ Կարպիս Գուլումճեան

Հրատարակչական մարմնի մեր գործակիցները՝ Միհրան Շիւշիրեան եւ Կարպիս Գապասագալեան:

Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնի քարտուղարուհիներ՝ Թամար Աբովեան-Խանճիհանեան եւ Ալնի Եագուպեան - Հապոյեան:

Բ. Թ.

Հատորի վերջաւորութեան, ընթերցողը պիտի գտնէ «Գործնական Թելադրանքներ Ընթերցողին» խորագրով մեր բացատրողականը, ուր յիշուած են հատորին մէջ օգտագործուած մատենագիտական աղբիւրներու թուագրումի ձեւերը: Նկարներու պարագային, բացի յատուկ յիշատակութիւններէ, անունները միշտ արձանագրուած են ձախէն-աջ շարքով:

Ա. ՄԱՍ

Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԿԱՌՈՅՑԻ
ԿԱԶՄԱԻՈՐՈՒՄ ԵՒ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Հ.Մ.Ը.Մ.Ի ՆՈՐԱԳՈՅՆ ՇՐՋԱՆԻ
ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

- ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳ
- ՆԵՐԿԱՅ ՇՐՋԱՆՆԵՐ, ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐ ԵՒ ՊԱՏԳԱՄԱԻՈՐՆԵՐ
- ԺՈՂՈՎԻ ՅԱԶՈՐԴԱԿԱՆ ՆԻՍՏԵՐ
- ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
- ՓԱԿՈՒՄ ԱՆԴՐԱՆԻԿ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ



Խմբանկար Պատգամաւորական Ա. Ընդհանուր ժողովի



Պատգամաւորական Ա. Ընդհ. ժողովի
Դիւանի անդամներ՝ Նախագահներ՝
Տոքթ. Յարութին Գալանճեան եւ
Յովհանէս Շահինեան- Քարտուղար՝
Մհեր Շիրումեան, Հ.Մ.Ը.Մ.ի Համագաղութային կազմակերպութեան վերածելու կոչ-
ուած եռանդամ մարմնի ատենապետ՝
Վարդգէս Տէր Կարապետեան եւ Ընդհ. ժո-
ղովի Բ. Քարտուղար՝ Վարուժան Շամլեան

Հ.Մ.Ը.Մ.Ի նորագոյն շրջանի Անդրանիկ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի գումարումին համար, «Հ.Մ.Ը.Մ.ը Համագաղութային Կազմակերպութեան Վերածելու Կոչուած Մարմինը» իր 35րդ եւ վերջին նիստը գումարեց 11 Դեկտեմբեր 1974ին, մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան վեց անդամներուն, ինչպէս նաեւ արդէն իսկ Պէյրութ ժամանած Յունաստանի, Գանատայի եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու պատգամաւորներուն:

Ժողովը զբաղեցաւ նախապատրաստական աշխատանքներու դասաւորումով եւ վերահաստատեց նախատեսուած թուականներուն՝

(13, 14 եւ 15 Դեկտեմբեր) նիստերուն վրայ օրակարգի նիւթերու բաշխումի պատկերացումը: Ապա նիստը շարունակուեցաւ Մարմնի երեք անդամներու մասնակցութեամբ, որոնք Մարմնի կողմէ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին ներկայացուցիչ նշանակեցին Վարդգէս Տէր Կարապետեանը: Վերջին անգամ կարգացուեցաւ Մարմնի գործունէութեան տեղեկագիրը եւ նիստը փակուեցաւ հետեւեալ արձանագրութեամբ.

«Մարմինս գոհունակութեամբ կ'արձանագրէ այն իրողութիւնը, որ իր վրայ դրուած պարտականութիւնը կատարած է պայմաններու ներած չափով եւ կրցած է ապահովել գաղթաշխարհի մէջ գործող մարպական եւ սկաուտական գրեթէ բոլոր կապակերպութիւններու մասնակցութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիր ժողովին, որը կը հաստատենք որ մօտաւոր ապագային պիտի առաջացնէ համագաղութային կապակերպութիւն մը»:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՏԳԱՄԱԽՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Առաջին նիստ

Ուրբաթ 13 Դեկտեմբեր 1974ի երեկոյեան ժամը 7:55ին, Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղի ակումբի գլխաւոր սրահին մէջ բացումը կատարուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Անդրանիկ Ընդհանուր Ժողովին:

Ժողովի օրակարգին մաս կը կազմէին.

- 1.- Ընդհանուր Ժողովի բացում
- 2.- Լիազօրագրերու ստուգում
- 3.- Խօսք Մարմնի ներկայացուցիչին
- 4.- Դիւանի ընտրութիւն
- 5.- Զեկոյց Մարմնի եւ Շրջաններու կողմէ
- 6.- Կազմակերպչական հարցեր
- 7.- Առաջարկուած Ընդհանուր Կանոնագրի քննութիւն եւ վաւերացում
- 8.- Շրջաններէ եկած առաջարկներ
- 9.- Գործունէութեան ուղեգիծ
- 10.- Պիւտճէ եւ նախահաշիւ
- 11.- Կեդրոնական Վարչութեան ընտրութիւն
- 12.- Փակում Ընդհանուր Ժողովի:

Բացում եւ լիազօրագրերու ստուգում

Հ.Մ.Ը.Մ.ը համագաղութային կազմակերպութեան վերածելու կոչուած Մարմնի ներկայացուցիչ Վարդգէս Տէր Կարապետեան ժողովը բացուած յայտարարելէ ետք, Մարմնի քարտուղար Հրանդ Մուրատեանի օժանդակութեամբ կատարեց ներկայ պատգամաւորներու լիազօրագրերու ստուգում:

Ստուգումէն ի յայտ եկաւ որ հետեւեալ Շրջաններն ու մասնաճիւղերը կը մասնակցէին ժողովին.-

Լիբանանէն.- Յովհաննէս Շահինեան (Շրջանային Վարչութիւն), Յուլիա Թիւթէլեան, Տոքթ. Յարութիւն Գազանճեան, Վարուժան Շամլեան

Սուրիայէն.- Տոքթ. Տիգրան Զափանեան, Պարգեւ Միսիրեան, Սուրէն Նազարեան

Գանատայէն.- Գէորգ Սեւակեան

Արեւելեան Մ. Նահանգներէն.- Պոսթըն՝ Մարսել Քարեան

Գալիֆորնիայէն.- Մհեր Շխրտըմեան

Ամմանէն.- Գէորգ Տաքեսեան, Աւեսիք Դարբինեան, Լեւոն Եփրեմեան

Երուսաղէմէն.- Յարուժիւն Պեհեսնիլեան,
Գէորգ Զիլիֆեան, Կարօ Հեքիմեան

Գահիրէէն.- Թորոս Խաչատուրեան, Տոքթ.
Սուրէն Պայրամեան

Աղեքսանդրիայէն.- Վահան Գաւուքճեան

Յունաստանէն.- Լեւոն Գայեան, Տիգրան
Սրապեան, Կարօ Մինասեան

Մարմնի ներկայացուցիչ՝ Վարդգէս Տէր
Կարապետեան:

Նշելի է թէ այս ժողովին պատգամաւորներու թիւը շրջանի անդամներու թիւի կարեւորութեան հետ չէր համեմատուած: Այդ սահմանումը ճշգրտ կանոնադրութիւնը նոր պիտի վաւերացուէր: Շրջանները կրնային մասնակցիլ առաւելագոյնը երեք պատգամաւորներով:

Վերոյիշեալ լիազօր ձայնով մասնակցող պատգամաւորներու կողքին խորհրդակցական ձայնով եւ ի պաշտօնէ կը մասնակցէին հետեւեալ անդամները.-

Թեհրանի Հայ Մշակութային «Արարատ»
Կազմակերպութեան կողմէ՝ Ռուբէն Կիւրճեան

Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան անդամներ՝ Տոքթ. Միսաք Արզումանեան, Կարօ Պետրոսեան, Բիւզանդ Թորիկեան, Յովհաննէս Տէր Յարուժիւնեան, Վարդգէս Ալահայտոյեան եւ Յակոբ Համամճեան

Մարմնի անդամներ՝ Հրանդ Մուրատեան
եւ Նշան Թիւյսիւզեան

Մամուլի եւ Հ.Յ. Դաշնակցութեան ներկայացուցիչներ՝ Տիգրան Ոսկունի, Եղուարդ Բատոյեան եւ Նազարէթ Գարագաշեան:

Մարմնի ատենապետ Վարդգէս Տէր Կարապետեան բացման ճառով բարի գալուստ մաղթեց ներկաներուն, յայտնեց ժողովի գումարման նպատակը, շեշտելով սփիւռքահայութեան պարտադրուած կեանքի պայմաններուն ու համաշխարհային Առաջին Պատերազմի աւարտէն սկսեալ հայ ժողովուրդի կազմակերպական ճիգերու յաջողութեամբ զանազան մարզերու մէջ ձեռք բերուած արդիւնքներուն վրայ: Անոնց կարգին. «Հայ Մարմնակրթական

Ընդհանուր Միութիւնը՝ Հ.Մ.Ը.Մ. հիմնուած Պոլսոյ մէջ 1918ի վինադադարի օրերուն, իրենց աչքերուն մէջ տեսիլք ու իրենց կուրծքերուն տակ հաւատք ու կամք ունեցող խումբ մը երիտասարդներու կողմէ»:

Տէր Կարապետեան յայտնեց, թէ այդ օրերէն ասդին բազմաթիւ մարզական գաղափարապաշտ միութիւններ կազմակերպուած են Սփիւռքի տարածքին եւ թէ. «...Կոչուին անոնք ԿԱՄՔ, ԱՐԱՐԱՏ թէ Հ.Մ.Ը.Մ., իրարու հետ վարչական թէ օրկանական կապ ունենան թէ ոչ, ունին միեւնոյն վսեմ առաքելութիւնը, սկսուտիւմի, մարմնակրթանքի, մարպախաղի միջոցով պատրաստել հոգեպէս եւ մարմնապէս առողջ երիտասարդութիւն մը, կերտել բարձր սկզբունքներու եւ անուր նկարագրի տէր քաղաքացին, ալնի մարդը: Կերտել իր ցեղին, իր պատմութեան եւ իր կոչումին հաւատարիմ, գիտակից հայր. պատրաստ ծառայելու իր ազգին եւ իր հայրենիքին ...»:

«... Ժամանակ է որ կապակերպուի արտասահմանը եւ ներկայանայ իբրեւ միատարր կառոյց մը, դիմագրաւելու համար հասարակաց վտանգներ եւ աւելի եռանդով ու խանդով, աւելի հետեւողականութեամբ, հետապնդելու համար իւրաքանչիւրին համար նուիրական, սրբապան եւ իւրաքանչիւրը իր անունին արժանի մարդ անհատին համար արդար եղող ՀԱՅ ԴԱՏԸ»:

Դիւանի ընտրութիւն եւ զեկոյցներու ընթերցում

Պատգամաւորական ժողովը վարելու համար դիւանը կազմուեցաւ հետեւեալ ձեւով.-

Նախագահներ՝ Յովհաննէս Շահինեան
Տոքթ. Յարուժիւն Գազանճեան
Քարտուղարներ՝ Մհեր Շիրսումեան
Վարուժան Շամլեան

Հետզհետէ կարդացուեցաւ.

Հ.Մ.Ը.Մ.ը Համագաղութային Կազմակերպութեան Վերածելու Կոչուած Մարմնի տեղեկագիրը, որմէ ի յայտ կու գայ թէ

ա.- Մարմինը կապեր հաստատած է արտա-

սահմանի բոլոր երկիրներու մէջ գործող Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարակից մարզական կազմակերպութիւններուն հետ անխտիր:

բ.- Մշակած է համագաղութային կեդրոնական կառոյցի պատկերացման համապատասխան ընդհանուր կանոնադրի նախագիծ իւրաքանչիւր երկրի մէջ Շրջաններու կամ Մեկուսի Շրջաններու դասաւորումով:

գ.- Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի գումարման համար ապահոված է մասնակցող շրջաններու կարեւոր թիւ մը, որով պիտի յաջողի կեդրոնական կառոյցի մը կազմութիւնը, Միութիւնը վերածելով Համագաղութային կազմակերպութեան:

Ապա կարգացուեցաւ Յունաստանի Շրջանային Վարչութեան տեղեկագիրը, որմէ ի յայտ կու գայ, թէ Յունաստանի շրջանը իր չորս մասնաճիւղերով՝ Ֆիքս, Գոքինիա, Գարէա եւ Սելանիկ, կը գործէ գոհացուցիչ կերպով եւ յաղթահարելով ժամանակի բերմամբ ստեղծուած՝ նիւթական, մարդուժի եւ հայապահպանման դէմ ցցուող դժուարութիւնները: Ունի մարզական եւ սկստական ճիւղեր: Անդամներու ընդհանուր թիւն է 372:

Երրորդ զեկոյցը ներկայացուեցաւ Գահիրէի «Արարատ»ի վարչութեան կողմէ: Երբեմնի այս ծաղկուն կազմակերպութիւնը արտագաղթի պատճառով մեծ դժուարութիւններու առջեւ կը գտնուի: Ունի մարզական գործունէութիւն, գլխաւորաբար պասքէթպոլի ճիւղին շուրջ կեդրոնացած: Մարզական միւս ճիւղերն են Ֆուտպոլ եւ փինկ-փոնկ: Սկստական շարժումը դադրած է: Անդամներու ընդհանուր թիւն է 120:

Բ. Աիստ

Շաբաթ 14 Դեկտեմբեր 1974ին, Ընդհանուր Ժողովի Բ. նիստը բացուեցաւ 23 լիազօր եւ 6 խորհրդակցական ձայնով մասնակցող պատգամաւորներու ներկայութեամբ:

Ժողովը շարունակեց ունկնդրել շրջաննե-

րու գործունէութեանց զեկուցումները: Հետզհետէ կարգացուեցան Աղեքսանդրիոյ «Կամք» Մարզական Ակումբի, Ամմանի Հ.Մ.Ը.Մ.ի, Երուսաղէմի Հ.Մ.Ը.Մ.ի, Թեհրանի Հայ Մշակութային Արարատ կազմակերպութեան, Գանատայի եւ Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանային Խորհուրդի, Սուրիոյ, Գալիֆորնիայի եւ Լիբանանի Հ.Մ.Ը.Մ.ներու կազմակերպական, մարզական եւ սկստական գործունէութեանց մասին ամփոփ զեկուցումներ:

Զեկուցումներէն ի յայտ կու գայ, թէ բոլոր շրջաններն ալ անխտիր կը տանին գոհացուցիչ աշխատանք, յատկապէս նորակազմ շրջաններ, ինչպէս Գանատա եւ Արեւելեան Միացեալ Նահանգներ, եւ Գալիֆորնիա, որոնք կը յաղթահարեն աշխարհագրական հեռաւորութեանց եւ ձեռներէց ու փորձառու ղեկավարութեան պակասի պատճառով յարուցուող դժուարութիւնները:

Զեկուցումներու աւարտին, Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին մասնակցող Հ.Մ.Ը.Մ.ի 23 մասնաճիւղերու անդամական թիւի ընդհանուր պատկերը կը ներկայանայ հետեւեալ ձեւով.-

Պէյրութ՝	1139
Պուրճ Համուտ՝	1125
Անթիլիաս՝	490
Այնճար՝	426
Զահլէ՝	90
Ճիւնի՝	79
Ճաէյատ՝	248
Թրիփոլի՝	82
Հալէպ՝	1250
Ամման՝	125
Երուսաղէմ՝	250
Մոնթրէալ՝	412
Թորոնթօ՝	125
Համիլթըն՝	65
Ուաշինկթըն՝	75
Պոսթոն՝	125

Հոս Անճելրս՝	350
Սան Ֆրանսիսքո՝	85
Ֆրէզնո	75
Մոնթեպելլո՝	160
Ուրոկոկոէյ՝	80
Սիանէյ՝	170
Մելպոլըն՝	80
Ընդհանուր թիւ՝	7106

Գ. Ախտ

Շաբաթ 14 Դեկտեմբերի երեկոյեան ժողովը շարունակեց իր աշխատանքները Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի հիմնական օրակարգով՝ Հ.Մ.Ը.Մ.ի Ընդհանուր ծրագիր-կանոնագրի մշակում:

Շուրջ հինգ ժամուան վրայ երկարող այս նիստի ընթացքին, յօդուած առ յօդուած քննութեան ենթարկուեցան Մարմնի կողմէ մշակուած ընդհանուր ծրագիր-կանոնագրի 84 յօդուածներէն 28ը եւ տեսակէտներու փոխանակման, բարեփոխման կամ ջնջումներու ենթարկուելով 25 յօդուածներով վաւերացուեցաւ:

Դ. Ախտ

Կիրակի 15 Դեկտեմբերի առաւօտեան, ժողովը ընտրեց Կեդրոնական Վարչութեան յառաջիկայ քառամեայ գործունէութեան յատուկ նախահաշիւի պատրաստութեան յանձնախումբ մը, մասնակցութեամբ Բիւզանդ Թորիկեանի, Նշան Թիւսիւզեանի, Գէորգ Տաքէսեանի, Կարօ Մինասեանի եւ Մարսէլ Քարեանի:

Ապա ժողովը շարունակուեցաւ ընդհանուր ծրագիր-կանոնագրի յաջորդող յօդուածներու մշակման աշխատանքով: Երկուքուկէս ժամուան վրայ երկարող այս նիստի ընթացքին բարեփոխումներով, ջնջումներով եւ յաւելումներով վաւերացուեցան թիւ 29էն թիւ 41 յօդուածները ամփոփուած 11 յօդուածներու մէջ:

Ե. Ախտ

Շարունակելով առաւօտեան նիստի կանոնագրի մշակման օրակարգը, յետ միջօրէի վեց ժամուան երկարատեւ նիստով ժողովը ամբողջացուց ընդհանուր ծրագիր-կանոնագրի վաւերացման աշխատանքը: Մշակուած ընդհանուր ծրագիր-կանոնագիրը իր ամբողջութեանը մէջ միաձայնութեամբ վաւերացուեցաւ եւ դիմաւորուեցաւ երկարատեւ ծափահարութեամբ:

Հ.Մ.Ը.Մ.ը օժտուած էր 91 յօդուածներ ընդգրկող ընդհանուր ծրագիր-կանոնագրով: Դիւանին կողմէ ձեռագիր պատրաստուած օրինակը, իբրեւ պատմական եւ վաւերական փաստաթուղթ, ստորագրուեցաւ բոլոր ժողովականներու կողմէ:

Ժողովը արձանագրեց նաեւ շրջաններէ եկած առաջարկները, գործունէութեան ուղեգիծի առաջադրանքները, ինչպէս նաեւ լսեց գրեթէ բոլոր պատգամաւորներու կողմէ արտայայտուած՝ խոստմնալից ապագայի մը լաւատեսութեամբ զեղուն՝ քաջալերական սրտի խօսքերը:

Զ. Ախտ

Կիրակի 15 Դեկտեմբեր 1974ի երեկոյեան ժամը 8:30ին, Հ.Մ.Ը.Մ.ի նորագոյն ժամանակներու Պատգամաւորական Անդրանիկ Ընդհանուր Ժողովը գումարեց իր վեցերորդ եւ վերջին նիստը:

Գէորգ Տաքէսեան ներկայացուց յանձնախումբի պատրաստած նախահաշիւի պատկերը, որուն շուրջ ժողովականները արտայայտուեցան փոփոխութեան առաջարկներով: Իբրեւ եզրակացութիւն ժողովը որդեգրեց նախահաշիւի դրութիւնը հիմնուած Կեդրոնական Վարչութեան հանդէպ, շրջաններու ցենզային պարտաւորութիւններուն վրայ: Այսպէսով տարեկան ցենզերու բաժանումով նախահաշիւի գումարը կը գոյանայ հետեւեալ կերպով:

Լիբանան՝	3000 տոլար
Սուրիա՝	150 տոլար
Գալիֆորնիա՝	500 տոլար
Գանատա եւ	
Արեւելեան Մ. Ն.՝	250 տոլար
Ամման՝	150 տոլար
Երոսաղէմ՝	100 տոլար
Եգիպտոս՝	200 տոլար
Յոնաստան՝	100 տոլար

Տարեկան ընդհանուր գումար՝ 4450 տոլար, որով չորս տարուան համար ընդհանուր գումարը կը բարձրանայ 17.800 տոլարի:

Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի վերջին օրակարգով ընտրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի անդրանիկ Կեդրոնական Վարչութիւնը, որուն մաս կը կազմեն.-

- Լիբանանէն՝ Վարդգէս Տէր Կարապետեան
- Վարդգէս Ալահայտոյեան
- Տիգրան Ոսկունի
- Բիւզանդ Թորիկեան
- Նշան Թիւյսիւզեան
- Յովհաննէս Պայթարեան
- Գանատայէն՝ Դանիէլ Դանիէլեան
- Գալիֆորնիայէն՝ Արմէն Տէյիրմէնճեան
- Պոլէնոս Այրէսէն՝ Պարգեւ Պարսամեան

Ընտրութեան այս արդիւնքը ընդունուեցաւ բոլորն եւ երկարատեւ ծափահարութիւններով:

Հ.Մ.Ը.Մ.ի անդրանիկ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի փակման խօսքը արտասանեց Ընդհանուր Ժողովի դիւանի նախագահներէն Տոքթ. Յարութիւն Գազանճեան՝ Գեղարդ: Ստորեւ Տոքթ. Յարութիւն Գազանճեանի փակման ճառը.

«Սիրելի եղբայրներ,

Ինձի համար ուրախութիւն է եւ պատիւ այս պատկառելի ժողովի փակման վերջին խօսքը արտասանել:

Բանաստեղծին խօսքով մրրկաւ էին պատուած, թէեւ մրրկաւ չէինք պատուած բայց բաւական պատուած էինք, հեռու էինք իրարմէ եւ եկաւ ժամը եւ անհրաժեշտ դարձաւ ըսել. տուր ձեռքդ եղբա՛յր, եղբայր ենք մենք: Եւ Հ.Մ.Ը.Մ.ի մեր բոլոր եղբայրները, անոնք կրեն Հ.Մ.Ը.Մ.ի անունը թէ այլ անուններ, կցորդաբար այս պարագային, ընդառաջելով եղած աշխատանքին եւ երկարած ձեռքին հոս հաւաքուեցան իրարու ձեռք աւելի ամուր սեղմելու համար եւ այդ ամուր ձեռքերուն մէջ Եռագոյն դրօշակը Հ.Մ.Ը.Մ.ի առջեւ աւելի բարձր ծածանելու համար: (ծափահարութիւն)

Կ'ըմբռնեմ ձեր բոլորին պահողութիւնները, դուք շատերդ հեռաւոր անկիւններէ եկաք, ձգեցիք ձեր գործը, ձեր տունը, ձեր հանգիստը եւ այստեղ այս չորս պատերուն մէջ փակուած աշխատեցաք ծնունդ տալու համար Հ.Մ.Ը.Մ.ի նոր կառոյցին, ծնունդ տալու համար այն գերագոյն մարմնին որ ասկէ յետոյ պիտի ղեկավարէ Հ.Մ.Ը.Մ.ի շարժումը գաղթաշխարհի մէջ:

Դուք բոլորդ ալ գիտէք Հ.Մ.Ը.Մ.ի կոչումը, բոլորդ ալ գիտէք ձեր պարտականութիւնները: Ես անոր մասին պիտի չ'անդրադառնամ այլեւս, միայն թէ կ'ենթադրեմ որ մեր շրջանները մեծ ակնկալութիւն ունին այս ժողովէն, կ'ենթադրեմ որ անոնք ըլլան պարզ անդամներ թէ ժողովականներ, գիտնան թէ չգիտնան թէ այս պատերուն մէջ ի՞նչ կը կատարուի, ամէն մարդ, ամէն հայ ի սփիւռս աշխարհի եւ եթէ կ'ուզէք տակաւին հայրենիքին մէջ անգամ Հ.Մ.Ը.Մ.էն մեծ բան կ'ակնկալէ:

Բացման խօսքին, արդէն եղբայրներ յիշեցուցին իրենց պատմականին մէջ թէ ինչպէս իր ծննդեան առաջին օրէն իսկ Հ.Մ.Ը.Մ.ը երբ դժնդակ օրերու եւ պայմաններու մէջ ծնունդ առաւ եւ երբ նորաստեղծ Հայաստան մը կար անդին, ան ալ դժնդակ պայմաններու մէջ, անոր նախարարին ընդառաջելով Հ.Մ.Ը.Մ.ը իր սկառուտները դրկեց, իր մարզիկները դրկեց, որպէսզի այստեղ ղեկավարէ մարդական շարժումը, թրծէ երիտասարդութեան մկաններն ու հոգին:

Հ.Մ.Ը.Մ.ը պիտի ընէ այնպէս, եղբայրներ, որ ասկէ յետոյ ալ մեր երիտասարդութեան՝ ծլարձակ երիտասարդութեան մէջ, անոր մկանները, անոր հոգին եւ ոգին ու միտքը այնպէս մը թրծէ որ երբ գերագոյն ժամը անգամ մըն ալ հասնի եւ նախարար մը կանչէ Հ.Մ.Ը.Մ.ը որ կապմակերպեցէք այստեղ մեր երիտասարդութիւնը եւ անոր մարկական շարժումը, Հ.Մ.Ը.Մ.ը պիտի ըսէ «Միշտ Պատրաստ» եւ Եռագոյն դրօշակով պիտի երթայ իր առաքելութիւնը շարունակելու մինչեւ այն օրը որ հայութիւնը գոյութիւն ունենայ եւ ապրի, որովհետեւ հայութիւնը պիտի ապրի, եւ անոր հետ Հ.Մ.Ը.Մ.ը պիտի ապրի:

Ես վստահ եմ որ այս հեռանկարով պիտի

Հ. Մ. Ը. Մ.
Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
ՊԵՐՈՒԹ
18 - 15 Դեկտեմբեր 1974

ԻՐԱՅԱՍՈՒ ԶԱՅՆՈՎ ՊԱՏՄԱՍԻՈՐՆԵՐ

ԼԻՔՆԱՍ

- 1.- Յովհաննէս Շահինեան / Երջանային վարչութիւն *Յովհաննէս Շահինեան*
- 2.- Յուսէկ Թիւրքեան *Կարգապահ*
- 3.- Տօթ. Թարուղիւն Գազանժան *Կարգապահ*
- 4.- Վարուժան Շամլեան *Վարուժան Շամլեան*

ՅՈՒՐԻՍՏ

- 5.- Տօթ. Տիգրան Զախանեան *Ս. Զախանեան*
- 6.- Պարզու Միսիրեան *Պարզու Միսիրեան*
- 7.- Սուրէն Նազարեան *Սուրէն Նազարեան*

ԳՆԱՅՏԱ - ԱՐՅՈՒՆԸՆԱՆ ԱՐՅՈՐԻՍՏ

- 8.- Մարտէլ Գարեան *Մարտէլ Գարեան*
- 9.- Գեորգ Սաւակեան *Գ. Սաւակեան*

ԳՍԼ ԻՅՕՐՆԻՍ

- 10.- Մհեր Եղիշեան *Մհեր Եղիշեան*

ԱՄՄՆ

- 11.- Գեորգ Տազեան *Գեորգ Տազեան*
- 12.- Աւետիս Դարբինեան *Աւետիս Դարբինեան*
- 13.- Լեւոն Եփրեմեան *Լեւոն Եփրեմեան*

ՅՈՐԴԱՆՆԱՍ

- 14.- Թարուղիւն Գեհեսիւնեան *Թարուղիւն Գեհեսիւնեան*
- 15.- Գեորգ Զիլիճեան *Գեորգ Զիլիճեան*
- 16.- Կարօ Ղեզնիճեան *Կարօ Ղեզնիճեան*

ԱՂԵՐՄԱՆԻՍ

- 17.- Վահան Գալուցեան *Վ. Գալուցեան*

ԳՆԶԻՐԵ

- 18.- Թորոս Կարապետեան *Թորոս Կարապետեան*
- 19.- Տօթ. Սուրէն Պալամեան *Սուրէն Պալամեան*

մեկնիք դուք այստեղէն եւ պիտի շարունակէք Հ.Մ.Ը.Մ.ի սուրբ գործը:

Կեցցէ՛ Հ.Մ.Ը.Մ.ը:

Կեցցէ՛ Հայութիւնը»:

Ապա Ժողովը փակուեցաւ 37 ներկաներուն կողմէ յօտնկայս երգուած «Յառաջ Նահատակ» քայլերգով:

Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութիւնը եւ Պէյրուզի մասնաճիւղի վարչութիւնը 14 եւ 15 Դեկտեմբերի գիշերներուն, խրախճանք ճաշկերոյթներով պատուեցին Ա. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին մասնակցող անդամները:

- 2 -

ՅՈՒՆԱՍՏԱՆ

- 20.- Լեւոն Գայան *Լեւոն Գայան*
- 21.- Տիգրան Սրապեան *Տիգրան Սրապեան*
- 22.- Կարօ Միլասեան *Կարօ Միլասեան*

Հ.Մ.Ը.Մ.-ի Ա. Ընդհանուր ժողովի Կազմակերպիչ Մարմին:

- 23.- Վարդէս Տէր Կարապետեան *Վարդէս Տէր Կարապետեան*

ԽՈՐՀՐԴԱԾԱԿԱՆ ԶԱՅՆՈՎ

ՏՐԱՅԱՅՅԻՆ ՎՄՁՈՒԹԻՒՆ

- 1.- Տօթ. Միսաք Արզումանեան *Միսաք Արզումանեան*
- 2.- Կարօ Գեորգեան *Կարօ Գեորգեան*
- 3.- Բիւզանդ Թորիկեան *Բիւզանդ Թորիկեան*
- 4.- Յովհաննէս Տէր Թարուղիւնեան *Յովհաննէս Տէր Թարուղիւնեան*
- 5.- Վարդէս Աշխատյան *Վարդէս Աշխատյան*
- 6.- Թակոբ Համամեան *Թակոբ Համամեան*

ԿԱՏԱՅԵՐՊԻՁ ՄԱՐՄԻՆ

- 7.- Հրանդ Սուրբանեան *Հրանդ Սուրբանեան*
- 8.- Նշան Թիւսիւզեան *Նշան Թիւսիւզեան*

ԹՅՂԱՆ - ԱՐԱՐԱՏ

- 9.- Ռուբէն Կիւրճեան

ՏՐԱՅԱՅՅԻՆ ՍԿՆՈՒՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴ

- 10.- Միհրան Եիշիւրեան / Երջանային ԽՂՁՊԵՍ / *Միհրան Եիշիւրեան*
- 11.- Թասմիկ Մուրաթեան / Երջանային ԽՂՁՊԵՍՈՒՆԻ / *Թասմիկ Մուրաթեան*

ԱԶՊԱԿ

- 12.- Տիգրան Ոսկունի *Տիգրան Ոսկունի*

ՀՐԱԻՒԹՅԱԼՆԵՐ

- 13.- Եղուարդ Բաժոյան *Եղուարդ Բաժոյան*
- 14.- Նազարէթ Գարագաշեան *Նազարէթ Գարագաշեան*


Վարդէս Տէր Կարապետեան
15- *Վահան Գալուցեան* *Սուրէն Պալամեան*

Պատգամաւորական Ա. Ընդհանուր Ժողովի մասնակցողներու ստորագրութիւնները

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ԴԵԿՏԵՄԲԵՐ 1974 – ԱՊՐԻԼ 1979

- ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ
- ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ՀԵՏ ԿԱՊԵՐ
- ՆՈՐ ՇՐՋԱՆՆԵՐ ԵՒ ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐ
- ՍԿԱՈՒՏԱԿԱՆ
- ՄԱՐԶԱԿԱՆ
- ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ
- ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ
- ԱՐԺԱՆԵԱՑ ՇՔԱՆՇԱՆ



Անդրանիկ Կեղրոնական Վարչութեան անդամներ՝ Նշան Թիւսիւլեան, Բիւլանդ Թորիկեան, Դանիել Դանիելեան, Վարդգէս Տէր Կարապետեան, Պարգէն Պարսամեան, Յովհաննէս Պայթարեան եւ Արմէն Տէյիրմէնճեան: Կը բացակային Տիգրան Ոսկունի եւ Վարդգէս Ալահայտոյեան



Անդրանիկ Կեղրոնական Վարչութեան Լիբանանի անդամները նիստի ընթացքին, Ն. Թիւսիւլեան, Բ. Թորիկեան, Վ. Տ. Կարապետեան, Վ. Ալահայտոյեան եւ Յ. Պայթարեան

Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կազմակերպութեան վերածուելէն ետք, ընտրեալ առաջին Կեդրոնական Վարչութեան առջեւ կը բացուէր աշխատանքի լայնատարած դաշտ: Արդարեւ իրենց նախընթացը չունեցող կազմակերպչական աշխատանքներ կային որոնք Կեդրոնական Վարչութեան, յատկապէս նստավայրի՝ Պէյրութի անդամներուն ուսերուն պիտի ծանրանային, անկախ այն իրողութենէն որ անոնք նախորդողի մը փորձառութիւնը չէին ժառանգէր:

Կեդրոնական վարչութեան սպասող աշխատանքները ունէին ծրագրային եւ գործնական գոյգ բնոյթներ եւ կ'ենթադրէին անոնց իրականացման համար նիւթական միջոցներու ապահովում: Այս ծրագիրներու յաջող իրականացումէն էր կախուած նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային նորաստեղծ կառոյցի հաստատումը:

Հ.Մ.Ը.Մ.ի անդրանիկ Կեդրոնական Վարչութեան ինը անդամներէն երեքը կը բնակէին արտասահման:

18 Դեկտեմբեր 1974ին, Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի նախագահ Յովհաննէս Շահինեանի եւ քարտուղար Վարուժան Շամլեանի հրաւերով տեղի ունեցաւ Կեդրոնական վարչութեան առաջին ժողովը ներկայութեամբ Պէյրութ բնակող հինգ անդամներուն որոնք աշխատանքներու բաժանումը կատարեցին հետեւեալ ձեւով.-

Ասենապետ՝ Վարդգէս Տէր Կարապետեան
Ասենադպիրներ՝ Տիգրան Ոսկունի եւ Բիւզանդ Թորիկեան

Գանձապահ՝ Նշան Թիւյսիւզեան

Հաշուապահ՝ Յովհաննէս Պայթարեան

Խորհրդականներ՝ Վարդգէս Ալահայտոյեան, Դանիէլ Դանիէլեան, Պարգեւ Պարսամեան եւ Արմէն Տէյիրմէնճեան:

Յաջորդ նիստի ընթացքին Վարդգէս Ալահայտոյեանին վստահուեցաւ փոխ-ասենապետի պաշտօնը: Կեդրոնական Վարչութեան նստավայրը դարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի ակումբը:

Կազմակերպչական բազմաթիւ աշխատանք-

ներ կը սպասէին նորակազմ Կեդրոնական վարչութեան: Պէտք էր ամէն ինչ սկիզբէն սկսիլ: Ստեղծուեցան գրասենեկային հիմնական կարելիութիւնները: Տպուեցան նամակագրութեան յատուկ թուղթեր, պատրաստուեցաւ կնիք, ատենագրական եւ հաշուական տոմարներ: Գնուեցաւ գրամեքենայ եւ ապահովուեցաւ մասնակի վճարումով քարտուղարուհի:

27 Մարտի 1975ի նիստի ընթացքին հաստատուեցաւ քառամեայ գործունէութեան նախածրագիր հետեւեալ բաժիններով.-

- Միջ-մասնաճիւղային մարզական գոյգ հանդիպումներու կազմակերպում

- Միջ-մասնաճիւղային երկու բանակումներու կայացում

- Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 60ամեակի տօնակատարութիւն՝ 1978ին

- Կեդրոնական թանգարանի հիմնում

- Կեդրոնական Ֆոնտի եւ կեդրոնական մթերանոցի ստեղծում

- «Վեթերաններու Օր»ուայ, շքանշաններու, մարզիկներու եւ սկաուտներու դաստիարակչական դրութիւններու հաստատում

- Յուշամատենի եւ լրատուի հրատարակութիւն

- Նոր շրջաններու կցում (Ֆրանսա, Իրաք, Քուէյթ, Պրագիլիա)

- Լիակազմ ժողովներու գումարում:

Այս տարողութեամբ ծրագրի մը իրականացումը ըստ նախատեսութեանց կը կարօտէր նուազագոյնը 50 հազար ամերիկեան տոլարի, մինչդեռ Պատգամաւորական Ա. Ընդհանուր Ժողովի կողմէ քուէարկուած նախահաշիւի ընդհանուր գումարն էր 17.800 տոլար:

Այս իրողութեան առջեւ առաջնահերթ նկատուեցաւ յաւելեալ պիւստի ապահովումը: Առ այդ Կեդրոնական Վարչութիւնը ծրագրեց կազմակերպել կեդրոնական ֆոնտի ստեղծման ճաշկերոյթ՝ 18 Մայիս 1975ին: Այս ճաշկերոյթի ընթացքին պիտի յայտարարուէր նաեւ Լիբանանեան Խորհրդարանի անդամ մեթր Խաչիկ

Պապիկեանի կողմէ խոստացուած նուիրատուութեամբ Պէյրութի ակումբի շէնքին վրայ գոյգ յարկերու շինութեան ծրագիրը:

ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ՀԵՏ ԿԱՊԵՐ

1975ի Ապրիլին ծագեցաւ Լիբանանի քաղաքացիական կռիւներու առաջին հանգրուանը եւ ճաշկերոյթի ծրագիրը չիրականացաւ: Երկրի պետական եւ տնտեսական մարզերը անդամալուծուեցան: Մայրաքաղաքը սկսաւ պարպուիլ կենսունակ եւ գործունեայ տարրէն եւ բաժնուեցաւ արեւելեան եւ արեւմտեան շրջաններու՝ մէկէն միւսը անցնելու արգելքներով: Հեռաձայնային հաղորդակցութիւնները դադրեցան եւ ժողովներու գումարումը անկարելի դարձաւ:

1976ի կիսուն Լիբանանէն մեկնեցաւ Տիգրան Ոսկունին իսկ Վարդգէս Ալահայտոյեան, պաշտօնի բերմամբ, գրեթէ մնայուն կերպով արտասահման գտնուեցաւ: Կեդրոնական Վարչութիւնը տարուայ ընթացքին միայն եօթը նիստեր յաջողեցաւ գումարել՝ մասնակի ներկայութիւններով: 1976ի Մարտին, համեմատաբար խաղաղ ժամանակամիջոցէն օգտուելով եւ ապահովական մտահոգութիւններով, Պէյրութի ակումբէն Բիւզանդ Թորիկեանի Անթիլիասի շրջանի բնակարանը փոխադրուեցան Մերձաւոր Արեւելքի շրջանային վարչութեան արխիւային թղթածրարներու այն բաժինները որոնք Լիբանանի Շրջանին չէին պատկաներ: Կազմուեցան Շրջանային եւ Մեկուսի Շրջաններու յատուկ թղթածրարներ:

Կազմակերպչական գործունէութեան գլխաւոր խոչընդոտը հանդիսացաւ հաղորդակցութեան միջոցներու անբաւարարութիւնը: Արտասահմանի հետ նամակցութեան համար պէտք էր դիմել պատահական ճամբորդներու որոնք ուղեւալ քաղաքը կը մեկնէին, կամ նամակներն ու շրջաբերականները հասցնել Կիպրոս, ուրկէ թղթատարական ճամբով կը ղրկուէին Շրջաններուն:

Գործունէութեան այս դժուարին պայմանները անփոփոխ մնացին Կեդրոնական Վարչութեան քառամեայ գործունէութեան ամբողջ ժամանակամիջոցին:

ՆՈՐ ՇՐՋԱՆՆԵՐ ԵՒ ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի առաջին Պատգամաւորական ընդհանուր ժողովին մասնակցեցան հիմնադամ չորս Շրջաններ՝ Լիբանան, Յունաստան, Արեւմտեան Միացեալ Նահանգներ եւ Գանատա, Արեւելեան Միացեալ Նահանգներ: Մասնակցեցան նաեւ հինգ մասնաճիւղեր՝ Հալէպ, Ամման, Երուսաղէմ, Գահիրէ եւ Աղեքսանդրիա: Ներկայացուող մասնաճիւղերու ընդհանուր թիւն էր 25: Ժողովէն կը բացակայէին, սակայն իրենց գործակցութեան հաւանութիւնը յայտնած էին երեք մասնաճիւղեր՝ Պուէնոս-Այրէս, Սիտնէյ եւ Մելպուռն: Այս ձեւով քառամեակի սկզբնաւորութեան Կեդրոնական կառոյցին մաս կը կազմէին 28 մասնաճիւղեր բաժնուած չորս Շրջաններու եւ ութը Մեկուսի Շրջաններու վրայ:

Քառամեակի ընթացքին, համագաղութային կառոյցին միացան 18 նոր մասնաճիւղեր, ընդհանուր թիւը բարձրացնելով 46ի հետեւեալ դասաւորումով, Լիբանան՝ 8 մասնաճիւղ, Յունաստան՝ 4, Սուրիա՝ 5, Գանատա՝ 4, Արեւելեան Միացեալ Նահանգներ՝ 7, Արեւմտեան Միացեալ Նահանգներ՝ 6, Աւստրալիա՝ 4, Պուէնոս Այրէս, Փարիզ, Գահիրէ, Աղեքսանդրիա, Նիկոսիա, Ամման, Երուսաղէմ եւ Քուէյթ: Այսպէսով կազմուած եղան չորս նոր Շրջաններ՝ Սուրիա, Աւստրալիա, Գանատա եւ Արեւելեան Միացեալ Նահանգներ (վերջին երկուքին անջատումով) եւ աւելցան երեք Մեկուսի Շրջաններ՝ Փարիզ, Նիկոսիա եւ Քուէյթ:

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ

Կեդրոնական Վարչութեան գործունէութեան նախածրագրին մաս կը կազմէին գոյգ

համագաղութային բանակումներ: Պայմանները սակայն հազիվ կարելի դարձուցին մէկ բանակումի իրականացումը: Այս նպատակով, առաջին հերթին, Բիւզանդ Թորիկեանի Մարտի 1977ի անձնական ճամբորդութենէն օգտուելով հանդիպում մը տեղի ունեցաւ Աթէնքի մէջ Յունաստանի Շրջանային Վարչութեան կազմին հետ ուր 1978ին Յունաստանի մէջ համագաղութային առաջին ընդհանուր բանակում մը կազմակերպելու Կեդրոնական Վարչութեան ծրագիրը ներկայացուցաւ:

Յունաստանի Շրջանային Վարչութիւնը ուրախութեամբ դիմաւորեց այս առաջարկը: 1977ի Յունիսին, Շրջանային Վարչութիւնը հաղորդեց նաեւ Յունաստանի Սկստակական Կեդրոնի Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային Ա. ընդհանուր բանակումի աշխատանքներուն օժանդակելու պատրաստակամութիւնը: Սակայն, 1978ի Յունուարին, Շրջանային Վարչութեան ատենապետ՝ Լեւոն Գայեան եւ ատենադպիր՝ Պօղոս Զոլաքեան Պէյրութ ժամանեցին յայտնելու համար ընդհանուր բանակումի գործնականացումի դժուարութիւնները առաջարկելով զանց առնել անոր կայացումը:

Կեդրոնական վարչութիւնը հաստատու մնաց իր ծրագրին վրայ քաջալերելով Յունաստանի Շրջանային վարչութիւնը ամէն զնով իրականացնելու արդէն ճամբայ հանուած եւ շրջաններուն հաղորդուած ծրագիրը:

Բանակումի կայացման առթիւ շրջանները դժուարութիւններ ունեցան նաեւ իրենց պատուիրակութեանց անդամներուն Յունաստան մուտքի վիզա ապահովելու դիմումի ընթացքին: Աւելի ուշ ի յայտ եկաւ Յունաստանի օրուայ համար պետական մտավախութիւնները որով «հայերը Յունաստանի մէջ համախմբուելով կրնային հակաթուրք ելոյթներ հրապարակել»:

Հակառակ այս խոչընդոտներուն, Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային Ա. ընդհանուր բանակումը տեղի ունեցաւ նախատեսուած ձեւով Յէն 13 Օգոստոս 1978ին Աթէնքէն 40 քմ. հե-



Համագաղութային Ա. Ընդհանուր Բանակումի աշտարակը

ուաւորութեան վրայ գտնուող Գալամոս գիւղի բարձունքի ծառաշատ բանակավայրին մէջ մասնակցութեամբ 11 երկիրներէ ժամանած 226 արի-արենոյշներու: Մասնակցող Շրջաններն էին՝ Աւստրալիա, Արեւելեան եւ Արեւմտեան Միացեալ Նահանգներ, Գանատա, Ֆրանսա, Ամման, Երուսաղէմ, Քուէյթ, Լիբանան, Նիկոսիա, Յունաստան եւ Թէհրանի Արարատը:

Սկստակական ճիւղին զարկ տալու նպատակով Կեդրոնական վարչութեան սկստակական համագումարի կայացման ծրագիրը եւ սկստակական ընդհանուր կանոնադրութիւն մը մշակելու աշխատանքները իրենց լրումին չհասան: Այս ծրագիրները սկստակական կեդրոնական խորհուրդի մը վստահելու մտածումն ալ անգործնական գտնուեցաւ գլխաւորաբար անոնց իրականացման համար նիւթական կարելիութեանց պակասին պատճառով:

ՄԱՐՉԱԿԱՆ

Մարզական գետնի վրայ Կեդրոնական վարչութեան նախաձեռնութեամբ համագաղութային հանդիպումներ կազմակերպելու ծրագիրներ չմշակուեցան: Նիւթական պայմանները եւ շրջաններու մասնակցութեան

պատրաստակամութիւնները դրական արդիւնքներ չէին խոստանար: Կեդրոնական Վարչութիւնը, զարկ տալու համար աթլետիզմի ճիւղին, հաստատեց Հ.Մ.Ը.Մ.ի աթլետիզմի ախոյեանութեան դրութիւն բոլոր շրջաններու աթլետիք մրցումներու արդիւնքներուն բաղադրութեամբ ճշդելով իւրաքանչիւր տարուայ աթլետիզմի բոլոր ճիւղերու Հ.Մ.Ը.Մ.ական ախոյեան մարզիկներ: Այս մրցակցութիւնը քաջալերելու նպատակով հաստատուեցաւ «Պեզիկեան» մրցանակ, Ալեքս Պեզիկեանի տարեկան հազար տոլարի պարգեւով, տրամադրելի ընտրեալ չորս մարզիկներու մասնաճիւղերուն:

ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

1974-79 քառամեակի ընթացքին Կեդրոնական Վարչութեան անդամները, առաւելաբար օգտագործելով անձնական ճամբորդութիւններու առիթները, այցելութիւններ տուին զանազան Շրջաններու եւ մասնաճիւղերու մօտէն ծանօթանալով կատարուող աշխատանքներուն, աշխատելաձեւին եւ տեղական պայմաններուն:

Վարդգէս Տէր Կարապետեան այցելեց հետեւեալ վայրերը.- Գանատա, Արեւելեան Միացեալ Նահանգներ, Արեւմտեան Միացեալ Նահանգներ, Յունաստան, Արժանթին, Եգիպտոս, Ամման, Հալէպ, Փարիզ, Վիէն, Վալանս, Լիոն, Մարսէյ եւ Նիկոսիա:

Նշան Թիւսիւզեան այցելեց Պոսթըն, Նիւ Ճըրզի եւ Մոնթրէալ

Վարդգէս Ալահայտոյեան այցելեց Արեւմտեան Միացեալ Նահանգներ, Յունաստան եւ Փարիզ:

Բիւզանդ Թորիկեան այցելեց Յունաստան եւ Փարիզ:

Այս այցելութիւններուն առթիւ անդամները Կեդրոնական Վարչութիւնը ներկայացուցին, վարչական, անդամական ընդհանուր եւ Շրջանային ներկայացուցչական ժողովներուն:

Անոնք ներկայ գտնուեցան զանազան պաշտօնական հանդիսութիւններու եւ Կեդրոնական Վարչութեան պատգամները փոխանցեցին ներկաներուն:

ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ

Հակառակ նախածրագրի մէջ տեղ գտած հրատարակչական լայն ծրագիրներուն (Ծրագիր-Կանոնագիր, յուշամատեան, լրատու, մարզիկներու եւ սկսուներու դաստիարակչական դրութիւններ), Կեդրոնական Վարչութիւնը յաջողեցաւ հրատարակել միայն անդրանիկ Պատգամաւորական ժողովին կողմէ վաւերացուած Ծրագիր-Կանոնագիրը, 28 էջերէ բաղկացող եւ 92 յօդուածներ պարունակող գրքոյկ մը որ անմիջապէս յղուեցաւ Շրջաններուն առ ի գործադրութիւն:

Յուշամատեանի իրականացումը որ երկարաշունջ աշխատանքի մը արդիւնքը պիտի հանդիսանար, ի վերջոյ, իր սաղմին մէջ մնաց: Կարգ մը խմբագիրներ որոնց վստահուած էին յատուկ բաժիններ, հազիւ սկսուած աշխատանքները չփոխանցեցին Կեդրոնական Վարչութեան, ուրիշներ արդէն չէին ձեռնարկած աշխատանքի:

ԱՐԺԱՆԵԱՑ ԾՔԱՆՇԱՆ

22 Փետրուար 1976ի նիստի ընթացքին, Կեդրոնական Վարչութիւնը, անսալով Հ.Մ.Ը.Մ.ի զանազան Շրջանային կամ ընդհանուր ժողովներու առաջարկներուն, հաստատեց «Արժանեաց Շքանշան»ի դրութիւն:

«Արժանեաց Շքանշան»ը ունեցաւ զոյգ աստիճաններ՝ ոսկի եւ արծաթ: Մշակուեցաւ Արժանեաց Շքանշանի յատուկ կանոնագրութիւն՝ շնորհման պայմաններու, կուրծքի մետալի, լամբակի պէճի, վկայականի եւ տուչութեան բաժիններով:

Շքանշանի կանոնագրութիւնը հրատարակուեցաւ յատուկ գրքոյկով:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

- ՀՐԱԻԷՐ, ՎԱՅՐ, ԹՈՒԱԿԱՆ, ՕՐԱԿԱՐԳ
- ԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ
- ՆԻՍՏԵՐ
- ԱՌԱՋԱՐԿՆԵՐ, ՈՐՈՇՈՒՄՆԵՐ
- ԸՆՏՐՈՒԹԻՒՆ Բ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ
- ՓԱԿՈՒՄ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ Բ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ



Դիւան Պատգամաւորական Բ. Ընդհանուր ժողովի՝ Սուրէն Նազարեան, Ժորժ Տաղեան, Կարօ Մինասեան եւ Գաբրիէլ Թասլաբեան

Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Բ. Ընդհանուր ժողովի խմբանկար

ՊԱՏԱՌԱՎՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ԵՎ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ԿՈՄԻՏԵՍԻ ԿԱԿՈՒՄՈՒՄԻ ԿՈՄԻՏԵՍԻ

ՀՐԱԻԷՐ, ՎԱՅՐ, ԹՈՒԱԿԱՆ, ՕՐԱԿԱՐԳ

Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութիւնը որոշեց Պատգամաւորական Բ. Ընդհանուր ժողովը կայացնել Նիկոսիոյ մէջ 6, 7 եւ 8 Ապրիլ 1979ին եւ այս նպատակով 18 Յունուար 1979ի իր թիւ 31 շրջաբերականով հրաւէր ուղղեց Շրջաններուն եւ Մեկուսի Շրջաններուն ընտրելու իրենց անդամներու ընդհանուր թիւի համեմատութեամբ պատգամաւորներ, շրջաբերականին կցելով նաեւ ժողովի օրակարգի նիւթերը:

Պատգամաւորական Բ. Ընդհանուր ժողովը բացուեցաւ 6 Ապրիլ 1979ին, Կիպրոսի մայրաքաղաք Նիկոսիոյ Չրչիլ պանդոկի սրահին մէջ:

Ժողովի օրակարգն էր.-

- Բացում Պատգամաւորական Ընդհանուր ժողովի

- Առժամեայ դիւանի ընտրութիւն
- Լիազօրագրերու ստուգում
- Մնայուն դիւանի ընտրութիւն
- Խորհրդակցական ձայնով մասնակցողներ

- Յանձնախումբերու կազմութիւն. արխիւային, բանաձեւի, հաշուեքննիչ եւ նախահաշիւի

- Ա. Պատգամաւորական Ընդհանուր ժողովի ատենագրութեան վաւերացման հարց

- Շրջանային եւ Մեկուսի Շրջաններու քառամեայ գործունէութեանց տեղեկագրեր

- Կեդրոնական վարչութեան քառամեայ գործունէութեան տեղեկագրի ընթերցում

- Լուսաբանական հարցումներ
- Ըստ էութեան քննութիւն
- Կազմակերպչական
- Կանոնագրային
- Սկսուտական
- Մարզական
- Քարոզչական

- Նիւթական միջոցներու բարելաւում
- Առաջարկներ եւ թելադրանքներ
- Նախահաշիւի քննարկում
- Յանձնախումբերու զեկոյցներ
- Կեդրոնական վարչութեան ընտրութիւն
- Փակում Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Բ. Ընդհանուր ժողովի:

ԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Պատգամաւորական Բ. Ընդհանուր ժողովի առժամեայ դիւանի անդամներ ընտրուեցան

Նախագահ՝ Կարօ Մինասեան

Քարտուղար՝ Սուրէն Նազարեան

Լիազօրագրերու ստուգումէն ի յայտ եկաւ որ Պատգամաւորական Բ. Ընդհանուր ժողովի ա. նիստին կը մասնակցին հետեւեալ շրջանները իրենց պատգամաւորներով.-

Սուրիա՝ Պարգեւ Միսիրեան, Սուրէն Նազարեան, Ջաւէն Սապունճեան, Յովհաննէս Խաչատուրեան, Անդրանիկ Հէքիմեան, Երջանիկ Կարպուշեան եւ Գէորգ Ապահունի:

Լիբանան՝ Յովհաննէս Տէր Յարութիւնեան, Տոքթ. Յարութիւն Գազանճեան, Վարուժան Մուրատեան, Հրայր Տէր Թորոսեան, Կարօ Թիւթիւնճեան, Շահէ Ենիգոմշեան եւ Երուանդ Տէմիրճեան:

Յունաստան՝ Կարպիս Տապանեան, Կարօ Մինասեան եւ Յարութիւն Թազուրեան:

Գանատա՝ Գրիգոր Գուլումճեան, Վարուժան Սերոբեան եւ Գէորգ Մանկելեան:

Արեւմտեան Մ. Նահանգներ՝ Քերոբ Առաքելեան, Տոքթ. Սարգիս Արեւեան եւ Կարպիս Թիթիգեան:

Արեւելեան Մ. Նահանգներ՝ Պետրոս Կարապետեան, Էտի Մելիքեան, Յարութիւն Շըբլանեան եւ Եղիշէ Խոստեղեան:

Պուլճնոս Այրէս՝ Ժորժ Տաղլեան եւ Գարլօ Մարգարեան:

Փարիզ՝ Կարպիս Պոսնոյեան եւ Սուրէն Մուրատեան:

Ամման՝ Ժորժ Տաքեսեան եւ Լեւոն Եփրեմեան:

Երուսաղէմ՝ Կարօ Հէքիմեան:

Քուէյթ՝ Գաբրիէլ Թասլաքեան եւ Ներսէս Խաչատուրեան:

Նիկոսիա՝ Պօղոս Մահտեսեան եւ Լեւոն Սարեան:

Խորհրդակցական ձայնով հրաւիրեալներ՝ Նշան Պապիկեան, Տոքթ. Միսաք Արզումանեան, Գէորգ Կարապետեան, Միքայէլ Յովսէփեան, Վարդգէս Միրոյեան, Պետրոս Էօճիւրեան եւ Արթօ Դաւիթեան:

Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ՝ Վարդգէս Տէր Կարապետեան, անդամներ՝ Դանիէլ Դանիէլեան, Նշան Թիւյսիւզեան, Յովհաննէս Պայթարեան, Պարգեւ Պարսամեան, Բիւզանդ Թորիկեան եւ Արմէն Տէյրիմէնճեան:

Լիազօր Պատգամաւորներու Ընդհանուր Թիւ 39, խորհրդակցական ձայնով կամ ի պաշտօնէ մասնակիցներ՝ 13: Ժողովէն կը բացակայէին Աւստրալիոյ Շրջանի պատգամաւորները: Շրջանը ուղարկած էր իր գործունէութեան տեղեկագիրը:

Ապա ժողովը ընտրեց իր մնայուն դիւանը հետեւեալ ձեւով.-

Նախագահներ՝ Կարօ Մինասեան եւ Ճորճ Տաղլեան, Քարտուղարներ՝ Սուրէն Նազարեան եւ Գաբրիէլ Թասլաքեան:

Ընտրուեցան նաեւ բանաձեւի, արխիւային, հաշուեքննիչ, նախահաշիւի եւ սկստական հարցերու յանձնախումբեր:

Կարգացուեցան երէց եղբայր Տիգրան Քհն. Խոյեանի եւ Ալեք Պէզիկեանի յաջողութեան մաղթանքներու հեռատիպերը:

Ժողովին անունով երախտագիտական հե-

ռագիր մը ղրկուեցաւ Կիպրոսի հանրապետութեան նախագահ Ս. Քիպրիանուին, Հայ Դատին հանդէպ Կիպրոսի նպաստաւոր կեցուածքին համար, մաղթելով որ կիպրական հարցը գտնէ իր արդար եւ շուտափոյթ լուծումը:

ՆԻՍՏԵՐ

Երեք օրերու վրայ բաժնուած եօթը նիստերու ընթացքին ժողովը սպառեց օրակարգի բոլոր նիւթերը:

7 Ապրիլի առաւօտեան Գ. նիստի ընթացքին Կեդրոնական Վարչութեան ատենադպիր՝ Բիւզանդ Թորիկեան կարդաց շրջանաւարտ Կեդրոնական Վարչութեան քառամեայ գործունէութեան մատնատիպ 67 էջերէ բաղկացող տեղեկագրութիւնը որ ընդունուեցաւ յօսնկայս երկարատեւ ծափահարութիւններով: 1974 Դեկտեմբերէն 1979 Ապրիլ ժամանակաշրջանի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան գործունէութիւնը քուէարկութեամբ «Յոյժ գնահատելի» բանաձեւուեցաւ:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ԵՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Ստորեւ 1979-1983 քառամեայի ընթացքին Կեդրոնական Վարչութեան կողմէ իրականանալի առաջարկներու եւ որոշումներու ցանկը.-

Կազմակերպչական.-

- Պահել մնայուն քարտուղար մը
- Պարբերաբար այցելել Շրջանները
- Յաճախակի ղրկել զեկոյց — տեղեկատուներ
- Կազմակերպել Շրջանային վարչութիւններու ներկայացուցիչներու ժողովներ:

Կանոնագրային.-

- Յօդուածներու յստակացման փոքր բարեփոխումներ մտցնել ծրագիր-կանոնագրի գրքոյկին մէջ:

Քարոզչական.-

- Հրատարակել Հ.Մ.Ը.Մ.ի պարբերաթերթ
- Օգտագործել հայ մամուլի էջերը
- Պատրաստել վաւերագրական տեսաերիզներ:

ներ:

Նիւթական.-

- Հաստատել կեդրոնական ֆոնտ: Տեղւոյն վրայ եղած նուիրատուութիւններէ եւ քառամեակի վրայ երկարող նուէրներու խոստումներէն գոյացաւ 33.000 ամերիկեան տոլար:

Սկաուտական.-

- Կազմել սկաուտական յանձնախումբ մը, պարտականութիւն ունենալով վեց ամսուայ ժամանակամիջոցին պատրաստել սկաուտական ընդհ. կանոնագրի նախագիծ մը, որ մշակուելէ ետք շրջաններու համապատասխան ժողովներուն կողմէ, խորհրդակցական ժողովի մը կողմէ քննուի եւ փորձառական ժամանակաշրջանի մը համար ղրկուի շրջաններուն Պատգամաւորական Գ. Ընդհանուր ժողովին կողմէ վաւերացուելու համար

- Կազմակերպել համագաղութային բանակում

- Կազմակերպել համագաղութային խմբապետական ժողով:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ Բ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

8 Ապրիլ 1979ի եօթներորդ նիստի վերջին օրակարգով ընտրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Բ. Կեդրոնական Վարչութեան կազմը բաղկացած հետեւեալ եղբայրներէն.-



Պատգամաւորական Բ. Ընդհանուր ժողովի փակման ճաշկերոյթ, կը խօսի Պօղոս Մահուտեան

Պէյրուսէն՝ Վարդգէս Տէր Կարապետեան, Բիւզանդ Թորիկեան, Նշան Թիւյսիւզեան, Յովհաննէս Պայթարեան, Տոքթ. Յարութիւն Գազանճեան եւ Վարուժան Մուրատեան: Մոնթրէալէն՝ Վարուժան Սերոբեան: Պուէնոս-Այրէսէն՝ Պարգեւ Պարսամեան եւ Լոս Անճէլըսէն՝ Արմէն Տէյիւրմէնճեան:

«Յառաջ Նահատակ» քայլերգով փակուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Երկրորդ Ընդհանուր ժողովը:

Նիկոսիոյ Հ.Ե.Մ.-ի Վարչութիւնը ի պատիւ Պատգամաւորական Բ. Ընդհանուր ժողովի մասնակցողներուն, սուլաւ պաշտօնական ճաշկերոյթ որուն ընթացքին խօսք առին Կիպրոսի Հայոց Առաջնորդ՝ Զարեհ Վրդ. Ազնաւորեան, Կիպրական Խորհրդարանի անդամ՝ Անդրանիկ Աշճեան, Կեդրոնական Վարչութեան ատենապետ՝ Վարդգէս Տէր Կարապետեան, Նիկոսիոյ մասնաճիւղի ատենապետ՝ Պօղոս Մահուտեան եւ շրջաններէն կարգ մը պատգամաւորներ:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.Ի ԵՐԿՐՈՐԴ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ԱՊՐԻԼ 1979 – ԱՊՐԻԼ 1983

- ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ
- ՆՈՐ ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐ ԵՒ ՇՐՋԱՆՆԵՐ
- ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԸՆԴՀ. ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ
ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ Բ. ԸՆԴՀ. ԲԱՆԱԿՈՒՄ
- ՍԿԱՈՒՏԱԿԱՆ Ա. ՀԱՄԱԳՈՒՄԱՐ
- ՄԱՐՉԱԿԱՆ
- ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ
- ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ
- ՆԻԻԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆ



Երկրորդ Կեդրոնական Վարչության անդամներ՝ Վարուժան Մուրադյան, Վարուժան Սերոբեյան, Պարգեյ Պարսամյան, Նշան Թիւյսիւլեան, Վարդգէս Տէր Կարապետեան, Արմէն Տէմիրճեան, Տոքթ. Յարութիւն Գալանճեան, Յովհաննէս Պայթարեան եւ Բիւզանդ Թորիկեան



Համագաղութային
Բ. Ընդհանուր Բանակումի
մուտքի կայմերը,
Քլամար 1980

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ

Պատգամաւորական Բ. ընդհանուր ժողովին ընտրուած Կեդրոնական Վարչութիւնը, Նիկոսիոյ մէջ կայացած 9 Ապրիլ 1979ի նիստով, կատարեց իր աշխատանքներու բաժանումը հետեւեալ կերպով.

Ասենապետ՝ Վարդգէս Տէր Կարապետեան
Փոխ-ասենապետ՝ Տոքթ. Յարութիւն Գազանճեան

Ասենադպիրներ՝ Բիւզանդ Թորիկեան (Թղթակցութիւն) եւ Վարուժան Մուրատեան (ատենագրութիւն)

Գանձապահ՝ Նշան Թիւյսիւզեան

Հաշուապահ՝ Յովհաննէս Պայթարեան

Խորհրդականներ՝ Պարգեւ Պարսամեան, Արմէն Տէյիրմէնճեան եւ Վարուժան Սերոբեան:

26 Մայիս 1980ին կազմի գանձապահ՝ Նշան Թիւյսիւզեան մահացաւ: Հետեւաբար, կազմի ամբողջացման համար հրաւիրուեցաւ փոխանդամ՝ Վարդգէս Ալահայտոյեան: Այնուհետեւ գանձապահի պաշտօնը վարեց Բիւզանդ Թորիկեան:

Կեդրոնական Վարչութեան նստավայրն էր Պէյրութի մասնաճիւղի ակումբը, սակայն ակումբէն ներս մնայուն գրասենեակը կարելի չեղաւ օգտագործել երկրի քաղաքացիական կռիւներու ստեղծած անապահովութեան պատճառով: Կեդրոնական Վարչութեան արխիւները մնացին Բիւզանդ Թորիկեանի բնակարանը:

Քառամեայ գործունէութեան ընթացքին Կեդրոնական Վարչութիւնը գումարեց 151 հերթական նիստեր եւ մէկ լիազումար նիստ՝ Փետրուար 1982ին, Աթէնքի մէջ: Կազմի արտասահմանի անդամներուն հետ կապերը եղան մնայուն: Մնայուն կապեր պահուեցան նաեւ Շրջաններու եւ Մեկուսի Շրջաններուն հետ, Թղթակցութեան եւ շրջաբերականներու փոխանցումով:

ՆՈՐ ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ ԵՒ ՇՐՋԱՆՆԵՐ

Քառամեակի ընթացքին Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կառոյցին միացած են Քուէյթի Հայ Արիներու եւ Արենոյշներու Կազմակերպութիւնը եւ Լոնտոնի մէջ գործող Անգլիոյ Հայ Սկառուսներու Միութիւնը: 1979ի Դեկտեմբերին կը կազմուի Աւստրալիոյ Շրջանը ուր կը գործէին երեք մասնաճիւղեր:

Այսպէսով 1983ի Ապրիլին Միութիւնը կը գործէր 14 երկիրներու մէջ 7 Շրջանային եւ 11 Մեկուսի Շրջաններու բաժանումով, ընդհանուրը 55 մասնաճիւղերով:

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ Բ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՆԱԿՈՒՄ

Պատգամաւորական Բ. Ընդհանուր ժողովի որոշումին համաձայն, Կեդրոնական Վարչութիւնը, 1979ի Մայիսին կազմեց 7 անդամներէ բաղկացած Սկառուսական Կեդրոնական Յանձնախումբը: Սակայն այս կազմի գործունէութիւնը ամուլ մնաց, հինգ տարբեր երկիրներու մէջ գտնուող անդամներուն միատեղ հաւաքուելու անկարելիութեան պատճառով: Այս Յանձնախումբէն սպասուող սկառուսական ընդհանուր կանոնագրութեան մը մշակումը իրականացաւ 1982ին Աթէնքի մէջ գումարուած համագաղութային Ա. Սկառուսական Համագումարի ընթացքին:

21 Նոյեմբեր 1979ի նիստի ընթացքին Կեդրոնական Վարչութիւնը որոշեց համագաղութային Բ. ընդհանուր բանակումը կայացնել 1980ի Օգոստոսին: Բանակումի կազմակերպութեան առաջին թեկնածութիւնը ներկայացուց Փարիզի նորակազմ մասնաճիւղի վարչութիւնը, որուն վստահուեցաւ այս կարեւոր աշխատանքը: Կեդրոնական Վարչութեան կողմէ ներկայացուցիչ նշանակուեցաւ Բիւզանդ Թորիկեան:

14էն 26 Օգոստոս 1980ին, Փարիզի մօտակայ Քլամար հայաշատ քաղաքին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային Բ. ընդհանուր բանակումը մասնակցութեամբ 12 երկիրներ ներկայացնող 293 սկառուներու եւ արենոյններու: Մասնակցող շրջաններն էին. Աւստրալիա, Լիբանան, Քուէյթ, Գանատա, Արեւելեան Մ. Նահանգներ, Արեւմտեան Մ. Նահանգներ, Յունաստան, Սուրիա, Ամման, Կիպրոս, Երուսաղէմ, Փարիզ եւ Թեհրանի Արարատ կազմակերպութեան պատուիրակութիւնը:

14 Օգոստոսին տեղի ունեցաւ բանակումի պաշտօնական բացումը բանակավայրի «Նշան Թիւսիւզեան» հրապարակին վրայ՝ դրօշակի արարողութեամբ:

15 Օգոստոսի առաւօտեան ընդհանուր հաւաքոյթի ընթացքին Կեդրոնական Վարչութիւնը յայտարարեց բանակումի ղեկավարման խորհուրդի հետեւեալ կազմը.

Ընդհանուր խմբապետ՝ Սուրէն Մուրատեան

Ընդհանուր քարտուղարուհի՝ Մարօ Քէշիշեան

Ընդհանուր հերթապահ՝ Տոքթ. Մանուկ Իսկէնտէրեան

Աշխատանքային բաժիններու պատասխանատուներ՝

- Սկառուական՝ Գառնիկ Նազարէթեան
- Արենուշական՝ Սրբուհի Տէյիրմէնճեան
- Կարգապահութիւն՝ Յակոբ Ոսկերիչեան
- Նուագախումբ՝ Յովսէփ Զերտելեան
- Մատակարար՝ Վարդան Վարդանեան
- Մամուլ՝ Գաբրիէլ Թասլաքեան
- Հաշուապահ՝ Վրէժ Ապաճեան
- Օգնական՝ Րաֆֆի Սարգիսեան:

Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային Բ. ընդհանուր բանակումի յայտագրին մաս կազմեցին.

1.- Արշաւներ եւ այցելութիւններ՝ էյֆելի աշտարակ, Հ.Յ.Դ. թանգարան, Փէր Լաշէզի գերեզմանատուն՝ Զօր. Անդրանիկի դամբարան, Գրիգոր Յակոբեանի շիրիմ (Թիէյի գերեզմանատուն), 17 Օգոստոսի Սբ. Աստուա-

ծածնի տօնին առթիւ հայկական եկեղեցիներու Սուրբ Պատարագի եւ խաղողօրհնութեան արարողութեանց (Փարիզ, Իսի Լէ Մուլինօ, Քլամար, Ալֆորվիլ), Քլամարի քաղաքապետարան:

2.- Պաշտօնական ելոյթներ՝ Փարիզի ազատագրման տարեդարձ, ընդհանուր սողանցք Քլամարի մէջ, բանակավայրին մէջ Սբ. Պատարագ հանդիսապետութեամբ՝ Սերովբէ Արք. Մանուկեանի, պատարագիչ՝ Գիւտ Եպս. Նաքքաշեան:

3.- Դասախօսութիւններ Տիգրան Ճիմպաշեան (Հայ Դատ) Մարօ Քէշիշեան (սկառուական խմբավարութիւն) Բիւզանդ Թորիկեան (Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կառոյց):

4.- Փակման հանդիսութիւն, ներկայութեամբ Ֆրանսայի խորհրդարանի անդամ եւ Քլամարի քաղաքապետ Ժան Ֆօնթընոյի եւ Ֆրանսահայ բազմահարիւր այցելուներու:

Տեղի ունեցան պաշտօնական ելոյթներ եւ հիւրասիրութիւն:

ՍԿԱՌՈՒՏԱԿԱՆ Ա. ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային Սկառուական Ա. համագումարը տեղի ունեցաւ 18էն 20 Փետրուար 1982ին Աթէնքի Հայ Տան մէջ: 13 Շրջաններ եւ Մեկուսի Շրջաններ ներկայացնող 44 սկառու խմբապետ եւ վարչական անդամներ մասնակցեցան այս համագումարին: Համագումարի գլխաւոր օրակարգն էր Հ.Մ.Ը.Մ.ի Սկառուական ծրագիր կանոնագրի մշակում՝ ծրագրային, վարչական, ժողովական, աստիճանաւորական կարգերու, կարգապահական, տարագային եւ ընդհանուր բանակումներ բաժիններով:

Նիստերը վարեցին Կեդրոնական Վարչութեան անդամներ՝ Վարուժան Մուրատեան եւ Վարուժան Սերոբեան:

Աշխատանքային 6 նիստերով համագումարի մասնակցող անդամները վերջնական ձեւի մէջ դրին Հ.Մ.Ը.Մ.ի սկառուական ծրագիր կա-

նոնագիրը իր 113 յօդուածներով, ինչպէս նաեւ համագաղութային ընդհանուր բանակումներու ծրագիր կանոնագիրը 17 յօդուածներով: Որոշուեցաւ նաեւ Վարդանանցի յիշատակի թուականը ընդունիլ որպէս «Հայ Սկսուածի Օր»ուայ յիշատակութեան թուական:

Համագումարի կայացման առընթեր, շրջանի քաղաքապետութեան որոշումով, տեղի ունեցաւ Գոքինիոյ մասնաճիւղի Զաւարեան կեդրոնի կից փողոցի անուան վերակոչման հանդիսութիւն «Հայ Սկսուածի Փողոց» կոչումով:

Համագումարի բացման ու փակման հանդիսութիւններուն ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ.Ի Յունաստանի Շրջանային վարչութեան անդամները, Յունաստանի Հայոց Թեմակալ առաջնորդը եւ կրօնական դասը, ազգային եւ միութենական կազմակերպութեանց ներկայացուցիչներ:

ՄԱՐԶԱԿԱՆ

Կեդրոնական Վարչութեան մարզական գլխաւոր նախաձեռնութիւնը եղաւ պասքէթպոլի համագաղութային Ա. մրցաշարքը: Որոշումը առնուեցաւ 1979ի Մայիսին եւ իրագործումը վստահուեցաւ Գանատայի Շրջանին: 28 Յունիսէն — 5 Յունիս 1981ին Թորոնթոյի եւ Մոնթրէալի մէջ տեղի ունեցան տղոց 8 եւ աղջկանց 3 խումբերու միջեւ զտումի եւ աւարտական մրցումները: Ութը Շրջաններէ աւելի քան 200 մարզիկներ մաս կազմեցին այս մրցաշարքին: Տղոց մրցաշարքին մասնակցեցան Աւստրալիոյ, Եգիպտոսի, Լիբանանի, Յորդանանի, Արեւելեան Մ. Նահանգներու, Արեւմտեան Մ. Նահանգներու եւ Գանատայի ներկայացուցչական խումբերը: Աղջկանց մրցաշարքերուն մասնակցեցան Լիբանան, Արեւելեան Մ. Նահանգներ եւ Գանատա: Տղոց խումբերու ախոյեան հանդիսացաւ Արեւմտեան Մ. Նահանգներու ներկայացուցչական խումբը, աղջկանց խումբերու մրցաշարքի ախոյեան հանդիսացաւ Լիբանանի ներկայացուցչական կազմը- [Ծ/17.2-30]:

Կեդրոնական Վարչութիւնը վերահաստատեց նաեւ Հ.Մ.Ը.Մ.Ի աթլետիզմի մրցանիշներու դրուութիւնը, շրջաններէ ներս կամ միջ-շրջանային մրցումներու ընթացքին ձեռք բերուած արդիւնքներու համադրումով: Այս նախաձեռնութիւնը քաջալերելու համար հաստատուած «Ալեքս Պէգիկեան» մրցանակի դրուութիւնը շարունակուեցաւ՝ տարեկան 1000 ամերիկեան տոլարի պարգեւով բաժանելի ախոյեան մարզիկներու մասնաճիւղերուն վրայ:

ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Կեդրոնական Վարչութեան անդամները 1979-1983 քառամեակի ընթացքին այցելութիւններ տուած են համագաղութային կառույցին մաս կազմող գրեթէ բոլոր շրջաններուն՝ Սուրիա, Աւստրալիա, Եգիպտոս, Արեւելեան Մ. Նահանգներ, Արեւմտեան Մ. Նահանգներ, Գանատա, Կիպրոս, Ամման, Յունաստան եւ Լիբանան: Այս այցելութիւնները յաճախ կատարուած են Շրջանային Ներկայացուցչական Ժողովներու ընթացքին:

Այցելութիւններ տրուած են նաեւ Լոնտոնի եւ Քուէյթի շրջաններուն տեղւոյն սկսուած Միութիւնները միացնելու համար Հ.Մ.Ը.Մ.Ի ընտանիքին:

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ

Սկսուածական գիտելիքներու նորագոյն գրքոյկներու պատրաստութիւնը երկար ժամանակի կը կարօտէր: Առ այդ Կեդրոնական Վարչութիւնը վերահրատարակեց նախապէս օգտագործուող՝ գայլիկներու եւ նորընծայ սկսուած գրքոյկները 2000 աւան տպագրականով:

«ՄԱՐԶԻԿ» Պաշտօնաթերթ

Կեդրոնական Վարչութեան հրատարակչական գլխաւոր իրականացումը պիտի հանդիսա-

նար ՄԱՐԶԻԿ պաշտօնաթերթը: ՄԱՐԶԻԿ պիտի ըլլար երկար տարիներէ ի վեր եւ յաջորդական Պատգամաւորական ժողովներու կողմէ առաջարկուած ծրագրի մը իրականացումը՝ վերահաստատուած Պատգամաւորական Բ. Ընդհանուր ժողովի առաջարկներու օրակարգով: Կեդրոնական Վարչութեան 2 Մայիս 1979ի նիստի ընթացքին որոշուեցաւ իրականացնել պաշտօնաթերթի հրատարակութիւնը: Այս կարեւոր ծրագրի իրականացումը պիտի պահանջէր 10 երկար ամիսներու նախապատրաստութիւն՝ խմբագրական կազմի, արտօնագրի, տպարանային աշխատանքներու եւ նիւթական միջոցներու ապահովման բաժիններով: ՄԱՐԶԻԿ ամսաթերթի առաջին թիւը լոյս տեսաւ 1980ի Մարտ ամսուայ ընթացքին, նոր հորիզոններ բանալով համագաղութային կառույցի փոխադարձ կապերուն ծանօթացման եւ Միութեան գաղափարաբանութեան տարածման համար:

Ամսաթերթը կը բաղկանար 40 երկսիւնակ պատկերազարդ էջերէ, գունաւոր կողքով: Տպաքանակն էր 3500 օրինակ:

Նահատակ Յեղի Անմահներ

24 Հոկտեմբեր 1979ի նիստի ընթացքին, Կեդրոնական Վարչութիւնը կ'որոշէ Միութեան

թեան հիմնադիրներէն Տիգրան Աւագ Քհնյ. Խոյեանի յուշերը հրատարակել իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական մատենաշարի առաջին թիւը: Հրատարակութեան խմբագրական աշխատանքները կը վստահուին Տոքթ. Յարութիւն Գազանճեանին: Հատորը լոյս կը տեսնէ 1983ի Մարտ 31ին «Նահատակ Յեղի Անմահներ» անունով 222 պատկերազարդ էջերով եւ 2000 տպաքանակով որոնցմէ 150 օրինակը թուագրուած, կաշեկազմ եւ հեղինակի ձեռագիր ստորագրութեամբ:

ՆԻՒԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆԻՒԹԻՒՆ

1979 — 1983 քառամեակին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նիւթական գործունէութեան ընդհանուր գումարն է 549.000 լիբանանեան թղթոսկի:

Մուտքերը գոյացած են՝ ցենզերէ, նուիրատուութիւններէ, համագաղութային ձեռնարկներէ, գոյքերու վաճառքէ եւ դրամատան սուկոսներէ: Ելքերու բաժնին մաս կը կազմեն պաշտօնէութիւն եւ գրասենեակ, Մարզիկ պաշտօնաթերթ, ընդհանուր բանակում, մարզական ձեռնարկներ, գոյքեր, համագումար, շրջաններու այցելութիւններ եւ Ընդհանուր ժողով:



Համագաղութային
Ա. խաղեր 1981
պասքեթպոլի մրցաշարք

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ Գ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
ԱԹԷՆՔ 14 – 17 ԱՊՐԻԼ 1983

- ՕՐԱԿԱՐԳ
- ԲԱՑՈՒՄ ԵՒ ՆԵՐԿԱՆԵՐ
- ԴԻԻԱՆ ԵՒ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐ
- ՆԻՍՏԵՐ
- ՓԱԿՈՒՄ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ Գ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ



Պատգամաւորական Գ. Ընդհանուր Ժողով՝ խմբանկար



Արժամեայ Դիւան Գ. Ընդհանուր Ժողովի, Քարտուղար՝ Տոքթ. Մանուէլ Իսկէնտերեան, Նախագահ՝ Տոքթ. Միսաք Արզումանեան, Կեդրոնական Վարչութեան ատենադպիր՝ Բիւլանդ Թորիկեան, ողջոյնի խօսքը կ'արտասանէ՝ Տիգրան Քինյ. Խոյեան

ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ
Գ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳ

Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Գ. Ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ 14էն 17 Ապրիլ 1983ին Աթէնքի Թիթանիա պանդոկի սրահին մէջ:

Ընդհանուր ժողովի օրակարգին մաս կը կազմէին՝

- 1.- Բացում Պատգամաւորական ժողովի
- 2.- Առժամեայ դիւանի ընտրութիւն
- 3.- Լիազօրագրերու ստուգում
- 4.- Մնայուն դիւանի ընտրութիւն
- 5.- Խորհրդակցական ձայնով մասնակցողներ
- 6.- Յանձնախումբերու կազմութիւն՝ արխիւային, հաշուեքննիչ, նախահաշիւի եւ բանաձեւի
- 7.- Պատգամաւորական Բ. ընդհանուր ժողովի ատենագրութեան վաւերացում
- 8.- Շրջաններու եւ Մեկուսի Շրջաններու քառամեայ գործունէութեան տեղեկագրեր
- 9.- Կեդրոնական Վարչութեան քառամեայ նիւթաբարոյեական գործունէութեան տեղեկագրեր
- 10.- Կազմակերպական հարցեր — Կեդրոնական Վարչութիւն — Շրջաններ կապի դրութիւն
- 11.- Կանոնադրային հարցեր
- 12.- Սկստակական հարցեր
- 13.- Մարզական հարցեր
- 14.- ՄԱՐԶԻԿ պաշտօնաթերթ
- 15.- Քարոզչական
- 16.- Տնտեսական
- 17.- Առաջարկներ 1983-1987 քառամեակի գործունէութեան
- 18.- Յանձնախումբի գեկուցումներ
- 19.- Նախահաշիւի վաւերացում
- 20.- Կեդրոնական Վարչութեան ընտրութիւն
- 21.- Փակում Պատգամաւորական Գ. ընդհանուր ժողովի

ԲԱՑՈՒՄ ԵՒ ՆԵՐԿԱՆԵՐ

Ժողովին բացումը կատարեց Կեդրոնական Վարչութեան ատենապետ Վարդգէս Տէր Կարապետեան որ պատգամաւորներուն ուղղուած բարի գալուստի խօսքէն ետք, հրաւիրեց ժողովականները յոտնկայս յարգելու անցնող քառամեակի ընթացքին յաւելաւ բաժնուած Հ.Մ.Ը.Մ.ականներու յիշատակը մասնաւորելով՝ Յովհաննէս Շահինեանը, Դանիէլ Դանիէլեանը, Նշան Թիւյսիւզեանը եւ Սուրէն Մուրատեանը:

Ընդհանուր ժողովին Կեդրոնական Վարչութեան յատուկ հրաւերով ներկայ էին Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն միակ վերապրող Տիգրան Քհն. Խոյեան եւ Հ.Յ.Դ. Պիւրոյի ներկայացուցիչ Խաթակ Տէր Գրիգորեան:

Շրջաններու պատգամաւորներն էին.

Լիբանանէն՝ Վարուժան Շամլեան, Պատրիկ Կիւլպէնկեան, Ժողէֆ Նարպանտեան, Երուանդ Տէմիրճեան, Պետրոս Շեմմեսեան, Կարօ Թիւթիւնճեան եւ Տոքթ. Միսաք Արզումանեան:

Սուրիայէն՝ Գէորգ Կարապետեան, Սուրէն Նազարեան, Տոքթ. Մանուկ Իսկէնտէրեան, Միհրան Օհանեան եւ Նշան Օղիկեան:

Գանատայէն՝ Լեւոն Պենկեան, Գրիգոր Գուլումճեան, Տիգրան Մելքոնեան, Վարդգէս Յակոբեան եւ Արմէն Կետիկեան:

Արեւելեան Միացեալ Նահանգներէն՝ Եղիշէ Խոստեղեան, Պետրոս Կարապետեան, Արամ Եփրեմեան, Յարութիւն Շքլանեան եւ Ծօնի Գասարճեան:

Արեւմտեան Միացեալ Նահանգներէն՝ Տոքթ. Սարգիս Արեւեան, Ժիրայր Պոյաճեան, Յակոբ Օվայեան եւ Սեւակ Սաֆինեան:

Յունաստանէն՝ Կարպիս Տապանեան, Վարուժան Նշանեան եւ Պատրիկ Մարուքեան:

Աւստրալիայէն՝ Սարգիս Տէր Պետրոսեան եւ Յովհաննէս Մարտոյեան:

Մեկուսի Շրջանները ներկայացուած էին հետեւեալ պատգամաւորներով.-

Ամման՝ Ճորճ Տաքեսեան:

Երուսաղէմ՝ Կարօ Հէքիմեան եւ Վահան Օհաննէսեան:

Փարիզ՝ Կարպիս Երեմեան եւ Յարութիւն Հաճիհայկեան:

Լոնսոն՝ Անահիտ Սարգսեան եւ Արմէն Մարտ:

Պոլէնոս Այրէս՝ Աբրահամ Ահարոնեան, Խորիս Միրիճեան Բիքարսօ Գոլթնուեան եւ Ռուբէն Գոճայեան:

Քուէյթ՝ Քեռի Սարգիսեան:

Կիպրոս՝ Անանիա Մահսեան:

Ժողովին խորհրդակցական ձայնով հրաւիրեալներէն ներկայ էին, Ալեքօ Պեգիկեան, Եփրատ Իվանեան, Կարօ Մինասեան, Լեւոն Գայեան, Կարպիս Գոլյումճեան, Գալուստ Գոհարունի, Յակոբ Համամճեան, Տոքթ.Շահէ Ենիգոմճեան, Յովհաննէս Տէր Յարութիւնեան եւ Ռազմիկ Այլազբալեան:

Ներկայ էին նաեւ, ի պաշտօնէ, Կեդրոնական Վարչութեան անդամներ՝ Տոքթ. Յարութիւն Գազանճեան, Բիւզանդ Թորիկեան, Վարուժան Մուրատեան, Յովհաննէս Պայթարեան եւ Վարուժան Սերոբեան:

Այսպէսով եօթը Շրջաններ եւ եօթը Մեկուսի շրջաններ ներկայացնող 44 իրաւասու ձայնով պատգամաւորներ եւ 15 ի պաշտօնէ կամ խորհրդակցական ձայնով հրաւիրեալներ ներկայ եղան Պատգամաւորական Գ. Ընդհանուր Ժողովին ներկայացնելով 55 մասնաճիւղեր:

ԴԻԻԱՆ ԵՒ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐ

Ժողովի առժամեայ դիւանի անդամներ ընտրուեցան, նախագահ՝ Տոքթ. Միսաք Արգումանեան, քարտուղար՝ Լեւոն Պենկեան:

Պատգամաւորներու լիազօրագրերու ստուգումէն եւ ժողովի օրինականութեան հաստատումէն ետք, ժողովի մնայուն դիւանի անդամներ ընտրուեցան, նախագահներ՝ Տոքթ. Միսաք Արգումանեան եւ Վարդգէս Յակոբեան, քարտուղարներ՝ Լեւոն Պենկեան, Վարուժան Շամլեան եւ Կարօ Թիւթիւնճեան:

Տիգրան Քհն. Խոյեանի ողջոյնի եւ քաջալերանքի խօսքերէն ետք ժողովը ընտրեց հետեւեալ ենթայանձնախումբերը.

Արխիւային՝ Երուանդ Տէմիրճեան, Յակոբ Օվայեան եւ Միհրան Օհանեան

Հաշուեքննիչ եւ նախահաշիւի՝ Ճանի Գասարճեան, Տիգրան Մելքոնեան եւ Տիրան Խաչատուրեան

Քուէախոյզ՝ Յարութիւն Շքլանեան, Պատրիկ Կիւլպէնկեան, Գէորգ Կարապետեան եւ Անահիտ Սարգիսեան

Բանաձեւի՝ Երուանդ Տէմիրճեան, Նշան Օղիկեան եւ Յակոբ Օվայեան

Ընդհանուր Կանոնագրի բարեփոխութեան՝ Պետրոս Շէմէսեան, Գէորգ Կարապետեան, Ժիրայր Պոյաճեան, Սարգիս Տէր Պետրոսեան, Արմէն Կէտիկեան, Ռուբէն Գոճայեան, Արմէն Մարդ եւ Ճորճ Տաքէսեան

Սկստուական կանոնագրի բարեփոխութեան՝ Շահէ Ենիքոմճեան, Սուրէն Նազարեան, Յովհաննէս Մարտոյեան, Արամ Եփրեմեան, Գրիգոր Գոլյումճեան, Անահիտ Սարգիսեան եւ Իւղիկ Շիթիլեան:

ՆԻՍՏԵՐ

Չորս օրերու վրայ բաժնուած ինը նիստերով Հ.Մ.Ը.Մ.ի Գ. Պատգամաւորական ընդհանուր ժողովը լսեց Շրջաններու եւ Մեկուսի Շրջաններու քառամեայ գործունէութիւններու տեղեկագրերը, քննեց շրջանաւարտ Կեդրոնական Վարչութեան նիւթաբարոյական գործունէութեան տեղեկագիրը ապա լսելէ ետք

արխիւային եւ հաշուեքննիչ յանձնախումբերու տեղեկագրութիւնները կեդրոնական վարչութեան 1979-1983 քառամեակի գործունէութիւնը որակեց «ԽԻՍՏ ԳՆԱՀԱՏԵԼԻ»:

Դիւանը արձանագրեց առաջարկներ կեդրոնական վարչութեան յառաջիկայ քառամեակի գործունէութեան համար եւ քուէարկեց համապատասխան նախահաշիւ որուն ընդհանուր գումարը կը բարձրանայ հարիւր վաթսուն հազար ամերիկեան սուլարի:

Ժողովի ընթացքին քննուեցան եւ վաւերացուեցան ընդհանուր կանոնագրի կարգ մը յօդուածներու բարեփոխման առաջարկները: Նոյնպէս ժողովը ուսումնասիրեց կեդրոնական վարչութեան կողմէ նշանակուած սկաուտական ընդհանուր կանոնագրի մշակման յանձնախումբի պատրաստած կանոնագրութիւնը եւ զայն վաւերացուց:

Ժողովի վերջին օրակարգով ընտրուեցաւ կեդրոնական վարչութեան նոր կազմ որուն կ'անդամակցին՝ Վարդգէս Տէր Կարապետեան, Տոքթ. Յարութիւն Գազանճեան, Վարուժան Մուրատեան, Բիւզանդ Թորիկեան, Երուանդ Տեմիրճեան, Միհրան Շիմշիրեան, Կարօ Թիւթիւնճեան, Վարուժան Սերոբեան եւ Վարդգէս Ալահայտոյեան: Կեդրոնական վարչութեան փոխ-անդամներ ընտրուեցան Տոքթ. Միսաք Արզումանեան եւ Յովհաննէս Տէր Յարութիւնեան:

ՓԱԿՈՒՄ ՊԱՏԳԱՄԱԽՈՐԱԿԱՆ Գ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Ժողովի փակման խօսքը արտասանեց Տոքթ. Միսաք Արզումանեան որ ժողովական պատգամաւորները նկատեց՝ այն ուխտաւորները որոնք կը հաւաքուին չորս տարին անգամ մը, ու վերադարձին իրենց հետ կը տանին «Բարձրացի՛ր-Բարձրացո՛ւր» եւ հայկականութիւն դրոշմող Հ.Մ.Ը.Մ.ի ոգեղէն նոր միւտոնը» ապա աւելցուց.



Երրորդ կեդրոնական վարչութեան անդամներ Միլանոյի Խորհրդաժողովին, նստած՝ Կարօ Թիւթիւնճեան, Երուանդ Տեմիրճեան, Վարդգէս Տէր Կարապետեան, Տոքթ. Յարութիւն Գազանճեան, Վարուժան Մուրատեան, ուղի՝ Բիւզանդ Թորիկեան, Վարդգէս Ալահայտոյեան, Վարուժան Սերոբեան, Միհրան Շիմշիրեան

«... Ու պիտի մեկնինք վաղը»

«Գացէ՛ք, մեր երախտաշատ հիմնադիրներուն վառ տեսիլքը ձեր աչքերուն, մեր նահատակներուն խոովքն ու վրէժը ձեր սրտերուն, շարունակելու Հ.Մ.Ը.Մ.ի դրօշարշաւը եւ ձեռքէ ձեռք ու սերունդէ սերունդ փոխանցելու, վահագնով՝ բոց, վարդանով՝ Աւարայր, Սարդարապատով՝ անլոյլի պանգակատուն դարձած մեր նախնիքներու պատգամը:»

«Գացէ՛ք նոր յաղթանակներու վերանորոգիչ ուժով, միացեալ կամքով, միասնական աշխատանքով, Հ.Մ.Ը.Մ.ը Այգային Ոգիի եւ Այգին Նուիրման կենդանի յուշարձանը դարձնելու:»

«Երթանք, առաւել բարձրանալու եւ մեր սլացքով, առաւել բարձրացնենք մեր Միութեան ու գաղափարին պոյգ դրօշները:»

Կեցցէ՛ Հ.Մ.Ը.Մ.ը:»


Ապա վարագոյրը իջաւ Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Գ. Ընդհանուր ժողովի աշխատանքներուն վրայ, յոտնկայս երգուած՝

Յառաջ Նահատակ քայլերգով:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԵՐՐՈՐԴ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ
ԱՊՐԻԼ 1983 – ԱՊՐԻԼ 1987

- ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ
- ՆՈՐ ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐ
- ՄԻՋ ԴԻԻԱՆԱՅԻՆ Ա. ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ
- ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ
- ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ
- ՄԱՐԶԱԿԱՆ
- ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ Գ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՆԱԿՈՒՄ
- ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ
- Հ.Մ.ԸՄ.Ի 65 ԱՄԵԱԿ



Յուշատախտակ պետեղուած Չալֆոնթ Հայցի բանակավայրին մէջ



Գ. ԸՆդհանուր բանակումին մասնակից ղեկավար անդամներ

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան Ապրիլ 1983 - Ապրիլ 1987 քառամեակի գործունէութեան համար կազմի ընտրեալ ինը անդամներէն եօթը կը բնակէին Լիբանան իսկ երկուքը արտասահման. վարդգէս Ալահայտոյեան՝ Լոս Անճելըս եւ վարուժան Սերոբեան՝ Մոնթրէալ:

17 Ապրիլ 1983ին Աթէնքի մէջ, ներկայութեամբ Գ. Ընդհանուր ժողովի դիւանի անդամներուն տեղի ունեցաւ Կեդրոնական վարչութեան անդրանիկ նիսար որով ընթացքին վարչութեան ատենապետ ընտրուեցաւ վարդգէս Տէր Կարապետեան:

1 Մայիս 1983ին, Պէյրութի մէջ կայացած երկրորդ նիստով դիւանի անդամներու ընտրութիւնը ամբողջացաւ հետեւեալ ձեւով.

Փոխ ատենապետ՝ Տոքթ. Յարութիւն Գազանճեան

- Ատենադպիր՝ Երուանդ Տէմիրճեան (նամակագրութիւն),
- վարուժան Մուրատեան (ատենագրութիւն)

- Գանձապահ՝ Բիւզանդ Թորիկեան
- Հաշուապահ՝ Միհրան Շիմշիրեան

Սկառուսական հարցերու պատասխանատու՝ Կարօ Թիւթիւնճեան Խորհրդականներ՝ վարդգէս Ալահայտոյեան եւ

վարուժան Սերոբեան:

վարչական ժողովներու կայացման վայր ճշդուեցաւ Պէյրութի մասնաճիւղի ակումբը:

31 Յունուար 1986ի գիշերը, Պէյրութի «Արա Երեւանեան» ակումբէն տուն վերադարձին, երկու այլ Հ.Մ.Ը.Մ.ականներու՝ Լեւոն Պերպէրեանի եւ Ներսէս Խիւտապետեանի կողքին կը նահատակուի Կեդրոնական վարչութեան ատենապետ՝ վարդգէս Տէր Կարապետեան: 5 Մայիս 1986ին Կեդրոնական վարչութեան կազմի ամբողջացման կը հրաւիրուի փոխանդամ Յովհաննէս Տէր Յարութիւնեան: Դիւանի վերակազմութեան առթիւ ատենապե-

տութեան պաշտօնը կը ստանձնէ Բիւզանդ Թորիկեան:

Կեդրոնական վարչութեան լիազուժար 3 նիստերը տեղի կ'ունենան հետեւեալ կարգով. Միլանոյի մէջ Ապրիլ 1985ին, Լոնտոնի մէջ Օգոստոս 1986ին եւ Աթէնքի մէջ Ապրիլ 1987ին:

Կեդրոնական վարչութիւնը իր գործունէութեան շրջանին կը խմբագրէ Սկառուսական Առաջին Համագումարին կողմէ մշակուած եւ Գ. Պատգամաւորական Ընդհանուր ժողովին կողմէ վաւերացուած սկառուսական ընդհանուր ծրագիր կանոնագիրը եւ կը վերամշակէ Հ.Մ.Ը.Մ.ի ընդհանուր ծրագիր կանոնագիրը համաձայն Գ. Պատգամաւորականի վաւերացուցած բարեփոխումներուն:

1984ի Մայիսէն սկսեալ, Կեդրոնական վարչութիւնը կը նախաձեռնէ ժողովական եւ վարչական կանոններու յատուկ գրքոյկի մը պատրաստութեան: Այս աշխատանքը կ'երկարի իր գործունէութեան ամբողջ ժամանակաշրջանին վրայ, վերջնական ծրագիրը ներկայացուելու համար Պատգամաւորական Դ. Ընդհանուր ժողովին:

Կեդրոնական վարչութիւնը 27 Յունուար 1986ի նիստով կ'որոշէ հաստատել «Օառայութեան Շքանշան»ի դրութիւնը, կը մշակէ անոր կանոնագրութիւնը, տուչութեան իրաւունքը վստահելով Շրջանային եւ Մեկուսի Շրջաններու վարչութիւններուն:

ՆՈՐ ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐ

1983 — 1987 քառամեակի ընթացքին Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին կը միանան 5 մասնաճիւղեր: 1983ին կը կազմուին Իտալիոյ եւ Սան Տիէկոյի մասնաճիւղերը: 1984ին վալանսի մասնաճիւղը: 1986ին կը կազմուի Ալպընիի մասնաճիւղը եւ 1987ին Եաֆաջի «Հայկաշէն» մասնաճիւղը:

Այսպէսով 1987ին 65 մասնաճիւղեր կը գործէին եօթը Շրջանային եւ 19 Մեկուսի Շրջաններու բաժանումներով:

ՄԻՋ-ԴԻՒԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

Շրջանային եւ Մեկուսի Շրջաններու վարչութիւններու դիւաններու Ա. խորհրդաժողովը տեղի ունեցաւ 5-7 Ապրիլ 1985ին Միլանոյի «Հայ Տուն»ի սրահին մէջ: 27 ներկայացուցիչներ եւ Կեդրոնական Վարչութեան 9 անդամներ ներկայ գտնուեցան այս խորհրդաժողովին:

Ժողովը լսեց Կեդրոնական Վարչութեան եւ Շրջաններու երկամեայ (1983-1985) տարեշրջանի գործունէութեանց ամփոփ տեղեկագրերը: Կեդրոնական Վարչութեան անդամները զեկուցեցին գործունէութեան հետեւեալ ճիւղերու մասին. կազմակերպչական՝ Վարդգէս Տէր Կարապետեան, դաստիարակչական եւ քարոզչական՝ Երուանդ Տէմիրճեան, սկսողական՝ Կարօ Թիւթիւնճեան, մարզական՝ Բիւզանդ Թորիկեան: Այս առթիւ տեղի ունեցան Իտալիոյ մասնաճիւղի կողմէ կազմակերպուած Ֆութպոլի մրցաշարք եւ ճաշկերոյթ պարահանդէս ինչպէս նաեւ այցելութիւն Սբ. Ղազար կղզիի Միսիթարեան վանքը:

ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԵՒ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

1983 — 1987 քառամեակին Կեդրոնական Վարչութիւնը կապ կը հաստատէ բոլոր Շրջաններու եւ Մեկուսի Շրջաններուն հետ նամակցութեամբ, շրջաբերականներով եւ այցելութիւններով: Թղթակցութեան շարքին ուղարկուած շրջաբերականները շօշափած են կազմակերպչական, կառուցային եւ կանոնադրային նիւթեր:

Շրջանային Ներկայացուցչական եւ անդամական ընդհանուր ժողովներու մասնակցութեան կամ այլ առիթներով, Կեդրոնական Վարչութեան անդամներ այցելած են հետեւեալ Շրջանները. 1983ին՝ Իտալիա, Լիբանան, Սուրիա, Արեւելեան Մ. Նահանգներ, Գանատա, Արեւմտեան Մ. Նահանգներ, Յունաստան

1984ին՝ Գանատա, Աւստրալիա, Փարիզ, Լոնտոն, Գահիրէ, Աղեքսանդրիա

1985ին՝ Սուրիա, Իտալիա, Արեւմտեան Մ. Նահանգներ, Լոնտոն, Գանատա, Արեւելեան Մ. Նահանգներ, Պուէնոս Այրէս, Գորտուպա, Մոնթէվիտէօ, Փարիզ

1986ին՝ Փարիզ եւ Լոնտոն:

ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ

Կեդրոնական Վարչութիւնը 1974էն ի վեր կը գործէր առանց մնայուն եւ նպատակայարմար նստավայր մը ունենալու: Նման նստավայր մը ունենալու կարիքը ժողովներու մնայուն օրակարգի նիւթն էր: 1983ի Ապրիլէն սկսեալ մինչեւ Օգոստոս 1985 վարչական նիստերը գումարուեցան մերթ Պէյրութի մասնաճիւղի, մերթ Պուրճ Համուտի մասնաճիւղի եւ մերթ Պուրճ Համուտի Սարգարապատակումներուն մէջ: 1984ի Յուլիսէն սկսեալ ժողովները աւելի յաճախակիօրէն գումարուեցան Պուրճ Համուտ Ազգային Առաջնորդարանի սրահներէն մէկուն մէջ որ առժամապէս Ազգային Առաջնորդարանին կողմէ Կեդրոնական Վարչութեան տրամադրուեցաւ իբրեւ «Մարզիկ» պաշտօնաթերթի խմբագրատուն:

1984ի Նոյեմբերին Կեդրոնական Վարչութեան ասենապետ՝ Վարդգէս Տէր Կարապետեան կը մեկնի Լոս Անճելըս, Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանի ներկայացուցչական ժողովին ներկայ գտնուելու: Այս այցելութեան առթիւ խորհրդակցաբար Վարդգէս Ալահայտոյեանի հետ ընդունելութիւն մը կը կազմակերպեն վերջնոյս բնակարանին մէջ եւ կը յաջողին Կեդրոնական Վարչութեան մնայուն նստավայրի մը գնման ֆոնտին հանգանակել ինը հազար Ամ. Տոլար: Ասենապետի Լոս Անճելըսէն Պէյրութ վերադարձի ճամբուն՝ Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային վարչութեան լիազումար նիստի ընթացքին տեղւոյն վրայ կը հաւաքուի 3900 Ամ. Տոլար յատկացուելու համար կեդրոնատեղիի գնման ֆոնտին:

1985ի սկիզբը կ'իրականանան, Պուրճ Հա-

մուտի գլխաւոր պողոտաներէն մէկուն վրայ գանուող, շուրջ 150 քառ. մետր տարածութեամբ յարկաբաժնի մը գնման ձեւակերպութիւնները: Կեդրոնատեղիի շինարարական եւ կահաւորման աշխատանքները կը տեւեն մինչեւ 1986ի Մայիս ամիսը, Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր Շրջաններու նիւթական աջակցութեամբ:

31 Յունուար 1987ին տեղի կ'ունենայ կեդրոնատեղիի բացման հանգիստութիւնը հովանաւորութեամբ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Սբ. Աթոռի գահակալ Գարեգին Բ. Կաթողիկոսին եւ նախագահութեամբ՝ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Արամ Արք. Քեչիշեանի: Այս առթիւ կեդրոնատեղիի գլխաւոր սրահ՝ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական թանգարանը կը կոչուի Կեդրոնական Վարչութեան նահատակ Ատենայեա՝ Վարդգէս Տէր Կարապետեանի անունով [Ծ/65-66-6]:

ՄԱՐՁԱԿԱՆ

25ն 7 Յունիս 1985ին Լոս Անճելըսի մէջ տեղի ունեցան Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային Բ. խաղերը որոնք յայտագրին մաս կազմեց Փոլիթպոլի Ա. մրցաշարքը: Այս խաղերուն իրենց մասնակցութիւնը բերին Աւստրալիոյ, Լիբանանի, Յունաստանի, Ֆրանսայի, Գանատայի եւ Միացեալ Նահանգներու Արեւելեան եւ Արեւմտեան Շրջաններու ներկայացուցչական խումբերը: Խաղերու բացումը տեղի ունեցաւ 2 Յունիս 1985ին Կլէնտէյլի Հայ Սքուլի դաշտին վրայ: Բացման հանգիստութեան ներկայ գանուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն Տիգրան Քհնյ. Խոյեան որ իր անունով արամադրեց Փոլիթպոլի մրցաշարքերու «Շրջուն Բաժակ»ը: Մրցաշարքի ախոյեանութեան տիրացաւ Արեւմտեան Մ. Նահանգներու խումբը: Երկրորդ՝ Լիբանանի ներկայացուցչական կազմը: Մրցաշարքը տեղի ունեցաւ Արեւմտեան Մ. Նահանգներու 10րդ Նաւասարդեան խաղերուն յայտագրին առընթեր - [Ծ/52.8-27]:

Կեդրոնական Վարչութեան մարզական Բ. իրականացումը հանգիստացաւ աթլետիք խաղե-

րու ախոյեանութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի աթլետիք մրցանիշերու դասաւորումը: Աթլետիզմի ճիւղի զարգացման եւ քաջալերութեան նպատակով Կեդրոնական Վարչութիւնը վերահաստատեց նուիրատուին կողմէ յատկացուած «Ալեքս Պեգիկեան» մրցանակը որուն 1000 տոլարի պարգեւը կը բաժնուի տարուայ ընթացքին յաւաքոյն արդիւնքներ արձանագրած 4 մարզիկներու մասնաճիւղերուն միջեւ:

ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ

Գ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՆԱԿՈՒՄ

1983ի Յունիսին Կեդրոնական Վարչութիւնը շրջաբերականով Շրջաններուն կը ներկայացնէ համագաղութային Գ. ընդհանուր բանակումը 1984ի ամրան կայացնելու ծրագիրը պահանջելով թեկնածութիւններ բանակումի կազմակերպման համար: Դեկտեմբերին, Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանը պատրաստակամութիւն կը յայտնէ կազմակերպելու Գ. ընդհանուր բանակումը: Սակայն Մ. Նահանգներու պետական մարմիններէն մինչեւ 1984ի Ապրիլ ամիսը կարելի չըլլար արտօնութիւն ստանալ: Կեդրոնական Վարչութիւնը կ'որոշէ ընդհանուր բանակումի կայացումը յետաձգել 1985ին: Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանը մինչեւ 1985ի Մայիս ամիսը չի յաջողիր իրականացնել Գ. ընդհանուր բանակումի ծրագիրը: Կեդրոնական Վարչութիւնը կը ստիպուի տարիով մը եւս յետաձգել անոր կայացումը: 1985ի Օգոստոսին, Կեդրոնական Վարչութիւնը Լոնտոնի մասնաճիւղին կը վստահի 1986ի Օգոստոսին Գ. ընդհանուր բանակումի կազմակերպումը:

Համագաղութային Գ. Ընդհանուր Բանակումը տեղի ունեցաւ 10էն 20 Օգոստոս 1986ին Լոնտոնի մօտակայ Chalfont Heights սկաուտական բանակավայրին մէջ: Բանակավայրին տրուեցաւ «Արիաշէն» անունը ի յիշատակ Վահան Չերազի 1923 ին Սարգարապատի շրջանին մէջ բնակեցման վայրի մը շինանարական

ծրագրին: Չերագի ծննդեան հարիւրամեակին կը զուգադիպէր բանակումի թուականը [ԺԲ.354-356]:

Լիբանանէն, Աւստրալիայէն, Յունաստանէն, Ֆրանսայէն, Գանատայէն, Արժանթինէն, Միացեալ Նահանգներու Արեւելեան եւ Արեւմտեան Շրջաններէն, Քուէյթի, Ամմանի, Կիպրոսի եւ Անգլիոյ Մեկուսի Շրջաններէն 350 սկառուներ եւ արենոյշներ մասնակցեցան այս բանակումին: Բանակումի ծրագրին մասկազմեցին ձեռային աշխատանքներ, մարզախաղեր, դասախօսութիւններ, Լոնսոնի քաղաքամէջի տեսարժան վայրերու այցելութիւններ, խարոյկահանդէս եւ խրախճանք երեկոյ մը Իլինկի հայաշատ թաղամասի քաղաքապետարանին սրահին մէջ, կազմակերպութեամբ Լոնսոնի Հ.Յ.Դ. Երիտասարդաց Միութեան: Տեղի ունեցաւ Վահան Չերագի ծննդեան հարիւրամեակին նուիրուած երեկոյ բանակավայրէններս: Լիբանանի Շրջանի սկառուական նուագախումբի մասնակցութիւնը համագաղութային ընդհանուր բանակումին, յաւելեալ փայլք սուրաւ ձեռնարկի յաջողութեան: Բանակումի ընդհանուր խմբապետութիւնը վարեց Արթուր Աղամալեան, փոխ խմբապետ՝ Արմանու Աբրահամեան- [Ծ/63.3-40]:

նաչարի Բ. Թիւր «Հ.Մ.Ը.Մ.ի Սկառուական Երգարան» լոյս կը տեսնէ 3000 օրինակով: Երգարանի ութը բաժինները կը պարփակեն քայլերգներ, աղօթքներ, ազգային եւ հայրենասիրական երգեր, արի եւ արենոյշներու երգեր, գայլիկներու եւ արծուիկներու երգեր, մանկական եւ դպրոցական երգեր, կանչեր եւ նուագախումբի եղանակներ, իւրաքանչիւրը իր ձայնանիշերով: Հատորը կը պարունակէ նաեւ հայկական երաժշտական գործիքներու նկարազրականներ, հայ երաժիշտներու եւ բանաստեղծներու կենսագրականներ: Հատորի հրատարակութեան մեկենասն է Ալեքսան Փիլաւճեան: Համադրիչ՝ Բիւզանդ Թորիկեան: Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ:

Հ.Մ.Ը.Մ.ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 65ԱՄԵԱԿ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը 3 Նոյեմբերի 1982ի նիստի ընթացքին կ'որոշէր թելադրել բոլոր Շրջաններուն որ 1983ի ընթացքին հրապարակային տօնակատարութիւններով նշեն Միութեան հիմնադրութեան 65ամեակը:

Այս առթիւ Կեդրոնական Վարչութիւնը կ'որոշէ «ՄԱՐԶԻԿ»ի Դ. տարուայ թիւ 1 եւ 2 (37,38) միացեալ թիւը հրատարակել բացառիկ բովանդակութեամբ: Հ.Մ.Ը.Մ.ի համակիր մտաւորականներ, եկեղեցականներ, վեթերան եւ վարչական անդամներ իրենց մասնակցութիւնը կը բերեն բացառիկի բովանդակութեան: 128 էջերէ բաղկացող «ՄԱՐԶԻԿ»ի բացառիկը կը բացուի Մեծի Տանն Կիլիկիոյ գահակալ Գարեգին Բ. Կաթողիկոսի 5 Դեկտեմբեր 1983 թուակիր, համար Շ/Լ 2 հայրապետական կոնդակով ուր Վեհափառը կը դրուատէ ու կ'օրհնէ հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան 65ամեայ գործունէութիւնը [Ծ/37-38.1]:

ՀՐԱՏԱՐԱԿԶՍԿԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Գ. Կեդրոնական Վարչութիւնը կազմակերպեց իր մատենաչարի թիւ 1 «Նահատակ Յեղի Անմահներ» յուշագրութեան ցրումը, հեղինակ՝ Տիգրան Քհնյ. Խոյեան, խմբագիր՝ Տոքթ. Յարութիւն Գազանճեան (Յ. Գեղարդ): Տպարան՝ Այթաբրես: 2000 տպաքանակով այս հատորէն 150 կաշեկազմ օրինակներ, թուագրուած 1-150, կը կրեն հեղինակի անձնական ստորագրութիւնը:

1987ին Կեդրոնական Վարչութեան մատեն-

ԳԼՈՒԽ ԵՕԹԵՐՈՐԴ

ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ Դ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
ԱԹԷՆՔ 17 – 20 ԱՊՐԻԼ 1987

- ԲԱՑՈՒՄ ԵՒ ՕՐԱԿԱՐԳ
- ՆԻՍՏԵՐ
- ԲԱՆԱԶԵԻԵՐ
- ԸՆՏՐՈՒԹԻՒՆ Դ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ



Խմբանկար՝ պատգամաւորական Դ. Ընդհանուր Ժողովի



Պատգամաւորական Դ. Ընդհանուր Ժողով՝
նորի Կեդրոնական Վարչութեան Փոխ ատենապետ՝ Տոքթ. Յարութիւն Գալանճեան

ԲԱՑՈՒՄ ԵՒ ՕՐԱԿԱՐԳ

Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Դ. ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ 17էն 20 Ապրիլ 1987ին Աթէնքի Թիթանիա պանդոկի սրահին մէջ: Ժողովին մասնակցեցան եօթը Շրջաններու եւ ութը Մեկուսի Շրջաններու 53 լիազօր պատգամաւորներ եւ 27 ի պաշտօնէ կամ խորհրդակցական ձայնով հրաւիրեալներ:

Ժողովի օրակարգի նիւթերն էին.-

- Ժողովի բացում
- Առժամեայ դիւանի ընտրութիւն
- Լիազօրագրերու ստուգում
- Մնայուն դիւանի ընտրութիւն
- Հաշուեքննիչ, նախահաշիւի, բանաձեւի, արխիւային եւ քուէախոյզ յանձնախումբերու ընտրութիւն
- Աշխատանքային յանձնախումբերու կազմութիւն
- Շրջաններու եւ Մեկուսի Շրջաններու քառամեայ գործունէութեանց ամփոփ տեղեկագրեր
- Կեդրոնական Վարչութեան 1983-1987 քառամեակի գործունէութեան նիւթաբարոյական տեղեկագիրը — Լուսաբանական հարցումներ — ըստ էութեան քննութիւն
- Աշխատանքային յանձնախումբերու զեկուցումներ.- Սկստական - «Մարզիկ» պաշտօնաթերթ — Մարզական - Դաստիարակչական — Հրատարակչական — Տնտեսական — Կանոնագրային
- Հաշուեքննիչ, բանաձեւի եւ արխիւային յանձնախումբերու զեկուցումներ
- Առաջարկներ 1987-91 քառամեակի գործունէութեան
- Նախահաշիւ 1987-91 քառամեակի գործունէութեան
- Կեդրոնական Վարչութեան ընտրութիւն
- Փակում Պատգամաւորական Դ. ընդհանուր ժողովի

ՆԻՍՏԵՐ

Ա. Նիստ

Ընդհանուր ժողովի բացումը կատարեց Կեդրոնական Վարչութեան ատենապետ՝ Բիւզանդ Թորիկեան հետեւեալ խօսքով.

« Սիրելի Հ.Մ.Ը.Մ.ականներ,

«Յանուն Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան բարի գալուստ կը մաղթեմ ձեզի: Աստուծոյ կամքով եւ մեր հաւատքի թելադրականով հաւաքուած ենք այստեղ Հ.Մ.Ը.Մ.ի 4րդ Պատգամաւորական Ընդհ. ժողովի կայացման համար: Մեզի համար ուրախալի այս պահը կը ստանայ յատուկ նշանակութիւն երբ կը գիտակցինք որ Կեդրոնական Վարչութեան նահատակ ատենապետին հանգուցեալ եղբ. Վարդգէս Տէր Կարապետեանի սահմանուած դերն է որ կը վիճակուի մեզի: Յարգանք իր յիշատակին:

«Չորս օրերու վրայ երկարող մեր ժողովական ժամանակացոյցը դրուած է ձեր տրամադրութեան տակ: Վստահ ենք որ միասնաբար պիտի յաջողցնենք ժողովական բոլոր աշխատանքները եւ մեր միութեան Կառուցը կառուցող ընդհանուր ժողովի հանգամանքը գերապանցօրէն պիտի յաղթանակէ:

«Քառամեայ մեր գործունէութեան միջոցին ունեցանք բազմաթիւ դժուարութիւններ: Մեր բոլոր ճիգերը ի գործ դրինք վանոնք յաղթահարելու եւ միութեանական յաջողութեանց շղթայի շարքին նոր օղակներ աւելցնելու: Ամէն անգամ որ ձեռնարկի մը յաջողութիւն արձանագրեցինք ապագայի նոր հորիզոններու տեսիլքը ունեցանք ու մեր գայլիկներու, արենոյշներու, մարպիկներու այլ եւ մեզ քաջալերող պանգուածներու վուարթ դէմքերը մեզի համար նոր խթան եղան յարատեւելու ու վարգանալու, տարածուելու ու բազմանալու, բարձրանալու, բարձրացնելու՝ ի փառս մեր հիմնադիրներու կտակին:

«Պարտք կը համարենք նաեւ այստեղ արձանագրել Հայ Յեղափոխական Դաշնակցութեան անվերապահ աջակցութիւնն ու քաջալերանքը մեր բոլոր ձեռնարկներուն ամէնուրեք եւ բոլոր մակարդակներու վրայ:

«Պահն է այսօր, սիրելիներ, որ մենք մեզ վերաքննենք, մենք մեզ դիտենք հայ ժողովուրդի տենչերուն պարզած հայելիին ընդմէջէն: Այս քննութիւնը մեզ կը տանի կարգ մը մտածումներու: Ներկայիս մենք մարմնակրթանքը մեծ տոկոսով փոխարինած ենք մարդաստեղծութիւնով: Ճիշդ է որ այս պարագան 19րդ դարու վերջաւորութեան եւ յատկապէս 20րդ դարու սկզբնաւորութեան միջազգային բնական հոլովոյթը կրնայ ընդունուիլ, բայց մեր հիմնադիրներու առաջադրանքներէն կրնայ հեռացնել մեզ: 1919ին մեր կանոնագրութեան ծրագրային բաժինի արձանագրութիւնները որոնք մինչեւ այսօր կը մնան անփոփոխ՝ «Ֆիլիքսական առողջ դաստիարակութիւն տալով հայ անհատին, համակել անոր միտքն ու սիրտը մարդական արհեստագոյն ոգիով: Սորվեցնել անոր ըլլալ չարքաշ եւ արի, ազգասէր եւ հայրենասէր, օրինապահ եւ կարգապահ, պարգացնել անոր մէջ պարտականութեան եւ պատասխանատուութեան գիտակցութիւնը, պատուի պահպանումը, համերաշխութեան եւ փոխադարձ օգնութեան ոգին: Պատրաստել ֆիլիքսապէս տոկուն, իմացական եւ հոգեկան բարձր արժանիքի տէր հայեր եւ տիպար քաղաքացիներ», մեզի կը փոխանցեն յստակ թելադրութիւններ:

«Գիտենք ու կը գիտակցինք թէ Հ.Մ.Ը.Մ.ը պարզ մարմնամարդական միութիւն մը չէ: Հ.Մ.Ը.Մ.ի համար մարմնամարդն ու սկաուտիզմը միջոցներ են միայն հասնելու հայ երիտասարդութեան ազգային նկարագրի կերտումին եւ մեր տենչերու խորին ծանօթացման, մէկ բառով՝ հայ ազգի ծառայութեան:

«Ինչ ալ ըլլան դարու ոգին եւ ժամանակաշրջանի հարկադրանքները մեր միութեան եւ անոր հիմնադիրներու բանաձեւումը ընթացք կուտայ էապէս մեր ապրումներուն, մեր ձգտումներուն, մեր ծրագիրներուն, որոնց իրագործման ճամբուն վրայ եկած ենք այսօր կրկին, աշխարհի չորս ծագերէն, ձեռք ձեռքի տալու, վերանորոգելու մեր ուխտը եւ վերարժեցնելու մեր կոչումը վասն յաւերժութեան հայ ազգին եւ հայրենիքին:»

Ապա հրաւիրեց պատգամաւորները ընտրելու առժամեայ դիւան:

Առժամեայ դիւանի ատենապետ ընտրուեցաւ Տոքթ. Միսաք Արզումանեան, ատենադպիր՝ Լեւոն Պէնկեան: Լիազօրագրերու եւ յաշտ կեդրոնական վարչութեան Շրջաններու նիւթական պարտաւորութիւններու կատարման ստուգումէն ետք առժամեայ դիւանը հաստատեց ժողովի օրինականութիւնը: Ժողովէն կը բացակայէին Աղեքսանդրիոյ, Վալանսի եւ Գորտոպայի Մեկուսի շրջաններու պատգամաւորները:

Ապա կատարուեցաւ մնայուն դիւանի ընտրութիւն: Պատգամաւորական Դ. ընդհանուր ժողովի նախագահներ ընտրուեցան՝ Տոքթ. Միսաք Արզումանեան եւ Տոքթ. Սարգիս Արեւեան իսկ քարտուղարներ՝ Լեւոն Պէնկեան, Միամանթօ Կարապետեան եւ Գէորգ Գանասահարեան:

Հ.Յ.Դ. Պիւրոյի ներկայացուցիչ Հրայր Մարտիւսեանի ողջոյնի խօսքէն ետք ժողովին օժանդակ յանձնախումբերու անդամները ընտրուեցան հետեւեալ կերպով.-

Հաշուեքներէ յանձնախումբ՝ Գէորգ Կարապետեան, Սեդրակ Պուրսալեան, Ճորճ Տաքէսեան:

Բանաձեւի յանձնախումբ՝ Նշան Օղիկեան, Անդրանիկ Ուրֆալեան, Կարօ Մելքոնեան, Ժան Անսրլեան եւ Գէորգ Մանկելեան:

Արխիւային յանձնախումբ՝ Սուրէն Նազարեան, Տիգրան Մելքոնեան եւ Պատրիկ Կիւլպէնկեան:

Քուէախոյզ յանձնախումբ՝ Արթիւրօ Յովհաննէսեան, Յակոբ Ղազարեան եւ Րաֆֆի Յովսէփեան:

Նշանակուեցան նաեւ աշխատանքային հետեւեալ յանձնախումբերու անդամները.- սկաուտական, Մարզիկ պաշտօնաթերթի, մարզական, դաստիարակչական, հրատարակչական, տնտեսական եւ կանոնագրային:

Բ. Նիստ

Յաջորդաբար կարդացուեցան Շրջաններու

եւ Մեկուսի Շրջաններու քառամեայ գործունէութիւններու ամփոփ տեղեկագրերը եւ Կեդրոնական Վարչութեան քառամեայ գործունէութիւն 50 էջերէ բաղկացող նիւթաբարոյական գործունէութեան մանրամասն տեղեկագիրը:

Գ. Նիստ

Շաբաթ 18 Ապրիլի առաւօտեան ժամը 9.30ին բացուեցաւ Պատգամաւորական Դ. Ընդհանուր Ժողովի երրորդ նիստը: Նախ կարգացուեցան Ա. եւ Բ. նիստերու ատենագրութիւնները ապա վաւերացուեցան:

Կատարուեցան լուսաբանական հարցումներ Կեդրոնական Վարչութեան տեղեկագրի մասին որոնց պատասխանեց Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչը: Ապա ըստ էութեան քննարկման նպատակով արտայայտուեցան 21 պատգամաւորներ:

Դ. Նիստ

Այս նիստը յատկացուեցաւ սկստուական, ՄԱՐԶԻԿ պաշտօնաթերթի, մարզական, դաստիարակչական, հրատարակչական, տնտեսական եւ կանոնադրային աշխատանքային յանձնախումբերու զեկուցումներուն եւ ուսումնասիրութեան:

Ե. Նիստ

Պատգամաւորական Դ. ընդհանուր ժողովի Ե. նիստի ընթացքին կարգացուեցան հաշուեքննիչ, արխիւային եւ բանաձեւի յանձնախումբերու եզրափակիչ բանաձեւերը հանգելով հետեւեալ արձանագրութեանց.-

ԲԱՆԱԶԵԻՆԻ

Հաշուեքննիչ յանձնախումբի բանաձեւ

Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Դ. Ընդհանուր ժողովի կողմէ ընտրուած հաշուեքննիչ յանձնախումբը, հիմնուելով Կեդրոնական

Վարչութեան կողմէ նշանակուած հաշուեքննիչ մարմնին ներկայացուցած գրաւոր հաստատումին վրայ կը հաստատէ.

1.- Կեդրոնական Վարչութեան նշանակած հաշուեքննիչ մարմինը կը հաստատէ հաշիւներու ճշգրտութիւնը եւ օրինաւորութիւնը, ըստ կցուած վկայագրին:

2.- Կեդրոնական Վարչութիւնը իրագործած է Գ. Ընդհանուր ժողովի կողմէ նախահաշիւով սահմանուած գումարներու պարտաւորութիւնները:

3.- Հաշուեկշիռներու ուսումնասիրութեանն էն յստակ կերպով կ'երեւի թէ Կեդրոնական Վարչութիւնը խղճատանքով եւ բծախնդրութեամբ գործածած է Միութեան գանձը:

4.- Կարելոր իրագործում մըն է Կեդրոնական Վարչութեան Կեդրոնի շէնքին գնումը եւ սարքաւորումը, որ կատարուած է Հ.Մ.Ը. Մ.ական եղբայրներու եւ շրջաններու նուիրատուութեամբ:

5.- Նկատի ունենալով որ հաշիւները պահուած էին Լիբանանեան դրամանիշով, յանձնախումբս որոշ դժուարութիւն ունեցաւ սակերու փոխանցման միջին վիճակը ստուգելու ամերիկեան դրամանիշով ստացուած եւ գործածուած գումարներու նկատմամբ:

6.- Հիմնուելով վերոյիշեալ դժուարութիւններու վրայ, կ'առաջարկուի որ այսուհետեւ Կեդրոնական Վարչութեան բոլոր հաշիւները պահուին միայն ամերիկեան դրամանիշով:

7.- Յանձնախումբս կը գտնէ գնահատելի Կեդրոնական Վարչութեան նիւթական գործունէութիւնը: Կը թելադրենք որ հաշուապահական ներկայ դրութիւնը պահուի յաջորդ Կեդրոնական Վարչութեան կողմէ:

Արխիւային յանձնախումբի բանաձեւ

Յանձնախումբս՝ ընտրուած Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Դ. Ընդհանուր ժողովի կողմէ, իր տրամադրութեան տակ դրուած արխիւները քննելէ ետք կը հաստատէ.

1.- Թէ 182 նիստերու ատենագրութիւնները մեքենագրուած են եւ լուսապատճէնուած: Կրկնօրինակները բերուած են ժողովին եւ չեն ստորագրուած: Իսկական օրինակներուն վաւերականութիւնն ու օրինականութիւնը կ'իւրացնենք:

2.- Ստացուած եւ յղուած նամակները, նաեւ հեռատիպերը եւ շրջաբերականները դասաւորուած են անջատ թղթապնակներու մէջ: Տեղեկագրի թիւերը՝ համապատասխան են:

3.- Կեդրոնական Վարչութեան մօտ գտնուող գոյքերուն ցանկը իր համապատասխան ենթաբաժանումներով գոյութիւն ունի, աշխատանքները տարուած են բժախնդիր ոգիով:

Այսու թելադրելի է

ա.- Որ իւրաքանչիւր Շրջանի համար յատկացուի առանձին թղթապնակ եւ առանձին բովանդակութեան ցանկ:

բ.- Որ իւրաքանչիւր Համագաղութային ձեռնարկի համար բժախնդրօրէն պահուի յատուկ թղթածրար, որուն կցուած ըլլան յիշեալ ձեռնարկին նիւթական եւ բարոյական տեղեկագիրները:

Ընդհանուր բանաձեւ

Հ.Մ.Ը.Մ.ի Դ . Պատգամաւորական Ընդհանուր ժողովը, լսելէ ետք Կեդրոնական Վարչութեան քառամեայ գործունէութեան տեղեկագիրը, պատգամաւոր եղբայրներու հարցումներն ու Կեդրոնական Վարչութեան պատասխանները, ինչպէս նաեւ ըստ էութեան եղբայրներու արտայայտութիւնները կը հաստատէ:

ա.- Հայութեան համար ստեղծուած ու պարտադրուած դժուարին պայմաններուն մէջ վարչութեան կարգ մը անդամներուն դէմ կազմակերպուած դաւերուն հակառակ, Կեդրոնական Վարչութիւնը կարողացած է սէր կանգնիլ առ հասարակ իրեն վստահուած պար-

տաւորութեանց ու դերին, նիւթապէս ալ գորացնելով կազմակերպութիւնը:

Բ.- Բնականաբար տեղի ունեցած են նաեւ որոշ անտեսումներ, թերացումներ, թերեւս անխուսափելի, որոնք սակայն պէտք չէ ստուեր ձգեն շրջանաւարտ Կեդրոնական Վարչութեան ընդհանուր գործունէութեան վրայ:

Վերոյիշեալ հաստատումներու լոյսին տակ, շրջանաւարտ Կեդրոնական Վարչութեան գործունէութիւնը կը գտնենք **ԳՆԱՀԱՏԵԼԻ:**

Ապա արձանագրուեցան շրջաններու եւ պատգամաւորներու կողմէ յառաջիկայ քառամեակին իրագործելի զանազան բաժիններու առաջարկները: Կարդացուեցաւ եւ վաւերացուեցաւ նաեւ Գ. նիստի ատենագրութիւնը: Ներկայացուեցաւ նախահաշիւի յանձնախումբի հաշուեկշիռը որ կը նախատեսէ 136.500 ամերիկեան տոլարի մուտքեր եւ նոյն կշիռով ելքեր 1987-1991 քառամեակի գործունէութեան համար:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ Դ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Զ. Նիստ

Կարճ դադարէ ետք Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Դ. ընդհանուր ժողովը վերջին օրակարգով գոց քուէով ընտրեց 1987-1991 քառամեակի Կեդրոնական Վարչութիւն բաղկացած հետեւեալ անդամներէն.- Լիբանանէն՝ Տոքթ. Միսաք Արզումանեան, Երուանդ Տէմիրճեան, Յովհաննէս Տէր Յարութիւնեան, Կարօ Թիւթիւնճեան, Միհրան Շիմշիրեան, Պատրիկ Կիւլպէնկեան եւ Արա Յակոբեան, Լոնտոնէն՝ Սիւմանթօ Կարապետեան, Գանատայէն՝ Վարուժան Սերոբեան, Արեւմտեան Մ. Նահանգներէն ժիրայր Պոյաճեան եւ Պոլէնոս Այրէսէն՝ Ճորճ Տաղլեան:

Ապա ժողովը փակուեցաւ յոտնկայս երգըլած «Յառաջ Նահատակ» քայլերգով:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ԶՈՐՐՈՐԴ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԶՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆ
ԱՊՐԻԼ 1987 – ԱՊՐԻԼ 1991

- ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ
- ՆՈՐ ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐ
- ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ
- ՄԻԶ-ԴԻԻԱՆԱՅԻՆ Բ. ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ
- ՄԱՐԶԱԿԱՆ
- ՍԿԱՈՒՏԱԿԱՆ
- ԿԱԼՈՒԱԾ
- 70 ԱՄԵՍԿ - ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ



Խմբանկար Չորրորդ Կեդրոնական Վարչություն



Սկաուտական խմբապետական Բ. համագումար Լոս Անճելըս 1988

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Դ. Ընդհանուր ժողովէն ընտրուած Կեդրոնական Վարչութիւնը իր անդրանիկ նիստը գումարեց 21 Ապրիլ 1987ին Աթէնքի «Թիթանիա» պանդոկին մէջ եւ կատարեց կազմի աշխատանքներու բաժանումը հետեւեալ ձեւով.-

Ատենայեսու՝ Տոքթ. Միսաք Արզումանեան
Փոխ-ատենայեսու՝ Երուանդ Տեմիրճեան
Ա. ատենադպիր՝ Յովհաննէս Տէր Յարութիւնեան

Բ. ատենադպիր՝ Կարօ Թիւթիւնճեան
Գանձապահ՝ Միհրան Շիմշիրեան
Հաշուապահ՝ Պատրիկ Կիւլպենկեան
Գոյքապահ՝ Արա Յակոբեան

Խորհրդականներ՝ Սիամանթօ Կարապետեան, Վարուժան Սերոբեան, Ժիրայր Պոյաճեան եւ Ճորճ Տաղլեան:

Կեդրոնական Վարչութիւնը նոյն օրը գումարեց երկրորդ նիստ մը ծրագրելու համար քառամեայ գործունէութեան գլխաւոր գլուխները մեկնելով Դ. ընդհանուր ժողովին կողմէ բանաձեւուած առաջարկներէն:

Այսպէս ծրագրուեցան համագաղութային հետեւեալ աշխատանքները.

- Պասքեթպոլի եւ փինկ-փոնկի մրցաշարքեր
- Ֆութպոլի եւ աթլէթիզմի մրցաշարքեր
- Խմբապետական Բ. համագումար
- Խմբապետական դպրոց-բանակում
- Համագաղութային Դ. ընդհանուր բանակում
- Միջ-դիւանային խորհրդաժողով:

Հետագային այս գլուխներուն վրայ աւելցան Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 70ամեակի նշումը: Գործունէութեան ժամանակաշրջանին կարելի չեղաւ իրագործել ֆութպոլի եւ աթլէթիզմի մրցաշարքը:

ՆՈՐ ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ

Քառամեակի ընթացքին Հ.Մ.Ը.Մ.ի 65 մաս-

նաճիւղերու ցանցին՝ վրայ աւելցան Լիբանանի մէջ Պաթրոնի մասնաճիւղը, Պուլկարիոյ մէջ Սոֆիայի, Փլովտիվի եւ Ռուսչուքի մասնաճիւղերը. Աւստրալիոյ մէջ հիւսիսային Սիտնի- (Արարատի մասնաճիւղը), եւ Աւստրիոյ մէջ Վիեննայի մասնաճիւղը:

Գործունէութեան վերսկսան հետեւեալ մասնաճիւղերը.

Արժանթին՝ Վալանթին Ալսինա
Ուրուկուէյ՝ Մոնթէվիտէօ
Պաղեստին՝ Հայֆա եւ Եաֆա :

Նոյնպէս Հայաստանի 11 քաղաքներու մէջ հիմը դրուեցաւ սկառստական շարժումներու որոնց ընդհանուր ղեկավարութիւնը յանձն առաւ Հայաստանի Պատասխանատու Մարմինը:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Մասնաճիւղերու եւ Շրջաններու հետ յարաբերական կապերը ամրացնելու, անդամական ընդհանուր ժողովներու կամ Շրջանային ներկայացուցչական ժողովներու մասնակցութեան եւ սօնակատարութեանց առիթներով, Կեդրոնական Վարչութեան անդամները քառամեակի ընթացքին այցելեցին հետեւեալ շրջանները.

1987ին Հարաւային Ամերիկա, Արեւելեան եւ Արեւմտեան Միացեալ Նահանգներ

1988ին Սուրիա, Յունաստան, Լոս Անճելըս, Փարիզ, Թորոնթօ, Նիւ Ճըրզի, Նիւ Եորք

1989ին Փարիզ, Միլանօ, Նիւ Ճըրզի

1990ին Հայաստան, Վալանս, Սուրիա, Յունաստան, Հալէպ, Ուաշինկթըն, Կիպրոս

1991ին Սուրիա, Արեւելեան Մ. Ն., Թորոնթօ:

Բոլոր վայրերուն մէջ ալ քննական տեղեկութիւններ ստանալու կողքին, ժողովներու եւ հանդիսութիւններու առիթներով Կեդրոնական Վարչութեան անդամները յաւուր պատշաճի խօսքեր արտասանած են սաստարե-

լով Շրջան-Կեդրոն կապերու ամրացման եւ միութենական գաղափարաբանութեան տարածման:

ՄԻՋ-ԴԻՒԱՆԱՅԻՆ Բ. ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

Հ.Մ.Ը.Մ.ի միջ-շրջանային Բ. դիւանային խորհրդաժողովը տեղի ունեցաւ 24-27 Մարտ 1989ին Լոնտոնի մէջ: Խորհրդաժողովին ներկայ գտնուեցան Սուրբիոյ, Լիբանանի, Գանատայի, Աւստրալիոյ, Արեւելեան եւ Արեւմտեան Միացեալ Նահանգներու եւ Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութիւններու, ինչպէս նաեւ Լոնտոնի, Ամմանի, Փարիզի եւ Քուէյթի մասնաճիւղերու վարչութիւններու ներկայացուցիչները:

Երկամեայ (1987 Ապրիլ-1989 Մարտ) ժամանակաշրջանի գործունէութեանց տեղեկագրերու կողքին, խորհրդաժողովը լսեց Կեդրոնական Վարչութեան գործունէութեան Բ. երկամեակի (1989 Ապրիլ-1991 Ապրիլ) մարզական եւ սկստական համագաղութային ձեռնարկներու, «Մարզիկ» պաշտօնաթերթի եւ հրատարակչական ծրագիրներու մասին: Ժողովը լսեց նաեւ զեկուցումներ Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր շրջաններու կողմէ Հայաստանի 1988ի երկրաշարժին առթիւ հայրենիք ուղուած օժանդակութեան մասին.- [Ծ/97-98.46]:

ՄԱՐԶԱԿԱՆ

Սիւնիի, Պուէնոս Այրէսի եւ Փարիզի մէջ կայացնելու փորձերու ձախողութենէն ետք Կեդրոնական Վարչութիւնը համագաղութային Գ. մարզական խաղերը յաջողեցաւ կազմակերպել 12-15 Ապրիլ 1990ին Վալանսի մէջ: Յայտագրին մաս կը կազմէր պասքէթպոլի ախոյեանութեան Բ. մրցաշարքը որուն մասնակցեցան 140 մարզիկներ ներկայացնելով Արեւմտեան Մ. Նահանգներու, Գանատայի, Փարիզի, Լոնտոնի, Յունաստանի, Սուրբիոյ, Գահիրէի,

Աղեքսանդրիոյ եւ Վալանսի շրջաններու տղոց եւ Լոնտոնի ու Յունաստանի աղջկանց խումբերը:

Մրցաշարքի ախոյեան հանդիսացաւ Հալէպի մասնաճիւղի տղոց կազմը աւարտական մրցումին յաղթելով Արեւմտեան Մ. Նահանգներու կազմին:

Վալանսի մասնաճիւղը ձեռներէցութեամբ յաջողցուց համագաղութային Գ. խաղերը կազմակերպելով ընդհանուր տողանցք, գայլիկներու եւ արծուիկներու խոստման արարողութիւն եւ յաղթանակի խրախճանք- [Ծ/101-102.38]:

ՍԿԱՈՒՏԱԿԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Սկստական խմբապետական Բ. համագումարը տեղի ունեցաւ 26 Յունիսէն 5 Յուլիս 1988ին Լոս Անճելըսի, Լոնկ Պիչի սկստական բանակավայրին մէջ:

12 շրջաններ ներկայացնող 32 աստիճանաւորներ մասնակցեցան այս համագումարին: Համագումարը քննեց ու մշակեց հետեւեալ ճիւղերը. Սկստական համագաղութային ծրագիրներ, սկստական կանոնագրութեան ուսումնասիրութիւն, գայլիկ-արծուիկ բաժինի գիտելիքները եւ արի-արենոյշ բաժինի գիտելիքները: Իւրաքանչիւր ճիւղի յատուկ յանձնախումբեր իրենց աշխատանքներու զեկուցումները փոխանցեցին Կեդրոնական Վարչութեան առ ի վաւերացում: Համագումարի մասնակցող աստիճանաւորները հետեւեցան դասախօսական շարքի մը որուն նիւթերն էին, Միութենական գաղափարախօսութիւն, ղեկավարութիւն, հայոց պատմութիւն, Հայ Սփիւռք, Հ.Մ.Ը.Մ.ի կառոյց եւ Հայ Դատ:

21էն 31 Յուլիս 1990ին տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի համամիութենական Դ. ընդհանուր բանակումը Աթէնքի մօտակայ Նէա Մաքրիի սկստական բանակավայրին մէջ «Միութիւնը Զօրութիւն է» նշանաբանով:

15 շրջաններ ներկայացնող 500 սկառտներ եւ արենոյշներ մասնակցեցան այս ընդհանուր հաւաքին որուն մասնակցեցան նաեւ Երեւանի նորակազմ մասնաճիւղը ներկայացնող գոյգ սկառտներ: Բանակումի ընդհանուր խմբապետն էր Ժիրայր Սարգիսեան, փոխ խմբապետ՝ Պօղոս Չոլաքեան: Ընդհանուր բանակումի յայտագրին մաս կազմեցին բացման հանդիսութիւն որով ընթացքին խօսք առին Հ.Մ.Ը.Մ.ի Կ. Վարչութեան ներկայացուցիչը, ընդհանուր խմբապետը, Նէա Մաքրիի քաղաքապետը եւ Հելլէն սկառտական Ֆետերասիոնի ներկայացուցիչը: 22 Յունիսին Սբ. Պատարագը մատուցանեց Վարանդ Քհն. Ամիրալեան: Սկառտական դաստիարակչական դասախօսութեանց կողքին տեղի ունեցան մարզական խաղեր, արշաւներ եւ տեսարժան վայրերու այցելութիւններ- [Ծ/103-104.26]:

2էն 24 Օգոստոս 1990ին Դիլիջանի մէջ տեղի ունեցաւ համակարգչային ճամբար հովանաւորութեամբ ԳՈԲՄԻ (Գատրերու Որակաւորման բարձրացման միջ-ճիւղային ինստիտուտ) մասնակցութեամբ Լոնտոնի, Փարիզի, Արժանթինի, Աւստրալիոյ, Սուրիոյ եւ Լիբանանի ինչպէս նաեւ Հայաստանէն Լենինականի, Սպիտակի, Ստեփանաւանի, Ղարաբաղի, Արթիկի, Աբովեանի, Դիլիջանի եւ Երեւանի շուրջ 100 սկառտներուն- [Ծ/105-106.6]:

ԿԱԼՈՒԱԾ

1987ի Յունուար 31ին, երբ տեղի կ'ունենար Կեդրոնական Վարչութեան նստավայր կեդրոնատեղիի պաշտօնական բացումը, Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանային Բ. ներկայացուցչական ժողովը կը գումարուէր Տիթրոյիթի մէջ: Այդ նոյն պահուն Տիթրոյիթէն Երուանդ Տէմիրճեան հեռաձայնային կապ հաստատելով Կեդրոնական Վարչութեան ատե-


նապետ Բիւզանդ Թորիկեանի հետ կը տեղեկացնէր թէ 120.000 ամերիկեան տոլարի նուիրաբերման խոստումով Շրջանէն չորս անդամներ կը ծրագրեն սեփականացնել կեդրոնատեղիի շէնքը իր ամբողջութեամբ- [Ծ/65-66.37]: Հակառակ Կեդրոնական Վարչութեան ճիգերուն նոյն շէնքը կարելի չըլլար սեփականացնել: Փոխարէնը 1987ին Պուրճ Համուտի Արմենիա գլխաւոր պողոտային վրայ եւ վերոյիշեալ խոստումներէն գանձուած 60.000 ամերիկեան տոլարով կարելի կ'ըլլայ գնել 2239, 2344 եւ 3683 թիւերը կրող յաջորդաբար 610 քառմեթր, 79 քառ. մեթր եւ 279 քառ. մեթր տարածութիւններով իրարու յարակից հողաչերտերը եւ երեք յարկանի շէնքը եւ զայն արձանագրել Համագգայինի Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Կեդրոնական Վարչութեան անունով:

70 ԱՄԵԱԿ – ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ


Թիւ 12 շրջաբերականով եւ մանրամասնեալ ծրագրով, Կեդրոնական Վարչութիւնը կը թելադրէ Շրջաններուն եւ Մեկուսի շրջաններուն Միութեան 70ամեակի տօնակատարութիւնները արժանավայել շուքով իրականացնել 1988ի ընթացքին:

Նախորդ Կեդրոնական Վարչութեան կողմէ մշակուած եւ 4րդ Պատգամաւորական ընդհանուր ժողովէն վաւերացուած «Ժողովական եւ Վարչական կանոններ» գրքոյկը լոյս կը տեսնէ 1987ին:

Կեդրոնական Վարչութիւնը 1987ի Դեկտեմբերին կը հրատարակէ Միութեան հիմնադրութեան 70ամեակին նուիրուած օրացոյց մը, 6000 օրինակով, Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր շրջաններուն մէջ ծախելու համար: Օրացոյցը 52 շաբաթներու վրայ բաժնուած էջերով Միութեան անցեալի նուաճումներու պատմական ալպոմ մըն է:



Դ. Ընդհանուր բանակումի Ձինանշան



Լոնտոն



Յունաստան



Փարիզ



Վարանա



Հալեպի ախոյեան խումբը



Պատույթ քրիպլին



Արևմտեան ԱՄիացեալ Նահանգներ



Ազիբասթան զրիտ



Կաթիլը



Գանատա

Համագաղութային Գ. խաղերուն մասնակից պատուիրակութիւններ

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ՇՔԱՆՇԱՆՆԵՐ ԵՒ ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐՆԵՐ

- ՇՔԱՆՇԱՆՆԵՐՈՒ ԴՐՈՒԹԻՒՆ
- ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ
- ԱՐԺԱՆԵԱՑ ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐՆԵՐ
- ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵԻԱՏՐԵԱԼՆԵՐ



Հ.Մ.Ը.Մ.Ի
Արժանեաց Շքանշանը,
Լամբակի Յատուկ Պէճը
եւ Վկայականը



Նախորդող գլուխներուն մէջ, յաջորդական կեդրոնական վարչութիւններու գործունէութեանց բաժիններով, արձանագրեցինք Հ.Մ.Ը.Մ.ի Շքանշաններու դրութեանց հաստատման տեղեկութիւնները (տես՝ Հ.Մ.Ը.Մ.ի Արժանեաց Շքանշան - Ա. մաս Բ. գլուխ եւ Հ.Մ.Ը.Մ.ի Ծառայութեան Շքանշան - Ա. մաս Զ. գլուխ):

Արժանեաց Շքանշանի պարգեւատրման պայմանները, կարգերը, մետալի, լամբակի պէճի եւ վկայականի նկարները, հրատարակուած են Արժանեաց Շքանշան-կանոնագրութիւն գրքոյկով (Պէյրուտ 1978) իսկ Ծառայութեան Շքանշանի կանոնագրութիւնը՝ 8 Մայիս 1986 թուակիր թիւ 27 Շրջաբերականով:

Ստորեւ գոյգ Շքանշաններու կանոնագրութիւնները.

Հ.Մ.Ը.Մ.ի ԱՐԺԱՆԵԱՑ ՇՔԱՆՇԱՆ

Յօդ. 1.- Համաձայն Հ.Մ.Ը.Մ.ի անդրանիկ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի թելադրանքին, Դեկտ. 1974, Պէյրուտ, եւ կեդրոնական վարչութեան որոշումին, 29րդ. նիստ, 22 Փետր. 1976, կը հաստատուի Հ.Մ.Ը.Մ.ի ԱՐժԱՆԵԱՑ ՇՔԱՆՇԱՆԻ դրութիւնը:

Յօդ. 2.- Հ.Մ.Ը.Մ.ի Արժանեաց Շքանշանը կը տրուի Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան կողմէ միայն:

Յօդ. 3.- Հ.Մ.Ը.Մ.ի Արժանեաց Շքանշանը ունի երկու կարգ.

- Հ.Մ.Ը.Մ.ի Արժանեաց Արծաթ Շքանշան
- Հ.Մ.Ը.Մ.ի Արժանեաց Ոսկի Շքանշան

Յօդ. 4.- Հ.Մ.Ը.Մ.ի Արժանեաց Շքանշանին հետ կը տրուին համապատասխան լամբակի յատուկ պէճ եւ վկայական, որ կը կրէ կեդրոնական վարչութեան կնիքը, Ատենապետին եւ Ատենադպիրին ստորագրութիւնները, պարգեւատրման որոշման թուականը:

Յօդ. 5.- Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութիւնը յատուկ Ոսկեմատեանի մէջ կ'արձանագրէ Հ.Մ.Ը.Մ.ի Արժանեաց Շքանշանի ար-

ժանացող անձերուն անուանացանկը, Շքանշանին կարգը եւ պարգեւատրման որոշման թուականը:

Յօդ. 6.- Հ.Մ.Ը.Մ.ի Արժանեաց Շքանշանին կրնայ արժանանալ

ա. Հ.Մ.Ը.Մ.ի երախտաշատ անդամ մը, որ Միութենէն ներս իր երկարամեայ ծառայութիւններով սատարած է Մասնաճիւղի մը հիմնադրութեան, ամրապնդման, զարգացման, վերելքին եւ իր սկստական կամ մարզական եւ կամ կազմակերպչական գործունէութեան ընթացքին հանդիսացած է տիպար եւ օրինակելի Հ.Մ.Ը.Մ.ական մը:

բ. Հ.Մ.Ը.Մ.ական մը, Միութեան բարեկամ ազգային մը եւ կամ օտար անհատ մը, որ գեղեցիկ եւ գնահատելի ելոյթով մը թանկագին ծառայութիւն մը կատարած, կամ մեծարժէք նուիրատուութիւն մը եւ կամ կարեւոր գումար մը ընծայաբերած է Միութեան:

Յօդ. 7.- Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի Արժանեաց Շքանշան կրնայ պարգեւել.

ա. իր նախաձեռնութեամբ. այս պարագային անհրաժեշտ է նախապէս տեղեակ պահել պարգեւատրեալին բնակած երկրին Շրջանային կամ Մեկուսի վարչութիւնը:

բ. Երբ յետ քննութեան ընթացք կու տայ Շրջանային կամ Մեկուսի վարչութեան մը այս ուղղութեամբ իրեն եղած դիմումին: Անհրաժեշտ է որ դիմումին կցուած ըլլան ենթակային կենսագրութիւնը եւ Արժանեաց Շքանշանի պարգեւատրումը արդարացնող բացատրագիր մը:

Յօդ. 8.- Անդամ մը որ նուազագոյն 25 տարի կը ծառայէ Միութեան լրացնելով յօդուած 6 ա.ի պայմանները կ'արժանանայ Հ.Մ.Ը.Մ.ի Արժանեաց Արծաթ Շքանշանին: Նոյն ձեւով, նուազագոյնը 40 տարի ծառայութիւն ունեցող անդամ մը կ'արժանանայ Հ.Մ.Ը.Մ.ի Արժանեաց Ոսկի Շքանշանին:

Յօդ. 9.- Յօդուած 6 բ.ի պարագային, Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութիւնը իրեն

կը վերապահէ Հ.Մ.Ը.Մ.ի Արժանեաց Շքանշանի կարգին ճշդուժը նկատի առնելով օրուան եւ տեղական պայմանները եւ պարգեւատրելին անձը:

Յօդ. 10.- Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը Արժանեաց Շքանշանով պարգեւատրուած անձին անունը յատուկ Շրջաբերականով կը յայտնէ Շրջանային եւ Մեկուսի Վարչութիւններուն, որոնք իրենց կարգին կը փոխանցեն Մասնաճիւղերուն եւ շարքերուն:

Հ.Մ.Ը.Մ.ի ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՇՔԱՆՇԱՆ

Յօդ. 1.- Հ.Մ.Ը.Մ.ի Ծառայութեան Շքանշանը կը տրուի Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային եւ Մեկուսի շրջաններու վարչութիւններուն կողմէ:

Յօդ. 2.- Հ.Մ.Ը.Մ.ի Ծառայութեան Շքանշանին հետ կը տրուի համապատասխան հաստատագիր, որ կը կրէ Վարչութեան կնիքը, Ատենապետին եւ Ատենադպիրին ստորագրութիւնները, պարգեւատրման որոշման թուականը:

Յօդ. 3.- Շքանշանը տուող Վարչութիւնը յատուկ ոսկեմատեանի մէջ կ'առձանագրէ Հ.Մ.Ը.Մ.ի Ծառայութեան Շքանշանին արժանացած անձնաւորութիւններուն անուանացանկը, պարգեւատրման որոշումը եւ թուականը, ինչպէս նաեւ անոնց կենսագրականն ու նկարը:

Յօդ. 4.- Հ.Մ.Ը.Մ.ի Ծառայութեան Շքանշանին կ'արժանանան.- մարզիկներ եւ սկաուտներ, որոնք իրենց երկարամեայ գործունէութեամբ օժանդակած են միութեան եւ օգտակար հանդիսացած են անոր ամրապնդման, զարգացման ու վերելքին,

- Անդամներ եւ համակիրներ՝ որոնք նիւթական մեծագումար նուիրատուութիւններով օժանդակած են Միութեան:

Յօդ. 5.- Շրջանային թէ Մեկուսի Վարչութիւնները Շքանշանի սուղութիւնը պարտին իմացնել Կեդրոնական Վարչութեան, որ, իր կարգին, յատուկ շրջաբերականով պարգեւատրուժը կը հաղորդէ բոլոր շրջաններուն:

Յօդ. 6.- Հ.Մ.Ը.Մ.ի Ծառայութեան Շքանշանը եւ հաստատագիրը կը պատրաստուին եւ կը տրամադրուին Կեդրոնական Վարչութեան կողմէ:

Ծանօթ.- Սոյն Շքանշանը հաստատուած է Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան 7 Փետրուար 1986ի նիստին:

ԱՐԺԱՆԵԱՅ ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐՆԵՐ

1976-1990 ժամանակաշրջանին Հ.Մ.Ը.Մ.ի Արժանեաց Ոսկի Շքանշանով պարգեւատրուած են հետեւեալ Հ.Մ.Ը.Մ.ականները.-

(Փակագծի մէջ պարգեւատրման որոշումի թուականը)

Տիգրան Աւագ. Քհն. Խոյեան, Ուաշինկթըն 22 Փետրուար 1976

Յովհաննէս Շահինեան, Պէյրութ 30 Յունուար 1977

Հուտեր Մասպանաճեան, Թորոնթօ 30 Յունուար 1977

Թորոս Խաչատուրեան, Գահիրէ 6 Սեպտեմբեր 1977

Գէորգ Յաբեթեան, Աթէնք 25 Յուլիս 1978

Լեւոն Գայեան Աթէնք, 25 Յուլիս 1978

Վահան Գաւուքճեան, Աղեքսանդրիա 6 Մարտ 1979

Դանիէլ Դանիէլեան, Մոնթրէալ 30 Ապրիլ 1980

Քերոբ Առաքելեան, Կլէնտէյլ 17 Դեկտեմբեր 1980

Ալպէր Յակոբեան, Պէյրութ 17 Դեկտեմբեր 1980

Գարեգին Շամլեան, Նիւ Ճըրզի 5 Մայիս 1982

Պետրոս Կարապետեան, Պոսթըն 1 Մայիս 1984

Շաւարշ Քհն. Մեհրապեան, Պուէնոս Այրէս 25 Յունուար 1985:

Նոյն ժամանակաշրջանին Հ.Մ.Ը.Մ.ի Արժանեաց Արծաթ Շքանշանով պարգեւատրուած են հետեւեալ անդամները.-

Խաչիկ Բարթեմեան, Թեսաղոնիկէ 7 Օգոստոս 1978

Հրանդ Մուրատյան, Պէյրուի 17 Դեկտեմբեր 1980

Տիգրան Ոսկերիչեան, Դամասկոս 16 Նոյեմբեր 1983

Սարգիս Պապիկեան, Դամասկոս 16 Նոյեմբեր 1983

Պարգեւ Միսիրեան, Հալէպ 27 Յունուար 1986

Ճորճ Տաքեսեան, Ամման 10 Մայիս 1987


Եղիշէ Խոստեղեան, Նիւ Ճըրջի 1987

Յովհաննէս Աթամպուլեան, 1987

Մանուէլ Գարճեան, 1987

Տոբթ. Ժոզէֆ Մելիքեան, 1987

Իսալիա՝ Հրանդ Բամպակեան
Աթէնք՝ Պետրոս Գայեան
Գոքինիա՝ Տիգրան Սրապեան



Հ.Մ.Ը.Մ.ի Ծառայութեան Շքանշանը

ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐՆԵՐ

Ստորեւ 1985 էն 1990 ժամանակաշրջանին կարգ մը մասնաճիւղերու մէջ Հ.Մ.Ը.Մ.ի Ծառայութեան Շքանշանին առաջին հերթին արժանացած անդամներու ցանկը:

Ամման՝ Յակոբ Գարաստանայեան

Տիթրոյիթ՝ Յովսէփ Մելիքեան



Հ.Մ.Ը.Մ.ի Ծառայութեան Շքանշանի Վկայականը


Բ. ՄԱՍ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՇՐՋԱՆՆԵՐ ԵՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅՈՒՆԱՍՏԱՆ

- ԱԹԷՆՔ - ՖԻՔՍ
- ԳՈՔԻՆԻԱ
- ԹԷՍԱՂՈՆԻԿԷ - ՍԵԼԱՆԻԿ
- ԳԱՐԷԱ
- ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ



Սելանիկ

Յ Ո Ւ Ն Ա Ս Տ Ա

ԷԳԵԱԿԱՆ ԾՈՎ

Գարէա

ԱՐԷՆՔ

Գոքինիա

ՄԻՋԵՐԿԱՐԱԿԱՆ ԾՈՎ

1974ին, Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կառույցի կազմութեան օրերուն, Յունաստանի Շրջանին մէջ գործօն կը մնային չորս մասնաճիւղեր՝ Ֆիքս (Աթէնք), Գոքինիա, Սելանիկ եւ Գարէա Յունաստանի Կեդրոնական (Շրջանային) Վարչութեան ենթակայութեամբ: Հ.Մ.Ը.Մ.ի անդրանիկ Պատգամաւորական ընդհանուր Ժողովին Շրջանը կը ներկայացնէին Լեւոն Գայեան, Տիգրան Սրապեան եւ Կարօ Մինասեան:

Ա.Թ.ԷՆ.Բ-ՖԻ.ԲՍ

Կազմակերպչական

29 Սեպտեմբեր 1975ին Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան վարժարանի սրահին մէջ մասնաճիւղի վարչութիւնը անդամական ընդհանուր ժողովին կը ներկայացնէ իր երկամեայ նիւթաբարոյական գործունէութեան տեղեկագիրը: Ժողովի վերջին օրակարգով ընտրուած վարչական կազմը աշխատանքներու բաժանումը կը կատարէ հետեւեալ կերպով.

- Ատենապետ՝ Յարութիւն Գարաքաչեան
- Փոխ-ատենապետ՝ Խաչիկ Աղապապեան
- Ատենադպիր՝ Զ. Զոպանեան
- Գանձապահ՝ Կարպիս Գուլումճեան
- Մարզական պատասխանատու՝ Կարպիս Սերեան

- Գոյքապահ՝ Կարապետ Գազերեան
- Պասքեթպոլի պատասխանատուներ՝ Կարօ Մինասեան եւ Յակոբ Գիւրսուղլեան

Փինկ-փոնկի պատասխանատու՝ Կարպիս Պեքերէճեան:

Այս կազմի գլխաւոր իրականացումներէն կ'ըլլայ Առաքելեան-Կիւտէնեան մարզադաշտին, մասնաճիւղի զոյգ ակումբներուն եւ մարզիկներու զգեստներու սենեակին կազմակերպումն ու յանձանցումը:

1977-78 տարեշրջանի վարչական կազմի անդամներն են՝ Յարութիւն Գարաքաչեան, Կարպիս Գուլումճեան, Խաչիկ Աղապապեան, Վա-

րուժան Նշանեան, Սերգօ Իսկահատեան, Տ.Թոփճեան, Կարպիս Պեքերէճեան, Կ. Ղազարեան եւ Յովսէփ Գասեսեան: Մասնաճիւղի մարզական եւ սկաուտական բաժինները կը սկսին գործել նոր թափով օգտագործելով մարզադաշտի եւ ակումբի արդիական սարքաւորումները:

Աթէնքի մասնաճիւղի 1979- 1980 երկամեայ տարեշրջանի վարչութեան մաս կը կազմեն Ատենապետ՝ Կարպիս Գուլումճեան Փոխ-ատենապետ՝ Խաչիկ Աղապապեան Ատենադպիր՝ Կարպիս Մինասեան Գանձապահ՝ Վարուժան Նշանեան Ֆուտբոլի պատասխանատուներ՝ Կարպիս Պեքերէճեան, Թագլոր Շիրակեան եւ Յակոբ Եթիմեան

Պասքեթպոլի պատասխանատուներ՝ Կարպիս Ճանիկեան, Ֆիլիփ Մերոնեան, Ժիրայր Գալայճեան եւ Յակոբ Գիւրսուղլեան:

Մասնաճիւղի անդամական ընդհանուր թիւն է 216 որոնցմէ 50ը մարզիկներ եւ 67 սկաուտական շարքերու անդամներ:

1981-1982 երկամեակի վարչութեան կ'անդամակցին՝

- Ատենապետ՝ Խաչիկ Աղապապեան
- Փոխ Ատենապետ՝ Յակոբ Եթիմեան
- Ատենադպիր՝ Սերգօ Մինասեան
- Գանձապահ՝ Վարուժան Նշանեան
- Գոյքապահ՝ Թագլոր Շիրակեան

Խորհրդականներ՝ Մուրատ Գիւրսուղլեան, Կարպիս Պեքերէճեան, Կարպիս Ճանիկեան, Գրիգոր Զափարեան եւ Կարօ Կենդանեան: Հոկտեմբեր 1982ին, Վարուժան Նշանեանի հրաժարումով, գանձապահի պաշտօնը կը փոխանցուի Յակոբ Եթիմեանին:

Մասնաճիւղը այս երկամեակին կ'արձանագրէ անդամական թիւի կարեւոր աճ՝ ընդհանուր թիւն է 298 որոնցմէ օժանդակ անդամներ՝ 126, մարզիկներ՝ 59 եւ սկաուտական շարքեր՝ 113: Կիրարկուող մարզաճիւղերն են՝ ֆուտբոլ, պասքեթպոլ եւ լողորդութիւն: Բացի

մարզական եւ սկսողական բաժիններէն, մասնաճիւղի աւանդական ձեռնարկներէն են, Սբ. Ծննդեան աւետում եւ ամանորի Գաթալի հաւաք: Մասնաճիւղի եկամուտի աղբիւրներն են վիճակահանութիւն եւ օրացոյցի վաճառք:

20 Յունիս 1983ին մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ Յունիս 1983էն Յունիս 1985 երկամեակի մասնաճիւղի վարչութիւն որ կարգ մը հրաժարումներէ եւ նշանակումներէ ետք կը ստանայ հետեւեալ պատկերը.-

Ատենապետ՝ Յակոբ Եթիմեան
Փոխ ատենապետ՝ Կարպիս Ճանիկեան
Ատենադպիր՝ Սերգօ Մինասեան
Գանձապահ՝ Յովհաննէս Քայթանճեան
Գոյքապահ՝ Թազուր Շիրակեան

Խորհրդականներ՝, Մինաս Քայթանճեան, Յիլիբ Ծերոնեան, Տ. Չաքրեան, Յակոբ Մովսէսեան, Ս. Յարութիւնեան եւ Ժիրայր Գալայճեան:

Մասնաճիւղը մարզական բաժինով կը կիրարկէ Ֆուլթպոլ, պասքեթպոլ եւ լողորդութիւն: Այս կազմը կը փորձէ առաւելագոյն չափով հայացնելու մարզական խումբերու անդամակցութիւնները:

1985-86 տարեշրջանի մասնաճիւղի վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Յակոբ Եթիմեան, փոխ ատենապետ՝ Յակոբ Մովսէսեան, ատենադպիր՝ Դանիէլ Դանիէլեան, գանձապահ՝ Յովհաննէս Քայթանճեան: Երկամեակի միջոցին այս կազմը կը հրաժարի: Շրջանային վարչութիւնը կը յառաջացնէ նշանակովի կազմ ամբողջացնելու համար ժամանակաշրջանը:

20 Ապրիլ 1986ին վարչութիւնը կը կազմակերպէ Ապրիլեան Յուշավագք Նէա Ջմիւռնիի հայկական յուշարձանի հրապարակին վրայ: Այս առթիւ օրուան հանդիսավար Սերգօ Աղապատեան յունարէնով հետեւեալ խօսքը կ'արտասանէ. «Աթէնքի Հ.Մ.Ը.Մ.ը, հայկական Յե-

ղասպանութեան 71ամեակին առթիւ, ծրագրեց ու կազմակերպեց յուշավագք մը եւ կը ծրագրէ, ամէն տարի Ապրիլին բոլորին ցոյց տալու Հայ Ազգին դէմ կատարուած Յեղասպանութիւնը, երբ հայութիւնը կորսնցուց իր թիւին կէսէն աւելին ու իր հայրենիքը»:

«Մենք, հայ մարտիկներս, մարտական այս ելոյթով, ոչ միայն կ'ուզենք յարգել մեր անթիւ պոռոտ յիշատակը, այլ մարմնամարտի միջոցաւ տեղեկացնել մարկասէր աշխարհին մեր հարցը, որ Յեղասպանութեան դատապարտումն է ու բռնագրաւուած հայկական հողերու վերադարձը իր սեփականատիրոջը՝ Հայուն»:

30 Օգոստոս 1986ի, մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչութեան անդամները իրենց պաշտօններու բաժանումը կը կատարեն հետեւեալ կերպով.

Ատենապետ՝ Օննիկ Հարոնեան
Փոխ-ատենապետ՝ Յակոբ Մովսէսեան
Ատենադպիր՝ Դանիէլ Դանիէլեան
Գանձապահ՝ Ժիրայր Գալայճեան

Խորհրդականներ եւ մարզաճիւղերու պատասխանատուներ՝ Վարուժան Նշանեան, Կարպիս Ճանիկեան, Կարպիս Պեքերէճեան, Գէորգ Եսայեան, Յիլիփ Ծերոնեան, Յակոբ Մինասեան, Թազուր Շիրակեան եւ Յարութիւն Խաչատուրեան:


15 Յունիս 1990ին Աթէնքի մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ բաղկացած հետեւեալ անդամներէն.

Ատենապետ՝ Պաղտիկ Գարապաճաքեան
Փոխ ատենապետ՝ Կարպիս Ճանիկեան
Քարտուղարուհի՝ Արշա Սամուէլեան
Գանձապահ՝ Դաւիթ Պետրոսեան

Խորհրդականներ՝ Ա. Կիւզելեան, Սերգօ Մինասեան, Յովիկ Տէր Յովակիմեան, Տիգրան Չաքրեան, Արշօ Գուլյումճեան, Յովիկ Պապոյլեան, Մարգար Արապեան, Սահակ Սահակեան եւ Գէորգ Եսայեան:

Մարզական Գործունեություն

Աթէնքի Հ.Մ.Ը.Մ.ի Ֆուտբոլի խումբը քաղաքի Գ. դասակարգի խմբակցութեան մաս կը կազմէ: 1975ի ախոյեանութեան մրցաշարքի աւարտին խումբը երկրորդ տարին ըլլալով կը տիրանայ բարի վարուց (Fair Play) բաժակին, իբրեւ բոլոր դասակարգերու լաւագոյն մարզական ոգի ցուցաբերած եւ ոչ մէկ պատիժ ստացուած խումբ:



Աթէնքի մասնաճիւղին յանձնուած բարի վարուց վկայական ֆուտբոլի խումբի մարզական բարձր ոգին առ ի գնահատանք 1976-77 եղանակ

1978ին կը վերակազմուի պասքէթպոլի աղջկանց խումբը, խումբի մարզիչն է Տիմիթրիս Գոստանթինիտիս:

1981ին կը կազմուի կրտսեր պատանիներէ եւ պարմանուհիներէ կազմուած լողի խումբը:

1980-81 տարեշրջաններուն Ֆուտբոլի խումբը 54 մրցումներու կը մասնակցի: Պասքէթպոլի աղոց, կրտսերներու եւ աղջկանց խումբերը կը մասնակցին պատկան Ֆետերասիոնի ախոյեանութեան մրցաշարքերուն:

1982ին, լողորդութեան խումբի անդամները կը մասնակցին կրթական նախարարութեան կազմակերպած միջ-վարժարանային մրցումներուն: Խումբի լողորդներէն Ազատիկ Մովսէսեան, Քրիստինէ Եթիմեան, Լիզա Տա-

պանեան, Սերգօ Մովսէսեան եւ Արա Գրիգորեան կ'արձանագրեն պատուաբեր արդիւնքներ:

1983ի եղանակին, մասնաճիւղի պասքէթպոլի պատանիներու խումբը կը յաջողի Ֆետերասիոնի կազմակերպած ախոյեանութեան մրցաշարքին իր խմբակցութեան ախոյեան հանդիսանալ: Շնորհիւ Թագլոր Սուքիասեանի եւ Գէորգ Եսայեանի ջանքերուն աղջկանց նորակազմ խումբը եւս փայլուն յաջողութիւններ կ'արձանագրէ մինչեւ տարեվերջ գ. դասի ախոյեանութեան երթի ութը մրցումներուն ութն ալ յաղթանակով աւարտելով: Դարձի մրցումներուն, իր յաջող արդիւնքներուն հետեւանքով 1984ի եղանակին խումբը կը փոխադրուի Բ. դասակարգ: Միւս կողմէ աղոց կազմը Ե.էն կը փոխադրուի Դ. դասակարգ:

1984ի եղանակին մասնաճիւղի լողորդները միջ-ակմբային եւ Ֆետերասիոնի ախոյեանութեանց մրցումներուն պատուաբեր արդիւնքներ կ'արձանագրեն: Յաղթական ընթացքը կը շարունակուի 1985 եղանակին եւս: Խումբի աստղերէն են Ազատուհի - Էօթէն Մովսէսեան, Քրիսթին Եթիմեան, Յովհաննէս Եսայեան, Սերգօ Մովսէսեան, Մարթա Ճամպուզեան, Յովիկ Ապրոյեան, Ադամ Քիլաւեան:

Սկստուական Գործունեություն

Հ.Մ.Ը.Մ.ի Աթէնք — Ֆիքս մասնաճիւղի սկստուական բաժնի գործունէութիւնը հիմնադրութեան օրէն սկսեալ կը զարգանայ յարատեւ յաջողութիւններով, շնորհիւ փորձառու եւ հաւաստացեալ երէց խմբապետներու անվերապահ գործակցութեան:

1980ին Աթէնքի մասնաճիւղի սկստուական կազմէն պատուիրակութիւն մը կը մասնակցի համագաղութային Բ. ընդհանուր բանակումին: Սկստուական շարքերու ընդհանուր թիւն է 80 որոնցմէ 10 աստիճանաւորներ:

1983ի Սեպտեմբեր 17ին մասնաճիւղի աստիճանաւորական կազմը կը մասնակցի Շրջանա-

յին Սկառուտական խորհուրդի կազմակերպած սեմինարին:

Աթէնքի Հ.Մ.Ը.Մ.ի սկառուտական բաժինը մասնաճիւղի ամենաեռանդուն գործունէութիւնն արձանագրած է սարիներու ընթացքին, գործակցութեամբ մասնաճիւղի ծնողական խորհուրդին եւ աստիճանաւորական կազմին: 1987 տարեշրջանի ծնողական յանձնախումբին մաս կազմած են՝

Ատենայետուհի՝ Կիւլա Խաչատուրեան

Փոխ ատենայետ՝ Ժիրայր Գալայճեան

Ատենաղարուհի՝ Թագուհի Մինասեան

Գանձապահուհի՝ Լուսի Յովսէփեան

Խորհրդականներ՝ Վերգին Բալուլեան, Թագուհի Շամմէսեան եւ Հռիփսիմէ Գարամանուկեան:

Աստիճանաւորական կազմի անդամներն են, խնամակալ՝ Պօղոս Չոլաքեան

Աւագ խմբապետ՝ Ազարիկ Եորդանեան եւ խմբապետներ Ս. Քէհէեան, Գուրգէն Մովսէսեան, Սերգօ Մովսէսեան, Անի Խաչատուրեան եւ Նաթալի Նշանեան:

Ազգային – պաշտօնական գործունէութիւն

Աթէնքի մասնաճիւղի ազգային գործունէութիւնը յատուկ կարեւորութիւն ստացած է Հայ Դատի ծառայութեան ծիրէն ներս: Իրերայաջորդ վարչութիւնները այս պարագաները օգտագործած են զանազան առիթներով: Այսպէս 1975 Ապրիլեան Եղեռնի 60ամեակին առիթով վարչութիւնը հետեւեալ նամակը կը յղէ Յունաստանի Փոլիպոլի Ֆետերասիոնին:

«Վաթառն տարիներ առաջ, բարբարոս թուրքը, սպանդ մը կապմակերպելով, ծրագրեց ցեղասպանութեամբ բնաջնջել հայ ազգը, տէր դառնալու համար մեր պապենական հողերուն:

Կորուստը մեծ եղաւ եւ թրքական այս ոճրալին արարքին զոհ գացին աւելի քան մէկուկէս միլիոն հայեր:

Այսօր, այս Մեծ Եղեռնի 60ամեակին առթիւ, աշխարհիս բոլոր կողմերը ցրուած հայերս, Ապրիլ ամսուան ընթացքին եւ մասնաւորաբար Ապրիլ 20ին Յունաստանի մէջ, յարգելով մեր բիւրաւոր նահատակներու յիշատակը, կը կապմակերպենք ոգեկոչումներ, քայլարշաւներ եւ զանազան այլ ելոյթներ:

Այս առթիւ, ջերմապէս կը խնդրենք, որ յառաջիկայ Կիրակի Ֆութպոլի մեր խումբի ախոյեանական մրցաշարքի 22րդ յանդիպումը յետաձգուի ուրիշ օրուան մը, որպէսզի մեր մարպիկներն ալ կարենան նոյն օրուան ելոյթներու բերել իրենց մասնակցութիւնը»:

Աթէնքի Փոլիպոլի Ֆետերասիոնը հետեւեալ պատասխանը կ'ուղարկէ.

«Աթէնքի Ֆութպոլի ֆետերասիոնը ընդունելով ձեր խնդրագիրը, միաձայնութեամբ կ'որոշէ.

Յետաձգել Կիրակի Ապրիլ 20ի ձեր խումբին խաղը.

Միաժամանակ, համամասնակցիլ ձեր բոլոր ելոյթներուն, ձեզի հետ յարգելու համար բարբարոս թուրքերու կողմէ սպաննուած ձեր բոլոր նահատակուած եղբայրներու յիշատակը : Է.Բ.Ս.Ա.»- [ԽԵ/18.4.1975]:

22 Փետրուար 1987ին, զուգահեռաբար ընկած «Համաշխարհային Սկառուտութեան Օր»ուան նշումը հիմնադիր Պէյտըն Փաուլի ծննդեան տարեդարձին, Աթէնքի սկառուտական խումբը «Էնթէրքոնթինենթալ» պանդոկին մէջ պաշտօնապէս կը սօսէ իր հիմնադրութեան 65ամեակը: Տեղի կ'ունենան բանախօսութիւն, գեղարուեստական բաժին եւ աստիճաններու սուղութիւն:

17 Ապրիլ 1988ին մասնաճիւղը կը կազմակերպէ Ապրիլեան Յրդ յուշավազքը որուն Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկներու կողքին կը մասնակցին նաեւ յոյն մարզիկներ:

1983ին մասնաճիւղը կը սօսէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 65ամեակը:

Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 70ամեակի առ-

Թիւ, 4 Դեկտեմբեր 1988ին «Էսրիա» սրահին մէջ տեղի կ'ունենայ հանդիսաւոր սօնակատարութիւն հովանաւորութեամբ Յունաստանի Թեմի Առաջնորդ Սահակ Արք. Այվազեանի: Օրուան պատգամը կը փոխանձէ Կեդրոնական Վարչութեան ատենապետ տոքթ. Միսաք Արզումանեան: Հանդիսութեան կը յաջորդէ պաշտօնական ճաշկերոյթ Ֆիքսի Լ. եւ Ս. Յակոբեան վարժարանի «Աւետիքեան» սրահին մէջ:

ԳՈՔԻՆԻԱ

Կազմակերպչական եւ Մարզական

Գործունէութիւն

Հ.Մ.Ը.Մ.ի Գոքինիոյ մասնաճիւղի 1976-77 տարեշրջանի վարչութեան մաս կը կազմեն՝ Տիգրան Սրապեան, Օննիկ Դագեսեան, Պատրիկ Գնաճեան, Աբրահամ Արապեան, Մինաս Աղամեան, Արիս Գափլանեան, Յարութիւն Տէր Արթինեան, Յարութիւն Տէմիրճեան, Յովհաննէս Եզեկիէլեան, Հայկ Աճեմեան, Թագաւոր Յովակիմեան, Ստեփան Աւագերէցեան եւ Պօղոս Չոլաքեան:

Մասնաճիւղի նստավայրը կը մնայ Զաւարեան ակումբը, վարժարանի դաշտի եւ սկաուտական սենեակներու բաժիններով:

Մասնաճիւղի կիրարկած մարզախաղերն են վոլիպոլ եւ ֆութպոլ: Մեծերու եւ կրտսերներու խումբեր անթերիօրէն կը մասնակցին պատկան ֆետերասիոններու կազմակերպած տարեկան մրցաշարքերուն:

1977-78 տարեշրջանին վարչական կազմի անդամներ կ'ընտրուին՝ Ատենապետ՝ Կարօ Յովակիմեան

Փոխ ատենապետներ՝ Պաղտիկ Սլտրեան եւ Պօղոս Չոլաքեան

Ատենադպիր՝ Յարութիւն Աճեմեան

Գանձապահ՝ Յարութիւն Նաճարեան

Խորհրդականներ՝ Սերոբ Սերոբեան, Յ.

Աղանեան, Ստեփան Աւագերէցեան եւ Սմբատ Ժամկոչեան :

Վարչութիւնը կը կազմակերպէ վոլիպոլի ամառնային մրցաշարք մասնակցութեամբ 7 խումբերու:

1979-80 տարեշրջանի վարչական կազմին կ'անդամակցին.

Ատենապետ՝ Կարօ Յովակիմեան

Փոխ ատենապետ՝ Կարօ Չերչեան

Ատենադպիր՝ Յարութիւն Աճեմեան

Գանձապահ՝ Թորոս Մաւուշեան

Խորհրդականներ՝ Աւետիս Արապեան, Յարութիւն Ժամկոչեան, Պաղտիկ Սլտրեան, Յարութիւն Նաճարեան եւ Սերոբ Սերոբեան:

Բացի նախորդ տարիներու վարչական անդամներէն, 1980էն 1984 տարեշրջաններուն վարչական պաշտօններ վարած են՝ Պերճ Գիզիրեան, Օննիկ Շիրինեան, Նշան Պեքմեզեան, Սերգօ Մովսէսեան, Յաբէթ Այանեան, Սերգօ Գօճայեան, Սուրէն Սափրիչեան, Օննիկ Կոզորեան, Յարութիւն Նուրճանեան, Սեդրակ Փոսթաճեան եւ Պետրոս Կարապետեան:

6 Յունիս 1983ին անդամական բացառիկ ընդհանուր ժողովը կ'ամբողջացնէ վարչական կազմը որմէ կարգ մը անդամներ հրաժարած էին: Նորընտիր վարչական կազմի անդամներն են՝

Ատենապետ՝ Թորոս Մաւուշեան

Փոխ ատենապետ՝ Յարութիւն Ժամկոչեան

Ատենադպիր՝ Սմբատ Ժամկոչեան

Գանձապահ՝ Պերճ Գիզիրեան

Խորհրդականներ՝ Սեդրակ Փոստաճեան, Աւետիս Արապեան, Յարութիւն Նուրճանեան, Կարօ Չալեան եւ Արմենակ Մովսէսեան:

Այս տարեշրջանին կը կազմուի վոլիպոլի աղջկանց խումբը բաղկացած 11 խաղացողներէ:

Մասնաճիւղը կը նշէ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 65ամեակը, Աթէնքի մասնաճիւղին հետ միասնաբար, հրապարակային հանդիսութեամբ եւ պաշտօնական ճաշկերոյթով:

1984-85 տարեշրջանի մասնաճիւղի վարչութեան անդամներն են՝

Ատենապետ՝ Սեդրակ Փոսթաճեան
Փոխ ատենապետ՝ Թորոս Մալուշեան
Ատենադպիր՝ Քերովբէ Էքիզեան
Գանձապահ՝ Արամ Պատանեան

Խորհրդականներ՝ Հայկազ Տէօքմէճեան, Սերգօ Եղիշեան, Արմէն Մովսէսեան, Վահան Քէօսէեան, Մուշեղ Խաչատուրեան, Կարօ Մովսէսեան եւ Կարօ Զալեան:

1985 եւ 1986ի բարեկենդանի պարահանդէսներու հասոյթները ամբողջութեամբ կը յատկացուին «Զաւարեան» ակումբի շինութեան ֆոնտին:

1986-87 տարեշրջանի Գոքինիոյ մասնաճիւղի վարչական կազմի անդամներն են՝

Ատենապետ՝ Հայկ Զիչէքեան
Ատենադպիր՝ Հայկազ Տէօքմէճեան
Գանձապահ՝ Սերոբ Սերոբեան

Խորհրդականներ՝ եւ մարզական բաժիններու պատասխանատուներ՝ Պերճ Գիզիրեան, Ռուբէն Պոյաճեան, Մուշեղ Խաչատուրեան, Թորոս Ասիպեան, Վահան Քէօսէեան, Արիս Գաբլանեան, Սերգօ Մովսէսեան եւ Սեդրակ Փոսթաճեան:

Բացի սկաուտական շարքերէն մասնաճիւղի մարզիկ, գործօն եւ օժանդակ անդամներու թիւն է 94:

8 Փետրուար 1987ին մասնաճիւղի մեծերու, կրտսերներու եւ վեթերան անդամներէ կազմուած խումբերը վոլիպոլի մրցաշարք մը կը կազմակերպեն եկամուտը տրամադրելով Գալամաթայի երկրաշարժի զոհերու ֆոնտին:

1988 -89 տարեշրջանի վարչական կազմի անդամներն են՝

Ատենապետ՝ Հայկ Զիչէքեան
Փոխ ատենապետ՝ Թորոս Մալուշեան
Ատենադպիր՝ Հայկազ Տէօքմէճեան
Գանձապահ՝ Սմբատ Ժամկոչեան
Խորհրդականներ՝ Արմենակ Մովսէսեան,

Յարութիւն Ժամկոչեան, Ռուբէն Պոյաճեան, Ստեփան Աւագերէցեան, Յարութիւն Եզէկելեան, Յարէթ Աղամեան, Եղիա Սարգիսեան, Թորոս Ասիպեան եւ Մուշեղ Խաչատուրեան:

Մասնաճիւղի մարզիկները կը մասնակցին Ապրիլ 24ի Յուշավագքին կազմակերպուած վարչութեան եւ Աթէնքի մասնաճիւղի վարչութեան նախաձեռնութեամբ: Մասնաճիւղի անդամները կ'օժանդակեն նաեւ Հայաստանի երկրաշարժային աղետեալներուն օգնութեան յատուկ յանձնախումբի աշխատանքներուն:

1989-1990 տարեշրջանի նորընտիր վարչութեան մաս կը կազմեն,

Ատենապետ՝ Հայկ Զիչէքեան
Փոխ ատենապետ՝ Հայկազ Տէօքմէճեան
Ատենադպիր՝ Յարութիւն Եզէկելեան
Գանձապահ՝ Սմբատ Ժամկոչեան

Խորհրդականներ՝ Յարութիւն Ժամկոչեան, Յարութիւն Մովսէսեան, Եղիա Սարգիսեան, Սեդրակ Փոստաճեան եւ Արամ Պատանեան:

Այս կազմը կ'որոշէ 1.500.000 Տրախմիով մասնակցիլ Զաւարեան կեդրոնի նոր շէնքի կառուցման ծախսերուն եւ իր սնտուկէն 300.000 Տրախմի կը փոխանցէ շինութեան յանձնախումբին:

Սկաուտական Գործունէութիւն

Ընկալեալ սովորութեան համաձայն 6 Յունուար 1975ի երեկոյեան Գոքինիոյ սկաուտական կազմը կը տօնէ Ամանորի հաւաքոյթ նախագահութեամբ Հրայր վրդ. Նիկոլեանի: Այս առթիւ խմբապետ Պօղոս Զոլաքեանի բացման խօսքէն ետք տեղի ունեցաւ գեղարուեստական բաժին: Խօսք առին Շրջանային վարչութեան փոխ ատենապետ՝ Տոքթ. Կարպիս Վարդանեան եւ մասնաճիւղի ատենապետ Տիգրան Արապեան: Ապա Հայր Սուրբի աղօթքով՝ բաժնուեցաւ ամանորի աւանդական կարկան-

դակը: Նշելի է որ յունական Ամանորի Գաթա-
յի ալանդական արարողութիւնը կրկնուած է
մասնաճիւղի սկսուածական կազմերու հաւա-
քոյթներով իւրաքանչիւր տարեսկիզբին:

1978 տարեշրջանին կը կազմակերպուի
մասնաճիւղի անդրանիկ արեւուշական խում-
բը եւ սկսուածական բաժինէն 16 անդամներ կը
մասնակցին Համագաղութային Ա. ընդհանուր
բանակումին:

1980ին, սկսուածական շարքերու ընդհա-
նուր թիւն է 53 որոնցմէ 25 սկսուածներ, 12
գալիկներ եւ 16 արեւոյշ-արծուիկներ: 1981-82
տարեշրջանին այս թիւը զգալի աճ կ'արձա-
նագրէ բարձրանալով ընդհանուրը 92ի որոնց-
մէ 9 աստիճանաւորներ:

21 Փետրուար 1982ին Հ.Մ.Ը.Մ.ի համագա-
ղութային սկսուածական Ա. համագումարին
առթիւ, տեղի կ'ունենայ Գոքինիոյ մասնաճիւ-
ղի սկսուածներու խոստման արարողութիւն
գլխաւորութեամբ մասնաճիւղի սկսուած
խմբապետ Պերճ Գրիգորեանի:

Օգտուելով Լիբանանի Հ.Մ.Ը.Մ.ի նուագա-
խումբի պատասխանատու Յակոբ Էքմէքճեա-
նի Յունաստան գտնուելէն Գոքինիոյ սկսու-
ածական խումբը 1984ի Մարտին կը կազմէ
սկսուածական նուագախումբ: Շաբաթական
զոյգ փորձերով Յունիս ամիսէն սկսեալ նորա-
կազմ նուագախումբը կը մասնակցի հրապա-
րակային ելոյթներուն խանդավառելով Գոքին-
իոյ Հ.Մ.Ը.Մ.ի շարքերը եւ շրջանի հայութիւնը:

12 Մայիս 1985ին մասնաճիւղի սկսուածա-
կան բաժինը յատուկ հանդիսութեամբ կը նշէ
Բ. Աշխարհամարտի դադարէն ետք իր գոր-
ծունէութեան վերսկսման քառասնամեակը
(1945-85) որուն ընթացքին մասնաճիւղի երկա-
րամեայ խմբապետ Պերճ Գրիգորեան կը պար-
գեւատրուի Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի արժան-
եաց մետալով: Այս տարեշրջանին սկսուածա-
կան շարքերու ընդհանուր թիւն է 85:

25 Յունուար 1986ին, գնահատելով Գոքին-



1984ի Յունաստանի Գոքինիոյ մասնաճիւղի
սկսուածական նուագախումբի անդամները.
ակնոցով՝ ուսուցիչ Յակոբ Էքմէքճեան

իոյ Հ.Մ.Ը.Մ.ի սկսուածական խումբերու տարի-
ներու յաջող գործունէութիւնը շրջանէն ներս,
Հելլէն սկսուածական խնամակալութիւնը յա-
տուկ մետալով կը պարգեւատրէ մասնաճիւղը
եւ վկայականը կը յանձնէ Շրջանային
Սկսուած խմբապետ Պերճ Գրիգորեանին:

Մարզական եւ սկսուածական գործունէու-
թիւններէն դուրս Գոքինիոյ մասնաճիւղը ու-
նեցած է նաեւ միութենական, ազգային, պե-
տական ու պաշտօնական գործունէութեանց
մասնակցութիւն:

Գոքինիոյ քաղաքապետութիւնը քաջալերե-
լով շրջանին մէջ մասնաճիւղի սկսուածական
գործունէութիւնը 1982ին «Ձաւարեան»
ակումբի կից փողոցը կը վերանուանակոչէ
«Հայ Սկսուածներու փողոց»:

10 Նոյեմբեր 1984ին «Ձաւարեան» սրահին
մէջ մասնաճիւղը կը տօնէ Յունաստանի
Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 60ամեակը: Ճաշկե-
րոյթի ընթացքին խօսք կ'առնեն Թագլոր Յո-
վակիմեան եւ Լեւոն Խաչատուրեան:

8 Փետրուար 1987ին հելլէն վոլիպոլի ֆետե-
րասիոնի կոչին անսալով, մասնաճիւղի զանա-

զան դասակարգի խումբերը կը կազմակերպեն ներքին մրցաշարքեր, Բիրէայի «Բարասթասին» մարզադաշտին վրայ, մուտքի ընդհանուր հասոյթը յատկացնելով Գալամաթա քաղաքի երկրաշարժի աղետեալներու Ֆոնտին:

28 Հոկտեմբերին, Բ. Աշխարհամարտին Յունաստանի դէմ Իտալիոյ պատերազմի հռչակման տարեդարձին նշումին մասնաճիւղի 55 հոգիներէ բաղկացող սկաուտական կազմերը կը մասնակցին ընդհանուր տողանցքին դափնեպսակ գետեղելով Օսաքսենի հրապարակի նահատակաց դամբանին վրայ:

ԹԵՍԱՂՈՆԻԿԷ-ՍԵԼԱՆԻԿ

Կազմակերպչական եւ Մարզական
Գործունէութիւն

Հ.Մ.Ը.Մ.ի Թեսաղոնիկէի մասնաճիւղի գործունէութեան գլխաւոր առանցքը կը կազմէ պասքեթպոլի մարզաճիւղի կիրարկումը որուն հոգածութիւնը ստանձնած են յաջորդական վարչական կազմերը:

1975ին վարչութեան ատենապետի պաշտօնը կը վարէ Արա Պարտիզպանեան: 26 Մայիսին, տեղի կ'ունենայ Ազգային իշխանութեան կողմէ, իր շէնքին մէջ, Հ.Մ.Ը.Մ.ին տրամադրուած գրասենեակի եւ ահումբի բացման հանդիսութիւնը: Այս դասաւորումը նոր թափ կուտայ մասնաճիւղի գործունէութեան:

Զատկուան տօներու առթիւ Աթէնքի եւ Սելանիկի մասնաճիւղերու պասքեթպոլի խումբերու փոխ այցելութիւնները (իւրաքանչիւր տարի Աթէնք կամ Սելանիկ) աւանդական հանգամանք կը ստանայ մասնաճիւղերու անդամներուն միջեւ ծանօթացման առիթներ ստեղծելով:

1978ին մասնաճիւղի վարչութեան մաս կազմած են՝ Վերա Պլէճեան, Արմինէ Տիարեան, Արթիւր Մորճիկեան, Միքայէլ Թուրշուճեան, Ալեքսի Փիւսքիլեան, Գալուստ Զամաս-

եան, Մինաս Մինասեան եւ Կարօ Տուրղութեան:

1980ի եղանակին պասքեթպոլի տղոց խումբը ախոյեանութեան մրցաշարքի աւարտին Գ. դասակարգէն կը բարձրանայ Բ. դասակարգի: Այս ժամանակաշրջանին մասնաճիւղի անդամներու ընդհանուր թիւն է 158 որոնցմէ 56 երկսեռ մարզիկներ: Յառաջդիմութեան նոյն թափով, 1981ին մեծերու խումբը Բ. դասակարգէն կը բարձրանայ Ա. դասակարգի: Մասնաճիւղը բաղաւորութիւնը կ'ունենայ ընդունելու Մարկօ Ապանեանի 5000 քառ. մէթր տարածութեամբ հողաշերտի մը նուէրը եւ անոր փոխանցումէն ետք կը ծրագրէ նոր մարզադաշտի եւ ահումբի շինութիւն:

1982ին վարչութեան ատենապետի պաշտօնը կրկին կը վստահուի Արա Պարտիզպանեանին: Յունիսի 21ին անդամական ընդհանուր ժողովը ներկայացուցիչներ կ'ընտրէ մասնակցելու համար Յունաստանի 46րդ. Շրջանային ներկայացուցչական ժողովին: Վարչութիւնը հասութեաբեր ձեռնարկներով կը յաջողի հաւասարակշռել իր պիւտճէն: 113 անդամներ մաս կը կազմեն մասնաճիւղին:

Բացի մեծ տղոց պասքեթպոլի խումբէն, մասնաճիւղը ունի նաեւ կրտսերներու եւ փոքրերու տղոց ինչպէս նաեւ աղջկանց խումբեր:

1986ին անդամներու ընդհանուր թիւը կը մնայ գրեթէ անփոփոխ՝ 117: Տեղւոյն Ֆետերասիոնին եւ քաղաքապետութեան հետ կապերը տարուէ տարի աւելի կը սերտանան աջակցութեան նոր եզրեր ստեղծելով:

Յունիսի 2ին մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովին ընտրուած վարչական կազմին կը մասնակցին՝

- Ատենապետ՝ Սերգօ Աղամեան
- Փոխ ատենապետ՝ Հայկազ Ուզունեան
- Ատենադպրուհի՝ Սիլվա Պուլլութեան
- Փոխ ատենադպրուհի՝ Վարդ Ղարիպեան
- Գանձապահ՝ Մինաս Մինասեան
- Խորհրդականներ՝ Մարտիկ Մարտիկեան,

Պաղատիկ Մարուքեան, Կարօ Տուրղութեան եւ Արէթ Տէտէեան:

31 Մարտի 1975ին, Սելանիկի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը գործակցութեամբ «Սողոմոն Թեհլիրեան» Երիտասարդաց Միութեան կը կազմակերպէ Վարդանանց յուշասօնը, որու ընթացքին խօսք կ'առնէ Կոմիտաս վրդ. Օհանեան:

Դեկտեմբեր 1978ին մարզական եւ հրապարակային շարք մը հանդիսութիւններով մասնաճիւղը կը սօնէ իր հիմնադրութեան յիսնամեակը:

Մասնաճիւղի գործունէութեան ծիրին մէջ կ'իյնայ նաեւ ընկերային բաժնի զարգացումը որուն համար վարչութիւնները կը կազմակերպեն արշաւներ դէպի տեսարժան վայրեր անդամներուն միջեւ ստեղծելով Հ.Մ.Ը.Մ.ական մտերմիկ մթնոլորտ:

ԳԱՐԷԱ

1970ական թուականներու երկրորդ կիսուն, հակառակ գործունէութեան դժուարին պայմաններուն Գարէայի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը կը մնայ կանգուն: Թիւով 30 գործօն անդամներով: Մասնաճիւղի յաջողութեան պիտի սատարէ սեփական մարզադաշտի շինութիւնը: Այս նպատակով Յունաստանի Հ.Մ. Ը.Մ.ի Շրջանային վարչութիւնը կը կազմակերպէ ճաշկերոյթ — վիճակահանութիւն որուն հասոյթը կը տրամադրուի շինութեան ծրագրին:

Սեփական մարզադաշտի շինութիւնը պահ մը կը խանդավառէ մասնաճիւղի գործօն անդամները որոնք կը յաջողցնեն մարզական կարգ մը աշխատանքներ: Սակայն մասնաճիւղի փոքրաթիւ անդամները չեն յաջողիր իրականացնել Շրջանային վարչութեան նախատեսած ծրագիրները:

1978-1980 տարեշրջանին մասնաճիւղի վարչութեան անդամներ կ'ընտրուին՝

Ատենապետ՝ Մինաս Էրջենեան

Ատենադպիր՝ Սերգօ Միսաքեան
Գանձապահ՝ Սիմոն Սիմոնեան

Խորհրդականներ՝ Կարպիս Սերեան, Առաքել Ճամուզեան, Վահան Սեւտաեան եւ Արամ Սերեան:

19 Հոկտեմբեր 1984ի միջ-մասնաճիւղային խորհրդակցական ժողովին Գարէայի մասնաճիւղի ներկայացուցիչները կը բացակային: Ժողովը կը յանձնարարէ Շրջանային վարչութեան, որ եթէ Գարէայի մասնաճիւղի վերակենդանացումը չիրականանայ լաւ է որ անցեալի նման մասնաճիւղը միացնէ Ֆիքսի մասնաճիւղին:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

1975-78 տարեշրջաններուն Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային վարչութեան ատենապետն է Լեւոն Գայեան, փոխ ատենապետ տոքթ. Կարպիս Վարդանեան:

25 Յունուար 1975ին Գոքինիոյ մասնաճիւղի սկսուա խմբապետ Պօղոս Չոլաքեան կը մասնակցի Յունաստանի Սկսուաական 28րդ պատգամաւորական ժողովին որու ընթացքին Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի սկսուաական շարքերը իրենց 1973-74 տարեշրջանի գործունէութեան համար, Յունաստանի ընդհանուր դասաւորման Բ. դիրքը կը գրաւեն:

Ըստ աւանդական սովորութեան 13 Մարտին Շրջանային վարչութիւնը պաշտօնական հանդիսութեամբ կը կայացնէ Վարդանանցի տօնակատարութիւնը:

18 Սեպտեմբեր 1977ին տեղի կ'ունենայ Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի առաջին սկսուաական պատգամաւորական ժողով ներկայութեամբ Շրջանային վարչութեան ներկայացուցիչներուն եւ Յունական սկսուաական կեդրոնի ներկայացուցիչին: Ժողովի աւարտին Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային սկսուապետ կ'ընտրուի Պօղոս Չոլաքեան եւ սկսուաական խորհուրդի անդամներ՝ Ժիրայր Գա-

լայճեան, Սմբատ ժամկոչեան եւ Արփի Մարկարոսեան:

1 Մայիս 1978ին Շրջանային վարչութիւնը հանդիսաւոր կերպով կը նշէ Միութեան հիմնադրութեան 60ամեակը: Տեղի կ'ունենայ ընդհանուր տողանցք: Խօսք կ'առնէ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան ատենապետ՝ Վարդգէս Տէր Կարապետեան: Պասքեթպոլի մրցումով ելոյթ կ'ունենան Աթէնքի եւ Թեսաղոնիկէի տղոց եւ աղջկանց կազմերը իսկ վոլիպոլով Գոքինիոյ եւ Գարէայի խումբերը: Երեկոյեան հանդիսութիւնները կը փակուին պարահանդէսով:

2-15 Օգոստոս 1978ին, Յունաստանի Շրջանային վարչութիւնը կ'իրականացնէ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան նախաձեռնութեամբ առաջին համագաղութային ձեռնարկը սկսողական Ա. ընդհանուր բանակումը Աթէնքէն 50 քմ. հեռաւորութեան վրայ գտնուող Գալամոս շրջանին մէջ:

1 Հոկտեմբեր 1978ին Յունաստանի Շրջանային 44րդ ներկայացուցչական ժողովը կ'ընտրէ նոր Շրջանային վարչութիւն բաղկացած՝ հետեւեալ անդամներէն.

Կարպիս Տապանեան, Օննիկ Շանկայեան, Տիգրան Սրապեան, Պատրիկ Գնաճեան, Պողոս Պողոսեան, Յակոբ Տէր Յովակիմեան եւ Աբրահամ Գոճայեան:

Շրջանի 45րդ ներկայացուցչական ժողովը տեղի կ'ունենայ 18 Մայիս 1980ին մասնակցութեամբ Յունաստանի չորս մասնաճիւղերու ներկայացուցիչներուն, նախագահութեամբ՝ Գօգօ Մինասեանի եւ քարտուղարութեամբ՝ Կարպիս Գոլյումճեանի: Մասնաճիւղերու երկամեայ գործունէութեանց ամփոփ տեղեկագրերու ընթերցումէն ետք, ժողովը կը պատրաստէ յառաջիկայ երկամեայի Շրջանային վարչութեան գործունէութեան ծրագիրը: Ապա կ'ընտրուի նոր շրջանային վարչական կազմ բաղկացած հետեւեալ անդամներէն. Խա-

չիկ Բարթեմեան, Պատրիկ Գնաճեան, Գալուստ Գոհարունի, Կարպիս Գոլյումճեան, Սերգօ Իսկահատեան, Պողոս Պողոսեան եւ Կարպիս Տապանեան:

1981ի 26էն 28 Ապրիլի միջեւ, Շրջանային վարչութիւնը կը կազմակերպէ միջ-մասնաճիւղային պասքեթպոլի մրցաշարք որուն կը մասնակցի Աթէնքի եւ Թեսաղոնիկէի երկսեռ խումբերու կողքին, Գահիրէի Հ.Մ.Ը.Մ. Արարատի մանչերու խումբը:

1982ի Փետրուարին Շրջանը կը հիւրընկալէ Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային սկսողական Ա. համագումարը Աթէնքի մասնաճիւղի Հայ Տան սրահին մէջ: Այս առթիւ Գոքինիոյ մասնաճիւղի «Զաւարեան» ակումբի կից փողոցը, տեղւոյն քաղաքապետական խորհուրդի որոշումով կը վերակոչուի «Հայ Սկսողներու Փողոց»:

1982ին Շրջանային 46րդ ներկայացուցչական ժողովէն կ'ընտրուի նոր Շրջանային վարչութիւն հետեւեալ կազմով.

Ատենապետ՝ Գալուստ Գոհարունի
Ատենադպիր՝ Կարպիս Գոլյումճեան
Գանձապահ՝ Սերգօ Աղապատեան
Խորհրդականներ՝ Կարպիս Տապանեան, Պողոս Պողոսեան, Մինաս Մինասեան եւ Սերգօ Իսկահատեան:

Այս կազմի գործունէութեան օժանդակելու կը հրաւիրուի նաեւ Կարօ Յովակիմեան:

Շրջանային վարչութեան կողքին կը գործէ նաեւ Շրջանային սկսողական Խորհուրդը որուն մաս կը կազմեն Լեւոն Գայեան, Պողոս Գալֆայեան, Սմբատ ժամկոչեան եւ Գրիգոր Գիզիրեան: 1983ի Ապրիլին Շրջանային վարչութիւնը կը հիւրընկալէ Հ.Մ.Ը.Մ.ի Գ. Պատգամաւորական ընդհանուր ժողովը:

20 Նոյեմբեր 1983ին, Շրջանային վարչութիւնը կը նշէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 65ամեակը «Էսթիա» սրահին մէջ: Օրուայ բանախօսներն են կեդրոնական վարչութեան փոխ ատենապետ՝ Տոքթ. Յարութիւն Գազանճ-

եան եւ Թեսաղոնիկէի մասնաճիւղէն Յակոբ Գասապեան:

3 Յունիս 1984ին տեղի կ'ունենայ Շրջանի 47րդ ներկայացուցչական ժողովը Աթէնքի, Գոքինիոյ եւ Թեսաղոնիկէի ներկայացուցիչներու մասնակցութեամբ: Ժողովի վերջին օրակարգով կ'ընտրուի Շրջանային վարչութիւն որուն անդամներն են՝

- Ատենապետ՝ Կարօ Յովակիմեան
- Ատենադպիր՝ Կարպիս Գուլոմճեան
- Գանձապահ՝ Սերգօ Աղապատեան

Խորհրդականներ՝ Պօղոս Պօղոսեան, Թագլոր Մոմճեան, Սերգօ Իսկահասեան եւ Գալուստ Գոհարունի:

Շրջանային վարչութիւնը իր կարգին կը նշանակէ Շրջանային սկստական խորհուրդ որուն անդամներն են Պօղոս Գալֆայեան, Լեւոն Գայեան, Գրիգոր Գիզիրեան եւ Սմբատ Ժամկոչեան: Շրջանային սկստական պետն է Պերճ Գրիգորեան:

Այս ժամանակաշրջանի կարեւորագոյն իրականացումը կ'ըլլայ Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի Ֆութպոլի եւ պասքէթպոլի խումբերու մասնակցութիւնը համագաղութային Բ. խաղերուն Լոս Անճելըսի մէջ: Նշելի է որ Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի խումբերու 33 տարիներ առաջ Սուրիա եւ Լիբանան այցելութենէն ետք այս առաջին ճամբորդութիւնը պիտի ըլլար դէպի արտասահման:

8 Յունիս 1986ին տեղի ունեցաւ Յունաստանի 46րդ Շրջանային ներկայացուցչական ժողովը նախագահութեամբ՝ Պերճ Գիզիրեանի եւ քարտուղարութեամբ՝ Քերովբէ Էքիզեանի: Շրջանային վարչութեան 1984-85 երկամեայ գործունէութիւն եւ մասնաճիւղերու գործունէութեանց տեղեկագրերու ընթերցումէն ետք տեղի կ'ունենայ նոր շրջանային վարչութեան ընտրութիւնը:

1986-88 տարեշրջաններու համար Շրջանային վարչութեան անդամներ կ'ընտրուին Կարօ Յովակիմեան, Պաղտիկ Սըլտրեան, Մինաս

Աղամեան, Զատիկ Ճանիկեան, Սերգօ Իսկահասեան, Թագլոր Մոմճեան եւ Կարպիս Գուլոմճեան:

Շրջանային վարչութիւնը, 28 Մայիս 1986ին, կը կազմակերպէ Հայաստանի անկախութեան 68ամեակի հանդիսութիւն, միջ-մասնաճիւղային մրցաշարքեր եւ ընդհանուր տողանցք:

1987ին 17էն 20 Ապրիլ Աթէնքի «Թիթանիա» պանդոկին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Դ. ընդհանուր ժողովը, որուն կազմակերպական աշխատանքները իրականացան Յունաստանի Շրջանային վարչութեան ճիգերով:

Փարիզի մէջ 1էն 3 Մայիս 1987ին, Հ.Մ.Ը.Մ. Ֆրանսի հիմնադրութեան 10ամեակին նուիրուած միջ-շրջանային մրցաշարքերուն մասնակցելով Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցչական խումբը կը տիրանայ պասքէթպոլի մրցաշարքի ախոյեանութեան:

Յունաստանի 49րդ Շրջանային ներկայացուցչական ժողովը տեղի կ'ունենայ 13 Մարտի 1988ին: Նախորդող երկամեակին նիւթաբարոյական գործունէութեան տեղեկագրի քննութենէն ետք, Շրջանային վարչութեան նոր անդամներ կ'ընտրուին՝ Վարագ Քհնյ. Յովսէփեան, Օննիկ Հարոնեան, Կարօ Աւագեան, Սերոբ Սերոբեան, Յակոբ Եթիմեան, Դանիէլ Դանիէլեան եւ Թագլոր Մոմճեան: 1988-87 երկամեակին Շրջանային վարչութեան կողքին կը գործէ Շրջանային Սկստական խորհուրդը որուն անդամներն են.

- Ատենապետ՝ Վարանդ Քհնյ. Ամիրալեան
- Քարտուղար Գրիգոր Գիզիրեան
- Գանձապահ՝ Սահակ Սահակեան
- Շրջանային ընդհանուր պետ՝ Պօղոս Զոլաքեան

Շրջանային խմբապետ՝ Ազարիկ Եորդանեան

Շրջանային խմբապետուհի՝ Գոհար Ալեանաքեան:

1988ի 8 Յուլիսէն — 6 Օգոստոսի միջեւ Յունաստանի Շրջանային սկստական խոր-

հոլրդը կը կազմակերպէ միջ-մասնաճիւղային ընդհանուր բանակում 88 մասնակիցներով:

Յէն 8 Մայիս 1989ին Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի կազմակերպած միջ-շրջանային «Սուրէն Մուրատեան» պասքեթպոլի մրցաշարքին Յունաստանի խումբը կը մասնակցի Աթէնքի եւ Թեսաղոնիկէի մարզիկներէն բաղկացած 10 հոգինոց պատուիրակութեամբ արժանանալով մրցաշարքի Fair-play բաժակին:

Նոյնպէս Հայաստանի անկախութեան 71րդ տարեդարձը կը սօնուի միջ-մասնաճիւղային անկախական ֆութպոլի մրցաշարքով եւ սողանցքով առաջնորդութեամբ սկաուսական նուագախումբին:

Իր կարգին Շրջանային սկաուսական խորհուրդը 1989ի եղանակին կը կազմակերպէ

սկաուսական խումբերու միջ-մասնաճիւղային պասքեթպոլի մրցաշարք, դպրոց բանակում եւ 29 Յունիսին եղանակի վիակման արշաւ եւ խարուկահանդէս:

22 Ապրիլ 1990ին Շրջանային վարչութեան կազմակերպութեամբ տեղի կ'ունենայ յուշավազք հովանաւորութեամբ Նէա Զմիռնիի քաղաքապետութեան, Հ.Յ.Դ. Հայ Դատի յանձնախումբի եղեռնի 75ամեակին նուիրուած ելոյթներու ծիրէն ներս:

Ֆրանսայի Վալանս քաղաքին մէջ, 13էն 17 Ապրիլ 1990ին Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի պասքեթպոլի սղոց եւ աղջկանց կազմերը կը մասնակցին համա-Հ.Մ.Ը.Մ.ական Գ. խաղերու մրցաշարքերուն:

Յունաստանի Շրջանի 50րդ ներկայացուց-



Ապրիլեան Յուշավազքի ընդհանուր տեսարան

չական ժողովը սեղի կ'ունենայ 3 Յունիս 1990ին: Կազմակերպչական, մարզական, սկաուտական ու յարաբերական բաժիններով քննարկուած երկամեայ սեղեկագրէն ետք, ժողովը կ'ընտրէ նոր Շրջանային վարչական կազմ որուն անդամներն են՝ Կարօ Յովակիմեան, Մինաս Աղամեան, Օննիկ Հարոնեան, Զատիկ Ծանիկեան, Վարուժան Նշանեան, Կարպիս Գոլյումճեան եւ Պաղտիկ Սըլտրեան:

Այս կազմի կարեւորագոյն աշխատանքը պիտի ըլլար Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ, 4րդ ընդհանուր բանակումի իրականացումը 21էն 31 Յունիս 1990ին, Աթէնքի մօտակայ Այ Անտրէաս բանակավայրին մէջ:



Աստիճանի տուչութիւն ձեռամբ Շրջանային Վարչութեան ատենապետ՝ Կարօ Յովակիմեանի

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԼԻՐԱՆԱՆ

- ՊԵՅՐՈՒԹ
- ԶԱՀԼԷ
- ԹՐԻՓՈԼԻ
- ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ
- ԱՅՆՃԱՐ
- ՃԻԻՆԻ
- ԱՆԹԻԼԻԱՍ
- ՃՏԷՅՏԷ
- ՊԱԹՐՈՒՆ
- ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ



Ներածական

1975ի Ապրիլ 14ին պայթեցան Լիբանանի քաղաքացիական կռիւները որոնք պիտի տեւէին աւելի քան 16 երկար տարիներ եւ պիտի հանգէին Սէուսական Արաբիոյ Թաէֆ քաղաքին մէջ կայացած լիբանանեան խորհրդարանի անդամներուն կողմէ որդեգրուած՝ ընդհանուր, հաշտարար եւ նոր սահմանադրութեան մը որդեգրումին:

Այս ժամանակաշրջանը կը համապատասխանէ Հ.Մ.Ը.Մ.ի Պատմութեան ներկայ Գ. հատորի ընդգրկած ժամանակաշրջանին: Այս ժամանակամիջոցին Լիբանանի տարածքին գործող Հ.Մ.Ը.Մ.ի ութը մասնաճիւղերու գործունէութիւնները ենթակայ մնացին բազմաթիւ վերիվայրումներու, դադարներու եւ վերսկսման անվերջանալի հանգրուաններով:

Այդ պատճառով, Լիբանանի գլուխին տակ մեր արձանագրութիւնները զգալի բացեր կը սլարունակեն, երբեմն գործունէութեանց դադրումներուն եւ երբեմն արխիւներու մէջ արձանագրութեանց բացակայութեան պատճառներով:

Այսուհանդերձ, Հ.Մ.Ը.Մ.ի լիբանանեան ընտանիքի բոլոր մասնաճիւղերու ղեկավարութիւններն ու վարչական կազմերը արտակարգ ճիգերով ջանացին գործօն պահել գործունէութեան այս կամ այն բաժինները, ի հարկին զանոնք տեղափոխելով իրենց սովորական վայրերէն դեպի աւելի ապահով վայրեր:

Շատ յաճախ մասնաճիւղերու պատանի եւ երիտասարդ մարզիկները կամաւոր կերպով թողուցին դաշտ ու գնդակ, ձեռք առնելու համար ինքնքրպաշտպանութեան գնդացիքը, դիմագրաւելու համար Հայ բնակչութեան սպառնացող կենաց կամ մահու սպառնալիքը:

Ընթերցողը վերոյիշեալ դժուարին պարագաներու հասկացողութեամբ պիտի դարձնէ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի մասնաճիւղերու պատմութեան յաջորդող էջերը:

ՊԵՅՐՈՒԹ

Կազմակերպչական

Պէյրութի մասնաճիւղի 1975 տարուայ վարչական կազմին կ'անդամակցին՝

Ատենապետ՝ Վարդգէս Հայրապետեան

Փոխ ատենապետ՝ Օննիկ Պարսամեան

Ատենադպիր՝ Սաբօ Կէօյպաշեան

Արաբերէնի քարտուղար՝ Հրաչ Եղիայեան

Գանձապահ՝ Ղազարոս Պալեան

Հաշուապահ՝ Մանաս Գէորգեան

Յանձնախումբերու ներկայացուցիչներ՝ Փինկփոնկ՝ Սերժ Գատեան, Ընկերային՝ Միշէլ Խորոզեան, Աթլետիզմ՝ Տոքթ. Չաւէն Ծուհուրեան, Պասքետպոլ՝ Ժիրայր Պէզճեան, Սկաուտ խորհուրդ՝ Արաքս Շիմշիրեան:

Այս կազմի գործունէութեան ժամանակաշրջանը պիտի երկարէր մինչեւ 1977ի Փետրուար ամիսը:

Մինչեւ 1975ի ամառնային եղանակի սկիզբը մասնաճիւղի քաղաքամէջի բաժինը գրեթէ դադրած է գործելէ: Ակումբի շէնքի ապակիները փշրուած են: Սկաուտները իրենց շրջաններու ակումբներուն մէջ մատակարարման գործով կը զբաղին: Այս տարեշրջանին Լ.Օ.Խ.ի արժուիկները կը փոխանցուին Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական շարքերուն:

Այսուհանդերձ զինադադարի ընձեռած դիւրութիւններէն օգտուելով կարգ մը յանձնախումբեր կը յաջողցնեն ընկերային հաւաքոյթներ:

1976ին կարելի կը դառնայ նաեւ մարզական ճիւղերու գործունէութիւնը:

20 Փետրուար 1977ին մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովէն ընտրեալ եօթը անդամներէ բաղկացող վարչութեան դիւանը կը մնայ նոյնը բացի ատենադպիրէն որուն աշխատանքը կը վստահուի Մանաս Գէորգեանին: Վարչութեան մնացեալ անդամներն են՝ Հրաչ Եղիայեան, Յովհաննէս Ծատուրեան եւ Սերժ Գատեան:

Այս տարեշրջանին անդամական ցանկերու ստուգումն ի յայտ կու գայ որ բազմաթիւ անդամներ մեկնած են երկրէն: Անդամներու ընդհանուր թիւն է 844 հետեւեալ ենթաբաժանումով մարզիկ՝ 93, սկաուտ՝ 375, օժանդակ՝ 380:

Վարչութեան աշխատանքներուն կ'օժանդակեն վեց յանձնախումբեր՝ պասքեթպոլի, ֆութպոլի, հեծելարշաւի, փինկփոնկի, ընկերային, պրիճի եւ սկաուտական խորհուրդը:

22 Յունուար 1978ին մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչութիւնը անգործնական նկատուելով, Շրջանային վարչութիւնը կը նշանակէ նոր վարչական կազմ՝

- Ատենապետ՝ Վարդգէս Հայրապետեան
- Փոխ ատենապետ՝ Ճոնի Արեւեան
- Ատենադպիրուհի՝ Անի Ազկիւլեան
- Ատենադպիր՝ Նորայր Նաճարեան
- Գանձապահ՝ Հրաչ Եղիայեան

Յանձնախումբերու ներկայացուցիչներ՝ Սօսի Մավիսաքալեան՝ ընկերային, Ստեփան-Րաֆֆի Վարժապետեան՝ փինկփոնկ, Յարութիւն Տէր Պետրոսեան՝ պասքեթպոլ, Յովհաննէս Ծատուրեան՝ հեծելարշաւ: 24 Մարտ 1979ին մասնաճիւղի 79րդ անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչական կազմը կը ներկայանայ հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Ճոնի Արեւեան
- Փոխ ատենապետ՝ Արա Մատենլեան
- Ատենադպիր՝ Նորայր Նաճարեան
- Գանձապահ՝ Սարգիս Ճոզիկեան
- Հաշուապահ՝ Շանթ Ալեքսանտրեան

Մարզականի պատասխանատուներ՝ Յակոբ Խաչերեան՝ պասքեթպոլ, Ներսէս Հատիտեան՝ ֆութպոլ եւ հեծելարշաւ:

Ընկերայինի պատասխանատուներ՝ Վահէ Չօփիճեան եւ Սօսի Մավիսաքալեան, մարզական, սկաուտական եւ ընկերային բաժիններու բնականոն գործունէութեանց տարեշրջան մը

ուր սակայն նիւթական դժուարութիւնները յաղթահարելը վարչութեան գլխաւոր մտահոգութիւնը պիտի հանդիսանար:

1980 տարուայ մասնաճիւղի վարչական կազմին կ'անդամակցին՝

- Ատենապետ՝ Ճոնի Արեւեան
- Փոխ-ատենապետ՝ Արա Մատենլեան
- Ատենադպիր՝ Յարութիւն Ֆրունճեան
- Գանձապահ՝ Սարգիս Ճոզիկեան
- Հաշուապահ՝ Լեւոն Խաչենցեան

Խորհրդականներ՝ Նորայր Նաճարեան, Ներսէս Հատիտեան, Սօսի Մավիսաքալեան եւ Տոքթ. Վահէ Չօփիճեան:

Այս տարեշրջանին անդամներու ընդհանուր թիւը կը մնայ անփոփոխ՝ 654 անդամներ: Մարզական եւ սկաուտական ճիւղերը կը գործեն գոհացուցիչ արդիւնքներով: Տարուայ նիւթական ելեւմուտքի ընդհանուր գումարն է 148.000 լիբանանեան թղթոսկի:

1981 տարուայ մասնաճիւղի վարչութեան կ'անդամակցին՝

- Ատենապետ՝ Ժագ Պոյաճեան
- Փոխ ատենապետ՝ Ճոնի Արեւեան
- Ատենադպիր՝ Արսէն Մարկոսեան
- Գանձապահ՝ Յակոբ Խաչերեան
- Հաշուապահ՝ Լեւոն Խաչենցեան

Խորհրդականներ՝ Յովհաննէս Ծատուրեան, Յարութիւն Ֆրունճեան, Նորայր Պերպերեան, Մուրատ Արսլանեան, Գառնիկ Նազարէթեան եւ Ղազարոս Պալեան:

Ապրիլին նկատի ունենալով որ հակառակ Շրջանային վարչութեան թելադրանքներուն, մասնաճիւղի պասքեթպոլի խումբերը մասնակցեցան Հ.Մ.Ը.Մ-ի համագաղութային առաջին խաղերուն (պասքեթպոլի մրցաշարքեր, Գանատայի մէջ) Շրջանային վարչութիւնը լուծեց վերոյիշեալ կազմը եւ նշանակեց նոր վարչութիւն մասնակցութեամբ՝ Ասատուր Սրապեանի, Հրայր Թապաքեանի, Րաֆֆի Գաբրիէլեանի, Անդիկ Մավիսաքալեանի եւ Սօսի Մավի-

սաքալեանի: Վարչական գոյգ կազմերու միջև փոխանցման զգալի ուղղացումով մասնաճիւղի գործունէութիւնը ամլացաւ:

24 Յունուար 1982ի անդամական ընդհանուր ժողովէն ընտրեալ վարչական կազմի ատենապետութիւնը կը վարէ ժազ Պոյաճեան: Վարչութեան մնացեալ անդամներն են՝ Յովհաննէս Ծատուրեան, Արսէն Մարկոսեան փոխարինուած Շաքէ Սինանեանով, Լեւոն Խաչենցեան, Նորայր Պերպերեան, Յարութիւն Չէքիճեան եւ Մուրատ Արսլանեան:

8 Մայիս 1988ին մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչական կազմը 26 Մայիսի իր անդրանիկ նիստի աշխատանքներու բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Վահէ Չամիչեան հեծիկի ներկայացուցիչ

Փոխ ատենապետ՝ Պետրոս Լօճիկեան

Ատենադպրուհի՝ Չարմիկ Արզումանեան փոխարինուած՝ Մակի Խաչերեանով

Գանձապահ՝ Նազարէթ Հապիպեան՝ փինկփոնկ

Հաշուապահ՝ Վիգէն Սարգիսեան փոխարինուած՝ Կապի Արզումանեանով — ընկերային յանձնախումբ

Յանձնախումբերու մօտ ներկայացուցիչներ՝ Նորայր Պերպերեան՝ պասքեթպոլ, Կարպիս Պալեան՝ Ֆուտպոլ, Գէորգ Այանեան՝ սկաուտական խորհուրդ:

Տասը ամիսներու վրայ երկարող իր գործունէութեան ընթացքին, վարչութեան գլխաւոր իրականացումը պիտի ըլլար սկաուտական բաժնի վերակազմակերպումը: Քաղաքի կեդրոնական ազգային վերաշխուժացումը եւ տարեկան քերմեսը որ տեղի կ'ունենայ Նշան Փալանճեան ճեմարանի շրջափակին մէջ:

5 Մարտ 1989ին կ'ընտրուի նոր վարչական կազմ՝

Ատենապետ՝ Վարուժան Պեքերեճեան

Փոխ ատենապետ՝ Պետրոս Լօճիկեան

Ատենադպրուհի՝ Մակի Խաչերեան
Գանձապահ՝ Նազարէթ Հապիպեան
Հաշուապահ՝ Նորայր Պերպերեան

Յանձնախումբերու մօտ ներկայացուցիչներն են, Ֆուտպոլ՝ Կարպիս Պալեան, պասքեթպոլ՝ Նորայր Պերպերեան, հեծելարշաւ՝ Վարդգէս Ծատուրեան, փինկփոնկ՝ Րաֆֆի Մունջողլեան:

Ֆուտպոլ

Լիբանանի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերուն միջև գոյացած համաձայնութեամբ, Պէյրութի մասնաճիւղի անունով գործող ֆուտպոլի ներկայացուցչական խումբը կը ներքին յատուկ կանոնադրութեամբ եւ Շրջանային յանձնախումբի մը հսկողութեամբ կը գործէ: Ներկայացուցչական կազմի գործունէութիւնը պիտի ներկայացնենք առանձին բաժինով: Պէյրութի վարչութեան ուղղակի հսկողութեան ենթակայ կը գործեն ֆուտպոլի երկրորդական գոյգ խումբեր Մուրատ եւ Դանիէլ Վարուժան: Այս խումբերը կը մասնակցին Շրջանային յանձնախումբի կողմէ կազմակերպուած միջ-մասնաճիւղային մրցաշարքերուն:

1977-78 տարեշրջանին Մուրատի գործունէութեան վարիչն է Վահէ Չամիչեան, իսկ Դանիէլ Վարուժանին՝ Սահակ Գաբրիէլեան: Զոյգ խումբերու հաւաքականը 1977ին կը շահի միջ-մասնաճիւղային մրցաշարքի ախոյեանութիւնը:

1980ին խումբերը միասնաբար կ'ունենան 40 մրցումներ որոնցմէ միայն երեքը կ'աւարտին պարտութեամբ:

1982ին երկրորդական խումբերու ցանկին վրայ կ'աւելնայ «Ազատամարտ» խումբը, մարզիչ՝ Յակոբ Գալֆայեան:

1988ին մասնաճիւղի ֆուտպոլի գոյգ խումբերու գործունէութիւնը համեստ պիտի ըլլար մարզիչի մը չգտնուելուն պատճառով: Մասնաճիւղի լաւագոյն խաղացողները մաս կը կազմեն Լիբանանի Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցչա-



Պէյրուքի մասնաճիւղի Բ. դասի Դանիէլ Վարուժան ֆուտպոլի խումբը
Մարտիչ՝ Սահակ Գաբրիէլեան - 1986

կան խումբին: Փոքր սղոց խումբը կը մարզուի Ազգային Գէորգ Չաթալպաշեան վարժարանի դաշտին վրայ: Զոյգ խումբերը մասնակցած են Շրջանային վարչութեան կազմակերպած մրցաշարքերուն մասնաճիւղի ֆուտպոլի ճիւղի գործունէութիւնը նոյն ձեւով կը շարունակուի մինչեւ 1990ի եղանակը:

Աթլետիզմ

Մարզական այս ճիւղը մասնաճիւղի մարզիկները կիրարկած են Պոլրճ Համուտի եւ Ճիւնիի մասնաճիւղերու մարզիկներուն հետ միասնաբար: Անոնք մարզուած են միասնաբար կիրակի օրերը Պոլրճ Համուտի քաղաքացետարանի դաշտին վրայ եւ յաջորդաբար սղոց լաւագոյն աթլետներու, աղջկանց լաւա-

գոյն աթլետներու եւ մնացեալ մարզիկներու մասնակցութեամբ կազմած են փոխն ի փոխերեք մասնաճիւղերը ներկայացնող հաւաքականները՝ մասնակցելու համար լիբանանեան պատկան դաշնակցութեան ախոյեանական մրցումներուն:

1975-1990 ժամանակաշրջանին հետեւեալ աթլետները արձանագրելի արդիւնքներու արժանացած են Պէյրուքի մասնաճիւղի անունով, մարզաճիւղի զանազան դասակարգերուն մէջ:

Արսա Գալբաքեան, Անահիտ Սաաթճեան, Եսթեր Մեծմօրուքեան, Վարդուկ Մարգարեան, Ազնիւ Հարմանտայեան, Մակի Պարիկեան, Սիլվա Զէյնաթեան, Անի Մոմճեան, Սիլվա Թապաքեան, Մարկարիթ Քահքէճեան, Սալբի Առաքելեան, Թանիա Աւագեան, Թագուհի Ճատրեան, Ալին Աբրիլեան, Սիւզի Ճատր-

եան եւ Անի Պաքալեան: Անդրանիկ Աղազար, Ճորճ Աբելեան, Բենիամին Չատիկեան, Պողոս Մանուկեան, Յակոբ Գապաքեան, Գօգօ Գասապեան, Կարօ Աբրահամեան եւ Սեւակ Աբրահամեան:

Պասքեթպոլ

1975 տարեշրջանին Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրուժի մասնաճիւղի սղոց կազմը կը մասնակցի երեք մրցաշարքերու, կազմակերպուած Այն Սաասէ, Հ.Ե.Ը. եւ E.N.B. ակումբներու կողմէ ապահովելով ախոյեանութեան տիտղոսներ:

1980ին պասքեթպոլի սղոց եւ աղջկանց կազմերը կը վերաշխուժանան շնորհիւ ժազ Պոյաճեանի ճիգերուն: Զոյգ խումբերը կը մեկնին Ամման ուր 8 մրցումներ կ'ունենան տեղւոյն խումբերուն դէմ ապահովելով 6 յաղթանակ:

1988ին պասքեթպոլի ճիւղը կը գործէ աղջկանց եւ փոքր սղոց խումբերով: Աղջկանց խումբը կը պահէ Լիբանանի ախոյեանութեան տիտղոսը: Փոքր սղոց խումբը կը բաղկանայ խոստմնալից տարրերէ:

Պէյրուժի մասնաճիւղի պասքեթպոլի ճիւղի Բ. դասի խումբերէն ամենէն կենսունակները եղան «Շանթ»ի խումբերը սղոց եւ աղջկանց բաժիններով: 1960էն ի վեր գործող այս խումբերը 1975էն 1990 տարեշրջաններուն ունեցան բեղուն գործունէութիւն ղեկավարութեամբ Մուշեղ Սնարեանի: «Շանթ»ի խումբերը գործած են գլխաւորաբար Պէյրուժի Մար Մխայէլ թաղամասին մէջ: «Շանթ»ի լաւագոյն խաղացողներէն ոմանք փոխանցուած են Պէյրուժի մասնաճիւղի Ա. դասի խումբերուն:

Մասնաճիւղի Բ. դասի խումբերէն են նաեւ «Կամք»ի կազմերը որոնք գործած են Պէյրուժ քաղաքի ակումբի դաշտին վրայ Ա. դասի խումբերուն պատրաստելով լաւագոյն մարզիկներ:

Պէյրուժի մասնաճիւղի պասքեթպոլի Բ. դասի խումբերէն են նաեւ «Ազատամարտ»,

«Դանիէլ Վարուժան» եւ «Ապագայ» խումբերը սղոց եւ աղջկանց բաժիններով: Երկրորդական այս խումբերուն մարզիչի պաշտօնը վարած է Յակոբ Խաչերեան:

Մասնաճիւղի պասքեթպոլի զանազան տարիներու յանձնախումբերուն անդամակցած են՝ ժազ Պոյաճեան, Վիգէն Աբելեան, Յարուժ Մասենլեան, Յարուժ Ֆրունճեան, Վահէ Զէօփճեան, Ներսէս Խուսապերտեան, Գրիգոր Դերձակեան եւ Օննիկ Պերպերեան:

Փիճկփոճկ

Պէյրուժի մասնաճիւղի փիճկփոճկի խումբերը միշտ գտնուած են լիբանանեան մարզական բեմի առաջնակարգ դիրքերուն վրայ: Անոնք մասնակցած են Ֆետերասիոնի կազմակերպած ախոյեանութեանց մրցաշարքերուն ինչպէս նաեւ միջազգային մրցաշարքերու ներկայացնելով Լիբանանը:

1975-1990 տարեշրջանի փիճկփոճկի ճիւղի լաւագոյն մարզիկներէն են եղած՝ Շահէ Թիւթիւնճեան, Րաֆֆի Մուշեղլեան, Նազիկ Յովհաննէսեան, Ալեքս Աճեմեան, Կրէյս Սարգիսեան, Արա Հարմանտայեան, Նշան Մուշեղլեան, Սերգօ Յովհաննէսեան, Շարպիլ Իտ, Համօ Դաւիթեան, Գլօտ Շիխանի Արա Մարլեան եւ Արմէն Գալուստեան:

1975-էն 1990 Փիճկփոճկի մարզիկները պահած են Լիբանանի խմբային եւ անհատական ախոյեանութեանց տիտղոսները:

Խումբերու մարզիչի պաշտօնը վարած են Պողոս Յովհաննէսեան եւ Րաֆֆի Մուշեղլեան:

Հ.Մ.Ը.Մ. փիճկ փոճկիստները յաճախ ներկայացուցած են Լիբանանը՝ միջազգային մրցաշարքերու մասնակցութեամբ: Արձանագրութեան արժանի են Րաֆֆի Մուշեղլեանի մասնակցութիւնները 1973ին Յունաստանի, 1974ին Ճաբոնի, 1975ին Թայլանտի, Նեփալի, Քինիայի, Սրիլանքայի եւ Հոնկ Գոնկի, 1977ին Անգլիոյ, 1978ին Լիոնի, 1980ին Իրլանտայի,



Պէյրուսի Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի ախոյեան խումբը՝ 1983 - Հասո Դաւիթեան, Սերգօ Յովհաննէսեան, Րաֆֆի Մունջողլեան, Կրէյս Սարգիսեան, Շարպէլ Իյտ, Գլօտ Շիխանի եւ Արա Հարմանտայեան:

Սինկափուրի, Քորէայի եւ Զուիցերիոյ, 1983ին Ճաբոնի, 1985ին Շուէտի (աշխարհի ախոյեանութիւն) եւ 1989ին Գերմանիոյ մէջ միջազգային ներկայացուցիչներուն դէմ:

8 եւ 9 Մարտ 1975ին Մասնաճիւղը կը կազմակերպէ միջ-ակմբային մրցաշարք որուն կը մասնակցին 65 մարզիկներ:


Յաջորդող սարիներուն Պէյրուսի մասնաճիւղի փինկփոնկի բաժինը կը շարունակէ գործել երկսեռ բաժիններով եւ ապահովելով անհատական եւ խմբական մրցումներու սիտուդոսներու առիւծի բաժինը: Անհատական բաժնի երկար սարիներու Լիբանանի ախոյեաններ կը մնան Նազիկ Յովհաննէսեան եւ Րաֆֆի Մունջողլեան:

Հեծելարշաւ

Պէյրուսի Հ.Մ.Ը.Մ.ի հեծելարշաւի ճիւղը կը մնայ առաջնակարգ դիրքերու վրայ: 1975-90 սարեշրջաններու ընթացքին, մասնաճիւղի հեծելանաւորները յաճախ կը գրաւեն անհատական եւ խմբական ախոյեանութիւններ ֆետերասիոնի կազմակերպած մրցաշարքերու աւարտին:

Ճիւղը ունի զոյգ դասակարգի հեծելանաւորներ որոնց պատասխանատուութիւնը ստանցնած են Յովհաննէս եւ Վարդգէս Ծատուրեանները:

Խումբերու աստղերէն են՝ Հրաչ Ծատուրեան, Ասպետ Յովսէփեան, Պերճ Գալայճեան ինչպէս նաեւ Վիգէն Զաքարեան: Վերջինս իր



Պէյրուսի Հ.Մ.Ը.Մ.ի հեծելանորդ, Լիբանանի հեծելարշաւի 1988ի ախոյեան՝ Հրաչ Ծատուրեան իր աջին վերերան հեծելանորդ Օննիկ Պալըքատեան ձախին՝ ֆետերասիոնի նախագահ Թանիոս էլ Միր

արեան մկրտութեամբ նահատակուեցաւ Ղարաբաղեան պայքարի օրերուն թշնամի դիրքերուն վրայ կազմակերպուած գրոհներու ընթացքին:

1975ին հեծելարշաւի տղոց եւ աղջկանց խումբերը կը տիրանան Պէյրուսի եւ Լեռնալիբանանի ախոյեանութեանց տիտղոսներուն: Անհատական ախոյեաններ կը հանդիսանան Նիքոլ Փանոսեան եւ Անիթա Տեմիրճեան:

1977-78 եղանակին մասնաճիւղի կրտսերներու խումբը կը շահի Լիբանանի Բ. դասի ախոյեանութեան տիտղոսները: 1978ին Յակոբ Աճեմեան եւ Խաչիկ Տեմիրճեան մաս կը կազմեն Մարտի համարաբական խաղերուն մասնակից Լիբանանի հեծելարշաւի պատուիրակութեան: Յակոբ Աճեմեան 1979ին կը մասնակցի

աշխարհի ախոյեանութեան մրցումներուն իսկ Անդրանիկ Գազէզեան Իրաքի միջազգային մրցումներուն:

Ընկերային եւ Դաստիարակչական

Պէյրուսի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի վարչութեան կողմէ նշանակուած ընկերային յանձնախումբը կը կազմակերպէ միջ-անդամական երեկոյթներ, խրախճանքներ եւ դասախօսական շարքեր: 1977 տարեշրջանը այս մարզին մէջ ունեցած է բեղուն գործունէութիւն քաղաքի եւ էշրէֆիէի Ազատամարտ ակումբներուն մէջ ուր 28 Մայիս 1977ին կը կազմակերպուի պարահանդէս հովանաւորութեամբ Տէր եւ Տիկին Թերճանեանի: 14 Յունուար

1978ին վիճակահանութիւն քաղաքի ակումբին մէջ: Այս ձեռնարկները մասնաճիւղի գանձին կը նպաստեն կարեւոր մոտաքերով:

1975-1990 տարեշրջաններուն ընկերային յանձնախումբերուն մէջ գործած են ի միջի ալլոց, Շանթ Ֆարրա, Ալիս Թիւթեւեան, Յարութ Պաքալեան, Նուարդ Էթիէմեզեան, Ալին Պզտիկեան, Արտա Գրոշեան, Արամ Պոսնոյեան, Սօսի Մավիսաքալեան, Արտա Լուռեան, Բաֆֆի Գարագաշեան, Ապրօ Գարաօղլանեան, Հրաչ Բրուտեան եւ Օննիկ Պէրպէրեան:

Սկառուտակաճ

1975-1990 ժամանակաշրջանին Պէյրութի մասնաճիւղի սկառուտական յաջորդական խորհուրդներուն մաս կազմած են՝ Տոքթ. Հրանդ Գալուստեան, Շաքէ Բարոյեան, Հրաչ Թոքաթլեան, Շաքէ Թովալեան, Օննիկ Իբրանոսեան, Արաքս Շիմշիրեան, Նորա Վարդիվառեան, Շահէ Ենիքոմշեան, Ներսէս Տօնիկեան, Պարոյր Գազանձեան, Վահան Պզտիկեան, Պետրոս Փելթեկեան, Նորայր Նաճառեան, Պետիկ Լօճիկեան, Գառնիկ Նազարեթեան, Կարպիս Գապասագալեան, Աւետիս Գունտաքճեան եւ Վերգին Փեշտիմալեան:

Մասնաճիւղի սկառուտական վեց միաւորները գործած են քաղաքի, էշրէֆիէի եւ Հայաշէնի ակումբներէն ներս: 1978ին Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 60ամեակի սօնակաստարութեանց եւ սողանցքներուն մասնաճիւղի սկառուտական կազմերը մասնակցած են մեծագոյն թիւի ներկայացուցիչներով: Մասնաճիւղը ունի աստիճանաւորական որակաւոր կազմ:

Պէյրութի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը միշտ ունեցած է հրապարակային ելոյթներ իր շուրջ հաւաքելով համակիրներու եւ անդամներու մեծաթիւ բազմութիւններ: 1975-90 տարեշրջանին յասուկ հանդիսութիւնով նշած են ամեակներ, "Սկառուտի Օր" ուայ, ազգային եւ միութեանական յիշատակի հանդիսութիւններ:

1984ին մասնաճիւղի հիմնադրութեան հան-

դիսութիւն, մասնաճիւղի Սկ. խորհուրդի կազմակերպութեամբ: Այս առթիւ խօսք առաւ Կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետ Տոքթ. Յարութիւն Գազանձեան:

ԶԱՀԼԷ

Հիմնադրութեան ժամանակագրական շարքով Լիբանանի երկրորդ մասնաճիւղն է Զահլէի մասնաճիւղը: 1975ի Յունուարին, Զահլէի մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչութիւնը իր դիւանը կը կազմէ հետեւեալ ձեւով:-

Ատենապետ՝ Վազգէն Թապաքեան

Ատենադպիր՝ եւ փոխ-ատենապետ՝ Ժողէֆ Գասարճեան

Գանձապահ՝ Յակոբ Էքմէքճեան

Ֆուլթպոլի պատասխանատու՝ Յակոբ Քէշիշեան

Սկառուտական պատասխանատու՝ Ժան Պըշարա

Խորհրդականներ՝ Կարօ Գիզիրեան եւ Յարութիւն Քիւրիւմլեան:

1977-78 տարեշրջանի վարչութեան մաս կը կազմեն՝

Ատենապետ՝ Վազգէն Թապաքեան

Ատենադպիր՝ Մանուկ Կէօքճեան

Գանձապահ՝ Յակոբ Սմբատեան

Մարզական պատասխանատու՝ Ժան Պըշարա

Սկառուտական պատասխանատու՝ Հանրի Խըլաքեան:

Մասնաճիւղի մարզական գործունէութիւնը թերի է սեփական դաշտի մը չգոյութեան պատճառով: Ֆուլթպոլի եւ պասքեթպոլի խումբերը կը մարզուին Այնճարի մասնաճիւղի դաշտերուն վրայ: Ակումբին մէջ կարգ մը մարզիկներ իրենց փինկփոնկի փորձերը կը կատարեն:

Սկառուտական շարժումը գրեթէ դադրած է:

Մասնաճիւղի հիմնադրութեան յիսնամեա-

կին նուիրուած ճաշկերոյթ պարահանդէսին առիթով կարգ մը վեթերան անդամներ կը պարգեւատրուին յիշատակի ոսկէ մետալներով:

1978ի երկրորդ կէսէն սկսեալ մասնաճիւղը կը ստիպուի դիմել զգուշաւոր եւ սահմանափակ գործունէութեան, դիմագրաւելու համար դժուարին պայմանները եւ տեղացիներու ժխտական դիրքորոշումները:

1979 տարուայ վարչութեան ատենապետի պաշտօնը կը վարէ իսմոն Գասարճեան գործակցութեամբ՝ Մուրատ Քէշիշեանի՝ փոխ-

ատենապետ, Իւղաբեր Հայրապետեանի՝ ատենադպրուհի, Յարութիւն Քիւրիւմլեանի՝ գանձապահ եւ խորհրդականներ՝ Ժան Պըշարա, Կարօ Քիւրքճեան եւ Ժան Պըշաքճեան:

Ֆութպոլի եւ պասքեթպոլի խումբերը վերակազմութեան փուլի մէջ են: Սկսուած վերակազմուած շարքերը կը բաղկանան 70 անդամներէ, որոնցմէ 10ը կը մասնակցին Լիբանանի մասնաճիւղերու բանակումին՝ Կիպրոս: Վարչութեան տարեկան հասցեագրեր ձեռնարկը՝ ճաշկերոյթ պարահանդէս, տեղի



Չահլէի Հ.Մ.Ը.Մ.ի 1979ի վարչական կապմը, նստած՝ Մուրատ Քէշիշեան, Իւղաբեր Հայրապետեան, Էտմոն Գասարճեան, ոտքի՝ Ժան Պըշարա, Յարութիւն Քիւրիւմլեան, բացակայ՝ Ժան Պըշաքճեան եւ Կարօ Քիւրքճեան:

կ' ունենայ Սեպտեմբեր ծին ուր կը կատարուին նուիրատուութիւններ դաշտի գնման ֆոնտին:

1980 տարուայ վարչական կազմի անդամներ են՝

Ատենապետ՝ Էսմոն Գասարճեան
Փոխ ատենապետ՝ Մուրատ Քէչիչեան
Ատենադպրուհի՝ Իւղաբեր Հայրապետեան
Գանձապահ՝ Յակոբ Պուշաքճեան
Հաշուապահ՝ Վազգէն Թապաքեան
Խորհրդականներ՝ Կարօ Քիւրքճեան, Յարութ Քիւրիւմլեան, Խաչիկ Պուստաքեան, Ժորժ Տարոսեան, Լենա Պապէյեան եւ Ժագլին Ասատուրեան:

22էն 29 Սեպտեմբեր 1986ին Այնճարի մէջ տեղի ունեցաւ մասնաճիւղի տարեկան ընդհանուր բանակումը խմբապետութեամբ՝ Ժագլին Ասատուրեանի, ընդհանուր խմբապետութեամբ՝ Արշալոյս Տավրոսեանի եւ սկաուսական խորհուրդի ներկայացուցիչներ Արուսեակ Քիւրքճեանի եւ Սեդա Քիւրիւմեանի: 58 արի եւ արենոյշներ մասնակցեցան այս եօթնօրեայ բանակումին: Վերջին օրը բանակողներուն միացան նաեւ մասնաճիւղի 36 գայլիկներ ու արծուիկներ: Տեղի ունեցան խարուկահանդէս: Բանակավայրը այցելեց Պեքաայի նահանգի ընդհանուր սկաուսապետ՝ Ասասու Շարրա որ քաջալերական խօսքերով ողջունեց Չահլէի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուսական խումբը- [Ծ/67-68.23]:

ԹՐԻՓՈԼԻ

1974-75 եղանակին Թրիփոլիի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը ներքին տագնապ մը դիմագրաւեց կարգ մը անդամներու կողմէ վարչութեան հետ գործակցութեան մերժումին հետեւանքով:

Կացութիւնը յստակացաւ 1977էն սկսեալ եւ մասնաճիւղը վերագտաւ իր բնականոն կեանքը:

26 Յունիս 1977ին անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչական կազմը իր պաշտօններու բաժանումը կատարեց հետեւեալ կերպով.-

Ատենապետ՝ Գրիգոր Թելեան
Փոխ ատենապետ՝ Տիգրան Կիրակոսեան
Ատենադպիր՝ Ժագ Զանիկեան
Գանձապահ՝ Մակար Մոսկոֆեան

Մարզական պատասխանատու՝ Վաչէ Հարմանտայեան:

Ատենապետ՝ Գրիգոր Թելեանի մերժումին պատճառով ատենապետութեան պաշտօնը փոխանցուեցաւ Վաչէ Հարմանտայեանին եւ հինգերորդ վարչական անդամ նշանակուեցաւ Աւետիս Քէչիչեան:

Այս տարեշրջանին, 16 նորագիրներ կը միանան մասնաճիւղին ընդհանուր թիւ՝ 81 անդամ որոնցմէ 25 գայլիկներ եւ մրջնիկներ: Մասնաճիւղը պետական ճանաչում ունի իբրեւ փինկփոնկ կիրարկող միութիւն, արտօնագիր՝ 14 Սեպտեմբեր 1953 թուակիր, թիւ 12 : Ակումբը կ'օգտագործուի Լ.Օ.Խաչի Թրիփոլիի մասնաճիւղին հետ միասնաբար : Մասնաճիւղի կիրարկած մարզաճիւղերն են պասքեթպոլ՝ սոլոց գոյգ դասակարգի եւ աղջկանց խումբերով եւ փինկփոնկի երկսեռ խումբով: 1977ին մասնաճիւղի կազմակերպած միջ-ակմբային պասքեթպոլի մրցաշարքին կը մասնակցին 15 խումբեր: Մասնաճիւղի խումբը կը տիրանայ յաղթանակի բաժակին:

Վարչութիւնը հինգ զանազան տեսակի հաստութաբեր ձեռնարկներով կ'ապահովէ իր ընթացիկ ծախսերը: Ելեւմուտքի ընդհանուր գումար 28.000 լիբ. ոսկի:

15 Յունուար 1978ին մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ՝

Ատենապետ՝ Վաչէ Հարմանտայեան
Փոխ ատենապետ եւ գանձապահ՝ Սերոբ Դաւիթեան

Ատենադպրուհի՝ Սիլվա Դաւիթեան
Փինկփոնկի պատասխանատու՝ Հրաչ Միքայէլեան

Պասքեթպոլի պատասխանատու՝ Տիգրան Կիրակոսեան



Թրիպոլիի Պասքեթպոլի տղոց Ա. խումբը - 1982

Սկսուտ պատասխանատուներ՝ Ժագ Զանիկեան եւ Աւօ Պօղոսեան:

Հետագային Սերոբ Դաւիթեան եւ Հրաչ Միքայէլեան չկարենալով հետեւիլ վարչական աշխատանքներուն փոխարինուեցան Գրիգոր Դաւիթեանով եւ Աւետիս Քէչիչեանով:

Վարչութիւնը 1978ի ընթացքին կը կազմակերպէ հրապարակային եւ ներքին տասը ձեռնարկներ որոնցմէ ոմանք հասուծաբեր արդիւնք կ'ունենան:

Պասքեթպոլի խումբերը կը մարզուին Ագգային Խրիմեան Նուպարեան վարժարանի դաշտին վրայ: Մարզական եւ սկստակական խումբերը կը գործեն նախորդ շրջանի պայմաններով:

11 Մարտ 1979ին կ'ընտրուի նոր վարչական կազմ՝ որոնցմէ ճամբորդութեան պատճառով հրաժարումներէ ետք վարչութեան աշխատանքները կը բաժնուին հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Վաչէ Հարմանտայեան

Ատենադպիր՝ Ժան Սրապեան

Գանձապահ՝ Գրիգոր Դաւիթեան

Խորհրդականներ՝ Երջան Սահակեան, Աւետիս Պօղոսեան եւ Արա Գիւտներեան:

Այս տարեշրջանին վարչութեան աշխատանքներուն կ'օգնեն սկստակական խորհուրդը մարզական եւ ընկերային յանձնախումբերը: Տարեշրջանի ընթացքին ներքին եւ հրապարակային բազմաթիւ ձեռնարկներ կը կազմակերպուին խրախճանք, մրցաշարքեր, պարա-



Հ.Մ.Ը.Մ. Թրիփոլի "Rally Paper"ի կապմակերպիչ յանձնախումբ - 1978

հանդէս, ընտանեկան եւ երիտասարդական հաւաքներ, ռալի բէյբերը եւ մշակութային ձեռնարկներ:

Մարզական խումբերը մասնակցած են 16 մրցաշարքերու որոնցմէ 12ը յաղթական արդիւնքով: Զգալի աճ կ'արձանագրէ անդամներու թիւը, ընդհանուր թիւ 127:

9 Դեկտեմբեր 1979ին, Թրիփոլիի Ազգային վարժարանի սրահին մէջ, մասնաճիւղը սօնեցիր հիմնադրութեան Յիսնամեայ Յոբելեանը: Այս առթիւ խօսք առին մասնաճիւղի ատենապետ՝ Վաչէ Հարմանտայեան, երիտասարդականի ներկայացուցիչ՝ Արա Ալպարեան, Շրջանային Վարչութեան կողմէ Արա Յակոբեան,

օրուայ բանախօս՝ Կեդրոնական վարչութեան ատենապետ՝ Վարդգէս Տէր Կարապետեան: Տեղի ունեցաւ գեղարուեստական բաժին եւ սկաուտական խաղեր: Յիշատակի մետալներ յանձնուեցան մասնաճիւղի հիմնադիր սերունդի անդամներէն, Յովհաննէս Առաքելեանի, Կարպիս Արծրունիի, Անդրանիկ Անուշեանի, Յարութիւն Զամբերթեանեանի եւ Սիմոն Թերճանեանի:

Տարեշրջանի նիւթական գործառնութեան ընդհանուր գումարն է 88.000 լիբ. ոսկի:

1980 տարուայ մասնաճիւղի վարչական կազմի անդամներն են՝

Ատենապետ՝ Վաչէ Հարմանտայեան

Փոխ ասենապետ՝ Տիգրան Կիրակոսեան
Ասենադպրուհի՝ Անի Զանիկեան
Գանձապահ՝ Սօսի Նաճարեան

Խորհրդականներ՝ Երջանիկ Սահակեան,
Միքայէլ Յարուժիլեան, Գրիգոր Դաւիթեան,
Մասլէն Փոլատեան եւ Հայկ Պուլաուրեան:

Տարուայ ընթացքին Արփինէ Կէօզիլպէօ-
յիլքեան եւ Ասասուր Գըլըքեան կը փոխարի-
նեն Անի Զանիկեանն ու Հայկ Պուլաուրեանը:
Բացի Նաւասարդ աղուժի սենեակէն վարչու-
թիւնը այս տարեշրջանին սկսուածներուն յա-
տուկ սենեակ մը կ'ապահովէ Ազգ. վարժարա-
նէն ներս: Անդամներու ընդհանուր թիւը կը
բարձրանայ 152ի:

Մարզական եւ սկսուածական բաժինները
կը գործեն բնականոն ընթացքով: Սկսուած-
ական հաւաքոյթներուն կը տրուին ազգային
դաստիարակչական նիւթերով դասախօսու-
թիւններ:

1981ի գործունէութեան համար նորընտիր
վարչութեան կազմն է

Ասենապետ՝ Երջան Սահակեան
Փոխ ասենապետ՝ Տիգրան Կիրակոսեան
Ասենադպրուհի՝ Անի Զանիկեան
Գանձապահ՝ Սօսի Նաճարեան

Խորհրդականներ՝ Ժազ Պանսօ, Ասասուր
Գըվըգեան, Վաչէ Հարմանտայեան, Տիգրան
Օհանեան, Մատաթ Մարաշլեան:

Նախորդող տարիներու նմանողութեամբ
մարզական եւ սկսուածական բաժինները կը
գործեն յառաջդիմութիւններով: Մարզախաղե-
րուն վրայ կ'աւելնայ Ֆութպոլը: Խումբը
կ'ունենայ իր շաբաթական փորձերը:

Վարչութիւնը կը հոգայ երկու ուսուցչու-
հիներ որոնք Պաթրունի մէջ հայ պատիկներուն
հայերէն կը սորվեցնեն: Պաթրունէն փոխադ-
րուող սկսուածներուն կը տրամադրուի երթե-
լեկի օթօպիւս սկսուածական հաւաքոյթներուն
ներկայ ըլլալու համար:

1982ին վարչութեան կ'անդամակցին,

ասենապետութեամբ՝ Երջան Սահակեանի, Յա-
կոբ Կիրակոսեան, Սօսի Նաճարեան, Սերոբ
Դաւիթեան, Սիլվա Յարուժիլեան, Միքայէլ
Յարուժիլեան, Ժազ Պանսօ, Աբրահամ Շի-
րինեան եւ Մատաթ Մարաշլեան:

Յաջորդաբար կը կազմակերպուին պաս-
քեթպոլի եւ փինկ-փոնկի մրցաշարքեր: Պաս-
քեթպոլի խումբերու թիւը կը բարձրանայ 5ի:

Ապահովական դժուարին կացութիւնները
կ'արգելակեն Պաթրունի շրջանին՝ վարչու-
թեան նախկին ձեւի օժանդակութիւնները:

12 Օգոստոս 1984ին մասնաճիւղը կը կազ-
մակերպէ «ուլի բէյբըր» հանելուկարշաւ, հո-
վանաւորութեամբ Թրիփոլիի քաղաքապետ՝
Աշիր Տայէի: 52 ինքնաշարժերու վրայ բաժն-
ուած խմբակներ կը մասնակցին այս «ուլի
բէյբըր»ին որուն մեկնումի ազդանշանը
տրուեցաւ առաւօտեան ժամը 10ին իսկ վերջին
ինքնաշարժը հասաւ կէսօրէ ետք ժամը 5ին:
Երեկոյեան տեղի ունեցաւ հիւրասիրութիւն
որու ընթացքին քաղաքապետ Աշիր Տայէ հե-
տեւեալ խօսքերը արտասանեց.

«Այսօր կը գտնուինք Հ.Մ.Ը.Մ.ի ակումբին
մէջ: Հաւանաբար ան պարզ տուն մըն է շատե-
րուն համար, բայց պէտք է գիտնալ թէ այս պարզ
տունէն է որ ծնունդ առած է Թրիփոլիի եւ ամ-
բողջ հիւսիսային Լիբանանի մարպական կեանքը:
Շատ մը մարպական խաղեր Հ.Մ.Ը.Մ.ի միջոցով
մուտք գործած են հոս, իսկ արդէն «ուլի»ի հոս
մուտքը ժողովրդականացումը եւ տեսականացու-
մը կը պարտինք Հ.Մ.Ը.Մ.ին: Հ.Մ.Ը.Մ. ծնունդն է
հայ ժողովուրդին, որ իրաւ արժանի է տեղ գտնե-
լու մեծ ապերու կողքին. ան իր աշխատանքով
եւ իր խելքով ինքզինք պարտադրած է շրջապա-
տին ուր որ գացած է, տեղացի ժողովուրդէն իսկ
աւելի աշխատանք տարած է, պարգացնելու իր
շրջապատը ամէն տեսակետով: Խօսքս կը վերջաց-
նեմ ըսելով՝ յագանք քեզ՝ ժողովուրդ, յարգանք
քեզ կրկին որ կրցած ես ծնունդ տալ Հ.Մ.Ը.Մ.ի
նման մեծ կապակերպութեան մը»- [Ծ/43.22]:

ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ

1975-1990 ժամանակաշրջանը, ինչպէս Լիբանանի բոլոր մասնաճիւղերու պարագային, Պուրճ Համուտի համար դժուարին ժամանակաշրջան մը պիտի ըլլար: Այսուհանդերձ իրերայաջորդ վարչական կազմեր կարելի լաւագոյնը ի գործ պիտի դնէին մասնաճիւղի գործունէութեան զանազան մարզերը գործունէայ վիճակի մէջ պահելու համար:

1975 տարուայ վարչական կազմի անդամներն են

- Ատենապետ՝ Կարպիս Հարպոյեան
- Փոխ ատենապետ՝ Սամուէլ Մկրտիչեան
- Քարտուղարներ՝ Հրայր Կարապետեան
- Հաշուապահ՝ Սարգիս Ռաֆայէլեան
- Գանձապահ՝ Յակոբ Չաբրեան

Մարզական ճիւղերու պատասխանատուներ՝

Ֆուտբոլ՝ Յարութիւն Սասունեան, Գրիգոր Կէճէգուչեան

Աթլէթիզմ եւ հեծելանիւ՝ Վարուժան Գէորգեան

- Պասքեթպոլ՝ Կարօ Գազանճեան
- Սկաուտ խմբապետ՝ Կարօ Մելքոնեան:

Մարզական բոլոր ճիւղերը կը գործեն յատուկ յանձնախումբերու հսկողութեամբ: Սկաուտական խորհուրդի կողքին սկաուտական նուագախումբի յատուկ յանձնախումբ մը կը գործէ գլխաւորութեամբ Խորէն Հայկեանի:

Ապրիլ ամիսէն սկսեալ ծայր կու տան լիբանանեան քաղաքացիական կռիւները: Մասնաճիւղի գործունէութիւնը զգալիօրէն կը դանդաղի: Վարչական կազմը իր գործունէութեան ժամանակաշրջանը կ'երկարէ մինչեւ 1977ի Յունուար ամիսը:

31 Յունուար 1978ին մասնաճիւղի նորակազմ վարչութիւնը իր աշխատանքներու բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Պետրոս Վէքիլեան
- Փոխ ատենապետ՝ Զաքար Զորպաճեան

Ատենադպիրներ՝ Փոլին Մալեան եւ Ճորճիկ Ռասուկէլէնեան

- Գանձապահ՝ Նժդեհ Պաղտասարեան
- Գոյքապահ՝ Նազարէթ Կէլոյեան
- Խորհրդականներ՝ Կարօ Գազանճեան, Կարօ Համալեան, Գրիգոր Գուչեան, Յակոբ Չաբրեան եւ Վարուժան Գէորգեան:

Այս կազմին կ'օժանդակեն ֆուտբոլի Ախումբի եւ երկրորդական խումբերու զոյգ յանձնախումբեր, պասքեթպոլի, փինկ-փոնկի, հեծելարշաւի յանձնախումբեր եւ սկաուտական խորհուրդը: Աթլէթիզմի շրջանային յանձնախումբի մօտ մասնաճիւղի ներկայացուցիչն է Վարուժան Գէորգեան:

Զատկուայ տօներուն առթիւ, մասնաճիւղի ֆուտբոլի եւ պասքեթպոլի խումբերը կը մեկնին Հալէպ տեղույն խաղերուն մասնակցելու: Վարչութիւնը փինկ-փոնկի նոր սեղանով մը կ'օժտէ մասնաճիւղը:

18 Մարտ 1979ի մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովէն ընտրեալ վարչութիւնը իր դիւանը կը կազմէ հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Նազարէթ Կէլոյեան
- Փոխ ատենապետ՝ Վարուժան Գէորգեան
- Ատենադպիր՝ Սարգիս Օվայեան
- Գանձապահ՝ Անթուան Գազէգեան
- Հաշուապահ՝ Զաւէն Գապասագալեան

Մարզաճիւղերու պատասխանատուներ՝ Գրիգոր Գուչեան, Մկրտիչ Մկրտիչեան, Մոսիկ Թօփուզեան, Կարօ Համալեան:

Սկաուտական խորհուրդը եւ մարզական յանձնախումբեր կ'օժանդակեն վարչական կազմի գործունէութեան: Մասնաճիւղի գանձին կացութիւնը բարելաւելու համար վարչութիւնը 22 Յունիսին կը կազմակերպէ ճաշկերոյթ մը, որմէ կ'ապահովուի 21000 լ. ոսկի գուտ շահ: Մարզական բոլոր ճիւղերը կը գործեն բնականոն ընթացքով: Սկաուտական շաբերու ընդհանուր թիւն է՝ 351

1980 տարեշրջանի վարչութեան անդամներն են՝



Պուրճ Համուտի մասնաճիւղի 1979 տարուայ վարչութիւն, նստած՝ Սարգիս Օվայեան, Նապարէթ Կէլոյեան, Վարուժան Գէորգեան, ոտքի՝ Մկրտիչ Մկրտիչեան, Մոսիկ Թօփուլեան, Անթուան Գալէպեան, Կարօ Համալեան, բացակայ՝ Զաւէն Գապասաքալեան եւ Գրիգոր Գուշեան

Ատենապետ՝ Նազարէթ Կէլոյեան
 Փոխ ատենապետ՝ Վարուժան Գէորգեան
 Ատենադպրուհի՝ Նազիկ Նաճարեան
 Գանձապահ՝ Անթուան Գալէպեան
 Հաշուապահ՝ Զաւէն Գապասաքալեան
 Խորհրդականներ՝ Սարգիս Օվայեան,
 Մկրտիչ Մկրտիչեան, Մոսիկ Թօփուլեան եւ
 Կարօ Համալեան:

24 Մարտի 1981ին մասնաճիւղի նորընտիր վարչութիւնը իր անդրանիկ նիստով կատարեց աշխատանքներու բաժանումը հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Վարուժան Գէորգեան
 Փոխ ատենապետ՝ Մոսիկ Թօփուլեան
 Ատենադպիր՝ Սարգիս Օվայեան
 Գանձապահ՝ Վարուժան Նաճարեան
 Խորհրդականներ՝ Համբարձում Մկրտիչեան,
 Զաւէն Գապասաքալեան, Հայկ Աշքարեան,
 Կարօ Համալեան, Սեպուհ Թօփուլեան,
 Ռոստոմ Զալըքեան:

Մասնաճիւղի բոլոր բաժինները քաղաքական համեմատաբար խաղաղ կացութենէն օգտուելով յաջող սարեշրջան մը կը բոլորէն: Վարչութեան սնտուկին նպաստելու համար

գլխավոր ձեռնարկը կ'ըլլայ Գազինո Տիւ Լիպանի մէջ ճաշկերոյթ պարահանդէսը, որ կը պսակուի աննախընթաց յաջողութեամբ:

1982 տարուայ վարչական կազմի դիւանը կը մնայ նոյնը բացի ատենադպիրէն, որ կը փոխարինուի՝ Ժան Պելեանով: Յովհաննէս Աբգարեան եւ Անթուան Գազէգեան մաս կը կազմեն վարչութեան:

Վարչութիւնը կը նշանակէ տարեշրջանի սկստուական խորհուրդը, որուն մաս կը կազմեն՝ Սարգիս Օվայեան, Գրիգոր Մկրտիչեան, Գալուստ Գոչունեան, Գրիգոր Ծանէցեան, Գրիգոր Քեչիշեան, Լեւոն Գէորգեան, Կարինէ Գազէգեան, Սոնա Կէլոյեան, Սարգիս Սաղըրեան եւ Րաֆֆի Քեչիշեան:

Մարզական բոլոր ճիւղերը կը գործեն բնականոն ընթացքով իւրաքանչիւրը իրեն յատուկ յանձնախումբի մը հսկողութեամբ:

Վարչութիւնը կը փորձէ, մասնաճիւղին սեփական աւուրմբ մը ունենալու անդամական ընդհանուր ժողովի առաջարկը իրականացնել իբրեւ հիմնադրամ օգտագործելով դրամատան մէջ անձեռնմխելի պահ դրուած գումարը: Տարեվերջին մասնաճիւղի անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 803ի:

1983ին վարչութեան ատենապետի պաշտօնը կը վարէ Զաքար Զորպաճեան, ատենադպրուհի՝ Արմենուհի Կարապետեան, գանձապահ՝ Մովսէս Աղամեան, հաշուապահ՝ Գօգօ Մկրտիչեան:



1979 տարուայ Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղի սկստուական խորհուրդի կազմը, նստած՝ Յարութիւն Գասարճեան, Արմէնուհի Կարապետեան, Սարգիս Օվայեան ուղի՝ Րաֆֆի Քեչիշեան, Գօգօ Մկրտիչեան, Թորգոմ Փափապեան, Պետրոս Չիֆթելեան, Գրիգոր Քեչիշեան

Երկրի քաղաքական աննպաստ պայմանները մասնաճիւղի աշխատանքներուն յաճախակի դադրեցման եւ վերսկսման պատճառ կը դառնան:

15 Մայիս 1984ին մասնաճիւղի նորընտիր վարչութիւնը իր աշխատանքներու բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով.-

Ասենապետ՝ Վարուժան Գէորգեան
Փոխ ասենապետ՝ Հայկ Աշքարեան
Ասենադպիր՝ Սարգիս Օվայեան
Գանձապահ՝ Անթուան Գազէզեան
Հաշուապահ՝ Կարօ Աբրահամեան
Խորհրդականներ՝ Ռոպէր Պարիկեան եւ Յարութիւն Եղիայեան:

Վարչութեան կ'օժանդակեն սկաուտական խորհուրդը, մարզական եւ ընկերային յանձնախումբերը: Յատուկ ուշադրութեան արժա-

նի են Ֆուլթպոլի երկրորդական խումբերը: Ակումբի չորրորդ յարկը, որ կը գործածուէր նուազախումբի փորձերուն, Շրջանային Վարչութեան գործակցութեամբ կը վերածուի ժողովասրահի, ուր նիստեր կը գումարեն եւ արխիւներ կը պահեն Շրջանային բոլոր յանձնախումբերը:

13 եւ 14 Հոկտեմբերին վարչութիւնը կը կազմակերպէ միջ-մասնաճիւղային պասքեթպոլի մրցաշարք, մասնակցութեամբ Լիբանանի բոլոր մասնաճիւղերու տղոց եւ աղջկանց խումբերուն:

8 Մարտի 1985ին, մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչական կազմը իր դիւանը կը կազմէ հետեւեալ ձեւով.-

Ասենապետ՝ Նազարէթ Կէլոյեան
Ասենադպիր՝ Սարգիս Օվայեան



Հ.Մ.Ը.Մ.ի Պուրն Համուտի Պասքեթպոլի աղջկանց խումբը

Գանձապահուհի՝ Սեդա Տէր Սարգիսեան
Հաշուապահ՝ Նազարէթ Նեմչէհիրեան
Փոխ ատենապետ՝ Յովհաննէս Աբգարեան
Սկաուտ խորհուրդի ներկայացուցիչ՝ Սարգիս Սադրբեան

Պասքեթպոլի ներկայացուցիչ՝ Սեպուհ Թօփալեան:

Սկաուտական կազմը ընթացիկ աշխատանքներու կողքին կը ձեռնարկէ մասնաճիւղի հիմնադրութեան յիսնամեակի տօնակատարութեան շքեղ ճաշկերոյթ պարահանդէսի մը կազմակերպութեամբ: Մասնաճիւղի հեծելանուորդները կը մասնակցին միջ ազգային «Փիէլ Ճեմայէլ» բաժակի մրցումներուն:

1986 տարեշրջանին մասնաճիւղի ատենապետութեան պաշտօնը կը վարէ Յարութիւն


Եղիայեան, ատենադպրուպի՝ Արմինէ Ասատուրեան:

1987 տարուայ վարչական կազմի անդամներն են՝

Ատենապետ՝ Կարօ Աբրահամեան
Փոխ ատենապետ եւ գանձապահ՝ Անթուան Գազէզեան

Ատենադպրուհի՝ Արմինէ Ասատուրեան
Խորհրդականներ՝ Ժիրայր Նալպանտեան, Կարպիս Յովակիմեան, Յարութիւն Լատոյեան եւ Վարուժան Գազանճեան:

Վարչութեան կ'օժանդակեն Ֆուլթպոլի, պասքեթպոլի, փինկփոնկի եւ ընկերային յանձնախումբերը, ինչպէս նաեւ սկաուտական խորհուրդը: Մարզական խումբերու անդամները կ'ապահովագրուին արկածներու դէմ: Մաս-



Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Հանուտի Պասքեթպոլի տղոց խումբը

նաճիւղը Ֆոլթպոլի Ա. կազմի կողքին կը պահէ 4 երկրորդական խումբեր: Մայիսին կ'ամբողջանայ պասքեթպոլի դաշտի լուազարդման նորոգութիւնները: Խումբի մարզիչն է Միհրան Էրզրումեան: Խումբը կը մասնակցի ENBի մրցաշարքին սիրանալով բաժակին:

Սուրբ Զատիկուայ տօնին առթիւ սկսուածները շնորհաւորական քարթեր կը բաժնեն շրջանէն ներս վարչութեան գանձին ապահովելով կոկիկ գումար մը:

1989 եւ 1990 տարեշրջաններու վարչութիւնը իր անդրանիկ նիստը կը գումարէ 8 Մարտ 1989ին եւ իր աշխատանքներու բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Յարութիւն Եղիայեան
- Ատենադպիր՝ Արմէն Ապտալեան
- Գանձապահ՝ Կարօ Բարսեղեան
- Հաշուապահ՝ Սարգիս Սաղրբեան
- Սկսուտական ներկայացուցիչ՝ Գօգօ Քեչիշեան

Պասքեթպոլի պատասխանատու՝ Վրէժ Աբրահամեան եւ Լեւոն Քեչիշեան

Ֆոլթպոլ՝ Վազգէն Գարակէօզեան եւ Սահակ Կերեքմեզեան:

1989ին մասնաճիւղի սկսուտ խմբապետուհիի պաշտօնը կը վստահուի Լուսին Գազէզեանին:

Վարչութեան ենթակայ սկսուտութեան, Ֆոլթպոլի, պասքեթպոլի եւ փինկ-փոնկի ճիւղերը կը գործեն բնականոն ձեւով: Աթլէթիզմն ու հեծիկը ենթակայ են Շրջանային յանձնախումբերու: Ֆոլթպոլի երկրորդական խումբերն են՝ Վրացեան, Վրէժ, Հայրենիք, Լէյլավան, Արմէն Գարօ, Պայքար, Կարս, Ռազմիկ, Նաւասարդեան, Շիրազ, Աղբալեան Բ.- Վրացեան Բ.: 1990ին կը վերակազմուի նաեւ Մայր Հայաստան խումբը: Փինկփոնկի խումբի մարզիչն է Սերգո Յովհաննէսեան: Խումբը կը մասնակցի Ֆետերասիոնի ախոյեանութեանց եւ միջ ազգային մրցաշարքերու: Մասնաճիւղի կազմակերպած 15 Դեկտեմբեր 1989ի միջ

ազգային մրցաշարքին կը մասնակցին 61 մարզիկներ - [Ծ/97-98.55] :

Վարչութեան նիւթական գործառնութիւնը կը կատարուի ԱՖԷՏ դրամատան միջոցով:

ԱՅՆՃԱՐ

Հ.Մ.Ը.Մ. Այնճարի մասնաճիւղը, հիմնուած 1948ին, Լիբանանի հինգերորդ մասնաճիւղն է որ կը գտնուի արեւելեան Պէքաա նահանգին մէջ:

1975ի Լիբանանի քաղաքացիական կռիւններու ընթացքին Այնճարը կը գտնուէր համեմատաբար խաղաղ շրջանի մէջ եւ մասնաճիւղը գործեց բնականոն ընթացքով:

Մասնաճիւղի 29րդ անդամական ընդհանուր ժողովը, 6 Փետրուար 1977ին կ'ընտրէ 1977 տարուայ վարչական կազմ որ իր անդրանիկ նիստի ընթացքին աշխատանքներու բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Մովսէս Գէորգեան
- Փոխ ատենապետ՝ Վարուժան Քէնտիրճեան
- Գանձապահ՝ Հրաչ Քէնտիրճեան
- Ատենադպրուհի՝ Նուէր Մանճեան
- Հաշուապահ՝ Եփրեմ Շիրտըմեան
- Խորհրդականներ՝ Կարօ Սգայեան եւ Մարտիրոս Պոյաճեան:

Տարուայ ընթացքին Շրջանային վարչութեան նշանակումով այս կազմին վրայ կ'աւելնան Մինաս Թեճերեան, Նշան Տէր Գալուստեան եւ Թոմաս Քերքեզեան:

Վարչութեան կ'օժանդակէ սկսուտական խորհուրդը որուն մաս կը կազմեն, Մուշեղ Գարագաշեան, Վահէ Աշքարեան, Անդրանիկ Քենտիրճեան, Գաբրիէլ Փանոսեան, Մարի Սարմազեան, Վիքթոր Հերկելեան եւ Վերգինէ Այնթէպեան:

Մասնաճիւղի անդամներու ընդհանուր թիւն է 451 որոնցմէ 262ը սկսուտական շարքերուն մաս կը կազմեն:

Վարչութեան եկամուտի գլխաւոր աղ-



Այնճարի Հ.Մ.Ը.Մ.ի Պասքեթպոլի աղջկանց խումբը

բիւրն է Սբ. Զատիկուայ հակթամարտ-խրախ-
ճանքը:

20 Մարտ 1979ին կ'ընտրուի մասնաճիւղի
1979-1980 տարեշրջանի վարչական կազմ՝

- Ատենապետ՝ Միհրան Աշքարեան
- Փոխ ատենապետ՝ Սիմոն Գասամանեան
- Ատենադպրուհի՝ Անի Քէչիշեան
- Գանձապահ՝ Մկօ Քենտիրճեան

Հաշուապահ՝ Պետիկ Պիտանեան
Վոխարին-
ուած Յակոբ Քէօշէեանով:

Այս վարչութիւնը կը յաջողի վերակազմել
մարզական խումբերը, Ֆուլթպոլ 3 խումբեր,
պասքեթպոլ սղոց խումբ մը եւ աղջկանց 2
խումբեր, փինկփոնկ 13 երկսեռ մարզիկներ,
աթլետիկա՝ 20 մարզիկներ եւ հեծելարշաւ 4
հեծելանաւորդներ: Բոլոր կազմերը բարեկա-

մական մրցումներ կը կազմակերպեն Պէքրայի
զանազան գիւղերու խումբերուն դէմ:

Մասնաճիւղը ունի Ֆուլթպոլի եւ պասքեթ-
պոլի սեփական դաշտեր: Կազմակերպչական
զօրացման նպատակով վարչութիւնը այս տա-
րեշրջանի ընթացքին կարգ մը պատժական
տնօրինումներ կը կատարէ: Անդամացանկե-
րու ստուգումէն ի յայտ կու գայ թիւի նուա-
զում՝ 254 գործօն եւ օժանդակ անդամներու
ընդհանուր թիւով:

1980 տարուայ կազմի անդամներ կ'ընտր-
ուին

- Ատենապետ՝ Սիմոն Գասամանեան
- Փոխ ատենապետ՝ Լեւոն Թաշճեան
- Ատենադպիր՝ Մովսէս Սթամպուլեան
- Գանձապահ՝ Յովակ Քենտիրճեան
- Հաշուապահ՝ Պետիկ Թազեան

Խորհրդականներ՝ Վիքթորիա Հերկելեան եւ Աբրահամ Մալգրճեան:

Վարչութեան գործունէութեան կ'օժանդակեն սկաուտական խորհուրդ, մարզական եւ ընկերային յանձնախումբերը: Աւանդական հակաթամարտի ձեռնարկին կողքին, յուշատետրի հրատարակութեամբ, փարքինկի եւ վիճակահանութեան կազմակերպութեամբ մասնաճիւղի գանձին կ'ապահովուի 63.223 լիւր. ոսկի:

Անդամական 33րդ ընդհանուր ժողովը 8 Մարտի 1981ին կ'ընտրէ նոր վարչական կազմ՝ Ատենապետ՝ Թումաս Քերքեզեան
Փոխ ատենապետ՝ Յակոբ Ի. Սթամպուլեան
Ատենադպիր՝ Մովսէս Ա. Սթամպուլեան
Գանձապահ՝ Հրաչ Քենտիրճեան

Հաշուապահ՝ Մկրտիչ Քենտիրճեան
Խորհրդականներ՝ Աբրահամ Մալգրճեան եւ Սազօ Զատիկեան:

Մայիսի սկիզբը Հ.Մ.Ը.Մ.ի ակումբին մէջ պատահած ոճիւ մը կ'անդամալուծէ մասնաճիւղի աշխատանքները: 26 Սեպտեմբեր 1981ին մասնաճիւղի պասքեթպոլի տղոց եւ աղջկանց խումբերը մեկնեցան Ամման: Մինչեւ 29 Սեպտեմբեր խումբերը մրցումներ ունեցան Ամմանի Հ.Մ.Ը.Մ.ի եւ Յորդանանի ախոյեան Օրթոսոքս ակումբի խումբերուն դէմ, հիւրընկալ վարչութեան եւ ղեկավար անդամներու խնամքին արժանանալով : Այս այցելութիւնը առիթ հանդիսացաւ խանդավառ մթնոլորտ ստեղծելու տեղւոյն շարքերէն ներս:



Հ.Մ.Ը.Մ. Այնճարի Պասքեթպոլի տղոց խումբը

Հոկտեմբերին Հալէպի մասնաճիւղի պաս-
քեթպոլի սղոց խումբը կ'այցելէ Այնճար: Այս
առթիւ կը կազմակերպուին միջ-մասնաճիւղա-
յին մրցումներ Պէյրութի սղոց խումբին, Ան-
թիլիասի աղջկանց կազմին եւ մասնաճիւղի
խումբերուն միջեւ:

Այս տարեշրջանին յատուկ խնամքի կ'ար-
ժանանայ հեծելանիւի խումբը 16 մարզիկներով
եւ մարզիչ ունենալով Պեսիկ Սարգիսեանը:

Տարեվերջին անդամներու ընդհանուր
թիւը կը հաւասարի երբեմնի թիւերուն 443
անդամներով:

17 Յունուար 1983ին մասնաճիւղի անդա-
մական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վար-
չական կազմ՝

- Ատենապետ՝ Մաթէոս Մաթոսեան
- Ատենադպիր՝ Մովսէս Սթամպուլեան
- Գանձապահ՝ Հրաչ Քենսիրճեան

Խորհրդականներ՝ Յակոբ Սթամպուլեան,
Յարութ Լաքիսեան, Զարեհ Թովմասեան եւ
Վարդգէս Զաբարեան:

Այս տարեշրջանին երկրի քաղաքացիական
կռիւները զգալիօրէն կը դանդաղեցնեն գոր-
ծունէութիւնը զայն մասնելով քառամսեայ
ամլութեան: Կռիւներու խաղաղեցման հետ
գործունէութիւնները կը վերսկսին յատկապէս
Ֆուլթպոլի խումբի յաջող ելոյթներով: Մասնա-
ճիւղի կազմերը կը մասնակցին Շրջանային
Վարչութեան կազմակերպած Մայիսեան Փա-
ռասիօնին: Անդամներու թիւը կ'արձանագրէ
բացառիկ աճ հասնելով 588 անդամի:

25-27 Մայիս 1984ին, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադ-
րութեան եւ Հայաստանի անկախութեան 66րդ
տարեդարձին առիթներով, մասնաճիւղը կը
կազմակերպէ «Մայիսեան Շաբաթ» մասնակ-
ցութեամբ շրջանի հայ վարժարաններու,
Լ.Ե.Մ.ի Շաւարշ Միսաքեան պատանեկան
միութեան եւ մասնաճիւղի մարզական բոլոր
խումբերուն Ֆուլթպոլի, պասքեթպոլի եւ աթ-
լետիզմի բաժիններով- [Ծ/43.20]:

1986 տարուայ վարչութեան մաս կը կազ-
մեն՝

- Ատենապետ՝ Յարութ Լաքիսեան
- Փոխ ատենապետ՝ Յակոբ Սթամպուլեան
- Գանձապահ՝ Մովսէս Գէորգեան
- Հաշուապահ՝ Վահէ Քենսիրճեան
- Խորհրդականներ՝ Վարդգէս Պոյաճեան,
Լեւոն Թաշճեան եւ Ալեքսան Քիւսպեքեան:

Անդամական թիւի յաւելումը կը շարու-
նակուի նոյն թափով ընդհանուրը 656 անդամ-
ներ՝ 248 օտանդակ, 65 մարզիկ եւ 344 սկաու-
տական շարքերէն, որոնցմէ 55ը փողերախում-
բին մաս կը կազմեն:

Շրջանային Վարչութեան կազմակերպած
1986ի «Մայիսեան Շաբաթ»ի մրցաշարքերուն
Ֆուլթպոլի եւ պասքեթպոլի կողքին յայտադ-
րին կարեւոր բաժինը կ'ըլլայ աթլետիք
մրցումները որոնց յաղթականները կը հանդի-
սանան՝ Սազօ Ղազարեան, Հրանդ Հապէշեան,
Ժանօ Փամպուքեան, Ճոնի Ապրոյեան, Սերոբ
Սգայեան, Լենա Տումանեան, Թամար Լաքիս-
եան, Աստղիկ Թաշճեան եւ Ծովիկ Գըլըճեան:
Մասնաճիւղի սկաուտական նուազախումբը
կը մասնակցի մրցումներու փակման հանդի-
սութեան- [Ծ/61.10]:

1988 տարուայ մասնաճիւղի վարչութեան
ատենապետի պաշտօնը կը վարէ Յարութ Լա-
գիսեան:

25 եւ 26 Յունիս 1988ին մասնաճիւղի հիմ-
նադրութեան 45ամեակը կը նշուի յատուկ
հանդիսութիւններով եւ պասքեթպոլի եւ
Ֆուլթպոլի մրցումներով: Այս առթիւ տեղի
կ'ունենայ պասքեթպոլի նորակառոյց դաշտի
բացումը նախագահութեամբ Տէր եւ Տիկին
Աւետիս Կոբարեաններու: Տեղի կ'ունենայ նա-
եւ պաշտօնական ճաշկերոյթ որուն ընթացքին
Հ.Մ.Ը.Մ.ի Ծառայութեան Շքանշանով կը
պարգեւատրուին մասնաճիւղի հիմնադիր սե-
րունդի անդամներէն՝ Թադէոս Պազայեան եւ
Արամ Յովսէփեան- [Ծ/79.33]:

ՃԻՒՆԻ

Հ.Մ.Ը.Մ.ի ձիւնի մասնաճիւղը Լիբանանի Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքի այն անդամներէն է, որ երկար ժամանակ Լիբանանի քաղաքացիական պատերազմի հետեւանքներէն զերծ մնաց: Ընդհակառակը, ձիւնին որպէս աւան ծաղկեցաւ եւ Լիբանանի մայրաքաղաքը փոխարինող վայրի մը վերածուեցաւ:

26 Յունուար 1975ին մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը ընտրեց վարչական կազմ:-

- Ատենապետ՝ Տոքթ. Ժան Սաաթճեան
- Փոխ ատենապետ՝ Աբրահամ Հալպեան
- Ատենադպիր՝ Վարուժան Թորիկեան
- Գանձապահ՝ Գառնիկ Գաբրիէլեան
- Հաշուապահ՝ Եղիա Սիւմպիլեան

Օժանդակ յանձնախումբերու ներկայացուցչութիւնները ստանձնեցին Ժան Ապաճեան՝ ընկերային, Ժորժ Գալբաքեան եւ Արա Պալեան՝ մարզական եւ Զաքարիա Տէր Մկրտիչեան՝ ակումբի:

Մասնաճիւղի կիրարկած մարզաճիւղերն են՝ պասքեթպոլ, փինկ-փոնկ եւ աթլետիզմ երկսեռ բաժիններով: Անդամներու ընդհանուր թիւը բարձրացած է 124ի: Ակումբի եւ ընկերային յանձնախումբերու ճիգերով ներքին ձեռնարկները՝ դասախօսութիւններ, ընթրիք հաւաքոյթներ կը կազմակերպուին շաբաթական հերթականութեամբ:

Վերոյիշեալ վարչութիւնը կը գործէ մինչեւ 1977ի Յունուար ամիսը:

20 Փետրուար 1977ին նոր վարչական կազմի անդամներ կ'ընտրուին՝

- Ատենապետ՝ Վարուժան Թորիկեան
- Փոխ ատենապետուհի՝ Լիզէթ Սաաթճեան
- Ատենադպրուհի՝ Սեդա Ժան Սաաթճեան
- Գանձապահ՝ Սիմոն Զամիչեան

Յանձնախումբերու ներկայացուցիչներն են Ժան Ապաճեան՝ յարաբերական, Արա Պալեան՝ մարզական, Ժորժ Գալբաքեան՝ աթլետիզմ,

Ժագ Սիւմպիլեան՝ սկաուտական, Զաքարիա Տէր Մկրտիչեան՝ ակումբի: Տարեշրջանի ընթացքին Կարօ Մենգիլճեան կը փոխարինէ Սեդա Սաաթճեանը: Ընկերային, մարզական եւ սկաուտական ճիւղերը կը գործեն յարատեւութեամբ: Սկաուտական Խորհուրդի ատենապետն է Րաֆֆի Եսայեան, խմբապետ՝ Պերճ Զամպուլեան: Փինկ-փոնկի մարզիչ՝ Պօղոս Յովհաննէսեան աթլետիզմի՝ Վարդգէս Էսկիպաչեան: Ընկերային յանձնախումբի նախաձեռնութիւններէն են՝ երաժշտական երեկոյ՝ մասնակցութեամբ Սոնա Քիւրէլեանի եւ Ստեփան Էմմիեանի, գեղարուեստական երեկոյ՝ դասախօս Փօլ Կիրակոսեան եւ ուրբաթ երեկոները ճաշկերոյթ խրախճանքներ: Տարուայ հրապարակային գլխաւոր ձեռնարկը կը հանդիսանայ Պզումարի պանդոկին մէջ կազմակերպուած ճաշկերոյթ պարահանդէսը հովանաւորութեամբ՝ Նշան Պապիկեանի:

15 Յունուար 1978ին մասնաճիւղի 52րդ անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչական կազմի անդամներն են, ատենապետ՝ Վարուժան Թորիկեան, ատենադպիր՝ Ժագ Սիւմպիլեան, գանձապահ՝ Սիմոն Զամիչեան, յարաբերական՝ Կարօ Մենգիլճեան, հաշուապահ՝ Ժան Ապաճեան, սկաուտական՝ Մելիք Գարասարգիսեան, մարզական՝ Զարեհ Պալեան, ընկերային՝ Կարպիս Գոլանճեան, ակումբի՝ Նշան Աւագեան:

Մարզական խումբերը կը վարեն Պօղոս Յովհաննէսեան, ծորճ եւ Արտա Գալբաքեաններ:

Այս տարեշրջանին սկաուտական ճիւղը բացառիկ յաջողութիւն կ'արձանագրէ շնորհիւ Պերճ Զամպուլեանի ճիգերուն: 14 Մայիսին տեղի կ'ունենայ երդման արարողութիւն, խումբերը կը մասնակցին Շրջանային Սկաուտական Խորհուրդի կազմակերպած Հ.Մ.Ը.Մ.ի 60ամեակի հանդիսութեան Պուրճ Համուտի քաղաքապետարանի դաշտին վրայ: Նիւթական գործառնութեան պատկերն է՝ մուտք՝ 3393 լ.ո. ելք՝ 3345 լ.ո.:



Ճիւնիի Հ.Մ.Ը.Մ.ի Պասքեթպոլի խումբը՝ 1981ին

11 Մարտի 1979ին կ'ընտրուի նոր վարչական կազմ

Ասենապետ՝ Վարուժան Թորիկեան
Փոխ ասենապետ՝ Արա Պալեան
Ասենադպիր՝ Կարո Մենգիլճեան
Գանձապահ՝ Սիմոն Չամիչեան
Հաշուապահ՝ Տոքթ. Ժան Սաաթճեան

Յանձնախումբերու ներկայացուցիչներ՝
Յովիկ Գալայճեան, Մելիք Գարասարգիսեան,
Գառնիկ Գաբրիէլեան եւ Աբրահամ Հալպրեան:

Մասնաճիւղը ունի պասքեթպոլի սղոց 3
դասակարգի խումբեր եւ աղջկանց խումբ:
Տղոց Ա. խումբը կը պահէ միջ-մասնաճիւղա-
յին ախոյեանութեան տիտղոսը:

Մասնաճիւղի 54րդ անդամական ընդհա-
նուր ժողովը 27 Յունուար 1980ին կ'ընտրէ նոր
վարչական կազմ:-

Ասենապետ՝ Աբրահամ Հալպրեան
Փոխ ասենապետ՝ Կարո Մենգիլճեան
Ասենադպրուհի՝ Թալին Էքմէքճեան
Գանձապահ՝ Սիմոն Չամիչեան

Յանձնախումբերու պատասխանատու-
ներ՝ Վարուժան Թորիկեան՝ Սկաուտական
Խորհուրդ, Յովիկ Գալայճեան եւ Ժորժ Գալ-
բաքեան՝ մարզական, Պերճ Մահսերէճեան՝
Թենիս, Նշան Աւագեան՝ աղուծը:

Այս տարեշրջանին անդամներու թիւը
զգալի աճ կ'արձանագրէ, ընդհանուր թիւ 142,

որոնցմէ 66ը սկաուտական շարքերէն: Մասնաճիւղի անդամներէն Ասպետ Յովսէփեան Լիբանանի կրտսերներու դասակարգի հեծիկի ախոյեանութեան կը տիրանայ: Մասնաճիւղէն կարգ մը սկաուտներ մաս կը կազմեն Լիբանանի պատուիրակութեան մասնակցելու համար համագաղութային Բ. ընդհանուր բանակումին՝ Քլամար-Ֆրանսա իսկ Բաֆֆի Կէփօղլանեան Լիբանանի Հ.Մ.Ը.Մ.ը կը ներկայացնէ Լիպիոյ մէջ կայացող համարաբական ճամբարին:

1981 տարուայ վարչական կազմի անդամներն են՝

- Ատենապետ՝ Վարուժան Թորիկեան
- Փոխ ատենապետ՝ Աբրահամ Հալպրեան
- Ատենադպրուհի՝ Թալին Էքմէքճեան

Գանձապահ՝ Կարո Մենգիլճեան
Հաշուապահ՝ Պերճ Մահսերեճեան
Յանձնախումբերու ներկայացուցիչներ՝ Ժորժ Գալբաքեան (մարզական), Զարեհ Պալեան (ընկերային), Նշան Աւագեան (ակումբի), Մելիք Գարասարգիսեան (սկաուտական):

Այս տարեշրջանին, մասնաճիւղի մարզիկներէն Հայկօ Գաթրճեան, Պերճ Մահսերեճեան եւ Բաֆֆի Անտոնեան մաս կը կազմեն Լիբանանի Հ.Մ.Ը.Մ.ի պասքեթպոլի ներկայացուցչական խումբին: Սկաուտ խմբապետ Բաֆֆի Կէօփօղլանեան կը մասնակցի Թունուզի համարաբական ճամբարին:

Վարչութեան գլխաւոր իրականացումներէն պիտի ըլլար արգիլել պասքեթպոլի դաշտի



1985-ի Հ.Մ.Ը.Մ. ձիւնի Վարչական կապւր՝ Ժորժ Գալիաքլեան, Բաֆֆի Եսայեան, Հայկօ Գաթրճեան, Վարուժան Թորիկեան, Տօքթ. Ժան Սաաթճեան, Բաֆֆի Անտոնեան, Արա Պալեան, Աբրահամ Հալպրեան, բացակայ՝ Սելիմ Չամիչեան

մէկ մասին վրայէն անցնելու ծրագրուած ճամբու իրականացումը: Ծրագիրը հաստատուած էր նախագահական հրամանագրով եւ կը միտէր դրացի հողամասերու արժեւորման:

Մասնաճիւղի 56րդ անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած 1982 տարուայ վարչութեան մաս կը կազմեն.-

Ատենապետ՝ Սիմոն Չամիչեան
Ատենադպրուհի՝ Թալին Էքմէքճեան ապա Սիլվա Տէր Մկրտիչեան
Գանձապահ՝ Պերճ Մահսերեճեան
Հաշուապահ՝ Հուրի Թոքաթլեան
Յանձնախումբերու ներկայացուցիչներ՝ Մելիք Գարասարգիսեան (Սկառու. Խորհուրդ), Րաֆֆի Անտոնեան (ակումբի): Տարեշրջանի սկառուտական գործունէութիւնը բացառիկ յաջողութիւն կ'արձանագրէ:

14 Մարտին 8 գայլիկ-արծուիկներ կ'անցնին արի-արենոյշական շարքերը:

6 Փետրուար 1983ին կ'ընտրուի նոր վարչական կազմ, որուն կեանքը կ'ըլլայ կարճատեւ: Շրջանային վարչութեան կողմէ, Յունիսէն սկսեալ վարչական անդամներ կը նշանակուին՝ Սիմոն Չամիչեան, Րաֆֆի Անտոնեան, Ժորժ Գալբաքեան, Րաֆֆի Եսայեան եւ Հուրի Թոքաթլեան: Այս կազմը կը գործէ մինչեւ 1985ի փետրուար ամիսը:

17 Փետրուար 1985ին կ'ընտրուի նոր վարչական կազմ՝

Ատենապետ՝ Տոքթ. Ժան Սաաթճեան
Փոխ ատենապետ՝ Աբրահամ Հալպրեան
Ատենադպիր՝ Վարուժան Թորիկեան
Բ. ատենադպիր՝ Րաֆֆի Եսայեան
Հաշուապահ՝ Րաֆֆի Անտոնեան
Գոյքապահ՝ Սելիմ Չամիչեան
Յանձնախումբերու ներկայացուցիչներ՝ աթլետիզմ՝ Ժորժ Գալբաքեան, պասքետպոլ՝ Հայկօ Գաթրճեան, ընկերային՝ Արա Պալեան:

Այս տարեշրջանին ընկերային եւ մարզական ճիւղերը նոր թափով կը զարգանան միջանդամական ձեռնարկներու կազմակերպութեամբ: Սկառուտական շարքերը կ'ունենան

դասախօսութիւններ, բանակում, Ամանորի տօնակատարութիւն: Սկառուտներու ընդհանուր թիւն է 38:

Մասնաճիւղի 60րդ անդամական ընդհանուր ժողովը 16 Փետրուար 1986ին կ'ընտրէ նոր վարչութիւն հետեւեալ կազմով.-

Ատենապետ՝ Տոքթ. Ժան Սաաթճեան
Փոխ ատենապետ՝ Արա Պալեան
Գանձապահ՝ Սիմոն Չամիչեան
Հաշուապահ՝ Վարուժան Թորիկեան
Սկառուտականի ներկայացուցիչ՝ Րաֆֆի Եսայեան

Մարզական ներկայացուցիչներ՝ Ժորժ Գալբաքեան եւ Վահէ Սուլթանեան

Ակումբի պատասխանատու՝ Րաֆֆի Անտոնեան

Ընկերայինի պատասխանատու՝ Աբրահամ Հալպրեան:

Վարչութեան կ'օժանդակեն մարզական, ընկերային, ակումբի յանձնախումբեր եւ սկառուտական խորհուրդը: Տարեշրջանի ընթացքին վարչութեան աշխատանքներու բաժանումը փոփոխութեան կ'ենթարկուի Սիմոն Չամիչեանի ատենապետութեամբ:

Վարչութեան գլխաւոր աշխատանքը կ'ըլլայ, խաբանարական արարքի մը պատճառով ակումբի վնասուած շէնքի նորոգութիւնը: Անդամական ընդհանուր ժողով մը գումարելով մասնաճիւղը կ'որոշէ նոր եւ արդիական շէնքով մը փոխարինել վնասուած ակումբի շէնքը:

Օգոստոսին մասնաճիւղը կը տօնէ իր հիմնադրութեան 35ամեակը: Կը լուծուի նաեւ պասքետպոլի դաշտին կից պետական ծրագրումով նախատեսուած ճամբու պարագան միջին համաձայնութեամբ: Վարչութեան նիւթական գործառնութեան գումարը կը բարձրանայ 250.000 լիբանանեան ոսկիի:

21 Դեկտեմբերին մասնաճիւղը կ'ընտրէ իր ներկայացուցիչները մասնակցելու համար Լիբանանի Շրջանային Ներկայացուցչական Ժողովին յանձին Րաֆֆի Եսայեանի, Ժան Ապաճ-

եանի, Յակոբ Ոսկերիչեանի, Գէորգ Գազանձեանի, Գառնիկ Գաբրիէլեանի եւ Ջաքարիա Տէր Մկրտիչեանի:

1987 տարեշրջանին մասնաճիւղի վարչութեան մաս կը կազմեն.-

Ատենապետ՝ Սիմոն Չամիչեան
 Ատենադպիր՝ Րաֆֆի Եսայեան
 Գանձապահ՝ Յարութ Մենգիլճեան
 Հաշուապահ՝ Լենա Հալպրեան
 Շինարարականի ներկայացուցիչ՝ Ջարեհ Պալեան

Խորհրդականներ՝ Սիլվա Տէր Մկրտիչեան, Վահէ Սուլթանեան, Րաֆֆի Ասուրեան, Ժորժ Գալբաքեան, Պերճ Մահսերեճեան եւ Ներսէս Ճուլպանեան:

Տարեշրջանին անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 168ի, որոնցմէ 25 մար-

զիկներ եւ 45 սկստական շարքերու մասնակիցներ:

Ակումբի նոր շէնքի ծրագրին իրականացման համար կը նշանակեն շինարարական յանձնախումբ մը բաղկացած հետեւեալ անդամներէն.- Ջարեհ Պալեան, Սիմոն Չամիչեան, Աբրահամ Հալպրեան, Ժան Ապաճեան, Ջաքարիա Տէր Մկրտիչեան, Ժորժ Գալբաքեան: Շնորհիւ այս յանձնախումբի ժրաջան աշխատանքին գեղակերտ ակումբի շէնքի շինութիւնը կ'աւարտի տարեվերջէն առաջ: Բացման հանդիսութիւնը տեղի կ'ունենայ 20 Դեկտեմբեր 1987ին հովանաւորութեամբ՝ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Արամ Արք. Քէչիշեան եւ նախագահութեամբ Տէր եւ Տիկին Ալպէռ Խանամիրեանի — [Ծ/75.25]:

Ամառուայ եղանակին վարչութիւնը Թա-



1987 տարուայ ձիւնիի մասնաճիւղի վարչական կապմը

սլարժա Պիչի մէջ կը ձեռնարկէ լողարանի մը օգտագործման, որուն եկամուտը մեծապէս կը նպաստէ վարչութեան գանձին: Տարեշրջանի աւարտին մուտքերու ընդհանուր գումարն է 965.937 լ.ո. ելք՝ 626.320 լ.ո.:

8 Մայիս 1988ին կ'ընտրուի նոր վարչական կազմ՝

Ատենապետ՝ Սիմոն Չամիչեան
Փոխ ատենապետ՝ Ներսէս Ճուպանեան
Ատենադպիր՝ Րաֆֆի Եսայեան
Գանձապահ՝ Պերճ Մահսերեճեան

Քարտուղարուհի՝ Վերժին Սարաֆեան
Հաշուապահուհի՝ Սիլվա Տէր Մկրտիչեան

Խորհրդականներ՝ Րաֆֆի Ասուրեան, Յարուժ Մենզիլճեան, Ժորժ Գալբաքեան, Յովհաննէս Գալաճեան եւ Վահէ Խաչերեան:

Հակառակ սկսուած քաղաքի ծաղկուն եւ բազմազան գործունէութեան, մասնաճիւղի մարզական գործունէութիւնը տեղ քայլ կ'արձանագրէ: Լողարանի օգտագործումը կու գայ լեցնելու այդ բացը ձեռնարկներու եւ հանդիսութիւններու կազմակերպութեամբ, որոնք շինարարականի հետ մասնաճիւղի նիւթական գործառնութեան ընդհանուր գումարը կը բարձրացնեն 5 միլիոն 662.797 լ.ո. եւ 14910 ամ. տոլարի:

1989 եւ 1990 զոյգ տարեշրջաններուն կը գործէ 5 Մարտ 1989ին ընտրուած վարչական կազմը՝

Ատենապետ՝ Պերճ Մահսերեճեան
Փոխ ատենապետ՝ Ներսէս Ճուպանեան
Ատենադպիր՝ Րաֆֆի Եսայեան
Գանձապահ՝ Նազար Սարաֆեան

Խորհրդականներ եւ յանձնախումբերուն ներկայացուցիչներ՝ Սամուէլ Ապաճեան, Լեւոն Չամիչեան, Րաֆֆի Ասուրեան, Վահէ Խաչերեան, Ռոպէր Գիպարեան, Վերժին Սարաֆեան, Գարոյին Հալպրեան: Հազիւ այս կազմի գործի ձեռնարկելը պայթեցաւ Լիբանանի քրիստոնէայ շրջանի եղբայրասպան պատերազմը եւ

մասնաճիւղի ընդհանուր գործունէութիւնը սառեցաւ: Ակումբի շէնքը ռմբակոծումի հետեւանքով վնասուեցաւ: Պէտք եղաւ սպասել մինչեւ 1990ի ամռան վերջաւորութեան մասնաճիւղի գործունէութեան դանդաղօրէն վերսկսման համար:

Ճիւղի մասնաճիւղի գործունէութեանց 1975-1990 ժամանակաշրջանի զանազան ճիւղերուն իրենց կարեւոր նպաստը բերած են հետեւեալ անդամները.-

Մարզական.- Ժորժ Գալբաքեան, Արտա Գալբաքեան, Վարդգէս Էսկիպաչեան, Պողոս Յովհաննէսեան, Զարեհ Պալեան, Նիկողոս Գարասարգիսեան, Սօնա Հանէչեան, Ժագ Սիւմպիլեան, Յովիկ Գալաճեան, Յովհաննէս Սվաճեան, Սիլվա Տէր Մկրտիչեան, Պերճ Մահսերեճեան, Լեւոն Գալբաքեան, Արա Պալեան, Գօգօ Թորիկեան, Մկրտիչ Քրիսեան, Հայկօ Գաթրճեան, Սիմոն Չամիչեան, Վահէ Սուլթանեան, Ներսէս Ճուպանեան, Աւօ Պետոյեան, Ռոպէր Գիպարեան, Զարեհ Տէր Մկրտիչեան, Լեւոն Չամիչեան, Մարալ Տէր Մկրտիչեան, Րաֆֆի Ասուրեան:

Սկսուած.- Պերճ Ճամպուլեան, Րաֆֆի Եսայեան, Մելիք Գարասարգիսեան, Հուրի Թոքաթլեան, Ներսէս Սարեան, Սիլվա Տէր Մկրտիչեան, Յովիկ Գալաճեան, Ժագ Սիւմպիլեան, Յովիկ Գալաճեան, Նելլի Թորիկեան, Գէորգ Գազանճեան, Գօգօ Եսայեան, Ռուբէն Սաճօնեան, Գառնիկ Գաբրիէլեան, Գօգօ Աղամեան, Զարեհ Տէր Մկրտիչեան, Աւօ Պետոյեան, Սեւակ Պալեան, Րաֆֆի Կէօվօղլանեան, Սամուէլ Ապաճեան, Նշան Գարայեան, Էսուլար Հինտոյեան, Նազար Սարաֆեան, Նազարէթ Մարտիկեան, Արշակ Միքայէլեան, Միքայէլ Խաչերեան, Նորա Կէօվօղլանեան, Ներսէս Ճուպանեան, Կարօ Ազնաւորեան, Թալին Գաբրիէլեան, Թալին Աբանեան, Գարոյին Հալպրեան, Արագ Ոսկերիչեան, Մանուէլ Գազանճեան, Ալէն Պալեան, Րաֆֆի Ասուրեան, Ռոպէր Գիպարեան:



10 Ապրիլ 1988 ձինիի սկաուտներու երդման արարողութիւն

Ընկերային.- Սիմոն Չամիչեան, Ժան Ապաճեան, Անահիտ Գոլանճեան, Մակի Աղճայեան, Վարդգէս Էսկիպաչեան, Քրիսթին Պալեան, Սեդա Թորիկեան, Կարպիս Գոլանճեան, Անելկա Չամիչեան, Զաւէն Սաաթճեան, Գօգօ Գասպարեան, Տոքթ. Ժան Սաաթճեան, Հելէն Պալեան, Թալին Էքմէքճեան, Սալբի Թոքաթլեան, Պերճ Մահսերեճեան, Զարեհ Պալեան, Արուս Եսայեան, Լօր Հալպրեան, Բաֆֆի Անտոնեան, Էլիզ Ոսկերիչեան, Սիլվա Տէր Մկրտիչեան, Արա Պալեան, Սեդա Սաաթճեան, Հուրի Անտոնեան, Սօնա Գալբաքեան, Աբրահամ Հալպրեան, Հելէն Սուլթանեան, Գառնիկ Գաբրիէլեան, Լեւոն Չամիչեան, Թալին Գաբրիէլեան, Գարոլին Հալպրեան, Վահէ Խաչերեան, Նազար Սարաֆեան, Նազօ Մարտիկեան, Լենա Հալպրեան, Ժորժէթ Խաչերեան:

ԱՆԹԻԼԻԱՍ

Կազմակերպչական մարզական եւ սկաուտական գործունէութիւններ

Անթիլիասի հայահոծ շրջանին մէջ Հ.Մ. Ը.Մ.ի մասնաճիւղը ծաւալուժի լայն պայմաններ կ'ունենայ, յատկապէս քաղաքական եւ ապահովական պատճառներով Պէյրուսի քաղաքամէջէն դէպի հոն փոխադրուած անդամներու տեղափոխումով:

23 Փետրուար 1975ին մասնաճիւղը կ'ընտրէ վարչական կազմ՝

- Ատենապետ՝ Աշոտ Տէր Խաչատուրեան
- Ատենադպիր՝ Սարգիս Փանոսեան
- Գանձապահ՝ Անդրանիկ Հարպոյեան
- Յանձնախումբերու մէջ ներկայացուցիչներ

են՝ Սկաուտական խորհուրդ՝ Յովսէփ Մարաշլեան, մարզական՝ Երուանդ Եթէմեզեան, պասքեթպոլ՝ Ղազարոս Զոֆեան, սկաուտ խմբապետ՝ Յակոբ Ետալեան:

Այս կազմը կը գործէ մինչեւ 1977 թուական, սահմանափակ պայմաններու մէջ, դիմագրաւելով քաղաքացիական պատերազմի դժուարին պարագաները:

6 Մարտ 1977ին կ'ընտրուի նոր վարչական կազմ՝

Ատենապետ՝ Յովհաննէս Չափարեան
Ատենադպիր՝ Յակոբ Թաշճեան
Գանձապահ՝ Յարութիւն Տէօքմէճեան
Հաշուապահ՝ Կիպօ Հապիպեան

Խորհրդականներ՝ Յովսէփ Մարգարեան, Միսաք Թերզեան եւ Ղազարոս Զոֆեան:

Մասնաճիւղի կիրարկած նոր ճիւղն է հեծելարշաւը: Այս կազմը կը գործէ մինչեւ 1978ի Յունուար ամիսը:

18 Մարտ 1978ին մասնաճիւղի 11րդ անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ՝

Ատենապետ՝ Սարգիս Սարգիսեան
Ատենադպիր՝ Յակոբ Թաշճեան
Գանձապահ՝ Կիպօ Հապիպեան
Հաշուապահ՝ Ճորճ Էքմէքճեան
Սկաուտ խորհուրդի մօտ ներկայացուցիչ՝ Պետիկ Սապունճեան
Մարզական ներկայացուցիչ՝ Սերժ Գատեան



Անթիլիասի մասնաճիւղի 1979 տարեշրջանի վարչական կազմը նստած՝ Յակոբ Թաշճեան, Սարգիս Սարգիսեան, Կիպօ Հապիպեան, ոտքի՝ Ճորճ Էքմէքճեան, Յովսէփ Մարգարեան, Պետիկ Սապունճեան, Սերժ Գատեան

Յարաբերական՝ Յովսէփ Մարգարեան
Վարչութեան կողմէ կը նշանակուի
սկաուստական խորհուրդ որուն անդամներն
են՝

Ատենապետ՝ Գասպար Ասֆահանի
Ատենադպիր՝ Յակոբ Ետալեան
Գանձապահ՝ Տոքթ. Ժան Գասապեան
Անդամներ՝ Արմէն Զոլոյեան եւ Սիլվա
Ճանոյեան:

Մասնաճիւղի մնացեալ բաժինները կը վա-
րէ վարչութիւնը ուղղակի հսկողութեամբ:

Մարզիչի պաշտօնին կը հրաւիրուին պաս-
քեթպոլ՝ Հրայր Պաղտատեան, Ֆութպոլ՝ Ռոս-
տոմ Զալրգեան:

Անդամական ընդհանուր թիւն է 353, հե-
տեւեալ ենթաբաժանումով.-

- Սկաուստական շարքեր՝ 161
- Մարզիկներ՝ 69
- Օթանդակ անդամներ՝ 123

Մասնաճիւղը կ'ունենայ լայն գործունէու-
թիւն մարզական եւ սկաուստական բաժիննե-
րով: Կը սարքուի պասքեթպոլի լուսազարդ-
ուած դաշտ Սիմիթեան շէնքերու բաց հողա-
մասին վրայ: Հաստութեան կարգ մը ձեռ-
նարկներ կ'օթանդակեն այս աշխատանքներու
իրականացման:

17 Փետրուար 1980ի տեղի կ'ունենայ մաս-
նաճիւղի անդամական 12րդ ընդհանուր ժողո-
վը:

Ժողովի վերջին օրակագրով կ'ընտրուի
մասնաճիւղի նոր վարչական կազմը՝

Ատենապետ՝ Սարգիս Սարգիսեան
Ատենադպիր՝ Յակոբ Թաշճեան
Գանձապահ՝ Կիպօ Հապիպեան
Խորհրդականներ՝ Ճորճ Էքմէքճեան, Սերժ
Գատեան, Յովսէփ Մարգարեան, Պետիկ Սա-
պունճեան, Սարգիս Աճէմեան եւ Եղիա Յա-
կոբեան:

Մասնաճիւղի անդամական աճը մեծ թա-
փով կը զարգանայ ընդհանուր թիւը կը բարձ-
րանայ 414ի: Սկաուստականի կողքին մարզա-
կան ճիւղերու եւ մարզիկներու թիւը արագօ-

րէն կը բազմանան: Ֆութպոլի եւ պասքեթպոլի
կողքին մասնաճիւղը կը կիրարկէ նաեւ փինկ-
փոնկ: Մնտուկի ելեւմուտքի ընդհանուր գու-
մարն է 225.000 լիբ. ոսկի:

1981 տարուայ վարչական կազմին անդամ-
ներն են՝ Սարգիս Սարգիսեան, Սարգիս Աճէմ-
եան, Յակոբ Թաշճեան, Կիպօ Հապիպեան, Մե-
լիք Գուլայեան, Երուանդ Էթիէմեգեան եւ Պե-
տիկ Սապունճեան: Վարչութեան օթանդակ
յանձնախումբերն են՝ Ֆութպոլ, պասքեթպոլ,
սկաուստական խորհուրդ, դաշտի յանձնա-
խումբ, աղուճի հողի գնման եւ շինութեան
յանձնախումբեր: Մարզական եւ սկաուստական
բաժինները թեքնիքօրէն կը զարգանան: Անդա-
մական ընդհանուր թիւը կը բարձրանայ 458ի:
Մարզիկները արկածներու դէմ ապահովագր-
ուած են: Խումբերը կը մասնակցին բազմաթիւ
միջ-ակմբային մրցաշարքերու:

Կիպրական Գերավնոս աղուճի հրաւէրով,
10 Սեպտեմբեր 1981ին 65 հոգինոց պատուիրա-
կութեամբ մը մասնաճիւղի տղոց եւ աղջկանց
պասքեթպոլի խումբերը մեկնեցան Կիպրոս ուր
հնգօրեայ կեցութեան ընթացքին մրցումներ
ունեցան Գերավնոսի եւ Էթիի աղուճի խում-
բերուն դէմ, այցելեցին Հ.Ե.Մ.ի աղուճը, Նա-
րեկ Վարժարան, Լիբանանի դեսպանատուն եւ
ներկայ գտնուեցան Լիմասոլի գինիի փառատօ-
նին:

Այս տարեշրջանին աղուճի հողի գնման
աշխատանքները կ'արդիւնաւորուին: 20 Հոկ-
տեմբեր 1981ին Անդրանիկ Քէօրքիլեանի
գրասենեակին մէջ կը կայանայ Մըզհէրի շրջա-
նի թիւ 169 եւ 170 հողաչերտերու, յաջորդաբար
1017 եւ 875 քառակուսի մեթր տարածքով, հո-
ղաչերտերու գնման համաձայնագիր: Իրարու
կից զոյգ հողաչերտերու տարածութիւնն է
1892 քառ.մեթր: Իւրաքանչիւր քառակուսի
մեթրի գին ճշդուած է 300 լիբ. ոսկի ընդհա-
նուր գումար 567.600 լիբ. ոսկի որմէ հողա-
տէր՝ Կարօ Օհանեան կը նուիրէ 17.600 լ.ոսկի:
Մնացեալ 550.000 լիբ. ոսկի կը վճարուին հե-
տեւեալ ձեւով.- Փոխառութիւններ Շրջանային



Անթիլիասի մասնաճիւղի պասքեթպոլի աղջկանց առաջին խումբը

վարչութեան 100.000 լիբ. ոսկի Պետիկ Սապունճեանէ, Սարգիս Աճեմեանէ, Սարգիս Սարգիսեանէ, Յովսէփ Մարգարեանէ եւ Արա Յակոբեանէ 10.000 հազարական լիբ. ոսկի: Golden Beachի մէջ կայացած նուիրահաւաքի ճաշկերոյթէն գոյացած գումարը՝ 312.000 լ. ոսկի եւ հողատիրոջ յետնեալ պարտքը պրն. Արա Երեւանեանի ընկերութեան 88.000 լիբ. ոսկի:

31 Յունուար 1982ի մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովի ընտրութեամբ նախորդ տարեշրջանի վարչական կազմէն կը դադրի՝ Երուանդ Էթիէմեզեան: Վարչական նորընտիր անդամներն են՝ Սերժ Գատեան, Յովսէփ Մարգարեան եւ Սիմոն Ալեքսանեան: Այս կազմը կը գործէ մինչեւ Նոյեմբեր ամսուայ կէսը:

Սկստական բաժինը կը զարգանայ արագընթաց քայլերով ղեկավարութեամբ մասնաճիւղի խմբապետ Գառնիկ Թորիկեանի: 26 Յունիսին Անթիլիասի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան վանքի շրջաբակին մէջ նորագիր արենոյշներ եւ արիներ կը կատարեն իրենց սկստական խոստումը - [Մ/34.38]:

Անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 507ի:

Ակումբի հողաչերտի կառուցման ծրագիրը կը շարունակուի զարգանալ Աղբալեան Կոմիտէութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային վարչութեան մասնակցութեամբ նախկին հողաչերտերուն կը միացուին երկու այլ կից հողաչերտեր ընդհանուր տարածութիւնը բարձրացնելով 3500 քառ. մեթրի:

5 Օգոստոս 1984ին ժիպէյլի «Թուչնոց Բոյն» որբանոցի դաշտին վրայ մասնաճիւղի խմբապետութիւնը կը կազմակերպէ սկաուտներու յատուկ մարզական օր մասնակցութեամբ Պոլսի-Համուտի եւ ժրտէյտէի մասնաճիւղի սկաուտներուն:

12 մարտ 1986ին չմշկումի ճիւղի մարզիկներէն Սեդա Ապելեան, Պետիկ Պաղչեճեան, Ժագ Կիմեճեան, Նազարէթ Գիլէճեան, Յակոբ Դարբինեան, Մաթիկ Մաթէոսեան եւ Շահէ Ասուրեան կը մասնակցին Ֆեսերասիոնի կազմակերպած մրցումներուն արձանագրելով պատուաբեր արդիւնքներ:

1987 տարուայ վարչութեան կազմին կ'անդամակցին՝

- Ատենապետ՝ Սարգիս Աճէմեան
- Փոխ Ատենապետ՝ Պետիկ Սապունճեան
- Ատենադպիր՝ Յակոբ Թաճեան
- Գանձապահ՝ Կիպօ Հապիպեան
- Հաշուապահ՝ Մելիք Գուլայեան
- Խորհրդականներ՝ Յարութ Գարակէօզեան եւ Յարութ Կէսիկեան:

4 Մայիս 1988ին նոր վարչութեան կազմի անդամներ կը մնան նոյները առաւել՝

Խորհրդականներ՝ Աւագ Խաչատուրեան, Յակոբ Թնճուկեան եւ Յարութիւն Մնչերեան:

Ակումբ - մարզադաշտ

1973ին Անթիլիասի Մըզներ շրջանին մէջ, Համագգայինի Ճեմարանի շինութեան համար սեփականացուած շուրջ 40.000քառակուսի մեթր տարածութեամբ հողաշերտին վրայ Լիբանանի Հ.Մ.Ը.Մ.ի ծրագիրներու կարգին Անթիլիասի մասնաճիւղը կը յուսար ունենալ իր կարիքները գոհացնող ակումբի եւ մարզադաշտի բաժիններ: Սակայն Համագգայինի Կեդրոնական վարչութեան շինարարական ծրագիրները կարելի չեղաւ համադրել Հ.Մ.Ը.Մ.ի ծրագիրներուն հետ եւ Համագգայինը վերադարձուց Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային վարչութեան կողմէ

մէ վճարուած եւ 20.000 քառ. մեթր բաժնի փոխարժէքը ներկայացնող 100.000 լիբ. ոսկին:

Այսպէսով Անթիլիասի մասնաճիւղի մինչ այդ ապահով համարուող ակումբի եւ դաշտի տիրանալու ծրագիրները կ'անհետանային:

1981ին, Մըզների նոյն շրջանին մէջ, Անթիլիասի մասնաճիւղը յաջողեցաւ սեփականացնել 2000 քառ. մեթր տարածութեամբ հողաշերտ մը: Հողաշերտի փոխարժէքի վճարման նպատակով 28 Նոյեմբեր 1981ին վարչութիւնը կազմակերպեց ճաշկերոյթ մը որուն ընթացքին հողաշերտի գնման Ֆոնտին հանգանակուեցաւ 600.000 հազար լիբ. ոսկի: Այսպէսով Անթիլիասի մասնաճիւղի ակումբի եւ դաշտի շինարարական ծրագիրներու հիմնական բաժինը՝ հողաշերտը ապահովուեցաւ: (Տես՝ 1981 տարեշրջանի գործունէութեան նախորդող էջերու բաժինը)

ԺԸՏԵՅՏԵ

1974ին հիմնուած ժրտէյտէի մասնաճիւղը 1975-1990 տարեշրջաններուն կ'ունենայ մարզական եւ սկաուտական կարեւոր գործունէութիւն:

Մասնաճիւղի առաջին սկաուտական խորհուրդին մաս կազմած են.-

- Ատենապետ՝ Ներսէս Մելքոնեան
- Ատենադպրուհի՝ Տիգրանուհի Սարգիսեան
- Գանձապահ՝ Նազարէթ Աշճեան
- Խորհրդականներ՝ Նիկողոս Մարունեան եւ Մարտիրոս Փանոսեան:

Սկաուտական գործունէութիւնը կը բաժնուի Ֆանարի եւ Մար Եոլսէֆի գոյգ շրջաններուն վրայ: Առաջին եղանակին շարքերու ընդհանուր թիւն է 145:

2 Փետրուար 1975ին մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ՝

- Ատենապետ՝ Պետրոս Շեմմեսեան
- Փոխ ատենապետ՝ Գէորգ Աւրնեան
- Ատենադպիր՝ Նիկողոս Մարունեան

Գանձապահ՝ Ազատ Աբրահամեան
Հաշուապահ՝ Յակոբ Քելեշեան

Խորհրդականներ՝ Գէորգ Ալաճաճեան,
Յակոբ Գարակէօզեան, Վաչէ Տարաքճեան եւ
Հրանդ Պետրոսեան:

Մարզական գլխավոր ճիւղն է ֆուտբոլը
ուր երկրորդական դասի 4 խումբեր շուտով
կը կազմուին որոնցմէ զտուեցաւ մասնաճիւղի
առաջին կազմը: Վերջինս 26 Ապրիլին կը յաջո-
ղի Շրջանային վարչութեան կազմակերպած
միջ-մասնաճիւղային մրցաշարքի ախոյեանու-
թեան տիրանալ:

1976ին վարչական նոյն կազմը կը գործէ
երկրորդ տարեշրջան մը եւս: Մասնաճիւղի
սկաուս ընդհանուր խմբապետն է Մարտիրոս
Փանոսեան: Մարզական գործունէութիւնը

զգալի նահանջ կ'արձանագրէ շրջանի անապա-
հով վիճակին պատճառով: Օժանդակ 30 ան-
դամներէն 10 մեկնած են երկրէն: Միւս կողմէ
սկաուսական բաժինը կը զարգանայ յատկա-
պէս Ֆանարի շրջանին մէջ թուական յիսուն
առ հարիւր համեմատութեան աճով: Մասնա-
ճիւղի ելեւմուտքի ընդհանուր գործառնու-
թեան գումարն է 24.500 լիբ. թղթոսկի:

Տարեշրջանի սկաուսական խորհուրդի ան-
դամներն են՝ Սալբի Սարգիսեան, Ալիս Գոճայ-
եան, Մարո Հաւանճեան, Ներսէս Մելքոնեան,
Նազարէթ Աշճեան, Գէորգ Մկրտիչեան եւ
Մարտիրոս Փանոսեան:

13 Մարտ 1977ին կայացած մասնաճիւղի
անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ տա-
րեշրջանի նոր վարչական կազմ՝



Փրտէյտէի մասնաճիւղի «ֆանարի» ֆուտբոլի Ա. խումբը

Ատենապետ՝ Գէորգ Աւրնեան
 Ատենադպիր՝ Ներսէս Մելքոնեան
 Գանձապահ՝ Հրաչ Յովհաննէսեան
 Հաշուապահ՝ Յակոբ Քէլէշեան
 Ֆուլթայոլի պատասխանատու՝ Յակոբ Գարակէօզեան
 Պասքեթբոլի պատասխանատու՝ Հրանդ Պետրոսեան

Սկսած սկսած խորհուրդի ներկայացուցիչ՝ Գէորգ Ալաճաճեան:

Այս տարեշրջանին մասնաճիւղի խմբապետ կը նշանակուի Համբար Հալաճեանը:

Ֆուլթայոլի խումբերը որոնք վերակազմութեան կը կարօտին, կը յանձնուին մարզաճիւղին յատուկ նշանակուած յանձնախումբի մը որուն կ'անդամակցին, Ճորճ Չաղլասեան, Մանուէլ Փափազեան, Գէորգ Գոճաաւազեան, Աւօ Ղազարեան, Մովսէս Աղամեան, Գարեգին Ահարոնեան եւ Մամիկոն Պետրոսեան: Չորս խումբեր կը գործեն այս տարեշրջանին՝ մասնաճիւղի ներկայացուցչական խումբ, Լէյլաւանի խումբ, Ռաուտայի խումբ եւ Նաւասարդեան: Եղանակի աւարտին այս խումբերէն հինգ անդամներ կը փոխանցուին Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրուսի լիբանանեան ներկայացուցչական կազմին:

Մասնաճիւղի մարզական խումբերը իրենց փորձերը կը կատարեն Ժագ Նորաշխարհեանի Ամանոսի դաշտին վրայ եւ Ֆանարի դաշտին վրայ որ կը լուսաւորուի վարչութեան ծախսերով:

Տարեշրջանին վարչութեան սնտուկի մուտքերը ընդհանուր գումարն է 27.328 լիբ. թղթոսկի, ելք՝ 21.558 լ.ո.:

29 Յունուար 1978ին մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ՝

Ատենապետ՝ Գէորգ Աւրնեան
 Փոխ ատենապետ՝ Յակոբ Գարակէօզեան
 Ատենադպիր՝ Հուրի Շեմմեսեան

Գանձապահ՝ Հրաչ Յովհաննէսեան
 Հաշուապահ՝ Հրանդ Պետրոսեան
 Յանձնախումբերու ներկայացուցիչներ են՝ Ֆուլթայոլ՝ Ճորճ Չաղլասեան, փինկ փոնկ Մամիկոն Պետրոսեան, արխիւային անդամական՝ Սօնա Աբրահամեան, սկսած սկսած խորհուրդ՝ Գէորգ Ալաճաճեան:

Սկսած սկսած խորհուրդի կազմին կ'անդամակցին՝ Սալբի Սարգիսեան, Ալիս Գոչոյեան, Սիլվա Մելքոնեան, Պայծառ ..., Վարուժան Գազանճեան, Միհրան Գուլթոճեան, Աւօ Սիլվահեան եւ Զոհրապ Գազանճեան:

Ֆուլթայոլի խումբերու թիւին վրայ այս եղանակին կ'աւելնայ Րաֆֆի խումբը: Մասնաճիւղի ներկայացուցչական խումբը կը տիրանայ Լիբանանի միջ-մասնաճիւղային երկրորդական խումբերու մրցաշարքին ախոյեանութեան:

Պասքեթբոլի խումբերը իրենց փորձերը կը կատարեն Թորոսեան վարժարանի դաշտին վրայ:

Փինկ փոնկը զօրացնելու համար վարչութիւնը կը գնէ երկու նոր սեղաններ որոնք կը զետեղուին Մար Եոլսէֆի եւ Նիկոլ Դոլման ապարաններուն մէջ:

1979 տարուայ մասնաճիւղի վարչական կազմի անդամներն են՝

Ատենապետ՝ Գէորգ Աւրնեան
 Փոխ ատենապետ՝ Յակոբ Գարակէօզեան
 Քարտուղարուհի՝ Սիլվա Մելքոնեան
 Գանձապահ՝ Հրաչ Յովհաննէսեան
 Հաշուապահ՝ Հրանդ Պետրոսեան
 Խորհրդականներ՝ Սօնա Աբրահամեան, Թորոս Գոճաաւազեան, Ճորճ Չաղլասեան եւ Միքայէլ Կերէքմեզեան:

Ընթացիկ գործունէութեան տարեշրջան մը քաղաքական եւ ապահովական պայմաններու մէջ խտացուած: Վարչութեան գլխաւոր նախաձեռնութիւնը պիտի ըլլար Ֆանարի մէջ ՀԱՊԵԱՍԻ տնօրէնութենէն արտօնութիւն



Ժտէյտէի մասնաճիւղի 1979 տարեշրջանի Վարչական կազմը
նստած՝ Սօնա Աբրահամեան, Յակոբ Գարակէօզեան, Գէորգ Աւրնեան, Սիլվա Մելքոնեան
նստքի՝ Թորոս Գոճակէօզեան, Հրանդ Պետրոսեան, Ճորճ Չաղլասեան, Հրաչ Յովհաննէսեան,

ստանալ տեղւոյն մէջ մարզադաշտ մը սարքելու նպատակով եւ այս նախաձեռնութեան գործնական առաջին քայլերը առնել:

1981 տարուայ վարչութեան անդամներու աշխատանքներու բաժանումը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.-

Ատենապետ՝ Գէորգ Աւրնեան
Փոխ ատենապետ՝ Յակոբ Գարակէօզեան
Ատենադպիր՝ Հրանդ Պետրոսեան
Գանձապահ՝ Հրաչ Յովհաննէսեան
Հաշուապահ՝ Առաքել Տօնիկեան
Խորհրդականներ՝ Գէորգ Ալաճաճեան,

Ճորճ Չաղլասեան, Սօնա Աբրահամեան եւ Տիգօ Կէօքճեան:

Սկստուական խորհուրդը եւ մարզական յանձնախումբեր կը գործակցին վարչութեան, վարելով մասնաճիւղի ընթացիկ գործունէութիւնը: Մարզական մրցումները կը սահմանափակուին քոյր մասնաճիւղերու հետ հանդիպումներով: Մասնաճիւղը ունի Ֆուտպոլի 8 խումբեր, պասքեթպոլի սղոց եւ աղջկանց խումբեր: Փորձերը կը կատարուին Հռիփսիմեանց եւ Էհրամճեան վարժարաններու բակերուն մէջ:

Ընկերային յանձնախումբը կը տանի դաստիարակչական աշխատանք 31 Յունուար 1982ին անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչութեան կազմը կը ներկայա- նայ հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Յակոբ Գարակէօզեան

Փոխ ատենապետ եւ գանձապահ՝ Հրանդ Պետրոսեան

Ատենադպիր՝ Առաքել Տօնիկեան

Քարտուղար՝ Կիրակոս Յակոբեան

Խորհրդականներ՝ Ճորճ Չաղլասեան, Տիգրան Խըտրըլարեան եւ Մարիէթ Գալայճեան:

Վարչութեան կ'օժանդակէ Սկաուտական Խորհուրդը որուն կ'անդամակցին, Պերճ Ճամպուլեան, Յարութ Գրիօղլեան, Զոհրապ Գանտաճարեան, Սօնա Աբրահամեան, Սօնիկ Աֆարեան, Ալիս Գոճոյեան եւ մասնաճիւղի ընդհանուր խմբապետուհի՝ Անի Ճէրէճեան, ապա Սօնա Պօղոսեան:

Մասնաճիւղի մշակած մարզաճիւղերը կը մնան՝ ֆուտպոլը, պասքեթպոլը եւ փինկ փոնկը:

27 Յունուար 1985ին, Ազգային Խանամիրեան գոլէճի սրահին մէջ մասնաճիւղը կը տօնէ իր հիմնադրութեան 10ամեակը: Օրուայ բանախօսն է Գեղանի էթիէմէզեան: Հանդիսութեան փակման պատգամը կը փոխանցէ Գեղամ վրդ. Խաչերեան, որուն խօսքերէն կ'արձանագրենք՝ «... Տասնամեայ այս գործունէութեան նուէրը ի՞նչ կրնայ ըլլալ հայութեան եթէ ոչ բոլոր մը աւելի գիտակից սերունդ, հարազատօրէն հայութեամբ բարախող սրտեր եւ խօսքին նուիրականութեան հաւատացող հայ պատանիներ:

«... Մտնենք Հ.Մ.Ը.Մ.ի «Փոքր ածուէն» ներս, հոն տեսնելու եւ գնահատելու հին եւ նոր Հ.Մ.Ը.Մ.ական մշակներու «բալուն Արուսեան» գործերը:

«Թող Օրինեալ ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնակերտերուն յիշատակը եւ պիրկ ու առոյգ մնան անսակարկ մշակներուն բալունները»:

1986 տարուայ մասնաճիւղի վարչութեան անդամներն են՝ Գէորգ Աւրնեանի ատենապետութեամբ՝ Շուշիկ Ապրիլեան, Հրանդ Պետրոսեան, Հրաչ Յովհաննէսեան, Արշօ Պօղոսեան, Սեդրակ Քէօֆթէեան, Գօգօ Պանճեան, Փանոս Այվազեան եւ Միհրան Ադամեան:

Այս կազմի գլխաւոր իրականացումը պիտի ըլլար պասքեթպոլի դաշտի շինարարական աշխատանքներու ամբողջացում որուն համար վարչութիւնը նշանակեց յատուկ յանձնախումբ մը հետեւեալ անդամներէն.- Զոհրապ Գանտաճարեան, Յովհաննէս Գալայճեան, Պետրոս Շեմմեսեան, Յակոբ Գարակէօզեան, վարչութեան ներկայացուցիչ՝ Գէորգ Աւրնեան:

Ութամսեայ գործունէութեան ժամանակաշրջանի ընթացքին (Ապրիլ 1986 - Դեկտեմբեր 1986) մասնաճիւղի նիւթական գործառնութեանց պատկերն է. մուտք՝ 229.465 լ.ո. ելք՝ 216.237 լիբ. ոսկի:

ՊԱԹՐՈՒՆ

1987ի գարնան, հիւսիսային Լիբանանի Պաթրոն քաղաքի Հայ բնակչութեան փափաքին ընդառաջելով, Շրջանային Վարչութիւնը քննեց տեղւոյն կացութիւնը եւ խորհրդակցաբար Թրիփոլի Հ.Մ.Ը.Մ.ի վարչութեան հետ նշանակեց առժամեայ վարչութիւն գլխաւորութեամբ ատենապետ՝ Ճորճ Ֆսթքճեանի, որուն բնակարանին մէջ տեղի ունեցաւ առաջին հաւաքը:

25 Հոկտեմբեր 1987ին տեղի կ'ունենայ մասնաճիւղի հիմնադրութեան ժողով որուն ընթացքին Շրջանային Վարչութիւնը կը պարգեւատրէ Յարութիւն Թաթեանը եւ Ազատ Արամեանը իրենց բերած ծառայութեան համար -[Ծ/71-72.21]:

Պաթրոնի քաղաքապետութիւնը մասնաճիւղին կը օրամագրէ ազատ թողուած բակ մը ուր մասնաճիւղի անդամները կը սարքեն մարզադաշտ: Կը կազմուին վոլիպոլի խումբ եւ

գայլիկ արծուիկներու վոհմակ: Վարչութիւնը կը կազմակերպէ պարանցիկ ճաշկերոյթի նպաստ մասնաճիւղի գանձին: Մասնաճիւղը կը հաշուէ 32 անդամ եւ 26 գայլիկ-արծուիկներ:

7 Մայիս 1988ին տեղի կ'ունենայ անդամական ընդհանուր ժողով ուր կ'ընտրուի նոր վարչական կազմ: Սակայն նորընտիր վարչութիւնը, ներքին անհասկացողութիւններու պատճառով չի յաջողիր աշխատանքի ձեռնարկել եւ մասնաճիւղը կը դադրի գործելէ:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆ ԷՍՏԻՄԵՆ

Կազմակերպչական

Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կազմակերպութեան վերածուելէն ետք, Լիբանանի Շրջանին յատուկ անդրանիկ Ներկայացուցչական ժողովը՝ (ընդհանուր շարքին 21րդ. Ր. Բ. նստաշրջան), տեղի ունեցաւ 11 եւ 12 Յունուար 1975ին նախագահութեամբ Յովհաննէս Պերպերեանի եւ Վարուժան Մուրատեանի, քարտուղարութեամբ Աշոտ Տէր Խաչատուրեանի եւ Վարուժան Շամլեանի: Ժողովի գլխաւոր օրակարգերն էին Պատգամաւորական Ա. Ընդհանուր ժողովի գեկուցում, 1973-74 տարեշրջանի գործունէութեան տեղեկագրի ընթերցում եւ քննութիւն, Լիբանանի ներքին կանոնադրութեան մշակում: Ժողովի վերջին օրակարգով ընտրուեցաւ Լիբանանի Շրջանային վարչութիւն հետեւեալ կազմով.-

Ատենապետ՝ Տոքթ. Միսաք Արզումանեան

Ատենադպիր՝ Վարուժան Շամլեան

Գանձապահ՝ Ժագ Մաքինաճեան

Խորհրդականներ՝ Յակոբ Համամճեան, Զոհրայ Այվազեան, Պարգեւ Պասմաճեան, Նուպար Խանամիրեան, Միհրան Շիմշիրեան եւ Յարութիւն Հալէպլեան:

Այս առաջին Շրջանային վարչութեան գործունէութեան գլխաւոր առանցքը եղաւ կազմակերպչականը. մասնաճիւղերու նոր

վարչութեանց ընտրութիւն, շրջանային յանձնախումբերու նշանակում եւ անոնց փոխ յարաբերութեան եւ գործունէութեան հսկողութիւն:

1977ին 22րդ Շրջանային Ներկայացուցչական ժողովը ընտրեց նոր վարչական կազմ՝

Ատենապետ՝ Տոքթ. Միսաք Արզումանեան
Փոխ ատենապետ՝ Յովհաննէս Տէր Յարութիւնեան

Ատենադպիրներ՝ Վարուժան Մուրատեան եւ Տիգրան Զիմպաշեան

Գանձապահ՝ Վարուժան Շամլեան

Հաշուապահ՝ Պատրիկ Կիւլպենկեան

Խորհրդական՝ Յակոբ Համամճեան:

Շրջանային Սկսուտական Խորհուրդի, մարզական, ֆութպոլի, Լեվամի եւ արխիւային յանձնախումբերու կազմութեան կողքին այս կազմը իրականացուց ազգային եւ միութենական շարք մը հրապարակային ելոյթներ՝ Մայիսեան Փառատօն, Յովհաննէս Շահինեանի մեծարանքի հանդիսութիւն եւ պարահանդէս:

1979-80 տարեշրջանի գործունէութեան համար Լիբանանի 23րդ. Շրջանային Ներկայացուցչական ժողովէն ընտրուած Շրջանային վարչութեան անդամներն են՝

Ատենապետ՝ Նշան Պապիկեան

Փոխ ատենապետ՝ Յովհաննէս Տէր Յարութիւնեան

Ատենադպիր՝ Պետրոս Շեմմեսեան

Գանձապահ՝ Վարդգէս Հայրապետեան

Հաշուապահ՝ Ժան Ապաճեան

Խորհրդականներ՝ Արա Յակոբեան, Յովհաննէս Ծատուրեան, Պետրոս Վեքիլեան եւ Յարութիւն Մարկարոսեան յետագային փոխարինուած Բաֆֆի Գատեանով:

Աւանդական բոլոր շրջանային յանձնախումբերու կազմութիւնէն եւ զանոնք գործի լծելու կողքին, Շրջանային վարչութեան ուղղակի հոգածութեան նիւթը եղաւ ֆութպոլի ներկայացուցչական խումբի հոգատարութիւնը եւ երկրորդական խումբերու մրցաշարքերու



1979-1980 տարիներու Լիբանանի Շրջանային վարչութեան կազմը՝

Պետրոս Վեքիլեան, Արա Յակոբեան, Յովհաննէս Տէր Յարութիւնեան, Պետրոս Շէմսեան, Նշան Պապիկեան, Բաֆֆի Գատեան, Յովհաննէս Ծատուրեան, Վարդգէս Հայրապետեան, Ժան Ապաճեան

կազմակերպութիւնը: Միջ-մասնաճիւղային մրցաշարքեր կազմակերպուեցան պասքեթպոլի եւ փինկփոնկի խումբերուն միջեւ:

Լիբանանեան մամուլի կողմէ յատուկ գնահատանքի արժանացաւ ԼԵՎԱՄի գործունէութիւնը: Յատուկ խնամքի արժանացաւ մասնաճիւղերու գործունէութիւնը, Շրջանային վարչութեան ներկայացուցիչներու ուղղակի մասնակցութեամբ անոնց ժողովներուն:

24րդ Շրջանային ներկայացուցչական ժողովը գումարուեցաւ 21 եւ 22 փետրուար 1981ին Դրօ ակումբի սրահին մէջ: Յետ Շրջա-

նային վարչութեան գործունէութեան տեղեկագրի քննութեան, ժողովը զայն կ'որակէ "Յոյժ Գնահատելի" բանաձեւումով: Նորընտրելի վարչութեան կողմէ գործադրելի կարեւորագոյն առաջարկը կ'ըլլայ Պուրճ Համուտի մէջ ունենալ կեդրոնական ակումբ եւ մարզադաշտ: Ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ ուր նախորդ կազմի միայն խորհրդական անդամները կ'ենթարկուին փոփոխութեան եւ կը մնան հետեւեալները՝ Ժոզէֆ Նալպանտեան, Արա Յակոբեան, Պատրիկ Կիւլպենկեան եւ Բաֆֆի Գատեան:



1981 Համագաղութային Ա. խաղերուն մասնակից՝
Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Պասքեթպոլի տղոց ներկայացուցչական խումբը

Բնականոն երկամեակի մը գործունէութեան ընթացքին, Շրջանային Վարչութիւնը դժուարութիւններ կ'ունենայ Պէյրութի մասնաճիւղի վարչութեան հետ արգիլելով անոր պասքեթպոլի տղոց եւ աղջկանց խումբերու մասնակցութիւնը ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական առաջին խաղերուն Գանատայի մէջ, հակառակ Կեդրոնական Վարչութեան հրահանգին: Պուրճ Համուտի մէջ Կեդրոնական ազգային-համալիրի մը շինարարական ծրագիրը հակառակ լուրջ ուսումնասիրութեան չ'իրականանար:

Լիբանանի 25րդ Շրջանային Ներկայացուցչական ժողովը սեղի կ'ունենայ 3էն 5 Դեկ-

տեմբեր 1982ին: Մասնաճիւղերու եւ Շրջանային Վարչութեան 1981-82 երկամեակի գործունէութեան սեղեկագրի ընթերցումէն եւ քննութիւնէն ետք կ'ընտրուի նոր Շրջանային Վարչութիւն հետեւեալ կազմով.-

Ատենապետ՝ Տոքթ. Միսաք Արզումանեան
Փոխ ատենապետ՝ Ժիրայր Խաչատուրեան
Ատենադպիր՝ Կարօ Թիւթիւնճեան
Արաբերէնի քարտուղար՝ Ճորճիկ Ռասուկեյենեան

Գանձապահ՝ Վարուժան Շամլեան
Հաշուապահ՝ Պատրիկ Կիւլպենկեան
Խորհրդական՝ Ժողէֆ Նալպանտեան:

Այս կազմի գլխավոր ճիգերը կեդրոնացան սկաուտական բաժինին վրայ որուն համար ստեղծուեցաւ սարագներու կեդրոնական միջերանոց նախկինին եռապատիկ պիւտճէով: Շինարարական գետնի վրայ ուսումնասիրուեցաւ ժիրայր Խաչատուրեանի Այն Սաատէի շրջանին մէջ գտնուող եւ Ազգային Իշխանութեան նուիրած 13.000 քառ. մէթր սարածութեամբ հողաչերտին վրայ ֆութպոլի դաշտի մը շինութեան ծրագիրը:

Շրջանային վարչութեան նիւթական երկամեայ գործունէութեան պատկերն է մուտք՝ 166.000 Լիբ.Ոսկի ելք՝ 164.000 Լիբ. ոսկի: Ժամանակաշրջանը կ'երկարի մինչեւ 1985ի սկիզբը:

13 Յունուար 1985ին կ'ընտրուի նոր Շրջանային վարչութիւն՝

Ատենապետ՝ Յովհաննէս Տէր Յարութիւնեան

Փոխ ատենապետ՝ Յովսէփ Մարգարեան

Ատենադպիր՝ Յարութ Զեքիճեան
Գանձապահ՝ Ներսէս Տօնիկեան
Հաշուապահ՝ Երուանդ Եթեմեզեան
Խորհրդականներ՝ Ժագ Պոյաճեան եւ Ժողէֆ Նալպանսեան:

1985ի Ապրիլէն սկսեալ այս կազմին կը միանան Յարութիւն Մարկարոսեան եւ Անդրանիկ Պաղտասարեան: Վերջինս կը ստանձնէ հաշուապահի պաշտօնը: Այս կազմին կ'օժանդակեն 10 շրջանային յանձնախումբեր՝ մարզական, աթլետիզմի, ֆութպոլի, ԼԵՎԱՄի, Զաւարեան դաշտի, հաշուեքննիչ, տնտեսական, մամլոյ, արխիւային եւ սկաուտական խորհուրդ:

1985ի Յունիսին 22 անդամներէ բաղկացող ֆութպոլի պատուիրակութիւն մը կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային Բ. խաղերուն Լոս Անճելըսի մէջ:

1 Մարտ 1987ին Լիբանանի Շրջանային Ներ-



Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Պասքէթպոլի վերերան մարպիկները - 1984



Բացում Չաւարեան Մարկադաշտի

կայացուցչական 28րդ ժողովի վերջին նիստին կ'ընտրուի Շրջանային նոր վարչական կազմ մասնակցութեամբ հետեւեալ անդամներուն.-

Ատենապետ՝ Վարդգէս Հայրապետեան
Փոխ ատենապետ՝ Յովսէփ Մարգարեան
Ատենադպիր՝ Յարութ Զեքիճեան
Գանձապահ՝ Ներսէս Տօնիկեան
Հաշուապահ՝ Վարուժան Նաճարեան

Խորհրդականներ՝ Երուանդ Եթեճմեզեան,
Յարութիւն Մարկարոսեան, Յովհաննէս Ծատուրեան եւ Յակոբ Խաչերեան:

28 Ապրիլին Լիբանանի մասնաճիւղերու կազմակերպչական վիճակը զօրացնելու նպատակով Շրջանային Վարչութիւնը կը կազմա-

կերպէ միջ-վարչական հանդիպում: Պուրճ Համուտի քաղաքապետարանի մարզադաշտի մօտակայ Չաւարեան դաշտի շինութիւնը Շրջանային Վարչութեան կարեւորագոյն իրականացումը պիտի ըլլար: Դաշտի բացման հանդիսութիւնը տեղի կ'ունենայ 11 Հոկտեմբեր 1987ին, հովանաւորութեամբ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Արամ Արք. Քեչիչեանի եւ նախագահութեամբ դաշտի յարդարման բարերարներ Տէր եւ Տիկին Յարութիւն Մնջրեաններու - [Ծ/71-72.16]:

13էն 15 Մայիս 1988ին Լիբանանի 29րդ Շրջանային Ներկայացուցչական ժողովը կ'ընտրէ նոր Շրջանային վարչութեան կազմ՝

Ասենապետ՝ Վարդգէս Հայրապետեան
 Փոխ ասենապետ՝ Ժագ Պոյաճեան
 Ասենադպիր՝ Սարգիս Օվայեան փոխարին-
 ուած Գէորգ Թաշճեանով
 Գանձապահ՝ Պետիկ Սապունճեան
 Հաշուապահ՝ Ժիրայր Պեզճեան
 Խորհրդականներ՝ Յարութիւն Մարկարոս-
 եան, Հրանդ Խոզոզեան, Վարուժան Գէորգ-
 եան եւ Գէորգ Թաշճեան:

Շրջանային վարչութեան նստավայրը եր-
 կամեակի վերջաւորութեան կը փոխադրուի
 Շաղգոյեան կեդրոն: 1988ի Հայաստանի երկ-
 րաշարժի աղետին առիթով մասնաճիւղերու
 սկառուները կ'օժանդակեն Լիբանանահայ Օզ-
 նութեան Խաչի եւ Ազգային Առաջնորդարանի

նպաստներ հաւաքող եւ ծրարող յանձնախում-
 բերուն: Շրջանը ներկայացնող 61 անդամներէ
 բաղկացող պատուիրակութիւն մը կը մաս-
 նակցի համա-Հ.Մ.Ը.Մ.ական Դ. ընդհանուր
 բանակումին 20էն 30 Յուլիս 1990ին «Այա
 Անդրէա»յի մէջ Յունաստան:

Շրջանային Մարզական Գործունէութիւն

Շրջանային ներկայացուցչական խումբե-
 րու յանձանցումը, միջ-մասնաճիւղային
 խորհրդակցական կամ Շրջանային ներկայա-
 ցուցչական ժողովներու որոշումով, Շրջանա-
 յին վարչութեան կը յանձնուին: 1975-1990 ժա-
 մանակաշրջանին Շրջանային վարչութեան են-
 թակայ են ֆութպոլի ներկայացուցչական



Լիբանանի հեծելաճակատի ներկայացուցչական խումբը



Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Սկսուսական Խորհուրդ - 1985-1986

խումբը, ԼԵՎԱՄը (լիբանանահայ երկրորդական վարժարաններու մարզախաղեր) եւ աթլետիկ միջոցառումներու գործունէութիւնը: Այս ճիւղերու հսկողութեան համար Շրջանային վարչութիւնը կը նշանակէ Շրջանային յանձնախումբեր:

Տարիներու ընթացքին՝ Ֆուտբոլի Շրջանային յանձնախումբին մաս կազմած են՝ Ժողով Նալպանտեան, Յակոբ Գարակէօզեան, Լեւոն Փանոսեան, Միկէ Մկրտիչեան, Բաղդասար Շաքար, Աբօ Գասապեան, Յովհաննէս Յուսամեան, Բարսեղ Գալճեան, Լեւոն Ալթունեան, Ժագ Ալահայտոյեան, Յարութիւն Մարկարոսեան, Սամուէլ Մկրտիչեան, Յովհաննէս Թերզեան, Յակոբ Բամպուլեան, Յարութ Տէր

Պետրոսեան, Լեւոն Գէորգեան, Գօգօ Զիֆթեան, Սահակ Կէրէքմեզեան, Կիպօ Հապիպեան, Կարպիս Պալեան, Վահէ Մինասեան եւ Տիգրան Նուպարեան:

Շրջանային մարզական խորհուրդին անդամակցած են՝ Պետրոս Շեմմեսեան, Արա Յակոբեան, Յովհաննէս Ծասուրեան, Վարդգէս Էսկիպաչեան, Պօղոս Յովհաննէսեան, Բաֆֆի Մունջոյլեան, Վարդգէս Ծասուրեան, Նազարէթ Հապիպեան, Մարալ Մատենեան եւ ուրիշներ:

Աթլետիք Շրջանային յանձնախումբին մաս կազմած են՝ Ծորճ Գալբաքեան, Վարուժան Գէորգեան, Թորոս Գոճակէօզեան, Հայկ Գայբեքեան, Կարօ Աբրահամեան, Գէորգ Գա-

րապոյաճեան, Մակի Մկրտիչեան, Կարպիս Քեթենճեան եւ ուրիշներ:

1975էն 1990 ժամանակաշրջանին աթլետիք ախոյեանական խաղերուն իրենց դասակարգի Լիբանանի մրցանիշեր հաստատած են՝ Սիլվա Ջէննէթեան՝ 500մ. վազք, Արա Քէշիշեան՝ 800մ. վազք, Արա Պալեան՝ 100մ., Պերճ Գաբրիէլեան՝ 60մ. վազք: Յիշատակելի արդիւնքներ արձանագրած են՝ Անի Պազալեան եւ Ալին Ատալեան

Շրջանային Սկսուտական Գործունէութիւն

Լիբանանի Հ.Մ.Ը.Մ.ի սկսուտական բաժինը կը գործէ Շրջանային սկսուտական խորհուրդի վերին հսկողութեամբ: Շրջանային վարչութեան կողմէ նշանակուած Շրջանային սկսուտական խորհուրդը կը պատրաստէ եր-

կամեայ գործունէութեան ծրագիրը եւ կը հսկէ անոր գործադրութեան Լիբանանի Շրջանի մասնաճիւղերէն ներս:

Շրջանային սկսուտական խորհուրդը կը կազմակերպէ մասնագիտական եւ խմբապետական տարեկան սեմինարներ, տարեկան պաշտօնական հաւաքներ, տարեկան ընդհանուր բանակում:

1975-90 տասնըհինգամեայ ժամանակաշրջանին Շրջանային Սկսուտական Խորհուրդին մաս կազմած են՝ Յակոբ Ոսկերիչեան, Կարօ Թիւթիւնճեան, Պատրիկ Կիլպէնկեան, Հրանդ Խոզոզեան, Անի Ճէրէճեան, Էլօ Մելքոնեան, Արփի Էթիէմեզեան, Արփի Չպուքճեան, Սարգիս Օվայեան, Ստեփան Բաշայեան, Յարութ Չէքիճեան, Յասմիկ Մուրատեան, Պօղոս Գիւրտեան, Սարգիս Հաճինազարեան, Շահէ Թորոսեան, Վարդան Պայթարեան, Հրաչ Պո-



Լիբանանի մասնաճիւղերու Սկսուտական համագումարին մասնակցողներու կապմը, 12-14 Հոկտեմբեր 1985, Նաաւ, Պիքֆայա

յաճեան, Կարպիս Գապասաքալեան, Շողիկ Տէօրտիւլեան, Սօնա Պօղոսեան եւ ուրիշներ:

Շրջանային ընդհանուր խմբապետի պաշտօն վարած են՝ Միհրան Շիմշիրեան, Ներսէս Տօնիկեան, Կարպիս Գապասաքալեան:

1985ին Լիբանանի սկաուտական ֆետերասիոնի կազմակերպած Wood Badgeի քննութիւնները յաջողութեամբ կ'անցնեն Ալին Լիպարեան, Լենա Իսրապեան, Նայիրի Իսրապեան, Թալին Սարաֆեան, Ռիթա Խոզոզեան, Թամար Շամլեան, Գէորգ Գազանճեան, Արա Հայրապետեան, Սեւակ Գիւրբեյեան, Փիէռ Մանուկեան, Վաչէ Յակոբեան, Գէորգ Քէչիչեան եւ Վիգէն Նաճարեան, վերջինս բացառիկ յիշատակութեամբ:

Հանդիսութիւններ, Ամեակներ, Շքանշաններ

Աւանդականօրէն Լիբանանի Շրջանային վարչութեան կազմակերպութեամբ տեղի ունեցած են «Մայիսեան փառատօն»ներ նշելու համար Հայաստանի անկախութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան տարեդարձները: Ժողովրդային հոծ բազմութիւններու ներկայութեամբ այս հանդիսութիւնները կը պսակեն մարզական մրցաշարքերու աւարտական մրցումներ, ԼԵՎԱՄի խաղերու, աթլետիզմի մրցումներու մրցանակաբաշխումներ եւ ընդհանուր տողանցք մասնակցութեամբ ԼԵՎԱՄի խաղերուն մասնակցող վարժարաններու աշակերտութեանց եւ բոլոր մասնաճիւղերու սկաուտական շարքերուն եւ մարզական խումբերուն, առաջնորդութեամբ Պուրճ Համուտի

սկաուտական նուագախումբին: Խաղերը միշտ վայելած են Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետին հովանաւորութիւնը եւ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Սրբազան հօր նախագահութիւնը:

Նոյնպէս Լիբանանի Շրջանային սկաուտական խորհուրդի կազմակերպութեամբ 1984էն սկսեալ ամէն տարի «Վարդանանք»ի տօնին առիթով տեղի ունեցած է «Հայ Սկաուտի Օր»ուայ հրապարակային հանդիսութիւն սկաուտական եւ բանախօսական ելոյթներով:

Շրջանային սկաուտական խորհուրդի աւանդական ձեռնարկներէն են Ապրիլ 24ի սգատօնի մասնակցութիւն Անթիլիասի մայրավանքի Նահատակաց Յուշարձանին, հայկաթուղիկ պատրիարքարանի շրջաբակի յուշակոթողին եւ Պիքֆայայի դպրեվանքի Նահատակաց Յուշարձանին առջեւ ծաղկեպսակներու զետեղումով:

29 Յունուար 1984ին, հովանաւորութեամբ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսին եւ նախագահութեամբ՝ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Արամ Եպս. Քէչիչեանի, տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 65ամեակի տօնակատարութիւն Յակոբ Տէր Մելքոնեան սրահին մէջ: Այս առիթու խօսք առին Լիբանանի Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային վարչութեան ատենապետ՝ Տոքթ. Միսաք Արզումանեան, Կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետ՝ Տոքթ. Յարութիւն Գազանճեան եւ Առաջնորդ սրբազանը: Վեհափառ Հայրապետի այս առիթու տրուած կոնթակը կարդաց Արշալիր վրդ. Գաբուճեան- [Ծ/40.32]:



Հ.Մ.Ը.Մ.ի Պեյրուֆի, Պուրճ-Համուտի եւ Ճտէյտէի մասնաճիւղերու ֆուտբոլի երկրորդական խումբեր՝ 1. Դանիել Վարուժան, 2. Նաւասարդեան, 3. Մշակ, 4. Եփրատ, 5. Վրէժ, 6. Ալատամարտ, 7. Դրօ, 8. Ալատամարտ

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՍՈՒՐԻԱ

- ԴԱՄԱՍՍԿՈՍ
- ՀԱԼԷՊ
- ԼԱԹԱՔԻԱ
- ԳԱՄԻՇԼԻ
- ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ



ԴԱՄԱՍԿՈՍ

Սուրիոյ Շրջանի առաջին մասնաճիւղն է մայրաքաղաք Դամասկոսի մասնաճիւղը: Դամասկոսի Հ.Մ.Ը.Մ.ի մարզական բաժինը կը գործէ միասնաբար մարզական այլ միութիւններու հետ «Մեյսալուն» անուան սակ պետական յատուկ հրամանագրով: Սկառուտական բաժինը ունի առանձին պետական ճանաչում եւ արտօնագիր:

10 Յունուար 1980ին, 63 անդամներու ներկայութեամբ, Դամասկոսի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ տարեշրջանի վարչական կազմ՝

Ատենապետ՝ Միհրան Օհանեան

Փոխ ատենապետ՝ Նուպար Պաղպուտարեան

Ատենադպիր՝ Յակոբ Սանոսեան
Գանձապահ՝ Յակոբ Խարաճեան
Հաշուապահ՝ Ալեքսան Արուշեան
Ֆուլթպոլի պատասխանատու՝ Գէորգ Ճըրխեան

Պասքէթպոլի պատասխանատու՝ Աւետիս Աճեմեան:

Անդամներու ընդհանուր թիւն է 108 որոնցմէ 35 արիներ եւ 23 գայլիկներ:

1981 եւ 1982 տարիներուն վարչական կազմերու անդամները կը մնան նոյները, փոքր փոփոխութիւններով կազմերուն կը միանան՝ Ստեփան Քիւրքճեան, Աւետիս Սեմերճեան,



Դամասկոսի Հ.Մ.Ը.Մ.ի 1983ի տղոց պասքէթպոլի նորակազմ խումբը



Դամասկոսի Հ.Մ.Ը.Մ.ի 1983ի աղջկանց պասքեթպոլի նորակապմ խումբը

Վազգէն Պալեան, Անդրանիկ Մարաշլեան եւ Գէորգ Գալեմքերեան:

Մասնաճիւղը կը գործէ մարզական չորս ճիւղերով՝ Ֆուլթպոլ, Պասքեթպոլ, փինկփոնկ եւ ճատրակ եւ սկաուսական բաժինով մասնակցութեամբ 70 արիներու եւ 41 գայլիկներու: Մարզական ճիւղերը կը մասնակցին Հալէպի մէջ կայացող միջ մասնաճիւղային մրցումներուն:

Արաբ Սկաուսական Վերին Մարմնի մօտ մասնաճիւղի ներկայացուցչն է Ստեփան Քիւրքեան: Սկաուսական բաժինը կը կազմակերպէ արշաւներ եւ բանակումներ, Նոր Տարուայ եւ սօնական առիթներով խրախճանքներ, Սբ. Ծննդեան աւետում, Ծաղկազարդի,

Սբ. Զատիկուայ եւ պետական առիթներով սուղանցքներ:

Մասնաճիւղի սարեկան ընդհանուր բանակումները կը կայանան Քեսապի սեփական բանակավայրին մէջ:

Մարզական բաժինները կը գործեն սկաուսականի պիտակին տակ եւ բարեկամական մրցումներ կը կազմակերպեն Ֆուլթպոլ, պասքեթպոլ, փինկփոնկ եւ ճատրակ կիրարկող աղումներու խումբերուն դէմ:

29 Նոյեմբեր 1985ին անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ՝ Ասենապետ՝ Աւետիս Աճեմեան Ասենադպիր՝ Վազգէն Պալեան Գանձապահ՝ Բաֆֆի Սրապեան

Խորհրդականներ՝ Յաւակ Կարապետեան, Սեպուհ Առաքելեան եւ Միքայէլ Թոքաթլեան ապա փոխարինուած Վիգէն Երէցեանով:

1987էն 1990 ժամանակաշրջանին վարչութեանց ատենապետի պաշտօնը վարած է Աւետիս Աճեմեան: Ատենադպիրներն են Վազգէն Պելեան, Կարօ Սաքաճեան եւ Յարութ Պալապանեան: Գանձապահի պաշտօնը վարած է Րաֆֆի Սրապեան: Մարզական եւ սկսողական բաժիններու ներկայացուցիչներու եւ խորհրդակցական պաշտօնով վարչական կազմերուն մասնակցած են. Յաւակ Կարապետեան, Միքայէլ Թոքաթլեան, Սեպուհ Առաքելեան, Վիգէն Երէցեան, Գէորգ Գալեմքերեան, Հրաչ Խաճարեան, Արա Խաճարեան, Աւետիս Էմմոյլեան, Արմէն Ուրֆալեան, Յակոբ Պետիրեան եւ Զաւէն Տէր Յակոբեան:

ՀԱԼԵՊ

Հ.Մ.Ը.Մ-ի Հալէպի մասնաճիւղը պետականօրէն կը կոչուի «Նէտի Եարմուք» եւ կը գործէ պետութեան կողմէ նշանակուած հինգ անդամներէ բաղկացող վարչութեան մը հսկողութեամբ: Վարչութիւնները կը գործեն 1 տարուայ ժամանակաշրջանի համար իւրաքանչիւր տարուայ Դեկտեմբեր ամիսէն սկսեալ: Նշանակեալ կազմին կը միանան չորս ալ Հ.Մ.Ը.Մ-ականներ կազմի թիւը բարձրացնելով իննի:

Մանաճիւղի տարեկան անդամական ընդհանուր ժողովներուն ներկայ կը գտնուին 150էն 200 անդամներ որոնք կը քննեն շրջանաւարտ կազմի գործունէութեան տեղեկագիրը եւ կը ճշդեն յաջորդ տարուայ գործունէութեան ծրագիրը:

Կազմակերպչական գործունէութիւն

1975-76 տարեշրջանին, Լեւոն Էսմերեանի ատենապետութեամբ գործող վարչութեան մաս կը կազմեն՝ Սարգիս Խուրչիտեան, Մայք

Մանճիկեան, Մանուէլ Հալլաճեան, Գէորգ Կանանեան, Յովսէփ Տէր Մանուէլեան, Վարդգէս Այվազեան, Պարգեւ Պոչկէզեանեան եւ Յովհաննէս Պասմաճեան:

Վարչութեան կ'օժանդակէ սկսողական խորհուրդը:

Կիրարկուող մարզաձեւերն են՝ Ֆութպոլ, պասքէթպոլ, թենիս եւ հենտպոլ: Խումբերը կը մասնակցին պատկան ֆետերասիոններու ախոյեանական մրցաշարքերուն:

1976-77 տարեշրջանին վարչական կազմին կ'անդամակցին ատենապետութեամբ՝ Տոքթ. Տիգրան Չափանեանի, Զաւէն Սապունճեան, Մովսէս Քէօզկերեան, Յարութ Հալլաճեան, Հայկազ Ասատուրեան, Մաթիկ Էպլիղաթեան, Ճորճ Տաուլէ Խանճեան եւ Մուրատ Մանուկեան:

Սկսողական բաժինը ունի պետական ճանաչում եւ կը գործէ քաղաքի եւ Նոր Գիւղի գոյգ շրջաններուն մէջ:

1977-78 տարեշրջանին վարչական կազմի աշխատանքներու բաժանումը կատարուած է հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Տոքթ. Տիգրան Չափանեան
 Ատենադպիր՝ Անդրանիկ Խաչատուրեան
 Գանձապահ՝ Մովսէս Քէօզկերեան
 Մարզական պատասխանատու՝ Գէորգ Կարապետեան

Սկսողական խորհուրդի ներկայացուցիչ՝ Տոքթ. Մանուէլ Իսկենտերեան

Մարզադաշտերու պատասխանատու՝ Յարութիւն Պարսամեան

Խորհրդականներ՝ Նշան Օղիկեան, Վարուժան Երէցեան եւ Յովհաննէս Ճանէցեան:

Վարչութիւնը կ'օգտագործէ իր սեփական պարտէզ - մարզադաշտը ընտանեկան եւ անդամական հաւաքներու առիթներով:

1979 եւ 1980 տարիներուն, բացի վերոյիշեալներէն վարչական պաշտօններ վարած են Յարութիւն Ասատուրեան, Վիգէն Մարաշլեան, Ալեքսան Իսկենտերեան, Վիգէն Մարաշլեան:



Հալեպի մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդի կապմ - 1978

եան, Կարօ Միսիրեան եւ Յարութիւն Ասատուրեան:

1981ին Վարչական կազմի անդամներն են.-
Ատենապետ՝ Տոքթ. Մանուէլ Իսկենտերեան
Փոխ ատենապետ՝ Նշան Օղիկեան
Ատենադպիր՝ Կարօ Միսիրեան
Հաշուապահ՝ Մովսէս Քէօզկերեան
Գանձապահ՝ Գէորգ Պոյաճեան

Խորհրդականներ՝ Մաթիկ Էպլիղաթեան,
Յարութիւն Պարսամեան, Յովսէփ Տէր Մանուէլեան եւ Ալեքսան Իսկենտերեան:

1982-1984 տարեշրջաններուն վերոյիշեալ վարչութիւնը կը շարունակէ գործել կազմի փոքր փոփոխութեամբ՝ Պարգեւ Տիքիճեան, Տոքթ. Պօղոս Պալիոզեան եւ Յարութիւն Ասատուրեան կը փոխարինեն Տէր Մանուէլեանը, Օղիկեանը եւ Էպլիղաթեանը:

Զգալի յաւելում կ'արձանագրուի անդամակցութեան թիւերուն վրայ սկաուտական թէ մարզական բաժիններով ուր մարզաձեւերու զանազան դասակարգերու խումբերը կը բազմանան:

14 Մարտ 1984ին անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչութեան մաս կը կազմեն.-

Ատենապետ՝ Պարգեւ Պոչկեզեան
Ատենադպիր՝ Րաֆֆի Տէր Աբրահամեան
Գանձապահ՝ Գէորգ Մատարեան
Հաշուապահ՝ Յարութիւն Չերչեան
Խորհրդականներ՝ Սարգատ Մերթխանեան,



Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղի Վարչութիւն՝ 1983-1984

Յարուծիւն Պարսամեան եւ Վիգէն Նազարեան:

Ակումբի գործավարի պաշտօնը կը վստահուի Տիգրան Պետրոսեանին:

Մայիս 1985էն մինչեւ 1987ի վերջաւորութիւն Մաթիկ Էպլիղաթեանի ատենապետութեամբ վարչական պաշտօններ կը վարեն, Վիգէն Գապագեան, Վահէ Ծուհարեան, Տիրան Գլրճեան,

Սարգիս Գրատեան, Գէորգ Լեպլեպճեան, Քնարիկ Լազլագեան, Սահակ Տօնիկեան, Յարուծիւն Պարսամեան, Մկրտիչ Փափագեան, Գէորգ Մատարեան եւ Վիգէն Մարաչլեան:

1989ին վարչութեան ատենապետն է Նշան Օղիկեան իսկ 1990ին Տոքթ. Գէորգ Մարգարեան:

1990ի աւարտին Հալէպի մասնաճիւղի անդամներու ընդհանուր թիւը կը գերազանցէ 1500ը:

Մարզական գործունէութիւն

Տարիներու ընթացքին հետզհետէ մասնաճիւղի կիրարկած մարզաձեւերու խումբերու թիւը կ'աւելնայ 1990ին ներկայացնելով հետեւեալ պատկերը.

Ֆուտպոլ՝ 5 խումբ

Պասքեթպոլ՝ 5 տղոց եւ 3 աղջկանց խումբեր

Հենսպոլ՝ 3 տղոց եւ 2 աղջկանց խումբեր, նաեւ թենիս, փինկփոնկ, հեծելարշաւ, աթլետիկ:



Հ.Մ.Ը.Մ.ի 1980 տարուայ Հալէպի ախոյեան պասքեթպոլի աղջկանց կապմը

Թիզմ, քարաթէ եւ ճատրակ կիրարկող մարզիկներ որոնք բոլորն ալ կը մասնակցին, համաձայն իրենց տարիքային դասակարգերուն, պատկան Փետերասիոններու ախոյեանական մրցաշարքերուն այսպէսով ամբողջացնելով առաջին կարգի մարզական կազմակերպութիւն մը ըլլալու պետական պայմանները :

1979ին մասնաճիւղի աղջկանց պասքեթպոլի կազմը կը տիրանայ Հալէպի ախոյեանութեան, պարտութեան մատնելով Սուրիոյ ախոյեան Սերքլ կաթոլիկ խումբը: Տղոց եւ կրտսերներու խումբերը կը յաջողին ապահովել Սուրիոյ ախոյեաններու տիտղոսները: Թենիսի ճիւղին մէջ Մարի Մուրատեան կը շահի Սուրիոյ ախոյեանութիւնը: Իր կարգին Փուլթպոլի խումբը

կ'ապահովէ հիւսիսային Սուրիոյ ախոյեանութեան մրցաշարքի պարագլուխի դերը:

1983ի մարզական եղանակին տղոց եւ աղջկանց պասքեթպոլի 5 կազմերը ինչպէս նաեւ Փուլթպոլի Ա. եւ Բ. խումբերը կը մասնակցին Հալէպի եւ Սուրիոյ ախոյեանութեանց մրցումներուն: Թենիսի ճիւղին մէջ մասնաճիւղի մարզիկները կը տիրապետեն ախոյեանութեանց բոլոր մրցումներուն: Աթլետիզմի մէջ Յովհաննէս Պարսումեան 6,48 մեթր երկայնք ոստով կը հաստատէ Սուրիոյ նոր մրցանիշ իսկ Յ քայլի ոստումի 13,13 մեթրով կը հանդիսանայ Սուրիոյ փոխ ախոյեան: Պարսումեանի խմբակից՝ Հայկ Ղազարեան 1,84 մ. բարձրութիւն ցատկելով կը հանդիսանայ Սուրիոյ ուսա-

նողական ախոյեան: Հեծելանիւի ճիւղին մէջ մասնաճիւղի երկսեռ մարզիկները կը գրաւեն պատուաւոր դիրքեր: Մասնաճիւղի թենիսի խումբի մարզիչն է Աբրահամ Քելիչեան: 1984ի եղանակին Հալէպի ախոյեանութեան աւարտական հանգրուանին կը հասնին Շաւարշ Սրուրեան, Սեւակ Մկրտիչեան, Վաչէ Մակարեան եւ Նատիր Խուրի՝ չորս Հ.Մ.Ը.Մ.ականներ:

Սուրիոյ ախոյեանութեան տիտղոսը կ'ապահովէ Դաւիթ Դաւիթեան, իսկ գոյգի ախոյեաններն են՝ Դաւիթ Դաւիթեան եւ Հրաչ Մակարեան.- [Ծ/46.26-27]: 1986ին թենիսի փակ դաշտի Սուրիոյ ախոյեանութիւնը: Մասնաճիւղի մարզիկներ՝ Շահէ Սրուրեան, Դաւիթ Դաւիթեան եւ Հրաչ Մակարեան Սուրիան կը ներկայացնեն միջազգային մրցաշարքերու, որոնք տեղի կ'ունենան Ամմանի, Քուալա Լամբուրի, եւ Տէյվիզ բաժակի մրցաշարքին Աթէնքի մէջ: Նոյն տարին Յովիկ Պարսումեան երկիցս կը բարելաւէ երկայնք ցատկելու իր մրցանիշը յաջորդաբար 6,97 մ.ով եւ 7,19 մ.ով:

18 Օգոստոս 1990ին «Կոստայք» ակումբի հրաւէրին ընդառաջելով Հալէպի պասքեթպոլի եւ Փութպոլի խումբերը կը մեկնին Երեւան մրցումներ ունենալու հայրենի շարք մը ակումբներու խումբերուն դէմ.- [Ծ/107-108.16]:

Սկաուտական գործունէութիւն

Հալէպի մասնաճիւղի սկաուտական բաժինը կը ղեկավարուի յատուկ սկաուտական խորհուրդի մը հսկողութեամբ որ ունի պետական անկախ արտօնագիր եւ կը կազմուի ընտրութեամբ:

Աստիճանաւորական փորձառու եւ վկայեալ ցանց մը կ'առաջնորդէ շարքերը սկաուտական թեքնիք պատրաստութեան եւ մարզական խումբերու յառաջդիմութեան: Նախապէս ծրագրուած տարեկան ծրագրի հիման վրայ կ'իրագործուին բոլոր աշխատանքները, հաւաքոյթներ, արշաւներ, բանակումներ եւ տարե-

կան ընդհանուր բանակում Քեսապի սեփական բանակավայրին մէջ: Գայլիկ, արի եւ արծուիկ բաժանմունքները կը գործեն քաղաքի եւ Նոր Գիւղի հաւաքավայրերուն մէջ անջատաբար:

Սկաուտական խորհուրդի հսկողութեամբ կը կազմակերպուին ծնողական հաւաքոյթներ, ձեռային աշխատանքներու ցուցահանդէսներ, խարոյկահանդէսներ, դաստիարակչական դասախօսութիւններ, Սբ. Ծննդեան եւ Սբ. Զատիկուայ առիթներով շնորհաւորական քարդերու փաշխում եւ ներքին խրախճանքներ: Շարքերը կը մասնակցին միջ-մասնաճիւղային խաղերու, պետական եւ ազգային տօնակատարութեանց առթիւ կայացող ընդհանուր սողանքներուն առաջնորդութեամբ սկաուտական հռչակաւոր նուագախումբին:

Սկաուտական շարքերէն անդամներ մասկազմած են Սուրիոյ Շրջանը ներկայացնող պատուիրակութիւններուն որոնք մասնակցած են համազգայնութային Ա.Բ.Գ. եւ Դ. ընդհանուր բանակումներուն:

Նաեւ Սկաուտական Խորհուրդը կը հրատարակէ “Սկաուտի Զայն” պարբերաթերթը:

Շինարարական

Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի շինարարական մեծագոյն իրականացումը եղաւ մասնաճիւղի մարզադաշտի իրականացումը, որուն հիմնարկէքը տեղի ունեցաւ 19 Նոյեմբեր 1989ին ներկայութեամբ պետական եւ ազգային աւագանիին:

ԼԱԹԱՔԻԱ

Սուրիոյ Շրջանի երրորդ մասնաճիւղն է ծովեզերեայ Լաթաքիա քաղաքի մասնաճիւղը: Մասնաճիւղը կը կիրարկէ փինկփոնկ եւ հեծելարշաւ բարեկամական մրցումներու սահմաններով:

Սկաուտական բաժինը ունի պետական արտօնագիր: Շուրջ 100 անդամներէ բաղկացող

կազմը կը մասնակցի Հալէպի միջ-մասնաճիւղային տողանցքներուն եւ պետական ելոյթներուն:

1983էն 1989 ժամանակաշրջանին վարչական կազմերու ատենապետութիւնը վարած են՝ Խաչիկ Գալայճեան եւ Զաւէն Գափրիէլեան: Վարչական կազմերուն անդամակցած են. Նուարդ Գալազեան, Սոնա Պետիրեան, Արաքսի Պալեան, Խաչիկ Գաթրճեան, Գրիգոր Գրիգորեան, Հուրի Տէյրմենճեան, Մարալ Սարգոյեան, Ղազար Պերեճիքեան, Նշան Մեսումեան, Շուշան Ղըշրանեան, Ժազլին Գրիգորեան, Վաչէ Կարճիկեան, Ասպետ Ղազելեան, Յարութ Մանուկեան, Լեւոն Քիւլճեան, Ֆերիտա Աստուրեան, Թաքուշ Տէօքմենճեան եւ Վարդան Եագուպեան:

Մասնաճիւղը իր ակումբը եւ պարտէզը կ'օգտագործէ Սուրիահայ Օգնութեան Խաչիկ Լաթաքիոյ մասնաճիւղին հետ միասնաբար:

ԳԱՄԻՇԼԻ

Գամիշլիի Հ.Մ.Ը.Մ.ի երբեմնի գեղակերտ ակումբը կը ծառայէ իբրեւ կեդրոն քաղաքին մէջ գործող մարզական կարգ մը միութիւններու միացումով կազմուած “Ճիհատ” միութեան որուն անդամները մեծամասնութեամբ հայեր են: Հ.Մ.Ը.Մ.ը առանձնապէս կը կիրարկէ սկստութիւնը:

1975ին վարչական կազմին կ'անդամակցին՝ Ատենապետ՝ Անդրանիկ Հեքիմեան
Ատենադպիր՝ Զաւէն Գասպարեան
Գանձապահ՝ Տիգրան Խաչատուրեան
Հաշուապահ՝ Զաւէն Յովհաննէսեան
Գոյքապահ՝ Անդրանիկ Կենճոյեան
Խորհրդական՝ Յարութիւն Երէցեան եւ Վարդգէս Կենճոյեան:

Այս կազմը կը գործէ մինչեւ 1979ի վերջաւորութիւն երբ նշանակովի վարչութեան մը կ'անդամակցին Յարութիւն Ղարիպեան, Սերոբ Կարապետեան եւ Տիրան Խաչատուրեան:

Մասնաճիւղը կը հաշուէ աւելի քան 300 անդամներ մեծամասնութեամբ սկստական շարքերէն:

Կիրարկուող մարզաճիւղերն են Ֆութպոլ, պասքեթպոլ եւ փինկփոնկ: Ֆութպոլի խումբը կը կրէ Մասիս անունը: Խումբերը կը մասնակցին Հալէպի մէջ միջ-մասնաճիւղային խաղերուն:

Սկստական բաժինը կը գործէ ամբողջական աշխատանքներով՝ հաւաքոյթներ, արշաւներ, բանակումներ:

1979ին կը վերակազմուի 60 անդամներէ բաղկացող փողերախումբը որ կը մասնակցի ազգային եւ պետական հանդիսութեանց եւ տողանցքներուն:

1983ին մասնաճիւղը կը ձեռնարկէ ակումբի նորոգութեան: Սրահը կը ծառայէ ազգային առիթներով հաւաքներու:

22 Դեկտեմբեր 1985ին մասնաճիւղը մեծ շուքով կը տօնէ իր հիմնադրութեան յիսնամեակը.- [Ծ/61.26] :

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Շրջանի կազմութիւն

Սուրիոյ Շրջանային վարչութեանց նստավայրը եղած է Հալէպ քաղաքը: Համաձայն ընդհանուր ծրագիր կանոնագրի տրամադրութեանց, Սուրիոյ Շրջանի կազմութիւնը պէտք էր իրականանար 1975ի ընթացքին, ուր Սուրիոյ մասնաճիւղերու ներկայացուցիչներու մասնակցութեամբ պիտի կայանար Սուրիոյ Շրջանային Առաջին Ներկայացուցչական Ժողովը եւ ընտրուէր Սուրիոյ անդրանիկ Շրջանային վարչութիւն: Սակայն պայմաններու բերումով Շրջանի կազմութիւնը զգազիօրէն ուշացաւ: Առ այդ կեդրոնական վարչութիւնը իր 6 Մարտ 1978ի նիստի ընթացքին որոշեց իր ատենապետ Վարդգէս Տէր Կարապետեանը լիազօրել՝ Հալէպ այցելելով դասաւորել Սուրիոյ Շրջանի կազմութիւնը:



Գամիշլիի մասնաճիւղի «Մասիս» ֆուտպոլի խումբը

Անդրանիկ Շրջանային վարչութեան կազմութիւն
 եւ գործունէութիւն

Յետ խորհրդակցութեանց 12 Մարտ 1978ին
 կեդրոնական վարչութեան ներկայացուցիչը
 նշանակովի կազմեց Սուրիոյ անդրանիկ Շրջա-
 նային վարչութիւնը: Վերջինս իր 28 Մարտի
 առաջին նիստով իր աշխատանքներու բաժա-
 նումը կատարեց հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Պարգեւ Միսիրեան
 Ատենադպիր՝ Սուրէն Նազարեան
 Գանձապահ՝ Յովհաննէս Խաչատուրեան
 Հաշուապահ՝ Զաւէն Սապունճեան
 Խորհրդականներ՝ Յակոբ Ղազարեան,

Քրիստափոր Իֆատեան, Սարգիս Պասմաճ-
 եան, Յակոբ Մկրտիչեան եւ Երջանիկ Կար-
 պուշեան:

Շրջանային վարչութիւնը Մայիս 3ին նշա-
 նակեց Սուրիոյ Շրջանային Սկստակական
 Խորհուրդը բաղկացած հետեւեալ խմբապետնե-
 րէն.- Խորէն Նազարեան՝ ատենապետ, Արսէն
 Դանիէլեան՝ փոխ ատենապետ, Զաւէն Տէրվիչ-
 եան՝ ատենադպիր, Մարի Պաղտասարեան՝
 գանձապահ, Անահիտ Խուպիարեան՝ հաշուա-
 պահ, Ստեփան Քիւրքճեան, Յակոբ Մկրտիչեան
 եւ Երջանիկ Կարպուշեան՝ խորհրդականներ:
 Սուրէն Նազարեան Շրջանային վարչութիւնը
 կը ներկայացնէ այս կազմէն ներս:

Այս գոյգ կազմերու առաջնահերթ գործը պիտի ըլլար կազմակերպել մասնաճիւղերու գործունէութիւնը:

Շրջանային վարչութիւնը իր միամեայ գործունէութեան ընթացքին յաջողեցաւ իրականացնել հետեւեալ աշխատանքները.- Միութեան 60ամեակի տօնակատարութեան ծրագրում, Սուրիոյ Շրջանի ներքին կանոնադրութեան մշակում, համագաղութային Ա. ընդհանուր բանակումի մասնակցութիւն, Ս.Օ. Խաչի արծուիկութեան պետական արտօնագրի ապահովում: Շրջանային վարչութեան միամեայ նիւթական գործառնութեան գումարը կ'ըլլայ 2300 ս. ոսկի:

25 Մարտ 1979ին գումարուած Շրջանային Բ. Ներկայացուցչական ժողովը ընտրեց Սուրիոյ երկրորդ Շրջանային վարչութիւնը, որ իր աշխատանքներու բաժանումը կատարեց հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Պարգեւ Միսիրեան
Փոխ ատենապետ՝ Տոքթ. Տիգրան Չափանեան

Ատենադպիր՝ Սուրէն Նազարեան
Գանձապետ՝ Յովհաննէս Խաչատուրեան
Հաշուապահ՝ Աբրահամ Աւրնեան
Խորհրդականներ՝ Ճորճ Տաուլէ Խանճեան, Երջանիկ Կարպուշեան, Վարդգէս Սիմոնեան եւ Սարգիս Պասմաճեան:



Սուրիոյ Շրջանային Սկաուտական Խորհուրդ՝ 1986-1988, ոտքի՝ Վիգէն Գապագեան, Պայծիկ Մելքոնեան, Անդրանիկ Աւրնեան, Չեփիւռ Էլէյճեան, Պօղոս Պալիոյեան, նստած՝ Շրջ. Խմբապետ Մանուկ Քէօշկերեան, Ալեքսան Իսկէստերեան, Շրջ. Ընդ. Խմբ. Միսակ Տէիրմէնճեան, Շրջ. Խմբապետուհի Սեդա Տէր Աբրահամեան

Շրջանային վարչութեան նստավայրն է Հալէպի մասնաճիւղի ակումբը:

Մարտ 1979էն Յուլիս 1982 ժամանակաշրջանին Շրջանային վարչութեան կ'օժանդակէ Շրջանային Սկստակական Խորհուրդը: Սուրիոյ մէջ կը գործեն չորս մասնաճիւղեր՝ Հալէպ, Դամասկոս, Գամիշլի եւ Լաթաքիա: Շրջանային վարչութիւնը մասնաճիւղերու գործունէութեանց կը հետեւի անոնցմէ ստացուած ժողովական արձանագրութիւններուն միջոցաւ:

1980ին Սուրիոյ Շրջանէն 50 սկստակներ կը մասնակցին համագաղութային Բ. ընդհանուր բանակումին Ֆրանսայի մէջ:

Շրջանային վարչութիւնը կը մշակէ Սուրիոյ ներքին կանոնագրութիւնը, որպէսզի մասնաճիւղերու կողմէ ուսումնասիրուելէ ետք վաւերացուի Շրջանային Գ. Ներկայացուցչական ժողովին կողմէ եւ ենթարկուի կեդրոնական վարչութեան վաւերացման: Սուրիոյ ներկայացուցիչներ Փետրուար 1982ին կը մասնակցին Աթէնքի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային առաջին սկստակական համագումարին, որ կը բարեփոխէ կեդրոնական վարչութեան կողմէ նշանակուած՝ կեդրոնական Սկստակական Խորհուրդի մշակած՝ Միութեան սկստակական ընդհանուր կանոնագրութիւնը:

Երկամեայ իր գործունէութեան աւարտին Շրջանային վարչութեան նիւթական գործառնութեան գումարն է 33.700 ս. ոսկի:

25 Յուլիս 1982ին տեղի կ'ունենայ Շրջանի Գ. Ներկայացուցչական ժողով ներկայութեամբ չորս մասնաճիւղերու 34 լիազօր ներկայացուցիչներուն, հրաւիրեալ անդամներու եւ Ս.Օ. Խաչի արժուիկական շարժման ներկայացուցիչներուն:

Մասնաճիւղերու տեղեկագիրներու համաձայն Շրջանը ունի 3102 անդամ հետեւեալ բաժանումով.- Հալէպ՝ 1858, Դամասկոս՝ 362, Գամիշլի՝ 690, Լաթաքիա՝ 107, Քեսապ՝ 95: Ընդհանուր թիւի շուրջ երկու երրորդը մաս կը կազմեն սկստակական շարքերուն:

Շրջանային վարչութեան եւ Շրջանային

Սկստակական Խորհուրդի տեղեկագիրներու քննութենէն ետք կ'ընտրուի Շրջանային վարչութեան կազմ: Վերջինս իր աշխատանքներու բաժանումը կը կատարէ 26 Յուլիսի նիստի ընթացքին հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Տոքթ. Տիգրան Չափարեան
Փոխ ատենապետ՝ Գէորգ Կարապետեան
Ատենադպիրներ՝ Սուրէն Նազարեան եւ Նշան Օղիկեան

Գանձապահ՝ Յովհաննէս Խաչատուրեան
Հաշուապահ՝ Ճորճ Տաուլէ Խանճեան
Խորհրդականներ՝ Սարգիս Պասմաճեան, Տիրան Խաչատուրեան, Երջանիկ Կարպուչեան:

Յուլիս 1982էն Յունուար 1985 ժամանակաշրջանը ընթացիկ գործունէութեան շրջան մը պիտի ըլլար: Շրջանային վարչութիւնը 1983ի եւ 1984ի Սբ. Յարութեան տօնական օրերուն կազմակերպեց միջ-մասնաճիւղային տարեկան խաղերը եւ ընդհանուր տողանցքը: 1983ին մասնաճիւղերու մէջ կազմակերպուած Հ.Մ.Ը.Մ.ի 65ամեակի հանդիսութիւններուն Շրջանային վարչութիւնը բերաւ իր մասնակցութիւնը: Վարչութեան գործունէութեան կարեւորագոյն բաժինը պիտի ըլլար Սուրիոյ Շրջանի ներքին կազմակերպչական աշխատանքը:

20 Յունուար 1985ին Շրջանային Գ. Ներկայացուցչական ժողովէն ընտրուած Շրջանային վարչութիւնը իր աշխատանքներու բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Տոքթ. Տիգրան Չափարեան
Փոխ ատենապետ՝ Գէորգ Կարապետեան
Ատենադպիր՝ Սուրէն Նազարեան
Բ. Ատենադպիր՝ Յովհաննէս Պասմաճեան
Գանձապահ՝ Յարութիւն Արուշեան
Հաշուապահ՝ Ճորճ Տաուլէ Խանճեան
Խորհրդականներ՝ Սարգիս Պասմաճեան (Դամասկոս), Երջանիկ Կարպուչեան (Լաթաքիա) եւ Տիրան Խաչատուրեան (Գամիշլի):

Վարչութեան նստավայրն է Հալէպի մասնաճիւղի Լեւոն Շանթ կեդրոնի սենեակներէն մին, ուր ժողովները կը գումարուին ամսական հերթականութեամբ:



1986 - Սուրիոյ Շրջանային Ներկայացուցչական Ժողով

Սուրիոյ Շրջանի ներկայացուցիչներ Տոքթ. Տիգրան Չափանեան եւ Սարգիս Պասմաճեան 5-7 Ապրիլ 1985ին Միլանոյի մէջ կը մասնակցին Հ.Մ.Ը.Մ.ի միջ-դիւանային Ա. խորհրդաժողովին:

27 Հոկտեմբեր 1985ին տեղի կ'ունենայ մասնաճիւղերու վարչութեանց համաժողով, ուր կ'ուսումնասիրուին կարելիութիւնները զանազան մարզերու զարգացման, «Մարզիկ» պաշտօնաթերթի տարածման, արխիւային դասաւորումներու միօրինականացման եւ այլ կազմակերպական հարցեր:

1 Մարտ 1987ին կ'ընտրուի նոր Շրջանային վարչական կազմ՝

Ատենապետ՝ Տոքթ. Տիգրան Չափանեան

Փոխ ատենապետ՝ Տիրան Խաչատուրեան
Ատենադպիրներ՝ Զաւէն Տէրվիշեան եւ Մանուէլ Իսկենտերեան

Գանձապահ՝ Յարութիւն Արուշեան
Հաշուապահ՝ Ծորճ Տաուլէ Խանճեան
Մարզական պատասխանատու՝ Սարգիս Գրատեան, փոխարինուած Յովսէփ Տէր Մանուէլեանով

Խորհրդականներ՝ Սարգիս Պասմաճեան եւ Խաչիկ Գալայճեան:

Կազմակերպչական ընդհանուր գործունէութեան կողքին այս կազմը կ'իրականացնէ 1987ի եւ 1988ի Զատկական միջ-մասնաճիւղային խաղերը, կը մասնակցի Լիբանանի Շրջանի Մայիսեան Փառատօնին, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադ-

րուլթեան 70ամեակը կը նշէ երեք առիթներով՝ յուշագրական ցուցահանդէս, յորելինական սրահային հանդիսութիւն եւ պաշտօնական ճաշկերոյթ: Յորելինական հանդիսութեան ընթացքին Մառաշուկեան շքանշանով կը պարգեւատրուին՝ Յովհաննէս Խաչատուրեան, Խորէն Նազարեան, Աբրահամ Աւրանեան, Սեդրակ Քիլոյեան, Յովհաննէս Պասմաճեան, Թադէոս Թիւթէլեան, Մանուէլ Հալլաճեան, Մանուկ Յովհաննէսեան, Համազասպ Արզումանեան եւ Յովհաննէս Արապաճեան:

Արժանեաց շքանշանի կ'արժանանան Սուրէն Նազարեան եւ Զաւէն Սապունճեան: Օրուայ բանախօսն է Կեդրոնական Վարչութեան ատենապետ՝ Տոքթ. Միսակ Արզումանեան:

Մարտի 1987էն Ապրիլ 1989ի Շրջանային վարչութեան նիւթական գործառնութեան ընդհանուր գումարն է 480 հազար ս. ոսկի:

29 եւ 30 Ապրիլ 1989ին կը գումարուի Սուրիոյ Զ. Շրջանային Ներկայացուցչական Ժողովը, որուն վերջին օրակարգով ընտրուած Շրջանային վարչութիւնը իր աշխատանքներու բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Սուրէն Նազարեան

Փոխ ատենապետ՝ Տիրան Խաչատուրեան

Ատենադպիր՝ Տոքթ. Մանուէլ Իսկենտերեան

Գանձապահ՝ Մանուէլ Հալլաճեան

Հաշուապահ՝ Ծորճ Տաուլէ Խանճեան

Մարզական պատասխանատու՝ Յովսէփ Տէր Մանուէլեան

Խորհրդականներ՝ Սարգիս Պասմաճեան եւ Սուրէն Աճոյեան:

Շրջանային վարչութեան նստավայրն է «Արամ Մանուկեան» տան մէջ իր յատուկ գրասենեակը:

Այս երկամեակին Շրջ. վարչութիւնը կը կազմէ Շրջանային Սկաուտական Խորհուրդ եւ Հալէպի մասնաճիւղին հետ համակարծիք Ֆուլթայոյի կեդրոնական մարմին մը դիւրացնելու համար մասնաճիւղի ընդարձակ գործունէութեան այս կարեւոր բաժինը:

12-16 Ապրիլ 1990ին Շրջանային վարչութեան հովանաւորութեամբ Հալէպի պասքեթպոլի տղոց խումբը մասնակցեցաւ համագողութային Գ. խաղերուն (պասքեթպոլի մրցաշարք) Վալանսի մէջ, ուր տիրացաւ մրցաշարքի ախոյեանութեան: Նոյնպէս Հալէպի Ֆուլթայոյի եւ պասքեթպոլի խումբերը այցելեցին Հայաստան եւ մրցումներ ունեցան տեղւոյն զանազան խումբերուն հետ:

Շրջանային մարզական գործունէութիւն

Ծանօթ է որ 1927ի Ֆուլթայոյի Հալէպի եւ Պէյրութի մասնաճիւղերու զատկական հանդիպումները ժամանակի ընթացքին վերածուեցան միջ-մասնաճիւղային աւանդական հանդիպումներուն, որոնք գրեթէ անընդհատ շարունակուեցան մինչեւ 1960ական թուականներու սկիզբը: 1972ին Պէյրութի մէջ միջ-մասնաճիւղային 35րդ խաղերը շարքին վերջինը պիտի կազմէին:

Սուրիոյ առանձին Շրջանի կազմութենէն ետք, Շրջանային յաջորդական վարչութիւնները կրկին կեանք սուրին զատկական միջ-մասնաճիւղային խաղերուն, որոնց իրենց մասնակցութիւնը բերին բացի Սուրիոյ մասնաճիւղերէն նաեւ Լիբանանէն կարգ մը մասնաճիւղերու մարզական խումբերը:

Այս կարգի միջ-մասնաճիւղային խաղերու շարքի առաջինը վերսկսաւ 1979ի խաղերով: Խաղերու յայտագրին մաս կազմած են Ֆուլթայոյի, պասքեթպոլի եւ փինկ-փոնկի մրցաշարքեր եւ Սբ: Զատկուայ յաջորդող Երկուշաբթի օրերու ընդհանուր սողանցքը մասնակցութեամբ մասնաճիւղերու սկաուտական կազմերուն, Ս.Օ. Խաչի արծուիկներուն եւ սկաուտական նուագախումբերուն:

Աւանդական այս խաղերը շարունակուած են տարեկան հերթականութեամբ եւ արտասահմանէն, գլխաւորաբար Լիբանանէն, հրաւիրուած մարզական խումբերու մասնակցութեամբ:



1978ի Միջ-մասնաճիւղային խաղերու պատուայ թրիպին՝
Բերիոյ Թեմի Առաջնորդ Սուրէն Արք. Գաթարոյեանի կողքին պետական անձնաւորութիւններ
Նկարի ձախին՝ Գէորգ Կարապետեան, աջին՝ Երեսփոխան Գրիգոր Էպիփանասեան

Տես՝ 1983ին- [Ծ/33.22], 1984ին- [Ծ/41.31],
1985ին- [Ծ/49.14]:

Շրջանային սկաուտական գործունէութիւն

Սուրբիոյ Շրջանային յաջորդական վարչութիւնները իրենց գործունէութեանց սկզբնաւորութեան միշտ հետամուտ եղած են նշանակելու Շրջիկ Սկաուտական Խորհուրդներ, որոնք ստանձնած են Շրջանի սկաուտական գործունէութեան ծրագրումն ու իրականացումը:

1984ին Շրջանի սկաուտական շարքերու ընդհանուր թիւն է 1695:

1986ին Ս.Օ. Խաչի Շրջանային վարչութեան հետ համաձայնաբար Ս.Օ. Խաչի արծուիկական շարժումը կը միացուի Հ.Մ.Ը.Մ.ական սկաուտութեան՝ ենթակայ Շրջանային Սկաուտական Խորհուրդի, որուն մաս կը կազմեն Ս.Օ. Խաչէն զոյգ խմբապետուհիներ: Սակայն սկաուտական շարժումը իր ընդհանրութեան մէջ պետական սեղմումներու ենթարկուելուն պատճառով Հ.Մ.Ը.Մ. սկաուտութիւնը եւս չատ դանդաղօրէն կը զարգանայ: Շրջանային Սկաուտական Խորհուրդը սահմանափակ միջոցներով կը շարունակէ զարկ տալ սկաուտական դաստիարակութեան թեքնիք նիւթերու

զարգացման առանձին գրքոյկներու հրատարակութեամբ:

1989ի Հոկտեմբերին Շրջանային վարչութիւնը կը նշանակէ Սուրիոյ Շրջանային Սկստակական Խորհուրդը հետեւեալ կազմով.-

- Ասենապետ՝ Խորէն Նազարեան
- Փոխ ասենապետ՝ Յակոբ Էլէյճեան
- Ասենադպիրներ՝ Զեփիւռ Էլէյճեան եւ Պայծիկ Մելքոնեան
- Գանձապահ՝ Խաչիկ Գաբրիէլեան
- Հաշուապահ՝ Պասորիկ Զրաքեան ապա Զաւէն Տերվիշեան
- Գոյքապահ՝ Արփի Թէնեքեան
- Շրջանային ընդհանուր խմբապետ՝ Միսաք Տէյիրմենեան

Շրջանային խմբապետներ՝ Մանուկ Քէօշկէրեան եւ Բեկի Աւրնեան:

Այս կազմի ճիգերով կ'իրականան «Հ.Մ.Ը.Մ-ի Օր»ուայ եւ «Սկստակ Օր»ուայ տօնակատարութիւններ, պարբերաթերթի, օրացոյցի եւ թեքնիք նիւթերով գրքոյկներու հրատարակութիւն, սեմինարներ, նորընծայի, Բ. եւ Ա.

կարգերու քննութիւններ եւ վկայականներու բաշխում եւ զանազան տեսակի մրցաշարքեր:

Նախասարդեան Փառասօճներ

56րդ «Նախասարդեան Փառասօճ»ը նուիրուած էր Եղեռնի եօթանասունամեակի նշումին: Փառասօճի հովանաւորութիւնը ստանձնած էր Հալէպի երիտասարդութեան եւ սփորի ղեկավար Սաֆի Ապուտէն նախագահութեամբ՝ Բերիոյ Թեմի Առաջնորդ Սուրէն Արք. Գաթարոյեանի: Փառասօճի խաղերու յայտագրին մաս կազմեցին Ֆութպոլի, պասքեթպոլի եւ փինկ-փոնկի մրցաշարքեր մասնակցութեամբ Պէյրութի, Դամասկոսի, Հալէպի, Գամիշլիի եւ Լաթաքիոյ մարզական երկսեռ եւ մեծերու ու կրտսերներու խումբերուն: [Ծ./49.14]

8 Ապրիլ 1990ին տեղի կ'ունենան Սուրիոյ մասնաճիւղային տարեկան խաղերը: Հայրենի «Կոտայք» խումբէն 37 անդամներէ բաղկացած պատուիրակութիւն մը կը մասնակցի այս խաղերուն: Հ.Մ.Ը.Մ. Հալէպ-Կոտայք Ֆութպոլի մրցումը կը շահի վերջինս 5-3 արդիւնքով [Ծ/101-102.58]:




1979-ի Միջ-մասնաճիւղային խաղեր - Հալէպի Արծուիկներու սողանքը

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

- ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ
- ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՕ
- ՖՐԵԶՆՕ
- ՄՈՆԹԵՊԵԼԼՕ
- ԲԱՍԱՏԵՆԱ
- ԿԼԵՆՏԵՅԼ
- ՕՐԷՆՃ ՔԱՈՒՆԹԻ
- ՍԱՆ ՖԵՌՆԱՆՏՕ ՎԱԼԻ
- ՍԱՆ ՏԻԷԿՕ
- ՀՈՒՍԹԸՆ
- ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



1977, Արեւմտեան Միացեալ Նահանգներու Բ. Նաւասարդեան խաղեր՝ կը տողանցեն Լոս Անճելըսի. 1. Արենոյշները, 2. Արիները, 3. Գալլիկները, 4. Կարճ վազքի ժամանում, 5. Մոնթեպելլոյի Հ.Ե.Դ.-ի ֆութպոլի խումբը, 6. Լոս Անճելըսի ֆութպոլի խումբը, 7. Բասատինայի Հ.Մ.Ը.Մ.ի պասքեթպոլի խումբը, 8. Թէիրանի Արարատի աղջկանց պասքեթպոլի խումբը:

ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

Կազմակերպչական գործունեություն

Հիմնադրութենէն մինչեւ 1975 թուական, Գալիֆորնիոյ մասնաճիւղերու գործունէութիւնները արագընթաց կը զարգանան: Լոս Անճելըսի մասնաճիւղը յաւելեալ զարգացում կ'ունենայ Մերձաւոր Արեւելքէն մեծաթիւ ներգաղթողներու անդամակցութեամբ:

10 Մարտի 1975ին մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչութեան մաս կը կազմեն՝

- Ատենապետ՝ Յարութիւն Բարսեղեան
- Փոխ ատենապետ՝ Նուպար Սարգիսեան
- Ատենադպիր՝ Յովակ Յովսէփեան
- Քարտուղարուհի՝ Մակի Բարսեղեան
- Գանձապահ՝ Յակոբ Բրինձեան
- Հաշուապահ՝ Կարպիս Սեմերձեան
- Սկաուտ խմբապետ՝ Զարեհ Սողոմոնեան
- Խորհրդականներ՝ Տոքթ. Պերճ Ռուբինեան, Սահակ Աւագեան, Անդրանիկ Անսոնեան եւ Ճորճ Պաղտոյեան:

Վարչութեան գլխաւոր ճիգը կը կեդրոնանայ Մոնթեպելլոյի United Armenians-ի եւ մասնաճիւղի ֆութպոլի խումբերուն միացման վրայ: Անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 310-ի որոնցմէ 124ը սկաուտական շարքերէն: Մասնաճիւղի անդամներ՝ Թորոս Բարսեղեան, Նուպար Սարգիսեան եւ Վիգէն Յովսէփեան կը կազմեն Շրջանային վարչութեան նախաձեռնած միջ-մասնաճիւղային առաջին խաղերու գործադիր մարմինը:

20 Փետրուար 1976ին կ'ընտրուի եօթը անդամներէ բաղկացած վարչութիւն՝

- Ատենապետ՝ Ռուբէն Յակոբեան
- Փոխ ատենապետ՝ Տոքթ. Սարգիս Արեւեան
- Ատենադպիր՝ Վարդգէս Ղազարեան
- Գանձապահ՝ Մուրատ Շահինեան
- Ընկերային յանձ. ներկայացուցիչ՝ Ճորճ Պաղտոյեան

Ակումբի պատասխանատու՝ Աբրահամ Իղճեան

Ֆութպոլի պատասխանատու՝ Էտի Գագեան:

Գրեթէ ամբողջութեամբ նոր անդամներէ բաղկացած այս վարչութիւնը դժուարութիւններ կ'ունենայ նշանակելու սկաուտական խորհուրդ որուն կազմը բազմիցս փոփոխութեան կ'ենթարկուի: Սկաուտական աշխատանքները կ'իրականանան աստիճանաւորական կազմի միջոցաւ:

28 եւ 29 Մայիս 1976ին տեղի կ'ունենան Շրջանային վարչութեան նախաձեռնած առաջին միջ-մասնաճիւղային Նաւասարդեան խաղերը, նուիրուած Միացեալ Նահանգներու անկախութեան 200ամեակին: Ելոյթի եւ անոր հետեւող յաղթանակի պարահանդէսը կ'իրականան մասնաճիւղի անդամներու օժանդակութեամբ:

Ակմբային կեանքին զարկ կը տրուի ընկերային հաւաքներու իրականացումով: Վարչութեան կարեւորագոյն իրականացումներէն պիտի ըլլար ակումբի գնման յանձնախումբի մը կեանքի կոչուիլը: Յանձնախումբը տենդազին աշխատանքի կը լծուի ծրագիրը իրականացնելու նպատակով: Սկաուտական հաւաքոյթները տեղի կ'ունենան Կրֆիթ Փարքի Կրիք Թէաթրի շրջանին մէջ: Ֆութպոլի փորձերը Մոնթեպելլոյի Մեսրոպեան վարժարանին կից դաշտին մէջ:

11 Փետրուար 1977ին կ'ընտրուի ինը անդամներէ բաղկացած նոր վարչական կազմ՝

- Ատենապետ՝ Նուպար Սարգիսեան
- Փոխ ատենապետ՝ Յարութիւն Բարսեղեան
- Ատենադպիր՝ Սահակ Աւագեան
- Գանձապահ՝ Հրաչ Անսոնեան
- Խորհրդականներ՝ Յարութիւն Հալէպլեան, Էտի Գագեան, Աբրահամ Իղճեան եւ Վարդգէս Թովմասեան
- Սկաուտ խմբապետ՝ Ռազմիկ Շիրինեան:

Վարչութիւնը կը նշանակէ սկաուտական խորհուրդ, մարզական, ընկերային եւ ակումբի յանձնախումբեր, նաեւ Նաւասարդեան Բ. մարզախաղերու կազմակերպիչ յանձնախումբ: Ակմբային կեանքը կը զարգանայ: Սկաուտա-

կան շարքերը զգալի յաւելում կ'արձանագրեն: Ֆուլթայոլի եւ պասքեթբոլի կազմերը նահանգի բարձրագոյն դիրքերը կը գրաւեն:

1978 տարուայ վարչական կազմին կը մասնակցին, ատենապետութեամբ Նուպար Սարգիսեանի, Վարդգէս Թովմասեան՝ Փոխ ատենապետ, Արփի Պերեճիքեան՝ ատենադպրուհի, Վահէ Յովակիմեան՝ գանձապահ եւ անդամներ՝ Շանթ Հայթայեան, Ճորճ Պաղտոյեան, Մանուկ Զէթունցեան, Էտի Գազեան եւ Ռազմիկ Շիրինեան՝ Սկաուտ խմբապետ:

1980 ին մասնաճիւղը կը հաշուէ 313 անդամ որոնցմէ 150ը սկաուտական շարքերէն: Ֆուլթայոլի Ա. խումբը կը մասնակցի Մեյճըռ Լիկի ախոյանութեան եւ բաժակի մրցաշարքերուն: Վարչութեան կ'օժանդակեն Ֆուլթայոլի, պասքեթբոլի, ահումբի եւ ընկերային յանձնախումբեր նաեւ սկաուտական խորհուրդը:

20 Փետրուար 1981ին անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ՝ Ատենապետ՝ Յարութիւն Բարսեղեան
Փոխ ատենապետ՝ Յարութիւն Հալէպլեան
Ատենադպիր՝ Յակոբ Զիէրճեան
Գանձապահ՝ Նիկոլ Արզումանեան
Հաշուապահ՝ Գրիգոր Մահրուքեան
Գոյքապահ՝ Երուանդ Նահապետեան
Խորհրդականներ՝ Միսաք Թեպելէքեան եւ Մանուէլ Տուզճեան

Սկաուտ խմբապետուհի՝ Իւդիկ Շիթիլեան:

1982ին մասնաճիւղի վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Նուպար Սարգիսեան: Մասնաճիւղի արագօրէն աճող գործունէութեան համար Սանթա Մոնիքա թաղի ահումբը այլեւս անբաւարար էր: Վարչութիւնը կ'որոշէ ամէն գնով փոխադրուիլ այլ վայր եւ իր ահումբը կը փոխադրէ Հոլիվուտի «Ռոզ եւ Ալէք Փիլիպոս» վարժարանի կից ազգապատկան շէնքի առաջին յարկը: Ահումբի պաշտօնական բացումը տեղի կ'ունենայ 19 Փետրուար 1983ին- [Ծ/30.30]: Սկաուտական խորհուրդի, տնտեսական եւ մարզական յանձնախումբերու կողքին վարչութեան կ'օժանդակէ մար-

տարուեստի Վահագն միաւորի յանձնախումբը գլխաւորութեամբ Ճորճ Աբելեանի:

1983ի եղանակին վարչութեան կազմին կը մասնակցին ատենապետութեամբ՝ Կարպիս Շիրրտըմեանի, Յակոբ Թիւֆէնքճեան, Զապել Գազանճեան, Յարութիւն Գազանճեան, Արա Ասատուրեան, Իւդիկ Շիթիլեան, Մհեր Դաւիթեան, Նորա Իւլիպէյեան եւ Յակոբ Բրինճեան:

Նստավայրի փոփոխութեամբ ձեռք բերուած առաւելութիւնները վարչութեան գործունէութեան յաւելեալ դիւրութիւններ կ'ընծայեն, մարզական, սկաուտական եւ ընկերային աշխատանքներուն յաւելեալ առիթներ ստեղծելով:

1984ի վարչական կազմը, ընտրուած 19 Դեկտեմբեր 1983ին, կը բաղկանայ հետեւեալ անդամներէն.

Ատենապետ՝ Կարպիս Շիրրտըմեան
Փոխ ատենապետ՝ Յարութիւն Գազանճեան
Ատենադպիր՝ Վահագն Արսլանեան
Գանձապահ՝ Նիկոլ Արզումանեան
Քարտուղարուհի՝ Նորա Իւլիպէյեան
Սկաուտական ներկայացուցիչ՝ Սարգիս Զանեցեան
Հաշուապահ՝ Մհեր Դաւիթեան
Ընկերային ներկայացուցիչ՝ Յակոբ Թիւֆէնքճեան
Մարզական պատասխանատու՝ Վիգէն Երիքեան:

Տարուայ ընթացքին Սարգիս Զանեցեան եւ Նորա Իւլիպէյեան կը փոխարինուին Յարութիւն Հալէպլեանով եւ Վարդան Գրիգորեանով:

Ընթացիկ գործունէութեան տարի մը մարզական, սկաուտական եւ ընկերային բաժիններով:

17 Յունուար 1985ին մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ աշխատանքներու հետեւեալ բաժանումներով.-

Ատենապետ՝ Յարութիւն Բարսեղեան

Փոխ ատենապետ՝ Յակոբ Թիւֆէնքճեան
Ատենադպիր՝ Մհեր Դաւիթեան
Գանձապահ՝ Նիկոլ Արզումանեան
Հաշուապահ՝ Յարութիւն Հալէպլեան
Յանձնախումբերու ներկայացուցիչներ՝
Մարգարիտ Յարութիւն Գազանճեան
Սկաուտական՝ Երուանդ Վարդանեան
Ընկերային՝ Վարանդ Մելքոնեան
Խորհրդական՝ Հուրի Նաճարեան:

Ապրիլին վարչութեան նստավայրը կրկին կը փոխադրուի իր Սանթա Մոնիքայի նախկին կեդրոնը: Պասքեթպոլի փորձերը կը կատարուին Մարշըլ հայ սքուլի դաշտին վրայ, Ֆուլթպոլի փորձերը կը կատարուին մէջ: Այս տարեշրջանին ապագայի ծրագիրներու նախատեսութեամբ անձեռնմխելի գումարը կը բարձրանայ 30.000 տուարի:

12 Յունուար 1986ին տեղի կ'ունենայ անդամական ընդհանուր ժողով որու աւարտին կ'ընտրուի նոր վարչական կազմ՝

Ատենապետ՝ Յարութիւն Բարսեղեան
Փոխ-ատենապետ՝ Մհեր Դաւիթեան
Ատենադպիր՝ Երուանդ վարդանեան
Գանձապահ՝ Նիկոլ Արզումանեան:

Յանձնախումբերու ներկայացուցիչներ՝ Վարանդ Մելքոնեան, Սթիվ Արթինեան, Յարութիւն Քէհէյեան, սկաուտ խմբապետ՝ Միրո Խանգէթեան, խորհրդական՝ Լենա Մոմճեան փոխարինուած՝ Ծովիկ Սրապեանով:

Մասնաճիւղի անդամներու ընդհանուր թիւը բարձրացած է 400ի: Մասնաճիւղը ունի պասքեթպոլի երկու սեռերու 8 խումբեր, վոլեյպոլի խումբեր եւ ֆուլթպոլի կրտսերներու խումբ: «Վահագն» միաւոր իր 39 անդամներով հարաւային Գալիֆորնիոյ ճիւղի եւ քարաթի մրցաշարքին 85 խումբերու վրայ գրաւած է երրորդ պատուաբեր դիրքը:

9 Նոյեմբեր 1986ին անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչական կազմի անդամներն են՝

Ատենապետ՝ Մհեր Դաւիթեան
Փոխ ատենապետ՝ Վարանդ Մելքոնեան
Ատենադպիր՝ Երուանդ Վարդանեան
Գանձապահ՝ Նիկոլ Արզումանեան
Յանձնախումբերու ներկայացուցիչներ՝
Հրայր Թիւֆէնքճեան, Յարութիւն Քէհէյեան,
Սթիվ Արթինեան եւ Արամ Պէքէրեան

Սկաուտ խմբապետ՝ Միրո Խանգէթեան:

Այս կազմի աշխատանքներէն կ'ըլլայ Գալիֆորնիոյ պաշտօնական շրջանակներու պատասխանատուներու հետ յարաբերական կապերու հաստատում: Նստավայրի փոխադրութիւն Հայ կեդրոնի վարի յարկը: Մշակուող մարզաճիւղերու ցանցին մաս կը կազմեն ֆուլթպոլ, պասքեթպոլ, փինկփոնկ, թենիս, աթլետիզմ, քոնկ ֆուլ եւ քարաթէ: Դաստիարակչական ծրագիրներով վարչութիւնը կը կազմակերպէ դասախօսութիւններ: Լոյս կը տեսնէ մասնաճիւղի «Լրատու» պարբերաթերթի առաջին թիւը:

Կազմը կը գործէ նաեւ 1987ի տարեշրջանին:

1988 տարեշրջանին մասնաճիւղի վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Հրայր Թիւֆէնքճեան:

Մարգարիտ Գործունէութիւն

Լոս Անձելըսի մասնաճիւղի կիրարկած հիմնական մարզախաղերն են ֆուլթպոլ եւ պասքեթպոլ որոնց ներկայացուցչական խումբերը կը մասնակցին Գալիֆորնիոյ Մէյճըր Լիկի ախոյեանութեանց մրցաշարքերուն:

1975ին ֆուլթպոլի խումբը կը տիրանայ Գալիֆորնիոյ նահանգի բաժակին: Նոյնպէս պասքեթպոլի կազմը կը տիրանայ Գալիֆորնիոյ ախոյեանութեան տիտղոսին: Յաղթանակներու այս շարքը շարունակուած է յաջորդող տարիներու ընթացքին:

Շրջանի Նաւասարդեան խաղերու 1976ի առաջին ելոյթէն սկսեալ մասնաճիւղի մարզա-



Լոս Անճելլասի ֆուտպոլի «Կիլիկիա» խումբը

կան բոլոր խումբերը միշտ մասնակցած են ապահովելով առաջնակարգ արդիւնքներ: Ֆուտպոլի խումբը մասնակցած է 1979ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային վարչութեան կազմակերպած միջ-մասնաճիւղային մրցաշարքերուն:

1980ին կը կազմուի 14-16 տարեկան պատանիներէ բաղկացած ֆուտպոլի «Կիլիկիա» խումբը եւ քարաթէի եւ ճիւտոյի «Վահագն» միակորը: Վահագնի մարզիչն է Կարօ Խաչերեան:

1981էն սկսեալ Լոս Անճելլասի մասնաճիւղի ֆուտպոլի խումբը կը դառնայ Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանային ներկայացուցչական խումբ: Խումբի ղեկավարութեան կը մասնակցին՝ Քերօր Առաքելեան եւ Մանուկ Զէյթունցեան:

1982ի Լոս Անճելլասի Մէյճըր Լիկի ախոյեանութեան մրցաշարքի աւարտական մրցումին 1ի դէմ 2 կէտերու առաւելութեամբ յաղթելով

իր գլխաւոր մրցակից «Մաքալի» խումբին, Գալիֆորնիոյ ներկայացուցչական խումբը կը տիրանայ ախոյեանութեան պատմական յաղթանակ մը ապահովելով Շրջանին.- [Ծ/26.16]: Մրցակից նոյն խումբերուն միջեւ կայացած «Ախոյեաններու Ախոյեան եւ Պատուոյ բաժակիր» տիտղոսին համար մրցումի յաղթանակով ներկայացուցչական կազմը կը տիրանայ նաեւ այս նախանձելի տիտղոսին:

1983ին ներկայացուցչական խումբը երկրորդ տարին ըլլալով կը տիրանայ Լոս Անճելլասի Մէյճըր Լիկի ախոյեանութեան տիտղոսին.- [Ծ/33.24]:

Մասնաճիւղի մարզական ճիւղերէն են քոնկ ֆուն եւ քարաթէն, ղեկավարութեամբ՝ Ճորճ Աբելեանի, մարզիչ՝ Կարօ Խաչերեան: 23 Ապրիլ 1983ին մասնաճիւղի ըմբիշներ՝ Սարգիս Դարմանճեան, Աշոտ Ասլանեան, Աշոտ Համբարձումեան, Յարութ Ղազարեան եւ Վարդան Անտոնեան կը յաջողին 10 խումբերու մասնակ-

ցուծեամբ կայացող Գալիֆորնիոյ մրցաշարքի ախոյեանութեան սիրանալ - [Մ/33.32]:

1986ին մասնաճիւղի կիրարկած մարզաճիւղերու թիւը կը բարձրանայ ներառելով ֆուտպոլի, պասքեթպոլի, ճիւտոյի եւ քարաթէի կողքին՝ փինկփոնկ, թենիս եւ աթլետիզմ սողոց եւ աղջկանց բաժիններով:

Սկաուտական Գործունէութիւն

Լոս Անճելըսի մասնաճիւղի սկաուտական աշխատանքները իրականացած են գլխաւորաբար աստիճանաւորական լայն ցանցի մը միջոցաւ:

1976 տարուայ աստիճանաւորական կազմի անդամներն են.

Ընդհանուր խմբապետ՝ Ռազմիկ Շիրինեան
Միաւորի խմբապետ՝ Զարեհ Սողոմոնեան
Խմբապետ՝ Կարօ Մարգարեան
Փոխ խմբապետներ՝ Հայկօ Օվայեան, Ժանօ Քահուէճեան եւ Պերճ Կարապետեան
Աքելլա՝ Արա խշուածեան
Պալուներ՝ Մկրտիչ Օվայեան, Կարօ Գասպարեան, Սիւզի Գալփաքլեան եւ Ծովիկ Խանգէթեան:

1977ին սկաուտական բաժնի ընդհանուր թիւն է 150: Կազմակերպչական եւ թեքնիք բաժինները զգալի յառաջդիմութիւններ կ'արձանագրեն: Խմբապետներ կ'օժանդակեն Բասատենայի, Կլէնտէյլի եւ Սան Ֆեռնանտօ Հովիտի մասնաճիւղերու սկաուտական բաժիններու զօրացման:



Լոս Անճելըսի մասնաճիւղի արեւոյշները կը տողանցեն Նաւասարդեան Դ. Խաղերու փակման հանդիսութեան - 1979

1979ին մասնաճիւղի ընդհանուր խմբապետն է Ջարեհ Սողոմոնեան: Խումբերը իւրաքանչիւր տարի կը մասնակցին Շրջանի Նաւասարդեան խաղերուն առթիւ կազմակերպուած փակման հանդիսութիւններուն՝ ընդհանուր տողանցքներուն:

1980ին 23 արի-արենոյշներէ բաղկացած պատուիրակութիւն մը կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային Բ. ընդհանուր բանակումին՝ Գլամարի մէջ Ֆրանսա: Սկսած աստիճանաւորներ՝ Նազարէթ Աշճեան, Մարլէն Արսլանեան եւ Յարութիւն Տէյիրմէնճեան կ'օժանդակեն Թորանս քաղաքի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի սկսած սկստական կորիզի մը կազմակերպումին:

1981ին մասնաճիւղի սկստական բաժինը կը բաղկանայ շուրջ 400 անդամներէ որոնց ընթացիկ աշխատանքներուն մաս կը կազմեն աստիճանաւորական դպրոց բանակում, Ապրիլ 24ի, Մայրերու Օրուայ տօնակատարութիւն եւ հիւանդանոցային այցելութիւններ: Սկստական խորհուրդի տարուայ ատենապետն է Կարպիս Շիրրտրմեան: Աստիճանաւորական կազմի անդամներն են Իւդիկ Շիթիլեան, Սաֆօ Ճանեցեան, Յարութ Տօնոյեան եւ Միրօ Խանգէթեան:

1983-84 տարեշրջանի սկստական խորհուրդին մաս կը կազմեն ատենապետութեամբ՝ Արա Ասատուրեանի, անդամներ՝ Սաֆօ Ճանեցեան, Երուանդ Վարդանեան, Պերճ Ճամճեան, Կարպիս Կանիմեան, Բիւզանդ Շէօճմէլեան եւ Արփի Միհրանեան: 1985ին այս կազմի կարգ մը անդամները կը փոխարինեն Վահագն Արսլանեան, Ճորճ Տէմիրճեան, Սօսէ Տագեսեան, Սիրարփի Չիլինկիրեան եւ Մկրտիչ Խորոզեան:

1985ին շարքերու ընդհանուր թիւն է շուրջ հարիւր: Հաւաքոյթները կը կայանան կիրակի առաւօտները Ալէք Փիլիպոս վարժարանի բակին մէջ: Սկստական նուագախումբը կազմալոյծ վիճակի մէջ է:

1986ին սկստական խորհուրդի դիւանին

մաս կը կազմեն ատենապետ՝ Արամ Պեքերեան, ատենադպիր՝ Հրայր Թիւֆէնքճեան եւ գանձապահ՝ Պերճ Ճամճեան: Տարեկան բանակումներ, դասախօսական հաւաքոյթներ կը կազմակերպուին ընթացիկ հերթականութեամբ:

1987ի մասնաճիւղի սկստական ընդհանուր խմբապետն է Միրօ Խանգէթեան:

Հակառակ տարիներու փորձառութեամբ օժտուած սկստական աստիճանաւորական կազմին, բաժնի ընդհանուր թիւը բնականոն յաւելում չ'արձանագրէր: Շարքերու ընդհանուր թիւն է 120:

Հրապարակային Հանդիսութիւններ

Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղը ունի տարեկան աւանդական ճաշկերոյթ-պարահանդէսները, որոնք մասնաճիւղի շուրջ կը հաւաքեն համակիրներու բազմութիւն մը եւ նիւթական եկամտի միջոցներ կը հանդիսանան ի նպաստ մասնաճիւղի գանձին: Շարքի առաջին ձեռնարկը տեղի կ'ունենայ 1975ին հոգնաւորութեամբ Տիգրան Քհն. Խոյեանի եւ նախագահութեամբ՝ Պոլսոյ Հ.Մ.Ը.Մ.ի առաջին սկստականներէն Արշակ Տիգրանեանի:

Պանդոկ «Ամպասատոր»ի մէջ, հոգնաւորութեամբ Տէր եւ Տիկին Ալեքսան Փիլավճեանի, յաղթանակի պարահանդէսը կը կազմակերպուի 1980ի Նաւասարդեան խաղերու փակման առթիւ:

«Հ.Մ.Ը.Մ.ի Օր»ուայ տարեկան հրապարակային հանդիսութիւններուն առաջինը կը կայանայ 1977ին:

1978ին վարչութիւնը կազմակերպած է մասնաճիւղի հիմնադրութեան 10ամեակի հանդիսութիւն Կլէնսէյլ Գոլէճի հանդիսասրահին մէջ: Իսկ 1988ին մասնաճիւղը կը տօնէ իր հիմնադրութեան քսանամեակը պաշտօնական ճաշկերոյթ պարահանդէսով, որ տեղի կ'ունենայ «Րէճիսթրը» պանդոկին մէջ մեծաթիւ հանդիսականներու ներկայութեամբ:

Մասնաճիւղի յարաբերական աշխատանք-

ներու ծիրը ընդարձակելով իրերայաջորդ վարչուլթիւնները կապեր հաստատած են Գալիֆորնիոյ նահանգի կառավարիչ Ճորճ Տէօքմէճեանի եւ քաղաքապետ Թամ Պրատլիի հետ անոնց ծանօթացնելով Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը ընդհանրապէս եւ յատկապէս մասնաճիւղի աշխատանքները:

ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՕ

Կազմակերպչական, մարզական եւ սկսուտական գործունէութիւններ

1975էն սկսեալ Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղը նոր թափով կը ձեռնարկէ աշխատանքի:

1979ին մասնաճիւղը կը սկսի օգտագործել նորակերտ Հայ Կեդրոնի ընձեռած առաւելութիւնները:

1980ին մասնաճիւղը կը հաշուէ 216 անդամ: Կիրարկուող մարզաճիւղերն են պասքեթպոլ եւ վոլիպոլ երկու սեռերու խումբերով, ֆուլթպոլ, թենիս, փինկփոնկ եւ աթլետիզմ: Ֆուլթպոլի, պասքեթպոլի եւ վոլիպոլի խումբերը կը մասնակցին Սան Ֆրանսիսքոյի ախոյեանութեանց մրցաշարքերուն:

1982ին մասնաճիւղի վարչութեան ատենապետն է Ժիրայր Սարգիսեան: 29 եւ 30 Մայիսին, մասնաճիւղը կը կազմակերպէ իր սկսուտական ու մարզական երկրորդ փառատօնը որուն կը մասնակցին բացի մասնաճիւղի խումբերէն, հիւրաբար ժամանած՝ Կլէնտէյլի եւ Ֆրեզնոյի մասնաճիւղերու ֆուլթպոլի, պասքեթպոլի եւ աթլետիզմի խումբերը: Տեղի կ'ունենայ ընդհանուր սողանքը.- [Մ/26.14]:

24 Յուլիս 1982ին տեղի կ'ունենայ մասնա-



Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղի վոլիպոլի աղջկանց խումբը

ճիւղի ակումբի պաշտօնական բացումը.- [Ծ/ 27.24]:

1983ի վարչական կազմի անդամներն են՝ Ատենապետ՝ Ժիրայր Սարգիսեան ֆոխատենապետ՝ Կարպիս Պէզճեան Ատենադպիր՝ Ասատուր Քեվրանեան Գանձապահուհի՝ Միրթա Արսէնեան Խորհրդականներ՝ Ալպէրթ Ալեքսանեան, Սեդրակ Սողոմոնեան, եւ Ռոպէրթ Սարգիս՝ Սկաուտ խմբապետ:

275 անդամներ հաշուող մասնաճիւղի բազմաճիւղ գործունէութեան կ'օժանդակեն սկաուտական խորհուրդը, ընկերային եւ մարզական յանձնախումբերը: Մարզական խումբերու մարզիչներն են՝ Տան Լէվի, Ասպետ Գալ-

Ֆայեան, Ծովիկ Անտոնեան եւ Սրբուկ Սարգիսեան:

Մասնաճիւղի սկաուտական եւ մարզական Գ. փառատօնը տեղի կ'ունենայ 2 Սեպտեմբերին: Ֆուլթայոլի, պասքեթբոլի եւ աթլետիկ մրցումներուն կը մասնակցին Բասատենայի, Սան Ֆեռնանտօ Հովիտի, Լոս Անճելլոսի, Կլէնտէյլի (Արարատ) եւ Ֆրէզնոյի մասնաճիւղերու խումբերը: Փակման հանդիսութեան տողանցքին կը մասնակցին 350 մարզիկներ եւ մասնաճիւղի սկաուտական շարքերը.- [Ծ/36.10]:

Սան Ֆրանսիսքոյի մարզական Գ. փառատօնը տեղի կ'ունենայ 1 եւ 2 Սեպտեմբեր 1984ին նախորդ տարիներու փառատօնը գերազանցող ճոխ յայտագրով: Մարզաճիւղերու ընթացիկ ցանկին վրայ կ'աւելնան փինկփոնկը



Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղի աստիճանաւորները

եւ թենիսը: Փառասուծը կը հովանաւորեն Տէր եւ Տիկին Արթ Պասմաճեան, հանդիսականներու թիւը կրկնապատկուած է նախորդներուն համեմատած: Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղը տարուէ տարի աւելի հաստատ հիմերու վրայ կը գործէ:

1985 տարուայ վարչութեան կազմին կը միանայ Կարպիս Էօլմեսէքեան փոխ ատենապետի պաշտօնով:

Փառասուծներու շարքին հինգերորդը կը կայանայ 31 Օգոստոս եւ 1 Սեպտեմբեր 1985ին: Օրուայ նախագահն է Սարգիս Գալփաքեան: 31 Օգոստոսի գիշերը Հայ կեդրոնի սրահին մէջ կը նշուի մասնաճիւղի հիմնադրութեան 15ամեակը: Այս առթիւ խօսք կ'առնեն մասնաճիւղի ատենապետն ու փոխ ատենապետը եւ Շրջանային վարչութեան ներկայացուցիչ Ռուբիկ Գիւրճեան: 23 Նոյեմբերին յատուկ հանդիսութեամբ մասնաճիւղը կը տօնէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 67ամեակը: Այս առթիւ խօսք կ'առնեն Շրջանային վարչութեան ատենապետ Ժիրայր Պոյաճեան, բանախօս՝ Եզնիկ Բալայեան եւ Արեւմտեան Միացեալ Նահանգներու Կիլիկիան Թեմի առաջնորդ Տաթեւ Արք. Սարգիսեան:

17 Յունուար 1986ին մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ՝

Ատենապետ՝ Րաֆֆի Խաչատուրեան

Փոխ ատենապետ՝ Արա Տէրունեան

Ատենադպիր՝ Հայկ Միճեան

Գանձապահ՝ Կասիա Զաքքեան

Խորհրդականներ՝ Ժիրայր Սարգիսեան, Մարտիրոս Արիստագէսեան եւ Ռոպէրթ Սարգիս:

Տարեկան ընթացիկ գործունէութիւնները կը հանգին մասնաճիւղի 6րդ սկաուտական եւ մարզական փառասուծին, 30 Օգոստոս 1986ին, եւ կը փակուին ճաշկերոյթ պարահանդէսով:

1986ի տարեվերջին մասնաճիւղը կը ստանայ Աշոտ Մամիկոնեանի յետ մահու կտակին

իր բաժինը կտակարար տիկին Սառա Նազարէթեանի ձեռամբ: Աշոտ Մամիկոնեան, Պոլսոյ մէջ, բերայի մասնաճիւղէն միութեան հիմնադրութեան օրերուն եղած է առաջին հեծելանաւորդներէն, յաջողակ արդիւնքներով եւ փափաքած է որ իր կտակը ծառայէ Հ.Մ.Ը.Մ.ին- [Գ.116]: Կտակի գումարն է 148.729,60 ամերիկեան տոլար (հարիւր քառասուն հազար եօթը հարիւր քսանը ինը տոլար եւ 60 սէնթ).- [Ծ/67-68.29]:

ՖՐԵՉՆՕ

Կազմակերպչական, մարզական եւ սկաուտական գործունէութիւններ

Մ. Նահանգներու Արեւմտեան Շրջանի երրորդ մասնաճիւղը Ֆրեզնօն 1975ին կը շարունակէ իր երթը մարզական եւ սկաուտական բաժիններով:

1979ի Հոկտեմբեր եւ Նոյեմբեր ամիսներուն Ֆրեզնոյի սկաուտական կազմէն 7 անդամներ կը մասնակցին ամերիկեան սկաուտական կեդրոնի մասնագիտացման դասընթացքին՝ ստանալով համապատասխան վկայագրեր եւ արժանանալով յատուկ գնահատանքի: Անդամներու ընդհանուր թիւն է 101 որոնցմէ 45ը սկաուտական շարքերէն:



Ֆրեզնոյի մասնաճիւղի ֆուլպոլի խումբը - 1981



Ֆրեյնոյի մասնաճիւղի Վարչական կապը 1981-1982

1980ին վարչութեան կ'օժանդակեն սկաուտական խորհուրդը եւ մարզական, ընկերային եւ ձեռնարկներու յանձնախումբեր; Սկաուտական կազմերը սերտ գործակցութիւն կը մշակեն ամերիկեան սկաուտական խումբերուն հետ:

1982 տարուայ մասնաճիւղի վարչութեան կ'անդամակցին, ատենապետութեամբ՝ Վարուժան Պուլլութեանի, Վիքի Գաթարոյեան, Զոհրապ Ստեփանեան, Էսթեր Գոչունեան, Նելլի Միհրանեան եւ սկաուտական ընդհանուր խմբապետ՝ Հրաչ Գոչունեան:

1985էն սկսեալ մասնաճիւղի սկաուտական կազմը կ'ունենայ իր նուագախումբը: Բացի մարզական խումբերու ընթացիկ աշխատանքներէն մասնաճիւղը 67 հոգինոց պատուիրակութեամբ կը մասնակցի Շրջանի 10րդ Նաւասարդեան Խաղերուն: Մասնաճիւղի զանազան կազմերը եւ վարչութիւնը մնայուն մասնակցութիւն կը բերեն ազգային եւ եկեղեցական հանդիսութիւններուն նպաստելով անոնց յաջողութեան:

9 Փետրուար 1986ին մասնաճիւղի անդա-

մական ընդհանուր ժողովը լսել է եւք ընթացաւարտ վարչութեան գործունէութեան տեղեկագիրը, կ'ընտրէ նոր վարչական կազմ՝

- Ատենապետ՝ Բաֆֆի Սանդիկեան
- Ատենադպիր՝ Մարտիկ Եփրեմեան
- Գանձապահ՝ Փէթ Պուլութեան
- Մարզական պատասխանատու՝ Մանաս Սաղսրճեան

Ընկերայինի պատասխանատու՝ Ասողիկ Ճեպեան:

ՄՈՆԹԵՊԵԼԼՕ

Կազմակերպչական, մարզական եւ սկսուտական գործունէութիւններ

Հ.Մ.Ը.Մ.ի Մոնթեպելլոյի մասնաճիւղը հիմնուած է Ապրիլ 1974ին:

11 Յուլիս 1975ին անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ բաղկացած հետեւեալ անդամներէն.-

- Ատենապետ՝ Քերոբ Առաքելեան
- Ատենադպիր՝ Մինաս Մարգարեան
- Գանձապահ՝ Պօրիս Կիրակոսեան

Խորհրդականներ՝ Աբրահամ Արծրունեան եւ Տէնիս Ղազարեան:

Այս կազմը կազմակերպչական աշխատանքները զարգացնելու դժուարութիւններու կը հանդիպի Լոս Անճելըսի մասնաճիւղի կարգմը վարչական անդամներու հետ իր ունեցած տարակարծութիւններուն պատճառով:

Այս դժուարութիւնները շրջանցելու նպատակով Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային վարչութիւնը 21 Յուլիս 1976ին կը նշանակէ նոր վարչական կազմ հետեւեալ կերպով.-

- Ատենապետ՝ Մինաս Մարգարեան
- Ատենադպրուհի՝ Սալբի Բագրատունի
- Գանձապահ՝ Արա Շիրրտրմեան
- Հաշուապահ՝ Իշխան Զարոյեան

Խորհրդականներ՝ Հրաչ Ասատուրեան, Եղիա Գոճայեան եւ Սարգիս Սանկիկեան:

Այս կազմի իրականացումները եւս պիտի ըլլային շատ սահմանափակ:

1983ին մասնաճիւղի վարչութեան ատենապետուհին է Լիսա Բարսեղեան: Մասնաճիւղի մարզական խումբերը կը մասնակցին Արեւմտեան Մ. Նահանգներու Տրդ Նաւասարդեան խաղերուն՝ նուիրուած Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 65ամեակին: Մասնաճիւղը կը կիրարկէ Ֆութպոլ, պասքեթպոլ, վոլիպոլ, թենիս եւ աթլետիզմ: Շրջանի Տրդ Նաւասարդեանի մրցաշարքերուն պասքեթպոլի եւ վոլիպոլի աղջկանց խումբերը կ'ապահովեն ախոյեանութեան բաժակները:

17 Մարտ 1984ին վարչութիւնը կը կազմակերպէ ճաշկերոյթ-պարահանդէս ի նպաստ տեղւոյն «Մեսրոպեան» ազգ. վարժարանի մարզարանի բարեզարդման ֆոնտին: Այս առթիւ կը պարզեւատրուին Թոնի Թիւֆէնքճեան եւ Ասլան Մարտիրոսեան: Հակառակ այս կենսունակ գործունէութեանց մասնաճիւղը կազմակերպչական դժուարութիւններ կը դիմագրաւէ եւ 1984-85 տարեշրջանին, մարզական խումբերու գոյութիւնը պահելը կը դժուարանայ:

1985ին Սեպտեմբերին Շրջանային Վարչութիւնը կը նշանակէ մասնաճիւղի նոր վարչական կազմ՝

- Ատենապետ՝ Նշան Սարաֆեան
- Փոխ-ատենապետուհի՝ Լիսա Բարսեղեան
- Քարսուղարուհի՝ Մարալ Աբելեան
- Գանձապահ՝ Ծան Նաշունեան

Սկսուտական պատասխանատու՝ Վիգէն Յովսէփեան

Խորհրդականներ՝ Մանուկ Զէյթունցեան, Յարութ Պուրեան, ՔենիՄոսիկեան եւ Վահէ Գաբրիէլեան:

Այս եղանակէն սկսեալ Ազգ. Մեսրոպեան վարժարանի տնօրէն եւ մասնաճիւղի վարչական Վիգէն Յովսէփեանի ճիգերով կը կազմուի նաեւ մասնաճիւղի սկսուտական կորիզը:

ԲԱՍԱՏԵՆԱ

Հիմնադրութիւն եւ կազմակերպչական գործունէութիւն

Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանի հինգերորդ մասնաճիւղն է Բասատենայի մասնաճիւղը, հիմնուած 1977ին: Մինչեւ մասնաճիւղի պաշտօնական հիմնադրութեան աքթը, Բասատենայի պատասխանատու անդամներ շրջանի փոքրիկները կը փոխադրէին Մոնթեպելլօ հոն մասնակցելու համար տեղւոյն Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքներուն: Այս դժուարին ճիգերուն

առաջը առնելու համար Մոնթեպելլոյն կարգ մը վարչականներ կը խնդրեն Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային վարչութեան եւ արտօնութիւնը կը ստանան հիմնելու առանձին մասնաճիւղ:

20 Մարտ 1977ին տեղի կ'ունենայ հիմնադրութեան հաւաքը ուր կ'ընտրուի մասնաճիւղի անդրանիկ վարչական կազմը՝

Ատենապետ՝ Իշխան Զարոյեան
Փոխ ատենապետ՝ Եղիա Գոճայեան
Ատենադպիր՝ Հրաչ Ասատուրեան
Գանձապահ՝ Արա Շիրրտրմեան
Խորհրդականներ՝ Ժագ Թիւթիւնճեան,



Փաստինայի Հ.Մ.Ը.Մ. մասնաճիւղի 1979-ի վարչական կազմը: Նստած՝ Գարեգին Պապասուլուքեան, Մնացական Յարութիւնեան, Արա Շիրտրմեան, ոտքի՝ Ժիրայր Պաղպուտարեան, Յովհաննէս Թաշճեան, Հրայր Թորոսեան, Յովհաննէս Թօքաթեան

Յովհաննէս Թաշճեան եւ Մանուէլ Իւթիւճեան:
Վերջինս աւելի ուշ պիտի ստանձնէր փոխ
ատենապետի պաշտօնը:

Այս կազմը անյապաղ գործի լծուելով կը
կազմէ սկաուտական եւ մարզական խումբեր
որոնք 1977էն սկսեալ կը մասնակցին միջ-մաս-
նաճիւղային խաղերուն: Անդամներու ընդհա-
նուր թիւը արդէն հասած էր 154ի:

1978-79 տարեշրջանի վարչական կազմի
ատենապետութիւնը կը վարէ Հրայր Թորոս-
եան:

1979ի աւարտին մասնաճիւղը կը գումարէ
անդամական ընդհանուր ժողով նախագահու-
թեամբ՝ Վազգէն Մատենլեանի եւ ատենադպ-
րութեամբ՝ Կարպիս Հինտոյեանի: Ընթացա-
ւարտ վարչութեան նիւթաբարոյական գոր-
ծունէութեան քննութենէն ետք ժողովը
կ'ընտրէ 1980 տարուայ նոր վարչական կազմ՝

Ատենապետ՝ Հրայր Թորոսեան
Փոխ ատենապետ՝ Արա Շիրրտըմեան
Ատենադպիր՝ Շահան Ստեփանեան
Գանձապահ՝ Մնացական Յարութիւնեան
Ֆութպոլի պատասխանատու՝ Գարեգին
Պապասուլուքեան

Պասքեթպոլի պատասխանատու՝ Յովհան-
նէս Թոքաթլեան

Սկաուտ խմբապետ՝ Ժիրայր Պաղպուտար-
եան:

Այս կազմի գլխաւոր պարտականութիւնը
պիտի ըլլար մասնաճիւղը օժտել սեփական հա-
ւաքավայրով:

13 Փետրուար 1981ին Բասատենայի Հայ
Կեդրոնի սրահին մէջ տեղի կ'ունենայ անդա-
մական ընդհանուր ժողով որու աւարտին նո-
րակազմ վարչութիւնը իր աշխատանքներու
բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով:-



1980 տարուայ Բասատենայի մասնաճիւղի ֆութպոլի խումբը

Ատենապետ՝ Յովհաննէս Թաշճեան
Փոխ ատենապետ՝ Հրաչ Ասատուրեան
Ատենադպիր՝ Մնացական Յարութիւնեան
Գանձապահ՝ Վահէ Գաբրիէլեան
Խորհրդականներ՝ Արա Շխըրտըմեան,
Յովհաննէս Նազարեան եւ Ժիրայր Պաղպուսարեան՝ սկսուա խմբապետ:

1983 տարուայ վարչական կազմին կ'անդամակցին Անի Գիլէճեան, Տիգրան Թաշճեան եւ Արիգ Գէորգեան:

17 Յունուար 1986ին մասնաճիւղը կը գումարէ անդամական ընդհանուր ժողով ներկայութեամբ Շրջանային վարչութեան ներկայացուցիչ Մակի Բարսեղեանի, նախագահութեամբ՝ Յովհաննէս Թաշճեանի, ատենադպրութեամբ՝ Րաֆֆի Թոնաքեանի: 1985 տարեշրջանի վարչութեան գործունէութեան քննութիւնէն ետք կ'ընտրուի նոր վարչական կազմ՝

Ատենապետ՝ Յովհաննէս Թաշճեան
Փոխ ատենապետ՝ Ճազ Կարապետեան
Ատենադպիր՝ Րաֆֆի Թոնաքեան
Գանձապահ՝ Էսուար Մարտիրոսեան
Գոյքապահ՝ Գօգօ Գալբաքեան
Ընկերայինի պատասխանատու՝ Սարգիս Սահակեան

Սկսուա խմբապետ՝ Ժիրայր Պաղպուսարեան:

Տարիներու ընթացքին մասնաճիւղի սկսուական խմբապետութիւնը վարած են Ժիրայր Պաղպուսարեան եւ Արիգ Գէորգեան:

Հրապարակային ձեռնարկներ

3 Դեկտեմբեր 1983ին, Հայ Կեդրոնի սրահին մէջ պաշտօնական ճաշկերոյթով մասնաճիւղը կը սօնէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 65ամեակը եւ մասնաճիւղի հիմնադրութեան եօթնամեակը: Օրուան պատգամը կը փոխանցէ Շրջանային վարչութեան փոխ ատենապետ Յակոբ Օվայեան:

ԿԼԷՆՏԷՅԼ

Հիմնադրութիւն

Գործունէութեան սկզբնաւորութեան շարքով Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղը Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանի ճրգ մասնաճիւղն է որ կը գործէ Գալիֆորնիոյ նահանգի Կլէնտէյլ շրջանին մէջ 1977էն սկսեալ:

15 Դեկտեմբեր 1978ի հիմնադրութեան հաւաքին ներկայ կը գտնուին 31 անդամներ:

Կազմակերպչական գործունէութիւն

Հիմնադրութեան կը հետեւի անդամակցութեան բացառիկ աճ:

1979ի կիսուն հաշուող 143 անդամներու թիւը, 1980ի փետրուարին կը բարձրանայ 378ի տարեվերջին հասնելու համար 658ի:

1980 տարուայ վարչական կազմի անդամներ կ'ընտրուին՝

Ատենապետ՝ Ռուբիկ Գիւրճեան
Փոխ ատենապետ՝ Կարէն Բենեասեան
Ատենադպրուհի՝ Իդա Քարայեան
Գանձապահ՝ Հրայր Մեսրոպեան
Մարզական պատասխանատուներ՝ Գառնիկ Նալպանտեան եւ

Արմիկ Աբրահամեան
Սկսուա խմբապետ՝ Վարուժան Միրզայեան:

Անդամակցութեան աճի համեմատութեամբ կը բազմանայ նաեւ մասնաճիւղին կողմէ կիրարկուող մարզաձեւերու թիւը: 1980ին կը կիրարկուին պասքեթպոլ սիոց եւ աղջկանց բաժիններով, ֆութպոլ մեծերու եւ փոքրերու բաժիններով, վոլիպոլ, փինկփոնկ, ժիւսօ, լող, մարմնամարզ եւ աթլետիզմ:

1981 տարուայ վարչական կազմը իր աշխատանքներու բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով.

Ատենապետ՝ Ռուբիկ Գիւրճեան

Փոխ ասենապետ՝ Արմիկ Քարայեան
Ասենադպրուհի՝ Ռուզան Մովսէսեան
Գանձապահ՝ Էդիկ Միրզայեան
Գոյքապահ՝ Արմիկ Աբրահամեան
Մարզական պատասխանատու՝ Վազգէն
Ամիրեան

Սկառուտապետ՝ Վարուժան Միրզայեան:

1983 տարուայ վարչական կազմի ասենապետն է Համլէթ Չրախչեան: Նոյնպէս ասենապետութեամբ Համլէթ Չրախչեանի, 1984 տարեշրջանի Կլէնտէյլի Հ.Մ.Ը.Մ. Արարատի վարչական կազմի անդամներն են, փոխ ասենապետ՝ Էդիկ Մուշեղեան, Սեւակ Սագինեան, Արմիկ Բաղդասարեան, Արմանտ Գորգորեան,

Գրիգոր Մկրեան, Յովսէփ Մովսէսեան եւ Խաչիկ Խալաթեան:

Նախորդի նման, այս կազմի գլխաւոր ծրագիրն է մասնաճիւղը օժտել սեփական աւելումով: Այս նպատակի իրագործման համար վարչութիւնը կը դիմէ Ղարաղաղցի հայրենակիցներու որոնք 27 Յունուար 1984ի ճակերոյթ պարահանդէսով կը յաջողին գոյացնել աւելի քան 50.000 ամերիկեան տոլար: Վարչութիւնը արդէն սեփական աւելումի վայր մը գտած էր եւ անոր իրականացումին համար կը նշանակէ մնայուն յանձնախումբ մը հետեւեալ կազմով. Ասենապետ՝ Վազգէն Ամիրխանեան, փոխ ասենապետ՝ Ժորժ Ահարոնեան,



Կլէնտէյլի Արարատ մասնաճիւղի 1983 տարուայ վարչական կազմ, նստած՝ Սեւակ Սագինեան, Էդիկ Մուշեղեան, Համլէթ Չրախչեան, ուղի՝ Արմիկ Բաղդասարեան, Արմանտ Գորգորեան, Գրիգոր Մկրեան, Յովսէփ Մովսէսեան եւ Խաչիկ Խալաթեան

գանձապահ-քարտուղար՝ Էդիկ Մուշեղեան, անդամներ՝ Լեւոն Միրզայեան, Վիքթոր Մարթին, Խորէն Սալմասեան, Նորիկ Թումանեան եւ Արտաւազդ Միրզայեան.- [Ծ/41.15]:

10 Փետրուար 1985ին մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովին ընտրուած վարչութիւնը իր աշխատանքներու բաժանումը կը կատարէ հետեւեալ կերպով.

- Ատենապետ՝ Համլէթ Չրախչեան
- Փոխ ատենապետ՝ Ժորժ Ահարոնեան
- Ատենադպրուհի՝ Լիլիթ Բաղդասարեան
- Գանձապահ՝ Օսիկ Մովսէսեան
- Սկաուտ խմբապետ՝ Արտուշ Մովսէսեան

Խորհրդականներ՝ Արմանտ Գորգորեան եւ Արմանտ Միրզայեան:

Մասնաճիւղը կը գործէ չորս բաժանումներու յատուկ վարչութիւններու գլխաւորութեամբ՝ երէցներու, մարզական, սկաուտական եւ երիտասարդական վարչութիւններ:

Այս կազմի գլխաւոր աշխատանքը կը հանդիսանայ մասնաճիւղի սեփական կալուածի համար 65.000 տոլարի մասնավճարի ապահովումը:

1986 տարեշրջանի վարչութեան ղիւանը կը մնայ անփոփոխ: Կազմի նոր անդամներն են գանձապահ՝ Ալֆրէտ Խայաթ, սկաուտական



Կլէնսէյլի մասնաճիւղի երէցներու վարչութիւն, նստած՝ Վիքթոր Մարթին, Լիլիթ Պաղտասարեան, Ռոպիկ Պաղտասարեան, Լեւոն Մելիքեան, ուրի՝ Գէորգ Սարեան Ռապմիկ Յովհաննէսեան, Խաչիկ Չարդարեան, Հրայր Մեսրոպեան

պատասխանատու՝ Արմիկ Բաղդասարեան եւ
խորհրդականներ՝ Արմանու Գորգորեան եւ
Հարմիկ Սարեան:

Մարզական գործունեութիւն

Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտէյլի Արարատ մասնաճիւղի մարզական բաժինը իր հիմնադրութիւնէն սկսեալ ունեցած է բացառիկ գործունէութիւն: Մասնաճիւղը կիրարկած է ֆուտպոլ, պասքեթպոլ, վոլիպոլ, աթլետիզմ, փինկփոնկ եւ թենիս: Մասնաճիւղի խումբերը միշտ ներկայ են Շրջանի Նաւասարդեան խաղերուն յաղթական արդիւնքներով:

Տարիներու ընթացքին զանազան մարզաճիւղերու մարզիչի պաշտօններ վարած են՝

Ֆուտպոլ՝ Գառնիկ Բարոյեան
Պասքեթպոլ՝ Արմիկ Աբրահամեան, Ռազմիկ Մելիքեան, Վանիկ Ասատուրեան, Անտրէ Բաշայի, Գառնիկ Հայրապետեան, Էդիկ Յակոբեան եւ Արա Տէր Յուսիկ Ղուկասեան
Վոլիպոլ՝ Հրաչիկ Գրիգորեան
Փինկփոնկ՝ Ժորժիկ Եսայեան:

Սկաուտական գործունեութիւն

Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտէյլի մասնաճիւղի սկաուտական բաժինը շատ արագ աճ ունեցաւ: Սկզբնաւորութեան եօթը սկաուտներէ կազմուած կորիզը 1981ին արդէն ունէր 200 նորնձաներ որոնք իրենց երդման արարողութիւնը կատարեցին 20 Դեկտեմբերին հրապարակային



1979 - Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտէյլի Արարատ մասնաճիւղի փոքրիկներու խումբը կը ստղանցէ



Կլենտոնյի մասնաճիւղի Հ.Մ.Ը.Մ.ի նախասարդեան Ե. խաղեր

հանդիսութեան ընթացքին: Այս առթիւ մասնաճիւղի ընդհանուր խմբապետ Վարուժ Միրզայեանի ձեռամբ կատարուեցաւ աստիճանաբաշխում: Սկսուած աստիճաններ ստացան՝ խմբապետներ՝ Էդիկ Յովհաննէսեան, Հիլդա Ուկանեան, Մելինէ Զարահեան, Ալէն Ամիրխանեան եւ Արեգ Բաղդասարեան: Աւագ խմբապետներ՝ Գրիգոր Մկրեան եւ Արմիկ Բաղդասարեան: Մասնաճիւղի խմբապետ՝ Հարմիկ Սարեան:

16էն 23 Օգոստոս 1983ին մասնաճիւղի սկսուած ճիւղը կը կայացնէ տարեկան ընդհանուր բանակում Սանթա Պարպարայի, Քչումա Լէյքի Բանչօ Ալեկրօ բանակավայրին մէջ մասնակցութեամբ 250 սկսուածներու, արենոյններու, գայլիկներու եւ արծուիկներու:

Այս առթիւ տեղի ունեցաւ աստիճանատուչութիւն՝ մասնաճիւղի փոխ խմբապետ՝ Վարդան Աղաբեկեան, մասնաճիւղի փոխ խմբապետուհի՝ Ռուբինա Յովնանեան, միաւորի խմբապետուհի՝ Մարիքա Մուշեղեան, միաւորի խմբապետներ՝ Արտուշ Տէր Մինասեան եւ Փաթրիք Զրախչեան:

Հրապարակային ելոյթներ

Կլենտոնյի հայ սքոլի սրահին մէջ 4 Դեկտեմբեր 1983ին, մասնաճիւղը կը տօնէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 65ամեակը եւ իր հիմնադրութեան հնգամեակը: Օրուան պատգամախօսն է Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային վարչութեան ատենապետ՝ Տոքթ.

Մարգիս Արեւեան: Տեղի ունեցաւ գեղարուեստական յայտագիր եւ 20 նորընծաներու խոստումի արարողութիւն.- [Ծ/40.28]:

17 Յուլիս 1988ին սկսուողական շարքերու 580 անդամները «երդում 88» վերաւարութեամբ կը նշեն մասնաճիւղի հիմնադրութեան 10ամեակը:

ՕՐԷՆՃ ՔԱՈՒՆԹԻ

Կազմակերպչական, Մարզական եւ Սկսուողական Գործունէութիւններ

Օրէնճ Քաունթիի մասնաճիւղը հիմնուած է 12 Յունուար 1979ին:

Սկզբնաւորութեան գուտ մարզական գործունէութեան կողքին, հետզհետէ կը կազմուի սկսուողական բաժինը:

Մասնաճիւղի տարեկան գործունէութեան մաս կը կազմեն ընկերային ձեռնարկները՝ դաշտագնացութիւն, նախաճաշի հաւաք, շարժանկարի ցուցադրութիւն, եւ այլն:

1986ը Օրէնճ Քաունթիի մասնաճիւղի շինարարական տարին է երբ շրջանի հայութեան բոլոր ճիւղերը կը կեդրոնանան Հայ Կեդրոնի մը շինութեան վրայ որ նաեւ պիտի ծառայէ Օրէնճ Քաունթիի Հ.Մ.Ը.Մ.ի յառաջդիմութեան: Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային վարչութիւնը, դուրս բերելու համար մասնաճիւղը իր դժուարութիւններէն, յետ խորհր-



1980 - Հ.Մ.Ը.Մ.ի Օրէնճ Քաունթիի մասնաճիւղի փոքրիկներու խումբը

դակցութեան 12 Մայիս 1986ին կը յառաջացնէ նշանակեալ վարչութիւն՝

Ատենապետ՝ Կարօ Արուշեան
Փոխ ատենապետ՝ Սէմ Ազիզեան
Ատենադպիր՝ Հրաչ Հինդլեան
Գանձապահ՝ Տոքթ. Պետրոս Գոճեան
Խորհրդական՝ Արա Էքմէքճեան:

10էն 16 Օգոստոս 1988ին Օրէնճ Քառնթի-
էն սկսողական պատուիրակութիւն մը կը
մասնակցի Լոս Անճելըսի մասնաճիւղի կազմա-
կերպած տարեկան ընդհանուր բանակումին:
Այս մասնակցութիւնը մեծապէս օգտակար
կ'ըլլայ մասնաճիւղի սկսողական ճիւղի թեք-
նիք եւ կազմակերպչական զարգացումին:

ՍԱՆ ՖԵՆՆԱՆՏՕ ՎԱԼԻ

Հիմնադրութիւն

Արեւմտեան Մ. Նահանգներու Գալիֆորնի-
ա նահանգի հայ գաղութին արագօրէն աճող
չրջաններէն մէկն է Սան Ֆեռնանտո Վալին,
ուր յետ խորհրդակցութեան, 12 Սեպտեմբեր
1979ին, Շրջանային վարչութիւնը կը յառաջաց-
նէ նշանակովի վարչութիւն կատարելու հա-
մար անդամարշալ եւ կազմակերպելու անդա-
մական ընդհանուր ժողով:

1981ին անդամներու ընդհանուր թիւը կը
բարձրանայ 350ի որոնցմէ 130ը սկսողական
շարքերէն: Տարուայ վարչական կազմի ան-
դամներն են՝

Ատենապետ՝ Տոքթ. Սահակ Արսլանեան
Փոխ ատենապետ՝ Տոքթ. Ժան Մոմճեան
Ատենապետուհի՝ Ալիս Թոփալեան
Քարտուղարուհի՝ Սորինա Ֆրոնճեան
Գանձապահ՝ Ազիզ Կիլիսէսէրեան
Հաշուապահ՝ Տոքթ. Ժագ Ոսկերիչեան
Խորհրդականներ՝ Գառնիկ Ուղուրլեան,
Մարտիկ Կապուտեան եւ Բաֆֆի Սարգիս-
եան՝ սկսող խմբապետ:

Սկսողական խորհուրդ, մարզական եւ
ընկերային յանձնախումբեր ժրաջան աշխա-
տանքով մասնաճիւղի մակարդակը կը բարձ-

րացնեն նախանձելի դիրքի, Շրջանային ներկա-
յացուցչական խումբերուն հասցնելով կարե-
ւոր ուժեր:

1983 տարեշրջանի վարչութեան մաս կը
կազմեն

Ատենապետ՝ Տոքթ. Ժագ Մկրտիչեան
Փոխ ատենապետ՝ Ազիզ Կիլիսէսէրեան
Ատենադպրուհի՝ Սիլվա Թոփալեան
Գանձապահ՝ Գալուստ Քրիստիանեան
Խորհրդականներ՝ Սեպուհ Համասեան, Սո-
նա Մոմճեան եւ Համբիկ Սիսանեան:



Սան Ֆեռնանտո Վալիի Հ.Մ.Ը.Մ.ի Մարպական
Յանձնախումբը 1984ին: Ուրքի՝ Յարութ Խոտանեան,
Ժագ Արթինեան, Վահէ Գարամարտեան,
Թոմի Կինտեան Նստած՝ Բիւլանդ Մէյմարեան,
Ալիկ Կիլիսէսէրեան, Գաբրիէլ Գաբրիէլեան,
նկարէն բացակայ՝ ձորճ Մահշիկեան

Մասնաճիւղը կը տօնէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադ-
րութեան 65ամեակը: Օրուան բանախօսն է
Տիգրան Ոսկունի: Գեղարուեստական ճոխ
բաժնին իրենց մասնակցութիւնը կը բերեն,
Վազգէն Էքմէքճեան, Արփինէ Փեհլիվանեան,
Էլիզապէթ Փեհլիվանեան, Հիւլէ Սիմոնեան,
Ստեփան Պաղրամեան, Վարուժնակ Քելէկեան
եւ Իրանահայ Միութեան երգչախումբը :



1984 տարուայ Սան Ֆեռնանտո Վալիի մասնաճիւղի վարչական կապմ:
Նստած՝ Բիւլանդ Մէյմարեան, Արփի Չորպաճեան, Տոքթ. Ժագ Մկրտիչեան,
Գալուստ Քրիստիանեան, Ժան Պիլեմճեան, ոտքի՝ Րաֆֆի Սարգսեան, Սիլվա Պալլոզեան,
Ստեփան Պայրամեան, Հրանդ Սարաֆեան, Թորոս Չալիքեան

1984 տարեշրջանի վարչական կազմի անդամներն են՝

Ատենապետ՝ Տոքթ. Ժագ Մկրտիչեան, Բիւլանդ Մէյմարեան, Արփի Չորպաճեան, Գալուստ Քրիստիանեան, Ժան Պիլեմճեան, Րաֆֆի Սարգսեան, Սիլվա Պալլոզեան, Ստեփան Պայրամեան, Հրանդ Սարաֆեան եւ Թորոս Չալիքեան: Վարչութեան կ'օժանդակէ ընկերային յանձնախումբը որուն մաս կը կազմեն Մարալ Թորիկեան, Հուրիկ Տինկճեան, Արմինէ Սաֆարեան, Պետրոս Թասլաքեան, Սեպուհ Համասեան, Էլի Պալլոզեան եւ Վաչէ Ֆրունճեան:

1985 տարուայ վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Պարթեւ Եոլսուֆեանց: Վարչական կազմի մնացեալ անդամներն են՝ Ստեփան Պայրամեան, Գալուստ Քրիստիանեան, Նուպար Ֆաթրքճեան, Զապէլ Գազանճեան եւ Ժանէթ Ասլանեան: 10 Նոյեմբերին մասնաճիւղը կը կազմակերպէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 67ամեակին նուիրուած պասքեթպոլի սիդոց եւ աղջկանց խումբերու մրցաշարքեր մասնակցութեամբ Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղի խումբերուն:

2 Փետրուար 1986ին, 1985 տարուայ վար-

չուլթեան նիւթաբարոյական գործունէութեան սեղեկագրի քննութենէ ետք մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ՝

Ատենապետուհի՝ Զապէլ Գազանճեան
Փոխ ատենապետ՝ Կարօ Պապոչեան
Ատենադպիր՝ Անդօ Գամարեան
Գանձապահ՝ Վարդան Գուլյումճեան
Հաշուապահ՝ Ֆլորա Ունճեան
Գոյքապահ՝ Գօգօ Թօփալեան
Յանձնախումբերու ներկայացուցիչներ՝ Յարութ Խոստանեան, Էլի Պալոզեան եւ Ժանէթ Ասլանեան:

Պասքեթպոլի ճիւղը կը պահէ 4 խումբեր: Ֆուլթպոլի խումբը կը մասնակցի Լոս Անճելըսի քաղաքապետութեան լիկի ախոյեանութեան

մրցաշարքերուն: Խումբի մարզիչն է Կարօ Պապոչեան: Վոլիպոլի աղջկանց կազմը Ա. դասակարգի խումբերու բաժնին կը պատկանի: Մասնաճիւղը ունի նաեւ աթլետիզմի մասնակցող մարզիկներ: Մասնաճիւղի անդամներու ընդհանուր թիւը 500ի սահմանը կ'անցնի:

Մասնաճիւղի երիտասարդականի բաժանմունքը ունի 43 անդամներ՝ խանդավառ գործունէութեամբ: 29 Մարտին տարեկան ընկերային հաւաքոյթը կը պսակուի յաջողութեամբ եւ 7000 ամ. տոլարի նուիրահաւաքով:

Սան Ֆեռնանսո Վալիի Մասիս մասնաճիւղի սկաուտական բաժինը իր խմբապետական զօրաւոր կազմով գործած է բեղուն արդիւնաբերութեամբ: Սկաուտական կազմերը մասնակցած են Շրջանի Նաւասարդեան Խաղերու



Նաւասարդեան 6 խաղերուն մասնակից Սան Ֆեռնանսո Վալիի պասքեթպոլի Ա. խումբը՝ մրցաշարքի ախոյեան - 1980



Սան Ֆեռնանտո Վալիի Հ.Մ.Ը.Մ.ի 1984 տարուայ Ընկերային Յանձնախումբ
Ա. շարք՝ Մարալ Թորիկեան, Հուրիկ Տինքճեան, Արմինէ Սաֆարեան, Բ. շարք՝ Սեպուհ Համասեան,
Էլի Պալուպեան, Վաչէ Ֆրունճեան, Պետրոս Թապաքեան

ընդհանուր տողանցքներուն: Տարեկան ընդհանուր բանակումները առիթ կը ստեղծեն, թեքնիք զարգացման կողքին, ազգային եւ հայրենասիրական դաստիարակութեան:

1986ին Շրջանի միջ-մասնաճիւղային բանակումին մասնաճիւղի սկառուտական կազմէն Արա Օհաննէսեան եւ Արմէն Մկրտիչեան՝ կը ստանան աւագ խմբապետի աստիճան, իսկ Անահիտ Սաֆարեան եւ Դանիա Տաղլեան միաւորի խմբապետուհիի աստիճան:

1988ին խմբապետական կազմին մաս կազմած են, Օշին Յարութիւնեան (մասնաճիւղի խմբապետ), Լարա Քրիստիանեան, Լորի

Մկրտիչեան, Սիւզի Պաղչէճեան, Կարինէ Մէյմարեան, Գօգօ Սարգսեան, Նորայր Պապիկեան, Յովիկ Սիւլէմէնեան եւ Թորոս Քեչէճեան: Խումբը ունի նաեւ նորակազմ նուազախումբ:

ՍԱՆ ՏԻԷԿՈ

Արեւմտեան Մ. Նահանգներու Սան Տիէկոյի Սեւան մասնաճիւղը հիմնուած է 2 Հոկտեմբեր 1982ին: Առաջին տարիներու կազմակերպչական դժուարութիւնները յաղթահարելէ

եսօք մասնաճիւղի վարչութիւնը կը նշանակէ սկաուտական խորհուրդ եւ մարզական յանձնախումբեր որոնց արդիւնաբեր աշխատանքով մասնաճիւղը իր արժանի տեղը կը գտնէ Շրջանի մասնաճիւղերու շարքին:

Մասնաճիւղի գործունէութեան համար կ'օգտագործուի տեղւոյն եկեղեցւոյ «Խոշարեան» սրահը:

Մարզական արագընթաց զարգացումով, 1985ին, Շրջանի 10րդ Նաւասարդեան խաղերուն, մասնաճիւղի Ֆուտպոլի Ա. կազմը իր խմբակցութեան ախոյեանութեան կը տիրանայ:

22 Փետրուար 1986ի մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը իր վերջին օրակարգով կ'ընտրէ նոր վարչական կազմ՝

- Ատենապետ՝ Էմիլ Մաղաքեան
- Փոխ ատենապետ՝ Րաֆֆի Իսմայիլեան
- Ատենադպիր՝ Մանուէլ Մարսիլեան
- Քարտուղար՝ Էլմա Բալալեան
- Գանձապահ՝ Արա Բալալեան
- Գոյքապահ՝ Գուրգէն Բուղաղեան:
- Հաշուապահ՝ Արմէն Բալալեան

ՀՈՒՍԹԸՆ

1983 ի գարնան, Մ. Նահանգներու Թեքսաս նահանգի Հոլսթըն քաղաքէն նախկին Հ.Մ.Ը.Մ.ականներու խմբակցութիւն մը կը դիմէ Շրջանային Վարչութեան տեղւոյն մէջ մասնաճիւղ մը հիմնելու ծրագրով: Շրջանային Վարչութեան հաւանութեամբ առաջին հերթին կ'ընտրուի եօթը անդամներէ բաղկացած վարչական կազմ ատենապետութեամբ՝ Վարդգէս Յակոբեանի:

Անդամարշաւի սկզբնական աշխատանքներէն ետք, 11 Յունիս 1983ին տեղի կ'ունենայ հրապարակային առաջին ձեռնարկը, Սբ. Գէորգ եկեղեցւոյ սրահին մէջ տրուած ճաշերոյթ պարահանդէսով: Նոյն առթիւ 12 նորագիր սկաուտներ եւ արեւոյշներ կը կատարեն

իրենց երգումը առաջնորդութեամբ Սէմ Սահակեանի.- [Ծ/36.14]:

Շուտով կը կազմուին մեծ սղոց ֆուտպոլի եւ պասքեթպոլի խումբեր եւ փոքր սղոց ֆուտպոլի խումբ:

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

Շրջանային կազմակերպչական գործունէութիւն

Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կառույցի կազմութեան առընթեր Արեւմտեան Մ. Նահանգներու անդրանիկ Շրջանային վարչութեան կ'անդամակցին՝

- Ատենապետ՝ Յակոբ Օվայեան
- Փոխ ատենապետ՝ Մհեր Շիրրարմեան
- Ատենադպիր՝ Արմէն Տէյիրմէնճեան
- Գանձապահ՝ Տիգրան Սարգիսեան
- Հաշուապահ՝ Վարուժան Պուլլութեան
- Մարզական ներկայացուցիչ՝ Հրայր Սարգիսեան

Սկաուտական ներկայացուցիչ՝ Զարեհ Էքմէքճեան:

1974ի Դեկտեմբերին Արմէն Տէյիրմէնճեան կեդրոնական Վարչութեան անդամ կ'ընտրուի: Կազմին մէջ զինք կը փոխարինէ Նշան Սարաֆեանը:

Այս կազմի գլխաւոր աշխատանքը կ'ըլլայ գործող չորս մասնաճիւղերու միջեւ կազմակերպչական աշխատանքներու համադրումը եւ մասնաճիւղերու ներքին գործունէութեան համար քարտուղարական ստամարներու, հաշուական ստամարներու, անդամական դիմումնագրերու, ելքի եւ մուտքի ստացագրերու, եւ գրասենեկային ու դիւանային աշխատանքներու դրութեանց նոյնացումը:

Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային 4րդ ներկայացուցչական ժողովը գումարուեցաւ 20 Յունուար 1979ին Էնսինոյի Ֆերահեան վարժարանի գրադարանին մէջ ուր ընտրուեցաւ Շրջանային Վարչութիւն: 28 Յունուարի իր անդրանիկ նիստի ընթացքին նորընտիր

Շրջանային վարչութիւնը կազմեց իր դիւանը եւ կատարեց աշխատանքներու հետեւեալ բաժանումը.-

Ատենապետ՝ Քերոբ Առաքելեան
Փոխ ատենապետ՝ Տոքթ. Սարգիս Արեւեան
Ատենադպիր՝ Վահէ Յովակիմեան
Գանձապահ՝ Մինաս Մարգարեան
Խորհրդականներ՝ Ստեփան Պաղպուտարեան, Մհեր Շիրրումեան, Սերոբ Վարդան-

եան, Գրիգոր-Զոհրապ Անտոնեան եւ Տոքթ. Պերճ Ռուբինեան:

22 Մարտին Ստեփան Պաղպուտարեան կը նշանակուի Շրջանային ընդհանուր խմբապետ: Շրջանային վարչութեան կազմին մասնակցելու կը հրաւիրուի Յարութ Եփրեմեան:

Այս կազմի երկամեայ գործունէութեան կ'օժանդակեն Շրջանային սկաուտական խորհուրդի ու Շրջանային մարզական յանձնա-



Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Ա. Շրջանային Վարչութիւն, 1974-1976 Նստած՝ Միեր Շիրրումեան, Արմէն Տէյիրմէնճեան, Յակոբ Օվայեան, Վարուժան Պուլուրեան, ուրի՝ Զարեհ Էքմէքճեան, Հրայր Սարգիսեան, Նշան Սարաֆեան, Տիգրան Սարգիսեան

խուժբը: Ընթացիկ գործունեությունների կարգին, կազմը կ'իրագործէ Շրջանի Դ. եւ Ե. Նաւասարդեան Խաղերը, «Հ.Մ.Ը.Մ.ի Օր»ուայ տօնակատարությունները եւ դրամահաւաքի հանդիպում:

16 եւ 17 Յունուար 1981ին տեղի կ'ունենայ Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Ե. ներկայացուցչական ժողովը մասնակցություններով 7 մասնաճիւղերու, Շրջանային վարչությունները եւ կեդրոնական վարչությունները՝ ընդհանուրը 36 լիազօր ներկայացուցիչներու եւ 9 խորհրդակցական ձայնով հրահրեալներու: 1979-80 երկամեակի գործունեությունների տեղեկագրերու ընթերցումէն եւ քննությունէն ետք կը կատարուի նոր Շրջանային վարչական կազմի ընտրությունները որ 25 Յունուարի անդրանիկ նիստով կը կատարէ աշխատանքներու բաժանում հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Տոքթ. Սարգիս Արեւեան
- Փոխ ատենապետ՝ Էմիլ Մարգարեան
- Ատենադպիր՝ Ժիրայր Պոյաճեան
- Գանձապահ՝ Յովսէփ Գաբրիէլեան

Խորհրդականներ՝ Թորոս Բարսեղեան, Կարպիս Գաթարոյեան, Յակոբ Օվայեան, Գրիգոր Անստոնեան եւ Նշան Փիրումեան:

1981 եւ 1982 երկամեակի ընթացքին Շրջանային վարչությունները վերոյիշեալ կազմը կ'իրականացնէ Զ. եւ Է. Նաւասարդեան խաղերը եւ առաջին անգամ ըլլալով ՔԱՀԱՄի (Քալիֆորնիոյ Հայ Աշակերտական Մարգարեան) որուն կը մասնակցին հայ վարժարաններու եւ օտար վարժարաններու հայ աշակերտները: Խաղերու փակման հանդիսություններ կը գուգադիպի Մայիս 28ի մօտակայ շաբաթավերջին:

25 Յունուար 1982ին տեղի կ'ունենայ Շրջանային վարչությունները նոր գրասենեակի բացումը Կլէնտէյլի 108ուկէս NORTH BRENT պողոտայի հասցէին.- [Ծ/23.34]:

Շրջանը յառաճուն վերելքի մէջ է: 1982ի Հոկտեմբեր 2ին կը հիմնուի Սան Տիէկոյի մասնաճիւղը: Անդամներու ընդհանուր թիւը բարձրացած է 2570ի որոնցմէ 1075ը սկսուած

կան շարքերէն 756 մարզիկներ եւ 739 օժանդակ անդամներ:

Շրջանը կ'որոշէ Շրջանային եւ մասնաճիւղային հասունութեան ձեռնարկներու մուտքին տասը առ հարիւրը յատկացնել Հայ Դատի կեդրոնական վարչությունները:

3էն 5 Դեկտեմբեր 1982ին Կլէնտէյլի մէջ տեղի կ'ունենայ Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Զ. ներկայացուցչական ժողովը նախագահություններով՝ Ժիրայր Սարգիսեանի եւ Ռուբիկ Գիւրջեանի եւ քարտուղարություններով՝ Իւդիկ Շիթիլեանի, Նորա Իւլիւպէյեանի եւ Ասատուր Քեվրանեանի: 54 իրաւասու ձայնով մասնակիցներ կը ներկայացնեն Շրջանի ութը մասնաճիւղերը Շրջանային եւ կեդրոնական վարչությունները: Խորհրդակցական ձայնով ներկայ են 16 հրահրեալներ: Ընթացաւարտ Շրջանային վարչությունները երկամեայ գործունեությունների բարոյական եւ նիւթական գործառնություններից տեղեկագրերը յաջորդաբար կը կարդան Ժիրայր Պոյաճեան եւ Յովսէփ Գաբրիէլեան: Ժողովի վերջին օրակարգով կ'ընտրուի նոր Շրջանային վարչությունները, որ իր աշխատանքները կը բաժնէ հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Տոքթ. Սարգիս Արեւեան
- Փոխ ատենապետ՝ Յակոբ Օվայեան
- Ատենադպիր՝ Ժիրայր Պոյաճեան
- Գանձապահ՝ Նուպար Սարգիսեան
- Մարգարեան պատասխանատուներ՝ Թորոս Բարսեղեան եւ Սերոբ Տէր Պողոսեան
- Տնտեսական պատասխանատու՝ Գօգօ Պալեան

Խորհրդականներ՝ Զոհրապ Անստոնեան եւ Կարպիս Գաթարոյեան:

1983ի Մայիս 29ին տեղի կ'ունենայ ՔԱՀԱՄի Բ. խաղերու փակման հանդիսություններ.- [Ծ/33.26]: Նաւասարդեան ծրագրի մարգարեան փակման հանդիսությունները նուիրուած Միությունների հիմնադրությունների 65ամեակին տեղի կ'ունենայ աննախընթաց յաջողություններով: 15000 հանդիսականներ ներկայ կ'ըլլան այս հանդիսությունների.- [Ծ/34.21]:



Լոս Անձելըսի 1983 տարուայ Մէյճըր Լիկի ախոյեան
Հ.Մ.Ը.Մ. Քալիֆորնիոյ ֆութպոլի ներկայացուցչական խումբը

Նաւասարդեան Զրդ խաղերը տեղի կ'ունենան 5-8 Յուլիս 1984ին: Յայտագրի հիւր խումբն է Լիբանանի ֆութպոլի «վեթերաններ»-ու կազմը: Փակման հանդիսութեան ընդհանուր տողանցքին կը մասնակցին 2000 մարզիկներ եւ սկաուտներ.- [Մ/43.2]:

1983 եւ 1984 տարիներու Շրջանային վարչութեան մուտքերու ընդհանուր գումարը աւելի քան 440 հազար ամերիկեան տոլարի կը բարձրանայ:

Արեւմտեան Մ. Նահանգներու 7րդ. Շրջանային ներկայացուցչական ժողովը տեղի կ'ունենայ 30 Նոյեմբեր 1 եւ 2 Դեկտեմբեր 1984ին, Շրջանի 10 մասնաճիւղերու Շրջանային վարչութեան եւ Կեդրոնական Վարչութեան 51 իրաւասու ձայնով մասնակցողներու: Ժողովին կը նախագահեն Ռուբիկ Գիւրջեան եւ Ժիրայր Սարգիսեան, քարտուղարներն են Երուանդ Չատրճեան, Անի Քիլէճեան, Կարպիս Էօլմէսէք-

եան եւ Լենա Մահպուլեան: 10 մասնաճիւղերու եւ Շրջանային վարչութեան տեղեկագրերու քննութենէն ետք ժողովը կ'ընտրէ նոր Շրջանային վարչական կազմ: Վերջինս իր աշխատանքներու բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով.-

Ասենապետ՝ Ժիրայր Պոյաճեան
Փոխ ասենապետ՝ Գօգօ Պալեան
Ասենադպիր՝ Կարպիս Շխրրտրմեան
Գանձապահ՝ Կարէն Բէնեասեան
Սկաուտական պատասխանատու՝ Ռուբիկ Գիւրջեան

Մարզական պատասխանատու՝ Սերոբ Տէր Պօղոսեան

Խորհրդական՝ Զոհրապ Անտոնեան;

Շրջանի կազմակերպչական աշխատանքները համադրելու նպատակով Շրջանային վարչութիւնը ամսական հերթականութեամբ կը

կազմակերպէ մասնաճիւղերու վարչութեանց ատենապետներու խորհրդակցական ժողովներ:

1985ին 3 ներկայացուցիչներ կը մասնակցին, Միլանոյի մէջ, Կեդրոնական վարչութեան կազմակերպած Ա. միջ-դիւանային խորհրդակցական ժողովին:

1 եւ 2 Մարտ 1986ին Շրջանային բացառիկ ներկայացուցչական ժողովը կը վերամշակէ Շրջանի ներքին կանոնադրութիւնը: 1985-86 երկամեակի Շրջանային վարչութիւնն նիւթական գործունէութեան ընդհանուր գումարը կը բարձրանայ աւելի քան 1.200.000 սուլարի:

Արեւմտեան Մ. նահանգներու Շրջանային ծրագրի ներկայացուցչական ժողովը տեղի կ'ունենայ 17էն 19 Հոկտեմբեր 1986ին մասնակցութեամբ Շրջանի 9 մասնաճիւղերու ներկայացուցիչներուն.- [Ծ/67-68.26]: Ժողովի վերջին օրակարգով ընտրուած վարչական կազմը իր աշխատանքները կը բաժնէ հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Համլէթ Չրախճեան
- Փոխ ատենապետ՝ Սերոբ Տէր Պողոսեան
- Ատենադպիր՝ Կարպիս Շիրրսրմեան
- Գանձապահ՝ Օսիկ Մովսէսեան
- Սկստական պատասխանատու՝ Ռուբիկ Գիւրջեան
- Տնտեսական պատասխանատու՝ Յակոբ Թիւֆենքճեան
- Յարաբերականի պատասխանատու՝ Մակի Բարսեղեան
- Քարտուղարուհի՝ Իւզիկ Շիթիլեան
- Խորհրդական՝ Ժիրայր Սարգիսեան:

Շրջանային վարչութեան նստավայրը կը մնայ Կլէնսիէյլի Հայ Կեդրոնի գետնայարկի գրասենեակը: Նոր մասնաճիւղերու յաւելումով կը բազմանան նաեւ մասնաճիւղերու միջեւ գործունէութեանց համագործմի աշխատանքները: Այս աշխատանքներու յաջողութեան համար Շրջանային վարչութիւնը կ'ունենայ մնայուն գործավար եւ գրասենեակային սարքերը կ'արդիականացուին: Վարչութիւնը կը կազմակերպէ 12րդ Նաւասարդեան խաղերը

որոնց փակման հանդիսութեան օրուայ նախագահ՝ Կարօ Սողանալեան 100.000 սուլար եւ վաչէ Մանուկեան 25.000 սուլար կը նուիրեն Շրջանային վարչութեան: Նոյն առթիւ Սարգիս Սողանալեան 50 էյքըրը հողաչերտ մը կը նուիրէ Շրջանին.- [Ծ/69-70.14]: 13րդ նաւասարդեան խաղերուն ներկայ կը գտնուի Գարեգին Բ. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ: Փակման հանդիսութեան կը նախագահէ վաչէ Մանուկեան որ այս առթիւ կը նուիրէ 100.000 սուլար.- [Ծ/79.24]: Կեդրոնական վարչութեան պատգամը կը փոխանցէ ատենապետ՝ Տոքթ. Միսաք Արզումանեան:

4էն 8 Յուլիս 1990ին տեղի կ'ունենան նաւասարդեան 15րդ խաղերը նուիրուած Հ.Յ.Դ.ի հիմնադրութեան 100ամեակին: Փակման հանդիսութեան կը նախագահեն Ատոմ եւ Սելլա Թնճուկեաններ որոնք այս առթիւ կը նուիրեն 100.000 սուլար: 20.000 հանդիսականներ ներկայ կ'ըլլան աւարտական մրցումներուն եւ ընդհանուր սողանցքին.- [Ծ/103-104.20]:

Շրջանային մարզական գործունէութիւն

Արեւմտեան Միացեալ նահանգներու Շրջանային մարզական գործունէութիւնը 1980ին կը վստահուի շրջանային մարզական խորհուրդի մը հետեւեալ կազմով.-

- Ատենապետ՝ Վարդգէս Ալահայտոյեան
- Փոխ ատենապետ՝ Թորոս Բարսեղեան
- Ատենադպրուհի՝ Անելկա Դիլանեան
- Գանձապահ՝ Արտաշէս Քէօյլեան
- Խորհրդականներ՝ Ժան Մեսքճեան, Արմանու Գորգորեան, Րաֆֆի Մոսիկեան, Տոքթ. Արմէն Կէօնճեան, Գարեգին Պապասուլուքեան, Զոհրապ Ստեփանեան եւ Լեւոն Իսահակ:

Յաջորդական կազմերը կը ծրագրեն եւ կը համադրեն Նաւասարդեան խաղերու մարզական մրցաշարքերը: Կազմերուն կը միանան նաեւ մասնաճիւղերու վարչութեանց մարզական պատասխանատուները:

1984ին Շրջանի կիրարկած մարզաճիւղերու

խոսմբերուն ցանցը կը ներկայանայ հետեւեալ ձեւով.- Ֆուլթայոլ՝ 18 խոսմբեր, պասքեթպոլ՝ 72 խոսմբեր, վոլիպոլ՝ 28 խոսմբեր: Կը կիրարկուին նաեւ փինկփոնկ, քարաթէ, լեռնագնացութիւն եւ դահուկարչաւ: Աթլեթիզմի ճիւղին կը հետեւին աւելի քան 300 մարզիկներ:

Շրջանային մարզական խորհուրդի գործունէութեան մէկ այլ բաժինն է Քալիֆորնիոյ հայ աշակերտական մարզախաղերը (ՔԱՀԱՄ) որուն զանազան մարզախաղերու մրցաշարքերուն կը մասնակցին Շրջանի հայ վարժարաններու աշակերտները եւ օտար վարժարաններու հայ աշակերտները: ՔԱՀԱՄի մրցաշարքերու աւարտական մրցումները կը կայանան Մայիս 28ի զուգադիպող շաբաթավերջերուն:

Շրջանային սկսուտական գործունէութիւն

Յաջորդական Շրջանային սկսուտական խորհուրդները կը վարեն սկսուտական բաժնի աշխատանքները կը ծրագրեն տարեկան յայտագիրները եւ կը համադրեն մասնաճիւղերու սկսուտական խոսմբերու աշխատանքները, կը կազմակերպեն շրջանը ներկայացնող պատուիրակութիւնները որոնք կը մասնակցին Հ.Մ.Ը.Մ.ի Համագաղութային Ընդհանուր Բանակումներուն:

1986ին Շրջանային սկսուտական խորհուրդը կը հրատարակէ սկսուտական գիտելիքներու նորընծայի գրքոյկը եւ կը պատրաստէ Ա. եւ Բ. կարգերու գրքոյկներու հրատարակութիւնը:

Նախասարդեան Խաղեր

Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան հրապարակային հանդիսութիւններու գլխաւորը, տարեկան հերթականութեամբ կազմակերպուող, նախասարդեան խա-

ղերն են, որոնց փակման հանդիսութիւնները տեղի կ'ունենան մասնաճիւղերու մարզական եւ սկսուտական կազմերու, Քալիֆորնիոյ հայ վարժարաններու աշակերտութեանց եւ Հ.Ե.Դ. ուխտերու մարզական խոսմբերու մասնակցութեամբ կայացող ընդհանուր տողանցքներով: Նոյն առթիւ կը կազմակերպուին յաղթանակի ճաշկերոյթ պարահանդէսները հազարը գերազանցող ներկաներու մասնակցութեամբ:

Նախասարդեան խաղերու փակման հանդիսութիւնները տեղի ունեցած են հետեւեալ կարգով, Լոս Անճելըսի զանազան մարզադաշտերուն վրայ.-

Ա.- 1976ին

Բ.- 1977ին

Գ.- 1978ի Նուիրուած Հայաստանի հանրապետութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեանց 60ամեակներուն:

Դ.- 1979ին

Ե.- 25 Մայիս 1980ին նախագահութեամբ Հրայր Յովնանեանի «Հ.Մ.Ը.Մ.ի Օր» 21/12/80-[Ծ/15.35]

Զ.- 1981ին [Ծ/17.31]

Է.- 1982 [Ծ/27.16]

Ը.- 1983ին [Ծ/34.21]

Թ.- 8 Յուլիս 1984ին, հովանաւորութեամբ Տէր եւ Տիկին Անդրանիկ Անտոնեանի.- [Ծ/43.2]

Ժ.- 1985ին, նախագահութեամբ Ժորժ Ադամեանի- [Ծ/52.8]

ԺԱ.- 1986ին, [Ծ/62.16]

ԺԲ.- 1987ին, նախագահութեամբ՝ Կարօ Սողանալեանի [Ծ/69-70.14]

ԺԳ.- 1988 նախագահութեամբ՝ Վաչէ Մանուկեանի

ԺԴ.- 1989

ԺԵ.- 8 Յուլիս 1990ին, նախագահութեամբ՝ Տէր եւ Տիկին Ատոմ Թնճուկեաններու [Ծ/103-104.20]:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ





1977 տարուայ՝ 1. Սան Ֆրանսիսքոյի աղջկանց պասքեթպոլի խումբը, 2. Ֆրեյնոյի աղջկանց պասքեթպոլի խումբը, 3. Լոս Անճելըսի Բ. դասի ֆուլթպոլի կապմը, 4. Բասսատենայի տղոց ֆուլթպոլի խումբը, 5. Լոս Անճելըսի Ա. դասի ֆուլթպոլի խումբը, 6. Կլէնտէյլի Հ.Մ.Ը.Մ. Արարատ պասքեթպոլի խումբը:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԳԱՆԱՏԱ

- ՄՈՆԹՐԷԱԼ
- ՀԱՄԻԼԹԸՆ
- ԹՈՐՈՆԹՕ
- ԳԱՄՊՐԻՃ
- ՍԷՆԹ ԳԱԹՐԻՆՋ
- ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



Կազմակերպչական Գործունեություն

1975ին Մոնթրէալի մասնաճիւղէն Գանատայի եւ Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան մաս կը կազմեն Վարուժան Սերոբեան, Տոքթ. Վիգէն Մասերեճեան եւ Վարդգէս Յակոբեան որոնք մինչ այդ միաժամանակ մասնաճիւղի վարչութեան կ'անդամակցէին:

1975ի նորընտիր վարչութեան մաս կը կազմեն՝

- Ատենապետ՝ Գրիգոր Գուլումճեան
- Փոխ ատենապետ՝ Յակոբ Գասարճեան
- Ատենադպիր՝ Տիգրան Մելքոնեան
- Գանձապահ՝ Յակոբ Արեւեան
- Հաշուապահ՝ Նշան Մելքոնեան

Սկ. խորհուրդի ներկայացուցիչ՝ Յովսէփ Զերտելեան

Մարզական խորհուրդի ներկայացուցիչ՝ Վարուժան Զուրիկեան, Ստեփան Քէօլէեան եւ Պերճ Աճէմեան:

Կարգ մը նորեկ վարչականներէ կազմուած այս վարչութիւնը մեծ թափով կը փարի մասնաճիւղի աւանդական գործունէութեան:

1976էն 1979 քառամեակի ընթացքին չորս վարչական կազմեր յաջորդած են իրար սարեկան հերթականութեամբ: Մասնաճիւղի աւանդական գործունէութեան կողքին (կազմակերպչական, մարզական եւ սկստական) այս վարչութիւններու ճիգերը կեդրոնացած են հայ կեդրոնի կառուցման օժանդակութեան վրայ:

1976 տարուայ վարչական կազմի անդամներն են ատենապետութեամբ Գրիգոր Գուլումճեանի, Նշան Մելքոնեան, Ժիրայր Դաւիթեան, Յակոբ Գասարճեան, Սեդրակ Պուրսալեան, Վարուժան Զուրիկեան, Ռոպէր Թուխմանեան, Պերճ Աճէմեան, Արամ Նշանեան եւ Էօթէնի Կարակապետեան:

1977ին կազմի ատենապետութիւնը կը վարէ Գէորգ Մանկէլեան մասնակցութեամբ Նշան Մելքոնեանի, Ժիրայր Դաւիթեանի, Լեւոն Պենկեանի, Գէորգ Գաբրիէլեանի, Լեւոն

Նաճարեանի, Սեդրակ Պուրսալեանի, Վարուժան Զուրիկեանի, Բիւզանդ Լախոյեանի, Յակոբ Թորոսեանի եւ Էօթէնի Կարակապետեանի:

1978 տարուայ վարչութեան ատենապետն է Սեդրակ Պուրսալեան: Նախորդ տարեշրջանի կազմէն գործի վրայ կը մնան Լեւոն Պենկեան, Լեւոն Նաճարեան, Բիւզանդ Լախոյեան, Վարուժան Զուրիկեան եւ Էօթէնի Կարակապետեան: Կազմի նոր անդամներն են՝ Գէորգ Մխտիկեան, Յովսէփ Եագուպեան եւ Յովսէփ Զերտելեան:

Մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած 1979 տարուայ վարչական կազմը կը վարէ Գառնիկ Համբարձումեան: Կազմի մնացեալ անդամներն են՝ Սեդրակ Պուրսալեան, Լեւոն Պենկեան, Լեւոն Նաճարեան, Տիգրան Սեւակեան, Սերոբ Կիրակոսեան, Սարգիս Գուլումճեան, Կարպիս Գալեմճեան եւ Յովսէփ Զերտելեան:

15 Ապրիլ 1980ին Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ. Կամք մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչութեան կազմը կը բաղկանայ հետեւեալ անդամներէն.-

- Ատենապետ՝ Լեւոն Նաճարեան
- Փոխ ատենապետ՝ Տիգրան Սեւակեան
- Ատենադպիր՝ Սերոբ Կիրակոսեան
- Փոխ ատենադպիր՝ Ալպէր Պաքրճեան
- Գանձապահ՝ Սարգիս Գուլումճեան
- Հաշուապահ՝ Սեդրակ Պուրսալեան
- Գոյքապահ՝ Ստեփան Ոսկերիչեան

Մարզ. պատասխանատու՝ Հրայր ՏաղաՎարեան

Սկ. պատասխանատու՝ Յովսէփ Զերտելեան:

Հոկտեմբեր 25 եւ 26ին տեղի կ'ունենան հայ կեդրոնի մարզարանի պաշտօնական բացման հանդիսութիւնները: Բացման հանդիսութեան եւ պարահանդէսի իրականացման համար փորձառու անդամներէ բաղկացած զոյգ յանձնախումբեր կը կազմուին:

Վարչութեան միամեայ գործունէութեան նախահաշիւի գումարն է 23.000 գանատական

սողար, հետեւեալ ենթաբաժանումներով. պաս-
քէթպոլ՝ 3000, ֆուլթպոլ՝ 2000, աթլէթիզմ՝ 1000,
ձենզ Շրջանային վարչութեան՝ 4000, միջ-մաս-
նաճիւղային խաղեր՝ 4000, մարզարան՝ 3000,
համագաղութային մրցաշարք՝ 3500, յատկա-
ցումներ՝ 1000, գրասենեկային ծախսեր՝ 1500:

1981ի Ապրիլին, մասնաճիւղի անդամական
ընդհանուր ժողովէն ընտրուած վարչական
կազմը իր աշխատանքներու բաժանումը կը
կատարէ հետեւեալ ձեւով.

- Ատենապետ՝ Լեւոն Նաճարեան
- Փոխ ատենապետ՝ Սեդրակ Պուրսալեան
- Ատենադպիր՝ Նիկողոս Մարունեան
- Գանձապահ՝ Ժիրայր Շատախցեան
- Հաշուապահ՝ Յակոբ Արեւեան
- Գոյքապահ՝ Սարգիս Գուլումճեան

Սկ. խորհուրդի ներկայացուցիչ՝ Յովսէփ
Զերտելեան

Մարզ. խորհուրդի ներկայացուցիչ՝ Վար-
դան Բաբախեան

Մարզասրահի պատասխանատու՝ Ստեփան
Ոսկերիչեան:

Տարեշրջանի գործունէութեան գլխաւոր
բաժինը համագաղութային առաջին մարզա-
կան խաղերու կազմակերպումն է, որուն կը
մասնակցին եօթը շրջաններու պասքէթպոլի
սիոց եւ աղջկանց խումբերը: Հ.Մ.Ը.Մ.ի կեդ-
րոնական վարչութեան նախաձեռնութեամբ
կայացող այս աննախընթաց ձեռնարկը, շնոր-
հիւ Մոնթրէալի մասնաճիւղի բոլոր պատաս-
խանատուներու անվերապահ գործակցու-
թեան, կ'իրականանայ մեծ յաջողութեամբ:

Մասնաճիւղի մարզական բաժնի գլխաւոր
հոգածութիւնը կը սրուի ֆուլթպոլի խումբին
եւ նաւասարդեան խաղերու մասնակցութեան՝
Լոս Անճէլըս: Վարչութիւնը յաջողութեամբ
կ'իրականացնէ 14րդ ամառնային խաղերը:

1982 տարեշրջանի վարչութեան կազմի
ատենապետն է Սեդրակ Պուրսալեան: Կազմի
մնացեալ անդամներն են. Ժիրայր Շատախց-
եան, Նիկողոս Մարունեան, Յակոբ Արեւեան,
Վարդան Բաբախեան, Ստեփան Ոսկերիչեան,

Սարգիս Գուլումճեան, Վարուժան Զուրիկեան
եւ Ֆրանսուա Գարայեան:

Մասնաճիւղի խումբերը նոյն կանոնաւո-
րութեամբ կը մասնակցին միջ-մասնաճիւղային
ամառնային եւ ձմեռնային խաղերուն որոնց
պատրաստութեան մեծապէս կը ծառայէ հայ
կեդրոնի մարզասրահը:

29 Մարտ 1983ին, մասնաճիւղի անդամա-
կան ընդհանուր ժողովը, տարեշրջանի նոր
վարչական կազմի անդամներ կ'ընտրէ հետեւ-
եալները.

- Ատենապետ՝ Ժիրայր Շատախցեան
- Ատենադպիր՝ Աբօ Ահարոնեան
- Գանձապահ՝ Րաֆֆի Աբանեան
- Հաշուապահ՝ Յակոբ Արեւեան
- Գոյքապահ՝ Սարգիս Գուլումճեան

Մարզ. պատասխանատու՝ Պետրոս Հայրա-
պետեան

Սկ. խորհուրդի ներկայացուցիչ՝ Ֆրանսուա
Գարայեան

Խորհրդականներ՝ Ռոպէր Թուխմանեան
եւ Յովակ Պետրոսեան:

Վարչութեան օժանդակ յանձնախումբե-
րուն մաս կը կազմեն՝ մարզական յանձնա-
խումբին՝ Յակոբ Սիմիթեան, Նիկողոս Մա-
րունեան եւ Գէորգ Փալանճեան: Սկառուական
խորհուրդի կազմը փոքր փոփոխութեամբ կը
մնայ գործի գլուխ: Յուլիսին 33 սկառուներէ
բաղկացող ներկայացուցչական խումբ մը կը
մասնակցի Calgaryի միջազգային ճամբարին:
Մասնաճիւղի աւանդական ձեռնարկները կը
կրկնուին հերթական շարքով եւ յաւելեալ յա-
ջողութիւններ արձանագրելով: Այս տարեշր-
ջանին անդամներու ընդհանուր թիւն է 627:
Տարեշրջանի ընթացքին

23 Ապրիլ 1984ին, մասնաճիւղի նորընտիր
վարչական կազմը կը կատարէ իր աշխատանք-
ներու բաժանումը հետեւեալ ձեւով.

- Ատենապետ՝ Ժիրայր Շատախցեան
- Փոխ ատենապետ՝ Սեդրակ Պուրսալեան
- Ատենադպիր՝ Աբօ Ահարոնեան
- Գանձապահ՝ Սարգիս Գուլումճեան

Հաշուապահ՝ Րաֆֆի Աբանեան
Գոյքապահ՝ Սարգիս Մանուկեան
Մարզ. պատասխանատու՝ Նիկողոս Մարունեան

Խորհրդական՝ Գէորգ Գաբրիէլեան:

3 Յունիս 1984ին մասնաճիւղը կը տօնէ իր հիմնադրութեան 25ամեակը: Տեղի կ'ունենան սրահային ելոյթ, խրախճանք, սկառուտական սողանցք եւ ֆուլթպոլի մրցումներ:

16 Ապրիլ 1985ին Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ. կամքի անդամական ընդհանուր ժողովը, լսելէ ետք շրջանաւարտ վարչութեան միամեայ գործունէութեան տեղեկագիրը, փոքր փոփոխութեամբ կ'ընտրէ 1985 տարուայ նոր վարչական կազմ.-

Ատենապետ՝ Լեոն Նաճարեան
Փոխ ատենապետ՝ Ժիրայր Շատախցեան
Ատենադպիր՝ Սարգիս Գուլումճեան
Գանձապահ՝ Սեդրակ Պուրսալեան
Հաշուապահ՝ Րաֆֆի Աբանեան
Գոյքապահ՝ Վաչէ Գասարճեան

Մարզ. պատասխանատու՝ Գէորգ Գաբրիէլեան

Սկ. խորհուրդի ներկայացուցիչ՝ Ստեփան Ոսկերիչեան

Խորհրդական՝ Յակոբ Թորոսեան:

Մասնաճիւղի բոլոր մարզական ճիւղերը՝ ֆուլթպոլ, պասքեթպոլ, վոլիպոլ, փինկ փոնկ եւ աթլետիզմ կը յառաջդիմեն իրենց զանազան դասակարգի խումբերով: Ֆուլթպոլի երէց սողոց խումբը կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի համագործակցութեան Բ. խաղերուն 1-7 Յուլիսին Լոս Անճէլըսի մէջ, Գանատայի միջ-մասնաճիւղային ֆուլթպոլի ախոյեանութեան մրցաշարքին, միջ-մասնաճիւղային 17րդ ամառնային խաղերուն 3-4 Օգոստոսին Պոսթրնի մէջ, միջ-մասնաճիւղային 11րդ ձմեռնային խաղերուն 22-24 Նոյեմբերին: Մարզական բոլոր ճիւղերը զգալիօրէն թեքնիք յառաջդիմութիւն կ'արձանագրեն:

Սկառուտական խորհուրդը յատուկ ուշադրութեան կ'արժանացնէ նուազախումբի պարզան մասնագէտներու միջոցով զարգացնե-

լու համար գայն:

1986 տարեշրջանի նորընտիր վարչական կազմը, 22 Ապրիլին, իր աշխատանքներու բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով.

Ատենապետ՝ Ժիրայր Շատախցեան
Փոխ ատենապետ՝ Գէորգ Գաբրիէլեան
Ատենադպիր՝ Աբօ Ահարոնեան
Գանձապահ՝ Յարութ Զիլինկիրեան

Սկ. խորհուրդի մօտ ներկայացուցիչ՝ Պարոյր Գազանճեան

Զեռնարկներու պատասխանատու՝ Հրայր Պենկեան

Մամլոյ պատասխանատու՝ Նիկողոս Մարունեան:

Առաջին նիստին կը պատրաստուի տարեշրջանի գլխաւոր աշխատանքներու ծրագիրը, որուն մաս կը կազմեն. միջ-վարչական ժողով, շրջանային խմբապետական բանակում, միջ-մասնաճիւղային ֆուլթպոլի Գ. ախոյեանութիւն, միջ-մասնաճիւղային ամառնային խաղեր, անդամական խրախճանք, դաշտագնացութիւն, տարեկան պարահանդէս, միջ-մասնաճիւղային ձմեռնային խաղեր, Հ.Մ.Ը.Մ.ի օրուայ տօնակատարութիւն:

Վերոյիշեալ աշխատանքները եօթամսեայ ժամանակացոյցի մը համաձայն հետզհետէ կ'իրագործուին մինչեւ 1986ի տարեվերջ: Այս աշխատանքներուն վարչական կազմին կ'օժանդակեն սկառուտական խորհուրդը եւ մարզական յանձնախումբը:

30 Մարտ 1987ին Մոնթրէալի մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը ընտրեց տարեշրջանի վարչական կազմը բաղկացած հետեւեալ անդամներէն.

Ատենապետ՝ Ժիրայր Շատախցեան
Փոխ ատենապետ եւ սկ. ներկայացուցիչ՝ Պարոյր Գազանճեան

Ատենադպիր՝ Աբօ Ահարոնեան
Քարտուղար՝ Վարդգէս Քիւփելեան
Գանձապահ՝ Յարութ Զիլինկիրեան
Հաշուապահ՝ Սեդրակ Պուրսալեան
Գոյքապահ՝ Սարգիս Գուլումճեան

Մարգ. պատասխանատու՝ Հրաչ Տէր Սարգիսեան

Խորհրդական՝ Նշան Զուրիկեան:

Տարեշրջանի ընթացքին Գէորգ Յակոբեան կը փոխարինէ Յարութ Չիլինկիրեանը: Վարչութիւնը իր կողքին կը նշանակէ մասնաճիւղի սկստական խորհուրդ եւ մարզական խորհուրդ:

Անդամական ընդհանուր թիւը զգալի աճ կ'արձանագրէ՝ 639էն բարձրանալով 700ի, որոնցմէ 335ը մաս կը կազմեն սկստական շարքերուն:

Կիրակոսող մարզաճիւղերն են աթլետիզմ, ֆուտպոլ, պասքեթպոլ, վոլիպոլ եւ փինկփոնկ, բացի ֆուտպոլէն սուրճ եւ աղջկանց բաժիններով:

Տարեշրջանի նիւթական գործառնութեան ընդհանուր պատկերն է մուտք՝ 58.138 գանաստական տուար, ելք՝ 63.624:

Մասնաճիւղի կողմէ շրջանի 17րդ ներկայացուցչական ժողովին ներկայացուցիչներն են՝ Րաֆֆի Աբանեան, Ռիթա Պարթեւեան, Անի Գուլումճեան, Գրիգոր Գուլումճեան, Սարգիս Գուլումճեան, Գէորգ Մանկէլեան, Մովսէս Թովուզեան եւ Ռոպէր Թուխմանեան: Ներկայացուցչական ժողովը տեղի կ'ունենայ 19 եւ 20 Մարտ 1988ին Համիլթընի մէջ:

28 Մարտ 1988ին, Հ.Մ.Ը.Մ. Կամքի անդամական ընդհանուր ժողովի կողմէ ընտրուած վարչական կազմի անդամներն են.-

- Ատենապետ՝ Գէորգ Մանկէլեան
- Փոխ ատենապետ՝ Սերոբ Կիրակոսեան
- Ատենադպիր՝ Աբօ Ահարոնեան
- Գանձապահ՝ Յարութիւն Չիլինկիրեան
- Հաշուապահ՝ Գրիգոր Ապրաքեան
- Գոյքապահ՝ Հրայր Խաչերեան

Մամլոյ պատասխանատու՝ Գէորգ Յակոբեան

Մարգ. պատասխանատու՝ Մոսիկ Թովուզեան

Ձեռնարկներու պատասխանատու՝ Րոպէր Թուխմանեան:

Ընկերային ձեռնարկներու կազմակերպումին համար վերոյիշեալ վարչական կազմի աշխատանքներուն կը միանայ Մայտա Պոյաճեանը:

Տարեշրջանի աւարտին անդամներու ընդհանուր թիւն է 714, որոնցմէ 317 սկստական շարքերէն: Վարչութիւնը տարեշրջանի ընթացքին կը կազմակերպէ անդամական ընդհանուր ժողովներ զեկուցական օրակարգով: Դեկտեմբերին վարչութիւնը կ'օժանդակէ Հայաստանի երկրաշարժի օգնութեան յանձնախումբի աշխատանքներուն:

Իբրեւ գործունէութեան վայր մարզական եւ սկստական բաժինները կ'օգտագործեն հայ կեդրոնի մարզասրահը:

17 Մարտ 1989ին, Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ. Կամքի մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը լսելէ ետք շրջանաւարտ վարչութեան միամեայ գործունէութեան տեղեկագիրը, կ'ընտրէ տարեշրջանի նոր վարչական կազմ.-

- Ատենապետ՝ Գէորգ Մանկէլեան
- Փոխ ատենապետ՝ Գէորգ Յակոբեան
- Ատենադպիր՝ Մոսիկ Թովուզեան
- Գանձապահ՝ Սերոբ Կիրակոսեան
- Հաշուապահ՝ Գրիգոր Ապրաքեան
- Գոյքապահ՝ Հրայր Խաչերեան

Մարգ. պատասխանատու՝ Ռոպէր Թուխմանեան

Սկ. Ներկայացուցիչ՝ Յարութ Չիլինկիրեան Խորհրդական՝ Մայտա Պոյաճեան:

Մայիսին վարչական խորհրդականի պաշտօնին կը հրաւիրուի նաեւ Մանուկ Փիլիկեան: Տարեշրջանի ընթացքին վարչութիւնը կը կազմակերպէ երեք անդամական ընդհանուր ժողովներ: Մասնաճիւղի մարզական գործունէութիւնը կը կիրարկուի հայ կեդրոնի մարզադաշտի եւ Հաճէթեան մարզարանի սրահներուն մէջ:

Սկստական խորհուրդ, մարզական եւ ընկերային յանձնախումբեր կ'օժանդակեն վարչութեան գործունէութեան: Մասնաճիւղը կը հաշուէ մարզական բաժիններուն հետեւող 294

մարզիկներ: Քաղաքապետութիւնը յանձն կ'առնէ մարզադաշտի նորոգութեան ծախսերը:

Հետզհետէ որակաւոր պատասխանատուներ եւ մասնագէտներ կը բոլորուին մասնաճիւղի վարչութեան գործունէութեան շուրջ:

Տարեշրջանի նիւթականգործառնութեան պատկերն է մուտքեր՝ 129.027 գանատական տոլար, ելքեր՝ 118.715 գանատական տոլար:

12 Ապրիլ 1990ին, Հ.Մ.Ը.Մ. Կամքի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ տարեշրջանի վարչական կազմը հետեւեալ ձեւով.

- Ատենապետ՝ Գէորգ Մանկելեան
- Փոխ ատենապետ՝ Սերոբ Կիրակոսեան
- Ատենադպիր՝ Մոսիկ Թոփուզեան
- Գանձապահ՝ Մայսա Պոյաճեան
- Հաշուապահ՝ Ժիրայր Գասպարեան
- Գոյքապահ՝ Վահէ Թաշճեան
- Մարզ. պատասխանատու՝ Յակոբ Փօլատեան

Խորհրդականներ՝ Յարութիւն Զիլինկիրեան եւ Բաբկէն Կարապետեան:

Վարչութիւնը յաջորդաբար կը նշանակէ սկաուտական խորհուրդ, մարզական, ֆուտպոլի եւ պարահանդէսի յանձնախումբեր:

Տարեշրջանի ընթացքին ֆուտպոլի, պասքեթպոլի, վոլիպոլի եւ փինկ փոնկի զանազան դասակարգերու տղոց եւ աղջկանց խումբեր կը մասնակցին Մոնթրէալի լիկի ախոյեանութեանց մրցաշարքերուն: Մասնաճիւղը ունի նաեւ 35 աթլետներ տղոց եւ աղջկանց բաժիններով:

Ազգային, եկեղեցական, պետական եւ այլ հանդիսութեանց մասնաճիւղի սկաուտներն ու մարզիկները իրենց պատասխանատուներով մնայուն մասնակցութիւն կը բերեն:

Վարչութիւնը իր օժանդակ յանձնախումբերով կ'իրականացնէ շրջանի 22րդ ամառնային միջ-մասնաճիւղային խաղերը: Վարչութեան տարեկան պիւտճէն կը գերազանցէ անդամական ընդհանուր ժողովի նախատեսութիւնները, ընդհանուր մուտք՝ 97626 գանատական տոլար, ելք՝ 97843 գանատական տոլար:

Սկաուտական բաժինին կը մասնակցին ընդհանուր 309 անդամներ, որոնցմէ 172ը սկաուտական շարքերէն, 99ը արենուշականէն եւ 38 խմբապետութենէն եւ խորհուրդի կազմէն: Սկաուտական բաժնի ելքերու գումարը աւելի քան 112000 գանատական տոլար է:

Մարզական Գործունէութիւն

Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ.ի մշակած մարզական գլխաւոր ճիւղը ֆուտպոլն է, որուն անդրանիկ կազմի Armeniaի գործունէութեան վրայ կը յենի նաեւ մասնաճիւղի հիմնադրութիւնը:

Ժամանակի ընթացքին, յատկապէս Հ.Մ.Ը.Մ. եւ Կամք միութիւններու միացումէն ետք պասքեթպոլը կը ստանայ յաւելեալ կարեւորութիւն: Կիրակուող մարզական միւս ճիւղերէն են եղած վոլիպոլը, փինկ փոնկը, հոքէյը եւ աթլետիզմը ընդհանրապէս երկսեռ խումբերու մասնակցութեամբ:

Ճութպոլ

1973-74 եղանակի դադրեցումէն ետք, 1975ին ֆուտպոլի խումբը կը վերակազմուի աւելի երիտասարդ անդամներու մասնակցութեամբ: Զոյգ եղանակներ պատրաստութեան ժամանակշրջան մը բոլորելէ ետք, 1977ին ֆուտպոլի խումբը «Les Montrealais» անուան տակ կը մասնակցի Լիկի Բ. դասակարգի ախոյեանութեան մրցաշարքին յաջորդ տարին իսկ բարձրանալու համար Ա. դասակարգ:

1978էն սկսեալ ֆուտպոլի կրտսերներու խումբ մը կազմակերպուեցաւ նոր ուժեր ապահովելու համար առաջին կազմին: Այս ժամանակաշրջանէն սկսեալ խումբի փորձերը կը կատարուին Louisbourg թաղի քաղաքապետական դաշտին վրայ: 1978ին երէցներու խումբի մարզիչներն են՝ Վարդգէս Մաթէոսեան եւ Յարութ Մահտէսեան: Խումբի պատասխանատուներն են՝ Գրիգոր Ապրաքեան եւ Նշան Ճապուրեան:

Հետզհետէ զանազան դասակարգերու

Ֆուլթոնի խումբեր կը սկսին գործել մասնաճիւղի մարզիչներու հսկողութեան տակ: 1983ին Ֆուլթոնի խումբերուն մարզիչի պաշտօններ վարած են Յովսէփ Եագուպեան, Կիրօ Աղազարեան, Պօղոս Հայրապետեան եւ Վահէ Թաշճեան:

1989 եղանակը յատուկ յաջողութեամբ կը պսակուի երբ երկրորդական 13 խումբեր զանազան դասակարգերու մէջ միջ-ակմբային մակարդակի վրայ բացառիկ յաջողութիւններ կ'արձանագրեն: 1990ին երէցներու խումբը կը բարձրանայ AA. դասակարգ:

1975էն 1990 տարիներու ընթացքին, Հ.Մ. Ը.Մ. Կամքի Ֆուլթոնի խումբերուն մասնակցութեամբ կարեւոր ներդրումներ ունեցած են՝ Սերգօ Յովսէփեան, Վահրամ Դանիէլեան, Վարդգէս Մաթէոսեան, Գօգօ Գարապօղոսեան, Յովսէփ Եագուպեան, Յակոբ Թորոսեան, Յակոբ Յովհաննէսեան, Նիկողոս Մարունեան, Յակոբ Գասարճեան, Յարութիւն Տէրսէրեան, Գաբրիէլ Քէօսէեան, Յակոբ Մահտէսեան, Գրիգոր Ապրաքեան եւ ուրիշներ:

Պասքետպոլ

1979ին մասնաճիւղը ունի տղոց հինգ դասակարգի եւ աղջկանց մէկ պասքետպոլի կազմեր: Խումբերու մարզիչի պաշտօններ կը վարեն Յակոբ Խաչատուրեան, Ֆրունցիկ Գրիգորեան, Յովակ Պետրոսեան, Նուպար Թովմասեան, Կարօ Գրալեան, Ժիրայր Դաւիթեան, Ալեքս Արապեան, Կարօ Թաշճեան եւ Միհրան Զերտելեան: Խումբերը կը մարզուին հայ կեդրոնի մարզասրահին մէջ: Տղոց առաջին երեք կազմերը կը մասնակցին Մոնթրէալի պասքետպոլի լիկի ախոյեանութեան մրցաշարքերուն: Խումբերու պատասխանատուութիւններ ստանձնած են, Շահէն Մինասեան եւ Ժիրայր Շատախցեան:

1975էն 1990 տարիներուն Մոնթրէալի մասնաճիւղի պասքետպոլի ճիւղին մէջկարեւոր ներդրումներ ունեցած են՝ Վարդգէս Յակոբ-

եան, Եղուարդ Ֆրունճեան, Հրաչ Տէր Սարգիսեան, Միհրան Զերտելեան, Ճօնի Ունճեան, Արմէն Գալիմճեան, Գօգօ Գարապօղոսեան, Յակոբ Խաչատուրեան, Համբիկ Ռոտայեան, Տիգրան Մելքոնեան, Արա Կէպէշեան, Ժիրայր Գրալեան, Նուպար Թովմասեան, Անահիտ Նաճառեան, Ռոպէր Թուխմանեան, Րաֆֆի Աբանեան, Հրայր Թազպազեան, Ֆրունց Գրիգորեան, Վարուժ Կիւրիւնլեան:

1979էն սկսեալ, պասքետպոլի խումբերը իրենց փորձերը կատարած են հայ կեդրոնի սրահին մէջ:

Աթլետիզմ

1975ին, հակառակ աթլետիզմը կիրարկող մարզիկներու փոքր թիւին, Վարուժան Զուրիկեան եւ իր գործակիցները կը շարունակեն վարել մարզական այս ճիւղը մասնաճիւղէն ներս: Մասնաճիւղի կազմերը 1976, 1977 եւ 1978 տարիներուն միջ-մասնաճիւղային ամառային խաղերու ծիրին մէջ կը տիրանան «Գրիգոր Նիզիպլեան» բաժակին:

1979ին մասնաճիւղի աթլետիզմի ճիւղը կ'անդամակցի Քեպեք նահանգի Ֆետերասիոնին այնուհետեւ մասնակցելու համար ամառային թէ ձմեռային ախոյեանութեանց մրցումներուն: Մասնաճիւղի նշանաւոր մարզիկներէն են՝ Րաֆֆի Նիզիպլեան, Հայկ Ակոբեան, Արա Իմամէճեան, Շանթ Նիկողոսեան, Նշան Զուրիկեան, Նայիրի Պուլկարեան-Բաբախեան, Ռընէթ Սասունի: Վարուժան Զուրիկեանի կողքին, մարզիչի եւ պատասխանատուի պաշտօններ վարած են՝ Շանթ Նիկողոսեան, Հրաչ Տէր Սարգիսեան, Ժիրայր Դաւիթեան, Անտոն Զատոյեան, Գէորգ Զատոյեան, Նիկողոս Մարունեան եւ Սոնա Լախոյեան:

Մոնթրէալի մասնաճիւղը իր զանազան ճիւղերու խումբերով մնայուն ներկայութիւն եղած է Գանատայի եւ Արեւելեան Միացեալ Նահանգներու ամառային եւ ձմեռային խաղերուն ինչպէս նաեւ Գանատայի մասնաճիւղերու միջեւ իր նախաձեռնութեամբ կամ քոյր

մասնաճիւղերու կողմէ կազմակերպուած մարզական միջ-մասնաճիւղային մրցաշարքերուն:

Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ. կամքի իրերայաջորդ վարչութիւններուն մնայուն կերպով օժանդակած են փորձառու եւ մասնագէտ անդամներէ կազմուած մարզական յանձնախումբեր:

Տարիներու ընթացքին Ֆուլթոնի ճիւղին մէջ իբրեւ մարզիչ կամ պատասխանատու ծառայած են՝ Գէորգ Սեւակեան, Սերգօ Եափուճեան, Սերգօ Յովսէփեան, Վահրամ Դանիէլեան, Վարդգէս Մաթէոսեան, Գօգօ Գարապօղոսեան, Յովսէփ Եազուպեան, Յակոբ Թորոսեան, Յակոբ Յովհաննէսեան, Նիկողոս Մարունեան, Յակոբ Գասարճեան, Յարութիւն Տէրաւէրեան, Յակոբ Մահսէսեան, Գրիգոր Ապրաքեան, Արմէն Ուսուլեան, Վազգէն Լախոյեան եւ ուրիշներ:

Նոյնպէս պասքէթպոլի ճիւղին ծաւալման ու զարգացման օգտակարհանդիսացած են պատասխանատու մարզիչներ՝ Վարդգէս Յակոբեան, Եղուարդ Ֆրունճեան, Հրաչ Տէր Սարգիսեան, Միհրան Զերաւելեան, Ճոնի Ունճեան, Արմէն Գալէմեան, Գօգօ Գարապօղոսեան, Յակոբ Խաչատուրեան, Համբիկ Ուստայեան, Տիգրան Մելքոնեան, Արա Կէպէղեան, Ժիրայր Դաւիթեան, Յովակ Պետրոսեան, Լեւոն Նաճառեան, Օննիկ Մկրտիչեան, Կարօ Գրալեան, Նուպար Թովմասեան, Անահիտ Նաճառեան, Ալեքս Արապեան, Ֆրունցիկ Գրիգորեան, Կարօ Թաշճեան, Րաֆֆի Աբանեան, Արամ Պարգեւեան, Նուրհան Տէմերցոկէն, Ռոպէր Մաչէյ, Ռէմոն Փոլատողլու, Գրիգոր Բաթուկեան:

Տարիներու ընթացքին վարչութեան օժանդակ մարզական յանձնախումբերուն հետզհետէ մասկազմած են Շահէն Մինասեան, Սոնա Լախոյեան, Տիգրան Մելքոնեան, Միհրան Ճուպեան, Ռուպէր Թուխմանեան, Գօգօ Խաչատուրեան, Արամ Խաչիկեան, Պետրոս Հայրապետեան, Նշան Զուրիկեան, Արմէն Քիւլիբեան:

Վոլիպոլի ճիւղի մարզիչներու ցանկին մաս կազմած են Վ. Յուսիկեան, Մոսիկ Թօփուկեան:

Սկաուտական գործունէութիւն

1975էն սկսեալ Հ.Մ.Ը.Մ. կամքի սկաուտական բաժինը կը շարունակէ ծաւալիլ նախկին թափով: Մասնաճիւղի խմբապետական կազմէն Սոնիա Շայն, Փոլին Սիմոնեան եւ Թագուհի Ղազարեան կը տիրանան Գանատական կեդրոնի Pack Holiday վկայականին, իսկ Անի Բապուճեան, Մարօ Բամպուքճեան եւ Փոլին Սիմոնեան Campcraft վկայականին:

1975էն 1979 հնգամեակի ընթացքին սկաուտական խորհուրդներուն անդամակցած են՝ Սեդրակ Պուրսալեան, Յովսէփ Զերաւելեան, Աշոտ Սերոբեան, Էօթէնի Կարակապետեան, Գէորգ Միթիկեան, Համբարձում Թոքաթլեան, Արամ Նշանեան, Տոքթ. Սեդա Մասերեճեան, Պերճ Աճէմեան, Վարուժան Սերոբեան, Կարպիս Գալեմճեան, Ուլաթըր Շայն, Կարօ Թունճեան, Արմէն Սերոբեան, Արմէնակ Գազանճեան, Մարօ Շալճեան, Նորայր Շալճեան, Ստեփան Քէօլէեան եւ Փոլին Սիմոնեան:

Մոնթրէալի մասնաճիւղը 1977ի Դեկտեմբերէն սկսեալ կը կազմէ երէց սկաուտներու առաջին փաղանգը պատասխանատուութեամբ Բաբկէն Կարապետեանի:

1978ին, 17 հոգինոց պատուիրակութիւն մը կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային Արնդհանուր բանակումին, որ տեղի կ'ունենայ Յունաստանի մայրաքաղաք Աթէնքի մօտակայ Գալամոս գիւղին մէջ: Մասնաճիւղի աւագ խմբապետ Վարուժան Սերոբեան, Կեդրոնական Վարչութեան կողմէ կը նշանակուի այս բանակումին ընդհանուր խմբապետ:

1979ին սկաուտական ճիւղը կ'ունենայ պարմանուհիներու փաղանգը պատասխանատուութեամբ Թագուհի Ղազարեանի:

9 Յունուար 1980ի առաջին նիստի ընթացքին, մասնաճիւղի նորօք նշանակեալ սկաուտական խորհուրդի անդամները իրենց աշխատանքի բաժանումը կը կատարեն հետեւեալ ձեւով.

Ատենապետ՝ Կարօ Թունճեան

Փոխ ատենապետ՝ Գէորգ Միսիկեան



Հ.Մ.Ը.Մ.- ԿԱՄՔ Մոնթրեալի մասնաճիղի սկաուտական խորհուրդը՝ 1978ին

Ատենադպիր՝ Արամ Նշանեան
Փոխ ատենադպիր՝ Արամ Մանուկեան
Գանձապահ՝ Ստեփան Քէօլէեան
Հաշուապահ՝ Ուայթրը Շայն
Քարտուղար՝ Սիլվիա Պուրսայեան
Խորհրդական՝ Վահագն Փաթթուկեան
Աւագ խմբապետ՝ Նորայր Շալճեան
Աւագ խմբապետուհի՝ Մարօ Շալճեան

Վարչական ներկայացուցիչ՝ Յովսէփ Զերտեւեան:

Տարեշրջանի սկաուտական գործունէութեան մաս կը կազմեն, բանակումներ, արշաւներ, խմբապետական սեմինարներ, ծնողական հաւաքոյթներ, Զատիկուայ հաւկիթներու վաճառք, խարուկահանդէս, եւ օրացոյցներու վաճառք:



Հ.Մ.Ը.Մ.- ԿԱՄՔ Մոնթրեալի մասնաճիւղի Խմբապետական կապը՝ 1978ին

Սկաուտական շարքերու ընդհանուր թիւն է 338, որոնցմէ 26ը աստիճանաւորական կազմէն:

1981 տարեշրջանի սկաուտական խորհուրդին մաս կը կազմեն.

Ատենապետ՝ Գէորգ Մխտիկեան
 Փոխ ատենապետ՝ Յովսէփ Զերտելեան
 Ատենադպիր՝ Արամ Մանուկեան
 Փոխ ատենադպիր՝ Մարօ Շալճեան
 Գանձապահ՝ Ստեփան Քէօլէեան
 Հաշուապահ՝ Ուալթըր Շայն
 Գոյքապահ՝ Սիլվիա Պուրսալեան
 Փոխ. գոյքապահ՝ Նորայր Շալճեան:

Սկաուտական խորհուրդի ընթացիկ գործունէութեան մաս կը կազմեն 1982ի օրացոյց-

ներու սպառում, խմբապետական սեմինար բանակում, Զատիկուայ շոքոլայի վաճառք, Նոր Տարուայ շնորհաւորական քարթեր, գայլիկարծուիկներու տարեկան բանակում:

Սկաուտական շարքերուն մաս կը կազմեն երէց սկաուտներ՝ 31, սկաուտներ՝ 58, գայլիկներ՝ 62, պարմանուհիներ՝ 16, արենոյշներ՝ 40, հետախոյզներ՝ 42, պարիկներ՝ 21 եւ մրջնիկներ՝ 23: Ընդհանուր թիւ 293:

13 Յունուար 1982ին, մասնաճիւղի նոր նշանակուած սկաուտական խորհուրդը իր անդրանիկ նիստի ընթացքին պաշտօններու բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով.

Ատենապետ՝ Գէորգ Մխտիկեան
 Փոխ ատենապետ՝ Մարօ Շալճեան
 Ատենադպիր՝ Յրանսուա Գարայեան



Հ.Մ.Ը.Մ.- ԿԱՄՔ Մոնթրեալի մասնաճիղի Արեւոյշներու խումբը՝ 1978ին

Գանձապահ՝ Վիգէն Հայրապետեան
Գոյքապահ՝ Սիլվիա Պուրսալեան
Խորհրդական՝ Ստեփան Ոսկերիչեան:

Մարտ ամիսէն սկսեալ վերոյիշեալ կազմը կ'ամբողջանայ Արմինէ Ասատուրեանի մասնակցութեամբ ատենադպրուհիի պաշտօնով: Խմբապետական պաշտօնները կը վարեն Արա Իմամէճեան եւ Աննա Փափազեան: Սկաուտական խումբերը կը կատարեն բազմաթիւ բանակումներ եւ սկաուտական խարուկահանդէս մը ներկայութեամբ 500 հանդիսականներու: Սկաուտական բաժինը կ'ունենայ նաեւ իր նուազախումբը:

4էն 16 Յուլիս 1983ին, Գալկըրիի մէջ մաս-

նաճիղի 33 սկաուտներ իբրեւ Գանատայի Քեպէք նահանգի պատուիրակութեան անդամներ կը մասնակցին միջազգային 15րդ ճամպորիին, բանակատեղիին մէջ ունենալով ուրոյն հայկական ենթաբանակավայր եւ արժանանալով դեկավարութեան յատուկ զնահատանքին:

1986 տարուայ սկաուտական խորհուրդին մաս կը կազմեն՝

Ատենապետ՝ Նորայր Շալճեան
Փոխ ատենապետ՝ Ժիրայր Գասպարեան
Ատենադպիր՝ Մարո Շալճեան
Գանձապահ՝ Անի Գուլյումճեան
Հաշուապահ՝ Սիլվիա Պուրսալեան
Գոյքապահ՝ Ռոպէր Պաքըճեան

Քարտուղար՝ Ճէնի Կարապետեան
 Խմբապետ՝ Բաբկէն Կարապետեան
 Խմբապետուհի՝ Արշօ Շասուորեան:

Տարուայ սկստական գործունէութեան գլխաւոր առանցքը կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային Գ. ընդհանուր բանակումի մասնակցութիւնը Լոնսոնի մօտակայ Chalfont Heights բանակավայրին մէջ:

1988ին Հ.Մ.Ը.Մ. կամքի սկստական խորհուրդին մաս կը կազմեն՝ Պարոյր Գազանճեան, Ժիրայր Գասպարեան, Բոպէր Պաքրճեան, Արթօ Մանտալլ, Վիգէն Պասմաճեան, Վիգթոր Լուլու, Սիլվիա Պուրսալեան, Անի Գուլյումճեան եւ Սօսի Արապեան: Գանատայի սկստական ֆետերասիոնին մօտ

(Scout District) մասնաճիւղի ներկայացուցիչն է Էօթէնի Կարակապետեան:

Տարեշրջանի ընթացքին խորհուրդը կը կազմակերպէ 9 զանազան դասի բանակումներ, արշաւներ, դաշտագնացութիւն, Մայրերու Օր, բարեկենդան, ինքնաշարժ լուալ, հեռաձայնային դրամահաւաք (telethon), Զատիկուայ շոքոլա եւ կը մասնակցի վարչութեան ձեռնարկներուն, ազգային, կրօնական եւ պետական ելոյթներուն կարգապահական կամ բրօթոքոլային յայտագիրներով:

1989ի սկստական խորհուրդին մաս կը կազմեն.

Ատենապետ՝ Պարոյր Գազանճեան
 Ատենադպիր՝ Ֆրանսուա Գարայեան



Հ.Մ.Ը.Մ.- ԿԱՄՔ Մոնթրէալի մասնաճիւղի Սկստական խումբը՝ 1978ին

Գանձապահ՝ Անի Գույուժեան
Հաշուապահ՝ Հրաչ Աճէմեան
Գոյքապահ՝ Լեւոն Արապեան
Խորհրդականներ՝ Յակոբ Պարթեւեան եւ
Հուրի Գասարճեան:

Տարեշրջանի ընթացքին մասնաճիւղի խմբապետի պաշտօնը վարեցին յաջորդաբար Արա Եղոյեան, Ռիթա Պարթեւեան եւ Նորայր Շալճեան:

Խումբերու աշխատանքի օրերն են Ուրբաթ երեկոները երէցներ, սկսողներ, արենոյններ: Շաբաթ օրերը՝ գայլիկներ եւ արծուիկներ: Երկուշաբթի երեկոները՝ պարմանուհիներ: Երեքշաբթի երեկոները՝ հետախոյզներ: Վերոնշեալ բոլոր բաժիններու նման ժամանակացոյցի մը ենթարկուելը ցոյց կու տայ որ հակառակ իր լայն կարելիութեանց հայ կեդրոնի կողմէ Հ.Մ.Ը.Մ.ի սկսողութեան տրամադրուած բաժինները անբաւարար են:

Մասնաճիւղի խումբերէն 4 սկսողներ յաջողութեամբ կ'անցնեն գանատական սկսողական Ֆետերասիոնի կողմէ Wood Badgeի քննութիւնները:

Սկսողական բաժնի գանազան միաւորները տարեշրջանի ընթացքին կը մասնակցին հաւաքաբար 57 բանակումներու:

57 հոգիի մասնակցութեամբ պատուիրակութիւն մը ներկայ է Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային Դ. ընդհանուր բանակումին 1990ին՝ Աթէնք:

Տարիներու ընթացքին Հ.Մ.Ը.Մ. կամքի սկսողական աւագխմբապետի պաշտօններ վարած են՝ Վարուժան Սերոբեան, Ուալթըր Շայն, Նորայր Շալճեան, Մարօ Շալճեան, Արա Իմամէճեան, Բաբկէն Կարապետեան, Աննա Փափագեան, Ճինիա Պէյլէրեան, Թագուհի Ղազարեան-Պագրճեան, Արշօ Դերձակեան եւ ուրիշներ:

Նուագախումբ

Հ.Մ.Ը.Մ.ի Մոնթրէալի սկսողական ճիւղը ունեցած է թմբկահարներու խումբ: Նուագա-

խումբի մասնակցութիւնը սկսողական ներքին առիթներով ինչպէս նաեւ արտաքին՝ ազգային թէ պետական ելոյթներով, մեծապէս նպաստած է անոնց յաջողութեան: Թմբկահարներու խումբը մասնակցած է նաեւ միջ-մասնաճիւղային հանդիպումներու առթիւ կազմակերպուած սողանքներուն Մոնթրէալէն դուրս Գանատայի եւ Արեւելեան Միացեալ Նահանգներու քաղաքներուն մէջ:

Զանազան

Մասնաճիւղի կազմակերպական մարզական եւ սկսողական աշխատանքներուն կողքին, Հ.Մ.Ը.Մ. կամքը ունեցած է նաեւ միութենական, շինարարական, պետական եւ ընկերային յարակից գործունէութիւն համակիրներու զանգուած մը պահելով իր շուրջ եւ ազգային ու պետական շրջանակներու քաջալերանքը վայելելով զանազան առիթներով:

Այսպէս 1975ի Փետրուար 22ին մասնաճիւղը կը նշէ Միութեան հիմնադրութեան 56րդ տարեդարձը:

1979ին, Հայ կեդրոնի շինանարական ծրագրի Բ. հանգրուանին, կ'աւարտի Հ.Մ.Ը.Մ. կամքի մարզասրահի շինութիւնը: Բացումը տեղի կ'ունենայ 1980ին: Այս նպատակին համար մասնաճիւղը կը վճարէ 50.000 գանատական սոլար: Միաժամանակ մասնաճիւղի վարչութեան նստավայրն ալ կը փոխադրուի Հայ կեդրոն:

1983ին մասնաճիւղը մարզական եւ հրապարակային ելոյթներով կը նշէ միութեան հիմնադրութեան 65ամեակը եւ Մոնթրէալի մասնաճիւղի կազմութեան 25ամեակը:

Յուլիս 1983ին սկսողական բաժինը յատուկ կազմակերպութեամբ կը մասնակցի Խորէն Ա. կաթողիկոսի Մոնթրէալ այցելութեան առթիւ կատարուած աշխատանքներուն:

1988ին Մոնթրէալի մասնաճիւղը մեծ շուքով կը տօնէ իր հիմնադրութեան 30ամեակը:

ՀԱՄԻԼԹԸՆ

1978 ին Համիլթոնի ունի արդեն տասնամեայ գոյութիւն: Օրուայ վարչական կազմին մաս կը կազմեն՝

Ատենապետ՝ Նորայր Գրիշեան
Ատենադպիր՝ Անդրանիկ Շարապխանեան
Գանձապահ՝ Նազիկ Սեֆերեան

Խորհրդականներ՝ Յովսէփ եւ Մինաս Էրջէնեաններ:

Այս տարեշրջանին մասնաճիւղը կը կազմակերպէ սկաուտական բաժին որուն երկարամեայ ծառայութեան կը լծուին՝ Մինաս Էրջէնեան, Վաչէ Գալուստեան, Մարի Էրջէնեան, Արիս Աբգարեան, Էլիզ Պոյաճեան, Վիլյէթ Աբ-

րահամեան, Վարդիվառ Էօլմէզեան եւ Պետիկ Տեմիրճեան:

Դեկտեմբեր 1979ին, հայ կեդրոնի սրահին մէջ, մասնաճիւղը կը տօնէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 60ամեակը:

1982էն սկսեալ մասնաճիւղի սկաուտական բաժինը կը գործէ յատուկ սկաուտական խորհուրդի մը հսկողութեամբ: Սկաուտական ճիւղը իր ճանաչումը կը ստանայ գանատական սկաուտական կեդրոնին կողմէ: Կիրարկուող մարզական ճիւղերն են Փութպոլ, պասքեթպոլ եւ աթլետիզմ:

1983ին նոր վարչական կազմ մը կը լծուի աշխատանքի անդամակցութեամբ հետեւեալներուն.

Ատենապետ՝ Ղազարոս Մաթեան



Համիլթոնի մասնաճիւղի ֆութպոլի խումբը՝ 1982ին

Ատենադպիր՝ Յակոբ Աբգարեան
Գանձապահ՝ Գէորգ Յակոբեան
Խորհրդականներ՝ Վաչէ Գալուստեան եւ
Միհրան Օհանեան:

Տարեշրջանի անդամական գտումի եւ նոր
անդամագրութեան հետեւանքով ընդհանուր
թիւը կը բարձրանայ 81ի, որոնցմէ 37 սկաու-
տական շարքերէն: Կիրակուող մարգախաղերն
են՝ Ֆուլթպոլ, պասքեթպոլ, վոլիպոլ եւ փինկ-
փոնկ: Տարեկան մուտքերու ընդհանուր գու-
մարն է 8457 տուար ելքեր՝ 6811 տուար:

1984 տարուայ մասնաճիւղի վարչութեան
ատենապետի պաշտօնը կը վարէ Գէորգ Յա-
կոբեան, մասնակցութեամբ՝ Յակոբ Աբգար-
եանի, Արամ եւ Մինաս էրջենեաններու:

29 Յուլիսին հետաքրքրական մրցումով մը
ելոյթ կ'ունենան մասնաճիւղի Ֆուլթպոլի վե-
թերան եւ ներկայացուցչական խումբերը վեր-
ջիններու յաղթանակով 3-2 արդիւնքով, հան-
դիսականներուն մօտ ստեղծելով վեթերան
անդամներու մրցումներուն յիշատակելի օրե-
րու մթնոլորտը: 27էն 29 Նոյեմբերի միջեւ,
մասնաճիւղը կը հիւրընկալէ Գանատայի եւ
Արեւելեան Միացեալ Նահանգներու միջ-մաս-
նաճիւղային պասքեթպոլի 7րդ մրցաշարքը:

5 Մայիս 1985ին, Համիլթընի մասնաճիւղի
անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր
տարեշրջանի վարչական կազմ:

Ատենապետ՝ Պօղոս Սեֆերեան
Փոխ ատենապետ՝ Նորայր Գրիշեան
Ատենադպիր՝ Վիօլէթ Աբրահամեան
Գանձապահ՝ Բաբի Արթիօթիս

Սկ. խորհուրդի ներկայացուցիչ՝ Պօղոս Տօ-
շոյեան:

Կազմակերպական եւ մարզական գործու-
նէութիւնները բնականոն յառաջդիմութիւն
կ'արձանագրեն այս տարեշրջանին:

Սկաուտական բաժինը զգալի նահանջ
կ'արձանագրէ շարքերու թիւի նուազումով:

Մասնաճիւղի հրապարակային կամ ներքին
ընթացիկ նախաձեռնութիւնները կը յաջողին
քաջալերելի արդիւնքներով: Մարմնամշակ Պե-

տիկ Պեքմէզեան հարաւային Օնթարիոյի պաշ-
տօնակ մրցումներուն մասնակից 23 մարզիկ-
ներու կարգին կը գրաւէ երրորդ դիրքը:

1987ին վարչական կազմի Ատենապետու-
թիւնը կը վարէ Վաչէ Պօղոսեան:

Զգալի յառաջդիմութիւն կ'արձանագրէ
սկաուտական շարժումը: Մարզական եւ
սկաուտական բաժինները իրենց մասնակցու-
թիւնը կը բերեն Շրջանային ձեռնարկներուն:

1988ին վարչութեան ատենապետի պաշտօ-
նը կը փոխանցուի Վաչէ Գալուստեանին:

Մասնաճիւղը կը տօնէ իր հիմնադրութեան
քսանամեակը: Այս առթիւ վեթերան անդամ-
ներ՝ Պօղոս Սեֆերեան եւ Արամ էրջենեան կը
պարգեւատրուին Ծառայութեան շքանշանով:
Մարզական եւ սկաուտականի կողքին մասնա-
ճիւղը կը կազմակերպէ ընկերային ձեռնարկ-
ներ եւ անդամական դաշտագնացութիւններ:

19 Մարտ 1989ին Համիլթընի Հ.Մ.Ը.Մ.ի
անդամական ընդհանուր ժողովէն կ'ընտրուի
մասնաճիւղի նոր վարչական կազմ՝

Ատենապետ՝ Վաչէ Գալուստեան
Փոխ ատենապետ՝ Արամ Ժամկոչեան
Ատենադպիր՝ Նորայր Գրիշեան
Գանձապահ՝ Սարգիս Ժամկոչեան

Մարզական պատասխանատու՝ Յակոբ Տէ-
միրճեան:

Ձանազան խումբերու մասնակից 62 երկ-
սեռ մարզիկներու գործակցութեամբ, 1989ին
մասնաճիւղի մարզական գործունէութիւնը
նոր թափ կը ստանայ, շնորհիւ վարչութեան
կողմէ աշխատանքի լծուած երիտասարդ ուժե-
րու: Սկաուտական ճիւղը կը պահէ միայն աղջ-
կանց բաժինը:

Մասնաճիւղի ներկայացուցչական կազմերը
իրենց մասնակցութիւնը կը բերեն քոյր մաս-
նաճիւղերու եւ Շրջանային վարչութեան նա-
խաձեռնած մարզական, ազգային եւ ընկերա-
յին ելոյթներուն:

1990 տարուայ վարչական կազմի անդամ-
ներն են՝

Ատենապետ՝ Սարգիս Ժամկոչեան

Փոխ աստենապետ՝ Ղազար Մաթեան
Ատենադպիր՝ Աղաւնի Ժամկոչեան
Գանձապահ՝ Վաչէ Գալուստեան

Մարզական պատասխանատու՝ Արիս Աբ-
գարեան:

Բազմաթիւ դժուարութիւններ հարթելու
մտահոգութեամբ մասնաճիւղի սկստական
ճիւղը առժամաբար կը սառեցուի ի նպաստ
մարզականին: Մարզական պատուիրակու-
թիւններ կը մասնակցին Արեւմտեան Մ. Նա-
հանգներու նաւասարդեան խաղերուն ինչպէս
նաեւ Գանատայի եւ Արեւելեան Մ. Նահանգնե-
րու ամառնային խաղերուն:

ԹՈՐՈՆԹՕ

Կագմակերպչական

1975ի Մայիսի 22ին Թորոնթոյի մասնաճիւ-
ղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ
նոր վարչական կազմ՝

Ատենապետ՝ Կարօ Բաշայեան
Ատենադպիր՝ Արմէն Կետիկեան
Գանձապահ՝ Յակոբ Գասարճեան
Գոյքապահ՝ Սամ Մանուկեան

Մարզական պատասխանատու՝ Գէորգ
Սարխանեան

Խորհրդականներ՝ Աւօ Ասայելեան եւ Սար-
գիս Տարագճեան:

1976-77 տարեշրջանի վարչական կազմի ան-
դամներն են աստենապետութեամբ՝ Արմէն Կե-
տիկեանի, Յակոբ Արթինեան, Ռուբէն Հոթոյ-
եան, Սամ Մանուկեան, Վահէ Մատեան, Յա-
կոբ Սիմոնեան եւ Սարգիս Տարագճեան:

1977-78 տարեշրջանին վարչական նախորդ
կազմէն պաշտօնի վրայ կը մնան Արմէն Կե-
տիկեան եւ Սամ Մանուկեան: Կազմը կ'ամբող-
ջացնեն Միհրան Գալալեան, Սարգիս Հանէս-
եան, Վրէժ Մելքոնեան, Գրիգոր Պեքարեան եւ
Յովհաննէս Տէր Պողոսեան:

1978-79 տարեշրջանին աստենապետի պաշտօ-
նը կը վարէ Գէորգ Շիթիլեան: Կազմի մնաց-

եալ անդամներն են՝ Գէորգ Անտիլեան, Յակոբ
Արթինեան, Սիւզի Գալթակեան, Վրէժ Մելքոն-
եան, Սօսի Շահինեան եւ Սուրէն Պապոչեան:

Յաջորդ տարեշրջանին վարչական նա-
խորդ կազմի անդամներ՝ Գէորգ Անտիլեան,
Սիւզի Գալթակեան եւ Սօսի Շահինեան կը փո-
խարինուին Ճորճ Գալըպճեանով, Յակոբ Գա-
սապեանով եւ Արմէն Կետիկեանով:

9 Մայիս 1980ին, մասնաճիւղի անդամական
ընդհանուր ժողովէն ընտրուած վարչական
կազմը իր աշխատանքներու բաժանումը կը
կատարէ հետեւեալ ձեւով.

Ատենապետ՝ Գէորգ Անտիլեան
Փոխ աստենապետուհի՝ Բեննա Թարգի
Ատենադպրուհի՝ Սօսի Շահինեան
Գանձապահ՝ Կարպիս Մաթոսեան
Գոյքապահ՝ Անդրանիկ Աշրքեան

Մարզական պատասխանատու՝ Արիս Պա-
պիկեան

Խորհրդական՝ Պետրոս Փիլաւճեան:

Տարեշրջանի ընթացքին Բեննա Թարգի կը
փոխարինէ աստենապետը, որուն կը տրուի
խորհրդականի պաշտօն: Վարչութեան կողմէ
կը նշանակուին օժանդակ զոյգ յանձնախում-
բեր՝ ամառնային միջ-մասնաճիւղային խաղե-
րու եւ մարզական: Զգալի աճ կ'արձանագրէ
անդամական թիւը սկստական ճիւղի 90 նոր
անդամակցութեամբ: Ընդհանուր թիւ 419,
որոնցմէ 284ը սկստական շարքերէն:

1981ի Ապրիլի 3ին, մասնաճիւղի անդամա-
կան ընդհանուր ժողովը լսելէ ետք վարչու-
թեան 1980 տարեշրջանի միամեայ գործունէու-
թեան տեղեկագիրը, վերջին օրակարգով կ'ընտ-
րէ 1981ի վարչական կազմ.

Ատենապետ՝ Վրէժ Մելքոնեան
Փոխ աստենապետուհի՝ Բեննա Թարգի
Ատենադպրուհի՝ Սօսի Շահինեան
Գանձապահ՝ Անդրանիկ Աշրքեան

Մարզական պատասխանատու՝ Յակոբ Ար-
թինեան

Գոյքապահ եւ «Մարզիկ» թերթի պատաս-
խանատու՝ Վրէժ Աւագեան

Սկսած տական պատասխանատու՝ Պետրոս Փիլաճեան հետագային փոխարինուած Նուպար Այնէճեանով:

Զգալի սկարուծիւն մը կը տիրէ այս տարեշրջանի ընթացքին պատասխանատուներու յաճախակի փոփոխութեամբ եւ անդամական թիւի նուազումով: Այսուհանդերձ մասնաճիւղը կը յաջողի լաւապէս կազմակերպել Հ.Մ. Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան նախաձեռնած համագաղութային առաջին պասքեթպոլի մրցաշարքի առաջին հանգրուանը: Մասնաճիւղը ըստ առաջւոյն կ'օգտագործէ հայ կեդրոնի իրեն տրամադրուած բաժինները:

2 Ապրիլ 1982ին մասնաճիւղը կ'ընտրէ նոր վարչական կազմ բաղկացած հետեւեալ անդամներէն.

Ատենապետ՝ Արմէն Կէտիկեան
Փոխ ատենապետ՝ Տոքթ. Կարպիս Մերճանեան

Ատենադպրուհի՝ Սիւզի Գալթակեան
Գանձապահ՝ Վահէ Հարմանտայեան
Գոյքապահ՝ Գէորգ Պալեան

Սկսած տական խորհուրդի ներկայացուցիչ՝
Յովսէփ Արապեան

Խորհրդական՝ Արիս Պապիկեան:

Այս կազմի գլխաւոր աշխատանքներէն պիտի ըլլար մասնաճիւղի անդամացանկի վերակազմութիւնը նոր հասցէներու ամբողջացումով: Վարչութիւնը իր կողքին կը նշանակէ ընկերային, ֆութպոլի, պասքեթպոլի, վոլիպոլի եւ աթլետիզմի օժանդակ յանձնախումբեր: Նիւթական գետնի վրայ կը յաջողի իրականացնել նախատեսուած պիւստճէն, փակելով նաեւ նախորդ տարեշրջանէն փոխանցուած 9000 տուրի բացը:

Ատենապետութեամբ Արմէն Կէտիկեանի, 1983ին վարչական կազմին կը մասնակցին՝ Սամ Մանուկեան, Սիլվա Յոհաննէսեան, Շահէ Գասարճեան, Բեննա Թարգի, Սարգիս Ղազելեան եւ Սօսի Թաշճեան ոմանք մասնակի ժամանակաշրջանի մը համար: Վարչութիւնը ունի նախկին օժանդակ յանձնախումբերը:

Նիւթական գործառնութիւնը բարելաւուած է մուտքերու ընդհանուր գումար՝ աւելի քան 20.000 գանատական տուր:

11 Ապրիլ 1984ին, մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչական կազմն է՝

Ատենապետ՝ Յակոբ Ղազարեան
Փոխ ատենապետ՝ Սամ Մանուկեան
Ատենադպիր՝ Սօսի Թաշճեան
Գանձապահ՝ Վահան Մահտէսեան
Գոյքապահ՝ Բեննա Թարգի
Մարզական պատասխանատու՝ Վահան Չալիքեան

Խորհրդականներ՝ Վահիկ Ղարախանեան եւ Յովհաննէս Յովհաննէսեան:

Մարզական եւ ընկերային յանձնախումբեր կ'օժանդակեն վարչութեան գործունէութեան: «Մարզիկ» ամսաթերթի ներկայացուցիչն է Արիս Պապիկեանը: Անդամներու թիւը կը մնայ անփոփոխ, նախորդ տարեշրջաններուն բաղադատմամբ: Սկսած տներէն տարեկան անդամավճար կը գանձուի 20 գ. տուր, իսկ մնաց-



1985ի Թորոնթոյի մասնաճիւղի վարչական կազմը, ուրքի՝ Հայկ Ակոբեան, Յակոբ Արթինեան, Արսէն Բէշիշեան եւ Վահան Չալիքեան, նստած՝ Թամիգա Սարխանեան, Յակոբ Ղազարեան եւ Բեննա Թարգի

եալներէն 30 գ. տողար: Տարեշրջանի մուտքերու ընդհանուր գումարն է 34.938 տողար, ելք՝ 33.156:

Թորոնթոյի մասնաճիւղի 19 Ապրիլ 1985ի անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչութիւնը իր աշխատանքներու բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով.

Ատենապետ՝ Յակոբ Ղազարեան

Փոխ ատենապետ եւ սկաուտական խորհուրդի ներկայացուցիչ՝ Յակոբ Արթինեան

Ատենադպրուհի՝ Թամիճա Սարխանեան

Գանձապահ՝ Տոքթ.Արսէն Քելեշեան

Գոյքապահ՝ Հայկ Ակոբեան

Մարզական պատասխանատու՝ Վահան Չալիքեան

Կազմակերպչական՝ Բեննա Թարգի:

Մարզական յանձնախումբի եւ սկաուտական խորհուրդի կողքին, այս տարեշրջանին, վարչութեան կ'օժանդակեն իւրաքանչիւր ձեռնարկի առթիւ նշանակուած յատուկ յանձնախումբեր: Մարզական սկաուտական ինչպէս նաեւ հրապարակային ելոյթները կամ միջմասնաճիւղային նախաձեռնութիւնները յաջողութեամբ կը պսակուին:

1986ին, նախորդ վարչական կազմին կը միանայ էմմա Պասմաճեան:

1987 տարեշրջանի վարչական կազմը իր աշխատանքներու բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով.

Ատենապետ՝ Յակոբ Ղազարեան

Ատենադպիր՝ Թամիճա Սարխանեան

Գանձապահ՝ Արսէն Քելեշեան

Հաշուապահ՝ Սամ Մանուկեան

Քարտուղար՝ Սեպուհ Մահտեսեան

Գոյքապահ՝ Հուրի Արթինեան

Սկաուտական խորհուրդի ներկայացուցիչ՝ Յովհաննէս Յովհաննէսեան:

Մասնաճիւղը բացի իր ընթացիկ գործունէութեան փոխադարձ այցելութիւններով կը յաջողի մօտակայ երեք մասնաճիւղերուն՝ Համիլ-

թըն, Գամպրիճ եւ Սէնթ Գաթրինգի գործունէութեան օժանդակել: Մասնաճիւղի Ֆուլթոնի, պասքեթպոլի եւ վոլիպոլի խումբերը կ'այցելեն Տիթրոյիթի մասնաճիւղին համապատասխան խումբերուն դէմ մրցումներ ունենալու համար: Անդամներու ընդհանուր թիւն ալ կ'անցնի 400ի սահմանը:

28 Մարտ 1989ին կ'ընտրուի Թորոնթոյի մասնաճիւղի վարչական կազմը՝

Ատենապետ՝ Յակոբ Ղազարեան

Փոխ ատենապետ՝ Սամ Մանուկեան

Ատենապետ՝ Սօսի Թաշճեան

Գանձապահ՝ Արսէն Քելեշեան

Գոյքապահ՝ Հրաչ Աբրահամեան

Սկաուտ ներկայացուցիչ՝ Վահրամ Փիրչանեան

Խորհրդական՝ Հուրի Արթինեան:

Մասնաճիւղի մարզական եւ սկաուտական գործունէութեանց կը մասնակցին գրեթէ հաւասար թիւով անդամներ, ընդհանուր թիւ 419: Մասնաճիւղը կը մասնակցի Շրջանային վարչութեան նախաձեռնած բոլոր ելոյթներուն եւ կազմակերպական հաւաքոյթներուն: Կը կազմակերպէ Միութեան 70ամեակին նուիրուած տօնակատարութիւն-պարահանդէս 450 անձերու ներկայութեամբ: Օրուան բանախօսն է Վարդգէս Քիւփեւեան:

Տարեշրջանի նիւթական գործունէութեան պատկերն է. մուտք՝ 73.360 գ. տողար ելք՝ 70.087:

4 Ապրիլ 1990ին, Թորոնթոյի Հ.Մ.Ը.Մ.ի վարչութեան անդամներ կ'ընտրուին՝

Ատենապետ՝ Սամ Մանուկեան

Փոխ ատենապետ՝ Վահրամ Փիրչանեան

Գանձապահ՝ Արսէն Քելեշեան

Հաշուապահ՝ Ժան Սարխանեան

Գոյքապահ՝ Սօսի Թաշճեան

Մարզական պատասխանատու՝ Վահան Չալիքեան:

Վարչութեան կողմէ կը նշանակուին

օժանդակ յանձնախումբեր՝ մարզական, անդամական, յարաբերական, դաշտագնացութեան, ձմեռնային միջ-մասնաճիւղային խաղերու եւ պարահանդէսի: Կը նշանակուի նաեւ սկաուտական խորհուրդ:

Վերոյիշեալ յանձնախումբերու բժախնդիր գործակցութեամբ մասնաճիւղը կը յաջողի բոլորել արդիւնաբեր տարեշրջան մը: Անդամներու թիւի յաւելումը 419էն 675ի բացառիկ յաջողութիւն մը պիտի ըլլար: 360 մարզիկներ կը մասնակցին զանազան մարզախաղերու եւ 279 սկաուտական շարքերուն: Մեծաթիւ այս մասնակցութիւններու աշխատանքները վարելու եւ համադրելու համար մասնաճիւղը զգալիօրէն կը տագնապի ձեռներէց ղեկավարութեան պակասէն:

Մարզական գործունէութիւն

Թորոնթոյի մասնաճիւղը 1980ին կ'ունենայ մարզական բեղուն գործունէութիւն՝ Ֆուլթայոլի, փինկփոնկի, պասքեթպոլի, վոլիպոլի եւ աթլետիզմի զանազան բաժիններով: Խումբերը մարզելու պարտականութիւնները յանձն կ'առնեն՝ Վրէժ Մելքոնեան եւ Արիս Պապիկեան (Ֆուլթայոլ), Ճիլպէր Թարգի եւ Բեննա Թարգի (պասքեթպոլ), Վահան Չալիքեան եւ Շահէ Գասարճեան (վոլիպոլ), Յակոբ Արթինեան (աթլետիզմ):

Ֆուլթայոլի խումբը 1981ի եղանակին Pan American լիկի մրցաշարքին բ. դասի ախոյեանութեան երկրորդ դիրքը կը գրաւէ 1982ի եղանակին փոխադրուելով առաջին դասակարգ:



Թորոնթոյի 1983 տարուայ աղջկանց պասքեթպոլի խումբը

Պասքեթպոլի աղջկանց խումբէն հինգ մարզիկներ մաս կը կազմեն Գանատայի շրջանի հաւաքականին մասնակցելով համագաղութային առաջին միջ-մասնաճիւղային պասքեթպոլի մրցաշարքին:

1982-83 տարեշրջանին համար վարչութիւնը մարզական իւրաքանչիւր ճիւղի յատուկ յանձնախումբեր կը նշանակէ: Մարզական խումբեր 60 մարզիկներով կը մասնակցին միջ-մասնաճիւղային 14րդ ամառնային խաղերուն, Արեւմտեան Միացեալ Նահանգներու 7րդ նաւասարդեան խաղերուն եւ Արեւելեան Միացեալ Նահանգներու կազմակերպած 8րդ ձմեռնային միջ-մասնաճիւղային խաղերուն: Պասքեթպոլի ճիւղը կը կիրարկեն երէց եւ կրտսեր տղոց եւ աղջկանց երեք խումբեր, վոլիպոլը՝

տղոց եւ աղջկանց զոյգ խումբեր, ֆուլթպոլը՝ երէց եւ կրտսերներու զոյգ խումբեր: Ունին նաեւ փինկ փոնկի եւ աթլետիզմի կազմեր: Մասնաճիւղի լաւագոյն մարզիկի եւ տիպար Հ.Մ.Ը.Մ.ականի դիրքը կը գրաւէ Վահէ Զաքարեան տիրանալով Պետրոս Փիլաւճեանի հաստատած պարգեւին:

1984ին մարզական ճիւղերուն վրայ կ'աւելնայ ճատրակը զոյգ խաղացողներով: Աւելի քան հարիւր մարզիկներ մաս կը կազմեն մասնաճիւղի զանազան մարզական խումբերուն:

1985ի Օգոստոս 2էն 4, մասնաճիւղի խումբերը կը մասնակցին Պոսթընի մէջ կազմակերպուած ամառնային միջ-մասնաճիւղային խաղերուն եւ Մոնթրէալի մէջ ձմեռնային միջ-մասնաճիւղային խաղերուն:



Թորոնթոյի 1983 տարուայ աղջկանց վոլիպոլի ախոյեան խումբը

Մարզական գործունեությունների գլխավոր առանցքը կը կազմէ ֆուտբոլը: Մասնաճիւղի երէցներու խումբը կը մասնակցի Թորոնթոյի լիկի մրցաշարքին, Գանատայի միջ-մասնաճիւղային ֆուտբոլի մրցաշարքին եւ համագաղութային ֆուտբոլի մրցաշարքին Լոս Անճելըսի մէջ 1էն 7 Յուլիս 1985ին, խումբին մաս կը կազմեն՝ Ջեքի Նուրեան, Վարդան Ադամեան, Էտի Արզումանեան, Արմոնդ Արզումանեան, Վահէ Համբարձումեան, Արմէն Աբգարեան, Վահան Չալիքեան, Ռազմիկ Մինասեան, Թոնի Տէր Պետրոսեան, Գօգօ Յովնանեան:

1986ի մարզական յանձնախումբի ատենապետութիւնը կը վարէ Սեպուհ Մահտեսեան, որուն զանազան մարզերու մէջ կ'օժանդակեն Վահէ Ղարախանեան, Սամ Մանուկեան, Ռուպինա Պարոնեան, Սօսի Նահապետեան, Վրէժ Սարխանեան, Յակոբ Պաղտատեան եւ Բեննա Թարզի:

1989ին մասնաճիւղը կը կիրարկէ հետեւեալ մարզաճիւղերը.

Ֆուտբոլ՝ 2 խումբ, մարզիչներ՝ Վահան Չալիքեան եւ Շանթ Մերձանեան: Վոլիպոլ՝ 5 խումբ, մարզիչներ՝ Սամ Մանուկեան, Շահէ Գասարճեան, Մակի Պետիրեան, Վիգէն եւ Արմէն Հանէսեաններ: Պասքետբոլ՝ 6 խումբ, մարզիչներ՝ Վահէ Չաքարեան, Գէորգ Պալեան, Գարոլ Գալայճեան: Աթլետիկ միջոցներ կը մասնակցին 40 մարզիկներ՝ պատասխանատու՝ Հուրի Արթինեան:

1990ին մասնաճիւղը կը սկսի կիրարկել ռազմարուեստ (Martial Art) նոր ճիւղը, որուն պատճառով 120 հոգինոց նոր խումբ մը կը կազմուի ճոխացնելով մասնաճիւղի մարզական գործունեությունները:

Սկստուական Գործունեութիւն

1980 տարեշրջանի սկստուական խորհուրդի անդամներ կը նշանակուին՝ Վահէ Հարմանտեան, Մովսէս Աշըքեան, Պետրոս Փիլաճեան, Կարօ Եզնիկեան, Արմիկ Հացագործեան, Սիւզի Գալթաքեան եւ Յովհաննէս Թելեան:

Մասնաճիւղի սկստուական բաժնի անդամներու ընդհանուր թիւն է 284 հետեւեալ բաժանումներով. գայլիկներ 76, սկստուներ՝ 52, արծուիկներ՝ 64, արենոյշներ՝ 75 երէցներ՝ 17:

1981 տարեշրջանին մասնաճիւղի վարչութեան կողմէ նոր նշանակուած սկստուական խորհուրդին կազմն է.

Ատենապետ՝ Արմիկ Հացագործեան
Փոխ ատենապետ՝ Մովսէս Աշըքեան
Քարտուղար՝ Սօսի Թաշճեան
Գանձապահ՝ Կարօ Եզնիկեան
Հաշուապահ՝ Պետիկ Կարապետեան
Խորհրդական՝ Յովսէփ Արապեան:

Տարեշրջանի ընթացքին մասնաճիւղի սկստուներէն Հրաչ Նաճարեան, Յակոբ Տէր Յովակիմեան եւ Արիս Պապիկեան կը տիրանան Wood Badgeի աստիճանին: Սկստուական խորհուրդի տարեկան ձեռնարկներուն մաս կը կազմեն՝ Ծնողական հաւաքոյթներ, արշաւներ, բանակումներ, զատկական հաւկըթախաղ, ամանորի խրախճանք եւ Սբ. Ծննդեան աւետման շրջագայութիւն:

Յովսէփ Արապեան 1982ի Մայիսէն սկսեալ կը դադրի սկստու աւագ խմբապետի պաշտօնը վարելէ: Սկստուական աշխատանքներուն համար խումբերը կ'օգտագործեն հայ կեդրոնի եւ վարժարանի սրահներն ու դասարանները:

1983ի սկստուական խորհուրդին մաս կազմած են՝

Ատենապետ՝ Արմիկ Հացագործեան
Ատենադպիր՝ Թագուհի Չահրան
Քարտուղարուհի՝ Սօսի Թաշճեան
Գանձապահ՝ Թամիճա Սարխանեան
Գոյքապահ՝ Հրաչ Աբրահամեան

Խորհրդականներ՝ Վահէ Թաշճեան եւ Ալեքսան Մարտիրոսեան: Վարչական ներկայացուցիչն է Յովհաննէս Յովհաննէսեան: Սկստուական շարքերու ընդհանուր թիւն է 181 որոնցմէ 15 աստիճանաւորներ, աւագ խմբապետութեամբ Արիս Պապիկեանի: Մասնաճիւղի սկստուական նուագախումբին մաս կը կազմեն 26 անդամներ:



Թորոնթոյի Հ.Մ.Ը.Մ.ի Սկաուտական նուագախումբը

Յաճախակի դասախօսական ելոյթներու մասնակցութեամբ սկաուտական շարքերը կը բարձրացնեն իրենց թեքնիք եւ դաստիարակչական մակարդակները:

1985 տարեշրջանի սկաուտական խորհուրդի անդամներ կը նշանակուին. Ատենապետ՝ Վահէ Մարտիրոսեան, Ատենադպիր՝ Թագուհի Զահրան, Փոխ ատենապետ՝ Սիւզի Գալթակեան, Գանձապահ՝ Վարուժան Ճիպելեան, Գոյքապահ՝ Յակոբ Տէր Յովակիմեան, խորհրդականներ՝ Ճորճ Գալըպճեան եւ Հրաչ Աբրահամեան:

Մասնաճիւղի խմբապետի պաշտօնը կը վարէ Յովհաննէս Թելեան, խմբապետուհի՝ Սօսի Թաշճեան:

3 Յուլիսին, մասնաճիւղի 22 սկաուտներէ բաղկացած պատուիրակութիւն մը կը մեկնի Guelph մասնակցելու համար գանատական սկաուտութեան ճրգ ճամբարին: Պատուիրակութիւնը կ'արժանանայ կազմակարպիչներու եւ գանատական մամուլի բարձր գնահատանքին: 29 Սեպտեմբերին կազմակերպուած խորուկահանդէսին առթիւ տեղի կ'ունենայ աստիճաններու տուչութիւն ձեռամբ աւագ խմբապետներ՝ Յովհաննէս Թելեանի եւ Սօսի Թաշճեանի:

1989ի սկաուտական խորհուրդի անդամներն են՝ Բեննա Թարգի, Շաքէ Ֆերմանեան, Սոնա Ֆարրա, Ֆրէտ Սարգիսեան, Վահէ Աւետիսեան, Համիկ Մինասեան եւ Յակոբ Տէր



Թորոնթոյի մասնաճիւղի 1984 տարուայ սկաուտական խումբը

Յովակիմեան: Սկաուտ խմբապետի պաշտօնը կը վարէ Հրաչ Նաճարեան խմբապետուհի՝ Անի Հոթոյեան:

Տարեշրջանի ընթացքին սկաուտական միաւորները հաւաքաբար կը մասնակցին 40 բանակումներու: Խորհուրդի նիւթական գործառնութեան պատկերն է մուտքեր՝ 26.062 Գ. սուլար ելքեր՝ 20.077 Գ. սուլար:

1990ին մասնաճիւղի սկաուտական 82 հոգինոց պատուիրակութիւն մը կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային Դ. ընդհ. բանակումին:

Հրապարակային Հանդիսութիւններ

Թորոնթոյի մասնաճիւղը հերթական դրու-

թեամբ նշած է միութենական թէ մասնաճիւղային ամեակներ: Այսպէս, 20 Փետրուար 1983ին տեղի կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 65ամեակի տօնակատարութիւն ներկայութեամբ 500 հանդիսականներու: Այս առթիւ խօսք կ'առնեն մասնաճիւղի վարչութեան ներկայացուցիչ Սիւզի Գալթիսեան եւ Շրջանային վարչութեան կողմէ Երուանդ Շահինեան: Օրուան պատգամախօսն է Լեւոն Հասրճեան: Տեղի կ'ունենայ երդման արարողութիւն:

12 Փետրուար 1984ին, «Հ.Մ.Ը.Մ.ի Օր» ուան տօնակատարութիւնը տեղի կ'ունենայ Հայ Կեդրոնի սրահին մէջ: Հանդիսութեան ներկայ են գաղութի հոգեւոր հովիւ Խաթակ վրդ. Յակոբեան, Կեդրոնական վարչութեան ատենապետ՝ Վարդգէս Տէր Կարապետեան:

Սկսած սկսած նուազախուժված կը վարէ ճորճ թորոսեան: Տեղի կ'ունենայ մարզիկներու մրցանակաբաշխութիւն եւ սկսածներու աստիճաններու սուղութիւն:

10 Նոյեմբեր 1984ի պարահանդէսով եւ 11 Նոյեմբերի հրապարակային հանդիսութեամբ կը նշուի մասնաճիւղի հիմնադրութեան 15 ամեակը: Օրուան բանախօսն է Յ. Սեւակեան:

16 Փետրուար 1986ի Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 68ամեակի տօնակատարութեան՝ Հ.Յ.Դ. Սողոմոն Թեհլիրեան կոմիտէութեան անունով խօսք կ'առնէ Վիգէն Գոլանճեան, վարչութեան կողմէ Արսէն Քելեչեան: Օրուան պատգամախօսն է Վազգէն Թերզեան: Տեղի կ'ունենան սկսած սկսած խաղեր, մարզիկներու եւ մարզիչներու մրցանակաբաշխութիւն: 16 Մարտին մասնաճիւղը կը կազմակերպէ «Աստղային խաղեր» անունով տասական հոգինոց, 10 խումբերու միջեւ զանազան մարզական եւ ճարտար խաղերու կատարողութեամբ մրցումներ, աննախընթաց հետաքրքրութիւն ստեղծելով մասնաճիւղի գործունէութեան շուրջ:

ԳԱՄՊՐԻՃ

1982ին կ'աւարտի Գամպրիճի հայ կեդրոնի սեփական շէնքի շինութիւնը, որուն իր մասնակցութիւնը կը բերէ մասնաճիւղի վարչութիւնը: Մասնաճիւղը կը մասնակցի շրջանի միջ-մասնաճիւղային ամառնային խաղերուն:

1983 տարեշրջանի վարչական կազմի անդամներն են՝

- Ատենապետ՝ Վրէժ Գասամանեան
- Ատենադպիր՝ Պօղոս Ճապրայեան
- Գանձապահ՝ Զարեհ Թաշճեան
- Գոյքապահ՝ Զարեհ Սարմազեան
- Մարզական պատասխանատուներ՝ Յակոբ Թերզեան եւ Մանաս Ղազարեան
- Ընկերայինի պատասխանատու՝ Նուպար Սաղտրճեան:
- Մասնաճիւղի մարզական եւ սկսած սկսած

գործունէութիւնները կը մնան համեստ: Ընկերային մարզը համեմատաբար աւելի յաջող գործունէութիւն կ'արձանագրէ: Մասնաճիւղի տարեշրջանի մուտքերու ընդհանուր գումարն է 5165 գան. տոլար: Անդամներու ընդհանուր թիւն է 61:

1985 Տարեշրջանի մասնաճիւղի վարչութեան անդամներն են՝

- Ատենապետ՝ Բիւզանդ Տանայեան
- Քարտուղար՝ Սօնա Փոլատեան
- Գանձապահ՝ Վահէ Տոստումեան
- Մարզական պատասխանատու՝ Ժան Թիթիգեան
- Խորհրդական՝ Լուիզ Գրիգորեան:
- Մասնաճիւղի կարելիութիւններուն բաղադատմամբ, վարչութեան 1985ի գործունէութիւնը զգալի յառաջդիմութիւն չ'արձանագրեր: Շրջանային վարչութիւնը Գամպրիճի մասնաճիւղի տարեկան գործունէութեան մասին հետեւեալ արձանագրութիւնը կը պահէ իր տեղեկագրին մէջ. «Հակառակ զգալի բարելաման, տակաւին շրջանի մասնաճիւղի վարչութիւնները ընդհանրապէս կը թերանան իր ժամանակին կամ բոլորովին պատասխանելու վարչութեան ուղարկած նամակներուն, շրջաբերականներուն ու վիճակագրական ու այլ հարցարաններուն»:
- Գամպրիճի մասնաճիւղը համեմատաբար տկար տարեշրջան մը կը բոլորէ 1987ին:
- Մասնաճիւղի վոլիպոլի խումբը կը մասնակցի միջ-մասնաճիւղային խաղերուն: Փինկ փոնկի խումբին զոյգ մարզիկներ կը մասնակցին Թորոնթոյի մասնաճիւղի կազմակերպած մրցաշարքին:
- 7 Մայիս 1989ին մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ՝
- Ատենապետ՝ Կարպիս Հաննէշեան
- Ատենադպիր՝ Մհեր Պետիրեան
- Գանձապահ՝ Սամսոն Քահքէճեան
- Գոյքապահ՝ Վահէ Պաղտոյեան
- Խորհրդական՝ Ժագ Ասատուրեան:



Գամպրիճի մասնաճիւղի մարզիկները 1977ին

Մարզական ճիւղերը կը գործեն ըստ առաջ-
ւոյն: Սկաուտական բաժինը գոյութիւն չունի:

1989ին մասնաճիւղը կը սօնէ Միութեան
հիմնադրութեան 70 ամեակը:

Տարեշրջանի մուտքերու ընդհանուր գու-
մարն է 5669 գ. սուլար, ելք՝ 3982 գ. սուլար:

1990 տարուայ վարչական կազմի անդամ-
ներն են՝

Ատենապետ՝ Վաչէ Պաղտոյեան

Ատենադպիր՝ Մհեր Պետիրեան

Գանձապահ՝ Սամսոն Քեահքէճեան

Մարզական պատասխանատու՝ Խորէն
Մուրատեան

Գոյքապահ՝ Րաֆֆի Տանայեան

Խորհրդականներ՝ Հայկազ Թիթիգեան եւ
Կարպիս Հաննէշեան:

1990 տարուայ գործունէութիւնը զգալի

տկարուծիւն կ'արձանագրէ: Մարզական
խումբերը՝ պասքեթպոլ եւ վոլիպոլ հետեւողա-
կան գործունէութիւն չունին: Հակառակ եօթը
երիտասարդ անդամներէ բաղկացած վարչու-
թեան ճիգերուն, Շրջանային վարչութիւնը
լրջօրէն կը մտահոգուի մասնաճիւղի ապագա-
յով:

ՍԷՆԹ ԳԱԹՐԻՆՉ

Սէնթ Գաթրինզը կը գտնուի Օնթարիոյ
նահանգի հարաւային շրջանին մէջ եւ մօտա-
կայ է Թորոնթօ եւ Գամպրիճ քաղաքներուն:
Սէնթ Գաթրինզի մէջ հայ գաղութ մը
գտնուած է վաղ ժամանակներէ սկսեալ:

1980ական թուականներուն գաղութի հա-
յութեան թիւը կարեւորութիւն ստանալով,

1985ի Յունիսին տեղւոյն պատասխանատուները կը դիմեն Գանատայի Շրջանային վարչութեան յայտնելով իրենց ծրագիրը՝ Սէնթ Գաթրինգի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ մը հիմնելուն պատակով:

16 Փետրուար 1986ին կազմակերպուած հաւաքոյթի մը ընթացքին, Շրջանային վարչութեան ներկայացուցիչներուն հետ խորհրդակցութեամբ կը նշանակուի հիմնադիր յանձնախումբ մը որուն աշխատանքով, 16 Մարտի երկրորդ հաւաքոյթին 30 նորագիրներ կ'անդամակցին Հ.Մ.Ը.Մ.ին: Այսպիսով կը կազմուի Գանատայի շրջանի հինգերորդ մասնաճիւղը:

1987 տարուայ գլխաւոր իրականացումը կը հանդիսանայ շրջանային 13րդ ձմեռնային խաղերու կազմակերպումը որ յաջողութեամբ կը պսակուի:

Հակառակ փոքրաթիւ անդամներէ բաղկացած ըլլալուն մասնաճիւղը կը պահէ մարզական խումբերը եւ կը ծրագրեն սկստական շարժում ստեղծել մասնաճիւղէն ներս:

27 Մարտ 1989ին Սէնթ Գաթրինգի Հ.Մ.Ը.Մ.ի վարչութեան անդամներ կ'ընտրուին.

- Ատենապետ՝ Կարպիս Գավազանեան
- Փոխ Ատենապետ՝ Սարգիս Պալապանեան
- Ատենադպիր՝ Սալբի Սեքլեմեան
- Գանձապահ՝ Սիլվա Քեչիչեան
- Գոյքապահ՝ Վազգէն Էքմէքեան

Մարզական պատասխանատու՝ Սարգիս Քեչիչեան եւ Վաչէ Պոյաճեան:

1989ին մասնաճիւղը կը բոլորէ տաճնապալի շրջան մը իր հաւաքատեղիի կորստեան պատճառով: 1989ի աշնան գործունէութիւնը վերսկսաւ երբ ապահովուեցաւ նոր հաւաքավայրը:

1990 տարեշրջանի վարչական կազմի անդամներն են՝

- Ատենապետ՝ Սարգիս Պալապանեան
- Ատենադպիր՝ Սալբի Սեքլեմեան
- Գանձապահ՝ Սիլվա Քեչիչեան
- Գոյքապահ՝ Վիգէն Էքմէքեան

Մարզական պատասխանատու՝ Հրայր Բարոյեան:

Մասնաճիւղը կը պահէ վոլիպոլի տղոց եւ աղջկանց խումբեր, փինկ-փոնկի խումբ մը եւ ունի երեք աթլետներ: Խումբերը կը մասնակցին բարեկամական եւ միջ-մասնաճիւղային կարգ մը ելոյթներու: Ընկերային կեանքը համեմատաբար աւելի գործօն է:

1990ի Ապրիլ 5ին, Սէնթ Գաթրինգի Հ.Մ.Ը.Մ.ի վարչութեան կողմէ մասնաճիւղի սկստական խորհուրդի անդամ կը նշանակուին.

- Ատենապետ՝ Ս. Թոքաճեան
- Ատենադպիր՝ Ս.Սեքլեմեան
- Գանձապահ՝ Մ.Գալայճեան
- Խմբապետ՝ Մինաս Թաշճեան
- Խմբապետուհի՝ Մարալ Էքմէքեան:

Թէեւ 1990 տարուայ մասնաճիւղի գործունէութիւնը կը մնայ տկար, սակայն յոյսեր կան որ Սէնթ Գաթրինգի նոր հայ կեդրոնի շինութենէն ետք, մասնաճիւղը վերականգնելու յաւելեալ առիթներ պիտի ունենայ:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԵՒ ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԻ ԿԱԶՄԱԻՈՐՈՒՄ

1960ական թուականներէն սկսեալ Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ երկար դադարէ ետք վերակազմուող կամ Գանատայի մէջ նոր հիմնուող մասնաճիւղերու կապերը Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային վարչութեան հետ՝ իբրեւ գերագոյն մարմին, հետզհետէ կը բազմանային եւ աշխարհագրական հեռաւորութիւնները կը դժուարացնէին անոնց ուղղակի հսկողութիւնը: Առ այդ 27 Մարտ 1973ի նիստի ընթացքին Շրջանային վարչութիւնը որոշեց Թորոնթօ հաստատուած վեթերան Հ.Մ.Ը.Մ.ական Լուսեր Մասպանաճեանին պարտականութիւն յանձնել, իբրեւ լիազօր ներկայացուցիչ, զինք ներկայացնելու Գանատայի եւ Արեւելեան Միացեալ Նահանգներու մէջ գործող մասնաճիւղերուն մօտ եւ անոնց միջեւ գործակցութիւնը համադրել:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Կազմակերպչական

Գանատայի եւ Արեւելեան Միացեալ Նահանգներու շրջանի անդրանիկ պատգամաւորական ժողովը տեղի կ'ունենայ 13 եւ 14 Հոկտեմբեր 1974ին Պոսթընի մէջ: Ժողովին իրենց մասնակցութիւնը կը բերեն Գանատայէն Մոնթրէալի, Համիլթընի եւ Թորոնթոյի իսկ Միացեալ Նահանգներէն՝ Պոսթընի եւ Ուաշինկթընի, մասնաճիւղերու ներկայացուցիչները: Ժողովի միակ օրակարգն էր Շրջանային խորհուրդի մը ընտրութիւնը որուն պարտականութիւնը պիտի ըլլար գործունէութեան վեցամսեայ ժամանակաշրջանի ընթացքին պատրաստել ներքին կանոնագրի նախագիծ եւ 1975ի Ապրիլին հրաւիրել Շրջանային ներկայացուցչական ժողով ընտրելու համար Գանատայի եւ Արեւելեան Միացեալ Նահանգներու առաջին Շրջանային վարչութիւնը: Շրջանային խորհուրդի ներկայացուցիչներ պիտի մասնակցէին նաեւ Հ.Մ.Ը.Մ.ը համագաղութային կազմակերպութեան վերածելու համար նախատեսուած առաջին ընդհանուր ժողովին՝ Պէյրութ:

1975ի Մայիսին, Շրջանի ներքին կանոնագրութեան մշակումէն ետք, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Միացեալ Նահանգներու եւ Գանատայի Շրջանային Բ. ներկայացուցչական ժողովի օրակարգի գլխաւոր նիւթը եղաւ Շրջանի անդրանիկ վարչութեան ընտրութիւնը: Վեց մասնաճիւղերու ներկայացուցիչները նախ լսեցին մասնաճիւղերու գործունէութեանց տեղեկագրերը որմէ յետոյ տեղի ունեցաւ առաջին Շրջանային վարչութեան ընտրութիւնը հետեւեալ կազմով.

- Ատենապետ՝ Վարուժան Սերոբեան
- Ատենադպիր՝ Վիգէն Մասերէճեան
- Գանձապահ՝ Վարդգէս Յակոբեան
- Խորհրդականներ՝ Անդրանիկ Արթինեան եւ Վահրամ Պոյաճեան:

Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի եւ Արեւելեան Միացեալ Նահանգներու Գ. ներկայացուցչական

ժողովը տեղի ունեցաւ Պոսթընի մօտ Նիւթընի մէջ 27 եւ 28 Մարտ 1976ի շաբաթավերջին ներկայութեամբ Մոնթրէալի, Թորոնթոյի, Համիլթընի, Նիւ Ճըրզիի, Պոսթընի, Ուաշինկթընի եւ Ֆիլատելֆիոյ մասնաճիւղերու 38 ներկայացուցիչներուն: Ժողովին ներկայ էին նաեւ Շրջանային վարչութեան անդամներ, Կեդրոնական վարչութեան զոյգ անդամներ՝ Վարդգէս Տէր Կարապետեան եւ Դանիէլ Դանիէլեան ինչպէս նաեւ Միութեան հիմնադիրներէն Տիգրան քհն. Խոյեան եւ այլ հրաւիրեալներ:

Ժողովի նախագահութիւնը վարեց Խաչիկ Յակոբեան քարտուղարներ՝ Արմէն Կետիկեան եւ Սոֆի Գէորգեան:

Շրջանային վարչութեան բացման խօսքը արտասանեց Վարուժան Սերոբեան որմէ ետք յաջորդաբար կարդացուեցան եօթը մասնաճիւղերու միամեայ գործունէութեանց տեղեկագրութիւններ եւ Շրջանային վարչութեան նիւթաբարոյական գործունէութեան ընդարձակ տեղեկագրութիւնը: Տեղեկագրութիւններէն իյայտ կու գայ թէ Շրջանը ունեցած է անդամական կարեւոր աճ ընդհանուր թիւ 1200:

Այս ժողովէն ընտրուեցաւ Շրջանի Բ. Շրջանային վարչութեան կազմ՝

- Ատենապետ՝ Վարուժան Սերոբեան
- Ատենադպիր՝ Տիգրան Մելքոնեան
- Գանձապահ՝ Վարդգէս Յակոբեան
- Խորհրդականներ՝ Անդրանիկ Արթինեան, Էտի Մելիքեան, Մարսէլ Գարեան եւ Ժիրայր Կիրակոսեան:

Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի եւ Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանային 4րդ ներկայացուցչական ժողովը տեղի ունեցաւ 26 Մարտ 1977ին, Նիւ Ճըրջիի մէջ, ներկայութեամբ 50 իրաւասու ձայնով ներկայացուցիչներու եւ 16 խորհրդակցական ձայնով հրաւիրեալներու որոնց կարգին Միութեան հիմնադիրներէն Տիգրան քհն. Խոյեան:

Ժողովի բացումը կատարեց Շրջանային վարչութեան ատենապետ Վարուժան Սերոբեան:

Ժողովը յաջորդաբար լսեց Շրջանի ինը մասնաճիւղերու միամեայ գործունէութեանց ամփոփ տեղեկագրերը որոնցմէ ի յայտ եկաւ որ բոլոր մասնաճիւղերը զգալի յաջողութիւն արձանագրած են իրենց գործունէութեանց մէջ յատկապէս անդամական աճի տեսակետէ: Արդարեւ մասնաճիւղերը կը հաշուեն հետեւեալ անդամական թիւերը. Մոնթրէալ՝ 221, Թորոնթօ՝ 90, Համիլթըն՝ 50, Նիւ Եորք՝ 107, Նիւ Ճըրզի՝ 125, Ուաշինկթըն՝ 62, Պոսթըն՝ 144, Տիթրոյթ՝ 75, Ֆիլատելֆիա՝ 102 ընդհանուր թիւ՝ 976 որոնցմէ 550ը սկստական շարքերէն:

Շրջանաւարտ շրջանային վարչութիւնը ներկայացուց իր միամեայ գործունէութեան տեղեկագիրը որմէ ի յայտ կու գայ թէ կազմը յաջողած է կազմակերպական բեղուն գործունէութիւն արձանագրել՝ ներքին կանոնագրի կազմութիւն, երկու նոր մասնաճիւղերու կազմութիւն (Նիւ Եորք եւ Տիթրոյթ):

Այս ժողովի ընթացքին Արեւելեան Միացեալ Նահանգներու մասնաճիւղերու կողմէ եկած առաջարկով ժողովը որոշեց Միացեալ Շրջանը վերածել երկու անկախ շրջաններու՝ Գանատայի եւ Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջաններ:

Հինգերորդ Շրջանային ներկայացուցչական ժողովը տեղի ունեցաւ 16 Ապրիլ 1977ին, Թորոնթոյի մէջ, ներկայութեամբ Կեդրոնական վարչութեան ներկայացուցիչ Դանիէլ Դանիէլեանի, Շրջանային վարչութեան ներկայացուցիչ վարուժան Սերոբեանի եւ մասնաճիւղերու ներկայացուցիչներուն հետեւեալ բաժանումով. Մոնթրէալ՝ 8, Թորոնթօ՝ 6 եւ Համիլթըն՝ 3: Ժողովին ներկայ էին նաեւ խորհրդակցական ձայնով հրաւիրեալներ կամ ի պաշտօնէ ներկաներ, թիւով 8:

Շրջանային վարչութեան բացման խօսքէն ետք ընտրուեցաւ Շրջանային ներկայացուցչական ժողովի գիււան:

Ժողովը հաստատեց թէ ներկայ հաւաքէն սկսեալ Շրջանը կը դադրի Գանատայի եւ Արե-

ւելեան Միացեալ Նահանգներու շրջան ըլլալէ եւ կը դառնայ Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջան: Շրջանը պիտի ունենայ յատուկ ներքին կանոնագիր:

Տրդ ներկայացուցչական ժողովը վաւերացուց սկստական ներքին կանոնագիրը եւ յառաջիկայ երկամեակի պիւտճէի նախահաշիւը: Վերահաստատեց յետ այսու սերտ գործակցութեամբ շարունակելու Գանատայի երեք եւ Արեւելեան Միացեալ Նահանգներու վեց մասնաճիւղերու մասնակցութեամբ շրջանային ողիմպիական խաղերու կազմակերպումի որոշումը:

Ժողովի վերջին օրակարգով ընտրուեցաւ Գանատայի Շրջանային վարչութեան անդրանիկ կազմը որ իր աշխատանքներու բաժանումը կատարեց հետեւեալ ձեւով.

Ատենապետ՝ Գրիգոր Գուլումճեան
Ատենադպիր՝ Վարդգէս Քիւփելեան
Գանձապահ՝ Տիգրան Մելքոնեան
Խորհրդականներ՝ Անդրանիկ Արթինեան
եւ Հայկ Ճըլտրրեան:

1978 տարեշրջանին Գանատայի Շրջանի երկրորդ Շրջանային վարչութեան մաս կը կազմեն.

Ատենապետ՝ Գրիգոր Գուլումճեան
Ատենադպիր՝ Երուանդ Շահինեան
Գանձապահ՝ Գէորգ Մանկելեան
Քարտուղար՝ Տիգրան Մելքոնեան
Խորհրդական՝ Խաժակ Պօղոսեան:

Այս թուականէն սկսեալ Շրջանը կը գործէ իր վերամշակուած ներքին կանոնագրութեան եւ շրջանի յատուկ Սկստական ներքին կանոնագրով որոնք վաւերացուած են Կեդրոնական վարչութեան կողմէ:

23 եւ 24 Մարտ 1979ին, Գամպրիճի մէջ տեղի ունեցաւ Գանատայի Տրդ Շրջանային ներկայացուցչական ժողովը մասնակցութեամբ 24 լիազօր եւ 15 խորհրդակցական ձայնով ներկայացուցիչներու:

Ժողովի վերջին օրակարգով 1979 տարուայ Շրջանային վարչութեան նախորդ կազմը

նոյնութեամբ վերընտրուեցաւ պահելով նաեւ պաշտօններու նոյն բաժանումը:

12 եւ 13 Ապրիլ 1980ին, Քինկըսթըն քաղաքին մէջ տեղի ունեցաւ Գանատայի Շրջանային Զրդ ներկայացուցչական ժողովը: Ժողովին կը մասնակցէին իրաւասու ձայնով՝ 26 եւ խորհրդակցական ձայնով՝ 14 ներկայացուցիչներ:

Ժողովի վերջին օրակարգով ընտրուեցաւ 1980 տարուայ Շրջանային Վարչութիւնը հետեւեալ կազմով.

- Ատենապետ՝ Տիգրան Մելքոնեան
- Ատենադպիր՝ Արմէն Կէտիկեան
- Գանձապահ՝ Յակոբ Թորոսեան
- Քարտուղար՝ Տոքթ. Վիգէն Մասերեճեան
- Խորհրդական՝ Հրաչ Տէր Սարգիսեան:

Այս կազմի գործունէութեան աշխատանքներէն են. Շրջանի սկաուտ պատասխանասու-

ներու Յրդ սեմինար, միջ-մասնաճիւղային 12րդ խաղեր, Ֆութպոլ եւ աթլետիկ միջ-մասնաճիւղի օժանդակութեամբ, միջ-մասնաճիւղային պասքեթպոլի 6րդ մրցաշարք որուն վրայ առաջին անգամ կ'աւելնան վոլիպոլի եւ փինկ-փոնկի մրցաշարքերը, Գանատայի Շրջանային ներքին կանոնագրի տպագրութիւն: Շրջանային վարչութիւնը ծրագրեց նաեւ 1981ին կայանալի Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային պասքեթպոլի Ա. մրցաշարքի աշխատանքները:

Գանատայի 10րդ Շրջանային ներկայացուցչական ժողովը գումարուեցաւ Շրջանի չորս մասնաճիւղերու ներկայացուցիչներու մասնակցութեամբ 21 Մարտ 1981ին, Մոնթրէալի հայ կեդրոնի մարզասրահին մէջ:

Ժողովը վարեցին նախագահներ՝ Վարդգէս Յակոբեան եւ Երուանդ Ֆրունճեան, իսկ քարտուղարներն էին Լեւոն Պենկեան եւ Սիւզի



Խմբանկար Գանատայի 9րդ Շրջանային ներկայացուցչական ժողովի՝ 1980

Գալթակեան: Հաշուեքննիչ, նախահաշիւ, արխիւային եւ բանաձեւի յանձնախումբերու ընտրութենէն եւ երկու օրերու ընթացքին երեք նիստերու վրայ բաժնուած օրակարգի նիւթերու սպառումէն ետք կատարուեցաւ ընտրութիւն Շրջանային վարչութեան նոր կազմի որուն իրենց մասնակցութիւնը կը բերեն՝

- Ատենապետ՝ Տիգրան Մելքոնեան
- Ատենադպիր՝ Լեւոն Պենկեան
- Գանձապահ՝ Հրաչ Տէր Սարգիսեան

Խորհրդականներ՝ Կարօ Բաշաեան եւ Յակոբ Թորոսեան:

Այս կազմի գլխաւոր իրականացումը պիտի ըլլար Կեդրոնական Վարչութեան նախաձեռնած համագաղութային անդրանիկ մարզական խաղերու կազմակերպումը, որ կ'իրականանայ բարոյական եւ նիւթական մեծ յաջողութեամբ:

Խաղերու ընդհանուր մուտք 102.860 Գ. տուար

Խաղերու ընդհանուր ելք 98. 560 Գ. տուար

Այս եկամուտէն 3114 Գ. տուար կը փոխանցուի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան: Շրջանային վարչութիւնը կը նախաձեռնէ նաեւ 7րդ ձմեռնային միջ-մասնաճիւղային խաղերուն, կազմակերպութեամբ Համիլթոնի մասնաճիւղին:

Գանատայի Հ.Մ.Ը.Մ.ի 11րդ Շրջանային ներկայացուցչական ժողովը տեղի ունեցաւ 27 եւ 28 Մարտ 1982ին, նախագահութեամբ՝ Եղուարդ Ֆրունձեանի եւ Արմէն Կէտիկեանի եւ քարտուղարութեամբ՝ Մարօ Շալճեանի եւ Վարդան Բաբախեանի: Ժողովին ներկայ էին շրջանի չորս մասնաճիւղերէն 24 լիազօր ներկայացուցիչներ, Կեդրոնական Վարչութեան եւ Շրջանային վարչութեան ներկայացուցիչները եւ 13 խորհրդակցական ձայնով մասնակցող հրաւիրեալներ:

Յաջորդական երեք նիստերու աւարտին, ժողովը ընտրեց 1982 տարուայ Շրջանային վարչութեան կազմը հետեւեալ ձեւով.

- Ատենապետ՝ Գրիգոր Գուլումճեան
- Ատենադպիր՝ Լեւոն Պենկեան
- Գանձապահ՝ Յակոբ Թորոսեան
- Խորհրդականներ՝ Երուանդ Շահինեան եւ Գէորգ Անտիլեան:

Մարզական գետնի վրայ այս կազմը կը յաջողի վերակազմակերպել Օնթարիօ նահանգի 3 մասնաճիւղերու՝ Թորոնթօ, Համիլթոն եւ Գամպրիճի միջեւ «Լուտեր Մասպանճեան» ֆութպոլի բաժակի մրցաշարքը:

Վերջին քառամեակի ընթացքին Շրջանի անդամներու ընդհանուր թիւը աւելի քան 50% համեմատութեամբ կ'աւելնայ հասնելով ընդհանուր 1273 անդամներու թիւին:

19 եւ 20 Մարտ 1983ին, Գանատայի Շրջանային 12րդ ներկայացուցչական ժողովը տեղի ունեցաւ Մոնթրէալի հայ կեդրոնի սրահին մէջ նախագահութեամբ Վարդգէս Յակոբեանի եւ Արմէն Կէտիկեանի եւ քարտուղարութեամբ Սիւզի Գալթակեանի եւ Յակոբ Աբգարեանի: Բանաձեւի, արխիւային եւ հաշուեքննիչ յանձնախումբերու ընտրութենէն ետք ժողովը երկօրեայ նիստերով սպառեց օրակարգի նիւթերը եւ շրջանաւարտ վարչութեան գործունէութիւնը որակեց «գնահատելի»:

Ժողովի վերջին օրակարգով ընտրուեցաւ Շրջանային վարչութեան նոր կազմ հետեւեալ ձեւով.

- Ատենապետ՝ Գրիգոր Գուլումճեան
- Ատենադպիր՝ Լեւոն Պենկեան
- Գանձապահ՝ Տիգրան Մելքոնեան
- Խորհրդականներ՝ Երուանդ Շահինեան եւ Գէորգ Անտիլեան:

Այս կազմի աշխատանքներէն եղան շրջանի անդամական ցանկերու զտում եւ բիւրեղացում, փինկ-փոնկի միջ-մասնաճիւղային խաղերու ներքին կանոնագրութեան պատրաստութիւն:

1 Ապրիլ 1984ին կայացած 3րդ նիստով, Գանատայի Շրջանային 13րդ ներկայացուցչական ժողովը 1984 տարեշրջանի Շրջանային վարչութեան անդամներ ընտրեց՝

Ատենապետ՝ Գրիգոր Գուլյումճեան
Ատենադպիր՝ Վահան Տէր Ասատուրեան
Քարտուղար՝ Լեւոն Պենկեան
Գանձապահ՝ Յակոբ Արեւեան
Խորհրդական՝ Երուանդ Շահինեան:

Կազմի գլխաւոր իրականացումներէն կարելի է թուել Գանատայի միջ-մասնաճիւղային ֆուլթայոլի ախոյեանութեան մրցաշարքերը զոյգ դասակարգերով բոլոր մասնաճիւղերու խումբերուն մասնակցութեամբ:

13 եւ 14 Ապրիլ 1985ին, Մոնթրէալի հայ կեդրոնին մէջ տեղի ունեցաւ Գանատայի Շրջանի 14րդ ներկայացուցչական ժողովը:

Ժողովի վերջին օրակարգով ընտրուեցաւ 1985 տարուայ Շրջանային վարչութեան կազմը՝

Ատենապետ՝ Գրիգոր Գուլյումճեան
Ատենադպիր՝ Լեւոն Պենկեան
Քարտուղար՝ Տիգրան Մելքոնեան
Գանձապահ՝ Յակոբ Արեւեան
Խորհրդական՝ Վրէժ Մելքոնեան:

Ներկայ կազմը համաձայնաբար Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Միացեալ նահանգներու Շրջանային վարչութեան հետ զոյգ շրջաններու միջ-մասնաճիւղային խաղերը երկուքի բաժնեցամառնային խաղեր՝ ֆուլթայոլ, աթլետիզմ եւ ձմեռնային խաղեր՝ պասքեթպոլ, վոլիպոլ, փինկփոնկ: Կազմակերպական գետնի վրայ Շրջանային վարչութիւնը կը հսկէ որ մասնաճիւղերը ունենան իրենց անդամական լրիւ ցանկերը ենթաբաժանումներով: 2 եւ 3 Նոյեմբեր 1985ին կը կազմակերպէ միջ-դիւանային ժողով մասնաճիւղերու գործունէութիւնները համադրելու եւ փոխադարձ փորձառութիւն փոխանցելու նպատակով: 28 եւ 29 Սեպտեմբերին կը կազմակերպէ մարզական պատասխանատուներու Բ. լսարան յատուկ մասնագիտական յայտագրով: 12 եւ 13 Հոկտեմբերին, Կանադոքուէի մէջ 41 սկաուտ աստիճանաւորներ մասնակցած են մասնաճիւղերու խմբապետական ընդհանուր ժողովին: Իսկ 21էն 23 Յունիսին Կրէնվիլ Փարքի մէջ 23 աստիճանաւորներ

մասնակցած են մասնաճիւղերու խմբապետական բանակումին:

5 եւ 6 Ապրիլ 1986ին Թորոնթոյի հայ կեդրոնի սրահին մէջ տեղի ունեցաւ Գանատայի Շրջանի 15րդ ներկայացուցչական ժողովը, կեդրոնական վարչութեան, Շրջանային վարչութեան եւ 4 մասնաճիւղերու ներկայացուցիչներուն կը բացակայէին Սէնթ Գաթրինզի մասնաճիւղի ներկայացուցիչներ: Ժողովի օրակարգն էր.

- Բացում Շրջանային 15րդ ներկայացուցչական ժողովի
- Ընտրութիւն արժամեայ դիւանի
- Ընտրութիւն լիազօրագրերու ստուգման յանձնախումբի
- Ընտրութիւն ներկայացուցչական ժողովի մնայուն դիւանի
- Ընտրութիւն բանաձեւի, արխիւային, հաշուեքննիչ եւ նախահաշիւի յանձնախումբերու
- Ընթերցում մասնաճիւղերու ամփոփ տեղեկագրերու
- Ընթերցում Շրջանային վարչութեան տեղեկագրերու
- Գնահատում Շրջանային վարչութեան գործունէութեան
- Միջ-մասնաճիւղային մարզական խաղեր
- Մարզիկ պաշտօնաթերթ
- Գանատայի սկաուտական ներքին կանոնագրի վերամշակում
- Մասնաճիւղերէ եկած առաջարկներու քննութիւն
- Այլ Առաջարկներ
- Դաստիարակչական - անդամարշաւ - նիւթական բարելաւում
- Համագաղութային սկաուտական Գ. ընդհանուր բանակում
- Զեկուցում հաշուեքննիչ, նախահաշիւի եւ բանաձեւի յանձնախումբերու

- Ընտրութիւն քուէախոյզ յանձնախումբի
- Շրջանային վարչութեան ընտրութիւն:

Երկու օրերու վրայ բաժնուած երեք նիստերով ժողովը սպառելէ ետք օրակարգի վերոյիշեալ նիւթերը, ընտրեց Շրջանային վարչութիւն հետեւեալ կազմով.

- Ատենապետ՝ Լեւոն Պենկեան
- Ատենադպիր՝ Արմէն Կէտիկեան
- Քարտուղար՝ Տիգրան Մելքոնեան
- Գանձապահ՝ Յակոբ Արեւեան
- Խորհրդական՝ Վրէժ Մելքոնեան:

Շրջանային վարչութիւնը տարեշրջանը կը բոլորէ բնական գործունէութեամբ: Շրջանի անդամական ընդհանուր թիւն է 1178 որոնցմէ 552 սկաուտական շարքերէն:

Նիւթական գործունէութեան պատկերը՝

մուտք՝ 15797 Գ. տուար ելք՝ 18913 Գ. Տուար:

Գանատայի Հ.Մ.Ը.Մ.ի 16րդ Շրջանային ներկայացուցչական ժողովը տեղի ունեցաւ 21 եւ 22 Մարտ 1987ին Մոնթրէալի Հայ Կեդրոնի սրահին մէջ:

Ժողովի վերջին օրակարգով ընտրուեցաւ նոր Շրջանային վարչական կազմ հետեւեալ ձեւով.

- Ատենապետ՝ Լեւոն Պենկեան
- Ատենադպիր՝ Արմէն Կէտիկեան
- Գանձապահ՝ Յակոբ Արեւեան
- Քարտուղար՝ Տիգրան Մելքոնեան
- Խորհրդական՝ Վրէժ Մելքոնեան:

Վերոյիշեալ կազմին նախաձեռնութիւններն ու իրականացումները եղան հետեւեալները.



Խմբանկար Գանատայի 16րդ Շրջանային Ներկայացուցչական ժողովի՝ 1987 Մարտ 21-23

Սկսած խմբապետական 5րդ բանակումի կազմակերպում, ամառնային միջ-մասնաճիւղային խաղերու մասնակցութիւն՝ Պոսթըն, շրջանային աթլետիք խաղերու կազմակերպում, սկսած սկսական, մարզական եւ վարչական սեմինարներու կազմակերպում, ձմեռնային միջ-մասնաճիւղային 13րդ խաղերու կազմակերպում, Գանատայի շրջանի պասքեթպոլի եւ փինկփոնկի միջ-մասնաճիւղային մրցաշարքերու կազմակերպում:

Գանատայի Շրջանային 17րդ ներկայացուցչական ժողովը տեղի ունեցաւ 19 Մարտ 1988ին:

Շրջանային 18րդ ներկայացուցչական ժողովէն ընտրուած 1989 տարուայ Գանատայի Շրջանային վարչութեան մաս կը կազմեն.

Ատենապետ՝ Լեւոն Պէնկեան
 Ատենադպիր՝ Արմէն Կէտիկեան
 Գանձապահ՝ Յակոբ Արեւեան
 Քարտուղար՝ Վարդգէս Քիւփէլեան
 Խորհրդական՝ Վրէժ Մելքոնեան:

Շրջանային չորս յանձնախումբեր կ'օժանդակեն ներկայ կազմի գործունէութեան՝ մարզական, սկսական, կանոնագրային եւ «Հորիզոն»ի թղթակցութեան յանձնախումբ:

Շրջանային վարչութեան կազմէն Յակոբ Արեւեան, Գանատայի շրջանը կը ներկայացնէ Լոնտոնի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի միջ-մասնաճիւղային Բ. խորհրդաժողովին: Շրջանէն Մոնթրէալի եւ Թորոնթոյի մասնաճիւղերու մարզիկները կը մասնակցին Արեւմտեան Միացեալ Նահանգներու 14րդ Նաւասարդեան խաղերուն եւ Բրովիտէնսի մէջ Արեւելեան Միացեալ Նահանգներու 21րդ ամառնային խաղերուն:

1989ի Նոյեմբեր 4 եւ 5ին Շրջանային վարչութիւնը կը կազմակերպէ սկսած խմբապետներու եւ մասնաճիւղերու վարչութեանց խորհրդաժողով Շրջանի մասնաճիւղերու մասնակցութեամբ: 23էն 25 Նոյեմբերի շաբաթավերջին կը նախաձեռնէ Գանատայի եւ Արեւելեան Միացեալ Նահանգներու ձմեռնային խաղերուն, կազմակերպութեամբ՝ Մոնթրէալի մասնաճիւղին:

Շրջանի մասնաճիւղերուն կողմէ կազմակերպած Միութեան 70 ամեակի տօնակատարութիւններուն առթիւ «Հ.Մ.Ը.Մ.»ի Ծառայութեան Շքանշանով կը պարգեւատրէ 9 դեկավար անդամներ:

Գանատայի 19րդ Շրջանային ներկայացուցչական ժողովը տեղի ունեցաւ 24 եւ 25 Մարտ 1990ին Մոնթրէալի հայ կեդրոնի սրահին մէջ, ներկայութեամբ 33 ներկայացուցիչներու եւ 14 խորհրդակցական ձայնով հրաւիրեալներու: Ժողովը լսելէ ետք Շրջանային վարչութեան նիւթաբարոյական միամեայ գործունէութեան տեղեկագիրը եւ արխիւային, հաշուեքննիչ եւ բանաձեւի յանձնախումբերու զեկուցումները, ինչպէս նաեւ նոր տարեշրջանին համար նախատեսուած աշխատանքային նախագիծն ու գործադրելի առաջարկները: Ժողովի վերջին օրակարգով կ'ընտրէ 1990 տարուայ Շրջանային վարչութեան կազմ՝

Ատենապետ՝ Լեւոն Պէնկեան
 Ատենադպիր եւ գանձապահ՝ Յակոբ Արեւեան

Քարտուղար՝ Աբօ Ահարոնեան
 Խորհրդականներ՝ Յակոբ Ղազարեան եւ Յակոբ Արթինեան:

Տարեշրջանի ընթացքին Շրջանային վարչութիւնը նախաձեռնած է հետեւեալ աշխատանքները. համագաղութային Դ. բանակումի մասնակից խմբապետական հանդիպում, միջ-մասնաճիւղային 22րդ ամառնային խաղեր, միջ-մասնաճիւղային 16րդ ձմեռնային խաղեր, Հ.Մ.Ը.Մ.ի Օրուայ տօնակատարութիւն, սկսած խմբապետական 13րդ սեմինար, միջ վարչական մարզական խորհրդաժողով:

Շրջանը իր մասնակցութիւնը բերած է հետեւեալ առիթներուն համագաղութային պասքեթպոլի Բ. մրցաշարք՝ Վալանս – Ֆրանս: Արեւելեան Միացեալ Նահանգներու 15րդ Նաւասարդեան խաղեր:

Գանատայի շրջանի անդամական ընդհանուր թիւը կ'արձանագրէ կարեւոր աճ 1324էն բարձրանալով 1586ի:

Շրջանային Մարզական Գործունեություն

Գանատայի եւ Արեւելեան Միացեալ Նահանգներու միացեալ Շրջանի գործունէութեան մաս կազմած են 1975ին միջ-մասնաճիւղային ամառնային խաղերը (Ֆութպոլ եւ ատլետիկ) եւ ձմեռնային խաղերը (պասքէթպոլի մրցաշարք):

Զոյգ Շրջաններու բաժանումէն ետք եւս մարզական միջ-մասնաճիւղային խաղերը շարունակուած են զոյգ շրջաններու մասնաճիւղերու մասնակցութեամբ եւ ամառնային եւ ձմեռնային խաղերու հերթականութեան:

7 Օգոստոս 1975ին, միջ-մասնաճիւղային

7րդ ամառնային խաղերը տեղի կ'ունենան Մոնթրէալի մէջ մասնակցութեամբ Նիւ Ճըրզիի, Պոսթընի, Ուաշինկթընի, Ֆիլատելֆիայի, Թորոնթոյի եւ Համիլթընի մասնաճիւղերուն:

Միջ-մասնաճիւղային ամառնային խաղերու շարքը այնուհետեւ կը շարունակուի տարեկան հերթականութեամբ:


Նոյնպէս ձմեռնային խաղերու շարքը կը շարունակուի տարեկան հերթականութեամբ:

1981ին Շրջանի կազմակերպութեամբ կ'իրականանայ կեդրոնական վարչութեան նախաձեռնած համագաղութային Առաջին պասքէթպոլի մրցաշարքը- [Մ/17.1-30]:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

- ՖԻԼԱՏԵԼՖԻԱ
- ՏԻԹՐՈՅԻԹ
- ՊՈՍԹՈՆ
- ՈՒԱՇԻՆԿԹԸՆ
- ՆԻԻ ԵՈՐՔ
- ԲՐՈՎԻՏԵՆՍ
- ՇԻՔԱԿՕ
- ՆԻԻ ՃԸՐՁԻ
- ՆԻԻ ԵՈՐՔ - - ՊԷՅՍԱՅՏ
- ՄԻԱՄԻ
- ԱԼՊԸՆԻ
- ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ



ԱՄԵՐԻԿԱՅԻ

ՄԻԱՑԵԱԼ

ՆԱՀԱՆԳՆԵՐ

Տիթրոյիթ

Ալպընի

Պոսթըն

Բրոկիտէնս

Նիւ Եորք

Փիլատէլ ֆիա

Ուստինսթըն

Նիւ Եորք

Պէյսայտ

ԱՏԼԱՆՏԵԱՆ

ՈՎԿԻԱՆՈՍ

Հուսթըն

Միամի

Սան Ֆրանսիսքո

Փրեզնո

Բաստոնա

Լոս Անձէլըս

Սան Տիէկո

Կլեմտէյլ

Օրէնճ Բաուսթի

Մոնթեպելլօ

Սան Ֆերնանտօ վալի

Ներածական

Ծանօթ է որ Համաշխարհային Բ. ընդհանուր պատերազմի նախօրեակէն սկսեալ Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ հիմնուած Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերը հետզհետէ դադրած էին գործելէ: Այս մասնաճիւղերու եւ առհասարակ Ամերիկայի Միացեալ Նահանգներու հայաշատ կեդրոններուն մէջ Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը ծաւալելու նպատակով 1950ական թուականներուն, Մեքսիքայի մէջ հիմնուած Հայ Մարմնակրթասիրաց Միութեան գործունէութիւնը եւս կը դադրի 1957ին: Այս ժամանակաշրջաններուն Միացեալ Նահանգներու զանազան քաղաքներուն մէջ Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան (AYF) մարզական լայնատարած գործունէութիւնը հետզհետէ կը ծաւալի արձանագրելով կարեւոր հանգրուաններ եւ փոխարինելով Հ.Մ.Ը.Մ.ի երբեմնի մասնաճիւղերու առաքելութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու վերակազմութիւնը կամ կարգ մը գործօն մասնաճիւղերու շատ համեստ գործունէութիւնը զարթօնքի շրջան մը պիտի թեւակոխէին Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կազմակերպութեան վերածուելուն առընթեր: Այսպէս է որ հետզհետէ կազմակերպուելով Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւելեան եւ Արեւմտեան շրջաններուն մէջ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու գործունէութիւնը պիտի վերընձիւղուէր եւ մինչեւ 1990 թուական ընդհանուր կառոյցին պիտի մասկազմէին Արեւելեան Շրջանին մէջ տասնըմէկ իսկ Արեւմտեան Շրջանին մէջ ինը մասնաճիւղեր: Ներկայ վեցերորդ գլուխին տակ պիտի արձանագրենք Արեւելեան Շրջանի մասնաճիւղերու գործունէութիւնները իրենց վերակազմութեան կամ հիմնադրութեան թուականներէն սկսեալ կազմակերպական, մարզական, սկստակական կամ այլ կարգի գործունէութեանց բաժիններով ինչպէս նաեւ Արեւելեան Միացեալ Նահանգներու շրջանային գործունէութիւնը Շրջանային վարչութեան նախաձեռնութիւններով:

ՖԻԼԱՏԵԼՖԻԱ

1957ին վերահաստատուած Ֆիլատելֆիոյ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը, կարճ ժամանակ մը ետք կրկին անգործունէութեան կը մատնուի: Սակայն մասնաճիւղի կարգ մը անդամները կը շարունակեն իրենց հոգւոյն մէջ պահել միութեան գործունէութեան վերընձիւղման տենջը:

Ապրիլ 1975ին, Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կառոյցի ստեղծման առընթեր կը վերակազմուի Ֆիլատելֆիոյ մասնաճիւղը:

Մասնաճիւղի նստավայր-հաւաքավայրն է Սբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ սրահը:

1977ին մասնաճիւղը կը կիրարկէ Ֆուլթոն եւ փինկփոնկ: Անդամներու թիւն է 92, տարեկան պիւտճէն 2300 տոլար:

1980էն սկսեալ մասնաճիւղը կ'ունենայ սկստակական բաժին

ՏԻԹՐՈՅԻԹ

Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կառոյցի վերածուելու օրերուն (1974), Տիթրոյիթի մասնաճիւղը լուծուած էր եւ իր ինչքերը փոխանցած տեղւոյն Սբ. Սարգիս եկեղեցւոյ թաղականութեան:

8 Յուլիս 1976ին, Սբ. Սարգիս եկեղեցւոյ սրահին մէջ կը հաւաքուին 25 Հ.Մ.Ը.Մ.ական անդամներ եւ վերակազմուած կը յայտարարեն Հ.Մ.Ը.Մ.ի Տիթրոյիթի մասնաճիւղը տեղւոյն վրայ ընտրելով մասնաճիւղի վարչութիւն հետեւեալ կազմով.

- Ատենապետ՝ Մանուէլ Գարճեան
- Փոխ-ատենապետ՝ Սեդրակ Գայսէրլեան
- Ատենադպիր՝ Գէորգ Պետիկեան
- Գանձապահ՝ Ժագ Նշանեան
- Գոյքապահ՝ Յարութիւն Մարկոսեան
- Խորհրդականներ՝ Ռուբէն Ֆերմանեան եւ Հմայեակ Փալանճեան:

1976էն 1979 վերակազմութեան երամեակի ընթացքին վարչութեանց անդամարշաւի ճիգե-



Ֆիլատելֆիոյ մասնաճիւղի ֆութպոլի խումբը

րուն առընթեր կը կազմուի ֆուլթպոլի խումբ մը 20 անդամներով որոնք մաս կը կազմեն տեղւոյն ֆուլթպոլի լիկ-ին: 1979ին կը ձեռնարկուի սկաուտական խումբի կազմութեան եւ 1980ի աշունէն սկսեալ կը կազմակերպուի մասնաճիւղի սկաուտական շարժումը: Վարչութեան նշանակած սկաուտական խորհուրդին մաս կը կազմեն, Տօնապետ Ինկէեան, Հրայր Տարաքճեան, Վարազդատ Եանիկեան եւ Կայծակ Ինկէեան մասնակցութեամբ խմբապետ Թորոս Չալիքեանի եւ խմբապետուհի Սեդա Դարբինեանի:

Նոյն տարին մասնաճիւղի մարզական խումբերը կը մասնակցին Գանատայի եւ Արեւելեան Մ. Նահանգներու ձմեռնային ճրդ խաղերուն:

1981ին մասնաճիւղի վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Յակոբ Տեմիրճեան:

21 Փետրուար 1981ին տեղի կ'ունենայ սկաուտական նորակազմ խումբի երդման արարողութիւն հայ կեդրոնի սրահին մէջ, սկաուտական շարքերու 50 անդամներու մասնակցութեամբ եւ կնքահայրութեամբ Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային վարչութեան ատենապետ՝ Պետրոս Կարապետեանի: Մասնաճիւղի մարզական խումբերը կը մասնակցին Գանատայի եւ Արեւելեան Մ. Նահանգներու 13րդ ամառնային խաղերուն:

1983ին Արեւելեան Մ. Նահանգներու եւ Գանատայի ամառնային 15րդ խաղերուն Տիթրոյիթի խումբերը կը բերեն իրենց մասնակցութիւնը:



Տիթրոյիթի Հ.Մ.Ը.Մ.ի 1982 տարուայ ֆութպոլի խումբը

1984ին վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Սարգիս Գրիգորեան:

Նախագահութեամբ Տէր եւ Տիկին Փօլ Պասմաճեաններուն, 18 Նոյեմբերին մասնաճիւղը կը տօնէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 65ամեակը ներկայութեամբ Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային վարչութեան անդամներուն: Օրուան ատենախօսն է Եղիշէ Խոստեղեան: Տեղի կ'ունենայ յուշանուէրներու փոխանակում եւ նուիրաստութիւն որմէ կը գոյանայ 7100 ամ. սուլար: 1985ին մասնաճիւղի մարզական խումբերը զգալի յառաջդիմութիւններ կ'արձանագրեն շնորհիւ մարզիչ Աւետիս Զիլեանի ճիգերուն: Տղոց եւ աղջկանց պասքէթպոլի եւ վոլիպոլի խումբերը 25 Մայիսին եղբայրական հանդիպումներ կ'ունենան

Շիքակոյի մասնաճիւղի խումբերուն դէմ: Օրուան կարեւորագոյն մրցումը կը կայանայ երկու մասնաճիւղերու ֆութպոլի կազմերուն միջեւ, Տիթրոյիթի խումբին յաղթանակով (4-0):

1985 տարուայ մասնաճիւղի վարչութեան ատենապետն է Տօնապետ Էնկէյեան:

Տիթրոյիթի կազմը կը մասնակցի Square Lake Raquet Clubի կազմակերպած գոց դաշտի ֆութպոլի մրցաշարքին, հանդիսանալով Բ. ախոյեան: Խումբի կազմութեան ոգին կը հանդիսանայ Մանուէլ Գարճեան:

Նոյեմբեր 16ին, մասնաճիւղը կը տօնէ Միութեան հիմնադրութեան 67րդ տարեդարձը աւանդական ճաշկերոյթ պարահանդէսով մը:

1986ին վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Արա Թելպելեան:

15 Նոյեմբերին աւանդական ճաշկերոյթով կը տօնուի մասնաճիւղի հիմնադրութեան 10ամեակը որու ընթացքին ժողէֆ Մելիքեան կը պարգեւատրուի Ծառայութեան Շքանշանով:

1987ին մասնաճիւղը կը հիւրընկալէ Արեւելեան Միացեալ Նահանգներու 10րդ Շրջանային ներկայացուցչական ժողովը:

ՊՈՍԹԸՆ

Պոսթընի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի 1973ի վերակազմութենէն ետք 1975 տարուայ վարչութեան մաս կը կազմեն: Պետրոս Կարապետեանի ատենապետութեամբ, Մարսել Գարեան, Ճորճ Պեզճեան, Սարգիս Մաճառեան, Սերոբ Տէր Պօղոսեան, Գօգօ Պալեան եւ Վահրամ Պոյաճեան: Այս կազմի կարելոր իրականացումը պիտի ըլլար, մասնաճիւղի սկաուտական շարժման ստեղծումը որուն աշխատանքները կը վստահուին յատուկ սկաուտական խորհուրդի մը մասնակցութեամբ՝ Յարութիւն Տուզճեանի, Լեւոն Խաչատուրեանի, Լեւոն Ազողլանեանի, Պետրոս Թեքիրտաղլեանի, Սարգիս Քեպպաճեանի եւ Լեւոն Պապլուզեանի:

1976ին վարչական կազմի անդամներն են. Ատենապետուհի՝ Արաքսի Պոյներեան Փոխ ատենապետ՝ Սարգիս Մաճառեան Ատենադպիր՝ Ճորճ Պեզճեան Գանձապահ՝ Մարսել Գարեան Խորհրդականներ՝ Յովսէփ Աւագեան, Վահրամ Պոյաճեան եւ Գօգօ Պալեան:

Մասնաճիւղը կ'օգտագործէ Սբ. Ստեփանոս եկեղեցւոյ ներքնասրահները իբրեւ նստավայր:

1977ին վարչական կազմը կը վերընտրուի նոյնութեամբ բացի Վահրամ Պոյաճեանէն որ կը փոխարինուի Սերոբ Տէր Պօղոսեանով: Ատենապետութեան պաշտօնը կը վարէ Մարսել Գարեան: Սկաուտական բաժնի զարգացումով մասնաճիւղը կ'արձանագրէ անդամական կա-

րելոր աճ, ընդհանուր թիւ 254 որոնցմէ 125ը սկաուտական շարքերէն: Կիրարկուող մարզաճիւղերն են՝ Ֆութպոլ, պասքեթպոլ եւ աթլետիզմ:

1978 տարուայ Պոսթընի Հ.Մ.Ը.Մ.ի վարչական կազմի անդամներն են Սարգիս Մաճառեան, Նորայր Քեպպաճեան, Յովսէփ Աւագեան, Ճանի Գասարճեան, Կարօ Մելքոնեան, Ճէք Նիկողոսեան, Մարսել Գարեան, Ճորճ Պեզճեան, Վահրամ Պոյաճեան եւ Համբար Հելվաճեան:

Մասնաճիւղը կը կիրարկէ Ֆութպոլ՝ զոյգ դասակարգերու խումբերով եւ պասքեթպոլ տղոց եւ աղջկանց բաժիններով:



Հայաստանի Բենքի բանակում Պոսթըն
28 Յունիս 1979



Պոսթրնի մասնաճիւղի վարչական կապ, ուրքի՝ Սահակ Յակոբեան, Րաֆֆի Տօնապետեան, Անդրանիկ Խաչատուրեան, Եպէկել Քէօմիրճեան, նստած՝ Յակոբ Գեւիսեան, Ճանի Գասարճեան, Պաղտասար Տէրտէրեան

1980ին Փոլթպոլի խումբը կը շահի միջմասնաճիւղային խաղերու ախոյեանութիւնը: Հայ Կեդրոնի նորակառոյց շէնքի բացման հանդիսութեան առթիւ, վարչութիւնը կը կազմակերպէ միջ մասնաճիւղային պասքէթպոլի մրցաշարք:

1981 տարուայ մասնաճիւղի վարչութեան անդամներն են. Կարօ Մելքոնեան, Իշխան Շապանեան, Աբրահամ Մանճիկեան, Րաֆֆի Տօնապետեան, Գարեգին Քեչիշեան, Արա Տէմիրճեան եւ Արա Ղազարեան:

Վարչութեան կողքին կը գործէ սկաուտական խորհուրդը ատենապետութեամբ Կարէն Տէմիրճեանի:

Շաբաթ 14 Նոյեմբեր 1981ին, հայ կեդրոնի սրահին մէջ տեղի կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 63րդ տարեդարձին առթիւ ճաշկերոյթ-պարահանդէս որմէ կը գոյանայ 2588 սուլարի եկամուտ: Յաջորդ առաւօտ Սբ. Ստեփանոս եկեղեցւոյ մէջ կը կատարուի հոգեհանգստեան պաշտօն հանգուցեալ Հ.Մ.Ը.Մ.ականներու յիշատակին: Նոյն երեկոյեան կրկին հայ կեդրոնի սրահին մէջ տեղի կ'ունենայ սկաուտական հանդէս, ձեռային աշխատանքներու ցուցադրութիւն եւ 40 սկաուտ արենոյշ, մրջնիկ եւ գայլիկներու երգման արարողութիւն հանդիսապետութեամբ Թորգոմ Աւագ Քհնյ. Յակոբեանի:



Խմբանկար Ուաշրնկթրնի եւ Պէյրուքի Հ.Մ.Ը.Մ.ի խումբերուն,
Ֆութպոլի մրցումէն առաջ - Յուլիս 10, 1983

Աստենապետութեամբ՝ Դաւիթ Չոլաքեանի, 1983 տարուայ վարչական կազմին կ'անդամակցին, Կարօ Գամարեան, Կարինէ Չոլաքեան, Օշին Յովհաննէսեան, Նորա Աֆթանդիլեան, Աբրահամ Մանճիկեան եւ Վահրամ Պոյաճեան:

Սկստուական խորհուրդի կազմը կը վարէ Սարգիս Ստեփանեան քարտուղարութեամբ Հիշէթ Ոսպիկեանի:

29 եւ 30 Հոկտեմբերին, հովանաւորութեամբ Մեսրոպ Արք. Աշճեանի եւ նախագահութեամբ Ալպերթ Բաբայեանի տեղի կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 65ամեակի եւ

Պոսթրնի մասնաճիւղի հիմնադրութեան (վերակազմութիւն) 10ամեակի հանդիսութիւններ եւ սկստուներու երդման արարողութիւն: Մասնաճիւղի սկստուական շարքերու ընդհանուր թիւն է 109:

ՈՒԱՇԻՆԿԹԸՆ

1970ին հիմնուած Հ.Մ.Ը.Մ.ի Ուաշինկթրնի մասնաճիւղը, հակառակ դժուարին պայմաններուն իր գործունէութիւնը կը շարունակէ բնականօրէն կերպով: Առաջին տարիներու մար-

զական գործունէութեան առանցքը կը կազմէ ֆութպոլի խումբը: Մասնաճիւղի 1973-74 տարուայ վարչութեան մաս կը կազմեն՝ Կարպիս Մուրատեան, Ժիրայր Կիրակոսեան, Դանիէլ Դանիէլեան, Դաւիթ Արապեան, Շահէ Թահմազեան, Կարպիս Սրապեան եւ Մարօ Ահարոնեան: Այս կազմի տարեկան գործունէութիւնը կը պսակուի պարահանդէսի մը յաջող կազմակերպութեամբ: Ֆութպոլի խումբի կազմը զօրացնելու նպատակով վարչութիւնը կը փորձէ տեղւոյն Մասիս խումբը միացնել Հ.Մ.Ը.Մ. կազմին սակայն փորձը չի յաջողիր: 1983ին մասնաճիւղի վարչութեան ատենա-

պետութիւնը կը վարէ Յովսէփ Էրջանեան: Յուլիսին, հովանաւորութեամբ Անդրանիկ Տէր Յովհաննէսեանի մասնաճիւղը կը կազմակերպէ հրապարակային հանդիսութիւն պատուելու համար Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն Տիգրան Քհն. Խոյեանը: Հանդիսութեան ընթացքին կը կարդացուի Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ. Կաթողիկոսի կոնդակը որ Տիգրան Քհն. Խոյեանը կը բարձրացնէր աւագութեան աստիճանին ողջունելով իր յուշերուն «Նահատակ Յեղի Անմահներ» հատորի հրատարակութիւնը: Հանդիսութեան ընթացքին 24 գայլիկներ կու տան իրենց խոստումը:



1984 տարուայ Ուաշինկթընի ֆութպոլի խումբը

ՆԻԻ ԵՈՐՔ (ՎՈԼԵՍԱՅՍ)

1974-ին սկսեալ Նիւ Եորք հաստատուող նախկին Հ.Մ.Ը.Մ.ականներու ճիգերով կը սկսի վերակազմուիլ Ամերիկայի Միացեալ Նահանգներու երբեմնի անդրանիկ մասնաճիւղը:

1976ի Մայիսին Նիւ Եորքի Հ.Յ.Դ. Արմէն Կարօ կոմիտէի քաջալերանքով Վարդգէս Վարդանեան կը նախաձեռնէ տեղւոյն Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի կազմութեան: Շուտով մասնաճիւղի շուրջ կը հաւաքուին երիտասարդ ու խանդավառ անդամներ որոնք կ'ընտրեն մասնաճիւղի անդրանիկ վարչական կազմը հետեւեալ ձեւով.


Ատենապետ՝ Վարդգէս Վարդանեան
Փոխ ատենապետ՝ Ժողէֆ Նաքքաշեան

Ատենադպիր՝ Յովհաննէս Մարտիրոսեան
Գանձապահ՝ Միքայէլ Միքայէլեան
Մարզական պատասխանատու՝ Յովհաննէս Մէշէվէճեան

Մարզիչ՝ Անդրանիկ Քէշիշեան
Խորհրդականներ՝ Կարպիս Մարտիրոսեան,
Նշան Ղարիպեան եւ Րաֆֆի Մկրեան:

1977ին մասնաճիւղը կը հաշուէ 120 անդամներ: Նստավայրն է Հայ Կեդրոն, մասնաճիւղը կը կիրարկէ ֆուլթայոլ եւ սկաուտութիւն:

1980ին մասնաճիւղը կը կիրարկէ նաեւ աթլետիզմ: Ֆուլթայոլի խումբը Շրջանի զօրաւորագոյն կազմը կը հանդիսանայ տիրանալով միջ-մասնաճիւղային խաղերու ախոյեանութեան տիտղոսին:



1982 տարուայ Հ.Մ.Ը.Մ.ի Նիւ Եորքի մասնաճիւղի պատասխանատուներով



1990 տարուայ Հ.Մ.Ը.Մ.ի Նիւ Եորքի մասնաճիւղի պատգեթպոլի յաղթական կազմը



Հ.Մ.Ը.Մ.ի Նիւ Եորքի մասնաճիւղի վոլիպոլի աղջկանց խումբը իր մարպիչներով

ԲՐՈՎԻՏԷՆՍ

1979ի վերջաւորութեան եւ 1980ի նախապատրաստական աշխատանքներուն արդիւնաւորումով, 8 Ապրիլ 1981ին տեղի կ'ունենայ Բրովիտէնսի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի հիմնադրութեան աքթը: 12 Յունիս 1981 թուակիր նամակով Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային վարչութիւնը կը վաւերացնէ Շրջանի Զրդ մասնաճիւղի կազմութիւնը:

14 Յունիս 1981ին Բրովիտէնսի Սբ. Վարդանանց եկեղեցւոյ սրահին մէջ տեղի կ'ունենայ տեղւոյն Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի հիմնադրութեան հրապարակային հանդիսութիւն:

Հանդիսութեան ներկայ կ'ըլլան Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային վարչութեան ներկայացուցիչներ:

Շրջանային վարչութեան ատենապետ Պետրոս Կարապետեան բացատրելէ ետք «Բարձրացի՛ր-Բարձրացո՛ւր» նշանաբանով սահմանուած Հ.Մ.Ը.Մ.ի նպատակները, կը ստանայ 150 անդամներու երդումը եւ Շրջանային վարչութեան վաւերացման գիրը կը յանձնէ մասնաճիւղի վարչութեան որուն մաս կը կազմեն.

Ատենապետ՝ Սօսիկ Առաքելեան
Ատենադպիր՝ Յակոբ Խաչատուրեան
Փոխ ատենապետ՝ Ռոստոմ Ճեվահիրճեան
Գանձապահ՝ Յարութ Բարիկեան



Հ.Մ.Ը.Մ.ի Բրովիտէնսի մասնաճիւղի Վարչական Մարզական եւ Սկսուտական պատասխանատուներ



Հ.Մ.Ը.Մ.ի Փրավիտենս Ռօտ Այլնտ մասնաճիւղի 1981-ի Սկաուտական լրիւ կապմը

Հաշուապահ՝ Սարգիս Եփրեմեան
Ընկերայինի պատասխանատու՝ Գէորգ
Մխիթարեան

Խորհրդական՝ Սեդրակ Նշանեան:

Հազիւ եռամսեայ մը բոլորած մասնաճիւղը կը կազմակերպէ 78 անդամներէ բաղկացող սկաուտական զանազան կարգի խումբեր: Վարչութեան նշանակած սկաուտական խորհուրդին մաս կը կազմեն, Սարգիս Մինասեան, Յակոբ Ճէվահիրճեան, Ռազմիկ Խանգէթեան, Մարալ Խաչատուրեան, Մարո Արոյեան եւ Մարո Մինասեան: Խորհուրդի մօտ վարչութեան ներկայացուցիչն է Յարութիւն Բարիքեան:

Ֆուտբոլի, պասքեթբոլի եւ աթլետիկայի խումբերու հսկողութիւնը կը վստահուի վար-

չութեան ներկայացուցիչ Սարգիս Եփրեմեանին: Մասնաճիւղը ունի նաեւ ընկերային յանձնախումբ հսկողութեամբ Սեդրակ Նշանեանի: Ֆուտբոլի խումբի մարզիչն է Գառնիկ Թովմասեան: Խումբը 22 Նոյեմբերին եղբայրական հանդիպում մը կ'ունենայ Նիւ Ճըրզիի Հ.Մ.Ը.Մ.ի խումբին դէմ: Մրցումը կ'աւարտի Բրովիտենսի յաղթանակով (2-0):

26էն 28 Նոյեմբերի 1982ի շաբաթավերջին մասնաճիւղը կը հիւրընկալէ Գանատայի եւ Արեւելեան Մ. Նահանգներու միջ-մասնաճիւղային ծրոյց խաղերը: Բացման հանդիսութեան հանդիսավարն է մասնաճիւղի ատենադպիր՝ Յակոբ Խաչատուրեան: Երկու օրերու վրայ երկարող՝ զանազան մարզաձեւերու եւ սար-



Փրավիտենա Հ.Մ.Ը.Մ.ի Պասքեթպոլի ախոյեան խումբը, ուոքի՝ Մայք Էնճրլվ Ավճտեան, Պապ Պակեան, խմբապետ՝ Ուոլդրը Էտուարոյ Գալանճեան, Հարոլտ Օկասեան, Տէյվիտ Շիրանեան, նստած՝ Ժան Մինասեան եւ Կարի Չաքոյեան, պատասխանատու եւ մարպիչ Հայկ Մարգարեան

բեր դասակարգերու խաղերը կ'իրագործուին մեծ յաջողութեամբ:

Մասնաճիւղի սկաուտական բաժինը 23 եւ 24 Յուլիս 1983ին կը կազմակերպէ դպրոց-բանակում աստիճանաւորական անդամներու թեքնիք եւ ազգային դաստիարակութիւնը զարգացնելու նպատակով:

1984 տարեշրջանի մասնաճիւղի վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Յակոբ Խաչատուրեան:

15 Յուլիսին մասնաճիւղը իր հիմնադրութեան Յրդ տարեդարձին առթիւ կը կազմակերպէ դաշտահանդէս, Հայաստան քէմփին մէջ:

Մարզական խումբերու թեքնիք մակարդա-

կը տարուէ տարի յառաջդիմելով մասնաճիւղի Ֆութպոլի կազմը կը յաջողի Ռոստ Այլընտ նահանգի 1985ի ախոյեանութիւնը ապահովել 1-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք իտալական «Ճիովաննի» զօրաւորագոյն խումբը:

1987ին մասնաճիւղի վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Գէորգ Վիշապեան, ատենադպրուհին է Սիլվա Յովակիմեան:

14 եւ 15 Նոյեմբերին մասնաճիւղը կը կազմակերպէ Արեւելեան Մ. Նահանգներու միջմասնաճիւղային պասքեթպոլի մրցաշարքը մասնակցութեամբ Ալպընիի, Շիքակոյի, Պոսթընի եւ տեղւոյն մասնաճիւղերու երէց եւ կրտսեր սղոց եւ աղջկանց խումբերուն:

Մրցաշարքի ախոյեաններ կը հանդիսանան Պոսթրնի կրտսեր տղոց եւ աղջկանց խումբերը եւ երէց տղոց Բրովիտէնսի խումբը: Միջ-մասնաճիւղային այս հաւաքը կ'աւարտի ընդհանուր ստղանցքով, պարգեւատրումով եւ ճակերոյթ-պարահանդէսով նախագահութեամբ Տոքթ. Ժոզէֆ Մելիքեանի:

ՇԻՔԱԿՕ

1970ական թուականներու սկիզբը հետզհե-

տէ զարգացող Շիքակոյի հայկական գաղութին մէջ զգալի կը դառնայ մարզական միութեան մը կարիքը: Այս նպատակի իրագործման համար նախկին Հ.Մ.Ը.Մ.ականներ Յակոբ Խօլամեան, Մինաս Այնթէպլեան, Սարգիս Աղարեան եւ Յարութիւն Շքլանեան միասնական գործակցութեամբ կը յաջողին ի մի հաւաքել 15 Հ.Մ.Ը.Մ.ականներ որոնք 1974 Յունիսին հաւաքուելով Մինաս Այնթէպլեանի բնակարանը կ'որոշեն պաշտօնապէս հիմնել Շիքակոյի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ:



Հ.Մ.Ը.Մ.ի Շիքակոյի մասնաճիւղի պատրաստուած տղոց խումբը

Հիմնադիր այս ժողովին կը յաջորդեն անդամարչաւի աշխատանքները:

Մասնաճիւղի անդրանիկ վարչութեան անդամներ կ'ընտրուին՝

Ասենապետ՝ Արչակ Ադարեան
Փոխ ասենապետ՝ Համբար Վարդանեան
Ասենադպիր՝ Տիգրան Սիմոնեան
Գանձապահ՝ Գէորգ Լէպլէպճեան
Փոխ ասենադպիր՝ Յարութիւն Աքըլեան
Փոխ գանձապահ՝ Մայք Լազրըն
Խորհրդականներ՝ Յարութիւն Շքլանեան,
Յովհաննէս

Սէլբեկեան եւ Աւետիս Պրուճեան

Մասնաճիւղը Շիքակոյի Գլարք փողոցին վրայ կ'ունենայ իր ակումբը:

Սկսուա խմբապետներ Յարութիւն Տէմիրճեանի եւ Արաքսի Նուպարեանի ճիգերով

պաշտօնական հանդիսութեամբ, 25 Յուլիս 1975ին, սկսուտական շարքերու 40 անդամներ կու տան իրենց Հ.Մ.Ը.Մ.ականի երգումը:

Տարիներու ընթացքին կը զարգանայ կիրարկուող մարզաճիւղերու ցանկը՝ Ֆութպոլ, պասքեթպոլ, վոլիպոլ, փինկ-փոնկ, թենիս եւ աթլետիզմ զանազան դասակարգի երկսեռ բաժիններով:

Մասնաճիւղը կ'ունենայ նաեւ ընկերային գործունէութիւն:

1977ին մասնաճիւղը ունի 106 անդամներ որոնցմէ 56ը սկսուտական շարքերէն: Տարեկան նիւթական գործառնութիւնը կը բարձրանայ 15.000 տոլարի:

1981ին մասնաճիւղի նստավայրը կը փոխադրուի Ուէսթըն փողոց: Մարզական եւ սկսուտական հաւաքները տեղի կ'ունենան



Հ.Մ.Ը.Մ.ի Շիքակոյի մասնաճիւղի ֆութպոլի խումբը

Ամենայն Սբ. Փրկիչ եկեղեցւոյ ներքնասրահին մէջ:

1984 տարուայ մասնաճիւղի ատենապետութիւնը կը վարէ Յարութիւն Պրոտեմեան:

28էն 30 Սեպտեմբեր 1984ին, Շիքակոյի մասնաճիւղը կը սօնէ իր հիմնադրութեան 10ամեակը: Տեղի կ'ունենան Ֆուլթոնի եւ վոլիպոլի մրցումներ տեղւոյն մասնաճիւղի եւ Տիթրոյիթի կազմերուն միջեւ նաեւ հրապարակային հանդիսութիւն եւ ճաշկերոյթ ներկայութեամբ Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային վարչութեան անդամներուն:

1986ին մասնաճիւղը կը սկսի կիրարկել սրահի Ֆուլթոնի մարզը եւ 1 Ապրիլին Վիլա Փարքի՝ մէջ կայացող Շիքակոյի ախոյեանութեան աւարտական մրցումին կը գրաւէ առաջին դիրքը պարտութեան մատնելով «Ինթըրնէշընըլ Եաքզիզ»ի կազմը բենալթիով 4-3:

ՆԻԻ ՃԸՐՁԻ

1974էն սկսեալ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի մը հիմնումի ծրագրով Նիւ Ճըրզիի մէջ կը կազմուի առժամեայ վարչութիւն, որուն կ'անդամակցին Եդուարդ Մելիքեան, Եղիշէ Խոստեղեան, Ալետիս Գուշաքճեան, Անդրանիկ Տէր Յովհաննէսեան, Անդրանիկ Քէօմիւրճեան, Գէորգ Գիլէճեան, Մեսրոպ Մասոյեան, Յովհաննէս Հեքիմեան եւ Վերժին Դեղարարեան: Այս մասին առժամեայ վարչութիւնը տեղեակ կը պահէ Հ.Մ.Ը.Մ.ի նորակազմ Կեդրոնական վարչութիւնը: Վերջինս 17 Յունուար 1975 թուակիր նամակով կ'ողջունէ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի մը կազմութիւնը Նիւ Ճըրզիի մէջ:

5 Յունիս 1975ին, Սբ. Վարդանանց եկեղեցւոյ սրահին մէջ տեղի կ'ունենայ մասնաճիւղի անդրանիկ անդամական ընդհանուր ժողովը որմէ կ'ընտրուի Նիւ Ճըրզիի վարչութիւնը հետեւեալ կազմով.

- Ատենապետ՝ Եդուարդ Մելիքեան
- Փոխ ատենապետ՝ Եղիշէ Խոստեղեան

Ատենադպրուհի՝ Հռիփսիմէ Մնակեան
Փոխ ատենադպրուհի՝ Վերժին Դեղարարեան

Գանձապահ՝ Ալետիս Գուշաքճեան
Խորհրդականներ՝ Գէորգ Գիլէճեան եւ Անդրանիկ Քէօմիւրճեան:

8 Յուլիս 1975ի նամակով Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի եւ Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանային վարչութիւնը կը վաւերացնէ վերոյիշեալ վարչական կազմը:

Անյապաղ գործի լծուելով, առաջին հերթին կը կազմուին սկաուտական խումբեր որուն անդամներու թիւը շուտով կը բարձրանայ 75ի: Սկաուտական կազմի խմբապետական պաշտօնները կը վարեն, Զարեհ Գարակիւլէեան եւ Մատլէն Գաբրիէլեան:

1977ին մասնաճիւղը, սկաուտութեան կողքին, կը գործէ երեք մարզաճիւղերով՝ Ֆուլթոնի, պասքեթպոլ եւ փինկ-փոնկ տարեկան պիւտճէն բարձրացնելով հինգ հազար ամ. տոլարի:

1980ին Նիւ Ճըրզիի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի վարչութեան ատենապետն է Եդուարդ Մելիքեան: Մասնաճիւղը կը կիրարկէ Ֆուլթոնի եւ պասքեթպոլ: Սկաուտական խորհուրդը կը վարէ սկաուտական խումբը: Անդամներու ընդհանուր թիւն է 169:

Մասնաճիւղի հիմնադրութեան հնգամեակին տօնակատարութեան խօսք կ'առնեն Շրջանային վարչութեան Ատենապետ՝ Պետրոս Կարապետեան եւ Տոքթ. Հրանդ Մարգարեան:

1981ի վարչութեան ատենապետի պաշտօնը կը վարէ Անդրանիկ Տէր Յովհաննէսեան:

23-30 Օգոստոս 1981ին High Points ծառաստանին մէջ տեղի կ'ունենայ մասնաճիւղի սկաուտական երկրորդ բանակումը: Բանակումը կը վարեն մասնաճիւղի խմբապետ Արամ Եփրեմեան եւ խմբապետուհի Սեդա Մովսէսեան: Բանակումի վերջին օրը 45 նորագիրներ կու տան իրենց սկաուտական երդումը:

1985ին մասնաճիւղը կը հաշուէ 137 անդամ



Հ.Մ.Ը.Մ.ի Նիւ Ճըրզիի մասնաճիւղի ֆութպոլի առաջին խումբը

եւ 90 սկաուտական շարքերուն մասնակիցներ: Մարզական բաժինը կը կիրարկէ ֆուտպոլ, պասքեթպոլ, վոլիպոլ եւ փինկ-փոնկ սղոց եւ աղջկանց զոյգ բաժիններով:

1985ին Սբ. Վարդանանց սրահին մէջ, հովանաւորութեամբ՝ Վահագն Յովնանեանի, Նիւ Ճըրզիի մասնաճիւղը կը տօնէ իր հիմնադրութեան տասնամեակը: Հանդիսութեան բացումը կը կատարէ մասնաճիւղի ատենապետ Պերճ Մասոյեան: Յաջորդաբար խօսք կ'առնեն Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային վարչութեան ատենապետ՝ Եղիշէ Խոստեղեան, Վահագ Յովհաննէսեան եւ մասնաճիւղի հիմնադիրներէն Կարպիս Տէր Մեսրոպեան: Այս առ-

թիւ կատարուած նուիրահաւաքէն կը գոյանայ 13.800 ամ. տոլար:

Յունիս 1990ին Նիւ Ճըրզիի մասնաճիւղը կը կազմակերպէ Շրջանային Վարչութեան նախաձեռնած ամառնային խաղերը:

ՆԻՒ ԵՈՐՔ ՊԵՅՍԱՅՏ – ՖԼԵՇԻՆԿ

Հ.Մ.Ը.Մ.ի Նիւ Եորք Պէյսայտ – Ֆլէշինկի մասնաճիւղը հիմնուած է 1980ին հոն հաստատուած նախկին Հ.Մ.Ը.Մ.-ականներու նախաձեռնութեամբ: Մասնաճիւղը Արեւելեան Մ. Նահանգներու Տրդ մասնաճիւղը կը հանդիսանայ:

Վարչական անդրանիկ կազմի անդամներն են՝

- Ատենապետ՝ Զոհրապ Տատոյեան
- Փոխ ատենապետ՝ Խոսրով Խաչատուրեան
- Քարտուղար՝ Վահէ Պիճէմենեան
- Գանձապահ՝ Յովհաննէս Ալտրմշեան
- Հաշուապահ՝ Աբրահամ Եփրէմեան
- Գոյքապահ՝ Կարապետ Պարիկեան

Խորհրդականներ՝ Պետրոս Գալայճեան եւ Զաւէն Վարդանեան:

1985ին մասնաճիւղի կողքին կը գործէ ընկերային յանձնախումբ մը որ կը կազմակերպէ բացօդեայ պտոյտներ եւ ծովագնացութիւն անդամներու միջեւ եղբայրական կապը աւելի զօրացնելու նպատակով:

1987ին մասնաճիւղի վարչութեան ատենապետն է Անդրանիկ Յարութիւնեան:

1 Մարտ 1987ին, Սբ. Նահատակաց եկեղեցւոյ սրահին մէջ տեղի կ'ունենայ նորագիր սկառտներու խոստման արարողութիւն ներկայութեամբ եկեղեցւոյ հովիւ Տ. Ասողիկ Աւագ Քհն. Գրլճեանի: Այս առթիւ կը պարզեւատրուին մասնաճիւղի ժրջան անդամներ՝ Խոսրով եւ Տոքթ. Վարդգէս Խաչատուրեաններ:

ՄԻԱՄԻ

Հ.Մ.Ը.Մ.ի 54րդ մասնաճիւղը Արեւելեան Միացեալ Նահանգներու Ֆլորիտա նահանգի Միամիի մասնաճիւղն է:

1981ի Մայիս 28ի դաշտագնացութեան ընթացքին Լեւոն Ալեքսանեանի առաջարկով նախկին Հ.Մ.Ը.Մ.ականներ կ'որոշեն հիմնել Միամիի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը եւ կ'անցնին աշխատանքի կազմելով մարզական եւ սկառտական խումբեր: Շաբաթ 21 Նոյեմբեր 1981ին Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային վարչութիւնը ներկայացնող պատուիրակութիւն

մը տեղւոյն հիմնադիր անդամներուն ներկայացնելէ վերջ Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեան նպատակները, կը նշանակէ Միամիի առժամեայ վարչութիւն որուն աշխատանքներու բաժանումը կը դասաւորուի հետեւեալ ձեւով.

- Ատենապետ՝ Լեւոն Ալեքսանեան
- Փոխ ատենապետ՝ Արտօ Պալեան
- Ատենադպիր՝ Սարգիս Պօղոսեան
- Գանձապահ՝ Վարդգէս Թոքաթլեան
- Հաշուապահ՝ Նշան Պոստանեան

Սկառտ. Պատասխանատու՝ Վարդան Հալաճեան:

Յաջորդ օրը նշանակեալ վարչութիւնը եւ մասնաճիւղի առաջին անդամները ներկայ կ'ըլլան Թոփիքիկի Եոնկի փարքը ուր խօսք կ'անէ Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային վարչութեան ատենապետ՝ Պետրոս Կարապետեան եւ կը փոխանցէ մասնաճիւղի դրօշակը - [Ծ/22.32]:

Հետզհետէ զարգանալով մասնաճիւղը կը կազմէ սկառտական խումբ եւ մարզական վոլիպոլի եւ ֆութպոլի խումբեր:

Մասնաճիւղի սկառտ խմբապետն է Գօգօ Թորիկեան:

1984ին, մասնաճիւղի վարչութեան ատենապետն է Վահրամ Դանիէլեան: Մարզական եւ սկառտական գործունէութեան առընթեր մասնաճիւղը կը ստանձնէ ազգային դաստիարակութեան աշխատանքներ: Յունիս 29ին տեղի կ'ունենայ հրապարակային դասախօսութիւն, օրուայ դասախօսն է «Հայրենիք» թերթերու խմբագրապետ՝ Գէորգ Տօնապետեան:

Այս թուականին մասնաճիւղը կը հաշուէ 90 անդամներ որոնցմէ 65 գործօն դեր ունին մասնաճիւղէն ներս:

1985ի Յունիս 27էն Օգոստոս 4 մասնաճիւղի սկառտական կազմը կը կայացնէ տարեկան բանակում Պոքա Բադոնի ծովեզերեայ վայրին մէջ: Բանակումի վերջին օրը կը կազմակերպուի խարուկահանդէս:

ԱԼՊԸՆԻ

Ալպընին Ամերիկայի Միացեալ Նահանգներու Նիւ Եորք նահանգի գլխաւոր քաղաքն է ուր 1986ի Յունուարին խումբ մը Հ.Մ.Ը.Մ.ականներ հաւաքուելով կ'որոշեն հիմը դնել տեղւոյն մասնաճիւղին: Այդ հաւաքին ներկայ կը գտնուին Օհան Օհանեան, Արա Մահսերէճեան, Գէորգ Բարսեղեան, Գրիգոր Թիւթիւնճեան եւ Ներսէս Մինասեան: Երկու ամսուայ նախապատրաստական աշխատանքներէ ետք Պօղոս Շահինեանի բնակարանին մէջ հիմնադիր անդամները կրկին կը հաւաքուին: Հաւաքոյթին ներկայ կը գտնուին Շրջանային վարչութեան ներկայացուցիչներ եւ Խաչիկ Քհն. Մկրտիչեանը: Այս հաւաքոյթի ընթացքին կը յայտարարուի, Ալպընիի մասնաճիւղի կազմութիւնը: Շրջանային վարչութեան կողմէ նշանակեալ վարչութիւնը կը բաղկանայ հետեւեալ անդամներէն.

- Ատենապետ՝ Գէորգ Բարսեղեան
- Փոխ ատենապետ՝ Օհան Օհանեան
- Քարտուղար՝ Արա Մահսերէճեան
- Գանձապահ՝ Գրիգոր Թիւթիւնճեան
- Խորհրդական՝ Ներսէս Մինասեան:

15 Յունիս 1986ին, տեղի կ'ունենայ մասնաճիւղի հիմնադրութեան պաշտօնական հանդիսութիւնը ներկայութեամբ Շրջանային վարչութեան անդամներուն, Հ.Յ.Դ. Արեւելեան Մ. Նահանգներու Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Կարօ Մելքոնեանի, Հ.Օ.Մ.ի Ալպընիի մասնաճիւղի ներկայացուցիչներուն, Խաչիկ Քհն. Մկրտիչեանի եւ 200 հանդիսականներու:

Հանդիսութեան ընթացքին մասնաճիւղի 45 նորագիր անդամ անդամուհիները կու տան Հ.Մ.Ը.Մ.ականի իրենց երգումը որուն օրուայ կնքահայր Պօղոս Շահինեան կը պատասխանէ. «Այս մեծ պատիւ մըն է ինձի համար ու հոգիս անհունօրէն կը հրճուի, որ անգամ մը եւս ակաստես կ'ըլլամ իմ շատ սիրելի Միութեանս դրօշակի բարձրացման, նոր հորիզոնի տակ ու վստահ եմ որ այս վերջինը չէ եւ Հ.Մ.Ը.Մ.ը պիտի շարունակէ իր յաղթական յառաջդիմութիւնը»:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆ

Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանը, ուրոյն շրջան դառնալէ առաջ մինչեւ 1977ի Ապրիլ ամիսը, գործած է Գանատայի եւ Արեւելեան Միացեալ Նահանգներու Միացեալ շրջանային կառոյցով:

(1975էն 77 տարեշրջաններու Գանատայի եւ Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային գործունէութեան մասին տեսնել Գանատայի գլուխին տակ գտնուող արձանագրութիւնները):

26 Մարտի 1977ին Գանատայի 3 մասնաճիւղերու եւ Արեւելեան Մ. Նահանգներու 6 մասնաճիւղերու ներկայացուցիչներու մասնակցութեամբ կայացած Դ. Շրջանային ներկայացուցչական ժողովի ընթացքին որոշում կ'առնուի Գանատան եւ Արեւելեան Մ. Նահանգները բաժնել զոյգ շրջաններու իւրաքանչիւրը առանձին Շրջանային վարչութիւններով:

30 Ապրիլ 1977ին, Նիւ Ճըրզիի մէջ տեղի կ'ունենայ Արեւելեան Մ. Նահանգներու Ե. Շրջանային ներկայացուցչական ժողովը որմէ ընտրուած Արեւելեան Մ. Նահանգներու անդրանիկ Շրջանային վարչութեան կազմը կը ներկայանայ հետեւեալ ձեւով.

- Ատենապետ՝ Եղուարդ Մելիքեան
- Փոխ-ատենապետ՝ Պետրոս Կարապետեան
- Ատենադպիր՝ Վարուժան Կիւրեղեան
- Գանձապահ՝ Յովհաննէս Նոխուսեան
- Քարտուղար՝ Գէորգ Պետիկեան
- Խորհրդականներ՝ Վարդգէս Յակոբեան եւ Ժիրայր Կիրակոսեան:

Այս կազմի կարեւոր իրականացումներէն պիտի ըլլար Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային վարչութիւն - Հ.Ե.Դ.աշնակցութեան Կեդրոնական վարչութիւն խորհրդակցութիւնը որ տեղի կ'ունենայ 25 Սեպտեմբերին եւ ուր կ'որոշուի «յաճախակի հանդիպումներ ունենալ, ներդաշնակելու համար գործունէութիւնը երկու կապակերպութեանց՝ որոնք կոչուած են սատարելու հայ երիտասարդութեան մարպական, գաղափարական

եւ հանրային դաստիարակութեան գործին» - [ԽԸ/19.11.1977]:

1977ի Հոկտեմբեր ամիսէն սկսեալ Շիքակոյի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը մաս կը կազմէ Շրջանի ցանցին, մասնաճիւղերու թիւը բարձրացնելով եօթի:

22 Մարտ 1980ին նոր ընտրուած Շրջանային վարչութիւնը իր առաջին նիստով աշխատանքներու բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով.

Ատենապետ՝ Պետրոս Կարապետեան
 Փոխ ատենապետ՝ Յարութիւն Թերճանեան
 Ատենադպրուհի՝ Հերմինէ Մնակեան
 Գանձապահ՝ Վարուժան Կիւրեղեան
 Խորհրդականներ՝ Յարութիւն Շքլանեան,

Մանուէլ Գարճեան եւ Անտրէ Միրիճեան:

Մասնաճիւղերու միջեւ հեռաւորութիւններու պատճառով, Շրջանային վարչութեան լիազուժար նիստերը եւ մասնաճիւղերու այցելութիւնները մեծազուժար ծախսերու դուռ կը բանան: Վարչութեան անդամները անհասուկան ծախսերով կը թեթեւցնեն պիւտճէական դժուարութիւնները:

1982 եւ 1983 տարեշրջանները կը բոլորուին ընթացիկ գործունէութեամբ՝ կազմակերպչական, մարզական եւ սկստական բաժիններով: Շրջանային վարչութիւնը կը հաստատէ անդամատուրքերու դրութիւնը եւ նիւթական գործառնութիւնները շահատուրքէ զերծ պահելու պետական արտօնութիւն կը ստանայ :



1981 Արեւելեան Միացեալ Նահանգներու Հ.Մ.Ը.Մ.ի
 Դ. Շրջանային ներկայացուցչական ժողովի խմբանկարը:
 Կեդրոնը՝ Տիգրան Աւագ Քին. Խոյեան՝ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն [Ծ/15.29]

10 Ապրիլ 1983ին ընտրեալ Շրջանային վարչութեան մաս կազմած են՝ Եղիշէ Խոստեղեան, Անդրանիկ Տէր Օհաննէսեան, Յովհաննէս Սթամպուլեան, Ճանի Գասարճեան, Արա Ղազարեան, Սօսիկ Առաքելեան եւ Մանուէլ Գարճեան:

1983ի ընթացքին Շրջանային վարչութիւնը կը կատարէ իր արխիւներու վերջնական դասաւորում եւ կը մշակէ Շրջանի ներքին կանոնադրութիւնը:

Շրջանային ծրագրի ներկայացուցչական ժողովի վերջին օրակարգով, 27 Յունուար 1985ին ընտրուեցաւ Արեւելեան Մ. Նահանգներու

Շրջանային վարչութեան կազմը հետեւեալ ձեւով.

Ատենապետ՝ Եղիշէ Խոստեղեան
Փոխ ատենապետ՝ եւ գանձապահ՝ Ենովք Գարակէօզեան

Քարտուղար՝ Յովհաննէս Սթամպուլեան
Հաշուապահ՝ Արա Ղազարեան

Մարզական պատասխանատուներ՝ Մանուէլ Գարճեան եւ Սօսիկ Առաքելեան

Սկաուտական պատասխանատու՝ Արամ Եփրեմեան

1985ի Յունիսէն սկսեալ Յովսէփ Էրջէնեան կը փոխարինէ Սօսիկ Առաքելեանը: Շրջանա-



Հ.Մ.Ը.Մ. Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան կազմը, Կեդրոնական Վարչութեան ատենապետին հետ նկարուած՝ Յովհաննէս Իսթամպուլեան, Սօսիկ Առաքելեան, Անդրանիկ Տէր Օհաննէսեան, Վարդգէս Տէր Կարապետեան, Եղիշէ Խոստեղեան, Ճանի Գասարճեան, Արա Ղազարեան: Կը բացակայի՝ Մանուէլ Գարճեան

յին վարչութիւնը կը կազմակերպէ մասնաճիւղերու միջ-դիւանային ժողովներ 28 Սեպտեմբեր 1985ին եւ 27 Ապրիլ 1986ին:

Շրջանային վարչութիւնը այս ժամանակաշրջանին կը հաստատէ անձեռնմխելի հիմնադրամի դրութիւն որուն առաջին նուիրատուները կ'ըլլան Ժողէֆ եւ Անահիտ Մելիքեաններ 50.000 տոլարի յատկացումով:

Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային 10 ըդ ներկայացուցչական ժողովը տեղի կ'ունենայ 30 Յունուար – 1 Փետրուար 1987ին Տիթրոյիթի մէջ: Ժողովէն ընտրուած Շրջանային վարչական կազմը իր աշխատանքներու բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով:-

Ատենապետ՝ Եղիշ Խոստեղեան

Փոխ-ատենապետ՝ Մանուէլ Գարճեան
Ատենադպիր՝ Յովհաննէս Սթամպուլեան
Գանձապահ՝ Ենովք Գարակէօզեան
Խորհրդական՝ Յովսէփ Էրջէնեան:

Շրջանային վարչութեան կազմակերպչական գործունէութեան գլխաւոր առանցքը կը հանդիսանայ մասնաճիւղերու վարչութեանց դիւաններու երկու եւ մասնաճիւղերու սկաուտական խորհուրդներու երկու ժողովներ: Շրջանէն անդամներ՝ Յովսէփ Էրջէնեան, Արա Տեմիրճեան եւ Սաֆօ Գարճեան մաս կը կազմեն Գանատայի եւ Արեւելեան Մ. Նահանգներու միջ-շրջանային խաղերու կազմակերպութեան մնայուն յանձնախումբին:

1987ին, Շրջանը կը հաշուէ 1152 անդամ-



Նիւ Ճըրպի, Յունիս 1990, Արեւելեան Միացեալ Նահանգներու ամառնային խաղերու տողանցքէն ետք ընդհանուր տեսարանը, Կեդրոնը Միացեալ Նահանգներու Կիլիկիոյ Թեմի Առաջնորդ Մեսրոպ Արք. Աշճեան

ներ: Այս թիւը 1988ին կը բարձրանայ 1360ի որոնցմէ 365ը մաս կը կազմեն սկառուտական շարքերուն:

10 Սեպտեմբեր 1988ին, Նիւ Ճըրզիի մէջ Շրջանը մեծ շուքով կը նշէ Միութեան հիմնադրութեան 70 ամեակը:

Յէն 5 Փետրուար 1989ին Շրջանը կը գումարէ իր 12րդ ներկայացուցչական ժողովը որուն վերջին օրակարգով ընտրուած Շրջանային վարչութեան կազմը կը ներկայանայ հետեւեալ ձեւով.-

Ասենապետ՝ Եղիշէ Խոստեղեան

Փոխ ասենապետ՝ Տոքթ. Յովսէփ Մելիքեան

Ասենադպիր՝ Յովհաննէս Սթամպուլեան

Գանձապահ՝ Ենովք Գարակէօզեան

Մարզական պատասխանատու՝ Մանուէլ Գարճեան

Յարաբերական՝ Խոսրով Խաչատուրեան
Քարոզչական՝ Յարութիւն Պուլտմեան:
1975-90 տասնըհինգամեայ ժամանակաշրջանին Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային վարչութեան մարզական գործունէութեան օժանդակած են հետեւեալ անդամները.-


Յովսէփ Էրջանեան, Կարինէ Չոլաքեան, Համազասպ Ռշտունի, Միհրան Վարդանեան, Անդրանիկ Յարութիւնեան, Հայկ Մարգարեան, Կարօ Անաստասեան, Կարպիս Գահվէճեան, Յարութիւն Թորոսեան, Լեւոն Շամլեան, Արա Տէմիրճեան եւ ուրիշներ:

Նոյն ժամանակաշրջանին սկառուտական բաժնին իրենց օժանդակութիւնը բերած են Արամ Եփրեմեան, Նորա Աֆտանդիլեան, Բաֆֆի Ստեփանեան, Շողիկ Դաւիթեան, Արմէն Գահվէճեան, Աւետիս Պարոնեան եւ ուրիշներ:

ԳԼՈՒԽ ԵՕԹԵՐՈՐԴ

ԱԻՍՏՐԱԼԻԱ

- ՍԻՏՆԻ
- ՄԵԼՊՈՒՌՆ
- ԱՐԵԻՄՏԵԱՆ ՍԻՏՆԻ
- ԱՐԵԻԵԼԵԱՆ ՍԻՏՆԻ
- ՀԻԻՍԻՍԱՅԻՆ ՍԻՏՆԻ
- ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻԻՆ



Ս Ո Ս Ր Ա Լ Ի Ա

ԽԱՂԱՂԱԿԱՆ
ՈՎԿԵԱՆՈՍ

ՀԻՍՏՈՍԱՅԻՆ
ՍԻՏՆԻ

ԱՐԵՎՄՏԵԱՆ
ՍԻՏՆԻ

ՀԱՐԱԽԱՅԻՆ
ՍԻՏՆԻ

ԳԱՄՊԵՐԱ

ՄԵԼՊՈՒՌԻՆ

ՍԻՏՆԻ

Ներածական

Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ Շրջանը 1975էն ետք ունեցաւ զոյգ մասնաճիւղերու կազմութիւն 1981ին Արեւելեան Սիտնիի եւ 1989ին Հիւսիսային Սիտնիի «Արարատ» մասնաճիւղը:

Միջանկեալ 1979ին, մասնաճիւղի մը կազմութեան փորձ կատարուեցաւ Աւստրալիոյ մայրաքաղաք Գամպերայի մէջ, Արսէն Հեքիմեանի ճիգերով: Սակայն Գամպերայի մասնաճիւղը արձանագրելի կարեւոր գործունէութիւն չունեցաւ գաղութի փոքրաթիւ ըլլալուն պատճառով եւ փորձը յաջող ընթացք չունեցաւ:

ՍԻՏՆԻ

Կազմակերպչական գործունէութիւն

1975էն սկսեալ Աւստրալիոյ աւագ մասնաճիւղի՝ Սիտնիի գործունէութիւնը աւելի արագօրէն կը զարգանայ: Մասնաճիւղը կը կրէ Անդրանիկ անունը:

6 Օգոստոս 1978ին մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովին կողմէ ընտրեալ վարչութիւնը իր աշխատանքներու բաժանումը կը կատարէ հետեւեալ կերպով.-

Ատենապետ՝ Սարգիս Տէր Պետրոսեան
Փոխ ատենապետ՝ Յակոբ Կապոնեան
Ատենադպիր՝ Ճորճ Թաւուքեան



1981 տարուայ Սիտնիի մասնաճիւղի վարչութեան եւ Սկաուտական խորհուրդի խմբանկար

Գանձապահ՝ Կարո Քիրիչեան
 Խորհրդականներ՝ Վազգէն Մկրտիչեան,
 Արմանտո Ֆերհատեան եւ Թորոս Գարամանեան:

Մասնաճիւղի կիրարկուող մարզաճիւղերն են՝ ֆուտպոլը 3 խումբերով, պասքեթպոլը՝ սողոց եւ աղջկանց 3 խումբերով: Սկաուտական խորհուրդը եւ ծնողական յանձնախումբը կը հսկեն մասնաճիւղի սկաուտական աշխատանքներուն: Վարչութիւնը կը յաջողի ապահովել ընդլայնումի եւ բարեզարդման աշխատանքներ յաջողցնել:

Անդամներու ընդհանուր թիւն է 141: Տարեջրջանի նիւթական գործառնութեանց պատ-

կերն է մուտք՝ 20.043 , ելք՝ 18.263 աւստրալիական տուար:

23 Սեպտեմբեր 1979ին մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ՝

Ատենապետ՝ Պերճ Մոմճեան
 Ատենադպիր՝ Յակոբ Կապոնեան
 Գանձապահ՝ Հրանդ Զարիկեան
 Գոյքապահ՝ Թորոս Գարամանեան
 Փոխ գոյքապահ՝ Եփրատ Իվանեան
 Սկաուտական խորհուրդի ներկայացուցիչ՝
 Արթուր Աղամալեան
 Զեռնարկներու պատասխանատու՝ Ժան Գէորգեան:



Սիտնիի ֆութպոլի Ա. կապը 1980ին: Ուքի՝ Մարտիչ Թէօ Թէօսիս, Թոմաս Գարամանեան, Յովիկ Պերպերեան, Օհաննէս Ատաշբարեան, Վազգէն Խանձեան, Միհրան Կիրոյեան, Արշակ Մուրադալեան, Տքթ. Մարթին Մաքերոճեան, Եփրատ Իվանեան, մասնաճիւղի ատենապետ՝ Պերճ Մոմճեան: Նստած՝ Սարգիս Օհաննէսեան, Բիէր Սապունճեան, Բիթրր Սալտուսի, Զոհրապ Միքայելեան, Յովիկ Մուրադալեան, Տիգրան Հովիւեան, Ճորճ Շամուն:

Այս տարեշրջանին անդամական ընդհանուր թիւը կ'աւելնայ շուրջ 40 անդամներով: Վարչութիւնը կը ծրագրէ սեփականացնել իր ակումբի շէնքը:

22 Մարտի 1980ին տեղի կ'ունենայ Հայ Մշակութային կեդրոնի բացումը ուր կը գործեն Հ.Օ.Մ.ը Հայ Մշակութային Միութիւնը եւ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը:

1981 տարուայ վարչական կազմի անդամներն են՝ Պերճ Մոմճեան, Անդրանիկ Բանոյեան, Հրանդ Զարիկեան, Յարութիւն Քէօշկերեան, Յակոբ Կապոնեան եւ Եփրատ Իվանեան:

28 Փետրուար 1982ի անդամական ընդհանուր ժողովը մասնաճիւղի նոր վարչութեան անդամներ կ'ընտրէ հետեւեալ կազմով.-

- Ատենապետ՝ Եփրատ Իվանեան
- Ատենադպիր՝ Սազօ Պէրպէրեան
- Գանձապահ՝ Յակոբ Ենիգոմուշեան
- Փոխ ատենապետ՝ Աւետիս Հայկազեան
- Փոխ գանձապահ՝ Վարուժան Կիւլէսէրեան
- Գոյքապահ՝ Անդրանիկ Բանոյեան
- Խորհրդական՝ Հարմիկ Բանոյեան:

1986 տարեշրջանի վարչական կազմի անդամներն են՝

- Ատենապետ՝ Պերճ Մոմճեան
- Ատենադպիր՝ Յակոբ Կապոնեան
- Գանձապահուհի՝ Շուշան Աֆարեան
- Գոյքապահ՝ Հերոս Գրիգորեան
- Խորհրդականներ՝ Հրանդ Զարիկեան, Վաչէ Մինասեան եւ Վազգէն Տըմլաքեան:

Մասնաճիւղին սկաուտ խմբապետներէն Արթուր Աղամալեան կը նշանակուի համագաղութային Գ. ընդհանուր բանակումի խմբապետ: Տարուայ նիւթական գործառնութիւնը հաւասարակշռուած է 33.458 Աւստրալիական Տոլարով:

14 Փետրուար 1987ին մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ՝

- Ատենապետ՝ Յակոբ Կապոնեան
- Փոխ ատենապետ՝ Հերոս Գրիգորեան

Ատենադպրուհի՝ Մարի Սէրխոշեան
Գանձապահուհի՝ Սօսի Քէօշկէրեան
Գոյքապահ՝ Ռուբէն Նալչայեան
Մարզական պատասխանատուներ՝ Յակոբ Քոմշեան եւ Յարութ Քէօշկէրեան:

Վարչութիւնը կը հաստատէ թէ մասնաճիւղի անդամական ընդհանուր թիւի 50 առ հարիւրը միայն գործօն մասնակցութիւն կը բերէ միութենական կեանքին: Սկաուտ պատասխանատուներու անբաւարարութիւնը եւ մարզադաշտերու պակասը կը դժուարացնեն վարչութեան գործունէութեան բնականոն ընթացքը: Նիւթական գործառնութիւն մուտք՝ 33.221 եւ ելք՝ 27.211 աւստրալիական տոլար:

Մարզական գործունէութիւն

Սիտնիի մասնաճիւղը սկիզբէն սկսեալ կը կիրարկէ, Ֆութպոլ, պասքեթպոլ եւ փինկփոնկ: Ունի նաեւ մասնակի խումբեր ռակպիի եւ վոլիպոլի ճիւղերուն մէջ: Մարզաճիւղերու խումբերու թիւը տարիներու ընթացքին աճելով 1987ին մասնաճիւղը կը պահէ ֆութպոլի՝ 8 եւ պասքեթպոլի՝ 6 խումբեր որոնք կը մաս-



Սիտնիի Հ.Մ.Ը.Մ.ի 1987ի աղջկանց պասքեթպոլի խումբը



Սիտնիի Հ.Մ.Ը.Մ.ի 10 տարեկանէն վար տղոց ֆուլթպոլի խումբը, ուրքի՝ Յակոբ Պօղոսեան, Արման Սեմերճեան, Պետիկ Մկրտիչեան, Արա Մկրտիչեան, Դրօ Մկրտիչեան, Արմէն Լեւոնեան: Նստած՝ Յովսէփ Մկրտիչեան, Շանթ Մանճիկեան, Արօ Մանճիկեան, Ռուբէն Մանճիկեան եւ Բաֆֆի Ներսեսեան

նակցին պատկան ֆետերասիոններու ախոյեանական մրցաշարքերուն: Մասնաճիւղը ունի նաեւ աթլետիզմի, փինկ-փոնկի եւ վոլիպոլի խումբեր: Աթլետիզմի մարզիկները թեքնիք յառաջդիմութիւններ կ'արձանագրեն զանազան մրցումներու ընթացքին:

1988ի եղանակին մասնաճիւղի ֆուլթպոլի խումբը կը տիրանայ Սիտնիի Բ. դասակարգի ախոյեանական մրցաշարքի բաժակին յաջորդ տարեշրջանին փոխադրուելով Ա. դասակարգ: Եղանակի ախոյեանական մրցաշարքերուն կը մասնակցին նաեւ ֆուլթպոլի Բ. խումբը, երիտասարդական խումբը, մինչեւ 14, 12, 10, 9, 8 եւ 7 տարեկաններու խումբերը պատուաբեր արդիւնքներով:

Մարզական խումբերը ամէն տարի կը մասնակցին Շրջանային վարչութեան կազմակերպած Նաւասարդեան խաղերուն:

Սկաուտական գործունէութիւն

1979ին, Սիտնիի աւագ մասնաճիւղի սկաուտական շարքերու ընդհանուր պատկերն է, գայլիկներ՝ 37, արծուիկներ՝ 18, սկաուտներ՝ 28, արենոյշներ՝ 18: Խումբերը կը ղեկավարէ 13 անդամներէ բաղկացող խմբապետական կազմը: Սկաուտական խորհուրդին մաս կը կազմեն՝ Գէորգ Ճանոյեան՝ ատենապետ, Մարկօ Մարտիրոսեան՝ ատենադպրուհի, Յակոբ Նազարեան՝ գանձապահ, Յակոբ Կապոնեան եւ

Սօնա Գարամանեան՝ խորհրդականներ, Գօգօ Խաչատուրեան՝ ընդհանուր խմբապետ: Մայիսին Արթուր Աղամալեան կը միանայ խորհուրդի կազմին:

Սկսած սկսած կազմը իր մասնակցութիւնը կը բերէ Ապրիլ 24ի եւ Մայիս 28ի տօնախմբութիւններուն ուր ներկայ կը գտնուի նաեւ սկսած սկսած նուագախումբը:

Տարիներու ընթացքին բնական աճով մասնաճիւղի սկսած սկսած բաժնի ընդհանուր թիւը 1987ին կը բարձրանայ 175ի:

Մասնաճիւղի սկսած սկսած կազմէն պատուիրակութիւններ մասնակցած են համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ա, Բ, Գ եւ Դ բանակումներուն:

Ամեն տարի Սիտնիի սկսած սկսած կազմը

իր մասնակցութիւնը կը բերէ Աւստրալիոյ Շրջանի սկսած սկսած ընդհանուր բանակումներուն:

Յաջորդական տարիներու սկսած սկսած բեղուն գործունէութեան իբրեւ արդիւնք, 1981ին կը կազմուի Սիտնիի մասնաճիւղի երէց սկսած սկսած փաղանգը որուն մաս կը կազմեն 20 երէցներ:

Մասնաճիւղի սկսած սկսած խորհուրդի նախաձեռնութեամբ 4 Սեպտեմբեր 1988ին տեղի կ'ունենայ «Հայրերու Օր» տօնակատարութիւն Լէյն Քովի քաղաքապետարանի սրահին մէջ խօսք կ'առնեն սկսած սկսած խմբակի կազմէն Արթօ Զարիկեան իսկ վարչութեան կողմէ Վիգէն Քորթեան:



Սիտնիի եւ Արեւմտեան Սիտնիի սկսած սկսած խմբապետական կազմը Ոսքի՝ Վահան Ալեքսանեան, Վարուժան Կիլիսերեան, Պերճ Ինկիլիկեան, Գրիգոր Խաչատուրեան, Յովհաննէս Օհաննէսեան, Արա Օհաննէսեան, Վարդան Վարդանեան: Նստած՝ Ժանէթ Չերքեպեան, Սօնա Տօնելեան, Յովինէ Մկրտիչեան, Անի Զատիկեան, Ալիս Մովսէսեան, Մայրա Նալպանտեան, Թամար Նապարեան:

ՄԵԼՊՈՒՌՆ - ԱՐԱՔՍ

1966ին հիմնուած Հ.Մ.Ը.Մ.ի Մելպուռնի մասնաճիւղը կը շարունակէ իր գործունէութիւնը իբրեւ տեղւոյն մէջ գործող առաջատար հայկական կազմակերպութիւն հրապարակային ձեռնարկներով եւ ազգային տօնախմբութիւններով: Մասնաճիւղի մարզական բաժինը յարատեւ յառաջդիմութեան մէջ է:

1979 տարուայ վարչական կազմի անդամներն են՝

- Ատենապետ՝ Պերճ Թաշճեան
- Ատենադպիր՝ Վահրիճ Վահրիճեան
- Գանձապահ՝ Փայլակ Աղամեան
- Գոյքապահ՝ Պետրոս Ճերեճեան
- Պասքեթպոլի պատասխանատու՝ Սեդրակ Մանուկեան;

Մասնաճիւղի մրջնիկներէն Սիւզան Տօնապետեան՝ եօթը տարեկան յատուկ կարողութիւններով օժտուած լողորդուհի մըն է: Իր յարատեւ փորձերուն արդիւնքով ան 1981ին կը տիրանայ իր դասակարգի Վիգթորիա նահանգի ախոյեանութեան:

11 Ապրիլ 1982ի Մելպուռնի մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը ընտրեց նոր վարչական կազմ՝

- Ատենապետ՝ Փայլակ Աղամեան
- Ատենադպիր՝ Վահրիճ Վահրիճեան
- Գանձապահ՝ Օննիկ Եսայեան
- Գոյքապահ՝ Սարգիս Հաւանճեան
- Մարզական պատասխանատու՝ Սեդրակ Մանուկեան:

Մասնաճիւղը կը շարունակէ պահել պասքեթպոլի երեք խումբեր եւ վոլիպոլի խումբ մը: Տղոց երէց խումբը կը մասնակցի Մելպուռնի Լիկի մրցաշարքին:

5 Նոյեմբեր 1983ին մասնաճիւղը կը տօնէ Միութեան հիմնադրութեան 65ամեակը պաշտօնական ճաշկերոյթով մը որուն կը մասնակցին 320 հիւրեր: Օրուան նախագահութիւնը կը ստանձնեն տէր եւ տիկին Գէորգ Թաշճեան

իսկ օրուայ պատգամախօսն է Յովհաննէս Մարտոյեան:

17 Մարտ 1985ին, մասնաճիւղի 19րդ անդամական ընդհանուր ժողովը նոր տարեշրջանի մասնաճիւղի վարչութեան անդամներ ընտրեց՝

- Ատենապետ՝ Փայլակ Աղամեան
- Ատենադպիր՝ Վահրիճ Վահրիճեան
- Գանձապահ՝ Սարգիս Հալաճեան
- Գոյքապահ՝ Վարդան Մարտիրոսեան
- Մարզական պատասխանատու՝ Սեդրակ Մանուկեան:

1985ին Մասնաճիւղի սղոց եւ աղջկանց պասքեթպոլի խումբերը կը տիրանան «Ապրիլեան բաժակի» եւ Ֆետերասիոնի կազմակերպած մրցաշարքերու ախոյեանութեանց: Խումբերու մարզիչներն են Պետօ Գաբլանեան եւ Էտի Զաքարեան:

16 Մարտ 1986ին մասնաճիւղի 20րդ անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ՝

- Ատենապետ՝ Պետօ Աղամեան
- Ատենադպիր՝ Վարդան Մարտիրոսեան
- Գանձապահ՝ Զարեհ Հալաճեան
- Մարզական պատասխանատուներ՝ Պետօ Գաբլանճեան եւ Սեդրակ Մանուկեան:

Մասնաճիւղը այս տարեշրջանին կը նշէ իր հիմնադրութեան 20ամեակը հրապարակային հանդէսով եւ ճաշկերոյթ պարահանդէսով: Մարզական խումբերը թիւով եւ որակով յառաջդիմութիւններ կ'արձանագրեն: Տարեվերջին մասնաճիւղը կը հիւրընկալէ Միջ-մասնաճիւղային 20րդ Նաւասարդեան խաղերը:

Մասնաճիւղի 21րդ անդամական ընդհանուր ժողովը 29 Մարտ 1987ին կը վերընտրէ 1986ի կազմը բացի Պետօ Գաբլանճեանէ որ կը փոխարինուի Մովսէս Գոճատելեանով: 1987ը ընթացիկ գործունէութեան յաջող տարեշրջան մըն է յատկապէս նիւթական բաժինով որ կը ներկայանայ հետեւեալ պատկերով.-

- Ընդհանուր մուտք՝ 61.786 եւ
- Ընդհանուր ելք՝ 47.605 աւստրալիական սոլար:

Սկաուտական գործունեություն

Հ.Մ.Ը.Մ.ի Մելպուռնի մասնաճիւղի սկաուտական բաժինը վերսկսած է գործել 1984ի տարեվերջին կազմակերպուած բանակումով: Այս առթիւ Մելպուռն այցելեց Աւստրալիոյ Շրջանային վարչութեան ատենադպիր՝ Արթուր Աղամալեան: Խումբը կը բաղկանայ սկաուտական շարքերու զանազան բաժիններու 40 անդամներէ: Աստիճանաւորական կազմի անդամներն են Վարդգէս Արզումանեան՝ ընդհ. խմբապետ, Վարդան Մարտիրոսեան, Վիգէն Հայրիկեան, Վիգի Աղամեան, Արսինէ Զագարեան, Անի Հայկազեան եւ Սիլվա Մարտիրոսեան:

13-15 Փետրուար 1987ին տեղի կ'ունենայ տարեկան Գ. ընդհանուր բանակումը:

Տարիներու ընթացքին հետզհետէ զարգանալով 1988ին ընդհանուր թիւը կը հասնի 60ի: Այս միջոցին սկաուտական բաժինը կ'ունենայ իր նուագախումբը: Տարեկան ընդհանուր բանակումները կը կայանան հերթական դրութեամբ:

11-13 Մարտ 1989ին տեղի կ'ունենայ մասնաճիւղի տարեկան ընդհանուր բանակումը Gillwell Park Gembrookի պատմական բանակավայրին մէջ ուր 1941ին բանակած է միջագային սկաուտական շարժումի հիմնադիր՝ Պէյալըն Փաուլը:

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՍԻՏՆԻ - ՆԱԻԱՍԱՐԴ

Արեւմտեան Սիտնիի մասնաճիւղը կը գտնուի Ֆեյրֆիլտ շրջանին մէջ եւ կը կրէ Նաւասարդ անունը:

1976էն սկսեալ Սիտնիի արեւմտեան շրջանի հայ բնակչութեան թիւը արագօրէն կ'աճի օգտուելով շրջանին մէջ նոր եւ մասօջի գիներով բնակարաններու գոյութիւնէն:

Արեւմտեան Սիտնի փոխադրուած Հ.Մ.Ը.Մ.ականներ Շրջանային վարչութեան քաջա-

լերանքով 1977ին կը հիմնեն Աւստրալիոյ 3րդ մասնաճիւղը:

13 Մայիս 1979ին մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ՝

- Ատենապետ՝ Կիրակոս Պազալեան
- Փոխ ատենապետ եւ ատենադպիր՝ Գառնիկ Պետրոսեան
- Գանձապահ՝ Ռաֆայէլ Յակոբեան
- Մարզական պատասխանատու՝ Փիէռ Սպունճեան
- Գոյքապահ՝ Կարպիս Պազալեան
- Սկաուտ պատասխանատու՝ Յովհաննէս Մարտոյեան:

Մասնաճիւղը հետզհետէ կը զօրանայ իր մարզական եւ սկաուտական բաժիններով: Մասնաճիւղի հիմնադրութեամբ Աւստրալիա կ'ամբողջացնէ շրջանային կառոյց ունենալու կանոնադրային պայմանը եւ Դեկտեմբերին, մասնաճիւղի ներկայացուցիչները կը մասնակցին Շրջանային Ներկայացուցչական անդրանիկ ժողովին:

1 եւ 16 Մարտ 1981ին, զոյգ հանգրուաններով տեղի կ'ունենայ մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողով որուն վերջին օրակարգով 1981 տարուայ վարչութեան անդամներ կ'ընտրուին՝

- Ատենապետ՝ Կիրակոս Պազալեան
- Ատենադպիր՝ Զարեհ Յովասափեան
- Գանձապահ՝ Պետիկ Գայսերեան
- Գոյքապահ՝ Կարպիս Շիշոյեան
- Սկաուտ պատասխանատու՝ Արա Օհաննէսեան

Մարզական պատասխանատուներ՝ Տիգրան Հովիւեան եւ Վրէժ Մելիքեան:

Մասնաճիւղը կը պահէ պասքեթպոլի աղջկանց եւ սղոց խումբեր: Վերջինս 1981ի եղանակի աւարտին պասքեթպոլի լիկի Դ. դասակարգէն կը բարձրանայ Բ. դասակարգ:

1982 տարեշրջանի վարչութեան կազմի անդամներն են՝

Ատենապետ՝ Զարեհ Յովասափեան
Փոխ ատենապետ՝ Պետիկ Գոյսերեան
Ատենադպիր՝ Տիգրան Հովիւեան
Գանձապահ՝ Վաղարշակ Պալապանեան
Գոյքապահ՝ Ռաֆայէլ Յակոբեան
Սկառուտ պատասխանատու՝ Արա Օհան-
նէսեան

Մարզական պատասխանատու՝ Փիէռ Սա-
պունճեան:

1986-87 տարեշրջաններուն պասքեթպոլի
կողքին մասնաճիւղի մարզիկներ կը սկսին կի-
րարկել ֆութպոլ կրտսերներու խումբի մը
կազմութեամբ:

Վարչութիւնը կը ձեռնարկէ սեփական

ակումբի մը գնման աշխատանքին իր սնտու-
կէն այս նպատակին համար կատարելով կա-
րելոր ներդրում:

Թէեւ փոքրաթիւ սակայն աշխուժ գործու-
նէութեամբ մասնաճիւղը կը շարունակէ գոր-
ծել մարզական եւ սկառուտական ճիւղերով:
1988ին անդամներու ընդհանուր թիւն է 70:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՍԻՏՆԻ -ԿԱՄՔ

Աւստրալիոյ չորրորդ մասնաճիւղի՝ Հ.Մ.
Ը.Մ.ի Արեւելեան Սիտնիի հիմնադրութիւնը
տեղի ունեցաւ 1981ի Յուլիս 19ին կայացած
պաշտօնական թէյասեղանի մը ընթացքին:



Շրջանային Վարչութեան ատենապետ Վազգէն Փայլակեան Հ.Մ.Ը.Մ.ի դրօշակը կը յանձնէ
Արեւելեան Սիտնիի նորակազմ մասնաճիւղի ատենապետ՝ Սարգիս Տէր Պետրոսեանին,
աջին Շրջանային Վարչութեան քարտուղար՝ Յովհաննէս Մարտոյեան:

Հաւաքոյթը կազմակերպուած էր Արեւելեան Սիտնիի մասնաճիւղի կազմութեան համար նշանակուած յանձնախումբին կողմէ: Յանձնախումբի ատենապետ՝ Սարգիս Տէր Պետրոսեան պարզելէ ետք Հ.Մ.Ը.Մ.ի նպատակը յայտնեց թէ արդէն 50է աւելի նորագիր անդամներ մարզական փորձերով սկսած են մասնաճիւղի գործունէութեան: Աւստրալիոյ Շրջանային վարչութեան ատենապետ՝ Վազգէն Փայլակեան իր կարգին հաստատեց Արեւելեան Սիտնիի մասնաճիւղի կազմութիւնը եւ Շրջանային վարչութեան ամբողջական զօրակցութիւնը խոստացաւ նորակազմ մասնաճիւղի յաջողութեան համար:

7 Նոյեմբեր 1981ին տեղի ունեցաւ մասնաճիւղի հիմնադրութեան պաշտօնական հանդիսութիւնը որուն ընթացքին Աւստրալիոյ Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային վարչութեան ատենապետ՝ Վազգէն Փայլակեան մասնաճիւղի դրօշակը յանձնեց Արեւելեան Սիտնիի վարչութեան ատենապետ՝ Սարգիս Տէր Պետրոսեանին: Մասնաճիւղի վարչութեան մնացեալ անդամներն են՝ Կարօ Քիրիչեան, Երեմ Շահինեան, Յարութ Հինդլեան, Յակոբ Տէր Պետրոսեան, Արմանտօ Ֆերհատեան եւ Կարպիս Նիկողոսեան:

Մասնաճիւղը կը կիրարկէ պասքեթպոլ, փինկ-փոնկ եւ սկաուտութիւն: Անդամներու ընդհանուր թիւն է 85:

16 Մարտ 1986ին կ'ընտրուի մասնաճիւղի նոր վարչական կազմ:

Տարեշրջանի ընթացքին մարզական բեղուն գործունէութիւն կ'արձանագրեն մարզական բոլոր խումբերը որոնք կը մասնակցին պասքեթպոլի ֆետերասիոնի կազմակերպած մրցաշարքերուն: Կրտսեր տղոց խումբը կը հանդիսանայ 2րդ իսկ երէցները կը գրաւեն 3րդ դիրքը: Աթլետիզմի բաժնին մէջ եւս՝ մասնաճիւղի մարզիկները կ'արձանագրեն թեքնիք յաջողութիւններ: Սկաուտական շարքերը կը մասնակցին տարեկան բանակումներուն: Շարքերու ընդհանուր թիւն է 115: Մարզական եւ սկաու-

տական գործունէութեանց կողքին մասնաճիւղը կազմակերպած է ընկերային հաւաքոյթներ, պարանցիկ երեկոներ հայրերու եւ մայրերու օրուայ հանդիսութիւններ եւ թատերական երեկոներ շրջանի հայութեան ուշադրութիւնը միշտ կեդրոնացած պահելով իր գործունէութեան վրայ:

1987 տարուայ գործունէութիւնը կը շարունակուի նոյն թափով: Վարչութիւնը կը շարունակէ հրատարակել «Նաւասարդ» անունով եռամսեայ թերթը որուն աշխատանքները կը ստանձնէ երէց սկաուտներու խումբը: Այս տարեշրջանի վարչութեան դիւանին մաս կազմած են Սարգիս Տէր Պետրոսեան՝ ատենապետ Նուպար Պապիկեան՝ ատենադպիր եւ Ժ. Չոփուրեան՝ գանձապահ:

1988ին անդամներու ընդհանուր թիւը 254 է որոնցմէ շուրջ 100ը սկաուտական շարքերէն:

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՍԻՏՆԻ -ԱՐԱՐԱՏ

Հիւսիսային Սիտնիի Արարատ մասնաճիւղը հիմնուած է 1989ին: Նախապէս շրջանին մէջ կը գործէր Արարատ Մարզական Միութիւնը որուն ղեկավարութեան հետ համախորհուրդ Հիւսիսային Սիտնիի մասնաճիւղը կը կայացնէ իր անդրանիկ անդամական ընդհանուր ժողովը:

Ընտրեալ առաջին վարչութեան մաս կը կազմեն, Ասիկ Ասատուրեան, Շահէն Վարդանեան, Վիգէն Իսկանտարեան, Վաչիկ Վարդանեան, Արմոնտ Միրզոյեան եւ Ռազմիկ Յարութիւնեան:

Նորակազմ մասնաճիւղը կը գործէ շրջանի հայ կեդրոնին մէջ մարզական եւ սկաուտական բաժնիներով: Կազմակերպական զօրաւոր հիմերու վրայ դրուած Աւստրալիոյ Հ.Մ.Ը.Մ.ի այս հինգերորդ մասնաճիւղը շուտով իր կարեւոր դերը կ'ունենայ նաեւ ազգային գետնի վրայ իր ապահոված նուաճումներով:

Մասնաճիւղի գործունէութեան մասին աւելի լայն տեղեկութիւններ պիտի ունենանք Դ. հատորի իր գլուխին տակ:

Շրջանային կազմակերպական գործունէութիւն

Աւստրալիոյ Շրջանային կառոյցի կազմութիւնը պաշտօնապէս կ'իրականանայ 26 Դեկտեմբեր 1979ին կայացած անդրանիկ Շրջանային ներկայացուցչական ժողովով: Ժողովին իր մասնակցութիւնը կը բերէ Կեդրոնական Վարչութեան ատենապետ Վարդգէս Տէր Կարապետեան որուն բացման խօսքէն ետք ժողովի դիւանի անդամներ կ'ընտրուին, ատենապետ՝ Յակոբ Մկրտիչեան, ատենադպիր՝ Յակոբ Զարացեան: Յաջորդական տեղեկագրական զեկուցումներով խօսք կ'առնեն Սիւնիի վարչութեան ատենապետ՝ Պերճ Մոմճեան, Մելպուռնի մասնաճիւղի ատենադպիր Փայլակ Աղամեան, Արեւմտեան Սիւնիի մասնաճիւղի ատենապետ՝ Կիրակոս Պազայեան եւ Արսէն Հեքիմեան որ կը զեկուցէ Գամպէրայի մէջ մասնաճիւղի մը հիմնադրութեան փորձի մասին:

Ժողովը կը քննէ նաեւ Շրջանի ներքին կանոնադրութեան մշակման պարագան որուն համար կ'ընտրուի յատուկ յանձնախումբ մը բաղկացած հետեւեալ անդամներէն. Պերճ Մոմճեան, Շանթ Աւագեան, Պերճ Թաշճեան, Յակոբ Զարացեան եւ Գօգօ Խաչատուրեան:

Ժողովի վերջին օրակարգով կ'ընտրուի Աւստրալիոյ Շրջանի անդրանիկ Շրջանային վարչութեան կազմը՝ բաղկացած հետեւեալ անդամներէն. - Զաւէն Բրուտեան, Վազգէն Փայլակեան, Արթուր Աղամալեան, Րաֆֆի Խրլոբեան եւ Յովհաննէս Մարտոյեան:

Այս կազմի քաջալերանքով Շրջանը 1981ին կ'ուսնանայ իր չորրորդ՝ Արեւելեան Սիւնիի մասնաճիւղը:

31 Յունուար 1982ին տեղի կ'ուսնանայ Աւստրալիոյ Շրջանային Բ. ներկայացուցչական ժողովը: Քննելէ ետք անդրանիկ Շրջանային վարչութեան 1980-81 տարեշրջանի գործունէութիւնը ժողովի կողմէ վերընտրուած կազմը իր աշխատանքի բաժանումները կը կատարէ հետեւեալ կերպով. -

Ատենապետ՝ Վազգէն Փայլակեան
Ատենադպիր՝ Յովհաննէս Մարտոյեան
Գանձապահ՝ Զաւէն Բրուտեան
Սկառու պատասխանատու՝ Արթուր Աղամալեան
Մարզական պատասխանատու՝ Րաֆֆի Խրլոբեան:

29 Յունուար 1984ին կ'ընտրուի Աւստրալիոյ նոր Շրջանային վարչական կազմ. Ատենապետ՝ Յովհաննէս Մարտոյեան
Ատենադպիր՝ Արթուր Աղամալեան
Գանձապահ՝ Անդրանիկ Բանոյեան
Մարզական պատասխանատու՝ Արմանու Ֆերհատեան

Խորհրդական՝ Պերճ Թաշճեան:

1985ի Ապրիլին վարչութեան ատենապետը կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի միջ-դիւանային առաջին խորհրդաժողովին Միլանոյի մէջ:

Ապրիլին Եղեռնի 70ամեակը կը նշուի պասքեթպոլի մրցաշարքով մը որուն կը մասնակցին Շրջանի 4 մասնաճիւղերու երկսեռ խումբերը: Ապրիլ 24ի քայլարշաւը եւ ծաղկեպսակի զետեղումը տեղի կ'ուսնան շուրջ 2000 հայորդիներու մասնակցութեամբ: Դեկտեմբերին տեղի կ'ուսնան Նաւասարդեան խաղերը Սիւնիի մէջ:

9 Փետրուար 1986ին Շրջանային Գ. ներկայացուցչական ժողովին կողմէ կ'ընտրուի Աւստրալիոյ նոր Շրջանային վարչութիւն՝

Ատենապետ՝ Յովհաննէս Մարտոյեան
Ատենադպիր՝ Զաւէն Բրուտեան
Գանձապահ՝ Անդրանիկ Բանոյեան
Սկառուական պատասխանատու՝ Շանթ Աւագեան
Խորհրդական՝ Փայլակ Աղամեան:

Այս կազմի իրականացումներէն պիտի ըլլային Աւստրալիոյ Շրջանէն պատուիրակութեան մը մասնակցութիւնը համագաղութային Գ. ընդհանուր բանակումին 10-21 Օգոստոս 1986ին Լոնտոն:

Այս կազմի իրականացումներէն պիտի ըլլային Աւստրալիոյ Շրջանէն պատուիրակութեան մը մասնակցութիւնը համագաղութային Գ. ընդհանուր բանակումին 10-21 Օգոստոս 1986ին Լոնտոն:

1986ի Դեկտեմբերին Մելպուռնի մէջ, իսկ 1987ի Դեկտեմբերին Սիանիի մէջ տեղի կ'ունենան Նաւասարդեան 20րդ եւ 21րդ խաղերը:

Աւստրալիոյ Հ.Մ.Ը.Մ.ի 1986-87 տարեշրջանի Շրջանային վարչական կազմի անդամներն են՝ Ատենապետ՝ Յովհաննէս Մարտոյեան Ատենադպիր՝ Զաւէն Բրուտեան Գանձապահ՝ Անդրանիկ Բանոյեան Խորհրդականներ՝ Շանթ Աւագեան եւ Փայլակ Ադամեան:

Աւստրալիոյ 5րդ Շրջանային վարչութիւնը կ'ընտրուի 13 Փետրուար 1988ին հետեւեալ կազմով.-

Ատենապետ՝ Պերճ Մոմճեան
Ատենադպիր՝ Շանթ Աւագեան

Գանձապահ՝ Անդրանիկ Բանոյեան
Խորհրդականներ՝ Յարութիւն Քէօշկէրեան եւ Փայլակ Ադամեան:

Այս կազմը բացի աւանդական նախաձեռնութիւններէն, կը կազմակերպէ Հայաստանի երկրաշարժի աղետեալներու օժանդակութիւն հասցնելու աշխատանք եւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 70ամեակի տօնակատարութիւն: Շրջանէն Լեւոն Պալքանեան եւ Արա Օհաննէսեան կը մասնակցին համագաղութային սկստական Բ. համագումարին Լոս Անճելըսի մէջ:

24-27 Մարտ 1989ին Շրջանային վարչութեան ատենապետ՝ Պերճ Մոմճեան Լոնտոնի մէջ Շրջանը կը ներկայացնէ դիւաններու համագաղութային Բ. խորհրդաժողովին:



Աւստրալիոյ Շրջանային Դ. Ներկայացուցչական Ժողովին մասնակցող ներկայացուցիչներու խմբանկար՝ 1987

1989ին Շրջանի անդամներու ընդհանուր թիւն է 990 որոնցմէ 411ը սկառուտական շարքերէն:

Շրջանային Մարզական Գործունէութիւն

Աւստրալիոյ մէջ մասնաճիւղային նաւասարդեան խաղերը որոնք սկսած են 1967էն սկսեալ Սիտնիի եւ Մելպուռնի մասնաճիւղերու մասնակցութեամբ շարունակուած են իւրաքանչիւր տարեվերջին հետզհետէ հիմնուած նոր մասնաճիւղերու խումբերուն մասնակցութեամբ:

Խաղերուն մասնակցող մարզիկները եւ խումբերու թիւերը արձանագրած են մնայուն աճ: Նոյնը եղած է մարզաձեւերուն պարագային:

22-26 Դեկտեմբեր 1979ին տեղի կ'ունենան Շրջանի 12րդ միջ-մասնաճիւղային մրցումները Սիտնիի մասնաճիւղի կազմակերպութեամբ: Այս խաղերուն ներկայ կը գտնուի Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան ատենապետ Վարդգէս Տէր Կարապետեան: Ֆուտպոլի, վոլիպոլի, փինկ-փոնկի եւ պասքեթպոլի մրցաշարքերուն կը մասնակցին Սիտնիի, Արեւմտեան Սիտնիի եւ Մելպուռնի մասնաճիւղերու խումբերը: Տեղի կ'ունենան նաեւ աթլետիք խաղեր եւ սկառուտական հանդէս: Պասքեթպոլի մրցաշարքի տղոց եւ աղջկանց խումբերու ախոյեանութեան կը տիրանան Մելպուռնի մասնաճիւղի խումբերը: Ֆուտպոլի մրցումները կ'աւարտին Սիտնիի մեծերու եւ կրտսերներու խումբերու յաղթանակով: Վոլիպոլի ախոյեանութեան կը տիրանայ Մելպուռնի մասնաճիւղը: Խաղերը կը փակուին ընդհանուր տողանցքով եւ ճաշկերոյթ պարահանդէսով:

1980ին եւ 1981ի միջ-մասնաճիւղային խաղերը տեղի ունեցած են յաջորդաբար Սիտնիի եւ Մելպուռնի մէջ:

1988ին խաղերուն մասնակցած են շրջանի չորս մասնաճիւղերու ֆուտպոլի մեծերու եւ կրտսերներու խումբերը, պասքեթպոլի տղոց

եւ աղջիկներու զոյգ դասակարգերու խումբեր, վոլիպոլի երէց տղոց եւ երէց աղջկանց խումբեր, փինկ-փոնկի տղոց եւ աղջկանց զոյգ դասակարգերու խումբերը, աթլետիզմի տղոց եւ աղջկանց մարզիկները:

Նաւասարդեան խաղերու իսկական փառատօն մը որ կ'եզրափակուի մարզիկներու եւ սկառուտական խումբերու ընդհանուր տողանցքով հիւսիսային Սիտնիի մասնաճիւղի սկառուտական նուագախումբի առաջնորդութեամբ: Խաղերու աւարտին տեղի ունեցած է յաղթանակի պարահանդէս:

25էն 28 Դեկտեմբեր 1984ին նաւասարդեան խաղերը տեղի կ'ունենան Մելպուռնի մէջ: Հետզհետէ այս խաղերուն մասնակիցներու աճով այս խաղերուն կը մասնակցին 4 մասնաճիւղերէն աւելի քան 300 մարզիկներ:

1էն 7 Յունիս 1985ին Աւստրալիոյ Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցչական խումբը կը մասնակցի համագաղութային Բ. խաղերուն՝ Լոս Անճելըսի մէջ կայացող ֆուտպոլի մրցաշարքին:



1983, 17րդ Միջ-մասնաճիւղային խաղերուն յաղթանակի բաժակ կը յանձնէ Յովհաննէս Մարտոյեան

1987ի Յունիսէն սկսեալ Շրջանային վարչութիւնը կը ձեռնարկէ համագաղութային Գ. խաղերու կազմակերպութեան նախապատրաստական աշխատանքներուն պասքէթպոլի մրցաշարքով մը: Այս աշխատանքները կը տեւեն մինչեւ 1988ի Մարտ ամիսը երբ Շրջաններու մասնակցութեան վերջնական եւ դրական պատասխանները չունենալով Շրջանային վարչութիւնը կը դադրեցնէ նախապատրաստական աշխատանքները եւ այս մասին տեղեակ կը պահէ Կեդրոնական Վարչութիւնը:

25-28 Դեկտեմբեր 1987ին տեղի կ'ունենան Նաւասարդեան 21րդ խաղերը Սիտնիի մէջ:

22րդ Նաւասարդեան խաղերը տեղի կ'ունենան Մելպուռնի մէջ 1988ին:

Շրջանային Սկաուտական Գործունէութիւն

1979էն սկսեալ Աւստրալիոյ Շրջանային վարչութիւնը կը կազմակերպէ Շրջանային ընդհանուր բանակումներ մասնակցութեամբ Շրջանի բոլոր մասնաճիւղերու սկաուտական խումբերուն: Ընդհանուր բանակումները տեղի ունեցած են Դեկտեմբեր ամիսներու երկրորդ կէսերուն իւրաքանչիւր անգամ մասնաճիւղերէն մէկուն շրջանին մէջ:

19էն 22 Դեկտեմբեր 1981ին տեղի կ'ունենայ Աւստրալիոյ Շրջանի Գ. ընդհանուր բանակումը «Լորտ Պէյտըն Փաուըլ» բանակավայրին մէջ մասնակցութեամբ Սիտնիի, Արեւմտեան Սիտնիի եւ Մելպուռնի 175 սկաուտներու, արենոյշներու, գայլիկներու եւ արծուիկներու:



1983, Հ.Մ.Ը.Մ.ի 65ամեակի նուիրուած խաղերէն վապքի մրցումներ

Չորս օրերու վրայ բաժնուած յայտագրին մաս կը կազմեն ձեռային աշխատանքներ, դասախօսութիւններ եւ խարուկահանդէս որուն աւարտին Շրջանային վարչութեան ատենապետ Յովհաննէս Մարտոյեան խօսք կ'առնէ եզրակացնելով. «...հիներու աւանդով պրահաւորուած եւ ներկայի երիտասարդական աշխուժութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ. կը շարունակէ հայութեան գոյապայքարը»:

17էն 21 Դեկտեմբեր 1982ին, «Ինկըլսայտ» բանակավայրին մէջ, Սիտնիի արեւելեան, արեւմտեան եւ հիւսիսային մասնաճիւղերէն 200 արի-արեւոյճներ, գայլիկ-արծուիկներ եւ երէց-պարմանոհներ մասնակցած են արշաւներուն, խաղերուն եւ դասախօսութիւններուն: Ծնողական խորհուրդի տիկիները պատրաստած են ճաշերը: Շրջանային վարչութեան անդամներ դասախօսած են միութենական, ազգային եւ առողջապահական զանազան նիւթերով:

Աւստրալիոյ Շրջանային վարչութեան նախաձեռնութեամբ, Շրջանի մասնաճիւղերու

սկառուտական խումբերը Մայիս 28 անկախութեան տօնին առթիւ մասնակցած են տողանցքներու եւ ծաղկեպսակ զետեղած «անծանօթ զինուոր»ի յուշարձանին առջեւ:

Մայիս 28ի 65րդ տարեդարձի նշումը տեղի ունեցած է 29 Մայիս 1983ին մասնակցութեամբ 250 սկառուտներուն: Տողանցքին հետեւած են թիւով 1000 հայեր:

Ազգային եւ հրապարակային հաւաքներ

Աւստրալիոյ Շրջանային վարչութիւնը նախաձեռնած է նաեւ 24 Ապրիլի Եղեռնի յիշատակութեան տօն քայլարշաւներու մասնակցութեամբ մասնաճիւղերու սկառուտական կազմերուն: 28 Ապրիլ 1985ի յիշատակութեան տօնը տեղի կ'ունենայ Ուին Եարտ Փարքին մէջ առաջնորդութեամբ 1915ին եղեռնէն վերապրող հայրիկներու եւ մամիկներու:

8 Յուլիս 1987ին Շրջանը կ'ընդունի Գարեգին Բ. Կաթողիկոսի այցելութիւնը:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ՀԱՐԱԻԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

– ՆԵՐԱԾԱԿԱՆ

ԱՐԺԱՆԹԻՆ

– ՊՈՒԷՆՈՍ-ԱՅՐԷՍ

– ԳՈՐՏՈՊԱ


– ՎԱԼԱՆԹԻՆ ԱԼՍԻՆԱ

ՈՒՐՈՒԿՈՒԷՅ

– ՄՈՆԹԷՎԻՏԷՅ

ՊՐԱԶԻԼ

– ՍԱՆ ՓԱՈՒԼՕ



Ներածական

Հ.Մ.Ը.Մ.ը Հարաւային Ամերիկայի մէջ առաջին անգամ ոտք դրած է Արժանթինի մայրաքաղաք Պուէնոս Այրէսի մէջ, 1927ին:

Տարիներու անխոնջ աշխատանքով Միութեան մասնաճիւղեր հաստատուած են Վալենթին Ալսինայի, Գորտոպայի, Ուրուկուէյի մայրաքաղաք Մոնթէվիտէոյի եւ Պրազիլիոյ Սան Փաուլօ քաղաքին մէջ:

Շրջանի գործունէութեան գլխաւոր առանցքը կը կազմեն աւանդական «Նաւասարդեան խաղեր»ը որոնք առաջին անգամ կազմակերպուած են 25 Դեկտեմբեր 1938ին Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան քսանամեակին առիթով:

Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կառոյցի կազմութեան նախօրեակին Պուէնոս - Այրէսի մասնաճիւղը հաւանութիւն կը յայտնէ Պատգամաւորական Ա. ընդհանուր ժողովին մասնակցելու մէկ ներկայացուցիչով, որ սակայն յարգելի պատճառներով կը բացակայի:

Կեդրոնական Վարչութեան առաջին կազմին մէջ Շրջանը կ'ունենայ իր ներկայացուցիչը յանձին Պարգեւ Պարսամեանի:

ԱՐԺԱՆԹԻՆ

ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ

29 Մարտ 1980ին, Պուէնոս Այրէսի մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ Ատենապետութեամբ՝ Ճորճ Տաղլեանի եւ անդամակցութեամբ Յարութիւն Յովհաննէսեանի

Ճ. Տէմիրճեանի, Ա. Տէր Ստեփանեանի, Տոքթ. Գարլոս Պէրպէրեանի (Փոխ ատենապետ) Ս. Էօրէճեանի, Կարպիս Սուրեանի, Տոքթ. Էդուարդ Խաչերեանի, Ռիքարտո Գուլթնուլեանի Ա. Գուլուճեանի եւ Մ. Մանուկեանի: Փոխ վարչականներն են՝ Սմբատեան, Քեչեպաշեան եւ Ահարոնեան: Հաշուեքննիչ յանձ-

նախուժբի անդամներ՝ Արսէն Թերզեան եւ Գարլոս Մարգարեան:

1981ի Հոկտեմբեր 3էն մինչեւ 15 Նոյեմբեր վարչութիւնը կը կազմակերպէ աւանդութիւն դարձած Հարաւային Ամերիկայի Նաւասարդեան խաղերը որուն իրենց մասնակցութիւնը կը բերեն շրջանի բոլոր հայ վարժարաններու աշակերտութիւնը, հայ մարզական երիտասարդական եւ հայրենակցական միութիւններու կազմերը ինչպէս նաեւ Մոնթէվիտէոյի եւ Գորտոպայի մասնաճիւղերու մարզական խումբերը: Նոյն յայտագրով տեղի կ'ունենան նաեւ Սբ. Պատարագ, մատաղօրհնէք, խաղերու աւարտին մրցանակաբաշխութիւն եւ Մարզիկի պարահանդէս:

19 Նոյեմբերին մասնաճիւղը կը կատարէ Ռամոս Մեխիայի վերանորոգուած լողաւազանի վերաբացումը ամառնային եղանակին օգտագործուելու նպատակով:

9 Ապրիլ 1983ին, տեղի կ'ունենայ մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողով որուն վերջին օրակարգով ընտրուած վարչութեան մաս կը կազմեն.-

Ատենապետ՝ Խորխէ Միրիճեան
Փոխ Ատենապետ՝ Արթուրօ Յովհաննէսեան

Ընդհ. քարտուղար՝ Աբրահամ Ահարոնեան
Փոխ քարտուղար՝ Մանուկ Մանուկեան
Գանձապահ՝ Գարլոս Տէր Ստեփանեան
Փոխ գանձապահ՝ Խուան Գուլթնուլեան
Խորհրդականներ՝ Ալպերթօ Հալաճեան, Ռուբէն Գոճայեան, Ռիքարտօ Գուլթնուլեան, Կարպիս Սուրեան եւ Յարութիւն Ծառուկեան
Փոխ խորհրդականներ՝ Դանիէլ Սապադտանեան, Էտուարտօ Կրկրեան եւ Մարթին Փոթիկեան

Հաշուեքննիչներ՝ Ներսէս Քիւրքճեան եւ Խուան Զասատուրեան:

Տարուայ կարեւորագոյն իրականացումը կը հանդիսանայ «Արմենիա» կեդրոնի Մարգար Մարգարեան մարզարանին մէջ մարզական գործունէութեան կազմակերպումը նկատի ու-

նենալով մասնաճիւղի մէջ կիրարկուող բազմազան մարզաձեւերը՝ պասքեթպոլ, թենիս, վոլիպոլ, հենտպոլ, քարաթէ, փինկ-փոնկ, աթլեթիզմ տղոց եւ աղջկանց զոյգ բաժիններով:

Ընթացիկ ձեւով կը կայանան Նաւասարդեան խաղերը, տիկնաց յանձնախումբի թէյասեղան-նորաձեւութեան ցուցադրութիւն: 13 Նոյեմբերին մայրաքաղաքի Խոսէ Մորմոլ թաղի մէկ մասը ուր կը գտնուի Արմէնիա կեդրոնը, պաշտօնական արարողութեամբ կը կոչուի Արմէնիա թաղ:

1984 տարուայ վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Արթուրօ Յովհաննէսեանը:

1985 տարուայ Նաւասարդեան խաղերու

փակման հանդիսութիւնը տեղի կ'ունենայ Կիրակի 24 Նոյեմբերին ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան ատենապետ Վարդգէս Տէր Կարապետեանի:

30 Ապրիլ 1987ին, մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչական կազմը կը ներկայանայ հետեւեալ ձեւով. Ատենապետ՝ Արթուրօ Յովհաննէսեան Փոխ ատենապետ՝ Մանուկ Մանուկեան Ատենադպիր՝ Էսկարսիօ Գէորգեան Փոխ ատենադպիր՝ Ալպերթօ Հալաճեան Գանձապահ՝ Ռուբէն Պաշեան Փոխ գանձապահ՝ Գրիգոր Խաչատուրեան Խորհրդակիցներ՝ Ռուբէն Գոճայեան,



Պատգամաւորական Բ. Ընդհանուր ժողով ուտքի՝ Պուէնոս Ալրէսի պատգամաւոր՝ ձորձ Տաղլեան, անոր աջին՝ Գարլոս Մարգարեան

Գրիգոր Գուլումբեան, Գարլոս Սեֆերեան, Յարութիւն Ծառուկեան, Ռիգարտո, Թիւֆէնքճեան եւ Արթուրո Տէր Յակոբեան

Հաշուեքննիչներ՝ Յովհաննէս Պաղտասարեան եւ Ռուբէն Նաքքաշեան:

Վարչութիւնը իր կողքին կը նշանակէ մարզական ճիւղերու յանձնախումբեր (վոլիպոլ, ֆուտպոլ, հէնտպոլ, թենիս, լող): Կը կազմակերպէ Նաւասարդեան աւանդական խաղերը մասնակցութեամբ հայ վարժարաններու աշակերտութեան:

Տարուայ գլխաւոր ձեռնարկը կ'ըլլայ մասնաճիւղի հիմնադրութեան 60ամեակի սոնակատարութիւնը: 23 Հոկտեմբեր 1987ին, Լիպերթասօր պանդոկին մէջ ճաշկերոյթ պարահան-

դէսով մը կը նշուի սոյն 60ամեակը ներկայութեամբ կեդրոնական վարչութեան ատենապետ՝ Տոքթ. Միսաք Արզումանեանի:

29 Ապրիլ 1988ին տեղի կ'ունենայ մասնաճիւղի տարեկան անդամական ընդհանուր ժողով ուր կ'ընտրուի 1988-89 տարեշրջանի վարչութիւն հետեւեալ կազմով.-

Ատենապետ՝ Արթուրո Յովհաննէսեան
Փոխ ատենապետ՝ Յարութիւն Ծառուկեան
Քարտուղար՝ ճարտ. Բետրո Թադէոսեան
Փոխ քարտուղար՝ Գարլոս Սեֆերեան
Գանձապահ՝ Կրէկորիո խաչատուրեան
Փոխ Գանձապահ՝ Խուան Կրէկորիո Գուլթնուլեան

Խորհրդականներ՝ Տանիէլ Սապակտանեան,



Պատգամաւորական Գ. Ընդհանուր Ժողովի Պուէնոս Այրէսի պատգամաւորներ՝ Ռուբէն Գոճայեան, Խորիւէ Միրիճեան, Արրահամ Ահարոնեան եւ Ռիքարտո Գուրնուեան



Հ.Մ.Ը.Մ.ի Արժանեաց շքանշանակիր Շաւարշ Քին. Մեիրապեան անոր աջին
 Կեդրոնական Վարչութեան Ատենապետ Վարդգէս Տէր Կարապետեան շրջապատուած
 Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղի ղեկավար անդամներով

մասնակցին Գործամորկանի եւ Մեթրոփոլիթանայի մրցաշարքերուն: Ֆուտպոլի գոյգ դասակարգերու 22 խումբեր կը մասնակցին ներքին մրցաշարքի: Ա. դասակարգի խումբերն են՝ «Կայծակ», «Աշոտ», «Լեւոն», «Աբօ», «Տիգրան», «Երկինք», «Փոթորիկ» եւ «Զուր»: Բ. դասակարգի խումբերն են՝ «Սարգիս», «Գեօ», «Մեսրոպ», «Լուսին», «Ընտանիք», «Հայ Արի», «Ուժով», «Գեղամ», «Կրակ», «Միանանք», «Դրօ» եւ «Սէր»:

1988ի եղանակի բացման առթիւ մասնաճիւղը հենապոլիզանազան դասակարգերու 9 խումբերով կը մասնակցի ֆետերասիոնի կազմակերպած մրցաշարքին 13 Յունիսին կրտսերներու կազմը Պուէնոս Այրէսի ախոյեան կը

հանդիսանայ, 27-23 արդիւնքով յաղթելով էսթիլտիանթէս Տէ Լա Բլաթա խումբին: Խումբի անդամներն են՝ Թէոսորո Աճէմեան, Սերեսիօ Թոսոնեան, Տիէկօ Տէօքմէճեան, Արմանտօ Թորգոմեան, Արխել Հանաճեան, Տանիէլ Օհանեան, Մարսելօ Պօղոսեան, Յակոբ Տիգրանեան, Բաֆֆի Զորպաճեան, Իկնասիօ Ասրտի, Բոպերթօ Մորչալօ եւ Տիէկօ Մեծոյեան:

Ամենակարեւոր արդիւնքը կ'արձանագրէ հենապոլի երէցներու խումբը որ Պուէնոս Այրէսի հենապոլի դաշնակցութեան «Մեթրոփոլիթան» մրցաշարքին Բ. դասակարգի ախոյեան հանդիսանալով կը փոխադրուի Ա. դասակարգ:

Վոլիպոլի ճիւղը յասուկ յաջողութիւններ կ'արձանագրէ 1987-88 եղանակին ուր տղոց եւ

աղջկանց տարբեր դասակարգերու 7 խումբեր կը մասնակցին Արժանթինի պաշտօնական մրցաշարքերուն:

Մասնաճիւղը կը պահէ թենիսի երկու սեռերու տարբեր դասակարգերու 8 խումբեր որոնք կը մասնակցին Արժանթինի Ֆետերասիոնի կազմակերպած էնթերգլիւպես մրցաշարքերուն: Չորրորդ դասակարգի խումբերէն մէկը իր դասակարգի ախոյեան հանդիսանալով կը բարձրանայ Յրդ դասակարգ:

Սկաուտական Գործունէութիւն

Պուէնոս Այրէսի մասնաճիւղի սկաուտական գործունէութիւնը, պետական արտօնութեամբ, կը սկսի 1952ին միայն: Մասնաճիւ-

ղի սկաուտական բաժինը կը կրէ «Արարատ» անունը:

Ցէն 24 Յունուար 1988ին, Սան Մարթին Տէ Լոս Անտէսի լեռնային շրջանին մէջ մասնաճիւղի սկաուտական բաժինը 120 հոգիով կը կայացնէ իր տարեկան ընդհանուր բանակումը դիմագրաւելով բնութեան մթնոլորտային դժուարութիւնները: Փակման խարուկահանդէսը տեղի կ'ունենայ 22 Յունուարին:

9 Ապրիլին տեղի կ'ունենայ նոր եղանակի բացման հանդիսութիւնը: Մասնաճիւղի ընդհանուր խմբապետութիւնը կը վարէ Գարլոս Սէֆէրեան- [Ծ/82.12]:

22 Հոկտեմբերին յատուկ արարողութեամբ Գարլոս Սէֆէրեան, որ 1985էն ի վեր կը վարէր «Արարատ» սկաուտական խումբի



Պուէնոս Այրէսի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտ աստիճանաւորական կապը՝ 1987

ընդհանուր խմբապետութիւնը, զայն կը փոխանցէ Կրէկորի Սամանճեանին:

8 Յունուար 1989ին, Մասնաճիւղի «Արարատ» խումբէն 100 մասնակիցներ կը մեկնին Պարիլոչէի շրջան, Կութիէնէս լիճ, 15 օրուայ բանակումի խմբապետութեամբ՝ Խուլիօ Պողջալեանի եւ ընդհ. պետ՝ Կրէկորի Սամանճեանի: Բանակումի բնաբանն է «Հայաստան կերտել» մեկնելով 1988ի Դեկտեմբեր 7ի երկրաշարժի եւ Արցախեան ազատագրական շարժման ստեղծած միջնորդներէն: Այս եզակի բանակումի աշխատանքները կը վարեն. երամ՝ Սիլվիա Գարավերդ, Նայիրի Մատթէոսեան եւ Կլօրիա Նաքաչեան — վոհմակ՝ Անահիտ Զաքարեան, Այտա Երկանեան, Լուսին Աբիկեան եւ Տիէկօ Մեծոյեան - արենոյշ խումբ՝ Անտրէա Տէր Մեսրոպեան, Մարիանա Սահակեան եւ Անտրէա Աւանուս - արի խումբ՝ Խօսէ Մինասեան, Ալեխանտր Սահակեան - երէց փաղանք՝ Ռուբէն Նազաչեան, Աւետիս Նազաչեան եւ Ալեխանտրօ Աւագեան — պարման փաղանք՝ Մապէլ Մուրատեան -հիւանդապահուհի՝ Տոքթ. Ռոզիկ Տաղլեան:

11 Մարտ 1989ին տեղի կ'ունենայ աստիճանաւորական սեմինար որուն ընթացքին կը քննուին բազմաթիւ նիւթեր՝ Հայ Դատ, հայ մշակոյթ, մեթոտաբանութիւն, Հարաւ Ամերիկեան Սկստակական Շաբաթ, ծնողներու հետ յարաբերութիւն: Յատուկ ուշադրութեան կ'արժանանայ վերջին նիւթը որուն նպատակն է ծնողներուն գործօն դեր վստահիլ սկստակական շաբաթօրեայ աշխատանքներուն մէջ:

Մարգարաշտեր, ակումբներ, հանդիսութիւններ

14 Հոկտեմբեր 1982ին, մասնաճիւղի հիմնադրութեան 55ամեակին առթիւ, տեղի կ'ունենայ Արմենիա կեդրոնի երրորդ յարկին վրայ կառուցուած «Մարգար Մարգարեան Մարգարան»ի բացման հանդիսութիւնը: Մարգարանը կառուցուած էր Վարդուհի Մարգարեանի եւ իր զաւակներու բարերարութեամբ: Այս մար-

գարանի կառուցումը կը նպաստէ մասնաճիւղի մարզական գործունէութեան նոր թափ ստանալուն նկատի ունենալով անոր ընձեռած արդիական պայմանները եւ մարզական գործունէութիւնը տարուան բոլոր եղանակներուն զարգացնելու կարելիութիւնը:

1984ի Մայիսին, Արժանթինի թեմին տրուած հովուապետական այցելութեան առթիւ, Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.ի պատիւ ճաշկերոյթ մը կը տրուի Ռամոս Մեխիայի Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնին մէջ այս առթիւ Վեհափառը հետեւեալը կ'արձանագրէ պաշտօնական մատեանին մէջ.

Նկատի ունենալով մարզական ճիւղերու յառաճուն վերելքը, 1987ին վարչութիւնը կը յաջողի քաղաքապետութիւնէն փոխ առնել Ռամոս Մեխիայի մառադադաշտին կից 10.000 քառակուսի մէթր տարածութեամբ հողաշերտ մը ուր կը շինէ ֆութպոլի դաշտեր եւ ինքնաշարժներու կառաստուն: Այսպէսով Ռամոս Մեխիայի ընդհանուր տարածութիւնը կը բարձրանայ 30.000 քառակուսի մէթրի:

ԳՈՐՏՈՊԱ

Արժանթինի երկրորդ մեծագոյն քաղաք՝ Գորտոպան կը գտնուի մայրաքաղաք Պուէնոս Այրէսի հիւսիս արեւմտեան կողմը շուրջ 600 քմ. հեռավորութեան վրայ: Հայաշատ բնակչութեամբ այս քաղաքը ունի ամերիկեան ցամաքամասի առաջին հայ առաքելական եկեղեցին:

Գորտոպայի «Անդրանիկ» ակումբին մէջ կը գործեն Հ.Յ.Դ. կոմիտէութիւնը եւ Հ.Օ.Մ.ի մասնաճիւղը: Ակումբի կառույցը կը պարփակէ նաեւ ազգային հերոս Արամ Երկանեանի շիրիմը:

1979ի վերջաւորութեան, Պուէնոս Այրէսի վարչութեան ճիգերով Գորտոպայի մէջ կը կազմուի Հ.Մ.Ը.Մ.ի նոր մասնաճիւղ: Հիմնադրութեան պաշտօնական հանդիսութիւնը տեղի կ'ունենայ 22 Մարտ 1980ին, հովանաւոր-

րուժեամբ տեղւոյն հոգեւոր հովիւ Տ. Տաթեւ Ծ. վարդապետ Ղարիպեանի եւ ներկայութեամբ Պուէնոս Այրէսի մասնաճիւղէն մեծաթիւ պատուիրակութեան մը գլխաւորութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ Պարգեւ Պարսամեանի- [Ծ/3.25]:

Գորտոպայի Հ.Մ.Ը.Մ.ի նշանակեալ վարչութեան անդամներն են.

- Ատենապետ՝ Միքայէլ Աւագեան
- Ատենադպիր՝ Սերխիօ Փանոսեան
- Գանձապահ՝ Գեղամ Համբարձումեան
- Խորհրդականներ՝ Րիքարտօ Սագուլեան, Արթին Մերտինեան, Րոպերթօ Սուքիասեան, Խ. Գալայեան եւ Գ.Տոսթոլրեան:

1981ին վարչական կազմի ատենապետն է Միքայէլ Աւագեան:

Մասնաճիւղի մարզական խումբերը 14 եւ 15 Նոյեմբերին Պուէնոս Այրէսի մէջ կը մասնակցին Հարաւային Ամերիկայի համամիութենական մրցաշարքերուն, պասքեթպոլի, փինկփոնկի, վոլիպոլի, թենիսի, ճատրակի եւ պոչայի խումբերով:

1982ին մասնաճիւղի վարչական կազմը կը վարէ ատենապետ՝ Խուան Գարլոս Մերտինեան: Մարզական խումբեր 13 եւ 14 Նոյեմբերին կը մասնակցին Հարաւային Ամերիկայի միջ-միութենական աւանդական մրցաշարքերուն:

12 Ապրիլ 1983ին տեղի կ'ունենայ մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողով նախագահութեամբ Սարգիս Փանոսեանի եւ քարտուղարութեամբ՝ Քրիսթինա Պոյաճեանի: Շրջանաւարտ վարչութեան տարեկան գործունէութեան տեղեկագրի ընթերցումէն եւ քննութենէն ետք տեղի կ'ունենայ նոր վարչական կազմի ընտրութիւն՝

- Ատենապետ՝ Տոքթ. Խուան Գարլոս Մերտինեան
- Ատենադպիր՝ Տոքթ. Րիքարտօ Պէրպէրեան
- Գանձապահ՝ Արթին Մերտինեան
- Խորհրդականներ՝ Էտուարտօ Տօնիկեան, Ալպերթօ Տօնիկեան եւ Գարլոս Սարաֆեան
- Հաշուեքննիչ՝ Միքայէլ Աւագեան:

22 Հոկտեմբերին Անդրանիկ աղումբին մէջ տեղի կ'ունենայ մասնաճիւղի հիմնադրութեան 4րդ տարեդարձի հանդիսութիւն: Մասնաճիւղը 1983ին կը տիրանայ աղումբին կից հողաչերտին ուր կարելի պիտի ըլլայ ծաւալել մասնաճիւղի մարզական եւ սկաուտական գործունէութիւնները:

8 եւ 9 Յուլիս 1984ին, Գորտոպայի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը կը հիւրընկալէ Պուէնոս Այրէսի եւ Վալէնթին Ալսինայի մասնաճիւղի վոլիպոլի, հէնտպոլի, ֆութպոլի եւ փինկփոնկի խումբերը կազմակերպելով միջ-մասնաճիւղային մրցաշարքեր: Խաղերու փակման հանդիսութեան առթիւ, մասնաճիւղի ատենապետ՝ Եղիա Պոյաճեան իր խօսքին մէջ կ'ըսէ «Հ.Մ.Ը.Մ.ը իր սնունդը կը ստանայ մարդկային եւ եղբայրական սկզբունքներէ: Այնիւ եւ առողջ սկզբունքներ, որոնցմով մեր երիտասարդութիւնը կ'ապրի ու կը գործէ ի ծառայութիւն մարմնակրթանքին ու դաստիարակութեան»:

«Մենք կը գիտակցինք մեր անվարան գործունէութեան կարեւորութեան: Կը գործենք այն խոր համոզումով, որ ապագան մերն է եւ մենք լաւագոյնս կը պատրաստենք նոր սերունդը՝ նիւթապէս եւ բարոյապէս ծառայելու մեր հապարամեայ ազգին՝ հայութեան՝ հպարտ մեր ծագումով եւ արժանիքներէն օրինակելի ուղեւորութեամբ»:

27էն 29 Յուլիսի միջեւ տեղի կ'ունենայ տարեկան ընդհանուր բանակում 33 պատանիներու մասնակցութեամբ:

1985 տարին մասնաճիւղի սկաուտական բաժնի զարգացման տարին է: Ուշադրութեան արժանի է արժուիկներու գործունէութիւնը ղեկավարութեամբ՝ Ռիքարտօ Գատեանի եւ Ռոսա Քիրեճեանի:

8 Մայիս 1987ին մասնաճիւղի անդամական ծրագր ընդհանուր ժողովը կ'ընտրէ վարչական կազմ.

- Ատենապետ՝ Սարգիս Մինասեան
- Փոխ ատենապետ՝ Մարգար Սեմերճեան
- Ատենադպիր՝ Էտուարտօ Թոլթոլեան

Փոխ ատենադպիր՝ Ասատուր Ասատուրեան

Գանձապահ՝ Մարտիրո Թորոսեան
Փոխ գանձապահ՝ Մարիո Կարապետեան
Խորհրդական՝ Մարթին Թոփալեան
Հաշուեքներիչ՝ Ալպերթո Տօնիկեան:

Տարուայ գործունէութեան մաս կը կազմեն սկստական բաժինը ուր յատուկ արձանագրութեան արժանի է արժուիկներու հաւաքոյթները եւ 10-12 Հոկտեմբերին անոնց մասնակցութիւնը Պուէնոս Այրէսի մասնաճիւղի միջ-մասնաճիւղային բանակումին:

Մարզական գետնի վրայ մասնաճիւղը ունի վեթերաններու Ֆուլթայոլի խումբ: Մարզական զանազան ճիւղերու 100 մարզիկներ (վոլիպոլ, պասքեթպոլ, լող) 15էն 18 Յուլիսին կը մասնակցին Պուէնոս Այրէսի մասնաճիւղի խաղերուն:

Մասնաճիւղը կը կազմակերպէ նաեւ երիտասարդական պարահանդէս, գարնանամուտի պարահանդէս եւ այլ հաւաքոյթներ հայկական միջնորդարի մէջ պահելով մասնաճիւղի անդամներն ու համակիրները:

9էն 11 Դեկտեմբեր 1988ին տեղի կ'ունենայ մասնաճիւղի տարեկան բանակումը մասնակցութեամբ սկստական շարքերու 70 անդամներուն եւ անոնց պատասխանատուներուն: Բանակումը կը ծառայէ մասնակցողներու փոխադարձ ծանօթացման: Բանակումի վերջին օրը բանակավայր կ'այցելէ Շրջանային Վարչութեան ատենապետ Աբրահամ Ահարոնեան մեծ խանդավառութիւն ստեղծելով իր քաջալերական խօսքերով:

ՎԱԼԵՆԹԻՆ ԱԼՍԻՆԱ

Պուէնոս Այրէսի մօտակայ Վալէնթին Ալսինայի մասնաճիւղը Արժանթինի Հ.Մ.Ը.Մ.ի երկրորդ մասնաճիւղն է:

5 Յուլիս 1981ին տեղի կ'ունենայ մասնաճիւղի նոր մարզադաշտի բացումը: Մարզադաշտը իրականացած էր Խրիմեան Կրթական

Հիմնարկութեան մասնակցութեամբ: Այս առթիւ խօսք կ'առնէ մասնաճիւղի ատենապետ Յակոբ Հալաճեան:

19 Նոյեմբեր 1983ին մասնաճիւղը պաշտօնական ճաշկերոյթով կը նշէ իր հիմնադրութեան Բ. տարեդարձը:

1987 տարեշրջանին վարչական կազմի ատենապետութիւնը կը վարէ Միկէլ Գարակէօզեան: Վարչութեան մնացեալ անդամներն են՝ Պետրոս Գարակէօզեան, Գէորգ Սարաֆեան եւ Յովսէփ Ասատուրեան:

Հարաւային Ամերիկայի Նաւասարդեան Խաղերուն մասնաճիւղի խումբերը մասնակցած են յայտագրի միջ-մասնաճիւղային բաժիններուն արձանագրելով կարեւոր արդիւնքները [Ծ/21-11]- [Ծ/29-33]: Սակայն մասնաճիւղի կազմակերպչական գործունէութիւնը կը մնայ պարբերական:

ՈՒՐՈՒԿՈՒԷՅ

ՄՈՆԹԷՎԻՏԷՕ

Մոնթէվիտէոյի մասնաճիւղը հիմնուած է 1927ի ամրան:

Մասնաճիւղը առաջին հերթին մշակած է Ֆուլթայոլի ճիւղը տեղական խումբերու դէմ մրցումներ կազմակերպելով: 1931ին մասնաճիւղի Ֆուլթայոլի կազմը փոխադրուած է Պուէնոս Այրէս ուր մրցում մը ունեցած է տեղւոյն Հ.Մ.Ը.Մ.ի խումբին դէմ: Այս այցելութիւնը յաւելեալ հաստատում մը կ'ըլլայ Մոնթէվիտէոյի մասնաճիւղի գործունէութեան: Սակայն Փարիզի կեդրոնին հետ կապերը թուլանալով, մասնաճիւղը կը դադրի գոյութիւն ունենալէ:

Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կազմակերպութեան վերածուելու ժամանակաշրջանին Մոնթէվիտէոյի մէջ կը գործէր «Կամք» սկստական միաւորը Հ.Յ.Դ. Վաւաճեան ակումբի շրջագիծէն ներս:

‘Կամք’ի սկստական խորհուրդի ատենապետ՝ Աբօ Պելեան եւ ատենադպիր՝ Դաւիթ Դա-

Լիթեան 20 Մայիս 1972 թուակիր նամակով պատրաստակամութիւն կը յայտնեն գործակցելու Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան հետ -Պէյրուի : Խոսքը կը վերակոչուի

Հ.Մ.Ը.Մ-ԿԱՄՔ անունով: _

1975ին, պահ մը Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան հետ հաղորդակցելէ ետք, «Կամք» միաւորի կապերը դադրեցան:

1987ի Սեպտեմբերին Մոնթէվիտէօ կ'այցելէ Կեդրոնական Վարչութեան ատենապետ տոքթ. Միսաք Արզումանեան եւ խորհրդակցութիւն մը կ'ունենայ Վրամեան ակումբի պատասխանատուներուն հետ, Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը վերակազմելու նպատակով Մոնթէվիտէօյի մէջ: Այս կապերը կը շարունակուին Պոլէնոս Այրէսի մասնաճիւղի վարչութեան խողովակով:

20 Դեկտեմբեր 1987ին Մոնթէվիտէօ կ'այցելէ Պոլէնոս Այրէսի վարչութեան ատենապետ Արթուրօ Յովհաննէսեան որուն ներկայութեամբ 30 անդամներ կը կազմեն Մոնթէվիտէօյի մասնաճիւղի հիմնադիր ժողով եւ կ'ընտրեն մասնաճիւղի անդրանիկ վարչական կազմ բաղկացած հետեւեալ անդամներէն.-

- Ատենապետ՝ Արսէն Տէրտէրեան
- Փոխ-ատենապետ՝ Դաւիթ Տառտեան
- Ատենադպրուհի՝ Անգինէ Տօլապճեան
- Փոխ-ատենադպրուհի՝ Զարուհի Պետրոսեան

- Գանձապահ՝ Տիգրան Թորոսեան
- Փոխ գանձապահ՝ Եսայի Տօլապճեան
- Խորհրդական՝ Սարգիս Բագլայեան:

Այս կազմը անյապաղ աշխատանքի լծուելով կը կազմէ մարզական խումբեր եւ կը վերակազմէ սկսողական կորիզը: Այնուհետեւ Մոնթէվիտէօյի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը կը սկսի գործել կառուցային բնականոն ընթացքով, 1988ի Սեպտեմբերին մասնակցելով Հարաւային Ամերիկայի Շրջանի կազմութեան ժողովին երեք ներկայացուցիչներով:

4էն 6 Նոյեմբեր 1988ին Մոնթէվիտէօյի մասնաճիւղը կը կազմակերպէ Միութեան հիմնադրութեան 70ամեակին նուիրուած հանդիսութիւններ: Եռօրեայ այս հանդիսութիւններուն ներկայ կը գտնուին Սան Փառլոյի Քլիւպ Արմենիոյի, Պոլէնոս Այրէսի Հ.Մ.Ը.Մ.ի պաշտօնական պատուիրակութիւնները ինչպէս նաեւ Հարաւային Ամերիկայի Շրջանային վարչութեան ատենապետ տոքթ. Աբրահամ Ահարոնեան, անդամ՝ Յարութիւն Թորոսեան, սկսող խմբապետներ եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան անդամ՝ Ճորճ Տաղլեան: Այս առթիւ տեղի կ'ունենան համերգ, խոստման արարողութիւն, Սբ. Պատարագ եւ հոգեհանգիստ նաեւ հրաժեշտի պարահանդէս- [Ծ/ 83-84.28]:

1989ին Սկսողական «Կամք» խումբը նոր ճիգերով կը յաջողի նուաճումներ արձանագրել: Ներկայացուցչական 7 հոգինոց կազմ մը որոնց կարգին երամի վարիչներ՝ Ալեքսանտրա Դաւիթեան եւ Ալեքսանտրա Վարդանեան արիներու վարիչներ՝ Արմէն եւ Մարսելօ Սանթուրեաններ մասնակցեցան Պոլէնոս Այրէսի քոյր մասնաճիւղի սկսողական տարեկան 15 օրուայ բանակումին 8էն 22 Յունուար 1989ին Պարիլոչէի Կուլթիէռէս լիճի շրջանին մէջ: Այս մասնակցութիւնը մեծապէս ծառայեց խումբի անդամներուն մօտ զարգացնելու Սկսողական թեքնիք գիտելիքներու կողքին Արցախեան պահանջատիրութեան եւ Հայաստանի 1988ի Դեկտեմբերին երկրաշարժի առիթով վերաշինութեան աշխատանքներուն ծանօթացման:

ՊՐԱԶԻԼ

ՍԱՆ ՓԱՈՒԼՕ

Պրագիլիոյ Սան Փառլօ քաղաքին մէջ երբեմնի գործունէութիւն ունեցող Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը, ժամանակի ընթացքին դադրելով, փոխարինուած է «Քլիւպ Արմէնիօ» անունով գործող մարզական ակումբով: Քլիւպ Ար-

մէնիօն Հ.Մ.Ը.Մ.ի ընդհանուր կառույցէն դուրս գտնուելով հանդերձ միշտ ալ մասնակցած է Հարաւային Ամերիկայի Նաւասարդեան խաղերուն ձեւով մը ստանձնելով Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի դերը: «Քլիւպ Արմէնիօ» կամ Հայ Ակումբը ծանօթ է «Սամա» կոչումով:

1988ին Սամայի վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Յովհաննէս Զէյթունլեան:

Նոյեմբեր 1988ին Սան Փաուլոյի պատուիրակութիւնը կը մասնակցի Մոնթեվիտէոյի մէջ կայացող Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 70ամեակին նուիրուած հանդիսութեանց:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Կազմակերպչական

Հարաւային Ամերիկայի Շրջանային կառույցի աշխատանքներուն նախաձեռնուած էր 1988ի սկզբնաւորութեան

17 Սեպտեմբեր 1988ին, Պուէնոս Այրէսի Արմէնիա կեդրոնի սրահին մէջ տեղի կ'ունենայ Հարաւային Ամերիկայի Շրջանի կազմութեան ժողովը մասնակցութեամբ Պուէնոս Այրէսէն՝ 9, Վալանթին Ալսինայէն 1, Գորտոպայէն՝ 3 եւ Մոնթեվիտէոյէն՝ 3 պատգամաւորներ եւ Կեդրոնական վարչութեան ներկայացուցիչ՝ Ճորճ Տաղլեանի:

Ժողովի վերջին օրակարգով կ'ընտրուի Հարաւային Ամերիկայի անդրանիկ Շրջանային վարչութեան կազմը՝

- Ատենապետ՝ Աբրահամ Ահարոնեան
- Ատենադպիր՝ Գէորգ Գարամանուկեան
- Գանձապահ՝ Աւագ Արմէն Գրիգորեան
- Խորհրդականներ՝ Ռուբէն Գոճայեան, Յարութիւն Թորգոմեան, Պէտրիս Ծառուկեան,

Բետրօ Գարակէօզեան, Արմէն Զէյթունցեան եւ Սերխիօ Փանոսեան:

Այս ձեւով Արժանթինի եւ Ուրուկուէյի մասնաճիւղերու գործունէութիւնն հսկողութիւնը, ինչպէս նաեւ Պրագիլիոյ Սան Փաուլօ քաղաքի Քլիւպ Արմէնիոյի գործակցութիւնը եւ Հարաւային Ամերիկայի Նաւասարդեան խաղերուն համադրումը կը դառնայ Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային վարչութեան գործունէութեան գլխաւոր առանցքը:

Հարաւային Ամերիկայի Նաւասարդեան խաղերը կայացած են սարեկան հերթականութեամբ եւ մասնակցութեամբ Հարաւային Ամերիկայի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու, Պուէնոս Այրէսի հայ մարզական միութիւններու եւ հայ վարժարաններու խումբերուն, Պուէնոս Այրէսի մասնաճիւղի կազմակերպութեամբ:

Ստորեւ զտումի մրցումներուն հետեւող՝ աւարտական խաղերու եւ պաշտօնական հանդիսութեանց կարգ մը թուականներ.

19 եւ 22 Նոյեմբեր 1980, 13 եւ 14 Նոյեմբեր 1981 [Ծ/21.8] , 12էն 14 Նոյեմբեր 1982, 18էն 20 Նոյեմբեր 1983 , 17 եւ 18 Նոյեմբեր 1984 , 23 եւ 24 Նոյեմբեր 1985 [Ծ/55.14] , 19էն 21 Նոյեմբեր 1988 [Ծ/83-84.55]:

Նաւասարդեան Խաղերու փակման հանդիսութեանց մաս կազմած են, Սբ. Պատարագ, մատաղօրհնէք եւ խրախճանք-ճաշկերոյթներ: 1988ի փակման հանդիսութեան, վարչութեան ներկայացուցիչ Տանիել Սապատկանեան իր խօսքին մէջ կ'ըսէ՝ «Կ'ուզենք մեր աճը շարունակել, ոչ միայն որպէսզի մարկական բարձր արդիւնքներու հասնինք, այլ որպէսզի մարկանքի միջոցաւ մեր վաւակները զիրար ճանչնան, միասին խաղան ու մեծնան ու միասին պայքարին Հայ Դատին համար: ...Այս Նաւասարդեան Խաղերը աճելու մեր միջոցներն են»

Գ. ՄԱՍ

ՄԵԿՈՒՍԻ ՇՐՋԱՆՆԵՐ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԵԳԻՊՏՈՍ

– ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

– ԳԱՀԻՐԷ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

Հ.Մ.Ը.Մ.ի հնագույն մասնաճիւղ՝ Աղեքսանդրիոյ «Հ.Մ.Ը.Մ. Կամք»ը միշտ գործօն մնացած է, հակառակ ժամանակներու ստեղծած դժուարին պայմաններուն:

1974ի Միութեան համագաղութային կառուցի ստեղծման օրերուն մասնաճիւղի ներկայացուցիչ Վահան Գալուքճեան կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի անդրանիկ պատգամաւորական ընդհանուր ժողովին:

Տարուայ վարչական կազմի անդամներն են՝

- Ատենապետ՝ Վահան Գալուքճեան
- Փոխ ատենապետ՝ Խաչիկ Շահպազեան
- Ատենադպիր՝ Նուպար Թընկրեան
- Գանձապահ՝ Զոհրապ Գալուքճեան

Խորհրդականներ՝ Անտոն Մինասեան, Նուպար Մանուկեան Պերճ Հալաճեան, Ռոպէր Գոչիկեան եւ Պերճ Խորասանճեան:

1967էն ի վեր պետութեան տրամադրուած սեփական մարզավայրը 1974ին կը վերադարձուի մասնաճիւղին: Վարչութիւնը աշալուրջ կը հսկէ, մարզական ակումբներու յատուկ, պետական նոր օրէնքներու գործադրութեան: Պետական քննիչներ զանազան առիթներով կը քննեն վարչութեան արխիւները գնահատելով կատարուած աշխատանքները: Այս տարեշրջանին մասնաճիւղի անդամներու ընդհանուր թիւն է 163:

1975ը ընթացիկ գործունէութեան տարի մը կը հանդիսանայ մարզական եւ սկստական նորակազմ բաժիններով:

1976 տարեշրջանի գործունէութեան համար ընտրուած վարչութիւնը իր աշխատանքներու բաժանումը կը կատարէ հետեւեալ կերպով.-

- Ատենապետ՝ Շաւարշ Գալուքճեան
- Փոխ ատենապետ՝ Խաչիկ Շահպազեան
- Ատենադպիր՝ Նուպար Թընկրեան
- Գանձապահ՝ Զոհրապ Գալուքճեան
- Հաշուապահ՝ Նուպար Մանուկեան
- Խորհրդականներ՝ Պերճ Հալաճեան, Պերճ

Խորասանճեան, Արա Աբգարեան եւ Սիլվա Հալաճեան:

Տարեշրջանի անդամական ընդհանուր թիւն է 166:

Մասնաճիւղը կը պարտադրուի զիչիլ Ապու Տարտարի մարզավայրը եւ իր մարզական գործունէութիւնը կեդրոնացնել Ռամլէի մարզադաշտին մէջ:

Մասնաճիւղի մարզական գլխաւոր ճիւղն է պասքեթպոլը: Երեք դասակարգի խումբեր կը մասնակցին պատկան Ֆետերասիոնի ախոյեանական մրցաշարքերուն: Մասնաճիւղը կը կազմակերպէ տարեկան եգիպտահայ ակումբներու մրցաշարք եւ բարեկամական մրցումներ կ'ունենայ տեղական ակումբներու դէմ:

Ֆութպոլի խումբը բարեկամական մրցումներով կը բաւարարուի:

Սկստական բաժինը վերակազմութեան ընթացքի մէջ է: Սակայն անդամներու երկրէն յաճախակի արտագաղթը, զգալի բացեր կը ստեղծէ մասնաճիւղի շարքերուն մէջ:

Սեպտեմբեր 1990ին անդամական ընդհանուր ժողովը կը քննէ 1989-90 տարեշրջանի վարչութեան գործունէութեան տեղեկագիրը ներկայացուած ատենապետ՝ Վահան Գալուքճեանի, քարտուղար՝ Տոքթ. Արմէն Գալուքճեանի եւ գանձապահ՝ Նուպար Լէյլեկեանի կողմէ ապա կ'ընտրէ նոր վարչական կազմ:

Հրապարակային Հանդիսութիւններ

9 եւ 10 Յուլիս 1988ին մասնաճիւղը կը սօնէ իր հիմնադրութեան ադամանդեայ յոբելեանը սրահային պաշտօնական հանդիսութեամբ եւ մարզական փառատօնով: Յոբելեանական հանդիսութիւնները կը հովանաւորէ Եգիպտոսի Թեմի Առաջնորդ Զաւէն Արք. Զինչինեան - [Ծ/80.16]:

13 Հոկտեմբեր 1989ին «Կամք»ի ակումբին մէջ վարչութիւնը կ'ընդունի այցելութիւնը Խորհրդային Միութեան ծանրաբարձութեան

հալաքականի հայ մարզիկներու, գլխաւորութեամբ Հայաստանի Ֆիզկուլտուրայի վարչութեան պետ Անժէլա Միրզոյեանի: Հալաքականը Աղեքսանդրիա կը գտնուէր միջազգային մրցաշարքի մը մասնակցութեան առիթով:

14 Հոկտեմբերին տեղի կ'ունենայ Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ մասնաճիւղերու միջեւ, թոմաս Մանըլլըքեան բաժակի, պասքեթպոլի մրցումներ հովանաւորութեամբ եգիպտահայ թեմի առաջնորդ Զաւէն Արք. Զինչինեանի:

Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ. «Կամք»ի հասութեաբեր ձեռնարկն է տարեկան ճաշկերոյթ պարահանդէսը որուն եկամուտը կը ծառայէ մասնաճիւղի նիւթական կարիքներուն:

ԳԱՀԻՐԷ

Կազմակերպչական եւ մարզական գործունէութիւն

Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.-Արարատ Մեկուսի Շրջանը, ժամանակագրական կարգով Միութեան երկրորդ հնագոյն մասնաճիւղն է:

Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կազմակերպութեան վերածուելուն առիւ մասնաճիւղի պատգամաւորներ թորոս Խաչատուրեան եւ Տոքթ. Սուրէն Պայրամեան կը մասնակցին Հ.Մ.Ը.Մ.ի Ա. Պատգամաւորական ընդհանուր ժողովին:

Մասնաճիւղը կը կիրարկէ պասքեթպոլ եւ սկաուտութիւն:

1977ին մասնաճիւղը կ'ընդունի Պուրճ Համուտի մասնաճիւղի պասքեթպոլի տղոց խումբին այցելութիւնը Գահիրէ՝ ընկերակցութեամբ ղեկավար անդամներու: Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ մէջ այս այցելութիւնը, մրցաշարքերու ընդմէջէն, մեծ խանդավառութիւն կը ստեղծէ եգիպտահայ գաղութէն ներս:

1979էն 1983 տարեշրջաններուն Գահիրէի Հ.Մ.Ը.Մ. Արարատի վարչական կազմերուն կ'անդամակցին՝

Ատենապետ՝ Վարուժան Գազանճեան
Փոխ ատենապետ՝ Վրէժ Քէօհնելեան



Հ.Մ.Ը.Մ. Արարատի Վարչական կազմը 1986ին: Նստած՝ Խոսրով Չաքարեան, Անահիտ Թամայեանց, Վարուժան Գազանճեան, Վրէժ Քէօհնելեան, Պետրոս Մխիթեան Ուրբի՝ Պերճ Ասատուրեան, Ֆրէտի Գարակէօյեան, Էտի Գարակէօյեան, Տոքթ. Սուրէն Պայրամեան, Յակոբ Ոսկերիչեան, Վաղարշակ Չաքարեան

Ատենադպիրներ՝ Անահիտ եւ Արաքսի Թումայեանց

Գանձապահ՝ Խոսրով Չաքարեան

Խորհրդականներ՝ Տոքթ. Սուրէն Պայրամեան, Յակոբ Ոսկերիչեան, Պետրոս Մխտիկեան, Էտի Գարակէօզեան, Վաղարշ Չաքարեան եւ Ֆրէտի Գարակէօզեան:

Այս կազմի կարեւորագոյն իրականացումներէն պիտի ըլլար, 26 Յունիսէն 5 Յուլիս 1981ին պասքեթպոլի տղոց խումբի մասնակցութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի Համագաղութային Ա.Խաղերուն՝ Գանատա: Խումբը Ապրիլին, Աթէնքի մասնաճիւղի հրաւերին ընթացք տալով, մասնակցած էր տեղւոյն զատկական մրցաշարքին ուր մրցումներ ունեցած էր Աթէնքի եւ Սելանիկի մասնաճիւղերու խումբերուն դէմ:

25էն 27 Նոյեմբեր 1983ին մասնաճիւղը կը կազմակերպէ, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 65ամեակին նուիրուած, պասքեթպոլի եգիպտահայ խումբերու մրցաշարք հովանաւորութեամբ՝ Առաջնորդ Չաւէն Արք. Չինչինեանի եւ նախագահութեամբ՝ Աւետիս Չազըճեանի: Մրցաշարքի չորս դասակարգերու բաժակներուն կը տիրանան մասնաճիւղի բոլոր խումբերը [Ծ/42.24]:

10էն 12 Օգոստոս 1984ին, Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ. կամքի կազմակերպած եգիպտահայ պասքեթպոլի մրցաշարքին Հ.Մ.Ը.Մ.-Արարատի խումբը կը տիրանայ ախոյեանութեան բաժակին աւարտական մրցումին յաղթելով կազմակերպիչ ակումբի խումբին:

12էն 14 Հոկտեմբերին Արարատի խումբը



Գահիրէի Հ.Մ.Ը.Մ. Արարատի 1983 տարուայ պասքեթպոլի տղոց խումբը

կը տիրանայ Գահիրէի Հ.Մ.Ը.Մ. Նուպարի կազմակերպած եգիպտահայ մրցաշարքին:

28 Հոկտեմբեր 1984ին, մասնաճիւղի խումբերը երրորդ եւ երրեակ յաղթանակներ կ'արձանագրեն երբ աղջկանց, կրտսեր տղոց եւ երէց տղոց խումբերը ախոյեանները կը հանդիսանան իրենց իսկ կազմակերպած մրցաշարքին՝ նուիրուած մասնաճիւղի հիմնադրութեան եօթանասունամեակին:

1985էն 1988 տարեշրջաններուն Գահիրէի Հ.Մ.Ը.Մ. Արարատ Մեկուսի Շրջանի վարչութեան կազմերուն կ'անդամակցին՝

Ատենապետ՝ Վարուժան Գազանճեան
Փոխ ատենապետ՝ Վրէժ Քէօհնելեան
Քարտուղար՝ Անահիտ Թումայեանց
Գանձապահ՝ Խոսրով Զաքարեան

Խորհրդականներ՝ Էտի Գարակէօզեան, Յրէտի Գարակէօզեան, Պետրոս Մխարկեան, Յակոբ Ոսկերիչեան, Վաղարշ Զաքարեան, Վրէժ Հոլոբիկեան եւ Պերճ Ասատուրեան:

Սկաուտական Վարիչ Մարմինը կ'օժանդակէ վարչութեան ղեկավարելով սկաուտական բաժինը: Վարիչ Մարմնին մաս կը կազմեն, ատենապետութեամբ Կարապետ Թումայեանցի, Գարեգին Պոյաճեան, Ռոպէր Թապաքեան, Խեչօ Յակոբեան, Գուրգէն Բանեան, Սօնա Պայրամեան, Սօնա Ոսկերիչեան, Սիլվա Գուլթնույեան եւ Սօնա Շիկեցեան:

Ապրիլ 1985ին վարչութեան անդամներ՝ Վարուժան Գազանճեան եւ Յակոբ Ոսկերիչեան կը մասնակցին միջ-դիւանային Ա. խորհրդաժողովին Միլանոյի մէջ: Անոնք կը ներկա-



Հ.Մ.Ը.Մ. Արարատի կրտսեր աղջկանց պասքէթպոլի կապը

յացնեն մասնաճիւղը Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Դ. Ընդհանուր Ժողովին:

Շնորհիւ հետեւողական եւ արդիականացած մեթոտներու կիրարկումով ձեռք բերուած յառաջդիմութիւններուն, Հ.Մ.Ը.Մ. Արարատի պասքեթպոլի խումբերը կը յաջողին պատուաբեր յաղթանակներ արձանագրել զանազան դասակարգի կազմերով: Այսպէս 26 Յունիս 1987ին 19 տարեկանէն վար խաղացողներէ կազմուած խումբը կը յաջողի 52-48 արդիւնքով պարտութեան մասնել Քաթարի նոյն դասակարգի պասքեթպոլի հաւաքականը

Շաբաթ 12 եւ կիրակի 13 Նոյեմբեր 1988ին մասնաճիւղը կը կազմակերպէ Միութեան հիմնադրութեան 70ամեակին առթիւ պասքեթպոլի մրցաշարք մը նախագահութեամբ Տէր եւ Տիկին Տիգրան Պօղոսեանի:

1989-1990 տարիներուն վարչական կազմի անդամներն են՝

- Ատենապետ՝ Վարուժան Գազանճեան
- Փոխ ատենապետ՝ Վրէժ Քէօհնեւեան
- Ատենադպիր՝ Տոքթ. Սուրէն Պայրամեան
- Գանձապահ՝ Խոսրով Զաքարեան

Խորհրդականներ՝ Յակոբ Ոսկերիչեան, Էտի Գարակէօզեան, Ֆրէտի Գարակէօզեան եւ Վաղարշակ Զաքարեան:

12էն 16 Ապրիլ 1990ին Վալանսի մէջ պասքեթպոլի խումբը կը մասնակցի Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Գ. խաղերուն:

Սկաուտական Գործունէութիւն

31 Մարտ 1985ին տեղի կ'ունենայ մասնաճիւղի սկաուտական բաժնի վերակազմութեան առթիւ հանդիսաւոր խարուկահանդէս, ներկայութեամբ՝ Նարեկ քհն. Ֆրընճեանի, «Յուսաբեր» մշակութային ընկերակցութեան նախագահ Աւետիս Ն. Զաքրճեանի եւ մասնաճիւղի նախկին շրջանային պետ Տոքթ. Մակարոս Գազանճեանի կողակիցին: Ընդհանուր սողանքէն ետք տեղի կ'ունենայ դրօշակի արարողութիւն, երգման եւ դրօշակի օրհնութիւն

ապա խարոյկի շուրջ զուարճալի եւ մարզական խաղեր- [Ծ/49.31]:

23 Նոյեմբերին, սկաուտական 55 հոգինոց լրիւ կազմը միօրեայ արշաւ մը կը կատարէ Իսմաիլիայի ուղղութեամբ Վարդ Ալեքսանեանի կալուածին վրայ: Տեղի կ'ունենան դրօշակի արարողութիւն, մարզանք, ընդհանուր զարգացման մրցում, ճաշի պատրաստութիւն եւ զանազան խաղեր:

1986 տարուայ սկաուտական խորհուրդի կազմին մասնակցած են նաեւ Գարեգին Պոյաճեան, Ալին Գուլթնուեան եւ Անի Միքայէլեան:

Ցէն 15 Յունուար 1988ին, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան նուիրուած 70ամեակի բանակումին իր մասնակցութիւնը կը բերէ Ամմանի, մասնաճիւղէն 9 հոգինոց պատուիրակութիւն մը- [Ծ/83-84.18]:

Յունիս 1990ին մասնաճիւղէն պատուիրակութիւն մը կը մասնակցի Համագաղութային Դ. Ընդհանուր Բանակումին:

Հանդիսութիւններ

21 Դեկտեմբեր 1985ին, Յուսաբեր ակումբի տարեկան պազարին, Հ.Մ.Ը.Մ. Արարատի մասնաճիւղը կը մասնակցի սկաուտական ձեռային աշխատանքներէ կազմուած եւ վաճառելի նիւթերու տաղաւարով մը:

18 Յունուար 1986ին մասնաճիւղը բացումը կը կատարէ ակումբի վերանորոգուած սրահին ուրուն իրագործման համար նիւթական աջակցութիւն բերած էին Լեւոն Գաղթացեան եւ Աւետիս Ն. Զաքրճեան: Բացման հանդիսութեան ներկայ կը գտնուի եգիպտահայ ղեկավարութեան աւագանին, գլխաւորութեամբ Եգիպտոսի Թեմի առաջնորդ Զաւէն Արք. Զինչինեանի: Այս առթիւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի խօսքը կ'արտասանէ Տոքթ. Սուրէն Պայրամեան որմէ կ'արցանագրենք՝ «... Օտարութեան մէջ, սիրելիներ, մեր ուժը ամփոփ եւ միացեալ ապրելու գաղտնիքին մէջ կը գտնուի, երբ իւրաքանչիւր



Գահիրէի Հ.Մ.Ը.Մ. Արարատի սկաուտական լրիւ կապը

մանուկ, պատանի եւ երիտասարդ կապուած կ'ըլլայ մայրենի լեզուին, հայրենիքին ու աւանդութիւններուն՝ վառ պահելով մեր ազգային ոգին»:

Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 70ամեակի հանդիսութեանց ծիրին մէջ, վարչութիւնը 5 Նոյեմբեր 1988ին պաշտօնական ընդունելութիւն մը կը սարքէ «Ա. Մէօթեմեստեան» սրահին մէջ գեղարուեստական յայտագրով եւ 70ամեակի յատուկ կարկանդակով: Յաջորդ օրը 6 Նոյեմբերին, Գահիրէի Սբ. Գրիգոր Լուսաւո-

րիչ Մայր Եկեղեցոյ մէջ հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի ի յիշատակ մասնաճիւղի հանգուցեալ անդամներուն- [Մ83-84.19]:



1989ի ընթացքին, մասնաճիւղի հիմնադրութեան 75ամեակին նուիրուած հանդիսութեանց ծիրին մէջ, վարչութիւնը զոյգ մրցաշարքեր կը կազմակերպէ մասնակցութեամբ եգիպտահայ խումբերուն: Յոբելինական տարին կը փակուի 9 Դեկտեմբերին կազմակերպուած քոթթէյլ-ընդունելութեամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ



ՊԱՂԵՍՏԻՆ

- ԵՐՈՒՍԱՂԵՄ
- ՀԱՅՖԱ
- ԵԱՖԱ

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԵՐՈՒՍԱՂԵՄ

Հ.Մ.Ը.Մ.ի Երուսաղէմի մասնաճիւղը որպէս Պաղեստինի մայր մասնաճիւղը կը շարունակէ իր գործունէութիւնը նոյն կենսունակութեամբ: Միութեան Ա. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին մասնաճիւղը կը ներկայացնէ Կարօ Հէքիմեան:

1980ին վարչական կազմի ատենապետի պաշտօնը կը վարէ Գրիգոր Զաքրեան, ատենադպրութեամբ Սերոբ Սահակեանի: Մասնաճիւղը կը հաշուէ 84 անդամներ:



Երուսաղէմի Հ.Մ.Ը.Մ.ի պատրաստուողի Ա. խումբը 1979

- Չ. Եագուպեան, Կ. Առաքելեան, Ս. Դաւիթեան,
- Կ. Հապաշ, Լ. Պոյաճեան, Թ. Պոյաճեան
- եւ Վ. Սեւերճեան

Նախորդող տարիներու նմանողութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Երուսաղէմի մասնաճիւղի գործունէութեան գլխաւոր առանցքը կը մնայ մշակութային եւ ազգային դաշտը: Մարզական եւ սկստական խումբերը կը մնան կանգուն բայց երկրի պայմանները թոյլատու չեն ըլլար անոնց յաւելեալ ծաւալումին: Միւս կողմէ Երուսաղէմի մասնաճիւղին դերը կը հանդիսանայ Պաղեստինի միւս մասնաճիւղերու Հայֆայի եւ Եաֆայի գործունէութեանց բարոյական

օժանդակութիւնը, ձեւով մը ամբողջացնելով Շրջանային վարչութեան մը դերը:

Երուսաղէմի մասնաճիւղին կը վստահուի ամէն տարի Հ.Մ.Ը.Մ.ի պատի օրացոյցի պատրաստութիւնը վաճառուելու համար երեք մասնաճիւղերուն կողմէ:



Երուսաղէմի Հ.Մ.Ը.Մ.ի ֆութպոլի խումբը՝ 1982 Ուրքի՝ Շանթ Պէհէսնիլեան, Գէորգ Հինտոյեան, Վիգէն Գրիգորեան, Սարգիս Հասէսեան, Սարգիս Եագուպեան կրտ. եւ Փօլ Զաւուշեան:

- Նստած՝ Սամօ Էլմաճեան, Յակոբ Սեւան,
- Յակոբ Սահակեան, Ռաֆֆի Դաւիթեան
- եւ Տիգրան Նալպանտեան:

1981ին անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմը որուն անդամներն են՝ Աբրահամ Սիւրդիւքեան, Կարօ Սանտրունի, Յարութիւն Սեմերճեան, Վիգէն Գրիգորեան, Կարօ Հէքիմեան, Սերոբ Սահակեան, Արսէն Աճէմեան, Հ. Տիգպիքեան: Սկստու խմբապետն է Օհան Կիւրեղեան: Մասնաճիւղի գործունէութեան մաս կը կազմեն աւանդական սօնակատարութիւնները՝ Սբ. Ծննդեան, Սբ. Զատիկի, Ապրիլ 24ի եւ Մայիս 28ի սողանձքներով:

29 Յունուար 1983ին մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ հետեւեալ ձեւով:

Ատենապետ՝ Լեւոն Օհաննէսեան
Փոխ ատենապետ՝ Մարտո Նալպանտեան
Քարտուղար՝ Օհան Կիւրեղեան
Գանձապահ՝ Վահան Օհաննէսեան
Փոխ գանձապահ՝ Վիգէն Գրիգորեան
Մարզական պատասխանատու՝ Տիգրան
Նալպանտեան

Տեղեկատուի պատասխանատու՝ Կարօ Հե-
քիմեան

Խորհրդականներ՝ Զոհրապ Առաքելեան եւ
Գէորգ Հեքիմեան:

1983ին ընթացիկ գործունէութեան կողքին,
մասնաճիւղը կը տօնէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրու-
թեան 65ամեակը:

1984 տարուայ վարչութեան դիւանի ան-
դամներն են.- ատենապետ՝ Վահան Օհաննէս-

եան, ատենադպիր՝ Սերոբ Սահակեան, գանձա-
պահ՝ Վիգէն Գրիգորեան:

1984ի գարնան սկսուած ազգային նորո-
գութեան եւ ընդլայնումի ծրագիրը, ութամս-
եայ ժրաջան աշխատանքներէ ետք կ'աւարտի
եւ բացումը տեղի կ'ունենայ 13 Ապրիլ 1985ին
մասնաճիւղի հիմնադրութեան յիսնամեակի
նշումով: Ծրագիրը գանձին կ'արժէ 70.000 ամ.
տոլար:

23 Նոյեմբեր 1985ի անդամական 50րդ ընդ-
հանուր ժողովը կ'ընտրէ 1986 տարուայ վար-
չական կազմ՝

Ատենապետ՝ Վահան Օհաննէսեան
Փոխ ատենապետ՝ Յարութիւն Պէհէսնիլ-
եան

Ատենադպիր՝ Լեւոն Պէհէսնիլեան



Երուսաղէմի Ա. եւ Բ. խումբերը միասին նկարուած ժառանգաւորացի դաշտին վրայ 1977ին:
Ուրքի՝ Յովհաննէս Գահուէճեան, Սիամանթօ Դաւիթեան, Ռաֆֆի Դաւիթեան, գլխարկով Օհան Սիմոնեան,
Երուանդ Սահակեան, Տիգրան Նալպանտեան, Ժագօ Սեմերճեան, Կիրօ Հինտոյեան, Կարօ Հեքիմեան,
Արամ Գարճեան, Կարօ Սանտրունի, Սարգիս Եագուպեան կրտ., Եղիա Շէմէսեան, Գէորգ Հեքիմեան,
Յարութ Սեմերճեան, Սերոբ Սահակեան, Գէորգ Հինտոյեան եւ Կարօ Գահուէճեան:
Նստած՝ Վիգէն Գրիգորեան, Լեւոն Պոյաճեան, Փօլ Չաուշեան, Լեւոն Պէհէսնիլեան, Սամօ Էլմաճեան,
Թորոս Թահմապեան, Սարգիս Հասէսեան, Յակոբ Հինտոյեան եւ Չարեհ Եագուպեան

Գանձապահ՝ Վիգէն Գրիգորեան
Գոյքապահ՝ Յակոբ Սեւան
Տեղեկատուի պատասխանատու՝ Կարօ Հեքիմեան

Մշակութային եւ ընկերային՝ Օհան Կիւրեղեան

Մարզական՝ Արսէն Աճեմեան
Խորհրդական՝ Գէորգ Գահուէճեան:

Մասնաճիւղի սկսուտ խմբապետ կը նշանակուի Գէորգ Մըսրլեանը:

Տարուայ ընթացքին կը կազմակերպուին երեք բանակումներ: Ազգային եւ տօնական հանդիսութեանց առիթներով սկսուտական խումբը իր մասնակցութիւնը կը բերէ տողանցքով:

Մարզական գետնի վրայ զարկ կը տրուի պասքեթպոլի տղոց խումբի կազմակերպութեան: Փորձերը տեղի կ'ունենան Ահլի Վատի էլ Ճոզ փակ դաշտին վրայ:

Մշակութային եւ ընկերային յանձնախումբի կազմակերպութեամբ տեղի կ'ունենան պատյաններ, պարանցիկ երեկոներ, ընդհանուր զարգացման հաւաքներ եւ տարեկան ճաշերոյթ պարահանդէս 3 Մայիս 1986ին:

Մասնաճիւղի անդամներու ընդհանուր թիւն է 96 որոնցմէ չորս նորագիրներ կուտան իրենց անդամակցութեան երդումը:

1986էն սկսեալ Կեդրոնական Վարչութեան հետ մասնաճիւղի կապերը բնականոն ընթացք կը ստանան:

Մասնաճիւղի նիւթական գործառնութեան պատկերն է մուտք՝ 6740 ամ. տոլար ելք՝ 5650:

22 Նոյեմբեր 1986ին տեղի կ'ունենայ մասնաճիւղի 51րդ անդամական ընդհանուր ժողով նախագահութեամբ՝ Սարգիս Եագուպեանի եւ քարտուղարութեամբ՝ Սերոբ Սահակեանի: Այս ժողովէն ընտրուած 1987 տարուայ մասնաճիւղի վարչութիւնը կը բաղկանայ հետեւեալ անդամներէն.

Ատենապետ՝ Օհան Կիւրեղեան
Փոխ ատենապետ՝ Վիգէն Գրիգորեան

Քարտուղար՝ Լեւոն Պէհեսնիլեան
Գանձապահ՝ Յակոբ Սեւան
Մշակութայինի պատասխանատու՝ Գէորգ Հեքիմեան

Մարզականի պատասխանատու՝ Սարգիս Հասէսեան

Խորհրդական՝ Սերոբ Սահակեան:

Մարզական եւ մշակութային յանձնախումբեր եւ սկսուտական խորհուրդ կ'օժանդակեն վարչութեան գործունէութեան:

Մասնաճիւղի 21րդ տարեկան ընդհանուր բանակումը տեղի կ'ունենայ 18-26 Յուլիսի միջեւ Լաթրուն վանքի պուրակին մէջ մասնակցութեամբ սկսուտական շարքերու 95 անդամներուն եւ խմբապետութեամբ Գէորգ Հինտոյեանի: Բանակումի փակման հանդիսութեան օրը տեղի կ'ունենայ 15 նորագիրներու խոստումի արարողութիւնը հանդիսապետութեամբ Թորոս Թահմազեանի:

Մարզական ճիւղերէն կը զարգանան պասքեթպոլը տղոց եւ աղջկանց բաժիններով եւ նուազ կարեւորութեամբ Ֆուլթպոլը, ծանրաբարձութիւնը եւ փինկ փոնկը:

Երուսաղէմի Հ.Օ.Մ.ի մասնաճիւղի հետ գործակցաբար կ'իրականացուին ընկերային ձեռնարկներ ինչպէս նաեւ ազգային եւ եկեղեցական տօնակատարութիւններ:

12 Դեկտեմբեր 1987ին կ'ընտրուի մասնաճիւղի 1988 տարուայ նոր վարչական կազմ՝

Ատենապետ՝ Օհան Կիւրեղեան
Քարտուղարուհի՝ Անի Սեւան
Գանձապահ՝ Վիգէն Գրիգորեան
Գոյքապահ՝ Գէորգ Հեքիմեան

Ընկերայինի ներկայացուցիչ՝ Կարօ Հեքիմեան

Մարզականի ներկայացուցիչ՝ Սիամանթօ Դաւիթեան

Սկսուտականի՝ Սարգիս Հասէսեան:

Տարեշրջանը կը բնորոշուի մարզական բաժնի բոլոր ճիւղերու՝ փինկ փոնկի, ճատրակի, Ֆուլթպոլի եւ պասքեթպոլի զգալի յառաջդիմութիւններով: Տարեկան ընդհանուր բանա-

կումը տեղի կ'ունենայ 85ն 14ի միջև Միութեան հիմնադրութեան 70 ամեակին նուիրուած յատուկ յայտագրով: Հեղինակութեամբ Կարօ Հեքիմեանի, մասնաճիւղը լոյս կ'ընծայէ «Յուշամատեան Երուսաղէմի Հ.Մ.Ը.Մ.ի» գրքոյկը ուր զանազան բաժիններով արձանագրուած են մասնաճիւղի յիսնամեայ գործունէութեամբ ձեռք բերուած նուաճումները եւ սաղիմահայ գաղութի պատմական փուլերը- [Ծ/103-104 . 43]:


Մասնաճիւղի 53րդ անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած՝ 1989 տարեշրջանի գործունէութեան համար մասնաճիւղի վարչական կազմի դիւանը կը մնայ անփոփոխ: Փոփոխութեան ենթարկուած պաշտօններն են՝ Մշակութային ներկայացուցիչ՝ Գէորգ Սանտրոնի, Սկաուտական՝ Գէորգ Հեքիմեան, Մար-

զական՝ Վահէ Եագուպեան եւ Գոյքապահ՝ Անդրանիկ Հինտոյեան:

Տարեկան գործունէութիւնը կը զարգանայ բնականոն կերպով՝ մարզական, սկաուտական, երիտասարդական, ընկերային եւ մշակութային յանձնախումբերու աշխատանքներով: Յաջող է նաեւ Հ.Օ.Մ.ի Երուսաղէմի մասնաճիւղին հետ վարչութեան գործակցութիւնը, միասնաբար յաջողցնելու համար ընդհանրական աշխատանքներ:

1990 տարեշրջանի մասնաճիւղի վարչութեան անդամներն են՝

Ատենապետ՝ Գէորգ Գահուէճեան
 Փոխ ատենապետուհի՝ Մարօ Նալպանտեան
 Քարտուղարուհի՝ Անի Սեւան
 Գանձապահ՝ Վիգէն Գրիգորեան
 Գոյքապահ՝ Անդրանիկ Հինտոյեան



Երուսաղէմի Հ.Մ.Ը.Մ.ի Փինկփոնկի ախոյեան մարպիկներ՝ Թորոս Թահմապեան, Վիգէն Գրիգորեան, Սարգիս Հասէսեան եւ Յովհաննէս Էօրտեքեան

Սկառուտականի ներկայացուցիչ՝ Օհան Կիւրեղեան

Մարզականի՝ Տիգրան Նալպանտեան

Երիտասարդականի՝ Կարօ Սանտրուկի եւ Յարութ Սեմերճեան:

Վարչութիւնը առաջին հերթին կ'ամբողջացնէ ազգային նորոգութեան աշխատանքները եւ կ'օժտէ հեռապատճէնի ցանցով: Հայֆայի եւ Եաֆայի մասնաճիւղերուն հետ գործակցութիւնը տակաւ կը զարգանայ միասնաբար յաջողութիւններ արձանագրելով մարզական, մշակութային եւ ազգային տօնակատարութիւններու կազմակերպութեամբ:

Զգալի յառաջդիմութիւն կ'արձանագրուի բոլոր մարզերէն ներս, սակայն երկրէն մեկնողներու թիւի աճը աննպաստ կացութիւն կը ստեղծէ Հ.Մ.Ը.Մ.ի Երուսաղէմի մասնաճիւղին համար:

Հրատարակութիւններ

Երուսաղէմի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի գործունէութեան մաս կազմած են հրատարակութիւններ: Մասնաճիւղի ղեկավար անդամներու մասնակցութեամբ 1988ին հրատարակուած է «Յուշամատեան Երուսաղէմի Հ.Մ.Ը.Մ.ի» հատորը խմբագրութեամբ Կարօ Հեքիմեանի: Հրատարակուած են նաեւ «Հ.Մ.Ը.Մ. Տեղեկատու»ներու շարքը:

ՀԱՅՖԱ

1975ին Հ.Մ.Ը.Մ.ի Հայֆայի մասնաճիւղի վարչութեան ատենապետի պաշտօնը կը վարէ Հայկ Ասլանեան: Կազմի մնացեալ անդամներն են՝

Ատենադպիր՝ Պետրոս Տէմիրճեան

Գանձապահ՝ Յովհաննէս Փանոյեան

Խորհրդականներ՝ Գրիգոր Արզումանեան եւ Զոհրապ Եափուճեան:

Կազմը նախորդներուն նման կը գործէ

աւանդական ձեռնարկներու յաջորդական կազմակերպութեամբ: Բարեկենդանի խրախճանք, Ապրիլ 24, Մայիս 28, Խանասորի արշաւանք:

Սէնթ Լուիս վարժարանի տնօրէնութիւնը կը շարունակէ պահանջել վարժարանի շրջաբակէն ներս 25 տարիներէ ի վեր վարձուած ազգային սրահը: Հարցը կը փոխանցուի դատարան:

31 Յունուար 1976ին մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչական կազմի անդամներ կը մնան նոյնները բացի ատենապետէն որ կը փոխարինուի Աբրահամ Լափաճեանով:

Վարչութիւնը սերտօրէն կը գործակցի ՀՕՄի մասնաճիւղի վարչութեան հետ միասնաբար յաջողցնելու համար զոյգ կազմակերպութիւններու աւանդական ձեռնարկները: Ամանորի խրախճանքը տեղի կ'ունենայ Դեկտեմբեր 31ի գիշերը մինչեւ լոյս:

Ազգային սրահի պարպումի դատավարութիւնը կը շարունակուի...

15 Փետրուար 1977ին տեղի կ'ունենայ մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողով որմէ ընտրուած վարչական կազմը, 8 Մարտին, պաշտօններու բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով.

Ատենապետ՝ Հայկ Ասլանեան

Ատենադպիր՝ Սարգիս Գաթաթեան

Գանձապահ՝ Յովհաննէս Փանոյեան

Գոյքապահ՝ Անդրանիկ Գաթաթեան

Խորհրդական՝ Երէմ Լափաճեան:

Ծովագիտի խումբի մը կազմութեան նախաձեռնութիւնը բազմաթիւ դժուարութիւններու կը հանդիպի՝ անբաւարար թիւով մարզիկներ, դաշտի չգոյութիւն եւ պիւտճեկական դժուարութիւններ: Աւանդական ձեռնարկները կը կատարուին նոյն հերթականութեամբ եւ գոհացուցիչ արդիւնքներով:

7 Փետրուար 1978ին կ'ընտրուի մասնաճիւղի նոր վարչական կազմ՝

Ատենապետ՝ Հայկ Ասլանեան
Ատենադպիր՝ Սարգիս Շահինեան
Գանձապահ՝ Անդրանիկ Գաթտէրեան
Գոյքապահ՝ Օհան Տէմիրճեան
Խորհրդական՝ Յարութիւն Փանոյեան:

Տարուայ գործունէութիւնը բազմաթիւ դժուարութիւններու կը հանդիպի եւ աւանդական նախաձեռնութիւնները կարելի չըլլար իրագործել:

1979 տարուայ վարչական կազմի անդամները կը մնան անփոփոխ բացի Յարութիւն Փանոյեանէն որ կը փոխարինուի Զոհրապ Եափուճեանով: Ակումբի սրահի պարպումի դատավարութիւնը կ'աւարտի ի նպաստ Հ.Մ.Ը.Մ.ին: Մայիսին մասնաճիւղը կ'ընդունի Ֆրանսահայ երգիչ Շարլ Ազնաւուրը մեծ խանդավառութիւն ստեղծելով Հ.Մ.Ը.Մ.ի շուրջ:

1980 տարուայ վարչութեան ատենապետի պաշտօնը կը վարէ Գէորգ Թաշճեան:

1980ի աւանդական ձեռնարկներու շարքին բացառիկ յաջողութիւն կ'արձանագրէ 1915ի Ապրիլեան Եղեռնի նշումը: Օրուան բանախօսն է Երուսաղէմէն Կարօ Հեքիմեան գեղարուեստական յայտագրի յաջող մասնակցութեամբ: Նոյն ձեւի յաջողութիւն կ'արձանագրէ Մայիս 28ի տօնակատարութիւնը Երուսաղէմէն Գէորգ Զինֆիզեանի պատգամախօսութեամբ եւ Երուսաղէմի հայկական նուագախումբի մասնակցութեամբ:

Հոկտեմբերի վերամուտին մասնաճիւղը կը կազմակերպէ միջ-անդամական փինկ փոնկի մրցաշարք զոյգ դասակարգերու մասնակցութեամբ եւ յաջող արդիւնքով:

4 Փետրուար 1981ի անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչական կազմը իր աշխատանքներու բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Գէորգ Թաշճեան
Քարտուղար՝ Վարդիվառ Շահինեան
Գանձապահ՝ Անդրանիկ Գաթտէրեան
Խորհրդականներ՝ Զոհրապ Լափաճեան եւ Յարութիւն Փանոյեան:

Այս տարեշրջանին վարչութիւնը կը նախաձեռնէ ակումբի նորոգութեան աշխատանքներուն: Կիրակի օրերը ակումբը կը տրամադրուի երիտասարդ անդամներուն երգի, պարի ու խաղերու յայտագիրներով: Հոկտեմբերէն սկսեալ կը կազմակերպուի հայերէնի դասընթացք: Յունիսէն սկսեալ կը կազմուի Ֆուլթպոլի խումբ:

1982 տարուայ վարչական կազմի անդամներն են՝

Ատենապետ՝ Անդրանիկ Գաթտէրեան
Քարտուղար՝ Վարդիվառ Շահինեան
Գանձապահ՝ Երէմ Լափաճեան
Մշակութայինի պատասխանատու՝ Սարգիս Շահինեան

Գոյքապահ՝ Ստեփան Արզումանեան:

Այս տարեշրջանին յատուկ յանձնախումբ մը կը վարէ մշակութային աշխատանքները որոնք կը միտին հայերէն լեզուի ուսուցման եւ ազգային եւ միութենական դաստիարակութեան զարգացման նոր սերունդին մօտ:

Վարչութիւնը տարեկան անդամավճարի սակը 30էն 100 շեքելի կը բարձրացնէ:

Մայիս 28ի տօնակատարութեան առթիւ մասնաճիւղի փինկ փոնկի եւ Ֆուլթպոլի խումբերը կը մեկնին Երուսաղէմ եւ տեղւոյն մասնաճիւղի խումբերուն դէմ մրցումներ կ'ունենան:

25 Փետրուար 1983ին տեղի կ'ունենայ անդամական ընդհանուր ժողով որուն կողմէ ընտրեալ վարչական կազմը իր աշխատանքներու բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Սարգիս Գաթտէրեան
Փոխ ատենապետ՝ Զոհրապ Եափուճեան
Ատենադպիր՝ Կարօ Փանոյեան
Գանձապահ՝ Յովհաննէս Փանոյեան
Գոյքապահ՝ Վարդիվառ Շահինեան
Խորհրդականներ՝ Երէմ Լափաճեան եւ Օհան Տէրտէրեան:

Նոյեմբերի 5ին մասնաճիւղի Ֆուլթպոլի խումբը կը մեկնի Երուսաղէմ ուր տեղի կ'ունենայ Ֆուլթպոլի մրցաշարք Երուսաղէմի, Եա-

Ֆայի եւ Հայֆայի մասնաճիւղերու խումբերուն միջեւ: Հանդիպումները տեղի կ'ունենան Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 65ամեակի տօնակատարութեան ծիրէն ներս:

Մասնաճիւղի աւանդական առիթներու հաւաքոյթները տեղի կ'ունենան նոյն հերթականութեամբ:

1984 տարուայ վարչական կազմի անդամներն են՝

- Ատենապետ՝ Աբրահամ Լափաճեան
- Քարտուղար՝ Եղիա Թաշճեան
- Գանձապահ՝ Անդրանիկ Գաթտէրեան
- Խորհրդականներ՝ Երէմ Լափաճեան եւ Աւետիս Փանոյեան:

1984ի ընթացքին վարչութիւնը կը ծրագրէ սկստական խումբ մը կազմել եւ այս նպատակով կապ կը հաստատէ սկստական լիկային հետ իմանալու համար սկստական շարժում մը սկսելու պայմանները:

1 Մարտ 1985ին անդամական ընդհանուր ժողովը լսելէ ետք շրջանաւարտ վարչութեան նիւթաբարոյական գործունէութեան տեղեկագիրը կ'ընտրէ նոր վարչական կազմ՝

- Ատենապետ՝ Երէմ Լափաճեան
- Քարտուղար՝ Կարօ Փանոյեան
- Գանձապահ՝ Անդրանիկ Գաթտէրեան
- Գոյքապահ՝ Անդրանիկ Փանոյեան
- Խորհրդական՝ Եղիա Թաշճեան:

Վարչութիւնը իր կողքին կը նշանակէ մարզական յանձնախումբը բաղկացած հետեւեալ անդամներէն. Կարօ Փանոյեան, Աւետիս Փանոյեան եւ Միքայէլ Գաթտէրեան:

Վարչութիւնը կ'իրագործէ ակումբի սրահի նորոգութիւնը:

1986 տարուայ վարչութեան կազմի անդամներն են՝

- Ատենապետ՝ Գէորգ Թաշճեան
- Քարտուղար՝ Կարօ Փանոյեան
- Գանձապահ՝ Անդրանիկ Գաթտէրեան
- Գոյքապահ՝ Իսահակ Փանոյեան
- Մարզական պատասխանատու՝ Զոհրապ Եափուճեան:

Ակումբի կարգ մը նորոգութիւններէն եւ գոյքերու ապահովումէն ետք, 20 Մարտին տեղի կ'ունենայ եղանակի բացման հանդիսութիւն: Ինչպէս անցեալին ակումբի սրահը զանազան առիթներով անդամներուն կը տրամադրուի իրենց ընտանեկան խրախճանքներուն ծառայեցնելու համար: Այս առիթիւ ակումբը նիւթական մուտքեր կ'ապահովէ: Փինկ փոնկի ճիւղը զարգացնելու համար վարչութիւնը նոր սեղանով կ'օժտէ ակումբը: Միաժամանակ կ'իրականանայ սկստական նոր խումբի մը կազմութիւնը 30 անդամներու մասնակցութեամբ: Յատուկ յանձնախումբ մը կը նշանակուի սկստական աշխատանքներու հսկողութեան համար:

Հակառակ գաղութի հայութեան սակաւութիւլ ըլլալուն եւ երկրէն յաճախակի մեկնումներուն, Հայֆայի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը կը շարունակէ իր առաքելութիւնը ըլլալով մնայուն եւ կարեւորագոյն շարժումը Հայֆայի հայ հաւաքականութիւնէն ներս:

ԵԱՖԱ

Մինչեւ 1960 թուականը Եաֆայի մէջ գործած էր Հ.Մ.Ը.Մ.ի ուղեկից Հայկաշէն Մշակութային Միութիւնը որ ունէր նաեւ մարզական եւ սկստական կարեւոր գործունէութիւն: Հայկաշէն Մշակութային Միութեան խումբերը կանոնաւորապէս կը մասնակցէին Պաղեստինի միջ-մասնաճիւղային խաղերուն:

1948էն սկսեալ, դէպի հայրենիք ներգաղթի եւ քաղաքական դժուարին կացութիւններու պատճառով, մասնաճիւղը հետզհետէ տկարացաւ, 1960ական թուականներու վերջաւորութեան դադրեցնելով իր գործունէութիւնը:

1984էն սկսեալ Հայֆայի մասնաճիւղի վարչական եղբայրներու մղումով կը ծրագրուի Եաֆայի մէջ կազմել Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ: Մինչ այդ երիտասարդներէ կազմուած ֆութպոլի խումբ մը արդէն կը գործէր, սակայն կազմակերպուած մասնաճիւղ տակաւին գո-

յուրացումը: Խոսքը կը մասնակցէր Երոստատի եւ Հայֆայի մասնաճիւղերու մասնակցութեամբ Ֆուլպոլի միջ-մասնաճիւղային տարեկան մրցաշարքերուն:

Եռամեայ հետեւողական աշխատանքներէ ետք, 26 Դեկտեմբեր 1987ին, 26 անդամներուն կազմութեամբ պաշտօնապէս հիմնուած կը յայտարարուի Եաֆայի Հ.Մ.Ը.Մ.ի «Հայկաշէն» մասնաճիւղը: Տեղւոյն վրայ մասնաճիւղի անդրանիկ վարչութեան անդամներ կ'ընտրուին՝

Ատենապետ՝ Պօղոս Ղուկասեան

Քարտուղար՝ Սերոբ Շոթիկեան

Գանձապահ՝ Գրիգոր Գալլալեան

Խորհրդականներ՝ Եղիա Լափաճեան, Վրէժ Թորոսեան, Յակոբ Վանայեան եւ Տիգրան Տարագճեան:

Հիմնադրութեան այս աքթի հանդիսու-

թեան օրուայ բանախօս կը հրաւիրուի Երոստատի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի ատենապետ՝ Օհան Կիւրեղեան որ Եաֆայի բազմամեայ ատենապետ՝ Ճորճ Թաշճեանի ձեռամբ նորընտիր վարչութեան ատենապետին կը յանձնէ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշակը: Հիմնադիր ժողովի անդամները հաւաքաբար կը կատարեն իրենց Հ.Մ.Ը.Մ.ականի երգումը:

Նորակազմ վարչութիւնը անմիջապէս գործի լծուելով Ֆուլպոլի խումբի կողքին կը յաջողի կազմել 35 հոգիէ բաղկացող սկստական խումբ մը: Մասնաճիւղը կը գործէ Եաֆայի վանքի շրջափակէն ներս տրամադրուած սրահի մը մէջ: Վարչութիւնը կը ծրագրէ նոյն վանքի աւելի ընդարձակ եւ չգործածուող բաժնի նորոգութեամբ մասնաճիւղի գործունէութիւնը փոխադրել հոն:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՅՈՐԴԱՆԱՆ

ԱՄՄԱՆ

- ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ԵՒ
ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ

13-ին 15 Դեկտեմբեր 1974ին, Ամմանի մասնաճիւղէն պատգամաւորներ՝ Ճորճ Տաքեսեան, Լեւոն Եփրեմեան եւ Աւետիք Դարբինեան կը մասնակցին Հ.Մ.Ը.Մ.ի Ա. Պատգամաւորական ընդհանուր ժողովին գործնական մասնակցութիւն բերելով անոր աշխատանքներուն:

Մասնաճիւղը իր գործունէութիւնը կը զարգացնէ մարզական եւ սկաուտական զոյգ ճիւղերով:

Մինչեւ 1978 թուականը մասնաճիւղի կազմակերպչական կապերը Միութեան կեդրոնական կառոյցին հետ թոյլ կը մնան, գործնական դառնալու համար Համագաղութային Առաջին Ընդհանուր Բանակումին սկաուտական պատուիրակութեան մը մասնակցութեամբ՝ Գալամոսի մէջ Յունաստան:

1979 տարուայ վարչական կազմի անդամներն են՝

- Ատենապետ՝ Ճորճ Տաքեսեան
- Ատենադպիր՝ Յարութիւն Թալաթինեան
- Գանձապահ՝ Արշակ Դաւիթեան
- Երիտասարդացի պատասխանատու՝ Յակոբ Փելթէքեան
- Մարզական՝ Րաֆֆի Գատեան
- Ակումբի՝ Ստեփան Քսաճիքեան
- Սկաուտական՝ Հայկազ Քեպպապեան:

1979էն սկսեալ Ամմանի մասնաճիւղի սկաուտական բաժինը նոր թափով կը վերսկսի գործունէութեան: Սկաուտական Բ. հանդիսութեան առթիւ ակումբի սրահին մէջ տեղի կ'ունենայ երգման արարողութիւն, ներկայութեամբ Լիբանանի Շրջանային Սկաուտական խորհուրդէն պատուիրակութեան մը: Սկաուտական շարքերու 72 անդամներ՝ 19 սկաուտ, 7 արեւոյշ, 26 գայլիկ եւ 20 մրջնիկ կը մասնակցին այս արարողութեան: Սկաուտական շարքերէն պատուիրակութիւն մը կը մասնակցի Լիբանանի սկաուտական բանակումին, Կիպրոսի մէջ: Վարչութեան կողմէ նշանակուած երիտասարդացի յանձնախումբը կը կազմակերպէ պարանցիկ երեկոներ, թէյասեղան, խրախ-

ճանք, ինքնաշարժերով ռալի բէյբըրներ, մասնաճիւղի յարկին տակ պահելով ամմանահայ երիտասարդութիւնը: Նոյնպէս ընկերային բաժինով Հ.Մ.Ը.Մ.ի ակումբը յաճախած են ընտանիքներ ուրբաթ երեկոներու ընթրիքի հաւաքոյթներով:

16 Մարտ 1980ին մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովի Բ. նիստով կ'ընտրուի նոր վարչական կազմ որ իր աշխատանքներու բաժանումը կը կատարէ հետեւեալ կերպով.-

- Ատենապետ՝ Էլի Պէննէեան
- Փոխ-ատենապետ՝ եւ գանձապահ Յակոբ փելթէքեան
- Ատենադպիր՝ Աւետիք Դարբինեան
- Երիտասարդացի պատասխանատու՝ Սեպուհ Երկաթեան
- Սկաուտական պատասխանատու՝ Գէորգ Աւագեան
- Մարզական պատասխանատու՝ Յարութիւն Պերպերեան
- Ակումբի պատասխանատու՝ Ստեփան Քսաճիքեան:

Տարեշրջանի մարզական գործունէութեան գլխաւոր բաժինը կը կեդրոնանայ պասքեթպոլի տղոց խումբին վրայ: Խումբը մաս կը կազմէ Յորդանանի պատկան ֆետերասիոնի առաջին դասակարգին, կը մասնակցի ախոյեանութեան մրցումներուն, միջ-ակմբային մրցաշարքերուն եւ բարեկամական մրցումներու: Խումբի գլխաւոր մարզիկներէն՝ Սարգիս Ժամկոչեան Յորդանանի լաւագոյն 5 խաղացողներու ցանկին մաս կը կազմէ:

Յունուարին մասնաճիւղը կը հիւրընկալէ Պէյրութի Հ.Մ.Ը.Մ.ի տղոց եւ աղջկանց պասքեթպոլի խումբերը:

Իր կարգին մասնաճիւղի սկաուտական բաժինը կը գործէ յաջողութեամբ: Բաժինը կ'ունենայ իր նուագախումբը օժտուած նոր նուագարաններով եւ հետզհետէ կը զարգացնէ իր նուագացանկը: Շաբաթական ընթացիկ հաւաքոյթներուն առընթեր կը կազմակերպէ ար-

շաւներ եւ բանակումներ: Խումբէն 7 հոգի-
նոց պատուիրակութիւն մը կը մասնակցի հա-
մագաղութային Բ. ընդհ. բանակումին:

29 Մարտ 1981ին, մասնաճիւղը կը կայացնէ
անդամական ընդհանուր ժողով: Լսելէ ետք
1980-81 տարեշրջանի վարչութեան գործունէ-
ութեան նիւթաբարոյական տեղեկագիրը
կ'ընտրուի նոր վարչական կազմ՝

Ատենապետ՝ Էլի Պէննէեան

Փոխ ատենապետ եւ գանձապահ՝ Յակոբ
Փելթէքեան

Ատենադպիր՝ Անդրանիկ Տուզմանեան

Ակումբի պատասխանատու՝ Ստեփան
Քսաճիքեան

Երիտասարդացի՝ Յակոբ Գարատանայեան
Մարզական՝ Սարգիս Ժամկոչեան

Սկաուտական՝ Գէորգ Խուլմուլեան:

Այս կազմը յատուկ ուշադրութեան նիւթ
կը դարձնէ մարզական գործունէութիւնը:
Հետզհետէ կը կազմուին պասքեթպոլի աղջ-
կանց եւ կրտսեր տղոց խումբեր: Կը կազմուի
նաեւ Ֆութպոլի խումբ որուն մարզիչի պար-
տականութիւնը կը ստանձնէ Ճորճիկ Համաս-
եանը: 24 Յունիսին պասքեթպոլի տղոց խումբը
կը մեկնի Գանատա մասնակցելու համար
Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային Ա. Մարզական
խաղերուն: Խումբերը կը մասնակցին Յորդա-
նանի պասքեթպոլի Ֆետերասիոնի ախոյեանու-
թեան եւ բաժակի մրցաշարքերուն: Մարզիկ
Սուրէն Էթիէմէզեան կ'ընտրուի տարուայ
տիպար մարզիկ՝ Ֆետերասիոնին կողմէ:

Մասնաճիւղի սկաուտական խորհուրդը կը



Հ.Մ.Ը.Մ.ի Ամանի պասքեթպոլի աղջկանց խումբը

հետեւի խումբի ընթացիկ աշխատանքներուն՝ բանակում, արշաւ, Սբ. Ծննդեան աւետում եւ այլ ելույթներ:

1982 տարուայ վարչական կազմի անդամներն են՝

- Ատենապետ՝ Էլի Պէննէեան
- Փոխ-ատենապետ՝ Արշակ Օրֆալեան
- Ատենադպիր՝ Յարութիւն Թալաթիեան
- Գանձապահ՝ Գրիգոր Թաշճեան

Երիտասարդացի պատասխանատու՝ Սեպուհ Երկաթեան

Մարզական եւ ակումբի՝ Ժան Մարգարեան

Սկաուտական՝ Ճորճիկ Խուլմուլեան:

Մասնաճիւղի գոյգ ներկայացուցիչներ կը մասնակցին Կեդրոնական Վարչութեան կազմակերպած առաջին սկաուտական համագումարին Փետրուար 18էն 21ի միջեւ՝ Աթէնք: Սկաուտական բաժինը կը գործէ նախկին խանդավառութեամբ: Վարչութիւնը կը նշանակէ երիտասարդականի յանձնախումբ մը որ բազմաթիւ ընկերային, մշակութային եւ ազգային նիւթերով ելույթներ կ'ունենայ տարուայ ընթացքին:

3 Ապրիլ 1983ին Ամմանի մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը ընտրեց նոր վարչական կազմ երկու տարուայ գործունէութեան համար, ըստ Յորդանանի երիտասարդականի ընդհանուր տնօրէնութեան որոշումին:

6 Ապրիլի անդրանիկ նիստին վարչութեան դիւանը կը կազմուի հետեւեալ ձեւով:-

- Ատենապետ՝ Ճորճ Տաքեսեան
- Փոխ-ատենապետ՝ Արշակ Դաւիթեան
- Ատենադպիր՝ Աւետիք Դարբինեան
- Գանձապահ՝ Դաւիթ Գրիգորեան

Ակումբի պատասխանատու՝ Գրիգոր Թաշճեան

Մարզական՝ Մկրտիչ Անսուրեան

Սկաուտական՝ Յակոբ Գարատանայեան:

3 Ապրիլ 1983էն մինչեւ 24 Փետրուար 1985 գոյգ տարեշրջաններու ընթացքին վարչու-

թիւնը կ'իրականացնէ մարզական, սկաուտական եւ երիտասարդական բաժիններու կողքին ակմբային, ազգային եւ շինարարական աշխատանքներ: 12 Փետրուար 1984ին կը կազմակերպուի փոքրերու պարահանդէս: 11 Մայիսին տարազահանդէս իսկ Օգոստոս 31ին քերմէսպազար:

24 Ապրիլ 1985ին յատուկ պատրաստութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի ակումբին մէջ կը նշուի Եղեռնի 70ամեակը մասնակցութեամբ Հ.Օ.Մ.ի եւ Ա.Մ.Մ.ի մասնաճիւղերուն եւ հովանաւորութեամբ Սեւան վրդ. Ղարիպեանի:

Վարչութիւնը կը կատարէ նաեւ անդամացանկի բիւրեղացում եւ կարգապահական տնօրինումներ որոնց հետեւանքով մասնաճիւղի անդամներու ընդհանուր թիւը կը նուազի 90ի շուրջ:

Վարչութեան ներկայացուցիչ Ճորճ Տաքեսեան մասնաճիւղը կը ներկայացնէ Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Գ. ընդհանուր ժողովին: Զոյգ տարեշրջաններու վարչութեան նիւթաբարոյական գործունէութիւնը կը գնահատուի «գոհացուցիչ» բանաձեւումով:

24 Փետրուար 1985ին մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը 1985 եւ 1986 տարիներուն համար կը վերընտրէ 3 Ապրիլ 1983ին ընտրուած վարչական կազմը որուն աշխատանքներուն բաժանումը կը մնայ նոյնը:

Վարչութիւնը իր կողքին կը նշանակէ սկաուտական խորհուրդ որուն աշխատանքներուն կը հետեւին վարչականներ Յակոբ Գարատանայեան եւ Արշակ Դաւիթեան:

28 Յունիս 1986ին տեղի կ'ունենայ սկաուտական երդման արարողութիւն: Խումբէն 10 սկաուտներ կը մասնակցին համագաղութային Գ. ընդհանուր բանակումին Շալֆոնթ-Հայց-ի մէջ, Անգլիա:

Ընկերային ձեռնարկներու համար վարչութեան նշանակած երիտասարդական յանձնախումբը կը տանի բեղուն գործունէութիւն, հաճելի օգտակարին միացնող ձեռնարկներով

որոնցմէ Յարուսթիւն վարդապետ Պատիկեանի դասախօսութիւնները Հայ Դատի, հայ արուեստի եւ գծագրութեան ինչպէս նաեւ հայ լեզուի նիւթերուն շուրջ:

Մարզական գետնի վրայ պասքեթպոլի խումբը տկար արդիւնքներ կը յայտնաբերէ եւ Յորդանանի ախոյեանութեան մրցաշարքի աւարտին կ'իջնէ Բ. դասակարգ: Մասնաճիւղը կը սկսի կիրարկել քարաթէի ճիւղը որուն մարզիչի պաշտօնը կը ստանձնէ Խաչիկ Ներսէսեան:

Վարչութեան ներկայացուցիչներ Գրիգոր Թաշճեան եւ Աւետիք Դարբինեան կը մասնակցին Հ.Մ.Ը.Մ.ի միջ-դիւանային առաջին խորհրդաժողովին 5էն 7 Ապրիլ 1985ին Միլանոյի Հայ Տան մէջ՝ Իտալիա:

Ակմբային կեանքը կը զարգանայ նախորդող տարիներու համեմատութեամբ: Ակումբի եւ դաշտի նորոգութիւններ եւ ասֆալթապատում կը հոգացուին վարչութեան գանձէն: Զոյգ տարիներու ելեւմուտքի ընդհանուր գումարն է 68.730 Յորդանանեան Զինար:

1987 եւ 1988 տարիներու գործունէութեան համար մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչական կազմը իր դիւանը կը կազմէ 25 Մարտ 1987ի նիստի ընթացքին հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Էլի Պէննէեան
 - Փոխ-ատենապետ՝ Տոքթ. Յակոբ Փելթեքեան
 - Ատենադպիր՝ Կարօ Կիւլոյեան
 - Գանձապահ՝ Գէորգ Աւագեան
 - Մարզականի ներկայացուցիչ՝ Կարօ Սարգիսեան
 - Սկաուտական՝ Արշակ Դաւիթեան
 - Երիտասարդաց՝ Պետրոս Ասլանեան:
- Մասնաճիւղի բոլոր բաժինները կը գործեն բնականոն ընթացքով: Մարզական բաժինը կը ներկայացուի միայն Բ. դասակարգի պասքեթպոլի խումբով: Մասնաճիւղի անդառնիներէն՝ Սարա Փելթեքեան 50 մրցակիցներու շարքին,

Յորդանանի քարաթէի մրցաշարքին առաջին կը հանդիսանայ եւ կը տիրանայ սեւ գոտիի աստիճանին:

1էն 10 Ապրիլ 1987ին Հ.Մ.Ը.Մ.ական Վիգէն Տաքէսեանի նախաձեռնութեամբ կը կազմակերպուի տասնօրեայ քայլարշաւ Ռամթա քաղաքէն դէպի հարաւ Ազապա նաւահանգիստ: Քայլարշաւի հանգրուաններուն կը մասնակցին Յորդանանի արքայական ընտանիքի անդամներ, Հ.Մ.Ը.Մ.ականներ եւ յորդանանցի մարզիկներ: Քայլարշաւի աւարտին Յորդանանի թագուհի՝ Նուր Հիւսէյնը եւ Իշխան Ապտալա Պըն Հիւսէյնը անձնապէս կը դիմաւորեն Վիգէն Տաքէսեանը գնահատելով Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկի այս աննախընթաց նախաձեռնութիւնը:




Ամմանի քարաթէի ախոյեան մարպիկուհիներ

Միութեան հիմնադրութեան 70ամեակը կը նշուի յատուկ հանդիսութեամբ:

Օրուայ բանախօսն է Գահիրէէն Տոքթ. Սուրէն Պայրամեան: Այս առթիւ մասնաճիւղի երկարամեայ ղեկավար անդամներէն Գէորգ (Ճորճ) Տաքէսեան կը պարգեւատրուի Հ.Մ.Ը.Մ.ի Արժանեաց Շքանշանով:

Սկաուտական բաժինը փոխադարձ այցելութիւններ կու տայ Հ.Մ.Ը.Մ.ի Գահիրէի մասնաճիւղին անոր հիմնադրութեան 75ամեակին առիթով: 14 եւ 15 Յունուար 1989ին մասնաճիւղի պասքեթպոլի տղոց, աղջկանց եւ կըրտ-



Ամմանի մասնաճիւղի քարաթէի ընդհանուր կապուր

սերներու խումբերը Գահիրէի մէջ կը մասնակցին տեղւոյն մասնաճիւղի կազմակերպած պասքեթպոլի մրցաշարքին նուիրուած մասնաճիւղի հիմնադրութեան 75ամեակին:

Զոյգ տարիները կ'աւարտին նիւթական բեղուն գործունէութեամբ:

Ամմանի սկաուտներէն խմբակներ կը մասնակցին Ապրիլ 24ի եւ Մայիս 28ի յուշատօներուն, ազգային, պետական եւ միութենական հանդիսութիւններուն պաշտօնական անձնաւորութիւններու ընդունելութեանց, ինչպէս նաեւ ակումբէն ներս ժամանցի եւ խրախճանքի հաւաքոյթներուն:

Ամմանի մասնաճիւղին մէջ կը գործէ նաեւ երիտասարդականի բաժին մը որուն աշխատանքները կը ծրագրուին եւ կ'իրագործուին յատուկ վարչութեան մը կողմէ: Երիտասարդականի գլխաւոր աշխատանքներէն են ակումբէն ներս հաւաքական խաղեր-պինկօ, պարանցիկ երեկոյթներ որոնք կ'իրականանան Հ.Մ.Ը.Մ.ական միջնորդրտի մէջ:

Ամմանի Հ.Մ.Ը.Մ.ը սերտօրէն կը գործակցի տեղւոյն Հ.Օ.Մ.ի մասնաճիւղին հետ: Հ.Օ.Մ.ը կը գործէ նոյն յարկին տակ:

25 Մայիս 1988ին մասնաճիւղը կ'ընդունի Կիլիկիոյ կաթողիկոսութեան գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի այցելութիւնը, ընկերակցութեամբ Լիբանանի Թեմի առաջնորդ Արամ Արք. Քէշիշեանի եւ երեսփոխան Մեթր Խաչիկ Պապիկեանի: Վեհափառի այցելութիւնը Ամման կը կայանար Երուսաղէմի Պատրիարք՝ Եղիշէ Արք. Տէրտէրեանի հրաւերով:

13էն 16 Յուլիս 1989ին տեղի կ'ունենայ մասնաճիւղի տարեկան բանակումը որուն գլխաւոր թեման էր «Ազգային Դաստիարակութիւն»: 27 Ապրիլ 1990ին Երիտասարդացի եւ սկաուտ խորհուրդի կազմակերպութեամբ տեղի կ'ունենայ դպրոց բանակում Հայ Դատի ու ղարաբաղեան պայքարի թեմաներով:

Մասնաճիւղի արեւոյշ եւ մարզիկ Լարա Տէմիրճեան որ 1983էն ի վեր մաս կը կազմէ

Յորդանանի հաւաքականին, 1990ին կը մասնակցի Չինաստանի մէջ Ասիոյ ախոյեանութեան մրցումներուն: Լարա 1987էն ի վեր կը կրէ Յորդանանի Լողի ախոյեանութեան տիտղոսը:

Մասնաճիւղի հրապարակային աւանդական հաւաքոյթներէն են Ապրիլ 24ի ոգեկոչման հանդիսութիւնները մասնակցութեամբ գաղութի բոլոր հայ կազմակերպութիւններուն: Հանդիսութիւններուն օրոկայ բանախօսներ հրաւիրուած են մտաւորական ուժեր, գլխաւորաբար Լիբանանէն: Մասնաճիւղը նշած է նաեւ Մայիս 28ի տարեդարձները յատուկ յայտագիրներով:

Հ.Մ.Ը.Մ.ի Ամմանի մասնաճիւղը իր սեփական աւանդական կարելիութիւններով գաղութին մէջ վերցուցած է գլխաւոր դերակատարութիւն մէկն գետնի վրայ: Միակ դժուարութիւնը որուն կը հանդիպին մասնաճիւղի ղեկավարները, երկրէն յաճախակի մեկնումներն են տնտեսական կամ քաղաքական պայմաններու բերումով:

296

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

ՖՐԱՆՍԱ - ՓԱՐԻԶ

Հ.Մ.Ը.Մ. ՖՐԱՆՍ

- ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ
- ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ
- ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ
- ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ
- ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԵԼՈՅԹՆԵՐ ԵՒ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ

ԱՏԼԱՆՏԵԱՆ
ՈՎԵՆԱՆՈՍ



ՓԱՐԻՁ

ՖՐԱՆՎԱ

ՎԱԼԱՄ

ԳԵՐՈՂԱՆԻԱ

ՍՄԱՏՐԱԿԻԱ

ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Ծանօթ է որ Բ. Աշխարհամարտի աւարտէն ետք Ֆրանսայի զանազան քաղաքներուն մէջ նախկին Հ.Մ.Ը.Մ.ականներէ բաղկացած փոքր տարողութեամբ մարզական խումբեր շարունակած են գործել: Սակայն շրջանային կառոյցի մը բացակայութեան եւ խումբերու կազմերէն ներս հետզհետէ ոչ հայ մարզիկներու թիւի առաւելութեան պատճառով Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարական ազդեցութիւնը նուազած է ի վերջոյ միայն անուանական դառնալով:

1970ական թուականներու սկիզբը եւ 1975ի Լիբանանի քաղաքացիական կռիւներուն պատճառով կարեւոր թիւով Հ.Մ.Ը.Մ.ականներ կը փոխադրուին Փարիզ:

1977ին Մերձաւոր Արեւելքի Շրջանային սկաուտական խորհուրդի անդամներէն Սուրէն Մուրատեան իր շուրջ հաւաքելով Պէյրութի մասնաճիւղի նախկին սկաուտներ եւ մարզիկներ կը ծրագրէ Հ.Մ.Ը.Մ.ական շարժում ստեղծել Փարիզի մէջ: Այս նպատակով առաջին հերթին ան կապ կը հաստատէ հայ արիւններու պես Տոքթ. Գուրգէն Մեծատուրեանի հետ միասնական գործունէութեան նպատակով: Սուրէն Մուրատեան իր ծրագիրներու մասին տեղեակ կը պահէ Հ.Մ.Ը.Մ.ի նորակազմ կեդրոնական Վարչութիւնը որուն հետ հանդիպումներ կ'ունենայ Պէյրութի մէջ: Մուրատեան կապ կը հաստատէ նաեւ Հ.Մ.Ը.Մ. անունը կրող կազմակերպութեանց ներկայացուցիչներու եւ Գրիգոր Յակոբեանի նախկին գործակիցներէն Վազգէն Անդրէասեանի հետ: Վերջինս առանձին մասնաճիւղ մը ունենալու ծրագրին ի նպաստ կ'արտայայտուի: Փարիզի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի մը կազմութեան ծրագրին մասին նպաստաւոր կեցուածք ունի նաեւ Հ.Յ.Դ. Ֆրանսայի կեդրոնական կոմիտէն եւ պատրաստ է Մշակոյթի Տան մէջ նստավայր տրամադրելու նախատեսուած մասնաճիւղի գործունէութեան համար: Մասնաճիւղի կազ-

մութիւնը յաջողցնելու համար կը կազմուի նախապատրաստական յանձնախումբ:

17 Դեկտեմբեր 1977ին Փարիզի Մշակոյթի Տան մէջ հաւաքուելով 62 անդամներ կը գումարեն մասնաճիւղի կազմութեան հիմնադիր ժողով եւ կ'ընտրեն ինը անդամներէ բաղկացած առժամեայ վարչութիւն վեցամսեայ գործունէութեան համար: Կեդրոնական Վարչութիւնը 19 Յունուար 1978ի նիստի ընթացքին կը վաւերացնէ Փարիզի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի կազմութիւնը եւ վարչական կազմը բաղկացած հետեւեալ անդամներէն.-

- Ատենապետ՝ Կարպիս Պոսնոյեան
- Ատենադպիր՝ Յակոբ Թուլումեան
- Գանձապահ՝ Վարդգէս Միրոյեան
- Սկաուտ պատասխանատու՝ Հայկ Վարդապետեան
- Ֆութպոլի պատասխանատու՝ Յարութիւն Հաճի Հայկեան
- Պասքեթպոլի պատասխանատու՝ Հրաչ Սիսեռեան
- Խորհրդականներ՝ Սուրէն Մուրատեան, Արթին Արթինեան եւ Պատրիկ Անդրէասեան:

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Անդամարչաւի աշխատանքի աւարտին եւ սկաուտական խումբի մը կորիզի կազմութեան առընթեր 6 սկաուտներ կը մասնակցին Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային Ա. ընդհանուր բանակումին Գալամոսի մէջ, Յունաստան:

Մասնաճիւղի անդամական Գ. ընդհանուր ժողովը կ'ընտրէ մնայուն անդրանիկ վարչութիւնը հետեւեալ կազմով.-

- Ատենապետ՝ Կարպիս Պոսնոյեան
- Ատենադպիրներ՝ Պետրոս Տէր Մովսէսեան եւ Բ. Գալֆայեան
- Գանձապահ՝ Վարդգէս Միրոյեան
- Խորհրդականներ՝ Սուրէն Մուրատեան, Հայկ Վարդապետեան, Հրաչ Սիսեռեան, Կարօ Թոսունեան եւ Սալբի Շահմիրեան:

Մասնաճիւղի պատգամաւորներ՝ Սուրէն Մուրատեան եւ Կարպիս Պոսնոյեան Փարիզի մասնաճիւղը կը ներկայացնեն Պատգամաւորական Բ. ընդհանուր ժողովին: Խորհրդակցական ձայնով ժողովին կը հրաւիրուին նաեւ Վարդգէս Միրոյեան եւ Սերոբ Մանուկեան:

27 Յունիս 1979ին մասնաճիւղը կը ստանայ պետական ճանաչման իր հաստատագիրը՝ ASSOCIATION SPORTIVE-HOMENETMEN FRANCE անունով եւ Ֆրանսայի այլ նահանգներուն մէջ մասնաճիւղեր ունենալու իրաւունքով:

Մասնաճիւղը կը պատրաստուի յաջորդ եղանակին մասնակցելու իր դասակարգի Ֆուլթայոլի ախոյեանութեան մրցաշարքին:

15 Դեկտեմբեր 1979ին տեղի կ'ունենայ մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը ատենապետութեամբ՝ Տիգրան Ճիմպաշեանի եւ քարտուղարութեամբ՝ Մարալ Սրապեանի: Շրջանաւարտ վարչութեան տեղեկագրի քննութենէն ետք 1980 տարուայ գործունէութեան համար կ'ընտրուի նոր վարչական կազմ՝

- Ատենապետ՝ Լեւոն Պաղտասարեան
 - Ատենադպրուհի՝ Սալբի Շահմիրեան
 - Գանձապահ՝ Պետրոս Տէր Մովսէսեան
- Սկսած վարչական պատասխանատու՝ Վարդան Միքայէլեան

Ֆուլթայոլի պատասխանատու՝ Վարդան Ղաւզալեան

Խորհրդականներ՝ Սուրէն Մուրատեան, Հրաչ Սիսեռեան, Կարօ Թոսունեան եւ Վարդգէս Միրոյեան:

Այս կազմի կարեւորագոյն աշխատանքը կ'ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ի Համագաղութային Բ. Ընդհանուր Բանակումի կազմակերպութիւնը որ մասնաճիւղի վարչութիւնը կ'իրականացնէ մեծ ձեռներէցութեամբ:

Տարեվերջին մասնաճիւղի անդամներու թիւը 104 է, հետեւեալ բաժանումներով սկսուածներ՝ 30, մարզիկներ՝ 38 եւ օժանդակ անդամներ՝ 36:

20 Նոյեմբեր 1980ին կ'ընտրուի նոր վարչական կազմ՝

- Ատենապետ՝ Կարպիս Պոսնոյեան
- Ատենադպիր՝ Կարպիս Երեմեան
- Ատենադպրուհի՝ Տանի Հալաճեան
- Գանձապահ՝ Գէորգ Աբգարեան
- Յանձնախումբերու ներկայացուցիչներ՝ Սկսուածներ՝ Սուրէն Մուրատեան
- Ֆուլթայոլ՝ Յարութիւն Թոսունեան
- Պասքետբոլ՝ Վարդան Էքմէքճեան
- Ընկերային՝ Սալբի Շահմիրեան
- Խորհրդական՝ Ռիթա Իսահակեան:

Այս կազմը կը յաջողի հաստատուել մնայուն հիմերու վրայ դնել մասնաճիւղը, փարիզահայ գաղութի հետաքրքրութիւնը կեդրոնացնելով իր վրայ:

Նախագահութեամբ Յակոբ Պալեանի եւ քարտուղարութեամբ Տիգրան Ճիմպաշեանի մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ 1981ի վարչական նոր կազմ՝

- Ատենապետ՝ Լեւոն Պաղտասարեան
- Ատենադպիր՝ Կարպիս Երեմեան
- Քարտուղարուհի՝ Տանի Հալաճեան
- Գանձապահ՝ Գէորգ Աբգարեան
- Յանձնախումբերու ներկայացուցիչներ՝ Ֆուլթայոլ՝ Կարօ Թոսունեան
- Պասքետբոլ՝ Հրաչ Սիսեռեան
- Սկսուածներ՝ Յարութիւն Թոսունեան:

Այս տարեշրջանէն սկսեալ փինկ-փոնկի ճիւղն ալ կարեւորութիւն կը ստանայ:

23 Հոկտեմբեր 1983ին կը գումարուի անդամական ընդհանուր ժողով որուն վերջին օրակարգով ընտրուած վարչական կազմը կը բաղկանայ հետեւեալ անդամներէն.-

- Ատենապետ՝ Անդրանիկ Պահարեան
- Փոխ ատենապետ՝ Վարդան Էքմէքճեան
- Ատենադպրուհի՝ Արտա Գալայճեան
- Գանձապահ՝ Լեւոն Պաղտասարեան
- Սկսուածներ՝ պատասխանատու՝ Յարութիւն Թոսունեան

Պասքետբոլի պատասխանատու՝ Հրաչ Սիսեռեան

Ֆոլկլորի պատասխանատու՝ Կարպիս Պոսնոյեան:

Վարչութիւնը այս տարեշրջանին կը դիմէ կարգ մը պատժական տնօրինումներու մասնաճիւղի կազմակերպչական գործունէութիւնը զօրացնելու նպատակով:

22 Սեպտեմբեր 1984ին, ներկայութեամբ Կեդրոնական Վարչութեան ատենապետ Վարդգէս Տէր Կարապետեանի, «Հայ Մշակութային Տուն»ի սրահին մէջ տեղի կ'ունենայ մասնաճիւղի տարեկան անդամական ընդհանուր ժողովը: Ժողովին կը նախագահէ Սերոբ Մանուկեան քարտուղարութեամբ Կարպիս Երեմեանի:

Ժողովը լսելէ ետք 1984 տարուայ գործունէութեան տեղեկագիրը եւ առաջադրելէ ետք յաջորդ տարուայ գործունէութեան ծրագիրը, կ'ընտրէ նոր վարչական կազմ որուն կը մասնակցին, Կարօ Թոսունեան, Վարդան Միքայէլեան Լ. Մոմճեան, Լեւոն Պաղտասարեան, Կարպիս Երեմեան, Հրայր Տէր Գրիգորեան եւ Կարէն Ռշտունի:

4 Հոկտեմբեր 1985ին մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը, լսելէ ետք 1984 տարուայ վարչութեան գործունէութեան տեղեկագիրը, կ'ընտրէ նոր վարչական կազմ՝

- Ատենապետ՝ Հրաչ Սիսեռեան
- Ատենադպիր՝ Գէորգ Աբգարեան
- Գանձապահ՝ Վահիկ Փիրճանեան

Պասքեթպոլի պատասխանատու՝ Կարպիս Պոսնոյեան

Սկստակական պատասխանատու՝ Հրայր Տէր Գրիգորեան:

Վարչութիւնը իր կողքին կը նշանակէ սկստակական խորհուրդ, պասքեթպոլի եւ ֆուլթպոլի յանձնախումբեր:

Մասնաճիւղի 10րդ անդամական ընդհանուր ժողովը 1986-87 տարեշրջանի գործունէութեան համար կ'ընտրէ նոր վարչական կազմ որուն դիւանի անդամներն են՝

Հրաչ Սիսեռեան՝ ատենապետ, Արփի Յովնանեան՝ ատենադպրուհի եւ Վահիկ Փիրճանեան՝ գանձապահ: Վարչութեան մնացեալ ան-

դամներն են՝ Ռուզան Փափագեան, Կարպի Պոսնոյեան, Յարութիւն Հաճիհայկեան եւ Կարպիս Երեմեան:

Տարեշրջանը կը բոլորուի սկստակական, մարզական, ընկերային եւ պաշտօնական ճիւղերու բեղուն գործունէութեամբ: Մասնաճիւղի անդամներու ընդհանուր թիւն է 203:

17 Հոկտեմբեր 1987ին մասնաճիւղի անդամական 11րդ ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ.

- Ատենապետ՝ Հրաչ Սիսեռեան
- Փոխ ատենապետ՝ Կարպի Պոսնոյեան
- Ատենադպիր՝ Կարպիս Երեմեան
- Գանձապահ՝ Գէորգ Աբգարեան
- Յանձնախումբերու ներկայացուցիչներ՝

Ֆոլկլոր՝ Յարութիւն Հաճիհայկեան եւ Գէորգ Աշքոյեան

Պասքեթպոլ՝ Տիգրան Շահմիրեան

Սկստակութիւն՝ Ժիրայր Մոմճեան եւ Վարանդ Պաղտասարեան:

Պասքեթպոլի, ֆուլթպոլի եւ ընկերային յանձնախումբեր կ'օժանդակեն մասնաճիւղի աշխատանքներուն: Սկստակական բաժինը կը հսկէ վարչութիւնը ուղղակիօրէն:

1988-89 տարեշրջանին վարչութեան կազմի անդամներն են

- Ատենապետ՝ Հրաչ Սիսեռեան
- Փոխ ատենապետ՝ Կարպի Պոսնոյեան
- Ատենադպիր՝ Վարանդ Պաղտասարեան
- Գանձապահ՝ Գէորգ Աբգարեան
- Գոյքապահ՝ Կարօ Թոսունեան

Խորհրդականներ՝ Ներսէս Շահինեան եւ Մկրտիչ Օսկեան:

Տարեվերջին անդամներու ընդհանուր թիւն է 223 որոնցմէ 91ը սկստակական շարքերէն: Մասնաճիւղը կը հրատարակէ ԱՐԾԻԻ ներքին ամսաթերթը:

Այս տարեշրջանին մասնաճիւղի գլխաւոր աշխատանքը պիտի ըլլար սկստակական կազմէն 26 անդամներու մասնակցութիւնը Հայաստանի մէջ UNESCOի կողմէ կազմակերպուած ԳՈԲՄԻի բանակումին:

1989-90 տարեշրջանին վարչութեան դիւանի անդամները կը մնան անփոփոխ բացի ատենադպիրի պաշտօնէն ուր Շանթ Ոսկերիչեան կը փոխարինէ Վարանդ Պաղտասարեանը: Վերջինս կը ստանձնէ խորհրդականի պաշտօն հետեւեալ անդամներու կողքին.- Կարօ Թոսունեան, Հրայր Տէր Գրիգորեան, Ներսէս Շահինեան եւ Մկրտիչ Օսկեան:

Բացի վարչական պարտականութիւն վերցուցած անդամներէն,

1977էն 1990 ժամանակաշրջանին մասնաճիւղի զանազան յանձնախումբերուն իրենց մասնակցութիւնը բերած են հետեւեալ անդամները.-

Սկաուտութիւն՝

Ժան Խտրչեան, Արմինէ Տէր Գրիգորեան, Յարութիւն Թոսունեան, Զեփիւռ Գասպար-

եան, Արտա Գալայճեան, Դրօ Էքմէքճեան, Հայկ Վարդապետեան, Կարապետ Նորիկեան, Յովիկ Վարդապետեան, Կելիկ Ղաւզալեան, Անտրէ Մարգարեան, Իտա Մշոյեան եւ ուրիշներ:

Պասքեթպոլ

Լեւոնդին Ոսկերիչեան, Րաֆֆի Խշվաճեան, Էլիզապէթ Սիսեռեան, Հայկ Վարդապետեան, Ահարոն Պոյաճեան, Յովիկ Վարդապետեան, Սազօ Մինասեան եւ ուրիշներ:

Ֆութպոլ՝

Սերժ Սէֆէրեան, Սեդրակ Գերթէչեան, Հայկարամ Դիւրեկ, Յարութիւն Կոպելեան, Ալեքս Պալլքճեան եւ ուրիշներ:



Փարիզի Հ.Մ.Ը.Մ. Ֆրանսի պասքեթպոլի առաջին կապւր՝ իր դասակարգի Փարիզի ախոյեան

ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Պասքեթպոլ

Հ.Մ.Ը.Մ. Ֆրանսի մարզական գործունեութիւնը կը սկսի իր հիմնադրութեան առընթեր պասքեթպոլի կիրարկումով:

1983-84 տարեշրջանին պասքեթպոլի տղոց կազմը կը մասնակցի Փարիզի պատուոյ դասակարգի ախոյեանութեան մրցաշարքին: Այս տարեշրջանին կը կազմուի պասքեթպոլի աղջկանց խումբը:

1985ին պասքեթպոլի կազմը կ'ապահովէ իր դասակարգի ախոյեանութեան բաժակը: Պասքեթպոլի խումբի մարզիչ-խմբապետն է Հրաչ Սիսեռեան: Խումբին մաս կը կազմեն Հրաչիկ Երեմեան, Վիգէն Մազմանեան, Ալօ Խշվաճեան Վարանդ Պաղտասարեան, Յարութիւն Մղտեսեան, Տիգրան Շահմիրեան եւ Վարդան Էքմէքճեան:

1985ի Մայիսի 26ին, մասնաճիւղը կը կազմակերպէ միջ-մասնաճիւղային «Սուրէն Մուրատեան» պասքեթպոլի մրցաշարք ի յիշատակ մասնաճիւղի հիմնադիր Սուրէն Մուրատեանի որ մահացած էր 1981ին: Վալանսի եւ Լոնտոնի մասնաճիւղերը մասնակցեցան այս մրցաշարքին որուն ախոյեանը հանդիսացաւ Փարիզի կազմը: Այս առթիւ տեղի ունեցաւ տողանցք եւ մրցանակաբաշխութիւն- [Ծ/51.14]:

Այնուհետեւ «Սուրէն Մուրատեան» պասքեթպոլի մրցաշարքը աւանդութիւն պիտի դառնար տարեկան հերթականութեամբ եւ Ֆրանսահայ զանազան պասքեթպոլի խումբերու մասնակցութեամբ:

1986ին պասքեթպոլի նորակազմ խումբը զգալի յառաջդիմութիւն կ'արձանագրէ Փարիզի ախոյեանութեան իր դասակարգի 3րդ դիրքը գրաւելով: Խումբը Սբ. Զատկուայ արձակուրդներուն կը մեկնի Վալանս մրցելու տեղւոյն Հ.Մ.Ը.Մ.ի խումբին դէմ: 17-18 Մայիսին

մասնաճիւղը կը կազմակերպէ միջ-եւրոպական մասնաճիւղերու մրցաշարք որուն իրենց մասնակցութիւնը կը բերեն Վալանսի, Միլանոյի, Լոնտոնի եւ Փարիզի Հ.Մ.Ը.Մ.ի խումբերը:

1987ին պասքեթպոլի տղոց կազմը Ֆետերասիոնի մրցաշարքին իր դասակարգի ախոյեանութեան կ'արժանանայ:

1989-90 տարեշրջանին խումբը դասակարգի բարձրացում կ'ունենայ եւ կը մասնակցի Excellence Inter-Departemental դասակարգի Ֆետերասիոնի ախոյեանութեան մրցաշարքին:

1990 Ապրիլ 12էն 16 պասքեթպոլի խումբը կը մասնակցի համագաղութային Գ. խաղերու պասքեթպոլի մրցաշարքին Վալանսի մէջ:

Ֆութպոլ

Հ.Մ.Ը.Մ. Ֆրանսի կիրարկած մարզական երկրորդ ճիւղն է ֆութպոլը:

1984ի եղանակին ֆութպոլի խումբը բացառիկ յաջողութիւններ կ'արձանագրէ ապահովելով իր դասակարգի ախոյեանութիւնը եւ իրաւունք կը ստանայ յաջորդ տարեշրջանին բրոմոսիոն տը տէօզիէմ տիվիզիոնի մրցաշարքին մասնակցելու:

1985-86 տարեշրջանին խումբը կը մասնակցի Seine-St. Denis շրջանի Բ. դասի ախոյեանութեան մրցաշարքին:

1987ին ֆութպոլի Ա. եւ Բ. խումբերը 31 մարզիկներով իրենց փորձերը կը կատարեն Anthonyի քաղաքապետարանի դաշտին վրայ: Սակայն կազմերը սկարանալով 1988ին վարչութիւնը կը ստիպուի մէկ խումբի վերածել զոյգ կազմերը:

1989-90 տարեշրջանը կրկին նոր յաջողութիւններու տարի մը պիտի ըլլար: Մասնաճիւղի զոյգ խումբերը կը մասնակցին Hauts de Seineի նահանգային Գ. բաժանումի մրցաշարքին: Փորձերը տեղի կ'ունենան Գլամարի Stade de la Plaineի վրայ:



Հ.Մ.Ը.Մ. Ֆրանսի 1983-84 եղանակի ֆութպոլի խումբը

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՍՈՒԹԻՒՆ

Փարիզի մասնաճիւղի կազմութեան օրերուն, Սուրէն Մուրատեանի նախաձեռնութեամբ կապեր կը հաստատուին «Հայ Արի» սկաուտական կազմակերպութեան ղեկավարութեան հետ փորձելով գործակցութիւն ստեղծել Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի եւ «Հայ Արի»ներու միջեւ: Հակառակ բոլոր ճիգերուն եւ կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչներու միջամտութիւններուն Հայ Արի – Հ.Մ.Ը.Մ. բաղձալի միացումը չ'իրականանար:

Հ.Մ.Ը.Մ. Ֆրանսի սկաուտական ճիւղը կը գործէ մեծաքայլ յառաջդիմութիւններով:

1980ին մասնաճիւղը կը հիւրընկալէ

Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային Բ. ընդհանուր բանակումը:

1986ին սկաուտական բաժնի ընդհանուր թիւն է 89 որոնցմէ եօթը նուագախումբի անդամներ են. տարեկան ընդհանուր բանակումը տեղի կ'ունենայ 15-24 Յուլիսին Grouy Sur Oureyի մէջ ուր եւ տեղի կ'ունենան աստիճանաւորական եւ հատուածներու բանակումները: 10էն 20 Օգոստոսին եօթը սկաուտներ կը մասնակցին համագաղութային Գ. ընդհանուր բանակումին՝ Լոնսոն:

Սկաուտական բաժինը կը կազմակերպէ նաեւ յատուկ հանդիսութիւններ՝ սկաուտական ուրախ երեկոյ, սկաուտի օր, ծնողական

հաւաքոյթ, ամանորի հանդէս եւ ազգային ու պետական առիթներու մասնակցութիւն:

1987ի վերամուտին սկսուող կազմը թուական զգալի նուազում կ'արձանագրէ սակայն աւանդական գործունէութեան բոլոր բաժինները կ'իրագործուին: 1988ի Յուլիսին մասնաճիւղը կը կազմակերպէ տարեկան ընդհանուր բանակում որուն իրենց մասնակցութիւնը կը բերեն Միլանոյի եւ Լոնտոնի մասնաճիւղերէն պատուիրակութիւններ:

1988ի վերամուտին կազմը կը վերագտնէ իր նախկին թիւը՝ 98 անդամ ներառեալ նուագախումբը:

Փարիզի Հ.Մ.Ը.Մ. Ֆրանս մասնաճիւղի տարեկան 7րդ ընդհանուր բանակումը տեղի կ'ունենայ 10-19 Յուլիս 1990ին Ֆոնթընէյ Թրէսինյի մէջ մասնակցութեամբ 60 սկսուողներու - [Ծ/105-106.22]:

Իսկ 21էն 31 Յուլիսին մասնաճիւղի 12 սկսուողներ կը մասնակցին համագաղութային Դ. ընդհանուր բանակումին Աթէնքի մէջ:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԵԼՈՅԹՆԵՐ ԵՒ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Փարիզի Հ.Մ.Ը.Մ. Ֆրանսի վարչութիւնները ունեցած են հրապարակային եւ ընկերային ձեռնարկներ Հ.Մ.Ը.Մ.ական միջոցառումներու մասին առիթներուն եւ նիւթական նպաստներ ապահովելով մասնաճիւղի սնտուկին:

Այս կարգի ելոյթներէն են տարեկան պարահանդէսներ, մարզական մրցաշարքերու լրումին յաղթանակի խրախճանքներ եւ ընկերային յատուկ հաւաքոյթներ:

1էն 3 Մայիս 1987ին, մասնաճիւղը կը տօնէ իր հիմնադրութեան տասնամեակը: Այս առիթիւ տեղի կ'ունենան Ֆուլթպոլի եւ պասքեթպոլի մրցաշարքեր: Ֆուլթպոլի մրցաշարքին կը մասնակցին Միլանոյի, Վալանսի եւ Փարիզի Հ.Մ.Ը.Մ. Ֆրանսի Ա. եւ Բ. կազմերը: Ախոյեանութեան բաժակին կը տիրանայ Վալանսի Հ.Մ.Ը.Մ.ի կազմը: Պասքեթպոլի մրցաշարքին կը մասնակցին Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի, Մի-



լանոյի, Վալանսի, Լոնտոնի Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի, Հ.Մ.Ը.Մ.-Փարիզի եւ Հ.Մ.Մ.-Նիսի կազմերը: Յաղթականի բաժակին կը տիրանայ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի խումբը:

Այս առթիւ տեղի կ'ունենայ պաշտօնական փակման հանդիսութիւն ներկայութեամբ Արեւմտեան Եւրոպայի կաթողիկոսական նուիրակ Գիւտ Արք. Նազաչեանի, Իրանի հայոց թեմի առաջնորդ Արտակ Արք. Մանուկեանի, Ֆրանսայի պետական եւ քաղաքապետական ղեկավարներու եւ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ Տոքթ. Յարութիւն Գազանճեանի: Հանդիսութեանց կը յաջորդէ խրախճանք 700 անձերու ներկայութեամբ- [Ծ/67-68.12]:

18 Յունիս 1988ին մասնաճիւղը կը նշէ Միութեան հիմնադրութեան 70ամեակը:

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ

25 Նոյեմբեր 1988ին Սովետական Հայաստանի նախարարաց խորհուրդը որոշեց միջազգային մանկական համակարգչային դպրոց բանակում մը կայացնել 1989ի ընթացքին հովանաւորութեամբ Իւնեսքոյի՝ Գատրերի Որա-

կաւորման Բարձրացման Միջ-ճիւղային Ինստիտուտ (ԳՈԲՄԻ) անունով: Այս նախաձեռնութեան իրենց մասնակցութիւնը բերին Հ.Մ.Ը.Մ. Ֆրանսի 26 սկառտներ իրենց պատասխանատուներով: Այս մասնակցութիւնը առիթ մը եղաւ որպէսզի Հ.Մ.Ը.Մ.ի համաշխարհային կառոյցը ծանօթացուի Խորհրդային Միութեան Իւնեսքոյի ներկայացուցիչին եւ Իւնեսքոյի ընդհանուր տնօրէնին- [Ծ/99-100.35]: Այս հաւաքը առիթ մը եղաւ նաեւ նախաձեռնելու 1990ին Հայաստանի մէջ զանազան երկիրներու Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու մասնակցութեամբ սկառտական դպրոց-բանակում մը կազմակերպելու:

Հետագային վերոյիշեալ մասնակցութիւնները հիմնաքարը պիտի հանդիսանային Հ.Մ.Ը.Մ.ի վերադարձին Մայր Հայրենիք, նոր եւ զօրաւոր հիմերու վրայ դնելով Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան եւ Անկախ Հայաստանի պետական ղեկավարութեան միջեւ պաշտօնական գործակցութեան: Այս ծիրէն ներս Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի ղեկավարութեան գործակցութիւնը հիմնական նշանակութիւն պիտի ունենար Հ.Մ.Ը.Մ.ի Հայրենիք վերադարձին համար- [Ծ/99-110.32-49]:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԼՈՆՏՈՆ

- ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԻԱՑՈՒՄ Հ.Մ.Ը.Մ.ԻՆ
- ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ, ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԵՒ ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ
- ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԱՅԼ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԻԱՑՈՒՄ Հ.Մ.Ը.Մ.ԻՆ

Անգլիոյ մայրաքաղաք Լոնտոնի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի Մեկուսի Շրջանի կազմութիւնը արդիւնքն է 1970ական թուականներու վերջաւորութեան Պարսկաստանէն Անգլիա փոխադրուած Հ.Մ.Ա.Կ.ի նախկին անդամներու աշխատանքներուն:

Նորեկները ինքնաբերաբար կեդրոնացան մայրաքաղաքի Իլինկ արուարձանի շրջանին մէջ:

Այսպէս, Հայ Մշակութային Արարատ կազմակերպութեան նախկին սկաուտ խմբապետներ յետ եռամեայ նախապատրաստական աշխատանքի, 1979ի Մայիսին, 22 անդամներու ներկայութեան պաշտօնապէս հիմնուած կը յայտարարեն Անգլիոյ Հայ Սկաուտական Միութիւնը վաւերացնելով անոր Ծրագիր-Կանոնագիրը որուն հիման վրայ աշխատանքներու ընդհանուր վարիչ կ'ընտրուի Հրայր Տէր Գրիգորեան, կազմակերպչականի պատասխանատու՝ Անահիտ Սարգսեան, հաշուապահ՝ Զօրիկ Գասպարեան: Սկաուտական շարքերու պատասխանատուներ կը նշանակուին. Բաֆֆի Սարգսեան՝ երէցներ եւ պարմանուհիներ, Լազար Տէր Գրիգորեան՝ սկաուտներ, Օտէթ Մինասեան՝ արենոյշներ, Իվէթ Շահմուրատեան՝ արծուիկներ, Հրայր Ռոստոմեան՝ գայլիկներ: 1980ի կէսերուն, Հրայր Մարուխեանի նախաձեռնութեամբ, Միութեան անդամներէն Հայաստան վարդանեան կապի մէջ կը մտնէ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան ատենապետ Վարդգէս Տէր Կարապետեանի հետ ուսումնասիրելու համար Անգլիոյ Հայ Սկաուտական Միութեան միացման կարելիութիւնները Հ.Մ.Ը.Մ.ի ընդհանուր կառույցին: Այս կապի հաստատման իբր արդիւնք 24 Յունիս 1980 թուակիր նամակով Ա.Հ.Ս.Մ.ի Աւագ խմբապետ Հրայր Տէր Գրիգորեան պատրաստակամութիւն կը յայտնէ միանալու Հ.Մ.Ը.Մ.ին եւ տեղեկութիւններ կը խնդրէ միացման ձեւակերպութիւններու մասին:

Նոյեմբերին «բացառիկ քննական ժողով»ի որոշումով Ա.Հ.Ս. Միութիւնը պաշտօնապէս կը դիմէ միանալու Հ.Մ.Ը.Մ.ին: Կեդրոնական վարչութիւնը 14 Յունուար 1981 թուակիր պատասխան նամակով կը հաստատէ այս միացումը:

Մինչեւ 1981 թուականի գարուն, Միութիւնը կը հաստատուի ծաւալելով իր սկաուտական գործունէութիւնը եւ իր շուրջ հաւաքելով աւելի քան 200 սկաուտական զանազան բաժիններու մէջ գործող սկաուտներ, արենոյշներ, գայլիկներ եւ արծուիկներ: 4 Ապրիլ 1981ին, մասնաճիւղը ներքին հանդիսութեամբ կը նշէ իր հիմնադրութեան երկրորդ տարեդարձը: Այս հանդիսութեան ներկայ կը գտնուի Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան ատենապետ՝ Վարդգէս Տէր Կարապետեան որ առիթը կ'ունենայ ներկաներուն ծանօթացնելու Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կառույցը եւ զանազան երկիրներու մէջ ծաւալող անոր լայնատարած գործունէութիւնը:

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ

Անգլիոյ Հայ Սկաուտական Միութիւնը, համաձայն իր ներքին կանոնագրին կը գործէ տարեկան քննական ժողովի կողմէ ընտրուած խմբապետական եռանդամ գերագոյն Մարմնի մը ղեկավարութեամբ: Մարմնին մաս կը կազմեն աշխատանքներու ընդհանուր վարիչ մը, կազմակերպչականի պատասխանատու մը եւ հաշուապահ մը եւ հաշուեքննիչներ: Այս մարմինը իր կողքին կը նշանակէ սկաուտական զանազան բաժանմունքներու՝ երէց-պարմանուհի, Արի, Արենոյշ, Արծուիկ եւ Գայլիկ, պատասխանատուներ: Միութեան գործունէութեան կ'օժանդակէ նաեւ Ծնողական Խորհուրդ մը:

Հ.Մ.Ը.Մ.ի Լոնտոնի մասնաճիւղի քննական Բ. ընդհանուր ժողովը տեղի կ'ունենայ 27 Սեպտեմբեր 1981ին Լոնտոնի Սբ. Պետրոս հայ առաքելական եկեղեցւոյ սրահին մէջ, ներկա-



Լոնտոնի մեկուսի մասնաճիղի քննական տարեկան Բ. ժողով - Սեպտեմբեր 1981

յուլիսի 25-ի Հ.Մ.Ը.Մ-ի կեդրոնական վարչութեան ատենապետ՝ վարդգէս Տէր Կարապետեանի:

Քննական ժողովի նախագահ կ'ընտրուի Էտմոնտ Սահակեան քարտուղարներ՝ Արմանտ Աբրահամեան եւ Վիգէն Անտրէասեան: Կազմակերպչական, հաշուական եւ հաշուեքննիչ մարմնի 1981 տարուայ տեղեկագիրներու քննարկումէն ետք, տեղի կ'ունենայ 1981-82 տարեշրջանի մասնաճիղի գերագոյն մարմնի անդամներու ընտրութիւն հետեւեալ ձեւով.

Աշխատանքի ընդհանուր վարիչ՝ Բաֆֆի Սարգսեան

Կազմակերպչականի պատասխանատու՝ Ալեք Խաչատրեան

Հաշուականի՝ Ռոպէրթ Օհանեան

Հաշուեքննիչներ՝ Վահագն Շահնազարեան, Հայկո Պապայեան եւ Վաչէ Ազիզեան:

Տարեշրջանի ընթացքին կը սկսի գործել նաեւ մասնաճիղի մարզական բաժինը շաբաթական կանոնաւոր փորձերով:

25 Սեպտեմբեր 1982ի տարեկան քննական ժողովի ընտրութիւններու արդիւնքով մասնաճիղի սկաուտական գերագոյն մարմնի անդամներ կ'ընտրուին.-

Աշխատանքներու ընդհանուր վարիչ՝ Անահիտ Սարգսեան

Կազմակերպչականի՝ Վահագն Շահնազարեան

Հաշուապահ՝ Ռոպէրթ Օհանեան:

Լոնտոնի մասնաճիղի 1983 տարուայ քննական ժողովը տեղի ունեցաւ Սեպտեմբեր

17ին ատենապետութեամբ՝ Րաֆֆի Սարգսեանի եւ քարտուղարութեամբ՝ Լալա Ջանասյանեանի եւ Ալին Կարապետեանի: Տարեկան նիւթաբարոյական տեղեկագրի ընթերցումէն եւ քննարկումէն ետք եղան քննիչ յանձնախումբերու զեկուցումներ եւ 1983-84 տարեշրջանի գործունէութեան առաջարկներ:

Ապա գերագոյն Մարմնի անդամներ ընտրուեցան.-

Աշխատանքներու ընդհանուր վարիչ՝ Անահիտ Սարգսեան

Կազմակերպականի պատասխանատու՝ Ալինա Յարութիւնեան

Հաշուապահ՝ Ռոպէրթ Օհանեան

Հաշուեքննիչներ՝ Զօրիկ Գասպարեան, Ռազմիկ Այվազբալեան եւ Ճորճ Պէշիրեան:

Մինչեւ 1985 վերոյիշեալ դրութեամբ գործելէ ետք, 28 եւ 29 Սեպտեմբեր 1985ի քննական ժողովի որոշումով որդեգրուեցաւ Լոնտոնի մասնաճիւղի նոր մշակած ներքին կանոնագրութիւնը պատշաճեցուած Հ.Մ.Ը.Մ. ընդհանուր Ծրագիր Կանոնագրին եւ վաւերացուած Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ:

Այդ թուականէն սկսեալ Լոնտոնը դարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի Մեկուսի Շրջան եւ ժողովէն ընտրեալ վարչական կազմը իր դիւանը կազմեց հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Սիամանթօ Կարապետեան

Ատենադպիր եւ հաշուապահ՝ Ռուբէն Գալչեան

Գանձապահուհի՝ Վիօլէթ Թադէոսեան

Սկաուտական խորհուրդի ներկայացուցիչ՝ Արմանտ Աբրահամեան

Մարզական խորհուրդի ներկայացուցիչ՝ Րաֆֆի Սարգսեան:

Այս կազմի աշխատանքներուն կ'օժանդակեն սկաուտական խորհուրդը բաղկացած հետեւեալ աստիճանաւորներէն. Արմանտ Աբրահամեան, Թետի Մելիք Աբրահամեան, Անահիտ Սարգսեան, Ալինա Պօղոսեան եւ Ռազմիկ Այվազբալեան: Իսկ մարզական խորհուրդի անդամներն են՝ Արմէն Մարտ, Վաչիկ Ազիզեան,

Ալեք Խաչատրեան, Անահիտ Մարտ եւ Ռազմիկ Օհանեան:

Վարչութեան կողքին գործող ծնողական խորհուրդը կը դառնայ նաեւ տնտեսական խորհուրդ: Վարչութեան կողմէ ներկայացուցիչն է Վիօլէթ Թադէոսեան իսկ զանազան աշխատանքներու պատասխանատուներն են.-

Գրասենեակ՝ Էլէանօրա Քստամեան եւ Ռուբինա Գալստեան

Հաւաքատեղի՝ Ռազմիկ Այվազբալեան

Գեղարուեստական՝ Ռուբէն Գալչեան

Յարաբերական՝ Արմինէ Ազիզեան

Թերթ՝ Արմինէ Գասպարեան եւ Ալինա Յարութիւնեան:

Տարեշրջանի ընթացքին մասնաճիւղի անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 250ի: Մասնաճիւղը իբրեւ միակ հայկական արտօնեալ կազմակերպութիւն կ'արձանագրուի Ealing-Acton թաղամասի քաղաքապետութեան կողմէ որպէս Ethnic Minority Group:

Վերոյիշեալ կազմերու գործակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Լոնտոնի մասնաճիւղը 10էն 20 Օգոստոս 1986ի միջեւ կազմակերպեց Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային Գ. ընդհանուր բանակում Չալֆոնթ Հայցի բանակատեղիին մէջ մասնակցութեամբ 269 սկաուտներու եւ արենոյշներու:

18 Հոկտեմբեր 1986ին Սբ. Պետրոս եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ Լոնտոնի Հ.Մ.Ը.Մ.ի 7րդ անդամական ընդհանուր ժողովը: Ատենապետութեամբ՝ Ճորճ Բեշիրեանի, ատենադպրութեամբ՝ Անահիտ Մարտի եւ Վահագն Շահնազարեանի:

Ժողովին կը մասնակցէին 45 իրաւասու եւ 3 խորհրդակցական ձայնով անդամներ: Կեդրոնական Վարչութիւնը կը ներկայացնէր՝ Երուանդ Տէմիրճեան:

Վարչութեան 1985-86 տարեշրջանի նիւթաբարոյական տեղեկագրերու քննութենէն ետք տեղի ունեցաւ 1986-87 տարեշրջանի վարչական կազմի ընտրութիւն, որուն անդամներն են՝ Սիամանթօ Կարապետեան՝ ատենապետ, Ռու-

բէն Գալչեան՝ ատենադպիր, Բաֆֆի Սարգսեան, Ճորճ Բեշիրեան եւ Վիոլէթ Թադէոսեան՝ խորհրդականներ: Իսկ հաշուեքննիչ յանձնախումբի անդամներ ընտրուեցան՝ Համգիկ Օհանեան, Ռոպէրթ Օհանեան եւ Ալենուշ Գրիգորեան: Հ.Մ.Ը.Մ.ի Դ. Պատգամաւորական ընդհանուր ժողովին կողմէ վարչութեան ատենապետ Սիամանթօ Կարապետեան ընտրուեցաւ Կեդրոնական վարչութեան անդամ: Առ այդ տարեշրջանի շարունակութեան վարչութեան ատենապետի պաշտօնը վարեց Ռուբէն Գալչեան իսկ ատենադպրութիւնը վարեց Բաֆֆի Սարգսեան:

Մասնաճիւղի գործունէութեան գլխաւոր դժուարութիւնն է մնայուն հաւաքավայրի մը չգոյութիւնը: Ընդհանուր հաւաքոյթներ եւ մարզական փորձեր կը կատարուին վարձու վայրերու մէջ պիւստիակազմի դժուարին վիճակ ստեղծելով վարչութեան գանձին:

18 Հոկտեմբեր 1987ին, մասնաճիւղի 8րդ անդամական ընդհանուր ժողովին կողմէ 1987-88 տարեշրջանի գործունէութեան համար վարչութեան անդամներ ընտրուեցան՝

- Ատենապետ՝ Ռուբէն Գալչեան
- Ատենադպիր՝ Բաֆֆի Սարգսեան
- Գանձապահ՝ Ռազմիկ Մեճլումեան
- Հաշուապահ՝ Ռոպէրթ Օհանեան
- խորհրդական՝ Վիոլէթ Թադէոսեան:

1988է89 տարեշրջանի վարչութեան ատենապետութեան պաշտօնը կը վարէ Ռուբէն Գալչեան

- Ատենադպիր՝ Հրաչ Պօղոսեան
- Գանձապահ՝ Ռազմիկ Մեճլումեան
- Հաշուապահ՝ Ռոբերթ Օհանեան

Յանձնախումբերու պատասխանատուներ՝ Արմիկ Խոսրովեան՝ սկառուտական, Ալեք Խաչատրեան՝ մարզական, Անահիտ Չոլաքեան՝ տնտեսական:

Մասնաճիւղի անդամներու ընդհանուր թիւն է 398 հետեւեալ բաժանումով. սկառուտ՝ 156, մարզիկ՝ 132, օժանդակ՝ 110:

19 Մարտ 1988ին, Մովսէս Չափարեանի

հանդիսավարութեամբ, մասնաճիւղը կը տօնէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 70ամեակը:

15 Հոկտեմբեր 1989ին Լոնտոնի հայ կեդրոնին մէջ տեղի կ'ունենայ մասնաճիւղի 10րդ անդամական ընդհանուր ժողովը, ուր կ'ընտրուի Լոնտոնի Մեկուսի Շրջանի վարչական կազմը հետեւեալ ձեւով.

- Ատենապետ՝ Հրաչ Պօղոսեան
- Ատենադպիր՝ Վահագն Շահնազարեան
- Հաշուապահ՝ Խաչիկ Սերայտարեան
- Գանձապահ՝ Էլօ Սապունչեան
- Խորհրդականներ՝ Զարեհ Բեռնարդի, Ալեք Խաչատրեան եւ Մարինա Աւագեան:

21 Հոկտեմբեր 1990 հայ կեդրոնին մէջ տեղի կ'ունենայ մասնաճիւղի 11րդ անդամական ընդհանուր ժողով ներկայութեամբ 81 անդամներու: Կեդրոնական վարչութիւնը կը ներկայացնէր Սիամանթօ Կարապետեան: Այս ժողովէն ընտրուած վարչական կազմը իր դիւանը կը կազմէ հետեւեալ ձեւով.


- Ատենապետ՝ Հրաչ Պօղոսեան
- Ատենադպիր՝ Ֆրէդ Հայրապետեան
- Հաշուապահ՝ Ռոբերթ Օհանեան
- Գանձապահ՝ Վիոլէթ Թադէոսեան
- Մարզական պատասխանատու՝ Դաւիթ Ստեփան:

Վարչութեան կ'օժանդակեն սկառուտական, մարզական եւ տնտեսական յանձնախումբեր: Անդամներու թիւը կը բարձրանայ 426ի:

ՍԿԱՌՈՒՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆ

Լոնտոնի մասնաճիւղի գործունէութեան գլխաւոր առանցքը կը կազմեն սկառուտական ընթացիկ աշխատանքները որոնք կը պսակուին տարեկան ընդհանուր բանակումով:

Տարեկան Ա. ընդհանուր բանակումը տեղի կ'ունենայ 15-20 Օգոստոս 1979ին Dorking ի Elim Bible College ի դաշտին մէջ 45 հոգիի մասնակցութեամբ :



Անգլիոյ Հայ Սկաուտական Միութեան Ա. Ընդհանուր Բանակումի Խմբապետական կապուր - 1979

Տարեկան Բ. ընդհանուր բանակումը կը կայանայ 5էն 11 Օգոստոս 1980ին նոյն վայրին մէջ մասնակցութեամբ սկաուտական զանազան բաժիններու 140 անդամներուն: Օգոստոս 9ի բանակավայրի այցելութեան օրը 300 լոնտոնաբնակ ազգայիններ ներկայ գտնուեցան խարոյկահանդէսին եւ աստիճաններու բաշխումի արարողութեան:

Տարեկան Գ. ընդհանուր բանակումը տեղի կ'ունենայ 1981 Օգոստոսի 3էն 11ի միջեւ Տորքինկ շրջանի Էլիմ Պայպլը Գոլֆֆի դաշտերուն վրայ: Առաջին երկու օրերուն բանակումին կը մասնակցին 35 աստիճանաւորներ որոնց կը միանան զանազան բաժանմունքներու 150 անդամներ: Բանակումի ընդհանուր յայտագրին մաս կը կազմեն դասախօսական շարք մը,

բանակումի օրաթերթ՝ «Այգ»ի հրատարակութիւնը, «Ռատիօ բանակում»ի ձայնասփռումը եւ Օգոստոս 9ին այցելուներու յայտագիր մը:

8-10 Ապրիլ 1982ին, 50 աստիճանաւորներու մասնակցութեամբ, տեղի կ'ունենայ մասնաճիւղի առաջին աստիճանաւորական բանակումը, միութենական, հասարակական եւ ղեկավարական նիւթերու ուսուցումով:

24էն 31 Յուլիս 1982ին մասնաճիւղէն 30 հոգիէ բաղկացած պատուիրակութիւն մը կը մասնակցի սկաուտութեան հիմնադրութեան 75ամեակին նուիրուած միջազգային բանակումին: Այս առթիւ 10 երկիրներու դրօշակներու շարքին առաջինը կը ծածանի հայկական եռագոյնը:

4-11 Օգոստոս 1982ին տարեկան Դ. ընդհանուր բանակումը կը կայանայ Չալֆոնթ Հայց բանակավայրին մէջ դասախօսական ճոխ յայտագրով եւ 8 Օգոստոսին 400 համակիրներու այցելութեամբ որոնց կարգին Անգլիոյ հայ առաքելական թեմի առաջնորդ Եղիշէ Արք. Կիզիրեան որ այս առթիւ մասնաճիւղին նուիրեց Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն Հայկ Ճիզմէճեանի սկառտական գօտին (այժմ ի Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական թանգարան):

Մասնաճիւղի տարեկան 5րդ ընդհանուր բանակումը տեղի ունեցաւ 27 Յուլիսէն 3 Օգոստոս 1983ին, Չալֆոնթ Հայց բանակավայրին մէջ մասնակցութեամբ 130 սկառտներու որոնց կարգին պատուիրակութիւններ Փրանսայի, Սուրիոյ եւ Լիբանանի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերէն:

23 Յուլիսէն 2 Օգոստոս 1984ին, 120 հոգիներու մասնակցութեամբ Շալֆոնթ Հայց բանակավայրին մէջ տեղի ունեցաւ մասնաճիւղի տարեկան 6րդ ընդհանուր բանակումը: Յուլիս 29ին 400 այցելուներ ներկայ եղան բանակավայր ուր տեղի ունեցաւ երդման արարողութիւն եւ աստիճաններու բաշխում ձեռամբ պատուոյ սկառտապետ Յակոբ Բալամուտեանի:

27-29 Դեկտեմբեր 1985ին Fryland Wood բանակավայրին մէջ կը կազմակերպուի աստիճանաւորական բանակում:

10էն 20 Օգոստոս 1986ին մասնաճիւղը 48 սկառտներով եւ օժանդակ անդամներով կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի Համագաղութային Գ. ընդհանուր բանակումին:

Տարեկան 9րդ ընդհանուր բանակում՝ 28 Յուլիսէն 4 Օգոստոս 1987ին:

1988ի 10րդ ընդհանուր բանակումը կը նուիրուի Միութեան հիմնադրութեան 70ամեակին: Նոյն տարուայ Յուլիսին 10 սկառտներ կը մասնակցին Հ.Մ.Ը.Մ. Ֆրանսի բանակումին:

23 Յուլիսէն 2 Օգոստոս 1989ին կը կայանայ մասնաճիւղի 11րդ տարեկան ընդհանուր բանակումը:

1990ի Օգոստոսին, Դիլիջանի մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի համակարգչային ճամբարին մասնաճիւղը կը ներկայացնեն Սագօ Սերայտարեան եւ Ռեբեկա Չափարեան:

ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ. Լոնտոնի Մեկուսի Շրջանի մարզական գործունէութիւնը կը սկսի 1982 թուականին Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կառույցին միացման առընթեր: Ժամանակի ընթացքին մարզախաղերու ցանկին մաս կազմած են ֆութպոլը, պասքեթպոլը, եւ փինկփոնկը, նաեւ փոքր տարողութեամբ՝ սքուաշը, պատմինթոնը եւ քիփֆիթը: 1987-88 Տարեշրջանին կիրարկուող մարզաձեւերու ցանցին վրայ կ'աւելնան թեքուանտօ, թենիս եւ վոլիպոլ:

Համաձայն զանազան տարեշրջաններու մարզական խումբերու պատրաստութեան,



Տեսարան Լոնտոնի մասնաճիւղի 1980ի Ողիմպիական մրցութիւններէն (պարսն քաշել)



Լոնտոնի պասքեթպոլի տղոց եւ աղջկանց խումբերը
համագաղութային Գ. խաղերուն՝ Վալանս 1990

մասնաճիւղը ներկայացնող կազմեր կը մասնակցին Լոնտոնի համապատասխան լիկերու Ֆուլթպոլի կամ պասքեթպոլի մրցաշարքերուն: Մասնաճիւղը կը մասնակցի կամ կը նախաձեռնէ միջ-ակումբային մրցաշարքերու կազմակերպութեան եւ ներկայացուցչական խումբեր կ'ուղարկէ մասնակցելու միջ-շրջանային կամ համամիութենական մրցաշարքերուն: Այս վերջիններու կարգին Լոնտոնի Հ.Մ.Ը.Մ.ը մասնակցած է՝ 1985ի միջ մասնաճիւղային պասքեթպոլի մրցաշարքին՝ Փարիզ, 1987ին Հ.Մ.Ը.Մ. Ֆրանսի հիմնադրութեան 10ամեակին նուիրուած պասքեթպոլի եւ Ֆուլթպոլի մրցաշարքերուն, 1988ին կրկին Փարիզ՝ Սուրէն Սուրատեան պասքեթպոլի մրցաշարքին:

Մասնաճիւղը 13էն 15 Ապրիլ 1990ին, Ֆրանսայի Վալանս քաղաքին մէջ կը մասնակցի համա-Հ.Մ.Ը.Մ.ական Գ. Մրցաշարքին պասքեթպոլի 23 հոգինոց պատուիրակութեամբ, բաղկացած տղոց խումբի 9 եւ աղջկանց խումբի 10 անդամներէ, 1 մարզիչէ եւ 3 պատասխանատուներէ :

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԱՅԼ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ

Սկսած սկսած եւ մարզական գործունէութիւններու կողքին, Հ.Մ.Ը.Մ.ի Լոնտոնի մասնաճիւղը ունեցած է մշակութային, գեղարուեստական, երաժշտական եւ թատերական գործունէութիւն: Մասնաճիւղը մասնակցած է



Լոնտոնի մասնաճիւղի 1981-82ի պատանախանատուներու լրիւ կապմը

լոնտոնահայ ազգային կեանքի զանազան նախաձեռնութիւններուն:

Հ.Մ.Ը.Մ.ի Լոնտոնի մասնաճիւղը 14 Մայիս 1983ին ընդունեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.ի այցելութիւնը: Այս այցելութիւնը մաս կը կազմէր Վեհափառ հօր Անգլիահայ թեմին տուած հովուապետական այցելութեան, ճէն 20 Մայիսի միջեւ եւ որու ամբողջ տեւողութեան Հ.Մ.Ը.Մ.ի Լոնտոնի սկաուտները կարգապահութեան հսկողութեան դերը ստանձնեցին:

Մասնաճիւղին տրուած այցելութեան առթիւ Վեհափառ հօր կ'ընկերակցէին Անգլիոյ թեմի առաջնորդ Եղիշէ Եպիսկոպոս Կիզիրեան եւ Ներսէս Եպիսկոպոս Պողոսեան: Այս առթիւ Վեհափառ Հայրապետը հետեւեալը պատգամեց Լոնտոնի մասնաճիւղի սկաուտներուն.

«Իմ անունը Վազգէն է - Կաթողիկոս Ամե-

նայն Հայոց, գալիս եմ Ս. Էջմիածնից, Հայաստանից, ձեզ խօսելու այս պահին, յատկապէս ձեզ, սիրելի՛ աղջիկներ, տղաներ, սկաուտներ եւ երեցներ: Գիտեմ որ այստեղ նստած եւ շրջապատած են ձեր ծնողները երեւի, կամ Վարչութեան ղեկավար անդամներ: Իմ խօսքը նրանք էլ պիտի լսեն, բայց ուզում եմ շեշտել կրկին, որ իմ խօսքը յատկապէս ուղղուած կը լինի այս պատանիներին:

Այս պահին ես շատ յուզուած եմ, որովհետեւ նախ լսեցի ձեր խօսքը, երգը եւ փոքրիկ ֆիլմը որ ցոյց էր տալիս ձեր բանակումի կեանքի մի հատուած:

Ես յիշեցի իմ պատանեկութիւնը, ես էլ ձեզ նման սկաուտ եմ եղած, եւ երկար տարիներ, 12 տարեկանից մինչեւ 20 եւ աւելի, Ռումանիայում՝ Բուխարեստ քաղաքում, որ իր մայրաքաղաքն է:

Առաջին Համաշխարհային Պատերազմից յետոյ, կոտորածներից յետոյ, հայութեան թիւը շատցաւ Բուխարեստում, գրեթէ երեք անգամ հայեր

կային ինչքան հիմա Լոնդոնում, մօտ տասը հազար մի քիչ աւել, բայց ուրիշ քաղաքներում էլ հայեր կային, ընդհանուր առմամբ շուրջ երեսուն հազար հայ կար այնտեղում: Իմ ծնողները կոտորածից փրկուածներից չէին, բախտի բերումով ասէնք Ա. Համաշխարհային պատերազմից առաջ, այս դարու սկզբին գաղթել էին իսթոնբուլի մէջ, Պոլսոյ մէջ յեղափոխական ցոյցերի առիթով, այնպէս որ ես ծնուած եմ Բուխարեստում: Սակայն սկաուտական կազմակերպութիւնը եւ ընդհանրապէս հայ համայնքի կազմակերպումը տեղի ունեցաւ 1920-22 տարիներին եւ ահա այդ օրերին էր, որ իմ մայրը իմ ձեռքը բռնած, ինչպէս դո՛ւք յարգելի մայրեր, բերաւ յանձնեց սկաուտական կազմակերպութեան, այնտեղ էլ նոյն անունն էինք կրում. Հ.Մ.Ը.Մ.- Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն, որ ունէր մարզական բաժին, որ աւելի ֆութբոլով էր զբաղուած, եւ սկաուտական բաժին: Ես սկաուտական բաժնի մէջ եմ եղած եւ մնացած եմ մինչեւ վերջ: Ինչ որ որոշ տարբերութիւն կար մեր այս երկու ճիւղերի միջեւ, նոյնիսկ երբեմն որոշ անհասկացողութիւններ: Մենք սկաուտներս թէեւ նոյն Հ.Մ.Ը.Մ.ի յարկի տակ էինք, սակայն ասում էինք, որ մենք միայն Բէյդըն Փառլի ծրագրով ուզում ենք գործել, այսինքն, սկաուտական, եւ նոյն ձեւով, ինչ որ դուք էլ արտայայտեցիք ձեր երդումի մէջ, հաւատարիմ լինելու Աստծուն, ուրեմն ինչ որ կրօնական դաստիարակչութեան եռանդ է արտայայտուում այստեղ, հաւատարիմ լինել ազգին եւ հաւատարիմ լինել Հայրենիքին: Այդ երեք գաղափարների վրայ նաեւ հիմնուած էր մեր կազմակերպութիւնը, եւ որեւէ կուսակցութեան հակումին վիճակի մէջ չէինք այնտեղ: Անկախ էինք, անկուսակցական կազմակերպութիւն եւ բոլորը անդամագրուում էին, եւ բաւական մեծ, լայն կազմակերպութիւն էր, մասնաճիւղերով՝ նաեւ Ռումինիոյ միւս քաղաքներում:

Այս բոլորը ես յիշեցի այս պահին. գրեթէ նոյն երգերն էլ մենք երգում էինք, նոյն երդումները մենք էլ էինք տալիս, նոյն դաստիարակչական եւ հայկական ազգային հայրենասիրական ոգով

էինք մենք դաստիարակուում: Յետոյ մենք մի քիչ մեծացանք եւ ինքներս եղանք խմբապետ: Ես, օրինակի համար, եղած եմ 4-5 տարի եւ աւելի եթէ չեմ սխալուում, Աքելա: Այս Աքելան Բէյդըն Փառլի գրքից վերցուած է եւ կը նշանակի գայլիկների խմբապետ: Տակաւին շատ յիշողութիւնների մասին կարող եմ խօսել, բայց այսքանը կը բաւէ կարծում եմ, որպէսզի հասկանաք սիրելի երեխաներ, պատանիներ, թէ ինչքան դուք հարապատ էք իմ սրտին, ձեր գործունէութեամբ, ձեր ոգով եւ ձեր ապագայի հեռանկարով, մնալու երդուեալ պաւակները մեր եկեղեցուն, մեր ազգին եւ մեր հայոց երդուեալ պաշտպանները եւ պահապանները հայոց լեզուին: Այստեղ շատ լաւ գրուած մի պատգամ կայ: «Սկաուտը մաքուր հայերէն կը խօսէ»: Մենք էլ այնտեղ մաքուր հայերէն էինք խօսում, նոյնիսկ մեզանից շատ շատերը այն ատեն հայերէն լեզուն սովորեցինք այդ սկաուտական կազմակերպութեան ընթացքին, այն երեխաները որոնք Ռումինիոյ մէջ ծնած էին վաղուց, պատերազմից առաջ, երբ հայկական դպրոց չկար այդ շրջանին. դպրոցը կազմակերպուեց 1923-4ին:

Ահա այս ուխտով, վստահ եմ, որ դուք պիտի շարունակէք ձեր կեանքը այստեղ, այս հիւրընկալ ազատ երկրի մէջ, Մեծն Բրիթանիայի մէջ: Ուր, դուք եւ հայերը ընդհանրապէս, ամեն ազատութիւն վայելում էք, պահպանելու եւ վարճացնելու կրօնական եւ եկեղեցական կեանքը, ազգային, բարեսիրական, մշակութային, մարզական եւ այլն:

Ես յուզուած եմ ասեցի մի քիչ առաջ, երբ տեսնում եմ որ այդպէս կայտառ, գեղեցիկ հայկական աչքերով կանգնած էք իմ առաջ եւ գիտէ՞ք ինչ եմ մտածում, մի երազ, մտածում՝ որ ձեզ բոլորին առնեմ տանեմ Հայաստան, հէնց հիմա, վաղը: Դա անկարելի է անշուշտ, մարմնապէս անկարելի է, բայց ես ուզում եմ գոնէ մտովին ձեզ տանեմ մի պահ դէպի հինաւուրց աշխարհը հայոց, որի պատմութեան մի քիչ ծանօթ էք, բայց իմ ցանկութիւնն է եւ առաջադրանքը, յատկապէս ձեր ղեկավարներին ուղղեալ, որ պատմեմ հայոց անցեալի մասին:



Վապգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը
շրջապատուած Լոնտոնի Հ.Մ.Ը.Մ.ի սկսուտական կապմով

Մեր անցեալը, որ շուրջ 3000 տարիների ժամանակաշրջան է ընդգրկում, այդ մօտ 3000 տարիների ընթացքում մեր ազգը փառաւոր կեանք է ապրած, մարդկային պատմութեան հորիզոնի վրայ: Ունեցել է նաեւ դժուարութիւններ, պարտութեան օրեր, ողբերգական շրջաններ, բայց հայ ազգը երբեք իր ազգային ինքնութեան ոգին, իր հայկական կամեցողութիւնը, իր ստեղծարար ոգին երբեք չի կորցրել: Նոյնիսկ դժբախտութեան շրջաններին հայ ժողովուրդի պաւակները ստեղծագործել են տարբեր բնակավայրերում եւ միշտ բարձր պահել են Հայ ազգի Դրօշակը: Բայց լաւ է, շատ ուսանելի եւ դաստիարակչական՝ ազգային տեսակէտից, որ դուք իրաւ աւելի մօտիկից ճանաչէք Հայոց Պատմութիւնը, սովորէք: Դասընթացքներ լինում են այս ձեր յարկի տակ, դա շատ կարելոր է: Բայց ես ուզում եմ ձեզ մի պահ Հայաստան տանել, կ'ուզենայի որ դուք ձեր կեն-

դանի աչքով տեսնէիք Հայաստանը, նախ Արարատը: Դուք չէք կարող երեւակայել թէ ինչքա՛ն հոյակապ, հիասքանչ գեղեցկութիւն է Արարատի պատկերը:

Աշխարհում շատ գեղեցիկ եւ վեհ լեռներ կան, բայց ոչ մի լեռը չի նմանում Արարատին: Եւ իր վեհութիւնը, գեղեցկութիւնը, այդ ահաւոր վանգուած ամբողջութիւնը կը պարտի մանաւանդ երկու հանգամանքի: Նախ, որ շրջապատը անմիջական բարձր լեռներ չկան, կարծէք երկրից մի անգամից հոյակապ բարձրանում է այդ ահագնածաւալ վանգուածը, դա շատ կարելոր է, որովհետեւ, օրինակ, Եւրոպայի ամենամեծ եւ հոյակապ լեռը Մոնթբլանն է, բայց ան չորս կողմից մի քիչ աւելի ցած լեռներով շրջապատուած է եւ չի թողնում այսպիսի առանձին տպաւորութիւն: Արարատը կարծես բարձրանում է մի անգամից, այս մի հանգամանք: Երկրորդը այն է, որ կողքին

նման մի լեռ կայ, փոքր Արարատը կամ փոքր Մասիսը, այն երկուսը միասին բացառիկ տպաւորութիւն են թողնում:

Արարատ լեռան նման մի լեռ կայ աշխարհում, Ճապոնիայում Ֆուջիեամա լեռն է, շատ նմանութիւն կայ Արարատի հետ, բայց փոքր Արարատը կողքին չկայ, միայն ինքն է եւ ճապոնացիների համար Սուրբ Լեռ է կոչւում ինչպէս մեզ համար սուրբ է մեր Արարատը: Ահա այսպէս բացառիկ, տպաւորիչ է Արարատը: Չմրան, գարնան, երբ տակաւին ամբողջութեամբ ձիւնապարդ է եւ երբ մթնոլորտը պայծառ է, Արարատը Երեւանից եւ Էջմիածնից միեւնոյնն է երեւում: Կարծէք մի ահագնածաւալ մի ադամանդ լինի փայլատակիչ երկնքի տակ, յատկապէս աւելի տպաւորիչ է Արարատը տեսնել սահմանի մօտից: Մենք սահմանի մօտ մի վանք ունենք, Խոր Վիրապի վանքը, այս վանքը ինքը մի բլուրի վրայ է, սեւ մարմարեայ բլուրի վրայ: Այդ բարձունքի վրայ կառուցուած եկեղեցին, Ս. Գրիգոր Լուսաւորիչի յիշատակին է սարքուած, որովհետեւ այնտեղ էր Գրիգոր Լուսաւորիչը պատժուած Յրդ դարում:

Բայց Խոր Վիրապը հիմա մեր եւ միւս երկրի, անունը չեմ ուզում տալ, սահմանի վրայ է: Արդէն Խոր Վիրապի բարձունքի վանքից երեւում են միւս կողմերը, բնակչութիւն չի երեւում այն կողմը, նրանց կողմը եւ շատ մօտիկ է, կարծես ձեռքդ երկարացնես պիտի բռնես Արարատը: Ես երբեմն՝ յատուկ Փետրուարի մէջ՝ երբ տեսնում ենք որ եղանակը պայծառ է, Խոր Վիրապ եմ գնացել մի քանի անգամ վբօսնելու համար: Ահաւասիկ այս Արարատը ես ցանկանում եմ որ դուք տեսնէք եւ Արարատի առջեւ կանգնած կրկնէք ձեր երդումը, հարապատ մնալու, հաւատարիմ մնալու մեր ազգին եւ հայրենիքին, այնպէս ինչպէս Խաչատուր Աբովեանի «Վէրք Հայաստանի»ն նման երդում է տալիս Արարատի առջեւ:

Երկրորդ, կ'ուզեի ձեզ ցոյց տալ Ս. Էջմիածինը, որ հոգեւոր Արարատն է մեր Ազգի: Քիչ առաջ ձեր ներկայացուցիչ Արեւուշը խօսեց բաւական հայ եկեղեցու եւ Էջմիածնի մասին, ուրեմն դուք գիտէք թէ ինչ նշանակում է Հայաստանի Առա-

քելեաց եկեղեցի եւ նրա գերագոյն կենտրոնը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին Ամենայն Հայոց, որ գլուխ գործոց մըն է, ընդհանրապէս ճարտարապետական աշխարհում եւ ուխտատեղի՝ կրօնական իմաստով, նաեւ ազգային ոգու Վէմ՝ պատմութեան ընթացքին: Ահա, այդ մեր աղօթքի մեծ տունը կ'ուզենայի որ դուք տեսնէք եւ դուք էլ ծնկի գաք սեղանի առաջ, ինչպէս մենք այնտեղ ամեն օր ծնկի եկած ժամերգութիւնների ընթացքում աղօթում ենք առ Աստուած:

Յետոյ, կ'ուզենայի ձեզ տանել Ծիծեռնակաբերդ, գրեթէ Երեւան քաղաքի մէջ, բարձունքի վրայ, որտեղ կառուցուել է մեր Նահատակների Յուշարձանը, 1915 թուի ցեղասպանութեան պոհերի յիշատակին: Շատ գեղեցիկ, հսկայածաւալ եւ տպաւորիչ: Նաեւ օտարները գալիս են իրենց յարգանքը մատուցելու մեր Նահատակների յիշատակին: Մանաւանդ Ապրիլ 24ին, ինչպէս դուք այստեղ նշում էք, այնտեղ էլ՝ Հայ ժողովուրդը, Հայաստան, առանց բացառութեան, դպրոցական երեխաներից մինչեւ պետական ղեկավարներ, գալիս են Նահատակների Յուշարձան:

Կ'ուզենայի նաեւ ձեզ տանել Սարդարապատ յուշարձանին, որ էլի մի գեղեցիկ ամբողջ համալիր է ճարտարապետական, ոչ թէ՛ միայն մի յուշարձան, ի յիշատակ 1918ի Մայիսեան Հայոց Մեծ Յաղթանակի, որով հայ ժողովուրդը իսկապէս վերջնական բնաջնջումից ապատուեց եւ վերաստեղծուեց: Վերականգնուեց հայկական պետութիւնը, որը մինչեւ այսօր շարունակւում է գոյութիւն ունենալ եւ քայլ առ քայլ վարգանալ եւ յառաջդիմել, ե՛ւ տնտեսապէս, ե՛ւ քաղաքաշինութեամբ, մանաւանդ եւ գիտութեամբ եւ ազգային մշակոյթի ազատ վարգացումով: Իսկապէս վերջին 60 եւ աւելի տարիների շրջանը մեր ժողովուրդի պատմութեան մէջ պիտի մնայ ոսկետառերով արձանագրուած, իբրեւ մի նոր վերածնունդի դարաշրջան:

Յետոյ, կ'ուզենայի ձեզ տանել նաեւ Բիւրական, Բիւրականի աստղադիտարանը, որ համաշխարհային առումով գիտական մեծ կենտրոն է իր գլուխը ունենալով էլի համաշխարհային համբաւ

ունեցող գիտնական Վիկտոր Համբարձումեանը: Նա, եւ մի քանի հարիւր աշխատակիցներ այնտեղ բնակուում են, ամբողջ մի թաղամաս է, որտեղ աստղերի հետ են խօսում եւ աստղերի հետ հայերէ՛ն են խօսում:

Այստեղ կանգ կ'առնեմ: Տակաւին, շատ յուշարձաններ կան եւ պիտի կամենայի, որ դուք մի օր լինէիք Հայաստանում, եւ տեսնէիք մատենադարան, համալսարան եւ այլն, որոնք բոլորը խօսում են մեր սրտի՝ Հայաստանի ապագային վերածնունդի մասին:

Սիրելի՛ սկաուտներ, ձեզանից փափաք ունեմ եւ ցանկութիւն, որ չմոռանաք Վազգէն Կաթողիկոսին որ ձեզ սիրում է, չմոռանաք այն որ ես պատկերացրի մեր Մայր Հայրենիքից եւ չմոռանաք նաեւ, որ, ճիշդ է, մենք վերածնունդի շրջան ենք ապրում Հայաստանում, եւ նոյն ի՛սկ որոշ իմաստով՝ արտասահման, հենց ձեր ներկայութիւնը, մեր եկեղեցիները եւ այլն խօսում են նոյնպէս հայկական վերածնունդի մասին: Այդ բոլորը ճիշդ են, բայց չմոռանանք նաեւ որ մեր ազգը տակաւին անելիքներ ունի, որպէսզի ամբողջապէս իրականութիւն դառնան մեր ազգի արդար երապանքները եւ դուք այդ երապանքների պիտուորները լինէք հենց այսօրուանից:

Մաղթում եմ ձեզ Աստծու օգնութիւնը, աճէ՛ք, պարգացէ՛ք, բազմացէ՛ք, արժէքաւոր պաւակները եղէք մեր ժողովրդին, եւ գոնէ բարոյական իմաստով՝ պիտուորները Մայր Հայաստանին»- [Ծ/37-38.42]:

Ծ. Խ.

Հ.Մ.Ը.Մ.ի Լոնտոնի մասնաճիւղի սկաուտներուն ուղղուած Ամենայն Հայոց Վազգէն Ա. Կաթողիկոսի՝ Մայր հայրենիք այցելելու հրաւերը, պիտի իրականանար առաջին անգամ 1994ին, համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ե. Ընդհանուր Բանակումին առիթով:

1984ի ընթացքին սկաուտական զանազան բաժիններու գործակցութեամբ տեղի ունեցած են Վարդանանցի «Հայ Սկաուտի Օր»-ուայ հանդիսութիւն, Ապրիլ 24ի Յուշատօն, ընդունելութիւն փրոֆէսոր Ռիչարտ Յովհաննէսեանի եւ դասախօսութիւն Հայ Դատի ծանօթացման մասին, Մայիս 28ի տօնակատարութիւն: Վերոյիշեալ բոլոր առիթներուն Լոնտոնի Հայ համայնքէն եղած է քաջալերական ներկայութիւն:

1988ի Դեկտեմբերին, Հայաստանի երկրաշարժին առիթով, մասնաճիւղի անդամները կ'օժանդակեն հագուստեղենի հաւաքման եւ առաքման ուղիատանքին նաեւ այլ կազմակերպութեանց գործակցութեամբ կը հանգանակեն շուրջ 25 00) անգլիական թղթոսկի:

24 Մարտ 1989ին, Լոնտոնի Հայ Կեդրոնին մէջ, մասնաճիւղը կը հիւրընկալէ համամիութենական միջ-դիւանային Բ. Խորհրդաժողովը:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1979ի Դեկտեմբեր ամիսէն սկսեալ մասնաճիւղը կը հրատարակէ

«ԱՅԳ» պարբերաթերթը, նպատակ ունենալով Միութիւնը ծանօթացնել Լոնտոնի հայութեան: «ԱՅԳ»ի հրատարակութիւնը հետագայ տարիներուն կը շարունակուի երկամսեայ պարբերականութեամբ:

1985-86 տարեշրջանին վարչութիւնը կը պատրաստէ սկաուտական զանազան կարգերու յատուկ գիտելիքներու գրքոյկներ սատարելու համար շարքերու թեքնիք զարգացումին:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՔՈՒԷՅԹ

ՔՈՒԷՅԹ-ՔԱՂԱՔ

- ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԻԱՑՈՒՄ Հ.Մ.Ը.Մ. ԻՆ
- ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ, ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԵՒ ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆ

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԻԱՑՈՒՄ
Հ.Մ.Ը.Մ.ԻՆ

1970ական թուականներէն սկսեալ, Քուէյթի հայ գաղութին մտահոգութիւնը եղած էր՝ հայ երիտասարդներու կազմակերպումը: Օրուան պատասխանատու մարմինները կը մտածէին միջոցներու մասին՝ եզրակացնելով թէ կարելի՞ էր դպրոցին եւ եկեղեցւոյ շրջափակէն զատ այլ տեղ համախմբել հայ մանուկներն ու պատանիները, կոփել ու թրծել զանոնք պատրաստելու համար վաղուան հայր:

Այդ օրերուն գաղութէն ներս՝ խումբ մը երիտասարդներ հաւաքուած էին իրարու մօտ եւ կազմած՝ «Արարատ» Փուլթպոլի խումբը: Այդ խումբը կը վայելէր ազգային մարմիններուն հովանաւորութիւնը: Յետագային «Արարատ»ը պիտի դառնար Հ.Մ.Ը.Մ.ի մէկ ճիւղը:

Սակայն Փուլթպոլի խումբը բաւարար չէր: Փոքրերն ու պատանիները դուրս կը մնային գործունէութենէն: 1973ին ազգային վարժարանի տնօրէն՝ Մանուէլ Չարչաֆեանի ջանքերով դպրոցի հոգաբարձութիւնը Քուէյթի կրթական նախարարութենէն կը պահանջէր ստանալ սկսնական շարժումին արտօնագիրը (քաջաֆաթ մատրասաթ էլ արմանիչէ) անուան սակ:

Արտօնագիրը կը կրէր 973 թիւը: 1975ին խումբ մը նախկին Հ.Մ.Ը.Մ.ական սկսնականներ, որոնք ծառայած էին սկսնական շարժումէն ներս եւ եղած էին աստիճանաւորներ, հրաւիրուեցան ստանձնելու սկսնական խումբի կազմութիւնը: Յառաջացաւ սկսնական խորհուրդ մը՝ գլխաւորութեամբ Գաբրիէլ Թասլագեանի եւ Պետրոս Առաքելեանի:

1975ին խումբ մը նախկին Հ.Մ.Ը.Մ.ական սկսնականներ, որոնք ծառայած էին սկսնական շարժումէն ներս եւ եղած էին աստիճանաւորներ, հրաւիրուեցան ստանձնելու սկսնական խումբի կազմութիւնը: Յառաջացաւ սկսնական խորհուրդ մը՝ գլխաւորութեամբ Գաբրիէլ Թասլագեանի եւ Պետրոս Առաքելեանի:



Քուէյթի Հայ Արիւներու եւ Արեւոյշներու խմբանկարը՝ 1978

նի: Խորհուրդին մաս կը կազմէին նաեւ անդամներ՝ Միհրան Մարտիրոսեան, Մարտիրոս Մարտիրոսեան (գանձապահ), Ներսէս Խաչատուրեան, Քեռի Սարգիսեան, Սամուէլ Քէօզկէրեան եւ Անդրանիկ Գոճապաշեան (քարտուղար):

Ամիսներ ետք, վերոյիշեալ կազմը դարձաւ աստիճանաւորական կազմ, խմբապետութեամբ՝ ուսուցիչ Գաբրիէլ Թասլազեանի: Կարճ ժամանակ մը ետք կազմին միացաւ նաեւ Յակոբ Բարսեղեան, ապա սկսեցաւ շարժումին տուին «Քուէյթի Հայ Արիներ» անունը:

1976-1977 դպրոցական տարեշրջանին հիմնուեցաւ նաեւ արենոյշներուն շարժումը, որոնք միանալով սկսեցան կոչուեցան՝ «Քուէյթի Հայ Արիներ եւ Արենոյշներ»: Ընդհանուր թիւը կը հասնէր շուրջ 400 արի-արենոյշներու:

1978ի սկիզբը խումբը որ կը գործէր Հ.Մ.Ը.Մ.ի կանոնադրութեամբ, կը ծրագրէ միանալ Հ.Մ.Ը.Մ.ի ընդհանուր կառոյցին եւ այդ նպատակով 18 Փետրուար 1978 թուակիր նամակով կը դիմէ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան խնդրելով Ք.Հ.Ա.Ա.ի միացումը Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին: Դիմումի այս նամակը կը ստորագրեն խմբապետ՝ Գաբրիէլ Թասլազեան եւ քարտուղար՝ Յակոբ Բարսեղեան:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութիւնը, 9 Մարտ 1978ի նիստին, կ'որոշէ Քուէյթի Հայ Արիներու կազմակերպութիւնը ընդունիլ որպէս Միութեան նորագոյն մասնաճիւղ, լիիրաւիրաւասութիւններով եւ պարտաւորութիւններով, միաժամանակ հրաւիրելով մասնաճիւղի սկսողներն ու արենոյշները մասնակցելու Յունաստանի մէջ կայանալիք համագաղութային Ա. ընդհանուր բանակումին :

Քուէյթի մասնաճիւղի կազմակերպական եւ սկսողական աշխատանքները կը վարեն աստիճանաւորական կազմի անդամները: Շրջանը 1979էն սկսեալ կը կիրարկէ պասքեթպոլի ճիւղը տղոց խումբով եւ 1980-81 եղանա-

կէն սկսեալ աղջկանց խումբով: Մասնաճիւղը կը կիրարկէ նաեւ Ֆութպոլ: Մարզական այս խումբերու գործունէութիւնը կը հովանաւորէ Քուէյթի հայ համայնքային վարչութիւնը: Մարզական բաժինը կը կրէ «Արարատ» անունը՝ պետութեան կողմէ պաշտօնապէս ճանչուելով որպէս Ազգային վարժարանի գործունէութեան մէկ բաժինը:

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ, ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԵՒ ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.ի միացումին առնթեր մասնաճիւղի սկսողական խումբէն արիներ կը մասնակցին համագաղութային Ա. ընդհանուր բանակումին Գալամոսի մէջ՝ Յունաստան: 1980ի Ֆրանսայի Գլամար քաղաքին մէջ կայացող Հ.Մ.Ը.Մ.ի Բ. ընդհանուր բանակումին, Քուէյթի սկսողական խումբը կը մասնակցի 29 արիներու եւ 10 արենոյշներու պատուիրակութեամբ: 1980ի վերամուտին սկսողական խումբերու մասնակիցներու ընդհանուր թիւը կը հասնի 210ի: Խումբը ունի իր սկսողական նուագախումբը: Մասնաճիւղի ընդհանուր խմբապետի պաշտօնը կը փոխանցուի Անդրանիկ Գոճապաշեանին:

1981ի Մարտին կը կազմակերպուի նորագիրներու երգման արարողութիւն, աստիճաններու տուչութիւն եւ խարոյկահանդէս: Զատիկին կը կայանայ մասնաճիւղի ընդհանուր բանակումը, իսկ Մայիսին մարզահանդէս եւ ընդհանուր տողանցք: Քուէյթի հայութիւնը անվերապահ գուրգուրանքով կը քաջալերէ շարժումը- [Ծ/13.32]:

1982ի վերամուտին մասնաճիւղը կը ձեռնարկէ անդամարշաւի: Մասնաճիւղի աստիճանաւորներ, 18էն 21 Փետրուարին, կը մասնակցին համագաղութային սկսողական Ա. համագումարին՝ Աթէնք:

18 Փետրուար 1983ին տեղի կ'ունենայ մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը

որուն ընթացքին, յետ մասնաճիւղի ներքին կանոնագրի վաւերացման, կ'ընտրուի Քուէյթի Հ.Մ.Ը.Մ.ի անդրանիկ վարչական կազմը աշխատանքներու հետեւեալ բաժանումներով.-

- Ատենապետ՝ Մարտիրոս Աւետիսեան
- Փոխ ատենապետ՝ Մանուէլ Չարչաֆճեան
- Քարտուղար՝ Անդրանիկ Գոճապաշեան
- Գանձապահ՝ Ներսէս Քիլէնճեան
- Հաշուապահ՝ Սարգիս Խաչատուրեան
- Խորհրդականներ՝ Յարութիւն Քէօսէեան, Աբրահամ Մարտիրոսեան, Անդրանիկ Քէօշկէրեան եւ Ներսէս Խաչատուրեան:

1983ի Հոկտեմբերի վերամուտին խորհրդակցական հաւաքոյթով մը Ք.Հ.Ա.Ա.ի սկաուտական եւ «Արարատ» մարզական բաժիններու ղեկավարներու միացեալ հաւաքոյթով մը կ'որոշուի մէկ վարչութեան ենթակայութիւն եւ 30 Հոկտեմբեր 1983 թուակիր նամակով այս որոշումը կը փոխանցուի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան: Նամակը կը ստորագրեն առժամեայ վարչութեան անունով, ատենապետ՝ Մարտիրոս Աւետիսեան եւ քարտուղար՝ Անդրանիկ Գոճապաշեան: Կեդրոնական Վարչութիւնը 24 Նոյեմբեր 1983ի նիստին իր հաւանութիւնը կու տայ վերոյիշեալ դասաւորման քաջալերելով ծրագիրը:

1984ին վերոյիշեալ ծրագրին համաձայն մասնաճիւղի հիմնադիր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ՝

- Ատենապետ՝ Մարտիրոս Աւետիսեան
- Փոխ-ատենապետ՝ Մանուէլ Չարչաֆճեան
- Ատենադպիր՝ Անդրանիկ Գոճապաշեան
- Գանձապահ՝ Ներսէս Քիլէնճեան
- Հաշուապահ՝ Սարգիս Խաչատուրեան
- Խորհրդականներ՝ Լեւոն Ճուպանեան եւ Յարութ Քէօսէեան:

Յաջորդող երկամեային ֆուլթայոլի եւ պասթեթայոլի խումբերը կը մասնակցին «Ահմատիի Մարզական Օր»ուայ մրցաշարքերուն արձանագրելով պատուաբեր արդիւնքներ: Սկաուտական խումբը կը կազմակերպէ տարեկան բանակում եւ Մայիսեան մարզահանդէս:

Տարեշրջանի աւարտին, երկրի քաղաքական կացութեան պատճառով, մասնաճիւղը չի կրնար 1985 տարեշրջանի համար նոր վարչական կազմ ընտրել: Նոյն կազմը գործի վրայ կը մնայ հրաժարեալ կացութեամբ մինչեւ 1986ի կէսերուն: Կեդրոնական Վարչութիւնը, 11 Յուլիս 1986ի նիստին կը նշանակէ նոր վարչական կազմ վեցամսեայ գործունէութեան համար բաղկացած հետեւեալ անդամներէն.- Մարտիրոս Աւետիսեան, Գրիգոր Սուգճեան, Աբրահամ Մարտիրոսեան, Կիրակոս Գուլյումճեան, Աւետիս Ազթաւուքեան:

1987ի Մայիսին անդամական ընդհանուր ժողովէն ընտրեալ կազմը 30 Մայիսի նիստին իր աշխատանքներու բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Ժանօ Պէպէճեան
- Ատենադպիր՝ Աւետիս Ազթաւուքեան
- Հաշուապահ՝ Կիրակոս Գուլյումճեան
- Գանձապահ՝ Մարտիրոս Մարտիրոսեան
- Գոյքապահ՝ Քեռի Սարգիսեան:

Այս տարեշրջանին վարչութեան կ'օժանդակէ սկաուտական խորհուրդը բաղկացած Գաբրիէլ Թասլաքեանէ, Վարուժան Արմուտեանէ եւ Յակոբ Գուլյումճեանէ: Կը կազմուին նաեւ մարզական եւ ընկերային յանձնախումբեր:

1988 տարեշրջանը Քուէյթի մասնաճիւղի վարչութեան կողմէ կը նշուի Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 70ամեակը յատուկ հանդիսութեամբ: Տարուայ ընթացքին կը նախատեսուին Ռալի Փէյփըրը, սկաուտական բանակում, Մայիսեան մարզահանդէս, երիտասարդական պարանցիկ, յոբելենական տօնակատարութիւն եւ պարահանդէս:

18 Մարտին տեղի ունեցաւ Ռալի Փէյփըրի մրցումը մասնակցութեամբ 110 երիտասարդներու բաժնուած 25 ինքնաշարժերու վրայ: Մրցումի աւարտին Մեսիլա Պիչ պանդոկին մէջ մասնակից մրցորդները եւ համակիրներ՝ շուրջ 400 հոգի ներկայ գտնուեցան պարանցիկ հաւա-



Քուէյթի Հ.Մ.Ը.Մ.-ի 1988-89 եղանակի ֆութպոլի խումբը

քոյթին եւ մրցանակաբաշխութեան ստեղծելով Հ.Մ.Ը.Մ.ական խանդավառ մթնոլորտ:

13էն 15 Ապրիլին տեղի ունեցաւ մասնաճիւղի տարեկան ընդհանուր բանակումը սկստական բաժնի 130 անդամներու մասնակցութեամբ, Տարագճեանի կալուածներուն մէջ: Բանակումը փակուեցաւ ծնողներու եւ բարեկամներու ներկայութեամբ՝ խարուկահանդէսով:

19 Մայիս 1989ին մասնաճիւղի անդամական Գ. ընդհանուր ժողովը բնականոն ընթացք մը չարձանագրեր: Կեդրոնական վարչութեան լիազօր ներկայացուցիչ Տիգրան Ճիմպաչեան կը

ստիպուի լուծել ժողովը եւ այս մասին զեկուցել Կեդրոնական վարչութեան:

21 Յունուար 1990ին Կեդրոնական վարչութեան լիազօր ներկայացուցիչ Տիգրան Ճիմպաչեան նշանակովի կը յառաջացնէ վարչական նոր կազմ որուն դիւանը կը կազմուի հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Անդրանիկ Գոճապաչեան
Ատենադպիր՝ Սարգիս Կիրակոսեան
Գանձապահ՝ Վազգէն Պապօղլեան:
Քուէյթի Հ.Մ.Ը.Մ.-ի մասնաճիւղը կը գտնուի գործունէութեան նոր հանգրուանի մը սեմին:

ԳԼՈՒԽ ԵՕԹԵՐՈՐԴ

ՎԱԼԱՆՍ

- ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ
- ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ
- ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.ի վալանսի մասնաճիւղը, Միու-
թեան համագաղութային կառույցին միացաւ
1985էն սկսեալ երբ կեդրոնական վարչութեան
հրաւերին անսալով մասնաճիւղի ներկայացու-
ցիչներ՝ Նշան Օհանեան եւ Յարութ Սաֆար
մասնակցեցան միջ-դիւանային Ա. խորհրդաժո-
ղովին՝ 5-7 Ապրիլին Միլանոյի մէջ:

Ծանօթ է որ վալանսի մէջ Հ.Մ.Ը.Մ.ը
առաջին անգամ գործունէութեան ձեռնար-
կած է 1926ին եւ մէջընդմէջ դադարներով
(յատկապէս Բ. Աշխարհամարտի օրերուն) շա-
րունակած է գործել անկախաբար: Մասնաճիւ-
ղի գործունէութեան կը վերսկսի 1983ին,

Ֆուլթայոլի եւ պասքեթբոլի ճիւղերով որոնց կը
մասնակցին 88 մարզիկներ եւ 15 ղեկավար
անդամներ:

Մասնաճիւղը որպէս նստավայր եւ աղումը
կ'օգտագործէ Հայ Մշակութային Տան սրահ-
ները՝ 32 Rue Pompery, 26500 Bourg Les Val-
ance.

1985-1986 տարեշրջանի վարչական կազմին
կը մասնակցին, ատենապետ՝ Կարպիս Տէր Գրի-
գորեան, քարտուղարուհի՝ Մակի Խաչիկեան,
գանձապահ՝ Ճորճ Աւետեան, գոյքապահ՝ Յա-
րութիւն Կայծակեան եւ մարզական պատաս-
խանատու՝ Ժագ Ղարիպեան: Այս կազմը



1988-89 Վալանսի Հ.Մ.Ը.Մ. վարչութիւնը
Վահէ Կօշկարեան՝ ֆութբոլի մարզական պատասխանատու, Ճորճ Աւետեան՝ Գանձապահ,
Կարպիս Տէր Գրիգորեան՝ Ատենապետ, Մակի Խաչիկեան՝ Քարտուղար,
Յարութ Կայծակեան՝ հանդիսութեանց պատասխանատու, Պօղոս Տէրտէրեան՝ Գոյքապահ,
Միքայել Միքոեան՝ ֆութբոլի պլովիկներու պատասխանատու, Մօսիկ Մարգարեան՝
Պասքեթբոլի մարզական պատասխանատու, Խաչիկ Գասպարեան՝ (նկարին վրայ բացակայ):

կ'ամրապնդէ իր կապերը Միութեան համագաղութային կառույցին հետ իր գործունէութիւնը պատշաճեցնելով Հ.Մ.Ը.Մ.ի ընդհանուր կանոնագրի սրամաղրութիւններուն:

23 Մայիս 1987ին մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը 1987-1988 տարեշրջանի գործունէութեան համար կ'ընտրէ նոր վարչական կազմ՝

Ատենապետ՝ Կարպիս Տէր Գրիգորեան
Փոխ ատենապետ՝ Եւ գանձապահ Յարութ Տէրտէրեան

Քարտուղար՝ Մակի Խաչիկեան
Գոյքապահ՝ Յարութ Կայծակեան
Մարզական պատասխանատու՝ Ժազ Ղարիպեան

Խորհրդականներ՝ Արսէն Սահակեան եւ Ճորճ Աւետեան:

Այս եղանակին մասնաճիւղը ունի 72 մարզիկ եւ 54 օժանդակ անդամներ: 1988ի Սեպտեմբեր՝ ամիսէն սկսեալ կը սկսի գործել սկաուտական ճիւղը խմբապետութեամբ՝ Տալիդա Արծիւեան - Եթերեանի: Նորակազմ խումբի թիւը շուտով կը բարձրանայ 65ի:

6 Մայիս 1988ին մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչութիւնը իր աշխատանքներու բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Կարպիս Տէր Գրիգորեան
Ատենաղարուհի՝ Մակի Խաչիկեան
Գանձապահ՝ Ճորճ Աւետեան
Գոյքապահ՝ Պօղոս Տէրտէրեան
Մարզական պատասխանատուներ՝ Վահէ Քէօշկէրեան, Միքայէլ Միքոյեան եւ Մոսիկ Մարգարեան

Յարաբերականի պատասխանատու՝ Յարութ Կայծակեան, Իրաւարար՝ Ժողէֆ Պետիկեան:

Այս կազմը կը զարգացնէ հաստատ հիմերու վրայ դրուած մարզական եւ սկաուտական շարժումները մասնակցելով գաղութի ազգային ելոյթներուն:

25 Մայիս 1989ին կ'ընտրուի 1989-1990 տարեշրջանի նոր վարչական կազմ՝

Ատենապետ՝ Ժազ Ղարիպեան
Փոխ ատենապետ՝ Շարլ Տէր Պարղամեան
Ատենաղարուհի՝ Սեդա Համալեան
Գանձապահ՝ Աբրահամ Մանուկեան
Գոյքապահ՝ Ճորճ Աւետեան

Խորհրդականներ՝ Յարութիւն Կայծակեան, Միքայէլ Միքոյեան, Պօղոս Իսասեան եւ Պերճ Մովսէս:

Այս տարեշրջանին վարչութեան գործունէութեան կեդրոնը կը հանդիսանայ սկաուտական շարժումը որուն օրէ օր նոր փոքրիկներ կ'արձանագրուին:

15 Յունիս 1990ին ընտրուած վարչական կազմի անդամներն են.-

Ատենապետ՝ Ժազ Ղարիպեան
Փոխ ատենապետ՝ Պօղոս Տէրտէրեան
Քարտուղարուհի՝ Գաթրին Քիշէճեան
Գանձապահ՝ Աբրահամ Մանուկեան
Գոյքապահ՝ Յարութ Կայծակեան
Հանդիսութիւններու պատասխանատու՝ Էլիզապէթ Ալաշեան

Մարզական պատասխանատուներ՝ Վահէ Քէօշկէրեան, Միքայէլ Միքոյեան եւ Մովսէս Մարգարեան:

ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆ

Վալանսի Հ.Մ.Ը.Մ.ի նորագոյն զարթօնքը կը սկսի 1983ի Յունիսին եւ 1984ի եղանակին Ֆութպոլի խումբը Տրոմ-Արտէշ նահանգի ախոյեանութեան մրցաշարքին մասնակցելով առանց պարտութեան կը յաջողի ախոյեանութեան տիրանալ, մարզական շրջանակներու եւ մամուլի ուշադրութիւնը կեդրոնացնելով իր վրայ: Ախոյեան խումբին մաս կը կազմեն Հերվէ Տէմիրճեան, Ժան Թանուշեան, Ժողէֆ Պետիկեան, Նազարէթ Համամճեան, Պօղոս Տէրտէրեան, Գրիգոր Սէֆէրեան, Վահէ Քէօշկէրեան, Ասատուր Ճերմակեան, Յակոբ Եէնպէք



Վալանսի Հ.Մ.Ը.Մ.ի 1984-85 եղանակի ֆուտբոլի խումբը՝
Տրոմ-Արտեշ նահանգի ախոյեան



1986, Արեւմտեան Երոպայի Միջ-մասնաճիւղային ֆուտբոլի եւ պատրէպոլի
խաղերուն առթիւ Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ
Բիւզանդ Թորիկեան ֆուտբոլի ախոյանութեան բաժակը
կը յանձնէ Վալանսի մասնաճիւղի խմբապետին

եան, Դերի Զատուրեան, Միշէլ Կիրակոսեան, Յարութիւն Մալճեան, Խաչիկ Հարմանտայեան եւ Աւետիս Անտրգեան:

1985ին խումբը կրկին կը տիրանայ նոյն տիտղոսին:

1985ին Միլանոյի մասնաճիւղի կազմակերպած Ֆոլթպոլի քառակողմանի մրցաշարքին մասնաճիւղի Ֆոլթպոլի կազմը կը տիրանայ յաղթանակի բաժակին:

29 եւ 30 Մարտ 1986ին մասնաճիւղը կը կազմակերպէ Արեւմտեան Եւրոպայի միջ-մասնաճիւղային Ֆոլթպոլի եւ պասքեթպոլի մրցաշարքերը:

1987ի եղանակին Ֆոլթպոլի «ճուտիկ»ներու եւ «կակուղ թաթիկ»ներու խումբերը նահանգի իրենց դասակարգերու փոխ ախոյեան կը հանդիսանան, իսկ պասքեթպոլի առաջին խումբը Տրոմ-Արտէշ նահանգի իր դասակարգի ախոյեանութեան կը տիրանայ:

1990ին մասնաճիւղը մեծ յաջողութեամբ կը կազմակերպէ Կեդրոնական Վարչութեան նախաձեռնած համագաղութային Գ. խաղերը

(պասքեթպոլի Բ. մրցաշարք) որոնց իրենց մասնակցութիւնը կը բերեն ինը Շրջաններու եւ Մեկուսի Շրջաններու ներկայացուցչական կազմերը - [Ծ/101-102.32]:

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Վալանսի մասնաճիւղի սկաուտական բաժինը գործունէութեան ձեռնարկած է 1988ին գլխաւորութեամբ Տալիտա Եթերեանի որուն կ'օժանդակեն փոխ խմբապետներ՝ Սերոբ Կիրակոսեան եւ Պետիկ Ղարիպեան:

4 Սեպտեմբերին տեղի կ'ունենայ բաժնի կազմութեան առաջին հաւաքը Հայ Մշակոյթի Տան մէջ 6-12 տարեկան գայլիկներու եւ արծուիկներու մասնակցութեամբ:

Շուտով խումբի անդամները կը տարագաւորուին եւ թեքնիք գիտելիքներու կողքին անոնց կ'ուսուցուի հայերէն լեզու:

Սկաուտական բաժնի խոստմնալից այս սկզբնաւորութիւնը կը շարունակուի յաջորդող տարիներու ընթացքին:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՐՈՐԴ

ՎԻԷՆՆԱ

- ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ
- ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Աւստրիոյ մայրաքաղաք Վիէննայի մէջ 1920-30ական թուականներուն գործող Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը, Բ. Աշխարհամարտի պատճառով դադրած էր գոյութիւն ունենալէ:

Աւստրիոյ հայ գաղութի պայմանները առիթ չի ստեղծեցին որ պատերազմէն ետք ալ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի մը վերակազմութիւնը կարելի դառնայ: Այսուհանդերձ մերթ ընդ մերթ հայ երիտասարդ խմբակցութիւններուն ախաճեռնութեամբ կազմուեցան եւ գործեցին մարզական խումբեր թեկուզ կարճ ժամանակի մը տեւողութեամբ: Այս կարգի խումբերէն էր «Արարատ» ֆութպոլի խումբը որ 1981էն

սկսեալ կը գործէր Վիէննայի հայ երիտասարդներու մասնակցութեամբ եւ ղեկավարութեամբ Ալեքսան Աւետիքեանի:

1985էն սկսեալ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութիւնը յատուկ ուշադրութեան արժանացուց Վիէննայի մէջ մասնաճիւղ մը հիմնելու կարելիութիւնները: Այս նպատակով Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան գանձապահ՝ Բիւզանդ Թորիկեան այցելեց Վիէննա եւ հանդիպումներ ունեցաւ «Արարատ»ի ղեկավարութեան եւ վիէննաբնակ անձնաւորութիւններու հետ որոնց կարգին Աստիկ Աստուածասուրեան եւ իր շրջանակը: Վիէննացիները Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ մը ունենալու պարագան կարելի նկատելով հանդերձ, նա-



Վիէննայի Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան հանդիսութիւն, Կեդրոնական վարչութեան ներկայացուցիչ Սիամանթօ Կարապետեան կը շնորհաւորէ մասնաճիւղի ատենապետ Աւօ Գուլումճեանը:

խրնտրեցին ժամանակ առնել այդ նպատակով մտքերու պատրաստութեան համար: Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը մէջընդմէջ այցելութիւններով շարունակեց, մասնաճիւղի մը հիմնումին նպատակով, իր կապերը երիտասարդ շրջանակներուն հետ:

4 Դեկտեմբեր 1989ին, խոսմբ մը երիտասարդներ, Աւետիս Գուլումճեանի եւ Արմանտ Աւաննէսեանի հրաւերին անսալով, կը հաւաքուին վիէննայ Կեդրոնի մեծ սրահը լսելու համար Հ.Մ.Ը.Մ.ի նպատակին եւ ընդհանուր գործունէութեան մասին: Ներկաները տեղւոյն վրայ կ'որոշեն վիէննայի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ մը հիմնել, մասնաճիւղի գործունէութիւնը սահմանափակելով սկաուտական շարժումի կիրարկումով: Այդ թուականէն սկսեալ

Հ.Մ.Ը.Մ.ի վիէննայի մասնաճիւղը պաշտօնապէս կը ձեռնարկէ գործունէութեան որուն մասին տեղեակ կը պահուի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը:

ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆ

24 Մարտ 1990ին, Հ.Մ.Ը.Մ.ի վիէննայի մասնաճիւղի վարչութիւնը, իր անդրանիկ շրջաբերականով քաղաքի հայ համայնքի անդամները կը հրաւիրէ ներկայ գտնուելու մասնաճիւղի գործունէութեան սկզբնաւորութեան հաւաքոյթին: Հաւաքոյթին ներկայ կը գտնուին Կեդրոնական Վարչութեան անդամ՝ Սիա-



Վիէննայի Հ.Մ.Ը.Մ.ի անդամներու խմբանկար

մանթօ կարապետեան, Աւստրիական սկաուտական կեդրոնի ներկայացուցիչներ գլխաւորութեամբ՝ Ուվէ Էշների, Աւստրիոյ հայ համայնքի եկեղեցական վարչութեան ատենապետ՝ Աստիկ Աստուածատուրեան, եւ Լոնտոնի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղէն սկաուտական պատուիրակութիւն մը:

Սկաուտներու կողմէ կատարուած տողանցքէն ետք տեղի կ'ունենայ երդման արարողութիւն կնքահայրութեամբ՝ Րաֆֆի Բարոյեանի:

Ապրիլի 22ին, սկաուտական հաւաքոյթին ներկայ կը գտնուին 31 անդամներ՝ սկաուտական, արենոյշական, գայլիկական եւ արծուիկական բաժիններով: Այս թիւը շուտով կը բարձրանայ 45ի: Մասնաճիւղի խմբապետի պաշտօնը կը վարէ Ռուտովֆ Մաղաքեան:

Աստիճանաւորական կազմին կ'անդամակցին.

Կարինէ Սիմոնեան՝ արծուիկ խմբապետուհի

Արմանտ Յովհաննէսեան՝ աքելա (գանձապահ)

Տիրան Բաղդատեան՝ արի խմբապետ (գոյքապահ)

Գարմէն Կիրակոսեան՝ արենոյշ խմբապետուհի (քարտուղար):

Վարչական ժողովները կը գումարուին Հինգշաբթի երեկոները:

Հաւաքոյթները տեղի կ'ունենան Սբ. Հռիփսիմէ Եկեղեցոյ ազգային կալուածէն

Հ.Մ.Ը.Մ.ին տրամադրուած յարկաբաժինին մէջ եւ եկեղեցոյ բակը: Վարչութեան առաջին աշխատանքը կ'ըլլայ սկաուտներու տարազաւորումը եւ աստիճանաւորներու մասնագիտական որակաւորումը աւստրիացի սկաուտական խումբերու հետ հանդիպումներով:

1990ի ընթացքին մասնաճիւղը կը կազմակերպէ բանակում 6-9 Յուլիսին, հեծելանիւով արշաւ՝ Օգոստոս 11ին եւ սկաուտական գիտելիքներու արշաւ՝ Օգոստոս 25ին: 21-31 Յուլիսին մասնաճիւղի սկաուտներէն պատուիրակութիւն մը կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի 4րդ ընդհանուր բանակումին Յունաստանի մէջ: 17 Նոյեմբերին տեղի կ'ունենայ սկաուտներու երդման արարողութիւն ներկայութեամբ Կեդրոնական Վարչութեան անդամ Սիամանթօ Կարապետեանի եւ հայրենի դերասան Սօս Սարգսեանի:

Տարուայ ընթացքին սկաուտական աշխատանքներու յաջողութեան իրենց բաժինը բերած են. Անի Բաբայեան, Արմանտ Յովհաննէսեան, Մանոն Տէր Պետրոսեան, Սարօ Կիրակոսեան, Կարինէ Սիմոնեան, Սարփինէ Ստեփանեան եւ Ատրինէ Սիմոնեան:

Բացի սկաուտական գործունէութենէն մասնաճիւղը կը կազմակերպէ Ապրիլ 24ի նահատակաց յիշատակի հանդիսութիւն եւ ծաղկեպսակ կը զետեղէ եկեղեցոյ բակին մէջ գտնուող նահատակաց յուշարձանին առջեւ:

Այսպէսով Վիեննայի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի գործունէութիւնը իր հոլուն մէջ կը դրուի ապագայի յուսադրիչ ծրագիրներով:

ԳԼՈՒԽ ԻՆԵՐՈՐԴ

ԻՏԱԼԻԱ

ՄԻԼԱՆՕ

- ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ
- ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ
- ԱՅԼՔ

ՄԻԼԱՆՕ

Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչոլթիւնը Պատգամաւորական Գ. ընդհանուր ժողովին խորհրդակցական ձայնով մասնակցելու հրաւիրեց Պէյրութի մասնաճիւղի անդամներէն Ալեքս Պեգիկեանը որ հաստատուած էր Իտալիոյ Պերկամօ քաղաքը:

Պեգիկեան ժողովէն վերադարձին խորհրդակցոլթիւններ կ'ուենայ Իտալիա, յատկապէս Միլանօ, հաստատուած կարգ մը նախկին Հ.Մ.Ը.Մ.ականներու հետ որոնք Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի մը կազմոլթեան նախաձեռնոլթիւնը կը վստահին կազմակերպիչ յանձնախումբի մը գլխաւորոլթեամբ Հրանդ Բամպակեանի: Կազմակերպիչ յանձնախումբը հրաւէր կ'ուղղէ Միլանոյի բոլոր հայ ազգայիններուն ներկայ ըլլալու 10 Յունիս 1983ին «Հայ Տուն»ին մէջ կայանալիք Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի մը հիմնադրոլթեան ժողովին: Այս հրաւէրին կը հակազդեն կարգ մը ազգայիններ, որոնք Հ.Մ.Ը.Մ.ի գործունէոլթիւնը «քաղաքականացած» որակելով դէմ կ'արտայայտուին ծրագրին:

ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Ալեքս Պեգիկեան կազմակերպիչ յանձնախումբի նախաձեռնոլթիւնը կը տեղեկացնէ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչոլթեան եւ 18 Մայիս 1983 թուակիր նամակով կը հրաւիրէ կեդրոնական վարչոլթեան ներկայացուցիչը մասնաճիւղի անդրանիկ անդամական ընդհանուր ժողովին որ կը նախատեսուի կայացնել 10 Յունիս 1983ին Միլանոյի «Հայ Տուն»ին մէջ:

Այս հրաւէրին ընդառաջելով կեդրոնական վարչոլթեան ատենապետ՝ Վարդգէս Տէր Կարապետեան ներկայ կը գտնուի նախատեսուած ժողովին ուր շուրջ 70 հրաւիրեալ անդամներու ներկայոլթեան պաշտօնապէս հիմը կը դրուի Հ.Մ.Ը.Մ.ի Իտալիոյ մասնաճիւղին որուն կ'անդամակցին բացի Միլանոյէն նաեւ

Բարմա, Բատովա, Վենետիկ եւ Ճենովա քաղաքները բնակող անդամներ:

Տեղույն վրայ մասնաճիւղի հիմնադիր վարչոլթեան անդամներ կ'ընտրուին Ալեքս Պեգիկեան, Միշէլ Մինասեան, Ժան Անսրրլեան, Սարօ Խուտավերտեան, Արմէն Մալոյեան, Յակոբ Պաղունի, Վալոտ Երեմեան, էտվիկ Խաչատուրեան որոնք 15 Յունիսի առաջին նիստին կը կատարեն աշխատանքներու բաժանումը հետեւեալ ձեւով:

- Ատենապետ՝ Ալեքս Պեգիկեան
- Փոխ ատենապետ՝ Միշէլ Մինասեան
- Ատենադպիր՝ Ժան Անսրրլեան
- Փոխ ատենադպրուհի՝ Սօսի Պարոնեան
- Գանձապահ՝ Սարօ Խուտավերտեան
- Մարզական պատասխանատու՝ Վալոտ Երեմեան

Խորհրդականներ՝ Յակոբ Պաղունի, էտվիկ Խաչատուրեան եւ Արմէն Մալոյեան՝ (Հայ Տունի վարչոլթեան անդամ):

Անդրանիկ վարչոլթեան առաջին գործերէն կ'ըլլայ անդամարշաւը: Արդարեւ ժամանակի ընթացքին նորակազմ մասնաճիւղին կ'անդամագրուին բացի Միլանոյէն նաեւ անդամներ Իտալիոյ այլ քաղաքներէն՝ Վենետիկէն, Բատովայէն, Պերկամոյէն, Բիաչենցաէն, Ճէնովայէն եւ Թորինոյէն, ընդհանուր թիւը բարձրացնելով շուրջ 100ի:

5 Նոյեմբեր 1983ին մասնաճիւղը կը կազմակերպէ իր առաջին հրապարակային ելոյթը «Հայ Տուն»ին մէջ կազմակերպելով շքեղ ճաշկերոյթ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրոլթեան 65ամեակին առիթով:

Հետզհետէ կը կազմուին սկաուտական խումբը եւ մարզական խումբեր որոնք կը կիրարկեն ֆոլթպոլ եւ փինկ-փոնկ:

3 Փետրուար 1984ին տեղի կ'ուենայ մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողով որմէ ընտրուած վարչական կազմը իր պաշտօններու բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով:

- Ատենապետ՝ Ալեքս Պեգիկեան
- Փոխ ատենապետ՝ Արմէն Մալոյեան



Հ.Մ.Ը.Մ.ի Իտալիոյ մասնաճիւղի անդրանիկ Վարչական Կապւր: Ուոքի՝ Սօսի Պորանեան, Յակոբ Պտղունի, Ժան Անսրլեան, Ալեքս Պեպիկեան, Միշել Մինասեան, Սարօ Խուտավերտեան, Արմէն Մալոյեան: Նստած՝ Էտվին Խաչատուրեան եւ Վալոտ Երեմեան

*Ատենադպիր՝ Էտվին Խաչատուրեան
Գանձապահ՝ Սարօ Խուտավերտեան
Մարզական պատասխանատու՝ Վալոտ
Երեմեան*

Սկառուտական պատասխանատուներ՝ Գրիգոր Շեխիկեան եւ Պերճ Օգնայեան:

Այս կազմը զանազան ելոյթներով կը նպաստէ Հ.Մ.Ը.Մ.ի ծանօթացման իտալահայ գաղութէն ներս: Կը կազմակերպէ հրապարակային ձեռնարկներ (երգահանդէս, դաշտահանդէս, փոքրերու յատուկ աթլետիք խաղեր), կը մասնակցի Ապրիլ 24ի յուշատօնի նախաձեռնութեան, կը կազմէ մասնաճիւղի ներքին կանոնադրութիւն:

Ճէն 7 Ապրիլ 1985ին, մասնաճիւղը կը հիւրընկալէ Կեդրոնական Վարչութեան կազմակերպած Առաջին միջ-դիւանային խորհրդաժողովը մասնակցութեամբ 6 Շրջաններու եւ 11 Մեկուսի Շրջաններու ներկայացուցիչներուն:

Այս առթիւ մասնաճիւղը կը կազմակերպէ Ֆուլթայոլի քառանկիւն մրցաշարք մասնակցութեամբ Վիէննայի «Արարատ» ֆուլթայոլի խումբին, Զուրիցերիոյ «Մասիս» ֆուլթայոլի խումբին, Վալանսի եւ Միլանոյի Հ.Մ.Ը.Մ.ի խումբերուն: Տեղի կ'ունենայ ընդհանուր տողանցք:

9 Նոյեմբեր 1986ին տեղի կ'ունենայ մասնաճիւղի Գ. անդամական ընդհանուր ժողովը

նախագահութեամբ Տոքթ. Հարմա Մինասեանի եւ քարտուղարութեամբ Անդրանիկ Պալեանի: Բ. ընդհանուր ժողովի ատենագրութեան վաւերացումէն ետք ժողովը կը քննէ ընթացակարգ վարչութեան երկամեայ գործունէութեան տեղեկագիրը, որմէ ի յայտ կու գայ որ մասնաճիւղը կը հաշուէ ընդհանուրը 166 անդամներ որոնց 38 սկաուտական շարքերէն:

Ժողովի ընթացքին տեղի կ'ունենայ «Ծառայութեան Շքանշան»ի տուչութիւն Հրանդ Բամպակեանին որ երկարամեայ ծառայութիւններ մատուցած է Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին Յունաստանի մէջ եւ Միլանոյի Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիր անդամներէն է եղած:

Ապա 1986-87 տարեշրջանի վարչութեան անդամներ կ'ընտրուին Ատենապետ՝ Ալեքո Պեզիկեան, ատենադպիր՝ Ժան Անսրըլեան, գանձապահ՝ Յարութիւն Իսթամպուլեան, մարզական պատասխանատու՝ Տոքթ. Գրիգոր Շեխիկեան, յարաբերական՝ Արմէն Մալոյեան, փոխ ատենապետ՝ Սարո Խոլտավերտեան եւ փոխ ատենադպիր՝ Րոպէր Գալուստեան: Վարչական այս կազմին օգնական անդամներ կը հրաւիրուին Կարօ Աղազարեան եւ Պերճ Օգնայեան: Վարչութիւնը իր կողքին կը նշանակէ սկաուտական խորհուրդ, տնտեսական, մարզական ձեռնարկներու եւ երեխաներու մշակութային յանձնախումբեր:

21 Յունիս 1987ին Բարմայի մէջ տեղի կ'ունենայ սկաուտական կազմի անդրանիկ խոստման արարողութիւնը: Հանդիսապետութեամբ հիւսիսային Իտալիոյ հոգեւոր հովիւ Սարգիս քհն. Սարգիսեանի Լոնտոնի մասնաճիւղի խմբապետ՝ Հրայր Տէր Գրիգորեան կը ստանայ նորընծայի քննութիւնները արի-արենոյշ բաժինէն 7 եւ գայլիկ-արծուիկ բաժինէն 12 անդամներ կու տան իրենց խոստումը- [Ծ/69-70.12]:

Միլանոյի Հայ Տան սրահին մէջ, 19 Մարտ 1989ին տեղի կ'ունենայ մասնաճիւղի Դ. անդամական ընդհանուր ժողովը ներկայութեամբ Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ՝ Սիամանթօ Կարապետեանի: Երկամեայ գործունէութեան տեղեկագրի քննութենէն ետք, նոր տարեշրջանի վարչութեան անդամներ կ'ընտրուին, Գրիգոր Շեխիկեան, Վազգէն Բամպակեան, Նիքոլա Ֆերրայէ, Կարօ Աղազարեան, Վալոտ Երեմեան, Յովիկ Մուրատեան եւ Րոպէր Գալուստեան:

Հ.Մ.Ը.Մ. Իտալիոյ մասնաճիւղի վարչական անդամները նաեւ կը գործեն Իտալիոյ հայ ազգային գործունէութեան այլ ծիրերէն ներս՝ Եկեղեցւոյ հոգաբարձութիւն, Հայ Տան վարչութիւն, Իտալիոյ Հայոց Միութիւն: Մասնաճիւղը նիւթապէս օժանդակած է Հայաստանին 1988ի երկրաշարժի ստեղծած տագնապալի օրերուն:

ԳԼՈՒԽ ՏԱՍԵՐՈՐԴ

ԿԻՊՐՈՍ

ՆԻԿՈՍԻԱ

— ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ՄԻՈՒԹԻԻՆ



Ե Հ Պ Ր Ո Ս

Նիկոսիա

Լառնաքա

Միջերկրական

Ծ Ո Վ

Հ.Ե.Մ. ՆԻԿՈՍԻԱ

Նիկոսիոյ Հ.Ե.Մ. (Հայ Երիտասարդաց Միութիւն)ը Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կառույցին միացաւ 1978էն սկսեալ իբրեւ Մեկուսի Շրջան, երբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան 21 Ապրիլ 1978 թուակիր նամակին պատասխանելով ընդունեց մաս կազմել Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին իբրեւ 45րդ մասնաճիւղ:

Այս թուականին Հ.Ե.Մ.ի վարչութեան ատենապետի պաշտօնը կը վարէր Պօղոս Մահտիսեան ատենադպրութեամբ Պերճ Թումայեանի:

1978ի Օգոստոսին իբրեւ առաջին գործնական քայլ Հ.Ե.Մ.ի սկառուտներէ բաղկացող պատուիրակութիւն մը մասնակցեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային Ա. ընդհանուր բանակումին Յունաստանի մէջ:

Ապրիլ 1979ին Հ.Ե.Մ.ի Կիպրոսի վարչութիւնը Նիկոսիոյ «Չրչիլ» պանդոկին մէջ կը հիւրընկալէ Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Բ. Ընդհանուր Ժողովը: Այս առիթը պատեհութիւն կը ստեղծէ Հ.Ե.Մ.ի եւ Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհատարած ընտանիքի ղեկավար անդամներու լայն ծանօթացման:

18 Մարտ 1980ին մասնաճիւղի 46րդ անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ՝

Ատենապետ՝ Սարգիս Տէր Ստեփանեան
 Փոխ ատենապետ՝ Հրանդ Տեմիրճեան
 Ատենադպիր՝ Պերճ Թումայեան
 Գանձապահ՝ Յովսէփ Գարողլանեան
 Փոխ ատենադպիր՝ Մարտիկ Գասպարեան
 Գոյքապահ՝ Սարգիս Էօճիւրեան

Մարզական պատասխանատու՝ Կարպիս Գասարճեան:

Մարզական գետնի վրայ Հ.Ե.Մ.ը ունի Ֆութպոլի խումբ մը որ կը մասնակցի կղզիի Amateur Ligue-ի ախոյեանական մրցաշարքերուն: Խումբի մարզիչն է Կարպիս Գասարճեան:

1980ին Հ.Ե.Մ.ի զոյգ ներկայացուցիչներ կը

մասնակցին Ֆրանսայի Գլամար քաղաքին մէջ Միութեան համագաղութային Բ. ընդհանուր բանակումին:

Մասնաճիւղը ազգային կեանքին կը մասնակցի աւանդական Ապրիլ 24ի եւ Մայիս 28 տօնախմբութեանց իր գործօն օժանդակութեամբ:

Հակառակ մասնաճիւղի կենսունակ գործունէութեան մասնաճիւղի հաղորդակցութիւնները Կեդրոնական Վարչութեան հետ թոյլ կը մնան:

1983ին Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Գ.



Հ.Մ.Ը.Մ.ի Համագաղութային Գ. Ընդհ. բանակումին Յարութիւն Անմահունի Կիպրոսի Հ.Ե.Մի աւագ խմբապետ՝ Լոնտոնի մօտակայ Շալֆոնթ-Հայց (Chalfont-Heights) բանակավայրին մէջ, իր յատուկ սկաուտական վերարկուով:

Ընդհանուր ժողովին ներկայացուցիչ Անանիա Մահտեսեան կը վերահաստատէ Հ.Ե.Մ.ի մասնակցութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կառոյցի գործունէութեան:

Հաղորդակցութեան երկար դադարէ ետք Կեդրոնական Վարչութեան 17 մարտ 1986 թուակիր նամակին պատասխանելով, Հ.Ե.Մ.ի վարչութիւնը կրկին կապ կը հաստատէ կեդրոնին հետ 1 Մայիս 1986 թուակիր զեկուցական մանրամասն նամակով:

1986ին Հ.Ե.Մ.ի վարչութեան ատենապետի պաշտօնը կը վարէ Ա. Պալթայեան ատենադարութեամբ՝ Վահան Մահտեսեանի: Այս տարեշրջանին Հ.Ե.Մ.ի գործունէութիւնը կը կեդրոնանայ սեփական արդիական ակումբի մը շինութեան վրայ: Ակումբի հողաչերտը պետութեան կողմէ տրամադրուած է մասնաճիւղին 99 տարուայ համաձայնագրով:

Կեդրոնական Վարչութեան հետ հաղորդակցութիւնները կը մնան թոյլ: 5 Փետրուար 1987 թուակիր նամակով մասնաճիւղը պատրաստակամութիւն կը յայտնէ մասնակցելու Հ.Մ.Ը.Մ.ի Դ. Պատգամաւորական Ընդհանուր

ժողովին տեղեկացնելով նաեւ որ փոխադրուած է իր սեփական ակումբը եւ վերսկսած իր սկաուտական եւ մարզական գործունէութեան: Մասնաճիւղի վարչութեան դիւանի անդամներն են՝ Ատենապետ՝ Վահան Մահտեսեան, ատենադպիր՝ Պօղոս Մահտեսեան:

Սակայն Կեդրոնական Վարչութիւնը կ'անդրադառնայ որ Հ.Ե.Մ.ի անդամներն ուղեկավարութիւնը ներքին դժուարութիւններ կը դիմագրաւեն ամբողջական եւ կանոնադրային հիմունքներով Հ.Մ.Ը.Մ.ի կառոյցին միանալու: Առ այդ 28 Փետրուար 1987 թուակիր թիւ 330 նամակով Հ.Ե.Մ.ի վարչութեան կը հաղորդէ, թէ կը դադրեցնէ Հ.Ե.Մ.ի անդամակցութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի կառոյցին, փոխադարձ յարաբերութիւնները բանաձեւելով «պարզապէս բարեկամական» եւ կը մերժէ Հ.Ե.Մ.ի մասնակցութիւնը Պատգամաւորական Դ. Ընդհանուր ժողովին:

30 Մայիս 1987ին տեղի կ'ունենայ Հ.Ե.Մ.ի նորակառոյց ակումբի բացման հանդիսութիւնը հովանաւորութեամբ Կիպրոսի հանրապետութեան նախագահ՝ Ս. Կիպրիանուի:



Դ. ՄԱՍ

ՀԱՅԱՍՏԱՆ

- ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ
- ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԵՒ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆ
- ՆՈՐ ՄԱՍՆԱՃԻԴԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ



● ԿՈՒՄԱՅՐԻ

ԶԱՐԵՆՑԱԽԱՆ ●

⊙ ԵՐԵՎԱՆ

ՍԵՒԱՆԱՅ
ԼԻՃ

● ՄԱՐՏՈՒՆԻ

Զ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

ԹՈՒՐԿԻԱ

ԱՏՐՊԷՅՃԱՆ

● ՍԻՍԵԱՆ

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Հայաստանի մէջ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան հաստատման եւ գործունէութեան գաղափարը իր սաղմին մէջ կը սկսի զարգանալ 1980ական թուականներու վերջին տարիներու ընթացքին երբ տակաւին Հայրենիքը մաս կը կազմէր Խորհրդային Միութեան իբրեւ ՀՍԽՀանրապետութիւն:

Այս գաղափարի զարգացման ետին կը գտնուին համալսարանական շրջանակներու ուսանողներ՝ Վարդան Բախշեան, Բագրատ Եսայեան, Յարութիւն Պօղոսեան, Մանուկ Մանուկեան, Տիգրան Նաղտալեան, Նազարէթ Աբանեան եւ անոնց ընկերները որոնք իրենց ծրագրին կեանք տալու նպատակով հաւաքոյթներ կ'ունենան Երեւանի համալսարանի շրջափակէն ներս:

Նոյն ժամանակաշրջանին, 7 Դեկտեմբեր 1988ի Հայաստանի Սպիտակ-Լենինական քաղաքներուն մէջ պատահած երկրաշարժային աղէտը, առիթ կը հանդիսանայ որպէսզի Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան անդամներ, ատենապետ՝ Տոքթ. Միսաք Արզումանեան եւ փոխ ատենապետ՝ Երուանդ Տեմիրճեան, լիբանանահայ գաղութի կողմէ երկրաշարժի աղետալներուն օժանդակութեան մարմիններու անդամի պարտականութեամբ, Հայաստան գտնուին զանազան առաքելութիւններով եւ կապ հաստատեն տեղւոյն պատասխանատուներու հետ առաջադրելով որ անոնք, Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարներու տարածումով, բարոյական վերածնունդ մը ստեղծեն Հայաստանի պատանեկան շրջանակներէն ներս եւ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական շարժում կազմակերպեն հայրենիքի զանազան շրջաններուն մէջ:

Իր կարգին, Դիլիջանի մէջ, 28 Յուլիսէն 23 օգոստոս 1989ին, տեղի կ'ունենայ ԻԻՆԵՍՔՈՅԻ հովանաւորութեամբ համակարգչային գիտութեանց զարգացումին համար պատանեկան ճամբար, կազմակերպութեամբ ԳՈԲՄԻԻ (Գատրերի Որակաւորման Բարձրացման Միջճիւղային Ինստիտուտ) : Այս ճամբարին իրենց

մասնակցութիւնը կը բերեն Փարիզի Հ.Մ.Ը.Մ.-ՖՐԱՆՍԻ 27 արիներ եւ արենոյշներ, ստանձնելով ճամբարի սկաուտական եւ մարզական յայտագիրներու իրագործումը:

Ստորեւ այս բանակումին առթիւ Հրաչ Սիսեռեանի տպաւորութիւններէն մեջբերումներ.

«Եօթանասուն տարի ետք, Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքէն մասնաճիւղ մը պաշտօնապէս հրաւիրուեցաւ հայրենիք՝ մասնակցելու համար Դիլիջանի մէջ կապակերպուած դպրոց բանակումի մը:

«Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի հետեւողական եւ լուրջ բանակցութիւններու արդիւնքով, ստորագրուեցաւ համաձայնագիր մը Գատրերի Որակաւորման Բարձրացման Միջճիւղային Ինստիտուտին (ԳՈԲՄԻ) հետ, որ հովանաւորուած է Լուսաւորութեան (Education) նախարարութեան կողմէ»...

... «Ըստ գոյացած համաձայնութեան, առաջին օրէն իսկ մեր տղաքը հայրենի երիտասարդներուն սկսան սորվեցնել «Յառաջ Նահատակ»ը եւ բանակողներուն բաժնեցին սկաուտական տարապներ: 3 Օգոստոսէն սկսեալ Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնը եւ սկաուտական գիտելիքները փոխանցելու մտահոգութեամբ՝ դասարաններ կապակերպեցին: Այս նախաձեռնութիւնը յաջողութեամբ պսակուեցաւ, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ի անդամագրուելու արտաբոյս դիմումներ եղան: Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութեան ներկայացուցիչ եղբայր Հրայր Տէր Գրիգորեանին մօտ հաւաքուեցաւ 45 դիմումնագիր»- [Ծ/99-100.36]:

Վերոյիշեալ ներկայութիւնները հայրենիքէն ներս, դրական օգտակարութիւն կ'ունենան Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւն ստեղծելու գաղափարը հետապնդող համալսարանական ուսանողներուն մօտ որոնց կը տրամադրուի Հ.Մ.Ը.Մ.ի ընդհանուր ծրագիր կանոնագրի օրինակներ առ ի ուսումնասիրութիւն:

ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ

2 Դեկտեմբեր 1989ին, նախաձրագրող ուսանողներու հրաւէրով Երեւանի մէջ տեղի կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի հիմնադրութեան հաւաք: Այս հաւաքին ներկայ կը գտնուի նաեւ Հ.Յ.Դ. պիւրոյի ներկայացուցի-

չը: Տեղւոյն վրայ կ'որդեգրուի Հ.Մ.Ը.Մ.ի ծրագիր կանոնագիրը եւ կ'ընտրուի անդրանիկ վարչութիւն անդամակցութեամբ՝ Վարդան Բախշեանի, Սուսաննա Դաւթեանի, Տիգրան Նազարեանի, Նայիրի Յունանեանի եւ Բագրատ Եսայեանի:

Ընտրեալ վարչութիւնը 4 Դեկտեմբերի առաջին նիստի ընթացքին կ'որոշէ դիմել Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան խնդրելով Երեւանի մասնաճիւղի անդամակցութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին: Մասնաճիւղի նախապատրաստական աշխատանքներով արդէն շուրջ 100 սկառտներ պատրաստ են իրենց երդումը տալու եւ կը սպասեն արտասահմանէն պատասխանատուի մը ներկայութեան:


Կեդրոնական վարչութիւնը իր 21 Դեկտեմբեր 1989ի նիստին, վերոյիշեալ դիմումը արձանագրելէ ետք, կ'որոշէ Հայաստան մեկնելիք իր պատուիրակութեան վստահիլ Երեւանի մասնաճիւղի վաւերացման պարագան միաժամանակ պարտք դնելով պատուիրակութեան վրայ, փորձել պետական արտօնագիր ստանալ Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան համար Հայրենիքէն ներս: Պատուիրակութեան մաս կը կազմեն Տոքթ. Միսաք Արզումանեան, Երուանդ Տեմիրճեան եւ Յովհաննէս Տէր Յարութիւնեան: Պատուիրակութիւնը պիտի տեսակցի նաեւ ԳՈՒՄԻի նախագահ Եոզրի Բարոյեանի հետ, Սեւանայ լիճի ափին կառուցուելիք

մշակութային եւ սքոսաշրջիկային համալիրի ծրագրի հարցով որուն ուսումնասիրութեան համար կեդրոնական վարչութիւնը գործուղած է լիբանանահայ ճարտարագէտներ՝ Տիրան Հարմանտարեան եւ Վազգէն Չեքիճեան:

19 Ապրիլէն 8 Մայիս 1990ի քսանօրեայ իր կեցութեան ժամանակամիջոցին, պատուիրակութիւնը շարք մը հանդիպումներ կ'ունենայ Երեւանի նորաստեղծ մասնաճիւղի վարչութեան հետ: Մասնաճիւղը օրէ օր կազմակերպչական յառաջդիմութիւններ կ'արձանագրէ երիտասարդ նոր ուժեր միացնելով իր դեկավարութեան որոնցմէ՝ Ռոլանտ Շարոյեան, Ստեփան Սահակեան եւ ուրիշներ: Անմիջական կարիքը ունին մասնագէտ սկառտ խմբապետներու օժանդակութեան: Նորագիր սկառտներու թիւը բարձրացած է 200ի:

Կեդրոնական վարչութեան անդամները անոնց կը յանձնեն գիրքեր, ծրագիր կանոնագրի, ժողովական կանոններու օրինակներ, սկառտական տարագներու նմուշներ եւ 4000 Ռուբլիի օժանդակութիւն:

Պատուիրակութեան Լիբանան վերադարձին, կեդրոնական վարչութիւնը 22 Մայիս 1990ի նիստի ընթացքին պաշտօնապէս կը վաւերացնէ Երեւանի Հ.Մ.Ը.Մ.ի վարչութիւնը, մասնաճիւղը ընդունելով Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքէն ներս եւ անոր վստահելով Հ.Մ.Ը.Մ.ի տարածումը Հայաստանի այլ շրջաններու մէջ:



ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԵՒ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆ

4 Դեկտեմբեր 1989ի անդրանիկ նիստի ընթացքին, Հ.Մ.Ը.Մ.ի Երեւանի մասնաճիւղի առաջին վարչական կազմը իր աշխատանքներու բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով. - Ատենապետ՝ Վարդան Բախչեան
Քարտուղար՝ Սուսաննա Դաւիթեան
Գանձապահ՝ Տիգրան Նազարեան
Խորհրդականներ՝ Բագրատ Եսայեան եւ Նայիրի Յունանեան:


Ամառնային արձակուրդներէն օգտուելով զանազան վարժարաններու պատանիներ կը պատրաստուին նորընծայի գիտելիքներու ծանօթացման եւ դասախօսութիւններու շարքով կը ծանօթանան ազգային պատմութեան նո-

րագոյն փուլերուն՝ կամաւորական շարժումներ, Եղեռն, Հայ Դատ:

Դեկտեմբեր 1989ին, 40 սկառսներ յաջողութեամբ կ'անցնեն նորընծայի քննութիւնները: 20 նորագիրներ կը պատրաստուին տալու իրենց քննութիւնները: Սկառսները բաժնըւած են երեք խումբերու:

Անդրանիկ վարչութիւնը կազմած է գործունէութեան լայն ծրագիր: Այս ծրագրին մաս կը կազմեն. - ծնողական, դաստիարակչական եւ սկառսական խորհուրդներու կազմութիւն, Բ. կարգի գիտելիքներու ուսուցում, երգչախումբի եւ գրադարանի ստեղծում:

Վարչութիւնը առաջին հերթին կը դիմէ Հ.Խ.Ս.Հ.ի Մինիստրների Խորհուրդին, ստանալու համար պետական ճանաչում:



ԳՈՐԾԻ-ի համակարգչային ճամբարին մասնակցող Հ.Մ.Ը.Մական պատուիրակութեան անդամները Ծիծեռնակաբերդի Յուշարձանին մէջ

Մինչեւ 1990ի Յուլիս ամիսը վարչութեան ծրագիրներէն մաս մը կ'իրագործուի յաջողութեամբ: Կը կազմակերպուին արշաւներ դէպի Սարգարապատ եւ դէպի Հատիս լեռ: 26 Յուլիսէն 4 Օգոստոս 1990 տեղի կ'ունենայ մասնաճիւղի առաջին ընդհանուր բանակումը: Բանակումի ղեկավար անդամներն են.-

Ընդհանուր պատասխանատու՝ Վարդան Բախշեան

Փոխ պատասխանատու, մատակարար եւ գանձապահ՝ Էդիկ Գրիգորեան

Դաստիարակչական պատասխանատու՝ Րաֆֆի Շամլեան (Գանատայէն)

Կարգապահական եւ գիտելիքներ՝ Մանուկ Մանուկեան (Սուրիայէն)

Խոհարար՝ Անժիկ Գրիգորեան

Օգնականներ՝ Սամուէլ Կորտակեան, Արմէն Փաշայեան եւ Ծնողներ:

2էն 26 Օգոստոս 1990ին, Դիլիջանի մէջ, ԳՈԲՄԻի համակարգչային բանակումին կը մասնակցին Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային ընտանիքէն սկառուտական պատուիրակութիւններ՝ հետեւեալ թիւերով.- Լոնտոն՝ 2, Ֆրանսա՝ 9, Արժանթին՝ 5, Աստրալիա՝ 5, Սուրիա՝ 12, Լիբանան՝ 5: Հայաստանի զանազան շրջաններէն 60 պատանիներ ներկայ են այս բանակումին որ ծանօթացման լայն առիթներ կը ստեղծէ Հայաստանի պատանիներուն եւ Հ.Մ.Ը.Մ.ի համասփիւղեան սկառուտական շարժումին միջեւ:

4էն 8 Յուլիսին Լոս Անճէլըսի մէջ 9 հոգինոց պատուիրակութիւն մը կը մասնակցի Արեւմտեան Մ. Նահանգներու 15րդ Նաւասարդեան խաղերուն:

Աթէնքի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի 4րդ համագաղութային ընդհանուր բանակումին կը մասնակցին Երեւանի Հ.Մ.Ը.Մ.էն զոյգ ներկայացուցիչներ:

ՆՈՐ ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը Միացեալ Նահանգներու Արեւմտեան Շրջանին կը վստահի Հայրենիքի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի հաստատումի հետեւողական աշխատանքները: Շրջանի սկառուտ խմբապետուհի Մարօ Քեչիչեան թեքնիք եւ կազմակերպչական աշխատանքներով կը նպաստէ այդ նպատակին: Շրջանը նաեւ համակարգիչի, հեռապատճէնի, տարագներու, դրոշակներու եւ այլ սարքաւորումներու առաքումով կ'օժանդակէ մասնաճիւղերու զօրացումին: Մինչեւ 1990 թուականի վերջաւորութիւն 5 մասնաճիւղեր կը սկսին գործել Հայաստանի զանազան քաղաքներուն մէջ: Գործունէութեան սկսման ժամանակագրական կարգը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.-

Մարտունիի մասնաճիւղ, հիմնուած՝ 15 Յուլիս 1990ին:

Չարենցաւանի մասնաճիւղ, հիմնուած՝ 28 Նոյեմբեր 1990ին, ներկայութեամբ արձանագրուած 19 անդամներու որոնք կ'ընտրեն անդրանիկ վարչութիւն բաղկացած հետեւեալ անդամներէն.-

Սամուէլ Նալթակեան, Սուսաննա Նալթակեան, Ժիրայր Գաբրիէլեան, Վահէ Նշանեան եւ Արթիւր Գոողեան:

Սիսեանի մասնաճիւղ, հիմնուած՝ 20 Դեկտեմբեր 1990ին:

Կումայրիի մասնաճիւղ, հիմնուած՝ 23 Դեկտեմբեր 1990ին:

Աբովեանի մասնաճիւղ, հիմնուած՝ 26 Դեկտեմբեր 1990ին:

Կեդրոնական Վարչութիւնը կ'որոշէ նաեւ Հայաստանի մէջ զինքը ներկայացնելու պարտականութիւնը վստահիլ Տիգրան Ճիմպաչեանին:

Հայրենիքի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի վերընձիւղման գործընթացը յաջողագոյն պայմաններու մէջ կը գտնուի:

Ե. ՄԱՍ

Հ. Մ. Ը. Մ. ԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ


ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ԸՆԴՀԱՆՈՒՐ
- ՍԿԱՌԻՏԱԿԱՆ
- ՇՔԱՆՇԱՆՆԵՐՈՒ
- ԺՈՂՈՎԱԿԱՆ ԵՒ ՎԱՐՁԱԿԱՆ
- ՆԵՐՔԻՆ



ՀԻՄՆՈՒԱԾ
1918
Կ. ՊՈԼԻՍ




Հ.Մ.Ը.Մ.
ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ



1975

ՀԱՐԱՐ

**ԿՐԺԿՆԵԿՑ
ԾՔԿՆԾԿՆ**
ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ



ՊԵՅՐՈՒԹ
1978



ՀԻՄՆՈՒԱԾ
1918
Կ. ՊՈԼԻՍ



Հ.Մ.Ը.Մ.
ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ



1983



ՀԻՄՆՈՒԱԾ
1918
Կ. ՊՈԼԻՍ



Հ.Մ.Ը.Մ.
ՍԿԱՌԻՏԱԿԱՆ, ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ



1983

Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր կանոնադրութիւնները հիմնուած են Միութեան հիմնադրութեան օրերու նպատակին վրայ, որ կը մնայ անփոփոխ: Ժամանակի ընթացքին, Պատգամաւորական Ընդհանուր, Շրջանային Ներկայացուցչական կամ Մեկուսի Շրջաններու անդամական ընդհանուր ժողովներու մշակումներով նպատակի իրագործման միջոցներուն եւ պայմաններուն բարեփոխումները կը միտին աւելի յստակացնելու կանոնադրային յօդուածներու տրամադրութիւնները անոնց իրագործումը պատշաճեցնելով ժամանակի պայմաններուն:

Շրջանային կամ Մեկուսի Շրջաններուն ներքին կանոնադրութիւնները կը մնան Ընդհանուր կանոնադրութեան յօդուածներու տրամադրութեանց սահմաններուն մէջ, միաժամանակ պատշաճեցնելով տարբեր երկիրներու պետական կամ դաշնակցային (Ֆետերատիւններու) օրէնքներուն հետ:

Հ.Մ.Ը.Մ.ի Ընդհանուր կանոնադրութիւնները կը վաւերացուին Պատգամաւորական Ընդհանուր ժողովներու կողմէ եւ գործադրելի կը դառնան անոնց հրատարակութենէն սկսեալ: Շրջաններու եւ Մեկուսի Շրջաններուն ներքին կանոնադրութիւնները ենթակայ են կեդրոնական վարչութեան վաւերացման:

1975էն 1990 ժամանակամիջոցին հետեւեալ կանոնադրութիւնները ենթարկուած են բարեփոխման.- Հ.Մ.Ը.Մ.ի Ընդհանուր Ծրագիրկանոնագիր եւ Հ.Մ.Ը.Մ.ի Սկսուտական Ընդհանուր կանոնագիր: Նոյն ժամանակամիջոցին հրատարակուած են Հ.Մ.Ը.Մ.ի Արժանեաց եւ Ծառայութեան շքանշաններու կանոնադրութիւնները: Հրատարակուած է նաեւ ժողովական եւ վարչական կանոններու գրքոյկը:

Վերոյիշեալ կանոնադրութիւնները հրատարակուած են նոյն չափի (20x14 սմ.) գրքոյկներով:

Հ.Մ.Ը.Մ.ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾՐԱԳԻՐ ԿԱՆՈՆԱԳԻՐ – 1975


Պատգամաւորական Ա. Ընդհանուր ժողովին կողմէ մշակուած եւ վաւերացուած Հ.Մ.Ը.Մ.ի նորագոյն շրջանի անդրանիկ կանոնադրութիւնը – Պէյրութ, 1975 կարմիր կողք, 28 էջ, 92 յօդուածներ:

Հ.Մ.Ը.Մ.ի ԱՐԺԱՆԵԱՑ ՇՔԱՆՇԱՆԻ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ – 1978

Տե՛ս ներկայ հատորի Ա. մասի իններորդ գլուխը էջ 59:

Հ.Մ.Ը.Մ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾՐԱԳԻՐ ԿԱՆՈՆԱԳԻՐ – 1983

1975ի Ծրագիր կանոնագրի Բ. տպագրութիւնը բարեփոխուած Բ. եւ Գ. Պատգամաւորական Ընդհանուր ժողովներուն կողմէ -



Պէյրուիթ — 1983: Չոր տերեւի գոյնի կողք, 32 էջ, 96 յօդուածներ:

Հ.Մ.Ը.Մ. ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾՐԱԳԻՐ ԿԱՆՈՆԱԳԻՐ — 1983

1982ի Համագաղութային Սկսուողական Ա. Համագումարի կողմէ մշակուած եւ Պատգամաւորական Գ. Ընդհանուր Ժողովէն վաւերացուած Սկսուողական Ընդհանուր Ծրագիրը Կանոնագիր: Գոց կանաչ գոյնի կողք, 40 էջ, 113 յօդուած: Գրքոյկը կը պարունակէ նաեւ համագաղութային ընդհանուր բանակումներու ծրագիր կանոնագիրը, 17 յօդուածներով: Պէյրուիթ — 1983

Հ.Մ.Ը.Մ.ի ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՇՔԱՆՇԱՆ — 1987

Այս կանոնագրութիւնը յատուկ գրքոյկով չէ հրատարակուած: Կցուած է Կեդրոնական Վարչութեան 8 Մայիս 1986 թուակիր թիւ 27 շրջաբերականին: 1 էջ 6 յօդուած:

ԺՈՂՈՎԱԿԱՆ ԵՒ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ — 1987

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ մշակուած եւ Պատգամաւորական Գ. Ընդհանուր Ժողովին կողմէ վաւերացուած ժողովական եւ վարչական կանոններ: Բաց կապոյտ կողք, 32 էջ, 82 յօդուած: Պէյրուիթ — 1983

Շրջաններու կողմէ հրատարակուած են ներքին կանոնագրութիւններ: Օրինակ. Հ.Մ.Ը.Մ. Լիբանանի Շրջան, Լիբանանի 22րդ Շրջանային Ներկայացուցչական Ժողովին կողմէ մշակուած ծրագիր եւ կանոնագիր: 22x14 սմ. ծաւալով, 80 էջերէ բաղկացող, դեղին կողքով գրքոյկ մը: Կը պարունակէ Լիբանանի Շրջանի ներքին կանոնագրութիւնը, Շրջանի յատուկ 61 յօդուածներով:

Շրջանային ֆութպոլի յանձնախումբի կանոնագրութիւն, 36 յօդուած:

Շրջանային մարզական խորհուրդի ներքին կանոնագիր 16 յօդուած:

ԼԵՎԱՄԻ կանոնագիր՝ 76 յօդուած:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՒԻՆՆԵՐ

- ՆԱՀԱՏԱԿ ՑԵՂԻ ԱՆՄԱՀՆԵՐ
- Հ.Մ.Ը.Մ. ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆ
- ՄԱՐԶԻԿ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ
- ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԳՐԹՈՅԿ
- ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ
- ՍԿԱՌԻՏԻՆ ԳՐԹՈՅԿԸ
- ԵՕԹԱՆԱՍՈՒՆԱՄԵԱԿԻ ՕՐԱՑՈՅՑ
- ԵՐԷՑԱԿԱՆ ԿԱՐԳԵՐ
- ԱՔՍՈՐԻ ԱՐԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԷՆ ԴԷՊԻ Հ.Մ.Ը.Մ. ՇԱՆԹ
- ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ Հ.Մ.Ը.Մ. Ի

1975-1990 ժամանակաշրջանի ընթացքին, Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան եւ կարգ մը Շրջաններու կողմէ լոյս տեսած են հետեւեալ հրատարակութիւնները .-

Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան մատենաշարէն՝

Թիւ 1. Նահատակ Յեղի Անմահներ

Թիւ 2. Հ.Մ.Ը.Մ.ի Սկստական Երգարան

Թիւ 3. Մարգիկ Պաշտօնաթերթի Խմբագրականներ

Սկստական Գիտելքների Գրքոյկ

Եօթանասունամեակի Պատի Օրացոյց

Երէցական Կարգեր

Սկստական Գիտելքներու Շարք

Սկստաին Գրքոյկը - Խաղեր

Աքսորի Արեան Ճանապարհէն Դէպի Հ.Մ.Ը.Մ. Շանթ

Յուշամատեան Երուսաղէմի Հ.Մ.Ը.Մ.ի եւ այլ հրատարակութիւններ

Ստորեւ վերոյիշեալ հրատարակութիւններու մասին մատենագիտական ամփոփ տեղեկութիւններ:

ՆԱՀԱՏԱԿ ՅԵՂԻ ԱՆՄԱՀՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան մատենաշարի թիւ 1 հրատարակութիւնը, 24 x17 սմ. ծաւալով եւ 224 պատկերազարդ էջերէ բաղկացող Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն՝ Տիգրան Քհն. Խոյեանի յուշերը: Խմբագիր՝ Յ. Գեղարդ: Տպարան Ալթաբէրէս - Պէյրուի 1983:

Հատորը կը բաղկանայ չորս մասերէ՝

Ա. Մաս- էջ 7-82, Հ.Մ.Ը.Մ.ի ծնունդը: 1900ական առաջին տասնամեակի մարզական իրավիճակը Պոլսոյ մէջ, հայկական առաջին ողիմպիականը, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութիւնը, Հ.Մ.Ը.Մ.ի առաջին ողիմպիականը, սկստութիւնն ու Հ.Մ.Ը.Մ.ը, Բարձրացի՛ր Բարձրացու՛ր ը ինչպէս ստեցծուեցաւ, Հ.Մ.Ը.Մ.ի առաջին յաղթական սողանքը:

Բ. Մաս- էջ 83-152, Հ.Մ.Ը.Մ. նորաստեղծ Հայաստանի մէջ: Մեր ճամբորդութիւնը դէպի Հայաստան, հանդիպումներ պետական անձնաւորութիւններու հետ, անկախութեան սոնակատարութիւնը, այցելութիւններ-անձեր-վայրեր-որոշումներ, մեր առաքելութիւնը գործի վրայ-Փոլսոյ մրցումներ, հայ-թուրք պատերազմը, մեր առաքելութեան հաշուեյարդարը, վահան Չերազ կը շարունակէ սուրբ գործը. սկստութիւնը, կտրիճներու կազմակերպութիւնը հայոց մէջ:

Գ . Մաս- էջ 153-208, Հ.Մ.Ը.Մ. Ամերիկայի մէջ: Ամերիկա ժամանումս եւ Նիւ Եորքի Հ.Մ.Ը.Մ.ը, նոր մասնաճիւղերու կազմակերպում եւ վերահանդիպում Ա. Շիրակեանի հետ, մարմնակրթանքի դաստիարակի ուսանող, Հայաստան եւ Լիբանան երթալս ջուրը կ'իյնայ, միշտ Հ.Մ.Ը.Մ.ի ճամբուն վրայ, դէպք մը եւ Հ.Մ.Ը.Մ.ի “ Եղբայրական Դատարանը “ , Փոլսոյ, Ֆիլատելֆիա Նիւ Եորքի դէմ, վահան Չերազի մահուան դէմ յանդիման, անմոռանալի յանդիպում “Ազգային Ընդհ. Սկստապետ” Գրիգոր Յակոբեանի հետ, ամերիկահայութեան պառակտումը, Փոլսոյ վերջին մրցումս, Հ.Մ.Ը.Մ. Ամերիկայի մէջ այսօր:

Դ. Մաս -էջ 209-220, Մեր կողմէ: Խմբագրողի տպաւորութիւններ հեղինակի գործունէութեան մասին եւ նորագոյն գործունէութեան նկարներ:

Հ.Մ.Ը.Մ. ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆ

24x17սմ. ծաւալով, գունաւոր կողքով, 236 էջերէ բաղկացող երգարան: Հրատարակութիւն Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան, մատենաշար թիւ 2: Մեկենասն է Ալեքսան Փիլաւճեան: Խմբագիր՝ Բիւզանդ Թորիկեան: Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ , Պէյրուի-Լիբանան 1987:

Ութը մասերու բաժնուած սկստական երգարան, ամբողջութեամբ ձայնագրուած:

Ա.մաս-10 քայլերգներ: Բ.մաս-6 աղօթքներ:
Գ.մաս- ազգային եւ հայրենասիրական 15 երգեր:
Դ.մաս -արի եւ արենոյշներու 16 երգեր:
Ե.մաս- գայլիկ եւ արծուիկներու-17 երգեր:
Զ.մաս-23 զանազան երգեր: Է.մաս-17 կանչեր:
Ը.մաս-նուագախումբի 6 եղանակներ:

Հատորի էջերուն մէջ գետեղուած են-10 բանաստեղծներու կամ երգահաններու կենսագրականներ եւ 10 հայկական երաժշտական գործիքներու նկարագրականներ:

«ՄԱՐԶԻԿ» ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

ՄԱՐԶԻԿ պաշտօնաթերթի 79 խմբագրականներու հաւաքածոյ: 24x17 սմ.ծաւալով, գունաւոր կողքով, 174 էջեր պարունակող հատոր մը, հրատարակուած Ն.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան, մատենաշար թիւ 3: Հրատարակչական ծախսերուն մասնակցած են Յարութիւն Ծառուկեան եւ Արթուրօ Յովհաննէսեան: Համագրայինի վահէ Սէթեան սպարան, Պէյրութ-Լիբանան, 1990:

Պաշտօնաթերթի տասնամեայ հրատարակութեան առթիւ լոյս տեսած այս հատորի խմբագրականներու հեղինակներն են Երուանդ Տեմիրճեան (Ե. Երկաթ) եւ Տոքթ.Յարութիւն Գազանճեան (Յ. Գեղարդ):

ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԳՐԹՈՅԿ

Հ.Մ.Ը.Մ.ի Լոնտոնի Մեկուսի Շրջանի սկստական գիտելիքներու շարքը: Իւրաքանչիւր գրքոյկը յատուկ բաժնի մը յատկացուած: Օր. Ա. հատորը յատկացուած է «Հաղորդակցութեան»:

Ձեռքով հրահանգներ, Սուլիչով հրահանգներ, Դրօշախօսութիւն, Հետախուզութիւն, Հեռախօսով խօսիլ, Նամակագրութիւն, Ձեկուցագրութիւն: 21x15սմ. չափերով, 32 էջ, գրամեքենայով շարուածք: Լոնտոն-1984:

ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Սկստական գիտելիքներու գիրքերու շարք, հրատարակութիւն Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային վարչութեան: Նորընծայ՝ լոյս տեսած է 1986ին: Ա. եւ Բ. կարգ՝ լոյս տեսած են 198.ին:

ՍԿԱՈՒՏԻՆ ԳՐԹՈՅԿԸ - Խաղեր

20x14 սմ. ծաւալով եւ 40 էջերէ բաղկացող գրքոյկ մը, հրատարակութիւն Շրջանային Սկստական Խորհուրդի թիւ 4: Մտային եւ ֆիզիքական զարգացումներու նպաստող սրահային կամ բացօդեայ 56 խաղերու նկարագրութիւններ, ուսուցման եւ կազմակերպական աշխատանքներու նախաբանով:

ԵՕԹԱՆԱՍՈՒՆԱՄԵԱԿԻ ՕՐԱՑՈՅՑ

Հրատարակութիւն Հ.Մ.Ը.Մ. ի կեդրոնական վարչութեան: Գծագրութիւն՝ վազգէն թիւթիւնճեանի: 64x46 ծաւալով խաւաքարտ: Օրացոյցը շաբաթական դրութեամբ 52 պատկերազարդ 22x16 սմ. չափի էջերէ կը բաղկանայ: Իւրաքանչիւր էջի վրայ ամփոփ տեղեկութիւններով ազգային, պատմական կամ Հ.Մ.Ը.Մ.ական դէպքերու կամ դէմքերու մասին:

ԵՐԷՑԱԿԱՆ ԿԱՐԳԵՐ

22x15սմ.ծաւալով 16 էջերէ բաղկացող պրակ մը,հրատարակութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Խմբապետութեան: Երէցական բաժանմունքի յատուկ, զանազան գլուխներու տակ խմբագրուած գիտելիքներու եւ ստացման պայմաններու ցանկագրում: Լիբանան-1988:

ԱՔՍՈՐԻ ԱՐԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԷՆ ԴԵՊԻ
Հ.Մ.Ը.Մ. ՇԱՆԹ

յուշերը: Գիրքի մեծագույն բաժինը յատկաց-
ուած է ՇԱՆԹ խումբերու գործունէութեան:

Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղի Մար
Մխայէլ-Քարանթինա թաղամասերուն մէջ
գործող ֆուլթայոլի եւ պասքեթպոլի “ՇԱՆԹ”
խումբերու հիմնադիր եւ ղեկավար՝ Մուշեղ
Սնտրեանի խմբագրութեամբ: Նկարազարդ
28x21սմ. ծաւալով, 72 էջերէ բաղկացող հրա-
տարակոթիւն մը: Համազգայինի վահէ Սէ-
թեան տպարան: Պէյրութ-1987: Հեղինակի
մանկութեան օրերէն մինչեւ 1987 թուականի

ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ Հ.Մ.Ը.Մ.ի

Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 70ամեակին
նուիրուած հրատարակութիւն մը ուր կ’ար-
տացոլան Երուսաղէմի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի
գործունէութեան զանազան բաժինները, 1935ի
հիմնադրութեան թուականէն մինչեւ 1988
թուականը: 25x17սմ. ծաւալով, 118 էջերէ բաղ-
կացող պատկերազարդ հատոր մը: Հեղինակ՝
Կարօ Հեքիմեան:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻՐԱՆԱՆԻ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՄԲԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՏԻԳՐԱՆ ՔԼՆՅ. ԽՈՅԵԱՆ



ՆԱՀԱՏԱԿ ՅԵՂԻ ԱՆՄԱՀՆԵՐ



ԵՐԷՅԱԿԱՆ ԿԱՐԳԵՐ

Լիբանան
1988

ՊԵՐՈՒԹ — 1983



ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԵՐ

- ՀԱՅ ՍԿԱՌԻՏ
- ՀԱՅ ԱՐԻ
- ՄԱՐԶԻԿ
- ԼՐԱՏՈՒ
- ՀԱՅԱՍՍԱ
- ԱՐԾԻԻ
- ՅՈՎԱԶ
- ՆԱԻԱՍԱՐԴ
- ԱՅԳ
- ԱԿԱՌԻՏԻՆ ԶԱՅՆԸ



ԱՐԹՈՒՒ


ՊԱՐԲԵՐԱԹԵՐԻ Լ.Մ.Ը.Մ. ՖՐԱՆՍԻ ՍՎԱՌՈՒՑՈՒԹԵԱՆ



Գ.Մ.Ը.Մ.-Ի ԼՈՆԴՈՆԻ ՄԵԿՈՒՄԻ ԵՐԶԱՆ

ԱՅԳ

ՏԵՂԵԿԱՏՈՒ



ՄԱՀ ՈՉ ԻՄԱՑԵԱԼ՝ ՄԱՀ Է ՄԱՀԸ ԻՄԱՑԵԱԼ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ

ՄԱՀԱԶԴ

ԽՈՒՄՊԵՒ ՑՆՑՈՒՄԸ, ՄՐՏԻ ԴԱՌ. ՀԱՅԻՏՈՎ ԱՇ ԳՈՒԹԵՄԻ Լ.Մ.Ը.Մ.-Ի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎՈՐՉՈՒԹՅԱՆ ՄԵՐ ՆԱԿԵԼԻ ԵՒ ՍԻՐԵԼԻ ԱՏԵՍԱԳԵՏՈՒՄ

ՎԱՐԴԳԷՍ ՏԵՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ

ԴՈՒՄԱՆ ՄԱՀԸ, ՈՐ ԳՈՏԱՆՆԵՐՈՒ ԹՈՐՈՒՄ, 21 ԳՈՒՆԻՍԵՐ 1986-Ի ԵՐԵՎԱՆԵՆԻ. 202՝ ԸՆՁԻՆ ԹԵՐԻՆ

Հ.Մ.Ը.Մ.ի տարբեր Շրջանները եւ Կեդրոնական Վարչութիւնը 1975էն 1990 ժամանակաշրջանի ընթացքին հրատարակած են պաշտօնաթերթեր ժամանակագրական հետեւեալ շարքով.-

ՀԱՅ ՍԿԱՌԻՏ

28x20 սմ. ծաւալով գունաւոր կողքով Լիբանանի Շրջանային Սկստական Խորհուրդի պարբերաթերթը 1 Յունուար 1975էն սկսեալ: Խմբագրականի կողքին թերթը կը պարունակէ միութենական գաղափարաբանութիւն, ներքողական նիւթեր, ազգային, միջազգային գիտական եւ քաղաքացիական դաստիարակութեան բազմազան նիւթեր: Հրատարակած է թիւ 2ը Մայիս 1977 եւ թիւ 3ը Յունուար 1980, վարիչ խմբագիր՝ Կարօ Թիւթիւնճեան: Համազգայինի վահէ Սեթեան տպարան:

ՀԱՅ ԱՐԻ

Ամսաթերթ Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի Արիներու եւ Արենոյչներու:

42x30 սմ ծաւալով, մատնատիպ եւ ձեռագիր, գլխաւորաբար սկստական նիւթերու եւ նկարներու բովանդակութեամբ օրաթերթի թուղթի վրայ բազմազրուած ամսաթերթ: Սկսած է հրատարակուիլ 1977ի Յունուար ամիսէն սկսեալ:

ՄԱՐԶԻԿ

Պաշտօնաթերթ՝ հրատարակութիւն Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան: Արտօնատէր՝ Վարդգէս Տէր Կարապետեան, պատասխանատու խմբագիր՝ Տոքթ. Յարութիւն Գազանճեան: Ունի խմբագրական եւ վարչական զոյգ կազմեր: Խմբագրական կազմին մասնակցած են՝ Երուանդ Տէմիրճեան, Տոքթ. Յարութիւն Գազանճեան, Գրիգոր Սուքիասեան,

Վարուժան Մուրատեան, Յովհաննէս Տէր Յարութիւնեան, եւ Կարօ Թիւթիւնճեան:

Լոյս տեսած է 1980ի Մարտ ամիսէն սկսեալ ամսական հերթականութեամբ: 29x22 սմ. ծաւալով, գունաւոր կողքով կը բաղկանայ 40 էջերէ: Տպաքանակ՝ 3500, բովանդակութեան մաս կը կազմեն՝ առաջնորդող յօդուած-խմբագրական, մասնաճիւղէ-մասնաճիւղ տեղեկագրական բաժին, վկայութիւններ, պատմութիւն, մարզական բաժին, սկստական բաժին, մանկավարժական-դաստիարակչական, բժշկական, հետաքրքրական բաժիններ եւ խաչբառ:

Վարչական կազմին մաս կազմած են՝ մինչեւ 1987 թուական Կեդրոնական Վարչութեան Լիբանանի անդամները: 1987ի Ապրիլ ամիսէն սկսեալ Կեդրոնական Վարչութեան անդամներ Պատրիկ Կիւլպէնկեան, Միհրան Շիմշիրեան եւ Արա Յակոբեան:

Յաջորդական տարիներուն լոյս տեսած են.--

- Ա. Տարի 1980-81...12 թիւ 1-12
- Բ. Տարի 1981-82..12 թիւ 13-24
- Գ. Տարի 1982-83..12 թիւ 25-36
- Դ. Տարի 1984-85..1 զոյգ թիւ (Հ.Մ.Ը.Մ.ի 65ամեակ) (37-38) եւ 10 թիւ 39-48
- Ե. Տարի 1985-86..10 թիւ 49-58 եւ մէկ զոյգ թիւ (59-60)
- Զ. Տարի 1986-87..4 թիւ 61-64 եւ 4 զոյգ թիւեր (65-66)(67-68)(69-70)(71-72)
- Է. Տարի 1987-88..8 թիւ 73-80 եւ 2 զոյգ թիւեր (80-81) (83-84)
- Ը. Տարի 1989..1 թիւ նուիրուած Հայաստանի երկրաշարժի աղէտին պատկերազարդ եւ գունաւոր էջերով(85-96)
- Թ.Տարի 1990..6 զոյգ թիւեր (97-98) (99-100) (101-102) (103-104) (105-106) (107-108)

ԼՐԱՏՈՒ

Պարբերաթերթ Լոս Անճէլըսի մասնաճիւղին: Ա. թիւը 20 էջերով, լոյս կը տեսնէ Մարտ/

Ապրիլ 1986ին: Կը պարունակէ մասնաճիւղային լուրեր, վկայութիւններ Հ.Մ.Ը.Մ.ի մասին, մասնաճիւղի անցեալի եւ ներկայի իրագործումներու տեղեկութիւններ եւ միութենական ներբողական:

ՀԱՅԱՍՏԱ

Կլէնտէյլի Արարատ մասնաճիւղի ներքին թերթը:

1986էն սկսեալ «Հայասա»ն իբրեւ ներդիր կը բաժնուի «Ասպարէզ» օրաթերթի միջոցաւ ամսական հերթականութեամբ:

ԱՐԾԻԻ

Պարբերաթերթ հրատարակութիւն Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի սկաուտական բաժնին: Մասնաճիւղի ներքին թերթը 30x22 սմ. չափի բազմագրեալ էջերէ բաղկացած: Կ'անդրադառնայ մասնաճիւղի գործունէութեան սկաուտական բաժնին պարբերական առիթներով:

ՅՈՎԱԶ

Պարբերաթերթ Հ.Մ.Ը.Մ.ի Սիտնիի մասնաճիւղի սկաուտութեան AA չափի թուղթի բազմագրուած էջերու միացումով կազմուած: Ունի տեղեկագրական, նկարագրական, սկաուտական նիւթեր եւ ժամանցի բաժին:

ՆԱԻԱՍԱՐԴ

Արեւելեան Սիտնիի մասնաճիւղի եռամսեայ պարբերաթերթ:
26x18 սմ. չափով պրակ մը, անգլերէն եւ հայերէն լեզուներով եւ ներբողական, տեղեկատուական, սկաուտական թեքնիք եւ ժամանցի նիւթերու բովանդակութեամբ: Հրատարակուած է 1986էն սկսեալ:



ԱՅԳ

Լոնտոնի մասնաճիւղի տեղեկատու ամսաթերթ, հրատարակուած 1979ի Դեկտեմբեր ամիսէն սկսեալ, նպատակ ունենալով մասնաճիւղի գործունէութիւնը ծանօթացնել Լոնտոնի հայութեան:

ՍԿԱՈՒՏԻՆ ԶԱՅՆԸ

Պարբերաթերթ՝ հրատարակութիւն Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Սկաուտական Խորհուրդի Գրական Յանձնախումբին:
Մատնատիպ էջերով, ազգային, միութենական, գաղափարական, գիտական, մարզական, սկաուտական եւ այլազան բովանդակութեամբ: Առաջին թիւը լոյս տեսած է 1990ին:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

ԳԱՂԱՓԱՐԱԿԻՑ ՄԱՄՈՒԼ

- ՀԱՅՐԵՆԻՔ
- ԱՍՊԱՐԷԶ
- ԱԶԱՏ ՕՐ
- ՅԱՌԱԶ
- ՅՈՒՍԱԲԵՐ
- ԱԶԴԱԿ
- ԱԼԻՔ
- ԱՐՄԵՆԻԱ
- ՀՈՐԻԶՈՆ
- ԳՐՈՀ
- ԼՐԱՔԱՂ
- ԱՐԶԱԳԱՆԳ
- ԳԱՆՁԱՍԱՐ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ



ԱԶԱՏ օր

«AZAT OR» ARMENIKH HMERHZIA EPHMER



ԳՐԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՇԱՀԱԹԱԹԵՐԹ

ԱՐՄԵՆԻԱ

YDNEY - AUSTRALIA
Հինգշ. 2 ԾԹ

Año 58 - N°
Viernes 12 de agos.

58րդ տարի - Թի 11.884
Ուրբաթ, 12 Օգոստոս 1988

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՄԻԹԻՆԿՈՎ ՓԱԿՈՒԵՑԱԻ ԵՌՕՐԵԱՅ ՀԱՅԱԴՈՒԼԸ.
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹԵԱՆ
ԱՌԱՋԻՆ ԳԻԾԻՆ ՎՐԱՅ

ՕՐԸ ՕՐԻՆ
ԹՐԳԱՑՈՒՄ
Գրեմիլիցի անարգար որոշումին
դեմ ուղղուած ամենարդար բողոք-
ները, որքան ալ որ խանդավառեն
անդ, չեն կրնար մեր ուշադրութիւնը
չեղիլ մեր պատմական բշխման
բողոքին եւ իր տունաւոր ստորախառնումը

ԱԶԳԻԱԿ

— ՕՐԱԹԵՐԹ —

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE
أزதாக جريدة يومية سياسية وأدبية. اليوم للحرية، إنشأه زوتشان

ԱՐՄԵՆԻԱ

Ներկայ հատորի ընդգրկած ժամանակամիջոցին, Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարակից մամուլի ներկայացուցիչներ իրենց սիւնակները անվերապահօրէն տրամադրեցին, արձագանգելու համար Կեդրոնական Վարչութեան, Շրջանային վարչութիւններու, Մեկուսի Շրջաններու վարչութիւններու եւ մասնաճիւղերու գործունէութիւններուն: Յատուկ առիթներով, անոնք, բացառիկ թիւերով ջատագով հանդիսացան Հ.Մ.Ը.Մ.ի նպատակներուն եւ ներբողական խմբագրականներով կամ յօդուածներով զանգուածները յաղորդեցին ՄԻՈՒԹԵԱՆ առաքելութեան:

Այսպէս, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 70ամեակին առթիւ «Հ.Մ.Ը.Մ.ի ՊԱՏԻԻԸ ԵՒ ՊԱՐՏՔԸ» խորագիրը կրող իր խմբագրականով ԱԶԴԱԿ ի միջի այլոց կը գրէ.

...«Հայ անկախ պետականութեան խորհրդանիշը միաժամանակ դրօշակն է Հ.Մ.Ը.Մ.ին, ինչ որ Հ.Մ.Ը.Մ.ականը կը դնէ ազգային պատասխանատուութեան դիմաց: Եօթանասուն տարի շարունակ հայութեան ազգային գաղափարներուն ծառայած այս կազմակերպութիւնը, այսօր եւս, պարտի կանգնիլ ոտքի, վերանորոգ խանդավառութեամբ եւ եռանդուն կազմակերպութեամբ:»

...«Եռագոյն դրօշակով տողանցելը ազգային պատիւ է հետեւաբար, ան իր հետ կը բերէ նաեւ

ազգային շատ լուրջ պատասխանատուութիւնը՝ թէ սերունդներու կազմաւորումին եւ թէ իր օրինակով ժողովուրդը առաջնորդելու իմաստով:»

...«Այս իմաստով եւ այս ըմբռնումով միայն Հ.Մ.Ը.Մ.ը ունի պատիւը՝ կրելու Մայիս 28ի խորհուրդը եւ բարձրացնելու Կարմիր, Կապոյտ, Նարնջագոյնը:» - [ԽԶ/4.6.1988]:

Ստորեւ, հրատարակութեան սկզբնաւորութեան ժամանակագրական շարքով, գաղափարակից օրաթերթերու եւ պարբերաթերթերու ցանկը:

թերթի անուն	թուական	վայր
Հայրենիք	1899	Պոսթրն
Ասպարէզ	1908	Լոս Անճէլըս
Յառաջ	1925	Փարիզ
Յուսաբեր	1925	Գահիրէ
Ազգակ	1925	Պէյրուս
Ալիք	1931	Թեհրան
Արմենիա	1931	Պոլէնոս Այրէս
Ազատ Օր	1945	Աթէնք
Գրոհ	1978	Գահիրէ
Հորիզոն	1979	Մոնթրէալ
Արձագանգ		Թորոնթօ
Լրաքաղ		Մոնթրէալ
Գանձասար		Հալէպ

ՅԱԻԵԼՈՒԱԾԻ ՆԿԱՐՆԵՐ



1



2



3



4



5



6

1984 տարուայ Սան Ֆեռնանտո Վալիի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական միաւորի՝ 1. Արեւոյշներու խումբը, 2. Պարմանուհիները, 3. Գայլիկներու վոհմակը, 4. Արեւոյշներու խումբը, 5. Արծուիկներու երամը, 6. Կակուղ թաթիկները:



Համագաղութային Սկսուտական Ա. Համագումարի մասնակցողներու խմբանկար - Աթէնք 1982



Խմբանկար Համագաղութային Բ. Ընդհանուր բանակումի մասնակցող շրջաններու խմբապետներուն - 1980



Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Աթոռակից Կաթողիկոս շրջապատում
Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտներով և արենայիչներով՝ Հովիվուտի Ս. Կարապետ
Մայր Եկեղեցույ օծումը կատարել է ետք - 1980



Լիբանանի 1985-87 տարիներու Շրջանային Սկաուտական Խորհուրդը
և Շրջանային Խմբապետական կապը



Յունաստանի Շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի 65ամեակի տօնակատարումին սկառուական խումբերը բեմին վրայ



Անթիլիասի մասնաճիւղի դահուկարշառի խումբը - 1986

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԹԵԼԱԴՐԱՆՔՆԵՐ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Ներկայ հատորի խմբագրութեան համար օգտագործած ենք Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական արխիւները՝ Կեդրոնական Վարչութեան, Շրջաններու եւ Մեկուսի Շրջաններու միջեւ փոխանակուած թղթակցութիւնները, շրջաբերականները, Պատգամաւորական Ընդհանուր Ժողովներու, Շրջանային Ներկայացուցչական Ժողովներու եւ անդամական ընդհանուր ժողովներու ատենագրութիւնները եւ այդ ժողովներուն ներկայացուած գործունէութեանց տեղեկագրութիւնները: Այս պարագաներուն մեր արձանագրութիւնները հաստատող մատենագիտական աղբիւրները չենք յիշած:

Օգտագործած ենք նաեւ 1981էն 1990 ժամանակաշրջանին ՄԱՐԶԻԿ պաշտօնաթերթին մէջ լոյս տեսած թղթակցութիւններն ու նկարները: Այս պարագային, ընթերցողի պրպտումներուն իբրեւ ուղեցոյց [] կցագիծի մէջ յիշած ենք մատենագիտական ցանկի մեր այբենական թուագրումները հետեւեալ ձեւերով.

Այբենական թուագրումով կը ճշգուի հրատարակութեան անունը:

[/] Նշանին հետեւող թուանշանը կը ճշգէթերթի հրատարակութեան շարքի թիւը:

[.] միջակէտին կը հետեւի թերթի տուեալ թիւի էջաթիւը:

Կու տանք օրինակներ.

1.- էջերու շարունակական թուագրումով հրատարակութիւններ.

[ԺԲ. 354-356] կը նշանակէ ՎԱՀԱՆ ՉԵՐԱԶ ԵՒ ԻՐ ՎԷՐՔՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ, Պէյրութ, Տպարան Սեւան, 1977, հեղինակ՝ Վազգէն Անդրէասեան: (Տե՛ս ներկայ հատորի էջ 44ը):

2.- Հրատարակութեան թուականի յիշատակութեամբ թերթեր.

[ԽԵ/ 18.4.1975] կը նշանակէ ԱԶԱՏ ՕՐ Օրաթերթ, Աթէնք: (Տե՛ս ներկայ հատորի էջ 68ը):

3.- Մամուլի շարունակական շարքի յիշատակութեամբ թերթեր.

[Ծ/ 63.3-40] կը նշանակէ ՄԱՐԶԻԿ Պաշտօնաթերթ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան: (Տե՛ս ներկայ հատորի էջ 44 ը):

4.- [Կ] կը նշանակէ Կեդրոնական Վարչութեան արխիւներ:

Յատուկ անուններու եւ նկարներու ցանկ չենք կազմած, նկատի ունենալով որ այդ մէկը վերջին հատորի նիւթը պիտի ըլլայ:

Աշխատած ենք յատուկ անունները յիշել ամբողջութեամբ՝ առանց կրճատումներու:

Խոսաբելու համար կրկնութիւններէ նկարներու տակի անձերու անունները յիշած ենք միշտ ձախէն աջ կարգով:

Յաւելուածի բաժինին մէջ զետեղած ենք նկարներ որոնք հատորի իրենց բաժինին մէջ նախատեսուած ըլլալով հանդերձ, միայն վերջին պահուն հասան մեզի:

Բ.Թ.

ՅԱԻԵԼՈՒԱԾԻ ՆԿԱՐՆԵՐ

Յաւելուածի բաժնին մէջ Վետեղած ենք նկարներ, որոնք նախատեսուած էին հատորի իրենց յատուկ գլուխներուն համար: Սակայն միայն վերջին պահուն մեր տրամադրութեան տակ դրուելուն՝ կը հրատարակենք առանձնաբար:

Ծանօթ՝ Սոյն հատորին մէջ լոյս տեսած կարգ մը նկարներ յստակ չեն, տրուած ըլլալով որ անոնց բնատիպ լուսանկարները մեր տրամադրութեան տակ չենք ունեցած եւ ստիպուած օգտագործած ենք թերթերու եւ նոյնիսկ լուսապատճէնահանուած օրինակներու նկարներ:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

[Գ] ՀԱՅ ՍԿԱՈՒՏ, Հ.Մ.Ը.Մ. Կիսամյակային հանդես, Պոլիս, 1919-1920 :

Արտոնատեր՝ Գառլո Շահինեան:

[ԺԲ] ՎԱՀԱՆ ՉԵՐԱԶ ԵՒ ԻՐ ՎԷՐՔՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ, Պէյրուի, 1977:

Հեղինակ՝ Վազգէն Անդրէասեան, Տպ. Սեւան:

[ԽԵ] ԱԶԱՏ ՕՐ, Օրաթերթ, Աթէնք:

[ԽԶ] ԱԶԴԱԿ, Օրաթերթ, Պէյրուի:

[ԽԸ] ՀԱՅՐԵՆԻՔ, Օրաթերթ, Պոսթըն:

[Ծ] ՄԱՐԶԻԿ, Ամսաթերթ, Պաշտօնաթերթ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, Պէյրուի:

[Կ] Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան արխիւներ:

[ԿԱ] Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենագրութիւններ

[ԿԲ] Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան գործունէութեանց տեղեկագիրներ

[ԿԳ] Հ.Մ.Ը.Մ.ի Ընդհանուր Ժողովներու ատենագրութիւններ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յառաջաբան

էջ

5

Ա. ՄԱՍ Հ.Մ.Ը.Մ.ի Համագաղութային Կառույցի Հաստատում եւ Զարգացում

Գլուխ Առաջին	Հ.Մ.Ը.Մ.ի Նորագոյն Շրջանի Անդրանիկ	
	Պատգամաւորական Ընդհանուր Ժողով	7
Գլուխ Երկրորդ	Գործունէութիւն Ա. Կեդրոնական Վարչութեան	15
Գլուխ Երրորդ	Պատգամաւորական Բ. Ընդհանուր Ժողով	21
Գլուխ Չորրորդ	Գործունէութիւն Բ. Կեդրոնական Վարչութեան	27
Գլուխ Հինգերորդ	Պատգամաւորական Գ. Ընդհանուր Ժողով	33
Գլուխ Վեցերորդ	Գործունէութիւն Գ. Կեդրոնական Վարչութեան	39
Գլուխ Եօթերորդ	Պատգամաւորական Դ. Ընդհանուր Ժողով	45
Գլուխ Ութերորդ	Գործունէութիւն Դ. Կեդրոնական Վարչութեան	51
Գլուխ Իններորդ	Շփանշաններ եւ Շփանշանակիրներ	57

Բ. ՄԱՍ Շրջաններ եւ Շրջանային Գործունէութիւններ

Գլուխ Առաջին	Յունաստան	63
Գլուխ Երկրորդ	Լիբանան	79
Գլուխ Երրորդ	Սուրիա	129
Գլուխ Չորրորդ	Արեւմտեան Միացեալ Նահանգներ	147
Գլուխ Հինգերորդ	Գանատա	181
Գլուխ Վեցերորդ	Արեւելեան Միացեալ Նահանգներ	217
Գլուխ Եօթերորդ	Աւստրալիա	241
Գլուխ Ութերորդ	Հարաւային Ամերիկա	257

Գ. ՄԱՍ Մեկուսի Շրջաններ

Գլուխ Առաջին	Եգիպտոս- Ադեֆսանդրիա, Գահիրե	271
Գլուխ Երկրորդ	Պաղեստին- Երուսաղեմ, Հայֆա, Եաֆա	279
Գլուխ Երրորդ	Ամման	289
Գլուխ Չորրորդ	Փարիզ	297
Գլուխ Հինգերորդ	Լոնտոն	307
Գլուխ Վեցերորդ	Քուէյթ	321
Գլուխ Եօթերորդ	Վալանս	327
Գլուխ Ութերորդ	Վիեննա	333
Գլուխ Իններորդ	Իտալիա	339
Գլուխ Տասերորդ	Կիպրոս	345

Դ. ՄԱՍ Հայաստան 349

Ե. ՄԱՍ Հ.Մ.Ը.Մ.ական Մամուլ

Գլուխ Առաջին	Կանոնագրութիւններ	355
Գլուխ Երկրորդ	Հրատարակութիւններ	359
Գլուխ Երրորդ	Պաշտօնաթերթեր	365
Գլուխ Չորրորդ	Գաղափարակից Մամուլ	369

Յաւելուած 373

Գործնական Թելադրանքներ Ընթերցողին 377

Մատենագիտութիւն 379